

Թ. Թ. Ա. ՅԱՐՅԱՆ.

ՎԱՐՊԱՆ
ԱՐԵՎԵԼՑԻ

МАТЕНАДАРАН

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

П. П. АНТАПЯН

ВАРДАН АРЕВЕЛЦИ

ЖИЗНЬ И
ДЕЯТЕЛЬНОСТЬ

КНИГА

II

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1989

9(092)
Ch-58

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ա Ր Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Փ. Փ. ԱՆԹԱՊՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ

2673

ԿՅԱՆՔՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻՐՔ

Բ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1989

Տպագրվում է Մաշտոցի անվան մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Հ. Տեր-Պետրոսյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
բանասիրական գիտությունների դոկտորներ Պ. Հ. Հակոբյանը և Գ. Վ. Արզառյանը

Անրապյան Փ. Փ.

Ա. 588 Վարդան Արևելցի (Կյանքն ու գործունեությունը)
[Պատ. խմբ.՝ Ն. Հ. Տեր-Պետրոսյան], Մատենադարան—
ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվ.
հին ձեռագրերի ին-տ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989.
Գիրք Բ.— 1989.— 351 էջ.

Մենագրությունը նվիրված է Վարդան Արևելցու կյանքին և գործու-
նեությունն առնչվող գիտական, գաղափարական, տեսական հիմնական
հարցերի և խնդիրների քննությանը: Գրանք բնույթով ու բովանդակու-
թյամբ բազմազան են՝ քաղաքական, հասարակական, պատմագիտական,
աշխարհագրական, գիտական, քերականագիտական, բարոյագիտական,
լեզվագիտական, մշակութային: Լուսաբանված է Արևելցու ազգային-հայ-
րենասիրական, գիտամշակութային ընդհանուր ներգրումը և ճշտված է
ներառելն ու դերը:

Նախատեսված է համապատասխան մասնագետների, ուսանողների և
ընթերցող լայն շրջանների համար:

Ա 0505040000 102—88
703 (02)—89

ԳՄԴ 63.3(22)

ISBN 5—8080—0002—5

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989

Գ Լ Ո Ի Ե Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Վարդան Արևելցին հայ միջնադարի այն անվանի դեմքերից է, ո-
րոնք հավասարապես նշանակալից ավանդ ունեն քաղաքական, հասա-
րակական-եկեղեցական, գիտական-մատենագրական, մանկավարժա-
կան և մշակութային կյանքում, այսինքն՝ այն բոլոր հիմնական մար-
զերում, որոնցում ծավալվում և զարգանում էր հայ հասարակական
կյանքն ու գիտակցությունը: Այս իրողությունը հաստատված էր դեռ
ներառնականության օրոք: Այսօր, բնական է, այն մեր օրերի հայեցակե-
տով ավելի առարկայական և խորը քննելու ու զնահատելու նոր
հնարավորություններ ունենալով, կարող ենք առավել ճիշտ և ամբողջա-
կան պատկերացում կազմել նրա մասին:

Մեր ուսումնասիրության Ա գրքի տարբեր մասերում այս առնչու-
թյամբ խոսք եղել է, բայց ոչ ըստ էության, այլ միայն ըստ հարկի:

Վարդան Արևելցին ծնվել ու ապրել է քաղաքական բարդ և դժվա-
րին պայմաններում, գործել է հայկական երկու կենտրոններում՝ Մեծ
Հայքում (հիմնականում՝ Արևելյան Հայաստան) և Հայկական Կիլիկիա-
քում: Երկուսում էլ շատ հարափոփոխ, բայց լուրջ հեղափոխումներ էին
անցի ունենում հասարակական ու մշակութային կյանքում, և հատկա-
պես առաջատար գործիչներից պահանջվում էր ազգային-հասարակա-
կան միանգամայն զգաստ ու իրապաշտ կողմնորոշում: Դրա համար,
անշուշտ, գիտական բազմիմացությունը շատ կարևոր էր, սակայն, ան-
հրաժեշտ էր ունենալ նաև պատմաքննական, քաղաքացիական-հայրեն-
ասիրական շրջահայաց իրատեսություն:

Քե ինչպես և ինչ շափով էր Վարդան Արևելցին վերոհիշյալ մարզե-
րում օգտակար ծառայություն մատուցել մինչև Երուսաղեմ-Կիլիկիա
մեկնելը, դժբախտաբար, հայտնի չէ: Ըստ երևույթին, զբաղվել էր մա-
տենագրական, մանկավարժական, բայց ոչ քաղաքական և հասարակա-
կան լուրջ գործերով: Բացառված չէ, որ եկեղեցակազմակերպչական
աշխատանքներ տարած լինի Կայենաբերդի Ս. Անդրեի վանքում և մեր-

ձակա վանական շրջանակներում: Այսքանը արդեն տեղի ունեցած պիտի լիներ, որպեսզի Կոստանդին Բարձրերդցի կաթողիկոսը հիմք ունենար նրա նկատմամբ ցուցարբերելու լայն վստահություն և նրան պահելու իր մոտ՝ ժամանակի հայ իրականության աշխարհիկ ու հոգևոր կենտրոններ Կիլիկիայում և Հոսմկլայում:

Վարդան Արևելցու գործունեությունը նշված ոլորտներում, ըստ էության, սկսվում է Կիլիկիայում: Այստեղ նա հիմնականում գործում է երկու մայրուղիներով՝ աշխարհիկ ու հոգևոր, հասնելով հասարակական միանգամայն նշանակալից արդյունքի:

Մեզ արդեն հայտնի են նրա անմիջական առնչությունները Կիլիկիայի հայոց արքունիքի և, առաջին հերթին, Հեթում Ա թագավորի հետ: Վարդան Արևելցին նրա դաստիարակներից, հոգևոր խնամակալներից, խորհրդատուներից մեկն էր և, ըստ երևույթին, նաև խոստովանահայրը: Այս հանգամանքը լիիրավ հիմք է տալիս պնդելու, որ նա անմասն չի եղել թագավորի ձեռնարկած պետական գործերին: Ձեռքի տակ ունենալով այնպիսի գրավոր հուշարձաններ, ինչպիսիք են Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութիւն»-ը, իր՝ Վարդան Արևելցու «Ժղլանք»-ը, մասնավորապես, նրա մաս կտրած շեթում Ա թագավորին ուղղված հայտնի «Պատասխան թուղթ»-ը, կարող ենք ասել, որ նա, իրոք, եռանդալի հասարակական գործունեություն է ծավալել, մասնակցել միջնկեղեցական դավանարանական պայքարին, որի ազդային-քաղաքական հենքն ու նպատակը այսօր քաջ հայտնի են:

Հայ հասարակական և եկեղեցական առաջավոր գործիչները սկզբունքային, ծանր պայքար էին մղում հայ ժողովրդին հոգևոր-քաղաքական ազատությունից ու անկախությունից զրկելու բյուզանդական ու կաթողիկական նկրտումների դեմ: Հայտնի է, որ հզոր պետությունները կրոնական-հոգևոր գործոնի վրա նայել են որպես իրենց ծրագրերն ի կատար ածելու բարենպաստ կարևոր միջոցի: Այդպիսի քաղաքականություն գործնականում հաճախ է կիրառվել հայ եկեղեցու և հայ ժողովրդի նկատմամբ: Օտար եկեղեցիները ընդառաջ զնալով իրենց թիկունքին կանգնած աշխարհիկ իշխանությունների շահերին, ամեն մի ազդեցիկ միջոց օգտագործել են հայ եկեղեցու հետ ստեղծել ծեսի ու դավանանքի միասնություն՝ այն ձուլելու նպատակով, որպեսզի հայ ժողովրդին զրկեն իրենց ազդեցությունը հակազդվելու գաղափարական-հոգևոր հնարավորություններից: Ծնորհիվ իր աշխարհագրական դիրքի և սոցիալ-քաղաքական միջավայրի, Հայաստանը միշտ էլ իր վրա նվաճողական մեծ կրքեր է կենտրոնացրել: Պարզ է, նման տեսչեր փայփայողներին ցանկալի չէր, որ այնտեղ լիներ կենսունակ, ինքնագիտակ-

ցություն եկած, ուրույն և նույնիսկ հակադիր գաղափարաբանության տեր ժողովուրդ:

Ինչպես այլուր, Հայաստանում էլ, միջին դարերում, եկեղեցին այն հաստատությունն էր, որն զգալիորեն ներգործում էր ժողովրդի բարոյական ուժերի վրա: Գեո ավելին, հայ եկեղեցին միջազգային ասպարեզում երբեմն հանդես էր գալիս հայ ժողովրդի անունից ոչ միայն որպես կրոնական հաստատություն, այլև իրրև աշխարհիկ իշխանությունը ներկայացնող կազմակերպություն: «Հույների և ֆրանկների առաջ,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— հայ եկեղեցու ներկայացուցիչները հանդես էին գալիս ոչ միայն որպես հայ եկեղեցու, այլև որպես հայ ժողովրդի ներկայացուցիչներ»¹: Մենք կավելացնեինք նաև՝ պարսիկների, արաբների, մոնղոլների և այլոց առաջ:

Այս էր պատճառը, որ Հայաստանի դաշնակցությունը կամ հնազանդությունը ակնկալող ամեն մի օտար իշխանություն՝ հայկական արքունիքից հետո, երբեմն էլ դրանից առաջ, դիմում էր հայ եկեղեցին սիրաշահելու կամ շեղորացնելու քաղաքականությանը: Սույնը հաստատող փաստերով, դժբախտաբար, շատ հարուստ է հայ ժողովրդի պատմությունը: Գնահատելիս այն է, որ առաջատար հասարակական-մտավորական գործիչները, լավ ըմբռնելով այս իրավիճակը, ամեն կերպ զիմազրել են օտարների ոտնձգություններին:

Կիլիկիայի հայկական թագավորության հիմնադրման առաջին իսկ տարիներից, հայ ժողովուրդը ստիպված է եղել ավելի դժվարին պայքար մղել ոչ միայն Իկոնիայի սուլթանության ու արաբական ամիրայությունների, այլև, մասնավորապես, Բյուզանդիայի և Վատիկանի երբեմն բաշտահայտ, երբեմն էլ բողոքական ուղղության գործողությունների ու դիվանագիտական սադրանքների դեմ: Հատկապես XII դարի վերջին տասնամյակներին և XIII դարի սկզբներին, Լևոն Բ թագավորի հանդուգն և հետևողական ընդդիմության շնորհիվ, հարաբերությունները սրվեցին և՛ Բյուզանդիայի, և՛ Վատիկանի հետ: Բյուզանդիան և Վատիկանը ոչ միայն շօգնեցին հայերին Իկոնիայի սելջուկ սուլթանության, մոնղոլների, մամլուքների, այլազգի ամիրայությունների դեմ վարած տևական կռիվների ժամանակ, ընդհակառակը, ամեն կերպ փորձեցին շարաշահել նրանց բաժին հասած քաղաքական դժվարությունները: «Այս պայմաններում Հայաստանի ազատագրման Արևմուտքից ակնկալված քաղաքական կամ ռազմական երաշխիքները եկեղեցական հեղինակների մոտ կորցնում էին հետզհետե իրենց ուժը կոնսուրները»²: Հատկանշա-

¹ Հովհաննիսյան Ա., Գրվագներ, Ա, էջ 266.

² Նույն տեղում, էջ 277:

կան է, ամեն անգամ, երբ հայերն օգնություն էին ակնկալում, հատկապես Վատիկանից, վերջինս, իբր առաջին պայման, առաջարկում էր նրանց դավանափոխ լինել: Հասկանալի է, որ այս արմատական պահանջը Վատիկանի ո՛չ պարզամտությամբ և ո՛չ էլ սոսկ կրոնական նպատակներով էր պայմանավորված: Հայերի այլադավանությունը, ինչպես նշել ենք արդեն, շատ հարցերում խոչընդոտում էր և՛ Բյուզանդիայի, և՛ Վատիկանի քաղաքական ծավալապաշտական ծրագրերին: Նրանք մշտապես ձգտել են վերացնել գավառանքային այդ տարբերությունը և հայ ժողովրդին «բարեհոգաբար» առնել իրենց «գիրկը», ձուլել իրենց մեջ, թեև մինչև վերջ էլ դա նրանց չհաջողվեց, որովհետև հայերի «դավանանքային» այդ պայքարը, իբրք, ավելի շուտ պայքար էր ինքնագոյության, ազգային ինքնությունության և ազատության համար:

Վարդան Արևելացուն քաջ հայտնի էին այս բոլորը: Նա հայրենասիրական գործունեություն է ծավալում ու գործնական պայքար մղում Հայաստանի նկատմամբ գործադրված Բյուզանդիայի ու կաթոլիկ եկեղեցու քայքայիչ միջամտությունների դեմ: Իբրև հայ եկեղեցու ակնառու գաղափարախոսներից մեկը, նա իր տարբեր աշխատություններում հաճախ է անդրադարձել այն կարևոր հարցերին, որոնք առնչվում էին հայ եկեղեցու պատմությանը, ծեսերին, ավանդություններին և, անշուշտ, դավանանքին: Հիշյալ հարցերին Վարդան Արևելացին մոտեցել է նկատելի միտումով և հայ եկեղեցու դիրքը ջատագովելու վճռակա՜նությամբ: Առավելապես կանգ է առել այնպիսի խնդիրների վրա, որոնք ոչ միայն տեսական-վարդապետական կամ դոգմատիկ բնույթի էին, այլև ունեին ազգային-քաղաքական նշանակություն:

Մենք այս կապակցությամբ հանգամանորեն կանգ չենք առնի նրա բոլոր այն երկերի վրա, որոնք այս կամ այն կերպ առնչվում են տվյալ խնդրին: Մեր նպատակը չէ քննել ու ներկայացնել ընդհանրապես նրա ծանրակշիռ ներդրումը միջեկեղեցական դավանաբանական վեճերում: Կարող ենք գոհանալ մի շարք փաստերով. Վարդան Արևելացին այս պայքարում ներգրել է ոչ միայն իր իմացությունը, այլև հասարակական, քաղաքական և քաղաքացիական-հայրենասիրական գիտակցությունն ու ոգին: Գրա համար միանգամայն բավարար կլինի վկայակոչել նրա Հեթում Ա-ին ուղղված մեղ արդեն ծանոթ Թուղթը, ինչպես նաև ներքոդնեի ու ճառերի մեջ այս կապակցությամբ եղած մի քանի կարևոր հաստատումները:

Հիշյալ Թուղթը, ասես, կտակ է, ավանդ՝ սիրելի թագավորին: Հիշեցնենք նաև, որ գրված է Վատիկանի ներկայացուցչի՝ Դիմանջի կողմից հայ եկեղեցու հասցեին արված մի շարք մեղադրանքներին ի պա-

տասխան, որպեսզի հայոց թագավորը «շքմորի»՝ շմուրվի: Շատ որոշակի են թղթի հորինման թե՛ շարժառիթն ու նպատակը, թե՛ բովանդակությունն ու տրամադրությունը: Շարունակում էին բորբոքվել Բյուզանդիայի և Վատիկանի հավակնություններն ու պահանջները: Եկեղեցադավանաբանական հայտնի խնդիրներ պատրվակելով, նրանք ջանում էին քաղաքական, ծավալապաշտական շահերի համար աշխարհագրական ու ստրատեգիական դիրքով, տնտեսական կարողություններով խիստ հարմար հայկական կիրիկիան ևս պահել իրենց ենթակայության ներքո: Դա տեղի էր ունենում մանավանդ այն ժամանակ, երբ գրանից բխող վտանգը ավելի հնարավոր ու ակնհիշ էր դառնում այսպես կոչված արևմտյան կողմնորոշում ունեցող հայ աշխարհիկ-պետական ու եկեղեցական շրջանակների որոշ ներկայացուցիչների թույլատու վերաբերմունքի պատճառով: Ահա թե ինչու հարկ էր բաղմապատկել դիմագրության տեսական-գաղափարական հիմքի համոզականությունը, կայունությունն ու անդիզում ոգին: Վարդան Արևելացին այդպես էլ վարվում է, որի արդյունքն է նաև հիշյալ Թուղթը: Մենք նրա այս բնույթի երկերից հատկապես սրա վրա կանգ կառնենք, որովհետև այն իր նպատակասլացությամբ, ջերմ շնչով, փաստական ամրապինդ հիմքերով, տրամաբանական զորությամբ, նուրբ հումորով, ազգային-հասարակական բարձր ինքնագիտակցությամբ և վճռականությամբ, նման բովանդակության ու բնույթի լավագույն երկերից մեկն է թերևս ողջ հայ մատենագրության մեջ: «Պատասխան այս թուղթը հայ դավանաբանական գրականության գլուխգործոցը կարելի է համարել»,— իրավամբ գրել է հայ մատենագրության քաջ գիտակ Լ. Խաչիկյանը³:

Թղթի հիմնական բովանդակությունը հետևյալն է. նախ հեղինակը կաթոլիկության հավակնոտ դոգմաներն ու միտումները և Դիմանջի միջոցով հայ եկեղեցու հասցեին ուղղված մեղադրանքների ամբողջ շարքը հեքում է կես առ կես: Երկրորդ՝ շարունակելով իր «Ժղլանք»-ի ծրագրն ու նպատակը, թագավորին մաղթում է, որ ոչ միայն շմուրվի, այլև հաղորդվի հարազատ ժողովրդի մշակույթին, ավանդներին և հասարակական-եկեղեցական կյանքին վերաբերող պատմական, գիտական ճիշտ ու շահեկան գիտելիքներին և ունենա քաղաքական խոհմ, իրատև, կողմնորոշում⁴:

Ջրուցելով Հեթումի հետ այս խնդիրների շուրջ, Վարդան Արևելացին զգաստության է կոչում նրան, որպեսզի թագավորը չգայթակղվի «զառնազգեստ» կաթոլիկների, անուղղակիորեն նաև՝ բյուզանդացիներ-

³ Խաչիկյան Լ., Խրատական Թուղթը, էջ 269:

⁴ Գիրք Թղթոց, էջ 504:

րի խարդավանքներից: «Եւ ի գառնազգեցիցդ,— գրում է նա,— զգուշացուք, որ ընդ աստուծոյ և ընդ այնպիսի թագաւորին իրեանց շմորեն, կամին և ընդ մեզ շմորիլ. իւրենք գիտեն. թէ ընդ քեզ հաւատ հարցանեն և պահանջեն, դու հրամէ, թէ՛ նա զիմ առաջնորդացն ունիմ հաւատս և զիմ եկեղեցոյն, և նոցա պարտիմ համարս տալ և ոչ ձեզ...»⁵: Բացահայտ է, ըստ նրա, որ հակառակորդների բոլոր մեղադրանքներն էլ զուրկ են ավանդական ու փաստական պատճառաբանութիւնից, միտումնավոր հերյուրանքներ են և թելադրված միայն չար նպատակադրումներով:

Ինչպես տեսնում ենք, Վատիկանի թելադրանքների հանդեպ Վարդան Արևելցու գիրքը որոշակի է: Նա՞ հիշեցնում է, որ մենք՝ հայերս, ունենք մեր սեփական «հավատը» և ոչ միայն մտադիր չենք դրանից հեռանալ, այլև մենք հաշվետու ենք միայն մեր «առաջնորդների» առաջ և ոչ Վատիկանի: Շատ հատու այս հայտարարութեան մեջ, առանց դիվանագիտական շաղկրատանքի, ասված է այն ճշմարտութիւնը, ինչն այդ օրերին անհրաժեշտ ու շահեկան էր հայ ժողովրդի համար: Հեղինակը նույնն է թելադրում անել նաև հայոց թագաւորին, շատ լավ գիտակցելով, որ դա թեև դժվար է քաղաքական այնքան անբարենպաստ պայմաններում, բայց անհրաժեշտ է եկեղեցու, երկրի անկախութեան և ազգապահպանութեան տեսակետից: Այս առումով էլ նկատելի է հիշյալ խոսքերին նրա հաղորդած ազգային ինքնագիտակցութեան, ինքնորոշման և արժանապատմութեան շեշտն ու իմաստը: Այս ոգով է տոգորված սույն «Պատասխան թուղթ»-ն ամբողջութեամբ: Ահա թե ինչ ենք կարդում այս մասին Թղթի մի այլ հատվածում. «Եթե՞ն ասեն, թե ո՞ր բնութիւն է, զոր դուք մի՛ ասէք և զոր ուրանայք, ասայ, թէ՛ ուրացութիւն մեր չէ՞ զբրժ ի վերայ ճշմարտութեան, այլ՝ ձեր»⁶: Վարդան Արևելցին ոչ միայն դավանաբանական և քաղաքական զգոնութեան է կոչում Հեթում Ա. թագաւորին, այլև մղում հակահարձակման: Զէ՞ որ քա ինքնապաշտպանութեան երբեմն ավելի ներգործուն միջոց է, ինչպես տվյալ դեպքում, երբ Վատիկանը հայ եկեղեցուն մեղադրում էր ճշմարտութիւնից հեռանալու և կաթոլիկ «միակ ճիշտ» դավանանքից հրաժարվելու մեջ: Վարդան Արևելցին ոչ միայն հերքում է Վատիկանին, այլև նույնիսկ փոխադարձաբար մեղադրում, ավելի ամրապնդելով թղթի տրամաբանական և գաղափարական հիմքերը: Նրա այս դիրքն ու սկզբունքայնութիւնը իրապաշտ, հայրենասիրական, համարձակ քայլ էր այն պայմաններում:

⁵ Նույն տեղում, էջ 509:

⁶ Ժողանք, Մատենադարան, ձեռ. № 750, Բ. 152ա:

Պատմութիւնից հայտնի է քրիստոնեւթեան զխավոր կենտրոններին, այսպես կոչված՝ աթոռների, հատկապես Հռոմի և Բյուզանդիայի հակամարտութիւնը՝ «նախապատիւ» աթոռի իրավունքը նվաճելու համար: Որոշ է, որ այդ արվում էր, որպեսզի հաղթողի համար քաղաքական ավելի լայն ազդեցութեան ուղորտ ու գերիշխանութիւն ձեռք բերվեր: Հատկապես XII—XIII դարերում, «նախամեծար աթոռ»-ի՝ հավակնութիւններով Վատիկանը կամենում էր իր և իրեն հարող պետութիւնների դեպի Արևելք ծավալվելու շահերից ելնելով՝ պայմաններ թելադրել և կամակատարի դերում պահել նաև հայ ժողովրդին: Հենց այդ պիսի շահագիտական նկատառումներով է, որ դեռ շատ վաղուց առաջ է քաշվել Հռոմի «գերագահութեան» հարցը: Իսկ այդպիսի հավակնութեան դեմ ծառանում է մեր հեղինակը՝ հեգնելով կաթոլիկների հիմնական կրօնական պատճառաբանութիւնը: Նա հարց է տալիս, թե ինչո՞ւ և ինչպիսի՞նք է Հռոմը քրիստոնեւթեան առաջին աթոռ համարվելու: Եթե լոկ նրա համար, որ Պետրոս Առաքյալը այնտեղ է նահատակվել, ապա ի՞նչ պիտի ասել Երուսաղեմի մասին, որտեղ խաչվել է ինքը՝ Փրիստոսը. «...ընդ է՞ր եղև Հռոմ առաջին. թէ զՊետրոս իւրենք սպանին ի Հռոմ, զՊետրոսի Աստուածն հրէայքն սպանին յերուսաղէմ: Երոսպաղէմ ընդ է՞ր չէ՞ հրամանատու ամենայն երկրի»⁷: Ուշադրութեան արժանի են մանաւանդ այս պարբերութեան վերջին խոսքերը, որոնք շատ հատկանշական ու բնորոշ են Հռոմի (Վատիկանի) «հրամանատու ամենայն երկրի» դառնալու քաղաքական հիմնական ձգտումը ընդգծելու համար: Վարդան Արևելցին մի այլ տեղ՝ Գրիգոր Լուսավորչի թոռներին նվիրված ներբողում ոչ միայն այդպիսի նուրբ հեգնանքով ժխտում է Հռոմի «առաջին» աթոռ լինելը, այլև, ոչ առանց հատուկ նպատակի, Հռոմիկան, որ այդ ժամանակ հայ եկեղեցու կաթոլիկոսանիստ աթոռն էր, հայտարարում է «համափառ» Հռոմին. «Որպէս և ի Հռոմելայ մեծն Հռոմ է՞՞ զկնի Իլիոնական պատերազմին ի վեցերորդ հատածի Երուպիոյ ի Լատինայն կոչեցելում, որպէս և Կամափառն (ընդգծումը մերն է—Փ. Ա.) նմին մայրն մեր հաւատոյ և հոմանունն Հռոմիկայ, տեղի յարկի տեառն աստուծոյ...»,— գրում է նա՞: Դժվար չէ կոահել, թե ինչ միտք է արտահայտում հեղինակը և ինչու է այդպես վարվել: «Հավասար ընդ հավասարի» սկզբունքն է միակ ճիշտն ու ընդունելին նաև Վարդան Արևելցու համար: Այստեղ բյուրեղյա պարզութեամբ պաշտպանված ու վերահաստատված է հայ եկեղեցու և ողջ հասարակութեան կայուն ու ավանդական դիրքորոշումը՝ ի գիտութիւն և ի զգաստութիւն հայ այն

⁷ Գիրք թղթոց, էջ 504:

⁸ Ներբողան ի Վահրամ, Մատենադարան, ձեռ. № 8775, Բ. 309բ:

հոգևոր ու աշխարհիկ տարրերի, որոնք երբեմն նահանջում էին այդ դիրքորոշումից՝ պարզամտորեն ակնկալելով Բյուզանդիայի ու Վատիկանի ռազմաքաղաքական աջակցությունը: Այնուհետև Վարդան Արևելցին միանգամայն արդարացի դառնություններ ժխտում է Ղոմի այսպես ասած «փրկարար» առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Ե՞րբ և որտե՞ղ է եղել այդ: Եթե Վատիկանը նոր է հայ ժողովրդին կամենում «գտած» լինել իբրև քրիստոնյա ժողովուրդ, ապա նա շատ է ուշացել, իսկ եթե օգնելու և «փրկելու» (ոչ կաթոլիկական ըմբռնմամբ) մտադրություն ունի, դրա համար առիթներ շատ կան. «Ու Ի (620) գաւառ են հայք յնկայէն ի վեր, և կան որ աւեր են, և կան՝ որ ի ծառայութեան. թէ ցալին ընդ հայոց, թող երթան ազատեն և խաւսին ընդ հայոց վարդապետարանսն և ընդ զպրատունսն, որ ոչ բլայթով և խաբէութեամբ ուսուցանեն և ուսանին, որպէս զոճա (կաթոլիկները—Փ. Ա.), այլ ճշմարտութեամբ և հիմամբ առաջնոցն, և ապա գան առ մեզ (ընդգծումը մերն է—Փ. Ա.)»⁹: Այստեղ ևս շատ որոշակի է հեղինակի պարսավանքը և, մանավանդ, խոր, ազգացավ հայրենասիրությունը: Իսկապես դա մի այնպիսի ժամանակ էր, երբ քրիստոնյա Հայաստանը դառնորեն հեծում էր օտար նվաճողների կեղեքումներից և անպայման կարևոր ունեւր դրսից գալիք օգնության: Այդ առիթով հայերը քանիցս դիմել էին հատկապես Վատիկանին (որը փաստորեն ներկայացնում էր ամբողջ Եվրոպան), որպեսզի օգնության ձեռք մեկնի իրենց, բայց մերժվել էին, որովհետև շունչին կաթոլիկական դավանանք և Ղոմը չէին հայտարարել «առաջին» և «գերագահ» աթոռ: Միանգամայն սուտ ու կեղծ են հայ ժողովրդի նկատմամբ նրանց ցուցարեւած կրոնասիրական ու մարգասիրական զգացումները: Նրանց «փրկարար» առաքելությունը նույնչափ անապատիւ խաբկանք է, քանի որ 620 տառապող հայկական գավառներից և ոչ մեկը «փրկելու» դուրզն քայլ իսկ չեն արել: Ուստի ճիշտ է նկատում Վարդան Արևելցին, որ Վատիկանը այն ժամանակ անկեղծ չէր իր հայտարարության մեջ և հայ ժողովուրդը շպնտք է իր հույսերը կապի նրա հետ: Սա «Արևմուտքից ակնկալվող փրկարարության» վերաբերյալ մտայնության իրապաշտ ու սրտացավ հերքումն է, որովհետև հայ ժողովուրդը շատ թանկ հատուցեց Արևմուտքի հետ իր հավատակցության, առավել ևս՝ դաշնակցային կապի համար: Ըստ այսմ, Վարդան Արևելցին ազդարարում է, որ զուր էր հույսեր կապելը նաև նրանց դիվանագիտական քայլերի հետ. դա իրավացի ու հեռամետ նախազգուշացում էր:

⁹ Գիրք թղթոց, էջ 509:

Իսկ ինչ վերաբերում է Վատիկանի արտաքնապես զուտ դավանաքանական թվացող պնդմանը, թե իբր հայերը քրիստոնեական ճշմարիտ վարդապետությունից հեռացել են և, որպեսզի վերագտնեն այն, պետք է կաթոլիկ եկեղեցու գիրկը վերադառնան, Վարդան Արևելցին համարձակ հայտարարում է, որ կաթոլիկները իրենք տվյալ հարցում առանկա շատ բան ունեն հայերից, թող սովորեն «և ապա գան առ մեզ»: Այս մասին նա մի քանի անգամ ակնարկել է նաև իր ներքողներում: Այսպես, օրինակ, Գրիգոր Լուսավորչին նվիրված ներքողում Վարդան Արևելցին գրում է, որ Ղոմից եկած Հոփսիմյան կույսերը, հաղորդվելով Լուսավորչի վարդապետությանը՝ «...առաքեն աղօթիւք և ազգմամբ վերին շնորհացն զարեւելեան արեգակն (Գրիգոր Լուսաւորիչ—Փ. Ա.) ի մուտս արևու, ուստի ինքեանք էին, զի անդրէն տարեալ զփոխարէնն ձեռնալուծին հատուցէ քաղաքի նոցա Ղոմայ և աշխարհին յիտալացոց և ամենայն Եւրոպայ՝ ծագելով նոցա լոյս և շերմն ճառագայթիւք արասցէ նոցա գարուն հոգևոր և պողածին»¹⁰: Այս տողերը թեև պատմում են IV դարի դեպքերի մասին, բայց չմոռանանք, գրվել են XIII դարում, այսինքն՝ արևմտյան (Վատիկան, Բյուզանդիա) և արևելյան (հայկական, ասորական և այլն) եկեղեցիների «կրոնական» վեճերի ամենաթեթ ժամանակահատվածներից մեկում: Եվ այս պայմաններում Վարդան Արևելցին, ի դեմս հայ եկեղեցու ազգային սրբի, Ղոմին և «ամենայն Եւրոպայ» լոյս ու «պողածին հոգևոր գարուն» էր առաքում. դա ևս, մեր կարծիքով, առանց դիտավորության չէր կարող լինել: Այստեղ խոսքը ուղղակի և նպատակամետ է ասված. Հայաստանը հարկադրված չէ «լոյս» սպասել Ղոմից, և դեռ «վելին» ինքն է պատրաստ իր սեփական «լոյս»-ը ջամբելու նրան և ամբողջ Եվրոպային: Այն օրերի քաղաքական պայմանների, «կրոնական» պայքարի ու հոգեբանության տեսանկյունից՝ վերոգրյալ բառերի մեջ չի կարելի շտեմել դրանց հեղինակի քաղաքական հեռատեսությունն ու հայրենասիրական անկոտրում հաստատակամությունը:

Այստեղ կարելի է հիշատակել Վարդան Արևելցու մեկ այլ վկայությունը ևս, ըստ որի «համազգի» սրբերին և հոգևոր առաջնորդներին քրիստոնյա հավատացյալը պարտավոր է «առավել» պատիվ տալ: «Զի,— գրում է նա,— թէ զամենայն սուրբս պատել պատէր ընկալաք, Երչափ ևս առաւել՝ զհամազգի առաջնորդս մեր...»¹¹: Քրիստոնեությունը, ըստ իր վարդապետության, սրբերին պաշտելու հարցում ազգային պատկանելության կամ խտրության պայման չի դնում, մինչդեռ

¹⁰ Ներքողան ի Գրիգոր Լուսաւորիչն, ձեռ. № 8775, Բ. 234ա:

¹¹ Նույն տեղում, Բ. 254բ:

Վարդան Արևելցին դա նույնիսկ հանձնարարում է: Պատճառը: Դարձ-
չալ Բյուզանդիայի և Վատիկանի այն օրերի ոտնձգություններն էին:
Զօտարանալու և արտաքին ճնշումները դիմագրավելու համար հարկ է
ամբողջ ուժով փարվել սեփականին, ինչ քոնն է, քո ժողովրդինը: Կաս-
կած չկա, որ միջին դարերի հայ մարդը Վարդան Արևելցու այս հանձ-
նարարությունը վերաբերվել է գոհունակությամբ:

Հայ ժողովրդի քաղաքական անկախությանը, ազգային դիմագծին,
ավանդույթներին, լեզվին և գոյությանը սպառնացող արտաքին աշ-
խարհից եկած «կրոնական», մշակութային և քաղաքական ճնշումների
դեմ բարձրացված իր հուժկու խոսքը Վարդան Արևելցին եզրափակում
է շատ կտրուկ և համարձակ. «Ապա զիրեանց արուեստակեալ առաս-
պելսն իսկի շընդունիմք, այլև արհամարհեմք, և շիշխեն ի վերայ մեր
ամենեկին»¹²: Ահա սա է Վարդան Արևելցու որոշակի դիրքն ու եզրակա-
ցությունը այս հարցում, որը քիչ հետո մեր մեկ այլ նշանավոր մատե-
նագրի մոտ պիտի ստանար հետևյալ ձևակերպումը. «Հաւան եմք
մեք ընդ մեր հարսն ի գժոխս իջանել և ոչ ընդ հոռոմոց յերկինս ելա-
նել...»¹³:

Այսպիսով հասկանալի է, թե ինչ տեղ ու նշանակություն ունենին
Վարդան Արևելցու համար տվյալ ժամանակում Բյուզանդիայի ու Վա-
տիկանի դեմ մղվող դավանաբանական վեճերը¹⁴: Իսկապես էլ մեծ
հայրենասերը ազգային ինքնուրույնության, ինքնապահպանության,
քաղաքական ու բարոյական ազատության նկատառումներով իր գոր-
ծուն մասնակցությունն է բերել այդ վեճերին: Չի կարելի շքնդգծել նրա
որոշակի նպաստը հայ ազատագրական մտքի զարգացման կարևոր
գործին:

12 Գիրք թղթոց, էջ 509:

13 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 459:

14 Այս իրավիճակում առնվազն տարօրինակ է բանասերներ Գ. Սարգսյանի և Ս. Կոզյանի պնդումն այն մասին, թե իբր Վարդան Արևելցին «կաթողիկե» դավանանք է ունեցել: Նրանք հիմք են ընդունում Վարդան Արևելցու շարականների մեջ արված դիտողությունները և «Հաւաքումն պատմութեան» այն հատվածը, որտեղ խոսվում է Ստում 1251 թվականին զումարված ժողովի մասին: Այդ ժողովում քննվել էր նաև «բղիստն ի հօրէ և յորդոյ» կաթողիկեական բանաձևը, և ըստ վերոհիշյալ բանասերնե-
րի, իբր թե Վարդան Արևելցին այստեղ վկայում է, որ հայերը ևս ընդունել են այն:

Պետք է սկզբից ևեթ ասել, որ հարգելի բանասերների դիտողությունը իրականու-
թյանը չի համապատասխանում ո՛չ դավանաբանական, ո՛չ բանասիրական, ո՛չ էլ պատ-
մական տվյալներով: Նրա շարականներում սույնը հաստատող փաստ չկա և իզուր է
այնտեղ շանսափրարար նման հետք փնտրվել: Իսկ ինչ վերաբերում է «Հաւաքումն
պատմութեան» ակնարկված հատվածին, պետք է ասել, որ այն ընթերցված է 1862
թվականին Վենետիկում լույս տեսած հրատարակության մեջ, որտեղ ասված է, թե այդ

Հասարակական-քաղաքական այս բնագավառում Վարդան Արևել-
ցին նաև այլ կարգի օգտաշատ ծառայություններ ունի, որոնց մասին
հայագիտության մեջ, հայ եկեղեցու պատմությանը նվիրված ուսում-
նասիրություններում քիչ թե շատ խոսվել է, բայց, դարձյալ, ոչ ըստ
էություն և ոչ բավարար: Ուշադրության արժանի են Մ. Օրմանյանի,
Գ. Հովսեփյանի, Լ. Խաչիկյանի կարծիքները: Առաջինն ընդգծում է
Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի հետ «ազգին և եկեղեցւոյն ող-
բալի վիճակին վրա» նրա մտատանջվելը, սոցիալական և կենցաղային
շարիքների դեմ պայքարելը, հայ եկեղեցու նվիրապետական կարգու-
կանոնի ու ներքին կյանքի կազմակերպմանը նվիրված եռանդագին
ջանքերը¹⁵:

Գ. Հովսեփյանը Զագավանից ժողովի «Սահմանք»-ի քննարկման
առիթով շեշտում է Վարդան Արևելցու կարողություններն ու կարևոր
գերը հայ հասարակական կյանքը բարվոքելու ուղղությամբ կա-
տարած կազմակերպչական և մատենագրական աշխատանքներում¹⁶,
Լ. Խաչիկյանը ևս մեծ կարևորություն է տալիս սույն իրողությանը, այս

բանաձևը իբր «ոչ եղև հաճոյ Ասորոց և յունաց և վրաց, բայց ի հայոց» (էջ 148):
Բայց 1861 թվականի մոսկովյան հրատարակության մեջ (էջ 194) և Մաշտոցյան Մա-
տենագրանի հնագույն ձևագրերում № № 3078 (194թ), 1482 (464ա), 1899 (357բ)
վերաբերյալ տողը այս կերպ է. «...ոչ եղև հաճոյ ասորոց և հունաց և վրաց և հայոց»
(ընդգծումները մերն են—Փ. Ա.): Այս է ճիշտը նաև այն պատճառով, որ մինչև հիմա
էլ հայ եկեղեցին շարունակում է մերժել «բղիստն ի հօրէ և յորդոյ» կաթողիկեական
բանաձևը. էլ չենք ասում, որ վերը բավականաչափ մանրամասն քննված Վարդան
Արևելցու խոսքերը կասկած չեն հարուցում, որ նա կարող էր երբևէ «կաթողիկե» դավա-
նանք ունենալ:

Մենք այս հարցին չէինք անզրադառնա այստեղ, եթե այն շունենար նաև բանա-
սիրական նշանակություն: Ելնելով այս տեսական սխալ հիմքից, հիշյալ բանասերները
չեն ընդունում, որ «ժղլանք»-ին մաս կաղմած վերոհիշյալ «Պատասխան թողթ»-ը՝
Վարդան Արևելցունն է, որովհետև ըստ նրանց, նա չէր կարող հակակաթողիկեական
արամադրություններով հագեցած նման մի գործ գրել (Սարգսյան Գ., «Բազմավյու»,
1949, էջ 120—121): Ինչպես դիտել ենք տվել իր տեղում, Մխիթարյան հայրերից
շատերը, թեև ոչ բոլորը, շեշտում են Վարդան Արևելցու «կաթողիկե» դավանանք ու-
նենալու ոչ ճիշտ տեսակետը (Պոզյան Ս., Հայոց եկեղեցին, Պէյրոթ, 1961, էջ 452):

Մենք արդեն գիտենք, որ պատմական ու բանասիրական փաստերը որոշակի ցույց
են տալիս, որ այդ թուղթը անպայման Վարդան Արևելցու կողմից է հեղինակված, այն
անմիջական մաս է կազմում «ժղլանք»-ին և իր գաղափարական բովանդակությամբ,
«վերոնքներով ու արամադրությամբ լրիվ պատշաճում է նրա բոլոր աշխատություն-
ներին մեջ այս կապակցությամբ եղած վկայություններին ու ոգուն:

15 Տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, Բ, մասն Ա, էջ 1625, 1635—1637, 1642—
1643, 1660—1663:

16 Տե՛ս Հովսեփյան Գ., Զագավանից ժողովը, էջ 29—30:

ողորտին անշվող նրա մի քանի երկերի պատմաճանաչողական արժեքին, գնահատում նրան իբրև «հասարակական գործիչների ուսուցիչ», որը միաժամանակ «քաղաքական առաջնակարգ» դեր է կատարել, ունեցել «շափազանց աշխույժ գործունեություն» հենց իբրև «քաղաքական գործիչ»¹⁷։

Մեր խոսքը չժանրաբեռնելու համար փորձենք ուշադրություն դարձնել միայն մի քանի կարևոր իրողությունների վրա, որպեսզի ավելի հըստակ ու ամբողջական գաղափար ունենանք Վարդան Արևելցու հասարակական-քաղաքական գործունեության այս էջի մասին ևս։ Խոսքը ի մասնավորի վերաբերում է եկեղեցական ժողովների կազմակերպման գործին նրա բերած մասնակցությունը և հորինած կանոնական բնույթի երկերի բովանդակությունը։

Վարդան Արևելցին իր աշակերտ Հովհաննես Երզնկացու իսկ վկայությամբ՝ «բազում անգամ ժողովք արար»։ Այդ ժողովները երբևէ են՝ Սսի (1243 թ.), Հաղպատի և Զագավանից (1270 թ.), որոնց գումարման և կայացրած որոշումների սահմանման ու ձևակերպման մեջ նրա մասնակցությունը էական ու անմիջական է, որին կանգնադառնանք ստորև։

Ի՞նչ նպատակ էին հետապնդում այս ժողովները, ի՞նչ արդյունք ավելցին և ի՞նչ նշանակություն ունեն մանավանդ Վարդան Արևելցու հասարակական գործունեության գնահատման հարցում։ Հայ եկեղեցական այս կարգի ժողովները պատմաքաղաքական, հասարակական և հոգևոր-մշակութային պայմանների ու խնդիրների թելադրությամբ էին տեղի ունենում, նպատակ ունենալով գոհացնել ըստ այդմ առաջադրված համապատասխան պահանջները, հնար ու ելք գտնել ստեղծված երբեմն խիստ դժվարին, պատասխանատու իրադրություններից, կարգավորել ու «սրբագործել» հասարակական հարաբերությունները, մանավանդ ապահովել եկեղեցու և եկեղեցական դասի վարկն ու գործարար դերը։ Հիշյալ ժողովները ազգային հոգևոր վերին ատյաններն էին, որոնք սահմանում էին իրավական այն նորմերը, կանոնները, «սահմանքները», որոնցով առաջնորդվում էին դատական ատյանները։ Նման հանգամանքը շատ էր բարձրացնում դրանց գործնական դերն ու նշանակությունը միջնադարի հայ իրականության առօրյա կյանքում։ Այս առումով էլ դրանք կարևոր են նաև մեզ համար, երբ փորձում ենք արժեքավորել Վարդան Արևելցու հասարակական-քաղաքական ջանքերը նույն այդ կյանքում, մանավանդ որ նա ոչ թե մեկ, այլ «բազում» այսպիսի ժողովներ է գումարել։

17 Տե՛ս Խաչիկյան Լ., Վասն բանին մասանց, էջ 81—82։ Նույնի՝ Խրատական թուղթը, էջ 268—269։

2673

Սսի 1243 թվականի ժողովը տեղի է ունեցել պատասխանատու մի շրջանում, երբ զգալի շափով աշխուժացել էին ավանդական վեճերը եկեղեցադավանարանական հարցերի շուրջ։ Ժողովի կազմակերպման համար կային հատկապես հասարակական կենցաղի ու բարքերի մաքրման վերաբերյալ լուրջ մտահոգություններ։ Ահա թե ինչ է այս անշվողությամբ գրում Կիրակոս Գանձակեցին. «Բսկ առաքինի կաթողիկոսն Հայոց Կոստանդին, իբրև ետես զուեր աշխարհիս հայոց և զտառապանսն, զոր կրէին ի հարկահանացն և ի զօրաց թաթարին, և մտախոհ եղեալ՝ իմացաւ, եթէ մեղքն են այսմ ամենայնի պատճառ, զի ամենայն մարդ խնամով ի շարիս խոկայր գործել զհաճոյս կամաց իւրոց. զի կարգ ամուսնութեան սուրբ օրինացն բարձաւ, հեթանոսօրէն արինն ընդ արինն խառնէին՝ զազգականսն առնելով. և զոր կամէին՝ թողուին և զոր կամէին՝ առնուին. և պարկեշտութեան պահոց փոյթ ինչ ոչ առնուին, ընդ հեթանոսս խառնակէին անխտիր, նաև, որ մեծն է քան զամենայն շարիս, զի եպիսկոպոսք արժաթով առնէին ձեռնադրութիւն՝ զպարգեան Աստուծոյ անարժանից ծախելով, և զմանկունսն և զտգէտսն որ ոչ մարթէին ուղղակի խօսել առաջի մարդկան, միջնորդ ընդ Աստուած և ընդ մարդիկ կացուցանէին։ Եւ անարժան քահանայք և պոռնիկալք, և յայտնի բոլոս նստուցեալ, առնէին քահանայագործութիւն և այլ բազում շարիս»¹⁸։

Շատ կարևոր հանգամանք է, որ սույն ժողովին մասնակցել են աշխարհիկ իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչներ. այն զուամարվել է թագավորի «ձեռնտուութեամբ», ըստ երևույթին նաև մասնակցությամբ։ Ուշադրության արժանի է ժողովին անպայման համաժողովրդական նշանակություն տալը, որ այն նպաստեր հայկական երկու հատվածների՝ Մեծ Հայքի և Կիլիկիայի միասնությանը՝

Ըստ այս զրդապատճառների էլ Սսի ժողովը որոշումներ է ընդունում, որ ձեռնադրությունները լինեն առանց կաշառքի («առանց արժաթոյ»)։ Դարձյալ առանց կաշառքի և միայն «արժանաւորքն և զի-

18 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 293—294։

* Կարելի է որոշ նկատառումով համաձայնել Մ. Օրմանյանի կարծիքին, թե իբր սույն ժողովը համազգային չէր, քանի որ նրան չէին մասնակցել Մեծ Հայքի ներկայացուցիչները (Ազգապատում, Բ, մասն Ա, էջ 1626)։ Սակայն, հետադարձ ժողովի որոշումները արժանացան նաև նրանց զբավոր հաստատմանը և հիմնականում ընդունվեցին։ Համենայն դեպս, ժողովի կազմակերպիչները, հատկապես Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսն ու Վարդան Արևելցին ջանացին, որ այն զոնե ըստ նշանակության և գործնականում համազգային բնույթ կրի, թեկուզ և որոշումներից ոչ բոլորն ընդունվեին, քանի որ դրանցում կային այսպես կոչված «բիշոպական» կաթողիկոսության, Արևմտքի հանդեպ կանոններ, բայց դրանք չէին բնորոշում ժողովի էությունը։



տունքն» եպիսկոպոսական աստիճան ընդունեն թեմի գիտությամբ ու կամքով: Կնունքը և հաղորդությունը կատարվելու են առանց գրամի: Շատ ուշագրավ է, որ հրահանգ է տրվում եկեղեցական խորհուրդները իրագործել առանց «ծաղու» (ծաղրանքի): Պսակը «ընտրությամբ» պիտի լինի, վեց պորտ «հեռացնել յազգակցութենէ արեան», փեսայի տարիքը տասնչորսից, հարսինը՝ տասներկուսից ոչ պակաս: Դասասաց դպիրները ևս գիտուն ու վարժ պիտի լինեն:

Եպիսկոպոսները մեծ ջանք պետք է թափեն «զպոռնիկս և զշնացողս, զհմայս և զամենայն յանցաւորսն գեհենին» գարձի բերելու համար, իսկ այնպիսիներին, որոնք «այր և կնոջ մէջ մտցեն, կամ բողունիցին կին, կամ զկինն թողուն զօրինաւոր և առ բողս երթան, կամ ատելութեան պատճառաւ թողուն զկանայսն առանց բանի պոռնկութեան» հարկ է նույնիսկ մարմնական պատժի ենթարկել: Շատ հատկանշական է հասարակական բարքերի խաթարումն արտացոլող հետեւյալ կանոնը. «նախ քան զայս և յառաջ քան զամէնն զայս եմք հոգացեալ առաջի արքային Հեթմոյ և հօր իւրոյ՝ Կոստանդեայ և ամենայն իշխանացն, և բանագրանօք բանագրեալ յամենեցուն վերայ, որ օգնական լինին եկեղեցւոյ, և ամենայն տեղի՝ ի մեծ և ի փոքր՝ յիշոցաւագ զննն ի դարպաս, ի քաղաք, ի գիւղս, ի բերդս և յագարակս, և զանօրէն յիշոցասացսն, զաստուծոյ բարկութիւն շարժողսն և զաննորէլի անօրէնսն, որ անարգեն զհաւատսն, զստեղծող, զկնունք, զհրեշտակ, զքահանայ, զբերան, զերես, զգերեզման, և զայլ այսպիսիս զնոր բուսեալ շարիսդ. զայնպիսեացն զլեզուսն հատցնն, և կամ ծակեցնն և ի լար ի ներս ածցնն...»: Ըստ երևույթին նման մեղքի մեջ գտնվելիս են եղել նույնիսկ իրենք՝ քահանաները, այլ կերպ հարկ չէր լինի հատուկ կանոնով շեշտել, որ մեղանշած քահանան արժանի է կրկնակի պատժի: Հատուկ կանոններ են սահմանվում նաև եկեղեցական հարկերի ու «հաս»-երի վերաբերյալ, որոնք պետք է տրվեն քահանային ժողովրդի կողմից, իսկ քահանան դրանցից պիտի բաժին հանի եպիսկոպոսին, եպիսկոպոսն էլ՝ «հայրապետական աթոռին»:

Վերջին երկու՝ ԻԳ և ԻԾ կանոնները, որոշ «զիջողական» տուրք են երկրում ծայր առած կաթողիկամետ տրամադրություններին. առաջինը առաջարկում է մի քանի սրբազրություն «Սուրբ աստուած», «Լուր ձայնից մերոց» և «Գոհանամք զբէն» սկսվածքներով աղոթքների մեջ, երկրորդը՝ հանձնարարում է հիվանդի վերջին օժումը, քանի որ հայ եկեղեցու ականավոր կանոնագետ Հովհան Օձնեցի կաթողիկոսը ժամանակին (VII—VIII դդ.) իբր ընդունել էր այն:

Այսպես նաև հետագայում, Խորվիրապում ապրած տարիներին, շարունակում է գործել Վարդան Արևելցին՝ ծանրաբեռնված հարազատ

երկրի և ժողովրդի ցավերով, հայ աշխարհիկ իշխաններ՝ Սմբատի, Ավագի, Սաղունի, Քուրդի և այլոց հետ մտերմական համագործակցության պայմաններում: Հասարակական իր ամենավերջին ծառայությունը նա կատարում է 1270 թվականին, մահվանից ընդամենը մեկ կամ կես տարի առաջ: Դա Չագավանից ժողովի կազմակերպումն էր և նրա կանոնների՝ «Սահմանք»-ի հեղինակումը: Այս իրողության նշանակությունը ևս շատ մեծ է: Սույն առիթով էլ հասարակության բարոյական կյանքն ու կենցաղը հետագա խաթարումներից զերծ պահելու, եկեղեցու վերին հովանավորության ներքո և աշխարհիկ իշխանավորների թուլությամբ հասարակությունն ու նրա առաջնորդներին դաստիարակելու և լուսավորելու իրավավարչական միանգամայն կարևոր քայլ էր կատարվում (այս մասին ավելի մանրամասն՝ հետո):

Այս մի քանի մանրամասները թվարկեցինք, որպեսզի պարզ ու մեկին երևա, թե Կոստանդին կաթողիկոսին այնքան սերտորեն գործակցած, այս կանոնների շարադրանքին անմիջականորեն մասնակցած Վարդան Արևելցին հասարակական ինչ մտահոգություններով էր ապրում և ինչպիսի ջանքերի ու միջոցների դիմում՝ հասարակությունն աղտեղություններից մաքրելու ուղղությամբ: Նա այլ առիթներով շատ է առանձին խրատներ ասել այս առընչությամբ, բայց այլ բան է խրատելը, այլ բան՝ կանոնական ուժի միջոցով իրավավարչական պայքար մղելը: Դա հուսալի և ավելի երաշխավորված ձև էր: Տվյալ ելակետով Կոստանդին կաթողիկոսը և Վարդան Արևելցին աշխատում են այդ «կանոնական ուժը» տարածել նաև Մեծ Հայքում՝ տեղի հասարակական կամ նմանօրինակ շարիքների դեմ պայքարելու համար: Վարդան Արևելցին, կաթողիկոսի իշխանական լիազորությամբ, բառացի՝ «փոխանակ անձին» նրա, Մեծ Հայք է բերում այդ ժողովում ընդունված կանոնները՝ առ ի գործադրություն¹⁹: Նախ սա ցույց է տալիս ոչ միայն այդ հասարակական միջոցառման առթիվ Վարդան Արևելցու նկատմամբ ցուցաբերված վստահությունը, այլ միջոցառումը արդյունավետ դարձնելու ակնկալությունը, այլև իր՝ Վարդան Արևելցու նվիրվածությունն այդ կարևոր գործին: Ըստ երևույթին նա քիչ դժվարություն չի հաղթահարել այդ որոշումները, երկու «զիջողական» կանոններով հանդերձ, հավանության արժանացնելու համար, այն էլ «ձեռնադրությամբ» կամ «մատնադրությամբ», այսինքն՝ ստորագրությամբ վավերացված: Դա դյուրին գործ չի կարելի համարել մանավանդ այն օրերին և այնպիսի պայմաններում, երբ Մեծ Հայքի՝ «Հյուսիսային» կամ «Արևել-

¹⁹ Այս ամենի մասին մանրամասն տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 293—312:

յան» եկեղեցականները անշափ զգայուն վերաբերմունք ունեին Կիլիկիայի եկեղեցական շրջանակներում տեղի ունեցող արևմտամետ խմորումների նկատմամբ: Այնպես որ այս հաջողությունը ևս պիտի գրական համարվի Վարդան Արևելցու հասարակական գործունեության գնահատման հարցում:

Սրանով շին ավարտվում Վարդան Արևելցու հասարակական աշխատանքները Կիլիկիայում: Մեծ Հայքից կրկին վերադառնալով Կիլիկիա, նա վերստին նվիրվում է ոչ միայն մատենագրական ու մշակութային, այլև երկրի հասարակական-քաղաքական կյանքին ծառայելու գործին: Դա տևում է մինչև 1251 թվականը: Նույն Հեթում Ա թագավորն ու Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը դեռ գահի վրա էին: Նրանց ու Վարդան Արևելցու միջև շարունակվում է սերտ համագործակցություն: Դարձյալ հարկ է համարվում, որ վերջինս Մեծ Հայք՝ Արևելիցյան Հայաստան ասնի Կոստանդին կաթողիկոսի անունից գրված «Խրատական թուղթ»-ը²⁰:

Թուղթը թեև ուղղված է առանձնապես Արևելյան Հայաստանի հայությունը, սակայն համազգային հոգսերի արգելուք է, բայց այդմ էլ ավելի նշանակալից: Շատ հավանական է, որ Վարդան Արևելցին, վերադառնալով Կիլիկիա, կաթողիկոսին մանրամասն պատմել է Արևելյան Հայաստանում այդ ժամանակ տիրող սոցիալական, հասարակական, կենցաղային խաթարումների մասին և փորձել նրա հետ միասին դարման գտնել, որի արդյունքն է սույն Թուղթը: Այս առնչությամբ ավելի մանրամասն խոսք կլինի իր տեղում. ասենք միայն, որ Թուղթը պատմաճանաչողական, հասարակական և մշակութային մեծ արժեք է ներկայացնում և մատենագրական կարևոր սկզբնաղբյուր է: Այստեղ սրտացավ վերաբերմունքի, երբեմն նաև հանդիմանության են արժանացած հասարակական, հոգեբարոյական շատ խնդիրներ, որոնք արատավորում, քայքայում էին հասարակությունը: Ցավով են արձանագրված մոնղոլների տիրապետության հոգեմաշ դժգոհությունը, հարկային կեղեքիչ համակարգը՝ «հարկդ ծանր է և խիստ»: Այսուհանդերձ «Խրատական թուղթ»-ը, ոչ առանց Վարդան Արևելցու անմիջական միջամտության, մոնղոլներին չհակադրվելու թելադրություններ է բովանդակում: Վարդան Արևելցին այլուր ևս երբեմն բարյացակամ է արտահայտվում մոնղոլների մասին՝ կապված քաղաքական որոշ ակնկալությունների և հարկային բռնությունների հնարավոր մեղմացման, նրանց այսպես կոչված «երկրորդ» տիպի քաղաքական վարքագծի՝ Արևելքում

քրիստոնյաների համար կատարելիք իբր «բարենպաստ» դերի, նույնիսկ քրիստոնյա դառնալու հնարավորության հետ: Միանգամայն իրավացի է և. Խաչիկյանը, երբ այս առնչությամբ առաջ է քաշում հետևյալ լուրջ պատճառարանությունը. «Չպետք է մոռանալ, որ ապրստամբությունը (1249 թ. հայ-վրաց՝ ընդդեմ մոնղոլների—Փ. Ա.) բռնկվելուց մեկ տարի առաջ, 1248 թվականին, Հեթում Ա թագավորը իր եղբայր Սմբատ Սպարապետին ուղարկել էր մոնղոլական մեծ խանի՝ Գուլուկի մոտ, հայտնելու իր հպատակությունը, հույս ունենալով, որ մոնղոլների օգնությամբ Կիլիկիան կկարողանա հաջողությամբ դիմադրել եգիպտական սուլթանությանը: Եվ, բնականաբար, կիլիկյան արքունիքը և նրա քաղաքական շահերի ջատագով հայ կաթողիկոսությունը մոնղոլների հետ շահավետ դաշինք կնքելու մտադրությամբ, ամեն կերպ պետք է ձգտեին շահել նրանց սիրտը ի նպաստ հայերի, ցույց տալ, որ հայերը ամենուրեք՝ և՛ բուն երկրում, և՛ Կիլիկիայում, մոնղոլների հնազանդ հպատակներն են ու նրանց տիրակալության ջերմ կողմնակիցները...»²¹: Շարունակելով իր խոսքը, նա ընդգծում է նաև այն կարևոր քաղաքական դրդապատճառը», թե 1245 թվականից Արևմտյան Եվրոպան Վատիկանի միջոցով ջանքեր էր թափում մոնղոլներին քրիստոնյա դարձնելու ուղղությամբ, որպեսզի նրանց ուղղման հզոր ուժը օգտագործվի Արաբական խաչիֆաթի դեմ և դյուրացվեն դեպի Արևելք կատարվող խաչակրաց արշավանքները, որոնք քաղաքական որոշ նկատառումներով շահագրգռում էին Կիլիկիայի հայկական թագավորությանը²²: Ուստի, մոնղոլներին չհակառակվելու հորդորները ոչ այնքան քրիստոնեական բարոյագիտությունից էին բխում, որքան քաղաքական հիմքերից ու դրդապատճառներից: Եվ այստեղ, անշուշտ, շատ որոշակի են նաև Վարդան Արևելցու ճիշտ կողմնորոշումն ու դերը:

Արևելյան Հայաստան վերադառնալուց հետո Արևելցու համար հասարակական գործունեության նոր հնարավորություն է ընձեռվում: Նա առանձնանում է «ի միայնարանն իւր»՝ «իշխանաց իշխան» Զաքարյան Ավագի տիրույթի մեջ գտնվող Կայենարբերդի Ս. Անդրեի վանքում: Այս իրողությունը տվյալ դեպքում ունի որոշակի նշանակություն, քանի որ Ավագը Արևելյան Հայաստանի պետական, քաղաքական, հասարակական կյանքը վարող ամենաառաջատար անձն էր և օգտվում էր շատ մեծ առանձնաշնորհներից: Այսպիսի անձի հետ համագործակ-

20 Այս թուղթը հայտնաբերել, ուսումնասիրել ու հրատարակել է Լ. Խաչիկյանը, Խաչիկյան Լ., Խրատական թուղթը, էջ 267—284:

21 Նույն տեղում, էջ 273:

22 Նույն տեղում, էջ 273:

ցելը, նրա համակրանքն ու հովանավորութիւնը վայելելը ավելի մեծ ուժ ու եռանդ էր տալիս Վարդան Արեւելցու հասարակական մտածողութեանն ու ջանքերին:

Քեկ ազդյունները լսում են մինչև 1264—1265 թթ. այստեղ կամ այստեղից նրա ծավալած քաղաքական-հասարակական գործունեութեան մասին, բայց այն փաստը, որ հազարավոր եկեղեցական գործիչներից նա է համարվել ամենահարմարն ու արժանին 1265 թ. Հուլիան խանի մոտ, Թավրիզում, ներկայացնելու ընդհանրապես Արեւելյան Հայաստանն ու հայ եկեղեցականութիւնը (Կիլիկիայից նույն առիթով խանի մոտ էր եկել Հեթում Ա. Թագաւորը), նշանակում է, որ այդ իրավունքը նվաճելու համար Վարդան Արեւելցին յուրը ծառայութիւններ արդեն մատուցել էր Կայնեաբեքդում եղած տարիներին ոչ միայն մատենագրութեան ու մանկավարժութեան, այլև հասարակական ու եկեղեցավարչական պաշտոնական ոլորտներում:

Այսպես թե այնպես Վարդան Արեւելցու քաղաքական, հասարակական գործունեութեան պսակը, մեր կարծիքով, Հուլիան խանին տված այցելութեան բուն իրողութիւնն է և այս առնչությամբ նրա ցուցաբերած բարձր գիտակցութիւնն ու հայրենասիրական առողջ և իրատես վարքագիծը: Այս այցելութեանն առնչված մանրամասներին ու հետևութիւններին հանգամանորեն կանգնադրուանք այլ առիթով, երբ կփորձենք վերհանել ու գնահատել նրա «Հաւարումն պատմութեան» պատմաճանաչողական արժեքն ու գաղափարական բովանդակութիւնը: Բայց համառոտակի նշենք հետևյալը. Վարդան Արեւելցին այս առիթով սկզբից մինչև վերջ գործում է մեծ խոհմտությամբ, զիմանազիտական նուրբ շրջահայեցութեամբ, մանավանդ, քաղաքական, հասարակական, հայրենասիրական կայուն կեցվածքով ու արժանապատմութեամբ: Այս բոլորի շնորհիվ բազմապատկվում է նրա նկատմամբ Հուլիանի ցուցաբերած վստահութիւնն ու համակրանքը: Արժե այս առիթով հիշատակել վերջինիս մի քանի շատ բնորոշ արտահայտութիւնները. «Ես զքեզ միայն եմ կոչեալ (այսինքն՝ իր մոտ ժամանած հայերից ամենից առավել Վարդան Արեւելցուն է նախընտրել—Փ. Ա....), ծածուկ բան ունիմ առ քեզ (միայն նրան է վստահել իր սրտի գաղտնիքը—Փ. Ա.)... ո՞նց է, որ զամէն զայն ասացեր, որ չիմ սիրտս կայր, որ ինձ դիւր թուեաց...»²³: Այսքանից հետո շատ բնական է, որ Հուլիանն նրան առաջարկեր «ոսկի զգեստ» ու «շատ ոսկի» (էլլանի գնահատման թերևս բարձրագույն շափանիշը): Բայց նույնքան և ավելի բնական է հնչում Վարդան Արեւելցու պատասխանը. «Ոսկին մեզ և հողն մի է, մեք այլ

մեծ ուզենք, որ վայել է քո մեծութեանդ՝ ողորմութիւն ի վերայ աշխարհի»²⁴: Երբ Հուլիան, այնուամենայնիվ, նրան նվիրում է «բալիշ մի» ոսկի և երկու շքեղ զգեստ, նա դարձյալ պահելով իր արժանապատմութիւնն ու սկզբունքը, պատասխանում է. «...Այլդան, այդ դրամդ հատանի և հանդերձ մաշի, մեք անհատանելի և անմաշելի խնդրեցաք պարգևք»²⁵: Ի վերջո, Վարդան Արեւելցին հասնում է իր նպատակին. գրավոր «առկես» է ստանում Հուլիանից: Դա նշանակում է, էլխանութեան գերագույն իշխանավորի կողմից հարգվում է Հայաստան «աշխարհին ողորմութիւն» շնորհելու նրա խնդրանքը: Ավելացնենք նաև այն, որ Վարդան Արեւելցին այս խնդրանքը քիչ ուշ ավելի որոշակիութեամբ ներկայացրել է Հուլիանի կնոջը՝ Տողուզ խաթունին՝ հայ ժողովրդի համար «հարկաց թեթևութիւն» հայցելով²⁶:

Այսպես, մինչև իր կյանքի վերջը Վարդան Արեւելցին ապրեց երկրի ու ժողովրդի քաղաքական, սոցիալական, իրավաբարոյական հոգսերով ու լիովին նվիրաբերվեց դրանց բարվոքմանը և, ինչպես տեսանք՝ արդյունավետութեամբ: Գտնվելով հալածված, ուժասպառ ժողովրդի և երկրի առաջատար ներկայացուցչի դժվարին դերում, նա այդքանն իրագործել է միջին դարերի խիստ դժվարահաս թիրակալների իշխանութեան ժամանակ, կամայական դատաստանների, միջեկեղեցական խարդավանքների ու վեճերի, ներքին հասարակական, քաղաքական ալեկոծութիւնների բարդ պայմաններում:

Վարդան Արեւելցու գործունեութեան այդ մարզը լրացուցիչ բացահայտում ու գնահատանք կստանա նրա երկերի գաղափարական բովանդակութեան վերլուծութեան ընթացքում, երբ մասնավոր խոսք կլինի հայ ժողովրդի քաղաքական և իրավական վիճակի՝ դրանցում եղած անդրադարձի ու հեղինակի վերաբերմունքի մասին:

24 Նույն տեղում, էջ 158:

25 Նույն տեղում, էջ 158:

26 Նույն տեղում, էջ 161:

23 Վարդան Արեւելցի, Հաւարումն պատմութեան, էջ 156—157:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԱՆՏԱՎՈՐԸ

Վարդան Արևելցու հասարակական-մշակութային գործունեության երկրորդ հիմնական բնագավառը մանկավարժությունն է: Նրա ընդհանուր ճանաչում գտնելուն մեծապես նպաստել են ուսումնակրթական ծավալուն աշխատանքները, այդ թվում բազմաթիվ այն երկերի հորինումը, որոնք, անտարակույս, հեղինակի կողմից իրրև ձեռնարկ-դասագիրք են կիրառվել իր ղեկավարած դպրոցներում:

Միջին դարերում շատ տարողունակ էր մանկավարժության ասպարեզը. խիստ ընտրություններով ընդգրկվում էին միայն «ամենահարմարները», այսինքն՝ այնպիսիները, որոնք ժամանակի բանիմաց, բազմարդյուն և վստահելի գիտնականներն ու գաղափարախոսներն էին: Ահա թե ինչու այս ասպարեզում համբավի հասնելը, այն էլ՝ մեծ համբավի, որչափ դժվարին, նույնչափ էլ պատվաբեր է: Այս առումով Վարդան Արևելցին միանգամայն հաջող և արդարացի քննություն է բռնել, ճանաչվել իբրև «եռամեծ», «տիեզերալոյս» և «արդիւնական» բարունապետ:

Մանկավարժությանը նա նվիրվել է վաղ հասակից՝ 1240—1241 թվականներից, անկասկած, նախքան Երուսաղեմ—Կիլիկիա մեկնելը: Այս մասին պարզորոշ վկայում է նրա ժամանակակից ու գործընկեր Կիրակոս Գանձակեցին. «Սե առեալ զայս գիր հաւանութեան (մեզ ծանոթ Շրջաբերական թղթի կապակցությամբ—Փ. Ա.) իմաստնոյ վարդապետին Վարդանայ, առաքէ առ կաթողիկոսն Կոստանդին ի Կլայն Հոմեական և ինքն եկեալ ի ձորն Կայանոյ՝ ի միայնաբանն իւր, զոր սուր Անդրէն կոչիլն՝ հանդէպ անառիկ բեռդին Կայանոյ, և անդ դադարեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա՝ վարդապետական բանիկն»¹: Փաստորեն Վարդան Արևելցին վերադառնում է «իր միայնարանը»՝ Կայենի բերդի Ս. Անդրեի մենաստանը, որտեղ շատերը աշակերտում էին նրան, ունկնդրում նրա «վարդապետական խոսքերը»:

Այստեղ ընդգծելի է ուսումնածրագրային մի կարևոր իրողություն՝ «վարդապետական» ուսուցման հիշատակումը, որ նշանակում է, թե սույն դպրոցը և նրա ուսուցիչը ուսուցանում էին եկեղեցու համար ամենաբարդ ու պատասխանատու նյութը՝ նրա գաղափարախոսության հիմունքները, որովհետև, ինչպես հայտնի է, վարդապետական գավազան կամ իշխանություն ունեցողը կանոնականորեն այդպիսի իրավունք ուներ:

Ձեռագրական այն ակնարկները, որոնք մատնանշում են, թե Վարդան Արևելցին Հաղպատի վանքի և նրա բարձրագույն դպրոցի հետ գիտամշակութային առնչության մեջ է եղել, առավել ևս համոզում են, որ նրա մանկավարժական գործունեության ոլորտը պիտի ընդգրկեր նաև Հաղպատը, թերևս՝ Սանահինը: Այս կապակցությամբ ավելին, գծրախտարար, չենք կարող ասել:

Վարդան Արևելցու մանկավարժական աշխատանքը Կիլիկիայում արդյոք միայն նրանով էր սահմանափակվում, որ նա զբաղվում էր Հեթում Ա թագավորի կրթությամբ ու դաստիարակությամբ և վերջինիս համար գրում ծանոթ «Ժղլանք»-ը: Հազիվ թե նա այստեղ մատենագրական, թարգմանական արդյունավետ աշխատանքներին զուգընթաց զբաղվել է նաև ուսուցչությամբ: Նման բանիմաց, ուսումնասեր գաղափարական գործիչը այդ միջավայրում 10—11 տարի շարունակ (1240—1251 թթ.) չէր կարող մնալ առանց կրթական աշխատանքի: Քաջ հայտնի է, որ Հոռմկլայում «վարդապետական բանի» ուսուցում եղել է, կարող էր այդ գործից հեռու մնալ նման անձնավորությունը: Վարդան Արևելցուն Կիլիկիայում, Հոռմկլայում պահելու շարժառիթներից մեկն էլ մի՞թե մանկավարժական ասպարեզում նրան ընդգրկելու նպատակը չի եղել: Կարծում ենք, տարակուսանքի տեղ չկա:

Վարդան Արևելցին մանկավարժական արդյունավետ գործունեություն է ծավալում Խորվիրապում, իր իսկ հիմնած բարձրագույն բնույթի դպրոցում: Առ այսօր անորոշ պատճառներով նա հեռանում է Կայենաբերդից և հաստատվում այստեղ: Ըստ երևույթին, զրա համար կային բազարական-տնտեսական հիմքեր: 1250-ական թվականները Հյուսիսարևելյան Հայաստանի համար քաղաքական առավել սրված իմոթումների շրջան էր: Ավագ Զաքարյան ամիրսպասալարը վախճանվել էր (1250 թ.), իշխանությունն անցել նրա կնոջ՝ Գոնցայի ձեռքը: 1251 թվականին Մոնղոլների մեծ խանության նոր տիրակալ է դառնում Մանգու խանը (1251—1259 թթ.): Հռչակվում է նրա աշխարհագիրը (1254 թ.), որն ավելի է խստացնում հարկահանությունը Հայաստանում, ստեղծելով սոցիալ-տնտեսական առավել դժվարին պայմաններ: Պատրաստվում էր հայ-վրացական միացյալ երկրորդ ասպետամբությունը

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 311:

ստացած հաջողակ պատանինները, որոնք մտադիր էին հիմնականում ընդգրկվելու հոգևոր-եկեղեցական ասպարեզում: Կինում էին նաև ավելի մեծահասակներ, որոնք այլ դպրոցներում արդեն ստացել էին բարձր կրթություն (Գրիգոր Բալուեցին և ուրիշներ), նույնիսկ գիտական բարձրագույն՝ վարդապետական աստիճան (Գևորգ Սկևռացին, Թերևս և՛ Հովհաննես Նրզնկացին), որպեսզի ավելի կատարելագործեն իրենց ուսումը: Այս իրողությունը ևս վկայում է սույն ուսումնագիտական կենտրոնի՝ իր ժամանակի ամենաբարձր մակարդակի և նրա հիմնադիր-ուսուցչապետի կրթական-մանկավարժական արդյունավետ ու հմտալից գործունեության մասին:

Սաների շարունակական թիվն այստեղ, մեր կարծիքով, կարող էր տատանվել 60—70-ի միջև: Այս մասին առկա սակավ և հակասական տեղեկություններն ավելի ստույգն ասելու հնարավորություն չեն տալիս: Տեղի, շրջապատի տեղագրական և հնագիտական քննությունը ևս լրացուցիչ հիմք չի տալիս ենթադրելու, թե նման վայրում գործող գիշերօթիկ դպրոցը, որն իբրև այդպիսին պիտի ունենար համապատասխան մի շարք շինություններ ու պլաններ, կարող էր ավելի մեծ թվով աշակերտներ ունենալ:

Ուսման տեղությունը այստեղ էլ, ինչպես համարնույթ այլ դպրոցներում, հիմնականում եղել է 6—7 տարի, որի ընթացքում սաները քննություն էին հանձնում՝ «զհամարս տային»: Ուսումնառության կատարելագործման համար հարկ եղած դեպքում տրամադրվել են լրացուցիչ ժամանակ և դասավանդություններ, սակայն ուսանողին կցելով մեկ կամ սահմանափակ թվով ուսուցչապետների:

Նշենք, որ այստեղ ևս ուսումը ջամբվել է անվճար, ձրի⁴: Ինքը՝ Վարդան Արևելցին, այլ առիթներով քանիցս նշում է ձրի ուսման առավելությունները. դրանից կարող էին օգտվել ոչ միայն վերին խավերի, այլև «հասարակ» մարդկանց ներկայացուցիչները: Եթե նրա անվանի սանի՝ Ներսես Մշեցու մասին ասվել է «լուսաւորեաց զագգս հայոց»⁵, ապա իր մասին կարելի է առավել ևս համոզված ասել նույնը:

Թե ի՞նչ էր Վարդան Արևելցին դասավանդում իր ղեկավարած դպրոցներում, հատկապես՝ Խորվիրապում, դժվար է ստույգ ասել, որովհետև անմիջականորեն այդ մասին որևէ գրավոր վկայություն մեզ չի հասել: Այսուհանդերձ, կողմնակի փաստերի և դրանցից բխող հետևությունների հիման վրա կարելի է բավարար գաղափար կազմել: Երբ նրա անունը դրվում է նշանավոր ուսուցչապետների անունների շարքում,

որոնցից յուրաքանչյուրը միջնադարում մեծ հռչակ վայելած մի բարձրագույն դպրոցի ղեկավար էր, նշանակում է, որ նա համարվում էր նրանց համապատիվ հետևորդն ու ժառանգորդը մանկավարժության ասպարեզում: Դա ըստ իրականության և ըստ էության այդպես է, քանի որ նա աշակերտել է Միսթար Գոշին (Թեկուզ կարճատև) և Հովհաննես Վանականին, հաճախ եղել է Հաղպատում և, ըստ երևույթին, նաև դասավանդել այնտեղ: Ուրեմն, անձամբ քաջ ծանոթ էր Հաղպատում, Գետիկում, Տավուշում գործող բարձրագույն դպրոցների ուսումնագիտական ծրագրերին և ինքն էլ իր ուսումնառությունը ավարտել էր դրանց հիման վրա: Բնական է, որ նա իր ղեկավարած դպրոցներում, դասավանդությունների ընթացքում պետք է այդ ուսումնագիտական ծրագրերը հիմք ընդուներ, անշուշտ՝ քննադատաբար, հնարավոր ինչ-ինչ վերապահումներով ու լրացումներով, որքան որ եկեղեցին, իբրև դրության տեր հաստատություն, թույլ տար:

Վարդան Արևելցու մանկավարժական գործունեությունը ամբողջական ներկայացնելու համար հարկ ենք համարում նկատուման արժանացնել մի քանի կարևոր իրողություն:

Նրա ղեկավարած դպրոցներում, մասնավորապես Խորվիրապում, ևս դասավանդվել են «յոթն ազատ արվեստները»՝ «քառյակ» և «եռյակ» գիտությունները: Սա, կարելի է ասել, դասական պարտադիր ծրագիր էր նման բնույթի դպրոցների համար ողջ միջնադարյան Հայաստանում: Սակայն կային նաև առնչակից այլ նյութեր, որոնք ընդհանուր բնութագրմամբ կոչվում էին «արտաքին», «ներքին» կամ «նուրբգրեանք»: Սրանք հայտնի տերմիններ են, որոնք զատորոշում են նյութերն ու ձևանարկներն ըստ բնույթի ու բովանդակության, այսինքն՝ «քառյակն» ու «արտաքինը»՝ այսպես կոչված ճշգրիտ, իսկ «եռյակը», «ներքինը» և «նուրբը»՝ հումանիտար գիտություններն ու համապատասխան երկասիրությունները: Առաջինը, ընդհանուր առմամբ, ընդգրկում էր աստղաբաշխությունը, երկրաչափությունը, թվաբանությունը⁶, երաժշտությունը, տիեզերագիտությունը, տոմարագիտությունը, ալքիմիան, բժշկագիտությունը, մարդակազմությունը, գեղագիտությունը, բնագիտությունը⁷: Երկրորդը՝ քերականությունը, հեատորությունը կամ ճարտասանությունը, տրամաբանությունը, փիլիսոփայությունը, մեկնություն գրոց, ուսումն Ս. գրոց, աստվածաբանությունը, եկեղեցու վարդապետությունը և պատմությունը, ժխագիտությունը, տոների «պատճառներ», ընդհանուր և ազգային պատմությունը, առասպելաբանությունը, գրականությունը

⁴ Վարդան Արևելցի, Ներքո՞ գրերի գլուխին, էջ 381:

⁵ Արևշատյան Ա., Մաթևոսյան Ա., Գլխորի համալսարանը, էջ 7:

⁶ Նաև տեսական՝ «Յաղազս անկիւնաւոր թուոց»՝ Հովհաննես Սարկավազի:

⁷ Տեղ-տեղ՝ նաև դիալեկտիկան ու դիաֆերենցիա:

(նաև գրականության տեսություն և մատենագիտություն՝ «Գիրք Պիտոյից», Քեովնի «Յաղագս ճարտասանութեան», «Գիրք պատճառաց»), հայերեն և օտար լեզուներ (ի մասնավորի հունարեն և ասորերեն), գրչության արվեստ, մանրանկարչություն, ձեռագրի արարման բոլոր առընչակից արհեստները (մագաղաթի և թղթի մշակում, հղկում, վերանորոգում, կազմարարություն, գույների, թանաքի պատրաստում և այլն): Մեր այս թվարկումը հավասարապես առընչվում է հորվիրապի գպրոցին: Բնական է, նման բնույթի որևէ դպրոցում ուսումնակրթական այս ծրագիրը, թվարկած բոլոր նյութերով, ամբողջությամբ չի իրագործվել, տեղ-տեղ նշված նյութերից մեկ-երկուսը կամ մի քանիսը կարող էին հանվել ինչ-ինչ պատճառներով, սակայն միշտ էլ մնացել է հիմնականը: Դա լրացուցիչ հաստատվում է նաև Վարդան Արևելցու մատենագրական վաստակի քննությամբ, որի առավելագույն մասը իր ակնառու բազմազանությամբ (պատմություն, աշխարհագրություն, մեկնություն, բերականություն, կանոնագիտություն, կրոնականօրհանական ամեն բնագավառի նյութեր, գրականություն...) հորինվել է նաև «գասազվելու» հիմնական նկատառումներով. պարզ է, ընդգրկվել է նախ իր դպրոցի ուսումնական ծրագրում, այնուհետև կիրառվել նաև հայ միջնադարյան այլ դպրոցներում, ինչպես վկայում են ձեռագրական տվյալները:

Պահպանված «Գրոց ցուցակները» կամ «Գրոց կարգադրությունները» ուսումնական ծրագրերի մատենագիտական բազմազաններն են և ցույց են տալիս, թե ո՞ր բնագավառում ի՞նչ մատենագրական միավորներ էին ընդգրկված⁸: Այս միավորները, անշուշտ, ժամանակի ընթացքում ուրույնաբար կամ թարգմանաբար պիտի բազմանային և ըստ իրենց բովանդակության ու միտումի ընդգրկվեին ծրագրով նախատեսված համապատասխան բնագավառը: Այսպիսով թարմանում, հարցստանում, նորոգվում էր ուսումնական հիմնարար ծրագիրը⁹: Նման վերափոխումներ կատարողներից էր նաև Վարդան Արևելցին: Ինչպես արդեն նշել ենք, նա իր երկերի մեծ մասը ընդգրկել է ուսումնական ծրագրում և դասավանդել ըստ այդմ: Այդպիսին են նրա մեկնություններն անխորի: Այդպես է. ամենուրեք ճանաչում են գտել այդ երկերը, և

⁸ Անասյան Հ. Մատենագիտություն, Ա, էջ X—XI: Ալիշան Վ., Տոշիկը, Բ, էջ 254—257: Ալիշան Ն., Հետադասություններ, Ա, էջ 30—43: Սեևույան Ս., Նոր կտակարանի գրքերու կարգը Հայոց թով, էջ 1—85: Իշխանյան Ռ., Հայ մատենագիտության պատմություն, Ա, էջ 14—35, 86—95: Հարությունյան Է. Մխիթար Այրիվանեցի, էջ 108—121: Արևշատյան Ս., Մարևոյան Ա., Գլխորի համալսարանը, էջ 35—98:

⁹ Բայց նորը, բառի լայն իմաստով, հանդես չէր գալիս: Դա միայն շատ ուշ տեղի ունեցավ, XIX դարում:

նրախտագիտությամբ ու ակնածանքով է հիշվում դրանց հեղինակի անունը իբրև «արդունական» մեկնիչ և «երկրորդ թարգմանիչ»: Վարդան Արևելցու երկերը առավել տարածված մատյաններից են մեր ողջ ձեռագրական ժառանգության մեջ, ընդօրինակվել են գրեթե բոլոր ծանոթ կրթական ու գիտամշակութային կենտրոններում:

Այս առիթով հարկ է ընդգծել մի կարևոր հանգամանք, որ վերաբերում է ոչ միայն հայ, այլև բյուզանդական, ասորական (ի դեպ նաև ոչ բրիտանացի՝ հրեական, արաբական) միջնադարյան բարձրագույն դպրոցներում մեկնաբանական գրականության դասավանդմանը: Դա համարվել է ամենահիմնական նյութերից մեկը, իսկ այն դասավանդող մեկնիչը առաջին տեղն է զբաղեցրել¹⁰: Ըստ այսմ պիտի դիտել ու գնահատել Վարդան Արևելցու դերն ու վաստակը նաև այս ոլորտում: Նա ոչ միայն իր, այլև բոլոր հայ միջնադարյան դպրոցների ամենաարդյունավետ ու լայն ճանաչում գտած մեկնիչն է: Իսկ այդպիսին կարող էր լինել միայն բազմակողմանի, խոր իմացությամբ և մեծարժեք վաստակով անձը մանկավարժության ասպարեզում, քանի որ իր մեկնությունների առաջին դասավանդողը ինքն է եղել:

Վարդան Արևելցու քերականական դույզ երկերը՝ «Վասն բանին մտանց»-ն ու «Մեկնություն քերականի»-ն նույնպես ուսուցողական նպատակով են հորինվել: Չէ՞ որ դրանք միայն խնդրատուներին չէին պատկանում, այլ հետագայում բազմիցս ընդօրինակվում էին ու կիրառության մեջ դրվում: Քերականական երկ հորինելու անհրաժեշտությունը Վարդան Արևելցին զգացել էր իր մանկավարժական գործունեության ընթացքում: Անշուշտ, կային հայ քերականական երկեր՝ հորինված հեղինակավոր ու գիտակ քերականների կողմից, որոնք ևս օգտագործվում էին, բայց նա «տեղծեց իր երկերը, որոնք, ինչպես գիտենք է կրկին կտեսնենք իր տեղում, զգալիորեն առաջադեմ, նոր ու թարմ էին բոլոր նախորդների համեմատությամբ»¹¹:

Մանկավարժական գործարար նկատառումների հետ պետք է կապել նաև նրա «Հաւաքումն պատմութեան» և «Աշխարհացոյց» աշխատությունները: Դրանց ծրագրային ընդգրկումն ու շարադրանքի համառոտագրական սկզբունքը, մեր կարծիքով, նաև այս նկատառումներով են պայմանավորված: Վարդան Արևելցին դրանք գրել է դասավանդությունների ժամանակ «ձեռքի տակ» ունենալու, ինչպես նաև բանավոր բացատրություններով հետզհետե հարստացնելու և ընդարձակելու ծրագրով: Այսպիսի «կոնսպեկտավորման» սկզբունք կիրառվել է հորվիրա-

¹⁰ Vööbus A., History of the school of Nisibis, Louvain, 1915, p. 100.

¹¹ Վարդան Արևելցի, Մեկնություն քերականի, Առաջաբան, էջ 64—67:

պին նախորդող դպրոցներում, ինչպես նաև Գլաձորում, Տաթևում, Մեծոփա վանքում, Բաղեշում...: Բայց անկախ շարադրանքի այս համապատասխանությունից, նման աշխատությունները կարող էին օգտագործվել և իրոք էլ օգտագործվել են ուսուցման նպատակով, որովհետև գրանց պարունակած նյութը շահեկան էր և պիտանի: Այնպես որ գրանք ո՛չ իր, և ո՛չ էլ այլ մանկավարժների տեսադաշտից դուրս մնալ չէին կարող:

«Տօնապատճառ»-ի վերախմբագրմանն ու վերակազմակերպմանը Վարդան Արևելցին ձեռնարկել է, հավանաբար, իր ուսուցչի՝ Հովհաննես Վանականի թելադրանքով, բայց, ինչպես ավելի կհամոզվենք հետո, նաև իր սաների իմացությունը հարստացնելու, ճառագրական արվեստը գործնական օրինակներով հմտացնելու, եկեղեցական կյանքում կարևոր տոների բովանդակությունը, «պատճառներին» և նշանակությունը ծանոթացնելու համար: Այս արժեքավոր ժողովածուի բովանդակությունն ու մակարդակը ցույց են տալիս, որ այն նախատեսված է կրթական բազմակերպության համար: Այս գեպրում մեր հեղինակը, ճիշտ է, առաջնեկ նախաձեռնող չէ, քանի որ սույն ժողովածուն տարբեր խմբագրություններով արդեն գոյություն ուներ, բայց իր միջամտությունը՝ ստեղծելու նոր խմբագրություն և իր հորինած ճառերը նրա մեջ ընդգրկելու համար, «ավագ» սաներին ծառայելու միտում ունեւր: Հետաքրքիր է այս առումով նրա «Յաղագս քահանայութեան» հայտնի խրատը, որը թելագրում է, թե ինչպիսի փորձառությունից և իմացությունից հետո միայն կարելի է քահանա ձեռնադրվել և սպասարկել ժողովրդի հոգևոր և բարոյական կյանքին: Այս գեպրում էլ աչքի առաջ ունի հատկապես իր «ավագ» սաներին, որոնք արդեն պատրաստվում էին քահանայական ձեռնադրության: Իսկ մեկ այլ՝ «Հայկաց ի քեզ» ճառում նման կիրառություն մասին վկայում է բացահայտորեն, գրելով՝ «ի վարգացումն մանկանց նոր Միոնի»¹²:

Ինչ վերաբերում է «Ժղլանք»-ին, ինչպես արդեն գիտենք, այն հիմնականում ուսուցողական նպատակով է հորինված՝ թագավոր-սանին հնարավոր չափով շատ ու բազմազան գիտելիքներ հաղորդելու համար: «Ժղլանք» ընտրողումն իսկ այդ է հավաստում, որովհետև «ժղլել» նշանակում է դրուցել այս կամ այն գիտելիքի*, փաստի, երևույթի շուրջ,

ավյալ դեպքում՝ թագավորի և Վարդան Արևելցու միջև: Իրապես էլ «Ժղլանք»-ը մտնումիկ դրուց է տարբեր նյութերի շուրջ, ուսուցողական ձեռնարկ՝ կառուցված որոշակի մանկավարժական ծրագրով ու նպատակով և տեղ-տեղ շարադրված ամենապարզ խոսակցական լեզվով, որպեսզի դյուրին «իմանի»:

Վարդան Արևելցու կողմից թագավորի փոխադրված և մշակված գրույցներն էլ որոշ իմաստով ունեն այս հեղինակային միտումը: Տվյալ գեպրում հեղինակն առաջնորդվում է բացառապես բարոյական-դաստիարակչական նկատառումներով, որպեսզի յուրաքանչյուր գրույցից հանված հետևությունները բարերար անդրադարձ ունենան ընթերցող սաների բնավորության ու նկարագրի վրա: Կարծում ենք, այս տեսանկյունից զանց պիտի շտնել նաև նրա ներբողները, որոնք թեև անմիջականորեն ուսուցողական նպատակով չեն հորինված, սակայն խորապես պիտի անդրադառնային նաև իր սաների հոգեկան կերտվածքի վրա, քաղաքացիական և հայրենասիրական լիցք հաղորդելով նրանց, քանի որ այդ երկերի առաջին ընթերցողները, բնական է, իր անմիջական շրջապատի մարդիկ էին, այդ թվում՝ սաները:

Նրա հորինած շարականները ևս՝ անմիջապես իր և հետագա ուսուցիչների կողմից օգտագործվել են երգեցողություն դասավանդելիս:

Գրավոր անմիջական վկայություն չունենք և որոշակի չգիտենք, թե ինչ առարկաներ է նա դասավանդել, կամ դասավանդման ինչ մեթոդ ու սկզբունքներ է կիրառել: Այս բացը մնում է հիմնականում այն պատճառով, որ առ այսօր զարմանալիորեն հայագիտությունը հայտնի չէ նրա մասին գրված որևէ վարքագրական երկ, որտեղ, ինչպես մյուս անվանի մանկավարժներից շատերին նվիրված վարքերում, անտարակույս, խոսք կլինի նաև վերը ակնարկված խնդիրների շուրջ: Մեզ թվում է, որ Վարդան Արևելցին էլ ունեցել է իր վարքագիրը, և մի երջանիկ օր ասպարեզ կգա, սակայն, այսօր այն չկա և մենք կանգնած ենք դժվարության առաջ: Ըստ այդմ, հարկադրաբար գոհանալու ենք իր աշխատություններից բխող և ուղղակիորեն այս խնդիրն առնչվող հետևություններով:

Վարդան Արևելցին մանկավարժական-կրթական կյանքում մեծ և առաջնային տեղ է տվել ուսումնական ծրագրին ու հետևել, որ այն իրագործվի հնարավորին չափ լրիվ: Ինչպես իր անմիջական նախորդ և հաջորդ ուսուցչակետները, նա որդեգրած պիտի լինի հայ միջնադարյան բարձրագույն բնույթի դպրոցների ավանդական ծրագիրը: Անշուշտ, նաև ինքը այդ հիմնական ծրագրում լրացումներ արել է, ընդգրկելով ավելի հարուստ օժանդակ նյութ ու մատենագրական միավորներ, գրանց գումարելով նաև իր սեփական երկասիրությունները: Շատ ըս-

¹² Մատենադարան, ձեռ. № 1324, Բ. 274ր:

* Սույն իմաստն ունի հունարեն «πύλλοι» բառը («ազատ ժամանակի դրողմունք, գիտական դրույց»), որից և ծագել է «չղլալ»՝ դպրոց հասկացությունը Արևելքում՝ ուսուցողական, մանկավարժական նպատակ ու ծրագիր է հետապնդելի: Այս մասին տես նաև՝ Каздан А., Книга и писатель в Византии, с. 43.

կըզրուներային ու պահանջկոտ է եղել առհասարակ: Չինք կասկածում, որ նաև ուսումնական ծրագիրը կիրառելիս և լրացնելիս եղել է այդպիսին:

Նշենելով իր երկերում առկա ոչ ուղղակի, միջանկյալ ասված խոսքերից, կարելի է եզրակացնել, որ ըստ Վարդան Արևելցու, նախ և առաջ, հնարավորին շափ շատ գիտելիքներ պետք է հաղորդել աշակերտներին ոչ միայն ըստ նախատեսվածի, ինչքան շատ, բազմազան, հետաքրքիր և օգտակար լինեն այդ գիտելիքները, այնքան լավ:

Նա գտնում է, որ «պարտ է յառաջին հասակէն կրթել զմանկունս»¹³. և դա՛ ոչ միայն նրա համար, որ սաները բարոյապես, այլև իմացապես շուտ ու կայուն դարգանան, քանի դեռ մատողջ են և կարող են ավելի մեծ դյուրութեամբ ձեռավորվել ըստ ցանկություն:

Պիտի սկսել պարզից, նախնականից, և աստիճանաբար նախապատրաստվել ավելի «խորին ու խրթին» ուսուցման: Նախընթացք պետք է լավ արմատավորել աշակերտի հիշողության ու գիտակցության մեջ: Այս ստեղծությամբ Ա. Մովսիսյանը նշում է. «Վարդան Արևելցին, նույնպես դաս տալուց հետո երկար ժամանակ կրկնում էր աշակերտներին հետ հին դասը, որ նրանք լավ յուրացնեին. մինչև լավ յուրացնեին, նա նոր դաս չէր տալիս»¹⁴: Թե ինչ գրավոր վկայության հիման վրա է ասված այս, հայտնի չէ, սակայն բոլորովին էլ հիմքից զուրկ չէ, որ Վարդան Արևելցին տվյալ ստուգված ու տարածված ավանդությունը պահպանած լիներ իր դպրոցներում:

Ոչ միայն պիտի պարզից սկսել, այլ շարունակ պիտի անսեթեթեք, դյուրամբանելի, հատու խոսել, գրել, բարոզել, դասավանդել, որ ասվածը «գիրքին իմանի», «հեշտուսոյց» լինի: Այս խնդիրը նա շատ որոշակի է առաջ մղում: Այլ առիթով մենք հանգամանորեն կանդորագանանք դրան. այստեղ բավարարվենք նշելով բուն փաստը: Դրա փայլուն օրինակը նա տվել է գրեթե իր բոլոր, այդ թվում գիտատեսական, մեկնաբանական բնույթի աշխատություններում: Մինչև իսկ խոսակցական, ոչ «պաճուճազարդ», այլ «գեղջկապէս» լեզվամտածողության է դիմել, արհամարհելով ժամանակակիցների կարծիքն այդ կապակցությամբ, միայն թե ինքը անհասկանալի չմնա, թյուր չըմբռնվի, ինչպես քերթողի այն աշակերտը, որը գնում է դրախտ միրգ բերելու իր վարդապետին, բայց ձեռնունայն է վերադառնում¹⁵: «Կամիմ Ծ մտաք...» ճառի մեջ նա հայտարարում է. «...սակա խաւսել և ամենեցուն հաս-

կանալի և աւգտակար, որ շահին լսաւդքն. թող ես փոքրաբան և շինական երևիմ, քան թե բազում բանս ճոռոմ բառիք և աւտար լեզ ըուաք խաւսիլ»¹⁶:

Հայտնի է, որ իր դպրոցներում, դասավանդությունների ժամանակ Վարդան Արևելցին պահպանել ու կիրառել է դեմոկրատական, ազատախոհ, այս բառի ոչ անպայման այսօրվա ընկալմամբ, սկզբունքներ: Նա է հայ իրականության մեջ առաջին անգամ համարձակ ազգաբարեւ, թե «...որ շգիտէ ասել երկոտասան՝ (դասական գրաբար—Փ. Ա.), ինչ պակաս է ի յասելն տասնեկերկու (միջին և աշխարհաբար հայերեն—Փ. Ա.)»¹⁷: Սա ասված է միջին դարերում, մինչդեռ դեռևս անցյալ դարի երկրորդ կեսին հայ իրականության մեջ վեճ էր գնում՝ դրել գրաբար, թե՞ աշխարհաբար, այսինքն՝ ասել «երկոտասան», թե՞ «տասնեկերկու»: Հաղթեց, հթե կարելի է ասել, Վարդան Արևելցու սկզբունքը: Այսպես մտածող մանկավարժ-ուսուցչապետը չի կարող առաջադեմ շճանաչվել նաև մանկավարժության ասպարեզում:

Վարդան Արևելցին միաժամանակ մեծ կարևորություն է տվել աշակերտների դաստիարակության գործին, նրանց բնավորության և հոգեկան: Եկրտվածքի աղնիվ ու առողջ ձեռավորմանը: Դարձյալ նկատի ունենալով այն հիմնական նպատակը, ըստ որի իր աշակերտները կոչված էին «առաջնորդ» լինելու, մեծ դեր խաղալու հասարակության հոգևոր կյանքում, նա պահանջում և ջանում էր, որ նրանք «անկատար» չլինեն, այլ դառնան կատարյալ, բարի, ջանասեր, ճշմարտախոս: Հակառակ դեպքում, նրանց երեք չի կարելի արժանացնել քահանայական կամ արեղայական ձեռնադրության, քանի որ նրանք կարող էին տոգորված լինել շար խաւսերով և հեշտությամբ դառնալ սատանայի զոհ:

Վարդան Արևելցու ճառերում, խրատներում, ներբողներում այս կապակցությամբ շատ արժեքավոր նյութ կարելի է գտնել: Ընդգծելի է, մանավանդ, նրա այն ձգտումը, որով կամենում է խթանել իր ընթերցող-աշակերտների հասարակատն-բազաբական գիտակցությունը, սեփական ժողովրդին ծառայելու նվիրվածությունը, նրա ապագայի նկատմամբ լավատեսորեն տրամադրվելու անհրաժեշտությունը, անցյալ փառքի կորուստը, ներկա օրերի սոցիալ-քաղաքական բազմապիսի տառապանքները շպետք է նրանց վճատեցնեն: Պետք է լավ ճանաչեն «ազգըն սեփական», մեծ հարգանք ու սեր տածեն հայ մշակույթի և նրա երախտավորների նկատմամբ ու ջանան նմանվել նրանց:

13 Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, Թ. 283ա:

14 Մովսիսյան Ա., Ուրվագծեր, էջ 396:

15 Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, էջ 165:

16 Մատենադարան, ձեռ. № 4139, Թ. 389ա—389բ:

17 Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, էջ 133:

Վարդան Արևելցին մանկավարժության մեջ հիմնական պայմաններից մեկը համարել է մանկավարժ-մասնագետների ապահովման խնդիրը: Ըստ նրա (նաև՝ հեղինակակից Կոստանդին Բարձրբերդցու) դասասաց ուսուցիչները և քահանաները պետք է նախ և առաջ «գիտուն և ուսումնական լինեն»¹⁸: Նման մասնագետներից, ինչ խոսք, միայն հարուստ և ավելի օգտակար գիտելիքներ կփոխանցվեն աշակերտներին: Նկատի ունենալով, որ միջնադարում դասագրքեր, ձեռնարկներ, բառիս բուն նշանակությամբ, չեն եղել, և իբրև այդպիսին ծառայել են առանձին գիրք-միավորներ, նա պնդում է, որ ուսուցիչները պետք է «ամենայն գրպ վարժ և տեղեակ»¹⁹ լինեն, որպեսզի ճիշտ ու լրիվ ձևակերպեն իրենց ուսումնական հանձնարարությունները: Բայց միայն այսքանն էլ, ըստ նրա, բավարար չէ, նրանք պետք է հարուստ, համակողմանի փորձ ունենան՝ «փորձ ամենայնի»: Միաժամանակ պետք է խիստ ընտրություններ նշանակվեն ուսուցիչները: Եպիսկոպոսի «առաջին գործը» հենց դա է լինելու, քանի որ նա է, ըստ կանոնի, նշանակում ուսուցիչին: Այստեղ ցուցաբերվում է պահանջկոտություն, որպեսզի ընտրությունը և պաշտոնի նշանակումը լինեն «մեծաւ հոգաբարձութեամբ» և «անզայթակզ»²⁰:

Վարդան Արևելցին, բնականաբար, այդպես խստապահանջ պիտի լիներ նաև աշակերտների ընտրության հարցում: Ծիշտ է, միջնադարյան բարձր բնույթի դպրոցներում ուսանելու իրավունք ունեին ոչ միայն վերին խավերի ներկայացուցիչները, բայց և այնպես աշակերտները առանց ընտրության չլին ընդունվում: Արևելցին մեծ կարևորություն է տվել այդ հարցին, նկատի ունենալով թեկնածուների իմացությունը, ուշիմությունը, հավասարապես նաև բարոյական կերպարը, որը շատ որոշակի պիտի համապատասխաներ քրիստոնեական բարոյագիտական սկզբունքներին ու նորմերին: Այս հետևությունները զայիս ենք մասնավորապես այն պահանջների հիման վրա, որոնք նա ներկայացնում է եկեղեցական ասպարեզ ընդգրկվել կամեցող թեկնածուներին և նորընծա հոգևորականներին: «Յաղագս քահանայութեան» խրատի հիշատակարանում, որը գրված է Նորվիրապում, ասում է, որ խրատը «այլև դպրոցական տղայոցն կարդան», այսինքն՝ առնչվում, վերաբերում է նաև նրանց. չէ՞ որ այդ աշակերտներն են քահանայության և արեղայության թեկնածուները: Այս կարգի արձագանքներ կան նրա մյուս, հատկապես կանոնական բնույթի երկերում:

Վերահիշյալ խրատի մեջ, օրինակ, Վարդան Արևելցին պայման է դնում, որ հիշյալ թեկնածուները ևս լինեն «գիտունք և հաւատով մեծ», ունենան «Սուրբ գրոց գիտութիւն և անձին սրբութիւն»²¹: Վկայակոչելով Թադեոս առաքյալի կանոնը, նա անմիջապես պահանջում է, «որ զանգէտն և զանկատարն» ձեռնադրողը, որն առնվազն եպիսկոպոսական աստիճան պետք է ունենա, նույնիսկ կարգազուրկ լինի²²: Տգիտությունից ծնվում են բոլոր շարիքները: Տգետներին պետք է հնուու պահել բարի արարքներից, որպեսզի շայանդակեն աշխարհը, հասարակությունը, եկեղեցին: Այդպիսիները, եղբակացնում է նա, միայն կույրերի «կույր» առաջնորդներ ու զայթակղիչներ կարող են լինել և «որոց լաւ է քար ի պարանոց՝ արկանիլ ի խորս անդնդոց...»²³: Ուրեմն՝ ո՛չ թերուս աշակերտ, ո՛չ էլ տղետ քահանա կամ արեղա նա չէր հանդուրժում:

Այս փաստերից հստակ երևում է, որ Վարդան Արևելցին վաստակաշատ, հմուտ, գործարար և սկզբունքային մանկավարժ էր, միջնադարյան հայ մանկավարժության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը:

Արևելցու գործունեության այս մարզին են առնչվում, թեև ոչ անպայման ուղղակիորեն, նաև նրա ողջ մատենագրական վաստակը, գիտական, պատմական, իմաստասիրական, գրական, հասարակական-գաղափարական, բարոյախոսական իմացությունը, համոզմունքներն ու արժանիքները, որոնց մանրամասն ծանոթանալու առիթ կունենանք ստորև և, որոնք, իրենց հերթին կամբողջացնեն ու կրնդգծեն նրա միանգամայն մեծ երախտիբը տվյալ ասպարեզում:

21 Վարդան Արևելցի, Յաղագս քահանայութեան, Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ, էջ 343:

22 Նույն տեղում, էջ 343:

23 Նույն տեղում, էջ 343:

18 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 394:

19 Նույն տեղում, էջ 305:

20 Նույն տեղում, էջ 304:

ՊԱՏՄԱԳԻՐ — ԱՇԽԱՐՀԱԳՐԱԳԵՏՐ

Վարդան Արևելցին հայ պատմագրության աչքի ընկնող ներկայացուցիչներից է, լայն անսաղաշտի, իրատես զննության և առարկայական եզրակացությունների ունակ պատմագիր: Ձեռքի տակ ունենալով հայ պատմագրական ողջ ժառանգությունը, քաջ ծանոթ էր հայ ժողովրդի պատմական անցյալին ի սկզբանե մինչև իր ժամանակները: Այս հանգամանքը ոչ միայն հարստացրել է նրա պատմագիտական իմացությունը, այլև նպաստել ճիշտ տեսնելու և զնահատելու իրադարձություններն ու իրավիճակները: Իհարկե, նա իր դարի և դասի դավակն է նաև այնու, որ երբեմն պարզամտություն է ցուցաբերում իր մեկնաբանումների մեջ, սակավ և ոչ միշտ ըստ էության է ներկայացնում պատճառահետևանքային կապերը, սակայն, ինչպես ստորև կտեսնենք, հանդես է գալիս որպես խորաթափանց, կշռադատ, արժանահավատ և իր նյութով ապրող պատմագիր: Եթև նույնիսկ որոշ առումներով զիջում է հայ պատմագրության առավել ականավոր մեծերին, անտարակույս, մնում է առաջավորների շարքում:

Մեզ հաղորդած փաստագրական հարուստ նյութը նա ղեկնողել է իր պատմագրական հիմնական երկի՝ «Հաւաքումն պատմութեան» մեջ, բայց և որոշ մանրամասնությամբ ամփոփել է նաև այլ երկերում («Յիշատակարան», ներբողներ, ճառեր և այլն): Այս առնչությամբ մեր հիմնական նպատակը հիշյալ երկերի պատմաձանաչողական արժեքի ընդգծումն է, ուստի կարող ենք առաջնորդվել նաև այն փաստերով, որոնք պատմագիտության մեջ արդեն ճանաչում ու հաստատում գտել են:

Հայ պատմագրության յուրաքանչյուր հուշարձանի շնորհիվ մեզ փոխանցված փաստերը, հաճախ իրենց պատճառական կապերի, հետևականների մատուցմամբ, վերլուծությամբ ու զնահատանքներով, գիտական անփոխարինելի արժեք են դառնում մասնագետների համար: Տեղեկատուական իրենց բացառիկ հարստությամբ դրանք մեծապես նպաստում են ճանաչելու և զնահատելու հայ ժողովրդի, ինչպես նաև

պատմականորեն ու մշակութապես առնչակից այլ ժողովուրդների քաղաքական, հասարակական, բարոյական կյանքի, մտավոր և հոգևոր մշակույթի վերաբերյալ շատ հարցեր ու երևույթներ:

Այս կարգի հուշարձաններից է նաև Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» աշխատությունը: Հայ պատմագիտության մեջ թեպետ անհրաժեշտ չափով զնահատական խոսք չի ասվել այս աղբյուրի մասին, երբեմն այն դիտվել է որպես խիստ համառոտ, շոր, պասիվ շաբադրանք, սակայն ավելի հաճախ գիտական լուրջ կարևորություն է ընծայվել դրան: Հայագիտական, արևելագիտական, ինչպես նաև խաչակրաց արշավանքների վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններում այն վկայակոչվել է բազմիցս, դրվել է լայն շրջանառության մեջ, համարվել արժեքավոր, երբեմն անփոխարինելի պատմական ըսկզբնաղբյուր:

«Հաւաքումն պատմութեան» համառոտ բովանդակությունը ներկայացնելիս մեր ուսումնասիրության Ա գրքում ակնարկել ենք այն հիմնական բնագավառները, որոնց վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում նրանում: Վերջիններին պատմաձանաչողական արժեքն ու շահեկանությունը ակնբախ են շատ վաղուց հաստատված պատմագիտական և բանասիրական ուսումնասիրություններում: Երբ այդ տեղեկության մի շտրք կարևոր փաստեր նախորդ հայ սկզբնաղբյուրներից են քաղազրաբար ընդգրկվել սույն երկի մեջ, բնական է, որոնք վերջապես չպիտի գնահատվեն այնպես և այն չափանիշով, ինչպես, երբ դիտվում են իրենց բուն սկզբնագրերում: Բայց, որովհետև Վարդան Արևելցին միշտ նույնությամբ չի փոխառել նախընթաց աղբյուրների հաղորդումները, փոխառածներն էլ ամենաուշը XIII դարի կեսերի ձեռագիր ընդօրինակություններից են, ուստի դրանք պահպանում են որոշակի օրույնություն և իրենց սկզբնագրերի համեմատությամբ ունեն բնագրական տարբերակներ: Վարդան Արևելցին ինքն էլ իր հերթին ըստ իր ժամանակի ու սեփական հայեցողության լրացումներ և սրբագրումներ է կատարել: Ուստի միանգամայն հասկանալի է, որ ակնարկված տեղեկությունները կարող են մասնակիորեն նոր իմաստավորում ստանալ և ծառայել թարմ լուսաբանությունների: Այս է պատճառը, որ պատմագիտական շատ ուսումնասիրություններում հաճախ վկայակոչված են «Հաւաքումն պատմութեան» նաև այն հատվածներն ու պարբերությունները, որոնց քաղազրույթուն լինելը բացահայտ է:

Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» երկի աղբյուրագիտական, պատմաձանաչողական և պատմագիտական նշանակությունը ավելի խտացել է վերջին մասերում, որոնք ժամանակագրականորեն հե-

ղինակին մոտ շրջանի իրազարժություններ են ամփոփում, մասնավաճ աչնպիսի, որոնց նա ականջալուր, ականատես և մինչև իսկ մասնակից է եղել: Ցավոք, շատ բան այս առիթով նա խնայել կամ զեղչել է, չկամենալով «երեքկնեղ» իր հաղորդումները, քանի որ ուրիշներն էլ, հատկապես իր ուսուցիչ Հովհաննես Վանականը և աշակերտակից Կիրակոս Գանձակեցին, դրանց մասին զրավոր տեղեկացրել էին արդեն: Վստահ ենք, եթե նա «երեքկնեղ» իսկ, դա չէր լինի նույն բանի կրկնությունը, քանի որ այն, ինչ նա արձանագրել է, տարբեր է, նոր է և շատ անգամ եզակի: Խոսքը մասնավորապես Արաբական խալիֆայթի, Բյուզանդիայի, իսլավերաց վերջին արշավանքների, սելջուկների, մոնղոլների նվաճողական պատերազմների, հայ-վրացական հարաբերությունների, Զարաշանների, նախարարական այլ տների, տարբեր ամիրայությունների, երկրի ներքին, սոցիալ-տնտեսական դրություն, իրավական վիճակի, ազատագրական պայքարի, մշակութային, եկեղեցական և հոգևոր-բարոյական կյանքի վերաբերյալ պատմական փաստագրական հաղորդումների մասին է: Դրանք ևս վաղուց մտել են գիտական շրջանառություն մեջ, քննվել ու գնահատվել են բազմաթիվ առիթներով ու առընչություններում և բերել իրենց գիտական միանգամայն օգտակար նպատուր: Շատ իրազարժություններ և երևույթներ ավելի հստակ, երբեմն լիովին նոր պարզաբանման ու գնահատման են արժանացել, բազմաթիվ քաղաքական, ուղղակական, մշակութային և եկեղեցական գործիչների կյանքը, գերն ու նշանակությունը նոր տվյալներով ամբողջացվել և արժեվորվել են հենց դրանց հիման վրա: Վերոգրյալներն ավելի լավ պատկերացնելու և դրանց ստույգ լինելը ակներև ցույց տալու համար դիմենք առանձին փաստերի, որոնք շատ են և կարող են որոշակի ընդգծել նրա երկերի ճանաչողական արժեքը:

* * *

Սկսենք հայ-արաբական աննշություններից, որոնց վերաբերյալ Վարդան Արևելցու հաղորդումները հիմնականում քաղազբություն լինելով հանդերձ, ինչպես նկատել ենք տվել, գիտական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Արաբական խալիֆայթի տիրակալության դժնդակ պայմաններից ու հարստահարություններից փրկվելու համար հայ իշխանական տները լքում էին իրենց սեփական կալվածները և արտագաղթում ավելի ապահով վայրեր: Այսպիսով, արաբները կրկնակի նպատակ էին իրագործում. իրենցից վանում էին ընդդիմադիր ազդեցիկ ուժերը և տիրում նրանց հողերին ու անշարժ ունեցվածքին: Հատկապես 774—775 թվա-

կաններին տեղի ունեցած հակաարաբական հզոր ապստամբության ճնշումից հետո՝ արտագաղթերը ավելի հաճախագեղ դարձան և ընդունեցին մեծ ծավալ: Արտագաղթողները չկարողանալով ստեղծել նոր բույն ու օջախ, շատ դեպքերում չէին պահպանում իրենց զարավոր տոհմական, իշխանական իրավիճակը և դադարում էին գոյատևելուց իբրև այդպիսիք:

Վարդան Արևելցու տեղեկությունները նոր լույս են սփռում այս ուշագրավ երևույթի վրա: Նա նշում է, որ Գնունիները՝ «զամենայն զզգև ախլուն իրեանց» թողնում են արաբներին (Ութմանիկներին) և Աշուտ Մասկերի աջակցությամբ փոխադրվում Տալոց աշխարհ՝

Այս աեսակետից ուշագրավ է նաև Արևելցու այն տեղեկությունը, որ Մուշեղ Մամիկոնյանի դատերից մեկը հանձն է առնում ամուսնանալ Մանազկերտի ամիրա Ջահահֆի հետ. «Իսկ Մուշեղայ՝ երկու որդիք և շորս դատերք. անդրանկին Շապուհ անուն, որք անկան յերկիրն վասպուրական, զորս ևսպան զերկոսին Մհհրուժան Արծրունի, որպէս թէ ի պատճառս հօրն նոցա եղև ազէտն մեծ: Եւ մի քերց նոցա ետ գինքն յամուսնութիւն Ջահահպի ումեմն իսմայելացոյ՝ թիկունս առնելով զնա... և զի Ջահահպ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց և խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին...»²: Համբավաշատ Մամիկոնյանների դուստրը նման քայլի է գիմում պաշտպանվելու, թիկունք տնենալու համար, քանի որ իր երբեմնի փառապանծ տոհմը խիստ ակարացել էր արաբների քաղաքական և տնտեսական հարստահարությունների պատճառով, իսկ Ջահահֆը, որն արդեն «յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց» գավառի, խնամիական այս գործարքով տննշում էր տիրել այդ «բոլոր աշխարհին»³:

¹ Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան, էջ 77:

² Նույն տեղում, էջ 76:

³ Մեր սույն Բ գիրքը արդեն հանձնված էր հրատարակության, երբ ստացանք Ռ. Քամոնի հոդվածը Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» արշարունի մասին, որն իբրև զեկուցում ընթերցվել էր «Հայ միջնադարյան գրականության սիմպոզիումի» 1986թ. Մատենադարանում կայացած նիստում: Այդ ժամանակ էլ հարգելի հայագետին սորամաղրվեց մեր հոդվածը՝ նվիրված Արևելցու հիշյալ աշխատության աղբյուրների հանգամանալից ըննությունը, որը շարադրվել էր դեռևս 1970-ական թվականներին և լույս տեսել 1984թ. «Քաների Մատենադարանի» 14 համարում (տես էջ 78—105): Զեկուցումն ընթերցելուց անմիջապես հետո մեզ հետ հանդիպման ժամանակ նա հայտնեց, որ ինքը իդուր է անտեսել մեր սույն հոդվածը և հետագայում կվերանայի իր գրքը: Ափսոսանքով արձանագրում ենք, որ նա ավելի ուշ տպված (Le Musée, 1987, p. 343—352) իր վերահիշյալ հոդվածում նույնիսկ հիշատակություն չի արել այդ մասին:

Արարների նման նկրտումներն ի հայտ են գալիս հատկապես խալիֆաթի դեմ ապստամբած (IX դարի առաջին տասնամյակներին) ամիրայություններում, որոնցից մեկն էր Մանազկերտի սուլն Ջահհաֆյան ամիրայությունը: Ջահհաֆն ու իր որդին՝ Արզլմելիքը, Գլխում էլ ավելի հզորանալով, 5000 զորքով արշավում են Աշոտ Բագրատունու (Մսակեր) վրա, սակայն շարաշար պարտվում են, իսկ Աշոտի եղբայր Շապուհը «ասպատակելով ի կողմանս Դնայ», քաղաքի հայ բնակչության օգնությամբ ջախջախում է Արզլմելիքի զորքը և սպանում նրան: Արևելքին այս մասին հայտնում է հետևյալը. «Բայց տունն Ջահապայ զօրացեալ ի Գուին, իրն հինգ հազարաւ, կամեցան զնալ ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ՝ որդոյ Սմբատայ. իսկ ողջախոսն այն և քաջն հաւատացեալ՝ երկերիւր հեծելօք և երեքհարիւր հետակօք ել ընդդէմ նոցա՝ շմնացեալ հաւաքման զօրացն, և կոտորեաց ի նոցանէ զերեք հազարսն, և հասեալ ի բանակս նոցա՝ էառ զամենայն մեծութիւնս նոցա, և դարձան խնդութեամբ՝ փառաւորելով զՔրիստոս: Եւ Շապուհ եղբայր նորա ասպատակեալ ի կողմանս Դնայ և առեալ աւար բազում՝ դառնայր. և թափեցաւ զօրն ի քաղաքէն զհետ նորա, և քաղաքացիքն զմեծալք ի վերայ Արզլմելիքի, սպանին զնա և ածին զդուռն քաղաքին. և դարձեալ զօրացն և իմացեալ զեղեակն, շրտեցան և կորեան ի միջոյն՝ Օգտակար է նաև վարդան Արևելցու հաղորդած տեղեկությունը Ջահհաֆի եղբորորդու՝ Սևադայի կռիվների մասին³, որոնք նա մղում էր հիշյալ Բագրատունի եղբայրների դեմ: Նա ուշագրավ տվյալ է հայտնում Ջահհաֆյան ամիրայության մեկ այլ ներկայացուցչի՝ Արլհերթի վերաբերյալ, որը արշավելով Սյունիքի վրա «խապառ ջնջվում է» Բարզեն Սյունու զորքերի կողմից⁴:

IX դարի սկզբից, այսպիսով, խալիֆաթի ներսում ծագած գահակալական երկպառակությունների, Ջահհաֆյան և մյուս (Թիֆլիսի, Կայսակներ, Եղեւսիայի և Մարաշի) մահմեդական ամիրաների, Հայաստանի արաբ կառավարիչ Հատիմի, պարսիկ խուրամիտների սոցիալ-քաղաքական շարժման պարագլուխ Բաբեկի ապստամբությունների,

³ Նույն տեղում, էջ 78: Այս և նախորդ երկու կետերի անշուրջությամբ մանրամասն տե՛ս Ան, Հայոց պատմություն, Երկեր, Բ, գիրք Ա, էջ 417—418, 395: Մանանդյան Լ., Քննական տեսություն, Բ, էջ 595—598: Հովհաննիսյան Ա., Գրվագներ, Ա, էջ 344: Հակոբյան Ս., Հայ գյուղացիության պատմություն, II, էջ 30: Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները, էջ 65—66, 70: Գրիգորյան Գ., Տարանի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX—X դարում, էջ 351—354: Հայ ժողովրդի պատմություն, III, էջ 107:

⁴ Նույն տեղում, էջ 79:

⁵ Նույն տեղում, էջ 80:

ինչպես նաև Բագրատունիների Արաբական խալիֆաթի նկատմամբ բռնած քաղաքական կողմնորոշման շնորհիվ՝ Հայաստանում քաղաքական, սոցիալ-տնտեսական և իրավական վիճակը սկսում է բարելավվել, երկիրը կազդուրվում է հեռզհետե, և ազգային իշխանությունը ավելի հզորանալով՝ ընդարձակում է իր ազդեցության ոլորտները:

Վարդան Արևելցու այս առիթով գրված հաղորդումները արժանացել են մասնագետների ուշադրությանը, հատկապես սովետահայ պատմագիտության մեջ: Ահա թե որքան հստակ և խորաթափանց է նրա հետևյալ նկատառումը. «Յայնմ ժամանակի (IX դարի սկզբներին—Փ. Ա.) աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց. և սկսան զօրանալ իշխանքն մեր յիրաքանչիւր իւր տեղիս: Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի՝ որդոյ Ատրնբրսեհի՝ որդոյ Վասակայ, որդոյ՝ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան: Եւ կայսրն առաքէ նմա պատիւ կիրապաղատութեանս»⁵:

Այս անշուրջությամբ կարևոր են Աշոտ Մսակերի և նրա եղբոր՝ Շապուհի մասին վարդանի հաղորդած տվյալները, որոնցից մի քանիսին արդեն ծանոթացանք: Հայտնելով, որ նրանք աստիճանաբար ամրացրել և հզորացրել են իրենց իշխանությունը, ընդարձակել տիրույթները, նա ընդգծում է հատկապես «Իսմայելացիների» նկատմամբ նրանց ունեցած ռազմական հաջողությունները: IX դարի հենց սկզբին (813—820 թթ.) նրանք Ջահհաֆյաններից վերագրվում են Արշարունիքը՝ «զայն առին յինքեանս», ինչպես նաև տիրում Ծիրակ, Աշոցք և Տայք գավառներին. «Իսկ որդիքն Սմբատայ Աշոտ և Շապուհ հասարակ բաժանեցին զհայրենիս իւրեանց. և զի Ջահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց և խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին, զայն առին յինքեանս Աշոտ և Շապուհ. և ելեալք զկողմամբքն Ծիրակայ՝ հարին զզօրսն Իսմայելի, որ անդ, և գրաւեցին յինքեանս զԾիրակ և զԱշոցք և զգաւառն Հայոց»⁶:

Հետաքրքիր են նաև Աշոտ Մսակերի վերաբերյալ հետևյալ համակրանքի խոսքերը. «Եւ այսպէս ըստ բախտին ելեալ Աշոտի քաջի՝ շինէ զԿամախ և բնակեցուցանէ ի նմա զընտանիս իւր, և ինքն նմանեալ նախնոյն իւրոյ Սմբատայ, որդոյ Բիրատայ իշխանի Սմբատաւանայ, որ է Բերերդ ի Սպեր գաւառի: Քանզի յաւուր միում պաշարեցին զնա (զԱշոտն—Փ. Ա.) թշնամիքն՝ մինչ կայր յաղօթս, և տեսեալ՝ ոչ խափանեաց զխօսելն ընդ Աստուծոյ մինչև ցկատարումն, և ապա ելեալ

⁵ Նույն տեղում, էջ 77: Տե՛ս Մանանդյան Լ., նշվ. աշխ., Բ, էջ 595—597:

⁷ Նույն տեղում, էջ 76:

ընդդէմ նոցա՝ կտրէր յերկուս զգլխատրն, որում անուն ևր կիպառոն Արզլա, և հարկանէր իբրև արս հինգ հարիր»⁸: Արևելցին է հաղորդում, որ նա ունեցել է հինգ որդի՝ Սմբատ, Դավիթ, Սահակ, Մուշեղ, Բագարատ, որոնցից Դավիթն է, որ վերաշինել է Օձ բերդը⁹: Աշոտ Մսակերը մահանում է «ի տան իւրում», իր եղբայր Շապուհից (որը զոհվել էր 824 թ. Սևադա Ջահաֆյանի դեմ մղված կռիվում) երկու տարի հետո՝ 825 կամ 826 թվականին¹⁰:

Բարեկի ապստամբությանն անդրադառնալիս, մասնագետները նկատառման են արժանացրել նաև Վարդան Արևելցու այդ առնչությունները տված տեղեկությունները, որոնք բավականաչափ ուրույն են¹¹: Ահա թե ինչ է գրում նա. «Յաւուրսն յայնոսիկ այր մի յազգէն պարսից Բարանուն ելեալ ի Բաղտատայ, արկանէր զբազումս ի սուր սուսերի յազգէն Իսմայելի, զբազումս գերելով. և ասէր զինքն՝ անմահ. և ի միում նուազ՝ սատակէր երեսուն հազար ի պատերազմելն իւրում ընդ Իսմայելի. և եկն մինչև ցԳեղարբունի և մաշէր սրով զմեծ և զփոքր: Եւ Մամուն էր ի կողմանս Յունաց զամս եօթն և առնոյր զանհպելի ամուրն Լուլուայ, և դառնայ ի Միջագետս: Եւ Մանուիլ երթայր դարձեալ ի Յոյնքս, Մեռա Մամուն, և առ զիշխանութիւնն Արուսահակ՝ եղբայր նորա. և նա առաքէ զԱփշինն ամենայն ուժով իւրով ի վերայ Բաբանայ: Եւ Ափշինն առաքէ ի Հայս և ինքն կոտորէ զգօրսն Բաբանայ: Եւ Սահլ՝ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան և առնու յԱփշինն պարզես հազարիցս հազար կշիռ արծաթոյ, և այլ ևս հարիր հազար առնու ի նմանէ և զԲաբանայ կտրեալ զձեռս և զտոս՝ հանեն զնա ի փայտ: Եւ երթայ Ափշինն յերկիրն Յունաց և յազթէ կայսերն և առնու զԱմուրիա քաղաք և գերեալ զնա դառնայ խաղաղութեամբ: Յաւուրսն յայնոսիկ Արշերթ ո՞րն ի տանէն Ջահապայ, ել շորիւք հազարօք յերկիրն Սիւնեաց, և ել Բարեկն ընդդէմ նորա երկերիւրօք և ջնջեաց զնա իսպառ»¹²:

* * *

Վարդան Արևելցին նոր ու արժեքավոր մի շարք տեղեկություններ է հաղորդում Հայաստանի տարածքում կազմակերպված Շաղաղայան ամիրայության քաղաքական, ռազմական, տնտեսական գործառնությունների մասին: Սկսում է Հայաստանում (Փառխոսս գավառում) նրանց հաստատվելու իրողությունից և ապա՝ մեջընդմեջ շարադրում

մի շարք իրադարձություններ, հազվադեպ կրկնելով հայ պատմիչներին: Կանգ առնենք դրանցից մի քանիսի վրա:

Շաղաղայանների Հայաստան գալու և հաստատվելու նախապատմության վերաբերյալ նա գրում է հետևյալը. «Ի սոյն աուրս կին մի Մամ անուն գայ ի Պարսից, երեք որդովք, ի գաւառն Փառխոսոյ, առ Գրիգոր փառաւոր իշխանն: Եւ տան որդիքն պատանդ զմայրն և առնուն զՇօթս և զբերդս Շամիրամայ և անտի ընտանացեալ ընդ Խազիզն՝ ամիրայն Գանձակայ՝ սպանին զնա և առին զԳանձակ և տիրեցին: Երեց որդին Պարզուան մեռաւ կարճ, և իշխանացաւ Լէշբարի՝ միս եղբայրն, և առնու զՊարտաւ և զՇամբոր ի Սալարէն: Եւ եղբայր նորա կրտսեր, որ Փատուին կոչիր, սպանեալ զնա յորսի, առնու զիշխանութիւնն»¹³: Գեպքերը տեղի են ունենում X դարի վերջերին և XI դարի սկզբին, երբ Գանձակում իրենց իշխանությունն ամրացնելուց հետո (X դարի 70-ական թթ.), Շաղաղայանները ձեռնարկում են մի շարք նվաճողական քայլեր՝ Հայաստանի մերձակա շրջաններից Փառխոսը, Խաչինը, Շամբորը, Շոթսը գրավելու համար: Փատուինի գլխավորությամբ նրանց առավել հզորացման ու ծավալման մասին են պատմում Վարդանի հաջորդ խոսքերը. «Եւ գնացեալ առ նա Փիլիպպէ որդին Գրիգորոյ՝ սիրոյ աղագաւ, ըմբռնէ զսա ի կալանս զկնի մահուան հօրն և առնու ի նմանէ զՇաշուաղ և զՇօթս: Եւ կոչեցեալ առ ինքն զԳագիկ՝ որդի Համամայ, զտէրն Տանձեաց, սպանանէ և առնու զերկիր նորա: Եւ այսպես զօրացեալ տիրէ Խաչինոյ և Գորոզոյ և Սևորդեացն, և Գոռ զնէ ընդ Գագիկայ՝ թագաւորին Չորոզեատոյ և ընդ Կիրիկէի՝ թագաւորին Աղուանից և ընդ Բագարատայ՝ թագաւորին վրաց և նեղէր զնոսա: Տիրեաց և Դունայ և եզ հարկս ի վերայ հայոց երեք հարիւր հազար գրամ»¹⁴:

Այս տեղեկությունների առնչությամբ, որոնք հավասարապես վերաբերում են նաև Փառխոսսի հայ թագավորության պատմության տրվյալ ժամանակաշրջանին, Հայ ժողովրդի պատմության (բազմահատորյակի) III հատորում ի միջի այլոց ասված է. «Սենեքերիմի և Գրիգորի մահվամբ՝ Փառխոսսի թագավորությունն անմիջապես շվերացվեց: Ասորիկը, հավանաբար շփոթում է, և ավելի ճիշտ է Վարդան Արևելցին, որի հանգամանալից տեղեկությունների համաձայն Փառխոսսի անկումը տեղի ունեցավ Գրիգորի որդի Փիլիպպի օրոք և Փատուինի ձեռքով»¹⁵:

¹³ Նույն տեղում, էջ 100: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, III, էջ 92: Ուլտրաբայան Բ., Խաչնի իշխանությունը, էջ 92—95:

¹⁴ Նույն տեղում, էջ 100—101: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, III, էջ 92: Ուլտրաբայան Բ., նշվ. աշխ., էջ 95:

¹⁵ Հայ ժողովրդի պատմություն, III, էջ 92:

⁸ Նույն տեղում, էջ 76—77:

⁹ Նույն տեղում, էջ 78—79: Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 56—57:

¹⁰ Նույն տեղում, էջ 79:

¹¹ Առ. Հայոց պատմություն, Երկեր, Բ, Գիրք Ա, էջ 424:

¹² Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան, էջ 79—80:

Արևելյին հավաստում է, որ Շաղաղյանները, ավելի ստույգ, 1088 թվականին են Գանձակը հանձնել Բուղային¹⁶: Գանձակի Փատլուն Բ ամիրան, իր նվաճողական նպատակներն իրագործելու համար, զորքերի մեջ երբեմն ընդգրկում էր նաև հայ զորականներին՝ իրենց գլխավորներով: Այդպես նա նվաճեց Բաղքի Կապան արքայանիստ ամրոցը և վերջ տվեց Սյունյաց թագավորությանը: Գրան է վերաբերում Արևելյու հաջորդ վկայությունը¹⁷: Ըստ նրա՝ այս նույն Փատլունը Ալփասլանից գնել էր Անին, տալով նրան «ոսկիակուռ նկարս ծաղկոցի», և իր թոռանը՝ Մանուչին նշանակել էր «տերս»: Մանուչին ոչ միայն վերաշինում է Անին, ամրացնում նրա պարիսպները, այլև քաղաք է հրավիրում Պահլավունի Վասակի որդի Գրիգորին¹⁸: Ուշադրության արժանի է նաև այն, որ Մանուչի «հրամանաւ և կամօք» է Հայոց կաթողիկոս ընտրվում Գրիգորի եղբայր Բարսեղը¹⁹: Բնականաբար, սրանով ընդգծվում է Շաղաղյանների՝ հայերին սիրաշահելու ձգտումը, որպեսզի վերջիններս քաղաքական, տնտեսական և ռազմական ուժերով գործակցեին իրենց:

Վարդան Արևելյին հետո, կրկին անդրադառնալով Մանուչին ու Գրիգոր Պահլավունուն, հետևյալն է գրում. «Ձկնի անցանելոյ սովոյն ազգ մի սկիւթական, որ ի վաղեաց ժամանակաց զօղեալ կեայր առ վրկանօք, անուն գլխաւորին Նլխազի կոչեցեալ, որ ելն եօթն հազարաւ ընդ միջոցս աշխարհի մինչև յԱնի քաղաք պատերազմաւ. և մեռանի անդ եղբայր նորա, որ նմա էր Գողթադու հսկայի ի Գրիգորոյ՝ որդոյ Վասակայ՝ թոռին Ապիրատին, որ զկնի աւուրց նահատակեցաւ ի Կաղզուանն՝ գերծուցեալ ի մահուանէ զամիրայն Անույ զՄանուչէ, և տարեալ թաղեցին զնա ի Կեշառուս. եղբայր տէր Բարսղի կաթողիկոսի, և Մանուչէ և ամենայն զօր բանակին հայոց զկնի դիոյն»²⁰, ապա՝ «Ի հինգ հարիւր հիսուն և չորս թուին ի շփոթել իշխանութեանն պարսից, յարեալ ամիրա մի Ղզիլ անուն սկիւթացի, էառ զաւանն օռէ և զնայ մտանէ ի Գուին բռնութեամբ ուժոյ, սպանեալ զԱրունասը՝ զեղբայրն Մանուչէի: Եւ զնացեալ Մանուչէի՝ առնու զօր ի դրանէ արքային պարսից, և

16 Վարդան Արևելյի, Հաւացումն պատմութեան, էջ 106:

17 Նույն տեղում, էջ 103:

18 Նույն տեղում, էջ 103—104: Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., Գ, էջ 87—88: Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 149: Պողոսյան Ա., Հայաստանը IX—XIII դդ., էջ 259:

19 Նույն տեղում, էջ 104:

20 Նույն տեղում, էջ 109:

գայ սպանանէ զՂզիլն ի վերայ գերեզմանի եղբոր իւրոյ, և զԳուին տայ ի ձեռս պարսից»²¹:

Շարունակելով իր խոսքը Շաղաղյանների մասին, պատմագիրը լրացուցիչ հայտնում է. Մանուչի Արու-լ-Ասվար (1118—1142 թթ.) որդին, իր իշխանության ենթակա հայերին սկսում է թշնամաբար վերաբերվել՝ շահելով նրանց ատելությունը: Վերջիններս, վրդովված նրա կամայականություններից, ըմբոստանում են, հրավիրում են վրաց Գավիթ թագավորին և քաղաքը հանձնում նրան: Ապա Գավիթը հեռանում է, Արուլեթին և նրա Իվանե որդուն (Ուրբելյաններից) նշանակելով քաղաքի կառավարիչ: Իր հետ գերեզմարում է Արու-լ-Ասվարին և նրա որդիներին, որոնք, ըստ Վարդան Արևելյու, այդպես էլ անդարձ կորում են²², նա անմիջապես հայտնում է, որ Արու-լ-Ասվարի որդիներից մեկը՝ Փատլունը (Գ), որն այդ ժամանակ գտնվում էր հեռավոր Խորասանում, լսելով հոր և եղբայրների տխուր ճակատագրի մասին, զորքով գալիս է Անի: Արուլեթին և քաղաքի ավագանուն խոստանում է «խնայել թրիստոնյաներին», եթե քաղաքը հանձնվի իրեն: Այդպես էլ լինում է. Անին հանձնվում է Փատլունին, իսկ Արուլեթը «անցեալ զնայ ի տուն իւր»: Պատմիչը ապա հաստատում է, որ Փատլունը խնամք է տանում քաղաքին, նրա պաշտպանությունը, հետո գրավում է Գվինը, Գանձակը, բայց և տարվում է չարամտությամբ, որի համար էլ պատրժվում է²³: Ամիրայությունն անցնում է կրտսեր եղբորը՝ Խուշերին, հետո մյուս եղբորը՝ Մահմուդին²⁴: Վարդան Արևելյին հաստատում է նաև այն, որ Անիին այնուհետև իշխում են Արու-լ-Ասվարի թոռներ Շաղաղյան ու Փատլունը (Գ), և այս վերջինից, հայ բնակչության նախաձեռնությամբ և օգնությամբ, այն գրավում է վրաց Գեորգի Գ թագավորը²⁵:

Հիմնականում այս է հաղորդում Վարդան Արևելյին Շարոարյանների մասին: Տարակույս չկա, որ նրա վկայությունները, մեր մյուս պատմիչների հաղորդած տեղեկությունների հետ միասին, շատ օգտակար են այս շրջանի Շաղաղյան արարական ամիրայության և Հայաստանի ու Անդրկովկասի պատմության ուսումնասիրության համար, որը

21 Նույն տեղում, էջ 113:

22 Նույն տեղում, էջ 119:

23 Նույն տեղում, էջ 120—121:

24 Նույն տեղում, էջ 122:

25 Նույն տեղում, էջ 126:

աներկրա հավաստվել է սովետահայ պատմագիտության տեսանկյունից²⁶։

* * *

Վարդան Արևելցու տեղեկությունները մեծ կարևորություն են ստանում նաև Հայաստանում սելջուկների կատարած արշավանքների, ավերածությունների, սոցիալ-տնտեսական քաղաքականության ուսումնասիրման համար։ Նա այս անշուշտամբ ոչ միայն մեզ ծանոթ սկզբնաղբյուրներից է քաղում իր տեղեկությունները, այլև բանավոր պատմիչներից ու, մանավանդ, մեզ չհասած գրավոր այնպիսի աղբյուրներից, ինչպիսիք են Հովհաննես Սարկավազի, Մխիթար Անեցու, Վահրամ Տիգրանակերտցու, զույցե և Հովհաննես Վանականի պատմագրական երկերը²⁷։

Պարզ է ինքնին, որ Վարդան Արևելցին, այսպիսով, արժեքավոր մանրամասներ է պահպանել սելջուկների և ընդհանրապես XI դարի պատմական իրադարձությունների մասին։

Սելջուկների վերաբերյալ Վարդան Արևելցու հաղորդած առաջին տեղեկությունները վերաբերում են Տուղրիլբեգի ասպարեզ դալու ըսկրզրնական շրջանում տեղի ունեցած իրադարձություններին և սրանց անմիջապես նախորդած դեպքերին²⁸։ Այս նույնչափ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել հետագա, մանավանդ Ալիապանի հետ կապված անցուդարձերի մասին²⁹։

Մյուս հայ պատմիչների նման Վարդան Արևելցին ևս բարյացակամ է Ալիապանի որդու՝ Մելիքշահ սուլթանի նկատմամբ։ Շարունակ գրական արտահայտվելով նրա մասին, ընդգծում է բնակչության և եկեղեցու նկատմամբ նրա մեղմ, սիրաշահող քաղաքականությունը։ Մելիքշահը զսպում էր Գանձակի Շաղաղյան ամիրայության կամայականությունները, հնարավորություն տալիս, որ բարվոքվի երկրի տնտեսությունը, որն, առաջին հերթին, հարկավոր էր հենց իրենց՝ սելջուկներին։ Ահա մի բնորոշ քաղվածք Մելիքշահին նվիրված էջերից. «Եւ առ զպատիւ նորա Մելիք-Շահն՝ որդի նորա, այր ողորմած և բարեմիտ, առաւել աղղիս մեր, մինչ զի զպատրիարզն Բարսեղ վերացեալ խաչի առաջի իւր մուծանէր և պատուէր պարգևօք և տուղտայիւ գրոյ»³⁰։

26 Տե՛ս հատկապես՝ Մանանդյան Լ., նշվ. աշխ., Գ, էջ 115։ Հայ ժողովրդի պատմություն, III, էջ 481։

27 Տե՛ս մանրամասն՝ «Հաւաքումն պատմութեան» կորած աղբյուրները՝ մեր հոդվածը, ԺԱ—ԺԲ, էջ 265—269, Ա—Բ, էջ 24—30։

28 Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան, էջ 93—96։

29 Նույն տեղում, էջ 96—97, 101, 103—104։

30 Նույն տեղում, էջ 104։

Մելիքշահը ևս, ինչպես վերահաստատում է Արևելցին, անփառունակ վախճան է ունենում՝ թունավորվելով իր կնոջ կողմից, մահանում է՝ 1091 թվականին և թաղվում հոր՝ Ալիապանի մոտ, Մարանդում³¹։ Հաջորդ սուլթանների մասին նա հետևյալ հակիրճ վիճակագրություն է տալիս. «...որոյ (Մելիքշահի — Փ. Ա.) էին երկու որդիք՝ Բակիրուխ և Մափան կոչեցեալք. և Դուղուշն՝ եղբայր Մելիք-շահին սուլտանացաւ ի կողմանս Յունաց. և Բէկիարուխն՝ ի վերայ Պարսից և Հայոց։ Որ և՛ զքեռին իւր՝ զԻսմայիլն արարեալ հէջուր³², կարի քաղցր և բարեմիտ առ Հայս. վասն որոյ, խնամածեալ ազգիս՝ շինեցաւ աշխարհս. ազատեալ զվանորայս, և զամենայն եկեղեցականս։ Իսկ Դուղուշն տիրեալ Միջագետաց՝ հարկանէր զթագաւորն Արարկաց զԲրեհիմն, և առեալ զամենայն բանակս նոցա հարստանայր. և զայր առ նա զիր ի կնոջէն Բէկիարուխին, զի գնացել ի Պարսս և լիցի նմա այր և առցել զամենայն աշխարհ՝ ինքեան։ Եւ նորա խնդացեալ ընդ լուրն՝ խաղայ անթիւ բանակօք, և երթայ ի դաշտն Ասպահանայ, և յղէ առ նա Բէկիարուխն աղաչանս, զի տացել նմա զԱսպահան, և այլ ամենայն տիեզերք նմա լիցին։ Եւ ոչ կալեալ նորա յանձին, յարձակին ի միմեանս, և մեռանի Դուղուշն, և փախչի Ըռատուան՝ որդի նորա յՈւռհա, և նստի և նա սուլտան ի Հալպ և ի սահմանս նորա. և այլ ոմն յազգէ նորա Ալիիրայ կոչեցեալ՝ ի կողմն Յունաց սուլտանացաւ, և եկեալ յՈւռհա տիրել ջանայր նմա։ Եւ Թորոս կիրապաղատն սպան զնա զեղով զկնի աւուրց երեսնից»³³։

Թեև պատմագիրը սակավախոս է հատկապես Մելիքշահի մահից հետո սկսած զահակալական արյունահեղ պայքարի վերաբերյալ, սակայն, իր հակիրճությամբ հանդերձ, օգտակար լրացումներ է անում մասնագետ պատմաբանների համար։ Այսպես, կիսմուշ սելջուկ սուլթանի թոռ Ղլիճ Ասլանի վերաբերյալ գրում է. «Թարձեալ ի հինգհարիւր քառասուն և եօթն թուին Ղլիճ Ասլան սուլտանն արևմտից՝ թոռն Դղըլ-մշոյ՝ գնայ ի վերայ Մելտեհոյ. և իշխան քաղաքին Ղալիլին՝ աներ կիրապաղատին Ուռհայոյ՝ դարձոյց զնա անարգանօք»³⁴։

Նա հայտնում է, որ Բակիրուխին 1204 թվականին հաջորդում է իր եղբայրը՝ Տափարը։ Ծիշտ է հաղորդում նաև վերջինիս մահվան թվականը՝ 1118³⁵։ Հաջորդ մանրամասները ևս զուրկ չեն հետաքրքրություն

31 Նույն տեղում, էջ 107—108։

32 Նույն տեղում, էջ 108։

33 Նույն տեղում, էջ 108։

34 Նույն տեղում, էջ 109—110։

35 Նույն տեղում, էջ 113, 118։

նից. «...որ և մերձ ի մահ եղեալ (Տափարն— Փ. Ա.) ետ սպանանել զաւագ կինն իւր զԳոհար խաթունն, որ ունէր, ասեն, առաջի իւր ութսուն գուսանս ի սպասու, ինքեան՝ թագ ի գլուխ, և էր տէր զօրաց բազմաց, յորոց զաղտ զենուլ ետ, զի մի, ասէ, արասցէ այր զեղբայրն իմ, որ ունէր զխորին աշխարհն Պարսից՝ զԱւզկան քաղաք և զեզնէ, որ իննսուն ատուրք ձանսպարճաւ անգր է քան զԱսպահան, և զաթոռն տայր յաւագ որդին՝ ի Մահմուտն և զկրտսերն՝ զՄէլիքն զնէր տէր Գանձակայ Հայոց»³⁶:

Ատրպատականի սելջուկ ամիրայության ամբարեկ Շամս ադ-դին Ելտկուզի մասին Վարդան Արևելցիին գրում է քանիցս. առաջին անգամ իբրև «բրիստոնեասէր և աշխարհաշէն» իշխողի, երկրորդ անգամ, երբ նա արշավում է Շահ Արմենի վրա, երրորդ՝ Անիի ձակատամարտի (1161 թ.) առիթով, չորրորդ՝ 1162 թվականին Գլինի և Անիի գրավման, Մրենի ամրոցում չորս հազար մարդ հրկիզելու և վրաց զորքանակից ահաբեկվելով՝ փախչելու առնչությամբ³⁷:

Նրա որդիների մասին Վարդան Արևելցիին միայն այսքանն է հաղորդում. «Այլ զԱրփասյան սուլտանն փոխեաց Տուղրիլն և զԵլտկուզն՝ Փալճաւանն, որ տիրեաց խորին աշխարհին, և եզլասլան՝ վերին աշխարհիս, որք էին որդիք նորա: Ի նոյն ատուրս առաւ Մառաքար ի գողոց հրամանաւ Ղարաշայ ամիրային Կեչրորոյ, որ վաճառեաց զնա եզլասլանայ ընդ բազում ոսկոյ, և նա բնակեցոյց անդ արս վնասակարս, որք ոչ զազարէին յարենհեղութենէ ի տուէ և ի գիշերի. մինչև զբրիստոնեայս ի խաւարային անդունդս ընկղմեալ սովով և գաղջ հոտով առաջնոց մեռելոցն՝ սպանանէին. որ և հինգ կրօնաւորս անտանիս դառնակակիծ վիրօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակացն փողոտէին»³⁸: Արևելցիին վկայում է, որ սելջուկները 1168 թվականին են գրավել Կապանը, Գրհամը, Գեղին և Կաթավարերդը³⁹: Եվ այսպես նաև այլ հաղորդումներ...:

Այս առնչությամբ վկայակոչված փաստագրական տվյալները, ինչպես նշեցինք, թեկուզ և մասամբ ծանոթ են Մատթեոս Ռաճայեցու, Սամվել Անեցու, Մմբատ Սպարապետի, Մխիթար Ասորու, Մխիթար Գոշի, Կիրակոս Գանձակեցու պատմագրական երկերից, սակայն զգալիորեն հարստացնում են սելջուկների մասին այլ աղբյուրներից մեզ հասած գիտելիքները և ինքնին ընդգծում Վարդան Արևելցու երկի

պատմաճանաչողական և աղբյուրագիտական արժանիքները: Աներկբայելի է նաև դրանց պատմաբանասիրական և բնագրագիտական նշանակությունը հայ պատմագրության համար ընդհանրապես:

* * *

Շահարմենների ամիրայության մասին Վարդան Արևելցու հաղորդած տեղեկությունները պատմական որոշակի հետաքրքրություն ունեն և չեն վրիպել մասնագետների տեսադաշտից:

Սելջուկ Շահարմենները Հայաստանի և հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր տեղ ու նշանակություն ունեն: Սելջուկյան պետության քայքայման ժամանակից սկսած, նրանց իշխանության տակ էին Հայաստանի ներքին զավառներից ու քաղաքներից մի քանիսը՝ իլավթը՝ Մանազկերտը, Արճեշը, Մուշը, Տողատավը...:

Վարդան Արևելցիին ամիրայության հիմնադրի մասին հիշատակում է հետևյալը. Սուրման ալ-Կուբրին (որդի Արզուխին) հարձակվում է Եդեսիո վրա, բայց պարտվում Թեոդորոս Կյուրապաղատից⁴⁰:

Ապա պատմում է նրա թոռան՝ Շահ Արմենի (Սուրման Բ) մասին, թե ինչպես Թիրքաշը դիմում է նրան, նրանից զորք ստանում, լուծում հոր՝ Իվանեի վրեժը և գրավում Արշարունիքը⁴¹: Մինչ այդ, «եօթն ամօք նախքան զայս» Շահ Արմենը արդեն գրավել էր իլավթը և այլ բազմաթիվ քաղաքներ, սպանել իր «հանիկին» և իշխանությունը կենտրոնացրել իր ձեռքում: Հաղիվ ազատվում է իր դեմ կազմակերպված դավադրությունից, տիրում տասներկու քաղաքների⁴²:

Այնուհետև Վարդան Արևելցիին տեղեկացնում է, որ Գեորգի Գ վրաց թագավորը Շահարմեններից վերստին գրավում է Անին, իսկ հիսուն օր հետո Շահ Արմենը «ի Սոնաց» գալիս և հարձակվում է «հատուածեալ» քաղաքի վրա: Սակայն Գեորգի Գ-ը, հայ-վրացական զորքի մարտական գործողությունների շնորհիվ, շարաշար պարտության է մատնում նրան և կոտորում համարյա ամբողջ զորքն ու 20 հազար մարդ գերի վերցնում⁴³:

Հետաքրքիր է հետևյալ մանրամասնը, թեկուզ և բավականաչափ վիպական բնույթ ունի. «Ի վեց հարիւր երեսուն և մի թուին խարաչայն, որ էառ զՄառաքար և խորտակեաց կոանաւ զխաչն Գորոզոյ կոչեցեալ, անկեալ ի սիրտ նորա արհաւիրք երկիւղի՝ թողու յանկարծակի զտուն

36 Նույն տեղում, էջ 118:

37 Նույն տեղում, էջ 124, 127:

38 Նույն տեղում, էջ 130—131:

39 Նույն տեղում, էջ 128:

40 Նույն տեղում, էջ 109:

41 Նույն տեղում, էջ 123:

42 Նույն տեղում, էջ 123—125:

43 Նույն տեղում, էջ 126—127:

Գէորգեայ, որդւոյ Բագարատայ. և առ զՏփիսիս ի Պարսից, և եճար զԱլէիք զսուտանն Գանձակայ ի հարուածս սաստիկս. և ճինգհարիւր արս սրահանգս բարձրացոյց ի փայտ մահու ի Տփիսիս քաղաքի: Ընդ ատուրսն ընդ այնոսիկ, զի մեռեալ էր Մանուէլ՝ ամիրայն Անուոյ և Ապլսուար որդի նորա տիրէր նմա, այր անարի և կնամարդի, որ կամեցաւ վաճառել զԱնի վաթսուն հազար դննարի ի վերայ Կարուց ամիրային, և ետ բերել նալ ծանրագին և բարձրահասակ ի Խլաթայ, և զնել ՚ի վերայ գմբեթի կաթուղիկէին, փոխելով զեղեցիւն յառաջնոցն. վասն որոյ սրտատեալ քրիստոնէիցն՝ կոչեն զԴաւիթ, և տան ի ձեռս նորա զքաղաքն Անի. և ընկեցեալ զզէնն ատելի ի պատուական գիտոյ կաթուղիկէին, զոր ունէր վաթսուն ամ վասն մեղաց մերոց համբերելով՝ եղին զպսակն զարդու, և զթագն Յիսուսի՝ զպարծանքն Պօղոսի. զփերկութեան մերոյ արեգակն՝ զիսաչն աստուածընկալ. և հարեալ զժամահարն առ իսաչին՝ զաւանեցին Աստուած զիսաչիւն ի փրկութիւն հաւատացելոց: Իսկ թագաւորն զԱրուէթ, և զորդին իւր զԻւանէ թողեալ ի յԱնի՝ դառնայ յերկիր իւր, ընդ իւր տանելով զԱպլսուար՝ որդուք իւրովք, որք անդէն մեռան և ոչ ևս դարձան: Եւ ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց, առեալ զՈւթիս և զսահմանս իւր, և զԳագ, և զՏէրունականն, և զՏալուշ և զԿայեան և զԿայծոն, և զԼօնէ և զՏաշիր և զՄահկանաբերդ և զԲուր իշխանութիւնն Հայոց Կիւրիկէի և Արատայ ճնաղանդէր և զԷտան Կովկասու, և զթագաւորութիւնն Սոնաց, զՄրահուպ, և զՃրեթ, և զԴուալէթ, զՀերեթ, և մինչև ցծովն Կազրից, և ցՃաղբանդ և ցՇապուրան քաղաքս⁵⁰: Վարդան Արեւելցին ավելորդ չի համարել նրա մասին նշելու նաև հետևյալը. «Եւ ոչ էր նա երկմիտ յեկեղեցոյ և յաղօթից մերոց, վասն որոյ բազում անգամ զնէր զգրուիս իւր ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով զօրհնութիւն»⁵¹:

Դավթի հաջորդի՝ Դեմետրե Ա-ի մասին Արեւելցին հակիրճ հայտնում է. «...պահաց նոյնպէս զիշխանութիւն հօրն» և նույնիսկ ընդարձակեց այն, զբավելով Դեմետրեի ու ետնան քաղաքը Շաղաղայաներից⁵²:

Հետաքրքիր է նրա տեղեկութիւնը Դեմետրեի ժամանակ տեղի ունեցած հետևյալ միջադեպի մասին. «Ի նոյն ժամանակաց (1150-ական թթ.— Փ. Ա.) ոչ հեռագոյնս ինչ՝ որդին Ապուլեթի Իւանէ կամեցաւ սպանանել զԴեմետրէ և զեղբայրն իւր՝ զԳորգի. և հայր նորա Ապուլէթ ճողելով զալիսն իւր առաջի որդւոյն՝ արգել զնա: Եւ էին երկոքեանն

արգելեալք ի բերդն Դեմետրե պատճառանօք ինչ խարէութեան ի մէջ եղբարցն, զոր ապա իմացեալ Դեմետրէ, ասաց ցիւանէ. Կալար զիս՝ մամ, Եւ նա զղջացեալ ասաց. Ո՛չ, արքայ, այլ ետու զեղբայր քո ի ձեռս քո, որ խնդրէ առնուլ զթագաւորութիւնդ: Եւ նա ըմբռնեալ՝ խաւարեցուցանէ և թողուս⁵³:

Դեմետրեի որդու՝ Դավիթ Բ թագաւորի մահվան առնչութեամբ. նկատվում է մի մանրամասն, որը թեև «Հաւաքումն պատմութեան» ոչ բոլոր ձեռագրերում է պահպանվել, բայց և այնպես ուշագրավ է. «Ոմանք ասեն ի Դաւելոյ Օրբելեանց ի Սմբատայ և յիւանէէ, վասն ի տեղի նոցա զնելոյ զԹիրքաշն, բանս եղեալ ընդ Գէորգայ՝ եղբօր Դաւթի զնոսա զնել զօրավար»⁵⁴: Սա բնորոշ մի դիպված է ավատական տեւերի ներքին կյանքից:

Առանձին գոհունակութեամբ է Վարդան Արեւելցին պատմում Գեորգ Գ-ի քաջագործությունների մասին, ոչ միայն հայաբնակ գավառներն ու քաղաքներն ազատագրելու համար, այլև, անշուշտ այն պատճառով, որ դրանցում անմասն չէին նաև հայ զորականները⁵⁵:

Վիպական շնչով նա պատմում է. «Իսկ թագաւորն Վրաց կուտէ առ ինքն զկովկասային զօրսն և գայ առնու զԴուին՝ խտտագոյն խայտառակեալ զնոսա ի սուր և ի հուր, բաց ի քրիստոնէիցն, որ անդ. և զզագաթունսն թանեփեացս առեալ ի մնիրայէն՝ զարդարէ ոսկեթել հանդերձիւք, և եղեալ ի դագաղս՝ բառնայ ի յուսս մուկրեաց, և բուկտուրք տայ տանել մինչև ցՏփիսիս, նախագահ քաղաքն իւր, ի վեց հարիւր երկուտասան թուին»⁵⁶:

Այնուհետև Գեորգին երկու անգամ ազատագրում է Անին⁵⁷, վերջին անգամ 1174 թվականին՝ «ի սաղրելոյ Իւանէի ամիրսպասաւարի, զի ինքն նստցի ի նմա և արասցէ զերադարձ քրիստոնէից»⁵⁸: Սույն իվանեն (Օրբելյան) հետո կամենում է «տալ զքաղաքն ի թուրքն», բայց, բարեբախտաբար, դա տեղի չի ունենում, որովհետև քաղաքի բնակիչները իմանում են նրա խարդավանքի մասին ու կանխում այն. և՛ իվանեն, և՛ թուրքերի սուլթան Ալփասլանը «սրտախոցեալ» մեռնում են «ի միում ամի»⁵⁹: Մինչ այդ, ըստ Վարդան Արեւելցու, 1177 թվականին տեղի է ունեցել հետևյալը. «Ի նմին ժամանակի ել ի բանտէն Կարուց

53 նույն տեղում, էջ 122:

54 նույն տեղում, էջ 126:

55 նույն տեղում, էջ 126—127:

56 նույն տեղում, էջ 127:

57 նույն տեղում, էջ 126, 129:

58 նույն տեղում, էջ 129:

59 նույն տեղում, էջ 130:

50 Վարդան Արեւելցի, Հաւաքումն պատմութեան, էջ 118—119:

51 նույն տեղում, էջ 120:

52 նույն տեղում, էջ 120:

մեծ իշխանն Ապիրատն և եկն ի յԱնի. սա էր եղբայր Եպիսկոպոսի քաղաքին տեան Բարսեղի, որ ազաշեաց զթագաւորն Վրաց, և ետ փոխան նմա ամիրայ, և առ զնա և եօթնետասն հազար դահեկան: Յայնմ ժամանակի յայտնեաց Իւանէ զչարութիւնն իւր, զեղբորորդի թագաւորին իւրեանց զԳեմնէն և զլոյսիս յազատացն յինքն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զթագաւորն, մինչ կայր ի Սախատա յանհոգս. զոր իմացեալ յառնէ միոջէ՝ փախեալ ի Տփիսիս, զի սակաւամարդ էր. և անդ հաւաքեցան առ նա բազումք՝ թողլով զչար խորհուրդն: Եւ յորժամ զօրացաւ կողմն թագաւորին, և կամէր զնալ ի վերայ ապստամբացն՝ որք ի Սախատէ, փախեան յամուրս իւրեանց, և ապա մտին ի Լոնէ, բաց ի Լիպարտէն՝ որ շուգաւ ի Պարսից կողմն երկու որդուք. և էառ թագաւորն զամենայն զանձ Օրբէլիանց, և ամենեքեան անկան յոտս թագաւորին, եղբորորդին և ընդ նմա այլքն, մինչև ինքն իսկ՝ Իւանէ. զորոյ զաշան կուրացոյց, և զկրտսեր որդի նորա զՔաւթար և զԻնէն, զորդի Լիպարտին, սպան. և յոչինչ եղեն շար խորհուրդքն ամենայն, ի վեցհարիւր քսան և վեց թուին»⁶⁰: նախքան Գեորգիի մահն ու մահվան թվականը նշելը, Վարդան Արևելցին հարկ է համարել արձանագրել այդ ժամանակների համար հազվագեղ, բայց բաղձալի մի վիճակ, որը թագաւորի խելամիտ վարչարարութեան երախտիքն է. «Ի վեց հարիւր քսան և ութ թուին թագաւորն Երուսաղեմի երեքհարիւր ձիււորով եհար զՍալահարիւնն ի դրանն Երուսաղեմի զօրութեամբ սուրբ խաչին, որ եկեալ էր հարիւր քառասուն հազարաւ յառնուլ զԵրուսաղեմ, բարձեալ ջուր վաթսուն հազար ուղտով (որք միշտ կրէին ի գետոց և յաղբիւրաց): Յառաջ Յուսուֆ էր անուն նորա, որդի Էուբին, առ տառապելոյ Դնաացոյ, որ և ի մեծանալն կոչեցաւ Սալահարիւն՝ որ է խաղաղութիւն հաւատոց:

Ի վեցհարիւր քսան և ինն թուին Գեորգի երարձ զգող և զաւազակ յերկրէ. զի ամենայն զօրացն՝ ի միասին եղելոյ՝ օրինադրեաց կախել զփայտէ վասն փոքու և մեծի իրաց՝ անողորմ զամենայն մարդ, և յոլովք ի պատուաւորաց կախեցան. և զգտեալ ինչան տանէին կախէին զփայտիցն պատուհասից, և կախեցին մինչև ցանասուն և ցշուն և ցմուկն, և ահ անկաւ ի վերայ ամենեցուն. և եղև խաղաղութիւն մեծ»⁶¹:

Գեորգի Գ-ն, ըստ Վարդան Արևելցու, ստուգապես 1184 թվականին է մահացել, և քանի որ «ոչ գոյր նորա որդի» և Դաւիթ Գ-ի որդի՝ Դե-

մետրեն (Գեմնան) «յաշաց և յերանաց յապաւած էր», դահ է բարձրանում Գեորգի Գ-ի դուստր Թամար թագուհին (1184—1213 թթ.)⁶²:

Այստեղ ենք անդրադառնում նաև Զաքարյանների մասին Վարդան Արևելցու հաղորդումներին, որովհետև նրանց ռազմաքաղաքական և հասարակական-մշակութային ողջ գործունեությունը, ինչպես հայտնի է, սերտորեն առնչվում է ոչ միայն հայ, այլև վրաց պատմության հետ և հայ-վրացական հարաբերություններում կարևոր նշանակություն ունի:

Զաքարյանները բուն վերելք ապրեցին 1180-ական թվականներին: Թամար թագուհու իշխանության տարիներին նրանց քաղաքական և ռազմական սերտ համագործակցությամբ թե՛ Վրաստանն էր ավելի հզորանում և ընդարձակվում, թե՛ հայկական գավառներն ու քաղաքներն էին արագ ազատագրվում օտար նվաճողներից: Զաքարյանները, որոնք դեռևս Գեորգի Գ-ի ժամանակ արդեն բարձր պաշտոնների էին տիրացել (Սարգիս Զաքարյան) վրաց պետական կյանքում, Թամար թագուհու օրոք առավել կարևոր դիրքերի հասան: Նրանց հետ կապվեց հայ ազգային ազատագրության և պետական անկախության վերականգնման դժվարին գործը⁶³:

Հետզհետե ավելի ու ավելի էր աճում նրանց դերն ու նշանակությունը Վրաստանի և Հայաստանի ռազմաքաղաքական կյանքում ու հերոսական ազատագրական պայքարում:

Քիչ չեն Վարդան Արևելցու օգտակար և արժեքավոր տեղեկությունները Հայաստանի ու Վրաստանի, հատկապես Զաքարյանների իշխանության այս շրջանի պատմության մասին, որոնք բավականաչափ ուրույն են և պարունակում են այլուստ անհայտ կարևոր մանրամասներ: Գոհանանք մի քանի ուշագրավ վկայակոչումներով: Այսպես, օրինակ, «Յաւուրս ժամանակացս այսոցիկ՝ էին փառաւոր իշխանքն Զաքարէ և Եւանէ՝ որդիք Սարգսի, որդոյ Վարհամայ, որդոյ Զաքարի, յորդոյ Սարգսի, ի Քուրդ ազգէ, հատուած եղեալ առ թագաւորսն Չորտղատոյ, որ ի Բագրատունեաց ազգէ. հաւատացին ի Քրիստոս և պատուեցան. և տուաւ նոցա տուն բնակութեան Խոշորնի. և զի արիագոյնք էին, յառաջեցին օր ըստ օրէ՝ ի բարձ և ի պատիւ: Եւ յաւուրս Թամարին առաւել փառաւորեցան, և ետ նոցա զԼոնէ. և ինքեանք քաջութեամբ իւրեանց թափեցին ի թուրքաց յոլով բերդս և զաւառս ի սուղ ժամանակի. քանզի ի վեցհարիւր քառասուն թուին առին զերկիրն Շիրակայ. և ի վեցհարիւր քառասուն և հինգ՝ առին զԱնբերդ. և ի վեց-

60 Նույն տեղում, էջ 130:

61 Նույն տեղում, էջ 131:

62 Նույն տեղում, էջ 132—133:

63 Մխիթար Գոշ, Գիրք զատաստանի, Առաջարան, էջ ԺԲ:

հարիւր քառասուն և ութ թուին առին զԱնի. և ի վեցհարիւր յիսուն թուին առին զԲջնի. և ի վեցհարիւր յիսուն և երկու թուին առին զԴուին. և ի վեցհարիւր յիսուն և հինգ թուին առին զԿարս՝ թագաւորին. և ապա՝ զԳետաբակա և զԶարեքն. և ել անուն նոցա ընդ ամենայն երկիր»⁶⁴. Այս սեղմ խոսքերի մեջ ուշագրավ նշուի է ամփոփված Զաքարյանների պատմական ասպարեզ դուրս գալու և առաջին քաղաքական ու ռազմական հաջողութիւնների վերաբերյալ: Եւրոնակելով պատմել նրանց սխրանքների մասին, որոնք այնքան մեծ ուրախութիւն և հույս էին ներշնչում, նա գրում է. «Ի վեցհարիւր յիսուն և հին թուին մորեխն անբեհաց զբազում դաւառս, յորում ժամանակի մեծն Զաքարէ անբէր գտունն Պարսից մինչև ցԱրտաւիլ քաղաք, առնելով ի նոցանէ զվրէժ արեան քրիստոնէից, ըստ որում և զազոթատուն նոցա լցեալ արամը՝ այրել հրամայէր, զո՛հ լինել իշխանացն՝ որք ի նախջուանու եկեղեցիան, և կուռայքն և մուղրիքն՝ սուրբ քահանայիցն, որ ի Բագուան զենեցան, և արեամբ նոցա ներկաւ պարիսպ եկեղեցոյն»⁶⁵, «Եւ մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարութեամբ՝ առնու զԶարեքն և զամենայն շրջակայս նորա. և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ՝ որդոյ Զաքարիայ, առնուն զԵամբոր. և ի վեց հարիւր վաթսուն և ութ թուին առնու զՈրոտն և զմերձակայ զղեակսն»⁶⁶:

Վարդան Արեւելցին խոսում է նաև Զաքարյանների եկեղեցահասարակական և մշակութային գործունեութիւն մասին: Ափսոսանքով է հայտնում, որ Իվանեն իր դավանանքը փոխել է Քամար թագուհու թելադրութեամբ⁶⁷, իսկ Զաքարեն, թեկուզ և «կամեցաւ զտօն Տիրամօրն և զխաչին ի պատկեր ատուրն տօնել, և զճրագալոյցսն շուծանել և կրօնաւորաց՝ միս շուտել, և կենդանոյն (այսինքն՝ ողջ, ապրող մարդու համար—Փ. Ա.) պատարագ մատուցանել, և վրանով պատարագել ի բացեալ՝ դպրօք և սարկաւագօք», շտկարացավ եղբոր նման, «մնաց իւր սեփական հաւատն»⁶⁸: Սա գարաշրջանի համար հատկանշական բնութագիր է, ըստ այդմ էլ՝ կարևոր: Կարևոր է նաև Վարդան Արեւելցուն իրրև «սեփական հաւատի» նախանձախնդիր եկեղեցական և հասարակական գործիչ ճանաչելու տեսակետից:

Այս առնչութեամբ Արեւելցին անդրադառնում է նաև այլ հարակից փաստերի: Նախ նշում է, որ Զաքարեն, ելնելով իր վերոգրւալ առա-

ջարկներից, անպատեհ չի համարում թագ ուղարկել Կիլիկիայի Լևոն հայոց թագավորին, որը թագավոր էր ճանաչվել թե՛ լատինների, թե՛ հույների կողմից⁶⁹: Այսուհանդերձ, Վարդան Արեւելցին ավելացնում է. «...էր (Լեւոն—Փ. Ա.) ճոխ և յաղթագեցեաց և հարկադիր և լծատանջ ամենայն շրջակայ ազգացն»⁷⁰:

Զաքարեն իր այդ առաջարկները ներկայացնում է նաև Կիլիկիայի այլ եկեղեցական իշխանավորների, որոնք, թեև ուշացած, պատասխանում են զուսպ քաղաքավարութեամբ. «...զի չէ, ասեն, արտաքոյ գրոց և մեր է սահմանդ հայրենի, և յաւերմանէ եկեղեցոյ է խանգարեալ (որ հայ եկեղեցին այդ առաջարկներում նշվածը չի պահպանել—Փ. Ա.)»⁷¹: Ապա Զաքարեն Արեւելցան Հայաստանում՝ Լոռի և Անի քաղաքներում իր առաջարկների կենսադործման համար երկու եկեղեցական ժողով է գումարել տալիս: Հակառակ իր հեղինակութեան, նա որևէ կերպ իր կամքը չի պարտադրում ժողովականներին, որոնք մերժողական որոշում են կայացնում: Հետաքրքիր է մանավանդ Վարդան Արեւելցու կողմից հատուկ նշված նրանց պատճառաբանութիւնը. «...և ոչ եղև ընկալեալ (Զաքարեի առաջարկները—Փ. Ա.), զուցէ, ասեն, և ամենայն իրօք հարկեալ լինիմք գնալ զկէնի աղանդոյն յունաց և վրաց»⁷²: Պարզ է. մտավախութիւն է եղել, որ եկեղեցական ավանդների հարցում դավանափոխութեան զիջումները կարող էին հարկադրաբար հանգեցնել «ամենայն իրօք» Բյուզանդիային և Վրաստանին հետեւելու վիճակին: Իսկ դա Հայաստանի անկախութեան համար սպառնալիք էր, որ ժամանակին ու հստակ գիտակցել է Վարդան Արեւելցին:

Կարելի է Վարդան Արեւելցու այս կապակցութեամբ հաղորդած տեղեկութիւնները ներառելով հետևյալ տողերով, որոնք միաժամանակ հայ-վրացական զինական ուժի հզորութեան և համագործակցութեան յուրովի գնահատականն են. «Եւ ի վեց հարիւր եօթնասուն և մի թուին կամեցան այսրէն դառնալ նոյնք [իմա մոնղոլները—Փ. Ա.]. այլ զի գտին դեսպանք նոցա կազմ և հաւաք զՀայս և զՎիրս, և տարեալ զհամբաւն՝ ոչ համարձակեցան գալ, այլ անզրէն դարձեալ գնացին»⁷³:

Մենք նաև այս դեպքում զանց ենք առնում դիմել հավելյալ փաստերի և վկայակոչումների ոչ միայն նրա համար, որ դրանք շատ են,

64 Վարդան Արեւելցի. Հատարումն պատմութեան, էջ 138:

65 Նույն տեղում, էջ 139—140:

66 Նույն տեղում, էջ 140—141:

67 Նույն տեղում, էջ 138:

68 Նույն տեղում, էջ 138:

69 Նույն տեղում, էջ 138—139:

70 Նույն տեղում, էջ 139:

71 Նույն տեղում, էջ 139:

72 Նույն տեղում, էջ 139:

73 Նույն տեղում, էջ 142:

այլև այն պատճառով, որ հաջորդ էջերում համապատասխանաբար կանգ առնելով «Հաւարտան պատմութեան» պատմաճանաչողական արժեքը հավաստող կոնկրետ փաստերի վրա վկայակոչում ենք նաև բազմաթիվ տեղեկութուններ, որոնք միաժամանակ արտացոլում են վրաց պատմութեան և հայ-վրացական հարաբերութունների մի շարք կարեւոր էջերը:

* * *

Միջնադարում, բազմիցս դաժան փորձութիւնների մատնված հայ ժողովուրդը թերևս առավելագույն ողբերգութեան հասավ մոնղոլների տիրապետութեան շրջանում, եթե նույնիսկ որոշ առիթներով վերջիններիս կողմից կարճատև զիջումներ էլ եղան նրա հանդեպ: Քաղաքական, ազգամական, սոցիալ-տնտեսական, իրավական աննկարագրելի պատուհանների թատերարենմ դարձավ Հայաստանը, երբ թվում էր, ուր որ է Զաքարյանները, Վրաստանի համագործակցութեամբ, կստեղծեն հայկական կայուն պետականութիւն:

Արդեն 1220 թվականին առաջին անգամ մոնղոլները երևում են Անդրկովկասում և Հայաստանում, ինչպես պարզվել է՝ հետախուզական նպատակով և Անդրկովկասի նվաճումը նախապատրաստելու համար նրանք հարավից աստիճանաբար առաջանում են դեպի հյուսիս: Այստեղ, Գուգարքի, Աղստևի շրջանում, նրանց զեմ է դուրս գալիս հայ-վրացական միացյալ զորաբանակը, որը պարտվում է և նահանջում: 1221 թվականին, միևնույն նպատակով մոնղոլները ձեռնարկում են նոր արշավանք առավելապես դեպի Վրաստան: Կոտման գետի մոտ տեղի է ունենում մեծ ճակատամարտ: Սկզբում հաջողութեան են հասնում հայ-վրացական զորքերը՝ վրաց թագավոր Գեորգի Լաշայի և Իվանե Զաքարյանի գլխավորութեամբ, սակայն հետո կրկին պարտվում են: Այս բոլորին անտեղյակ, Վահրամ Գագեցին («տէր երկրին») ոչ միայն քաջաբար դիմադրում է մոնղոլներին, այլև կարողանում է ընկճել ու հալածել նրանց «մինչև ցԳարդման»:

Ահա, այս դեպքի առնչութեամբ է Վարդան Արևելցին սկսում իր տեղեկութիւնները մոնղոլների, նրանց բազմակի արշավանքների և այլևայլ գործառնութիւնների մասին: Իրը և շարագուշակ նախանշան, Գուգարքի կողմերում երկրաշարժ է տեղի ունենում, Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը ահավոր տեսիլք է տեսնում. «Նախքան զձեռնադրիլն նորա (Կոստանդին— Փ. Ա.) միով ամա՛ւ՝ եղև շարժ ահագին, և փլաւ պաճուճազարդ եկեղեցին, որ ի Մշակավանս ի մետասանն յունուարի ի ժամ ճաշոյ, և շորս պատարագող ընդ մեծ զենմանն նուի-

րեցան: Իսկ ի յերկինս տեսեալ լինէր ի բոլորից աստղ նիզակաճև գամենայն գիշեր. որք երկոքեան ցոյցքն նշանակէին զշարժումն խաղաղութեան աշխարհի ի խոռովութիւն նիզակաւոր թշնամեաց. որպէս և եղևն իսկ ի գալ թուականին ի վեցհարիւր վաթսուն և ինն»⁷⁴, Շուտով դա իրականանում է, երկիր է ներխուժում «ազգն նետողաց»⁷⁵:

Մոնղոլների առաջին արշավանքների առնչութեամբ նա վերստին ընդգծում է մեր՝ վերոհիշյալ մի բանի տվյալները, որոնք վերաբերում են հայ-վրացական միացյալ զինվորական ուժի առաջ թշնամու ընկերկութիւն⁷⁶: Սակայն, այնուհետև մոնղոլներին միանում են ղփչաղները և, երբ հայ-վրացական զորաբանակը «վստահութեամբ և անզգուշաբար» արշավում է նրանց վրա, պարտութեան է մատնվում (1222 թ.): Այս մարտում զոհվում է Վասակ Խաղբակյանի որդին՝ Պապաքը, և զերթ է ընկնում վերջինիս հորեղբայրը՝ Գրիգորը⁷⁷: Վարդան Արևելցին, այնուամենայնիվ, այստեղ էլ առիթ է գտնում հիշեցնելու, որ հայ-վրացական զորքերը պարտական չմնացին և հաջորդ տարին իսկ (1223 թ.), Վարդանաշատի ճակատամարտում վրեժ լուծեցին⁷⁸:

Մոնղոլները, որոշ դադարից հետո, դարձյալ արշավում են դեպի Անդրկովկաս: Բանակատեղի են ընտրում Մուղանի դաշտը, որտեղից էլ պարբերաբար սկսում են իրենց արշավանքները: Վարդան Արևելցին շարունակում է պատմել դրանց մասին թեև հակիրճ, բայց հագեցած խոսքերով. «Իսկ թաթարն կոչեցեալ որ եկեալ էր յառաջագոյն սակաւուր ի վեցհարիւր վաթսուն և ինն թուին (1230), և կամեցաւ գտնաւ ի վեցհարիւր եօթանասուն և մին (1232)՝ և ոչ վստահացաւ, յաւելեալ յինքն անհուն բազմութիւն առաջնորդ ունելով զՉարմաղանն կոչեցեալ զօրապետ, զայ ի Գանձակ շահաստանի ի վեցհարիւր եօթանասուն և շորս (1235) թուին. պաշարէ զնա աւուրս ինչ և առնու. և կոտորէ անողորմաբար, բաց ի մատաղ տղայոց և ի կանանց՝ յորս հաճէին»⁷⁹: Մանրամասն թվարկում է, թե յուրաքանչյուր մոնղոլ նոյին (զորապետ) ինչ գավառներ ու քաղաքներ է գրավել. «Եւ յայսմանէ ոյժ առեալ մտանեն ի թագաւորութիւնն Վրաց, և բաժանեն զանուանի տեղիս գաւառաց, և զբերդս ամուրս մեծամեծ իշխանացն՝ զորս նոյինս կոչէին. որք երթեալք յիւրաքանչիւր վիճակեալ զղղեակս գաւառացն՝ վաղվաղակի մատնեալ լինէին ի ձեռս նոցա, ի պատուհաս մեղացն մերոց: Չաղաղա-

74 նույն տեղում, էջ 142:

75 նույն տեղում, էջ 142:

76 նույն տեղում, էջ 142:

77 նույն տեղում, էջ 142—143:

78 նույն տեղում, էջ 143:

79 նույն տեղում, էջ 144:

նույնն էառ զլօռէ քաղաք, և որք յայնր կողմանէ գաւառք. Գոլազա նույնն՝ զԿայնն բերդ, ուստի հանին զԱւագն տէր երկրին. և մեծն Չարմազանն՝ զԱնի և զԿարս, և զմերձակայսն. Ղատաղա նույնն՝ զկողմանս Չարեքին, զԳետաբակուց և զՎարդանաշատու: Իսկ Մուար նույնն ի բաժնի առեալ զբերդս գաւառաց մեծ իշխանի Վահրամայ, և նախ առնու զՇամբոր հնարիք. և Վահրամ որդւովն Ազրուդայիւ փախչի տեղւոջէ ի տեղի, մինչև գիտաց եթէ խնայեն ի հնազանդեալս՝ որք կամօք խոնարհին ի ձեռս նոցա: Եւ ապա եկեալ առնոյր զառեալսն ի նոցանէ զղղեակս և զգաւառն՝ որ սեփական լեալ էր նոցա ի հայրենեաց, որ և զամենայնն առեալ էին՝ զՏաւուշ, զԿածարէթ, զՏէրունականն, զԵրզնկանքն, զՄաճնաբերդ՝ որ էր Կիրիկեանց Ասխարթանայ. զնոր բերդ՝ որ էր Վասակայ թագաւորագնին, և զՔաւազինն անմարտնչիկ ամրոց, և զԳագ անուանի բերդ և գաւառ՝ ի Գագկայ թագաւորէ շինեալս⁸⁰: Հետաքրքիր մի փաստ է Վարդան Արեւելցին նշում այս առիթով. լսելով, որ մոնղոլները խնայում են կամավոր իրենց հնազանդւոյններին, Վահրամ Գագեցին, իր որդու՝ Ազրուդայի հետ միասին, նրանց առաջարկում է իր հնազանդութունը և փոխարենը վնասին ստանում իր նախկին տիրույթները⁸¹. Ընդմիջելով իր խոսքը, հեղինակը նշում է. «...զոր ինչ արարին աղզն նետողաց», իրենից առաջ գրել են իր ուսուցիչը՝ Հովհաննես Վանականը, և աշակերտակիցը՝ Կիրակոս Գանձակեցին, և ինքն այլևս չի համարձակվում «եքեղնել» նրանց, «համ՝ բազմաբանել», ուստի, խուսափում է մանրամասներէ: Այդուհանդերձ, հետագա հաղորդումները մոնղոլների մասին բավականին ծավալուն են և ոչ նվազ արժեքավոր⁸²: Այսպես, օրինակ. «Արդ, ի վեցհարիւր իննսուն և մի թուին Հայոց Բաշու նուինն փոխեաց զիշխանութիւնն Չարմազանին և էառ զԿարնոյ քաղաք, հանեալ անտի զայրն երեւելի մեծատուն և երկիրդած ի Տեառնէ զՈւմեկն, և զազգականս նորա զորդիսն պարոն Յոհաննու, զՍտեփաննոս և զեղբարսն իւր հինգ.— և ի վեցհարիւր իննսուն և երկու թուին զամենայն աշխարհն Հոռոմոց կոչեցեալ, և զանուանի քաղաքն զԿեսարիա նախ, ապա՝ զՄեաստ, յորս խնայեցին ի կոտորելոյ, զի վաղ եկին ի հնազանդութիւն, ապա զձեզկա, զորս յանխնայ կոտորեցին և գերեցին. քանզի ընդդէմ դարձան: Եւ զայլ աշխարհս և զգաւառս, ուր մանաւանդ ազգ Հայոց վշտատեսաց բնակեալ էին. զի համարագիր թուականին ՈՂԹ (վեցհարիւր իննսուն և երկու) էր, և ըստ այն գործեցան արդիւնքն արժանատր ողբոց և ար-

տասուաց, ոչ միայն բանականաց, այլ և անբանից, լերանց և դաշտաց, որք ոռոգեցան արեամբ և արտասուօք: Որ և սոյն ողբ կրկնեցաւ ի վեցհարիւր իննսուն և ութ թուին. Քանզի կարծիս առին Բաշուն և այլ աւագանին ամբարտաւանութեան և ապստամբութեան թագաւորին և իշխանացն Վրաց. և ընդ ձեռամբ ածեալ զթագաւորն Դաւիթ, և զայլ մեծսըն՝ կապեցին և հատին վճիռ մահու, այլ ի խնամոց վերնոյն արձակեցին ի մահուանէ: Սակայն անթիւս կոտորեցին և գերեցին գեօղս և ազարակս...»⁸³:

Ինչպես քաջ հայտնի է, Վարդան Արեւելցին առավել մանրամասնորեն խոսում է Մանգու խանի եղբոր՝ Հուլավու խանի և նրա անվան հետ կապված ռազմաքաղաքական իրադարձությունների մասին: Ամենահատկանշականը, անշուշտ, նրա հետ ունեցած իր հանդիպման մասին եղած պատումն է:

Այս պատմական հանդիպման շարադրանքի բավականին ընդարձակ հատվածը ոչ միայն Արեւելցու «Հաւաքումն պատմութեան» երկի, այլև մեր պատմագրութեան ուրույն ու լիարժեք էջերից է⁸⁴: Այն հագեցած է չափազանց արժեքավոր նյութերով, որոնք վերաբերում են պատմական, քաղաքական, դիվանագիտական անցքերին, մոնղոլական իշխանական բարձրագույն տների ներքին կյանքին, հարաբերություններին, հոգեբանությունը, կրոնական կողմնորոշման համար նրանց ապրած երկրնորսնքին, հավատալիքներին, կենցաղին, ինչպես նաև նվաճված երկրներում ստեղծած սոցիալ-տնտեսական վիճակին, հարկային համակարգին, «արգարադատությունը», այդ երկրների աշխարհիկ և հոգևոր պետերի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի դրդապատճառներին, հայ եկեղեցուն տրված նշանակությունը և հարակից այլ խնդիրներին: Այդ գրվագը միաժամանակ իր՝ հեղինակի եկեղեցահասարակական դիրքի, դիվանագիտական նուրբ գործունեության, հայրենասիրության, անձնական հմայքի դրսևորման ու գնահատման համար սքանչելի հնարավորություններ է ստեղծում: Այն նաև մեծ նշանակություն ունի միջնադարյան գեղարվեստական արձակի, գրաբարի զարգացման վերջին փուլերի, մանավանդ միջին հայերենի արևելյան ճյուղի ուսումնասիրման համար: Այս առիթով մեզ հետաքրքրում է առավելապես դրվագի ձանաչողական և հասարակական արժեքը, որը և կփորձենք բացահայտել անհրաժեշտության սահմաններում: Հուլավու խանի տիրակալության ամենավերջին տարիներին՝ 1262—1265 թվականներին, փառահեղ արշավանքներից ու հաղթանակներից հետո

80 Նույն տեղում, էջ 144—145:

81 Նույն տեղում, էջ 145, 147:

82 Նույն տեղում, էջ 148—153:

83 Նույն տեղում, էջ 147—148:

84 Նույն տեղում, էջ 155—161:

ծավալվում է անկումային մի շրջան: Վաղուց արդեն երկփեղկված մոն-
ղղական տների, հատկապես Ոսկե Հորդախի, Հուլավյանների, ապա
նաև Չաղաթայանների միջև պայքարը սրվում է: Այդ պայքարը ծա-
վալվում է նաև յուրաքանչյուրի ներքին կյանքում, ստեղծելով քաղա-
քական մտահոգիչ խոռվր: Մեկը մյուսի նկատմամբ ոչ միայն գահա-
կալական խնդիրներ ունենին, այլև հավակնում ու փորձում էին բռնա-
զրավել միմյանց տիրույթները: Կային և քաղաքական կողմնորոշում-
ների ու կրոնական ներհակության հետ կապված ոչ այնքան անսրող
հարցեր:

Այս պայմաններում է, որ Հուլավուն 1265 թ. (ըստ Արևելցու՝
1264 թ.) «Հուլավունի թախտ» Թավրիզում, կազմակերպում է մեծ տո-
նահանդես, Վարդան Արևելցու խոսքով՝ «խորհրդատուն», հիմնակա-
նում թե՛ յուրայինների առաջ իր վեհապետական դիրքը պանծացնե-
լու, թե՛ նվաճված երկրների աշխարհիկ ու հոգևոր պետերին սիրաշա-
հելու և հավատարմագրելու համար: Այդ տոնահանդեսին մասնակցելու
հրավեր էին ստացել նաև Հայաստանի ներկայացուցիչները՝ Հեթում Ա.
Թազավորը և Վարդան Արևելցին՝ իրենց շքախմբերով: Ահա թե ինչպես
է վերջինս սկսում իր պատումը. «Ի յեօթն հարիւր երեքասուն թուին
կոչեաց զմեզ մեծն Հուլաու էլղանն՝ ի ձեռն Ծնորհաւոր կոչեցեալ փա-
ռաւորելոյ առն յայնմ ժամանակի՝ յամենեցունց, և աւելի՝ յաշխարհա-
կալացն, ի Բաթու կուսակալէն հիւսիսոյ, ուր շողան և պատուեցաւ
նախ, ապա ի Հուլաու էլղանէն, որ տարաւ իւրով ծախիւք և գրաստիւք
զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք եղբայրք մեր Սարգիս և Գրիգոր,
և աւագ երէցն Տփխեց տէրաւորն: Եւ տեսաք զմեծն զայն ի մեծի
աւուրսն ամսամտի և տարեմտի իւրեանց, ի յամսեանն յուլիս ըստ
հասմայեցոց, և ըստ մեզ՝ յարաց: Եւ էր նոցա աւուրք ուրախութեան
իւր լուսին մի. և կոչէին զաւուրսն զայնոսիկ խոռույթայ, իւր խորհր-
դատունս, յորս խորհէին այլղանքն ազգայինքն Չանկզղանին՝ առ մեծն
եկեալ, զոր ինչ պատշաճն տեսանէին, հանդերձ ամենայն աւագունօքն
իւրեանց, ամենեքեան նոր զգեցեալ՝ յամէն աւուր որիչ գունով փոփոխս:
Անց լինէին և ամենայն հնազանդեալքն իւրեանց շատ և երեւելի նուի-
րօք թագաւորք և սուլտանք, որպէս և մեր տեան թագաւորն Հայոց Հե-
թում, և թագաւորն Վրաց Գալիթ և Բրինձն Անտաբու, և սուլտանք ի
Պարսից կողմանց յուլիք»⁸⁵: Պարզ է, կատարվածը արտակարգ՝ կարե-
ւորություն էր ստացել և ուներ պետական, քաղաքական, վարչական
մեծ նշանակություն: Հատկանշական են Հուլավունի և Վարդանի՝ մտեր-
մական զրույցի ժամանակ վերջինիս արտասանած հետևյալ խոսքերը.

«Եւ բռնեալ էր զիմ ձեռքս, և մեք ասացաք զինչ Աստուած երեստ ասել
քան. թէ որչափ ի վեր ես դու քան զայլ մարդիկ, մօտ ես յԱստուած.
Աստուծոյ աթոռն արդար դատաստանաւ է հաստատ: Ամէն ազգի
տուեալ է Աստուած տէրութիւն աշխարհի. մինչ ի ձեզ՝ աշխարհաւեր
են լեալ, և ազքատաց անողորմն ծանր շալակ են գրել. նաքան յոգոց
են հանել, և լացեալ առաջի Աստուծոյ. Աստուած առեալ է զիշխանու-
թիւնն և յայլ ազգ տուեալ. թէ դուք աշխարհաշէն լինիք և ազքատաց
ողորմած, ի ձեզանէ շառնու Աստուած, զոր տուեալ է՝ թողու առ ձեզ,
և զոր տալ կամի՝ զայն այլ տայ»⁸⁶: Սա կրոնականի պարզ խրատ չէ,
այլ շատ նուրբ ղիվանագիտական և հոգեբանական քայլ՝ խանի մտա-
հոգությունները փարատելու և նրան հուսադրելու համար: Բնական է,
որ այս թեկուզ սոսկ բարոյական հավաստիացումը շատ էր շոյել խա-
նի մտատանջ հոգին, մանավանդ, որ նա վստահ էր թե «Աստուծոյ
սիրտն՝ լավ է ինձ»⁸⁷, յայնքն՝ իր նկատմամբ Աստված լավ է տրա-
մադրված: Իսկ Վարդանին Հուլավուն անկեղծորեն խոստովանում է.
«...որ զամէն զայն ասացեր, որ յիմ սիրտս կայր, որ ինձ դիւր
թուեաց»⁸⁸: Նշանակում է, իրօք, Վարդան Արևելցին խորաթափանց
իմաստությամբ նկատել էր տիրակալի հոգեկան խոռվքը և ղիվանա-
գիտական խոհեմ ու նպատակասլաց նրբամտությամբ ասել իր խոսքը:

Ահա, երբ արդեն շահվել էր Հուլավունի համակրանքը, Վարդան
Արևելցին նույնքան նրբությամբ հասնում է շատ կարևոր խնդիրների
լուծման: Նա ականատես ու ականջալուր էր մոնղոլների իր հայրենի
երկրում կատարած ահալոր ավերածություններին և ժողովրդի բազ-
մակի տառապանքներին, որոնք տեսպես խոցել էին հայրենասերի նրա
սիրտը: Ուստի, առիթը համարում է հարմար՝ ղիմելու համարձակ քայ-
լի: Երբ Հուլավուն նկատում է, որ նա շատ համեստ մագեղեն տարազ
ունի, ասում է. «Ոչխարենի է՞ր ես զգեցեալ և ոչ ոսկի. և իմացեալ թէ
մեք մեծ մարդ և աստիճանի տէր շենք, լուր արեղայ մի եմք. և հրամա-
յեաց թէ՛ մեծացուցանեմ զքեզ ոսկի զգեստիւ, և շատ ոսկի տամ...»⁸⁹:
Վարդան Արևելցին, ի զարմանս խանի, վեհանձնաբար պատասխանում
է և, միաժամանակ, հայրենասիրաբար առաջարկում. «...Ոսկին մեզ և
հողն՝ մի է. մեք այլ մեծ ուղենք, որ վայել է քո մեծութեանդ. ողորմու-
թիւն ի վերայ աշխարհի»⁹⁰: Ինչպես քիչ հետո կտեսնենք, այդ «աշ-

85 Նույն տեղում, էջ 157:
87 Նույն տեղում, էջ 156:
88 Նույն տեղում, էջ 157:
89 Նույն տեղում, էջ 158:
90 Նույն տեղում, էջ 158:

85 Նույն տեղում, էջ 155—156:

խարհը» ընդհանուր հասկացություն չէ, այլ որոշակիորեն ակնարկում է իր երկիրն ու ժողովուրդը: Խանը ազդվում է այս ազնվական քայլից և խոստանում կատարել նրա խնդրանքը. «Եւ զայդ, զոր ասացեր, առնեմ, և մարդիկ յղարկեմ, որ տեսանեն զաշխարհ»⁹¹: Այսքանից հետո, նա, այնուամենայնիվ, պարզևատրում է ոսկեղենով և շքեղ զգեստներով, ինչքան էլ վերջինս կրկնում է, թե դրանք անցողիկ, մաշվող բաներ են, մինչդեռ իր խնդրածը «անհատանելի և անմատչելի» է: Խանը հանգստացնում է նրան և կատարում է իր խոստումը. առլեխ (հրովարտակ, հրամանագիր) է գրել տալիս՝ ուղղված Հայաստանի մոնղոլ կառավարիչներին և հրամայում, որ բարչացական լինեն երկրի և ժողովրդի նկատմամբ: Առլեխն՝ խանը միաժամանակ նրան հայտնում է, որ առլեխի մեջ ինքը տեղ է թողել, և նա կարող է այնտեղ ավելացնել ինչ-որ սիրտը կամենա, մոնղոլ կառավարիչները պարտավոր են կատարելու նրա կամքը: Ահա այս մասին պատմող հատվածը. «Իսկ երբ հրաման ուզեցաք զնալոյ, այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ. և ունէր ի ձեռքն բախշ մի և երկու հանգերձ էր տուել կարել: Յիշեցուցաք, թէ՛ Այլաղա՛ն, այդ զրամդ հատանի և հանդերձդ մաշի, մեր անհատանելի և անմաշելի խնդրեցաք պարգևք: Եւ հրամայեաց թէ առաջի օրն զքո խօսքդ լմնեցի, առլեխ եմ տուել գրել. կարդալ տուր և զինչ քո սրտիդ պիտի աւելի՛ զայն այլ գրել տուր: Եւ ի Սախալթու և ի Շահարատինն եմ յանձնել զերկիրդ և զքեզ, որ զինչ ասես առնեն»⁹²: Բոլորովին այլ բան է, անշուշտ, թե ինչպես կամ ինչ շափով իրագործվեց այս առլեխը: Տվյալ դեպքում մեզ համար զնահատության արժանի խնդիրն այն է, թե վարդան Արևելցին ինչի՞ մասին է գրել, ինչպե՞ս է իր անհատականութունը դրսևորել, ի՞նչ հույզերով ու մտահոգութուններով է ապրել, ինչպե՞ս է կարողացել միջնադարյան բռնակալին բարոյապես տրամադրել, որ նա նման վերաբերմունք ցույց տա իր նկատմամբ և մանավանդ, իր երկրի և ժողովրդի համար ազդպիսի բարչացական առլեխ գրի ու հանձնարարի այն կիրառել: Սա միաժամանակ միջնադարյան զիվանագիտական բանագնացության փայլուն մի գրված է, որն առաջին հերթին պատիվ է բերում մեր հեղինակին:

Շատ նեղ շրջանակում տեղի ունեցած մի այլ զրույցի ժամանակ, խանը նրա առաջ բաց է անում իր սիրտը, հայտնում մոնղոլական իշխանավորների միջև, ներքին կյանքում, քաղաքական և հոգևոր-կրոնական ոլորտներում տիրող ներհակութունների մասին⁹³: Արևելցին

նրան խորհուրդ է տալիս, որ վստահի այնպիսի մարդկանց, որոնք ոչ միայն աստվածավախ և հավատարիմ լինեն, այլ և գոհացնեն իրենց գիմոզ թշվառներին, որոնք «աղերս» (իմա՛ կապ, թիկունք—Փ. Ա.) շունեն և կաշառք տալ չեն կարող: Շարունակելով իր խոսքը, նա տիքակալի ուշադրութունը կրկին հրավիրում է նույն թեմայի վրա, խորհուրդ տալիս, որ խանը իշխանական իրավունք տա այն մարդկանց, որոնք իրերին, մարդկանց, աշխարհին կնայեն հստակ աչքերով, չեն կուրանա կաշառքից և կկարողանան իրեն պատմել ճշմարտութունը. «Ի քո դրանս հենց մարդ կացո, որ յԱստուծոյ երկնչի և զձեզ սիրէ, որ զլալով եկած տառապեալն, որ աղերս շունի և կաշառք, ուրախ է տուն ուղարկէ, քեզ յիշեցնէ. և զաշխարհս տեսանել տուր հէնց մարդոյ, որ յստակ տեսանէ, կուրանայ ոչ կաշառք և քեզ ասէ զիրան»⁹⁴:

Գծվար չէ տեսնել վարդան Արևելցու հասարակական, մարդասիրական կենցաղը՝ աշխարհի և մարդկանց տառապանքները թեթևացնելու, իշխողների կամայականութունները մեղմացնելու, համատարած կաշառքը վերացնելու, իրերի վիճակը մաքուր աչքերով տեսնելու, մարդկանց հոգիները արդար դատաստանով խաղաղեցնելու բարի կամեցողութունը: Միաժամանակ այս տողերի մեջ տեսնել նաև այդ ժամանակաշրջանում Հայաստանի և ամբողջ էլիսանության մեջ տիրող աբսյուլտ-տեսական և իրավական պայմանների դժժան պատկերը, գնահատականն ու քննադատութունը:

Նույնիսկ Հուլավուի մահվան առիթով, երբ նրա քրիստոնյա կինը՝ Տողուզ խաթունը, վարդան Արևելցուց խորհուրդ է հարցնում, թե նրա հոգու համար «պատարագ լինի՞, թէ՛ ոչ», նա չի մոռանում ավելի կարևորը, թեև ամենակարևորը այդ զարաշրջանի համար. «...չէ պարտ պատարագ առնել, այլ ողորմութիւն և հաւկաց քեթևութիւն առնէլ...» (ընդգծում մերն է—Փ. Ա.)⁹⁵: Կրկին անգամ համոզվում ենք, թե ինչքան ծանր է նստած եղել նրա հոգում սոցիալական անարդարության դառը իրողութունը և այն գոնե որոշ շափով մեղմելու իր սեևոուն մտահոգութունը:

Արևելցին ցավով է արձանագրում հետևյալ տողերը. «...զի լեա երից ամսոց ի նոյն թուին՝ փոխեցաւ ի Քրիստոս քրիստոսասէր թագուհին Տողուզ խաթունն, և սրտակտուր միջաբեկ եղին ազգք քրիստոնէից բազմապատիկ սգով և տրտմութեամբ»⁹⁶: Այսուհանդերձ, նա տողորված է լավատեսութեամբ. ինչքան էլ իրականութունը դժժան ու մոռալ

91 Նույն տեղում, էջ 158:

92 Նույն տեղում, էջ 158—159:

93 Նույն տեղում, էջ 159:

94 Նույն տեղում, էջ 157:

95 Նույն տեղում, էջ 161:

96 Նույն տեղում, էջ 161:

լինի, պետք չէ անհույս մնալ և անձնատուր լինել ճակատագրին. «... զյոյսն չէ պարտ հատանել մեզ»⁹⁷:

Հարկ է նշել նաև սույն հատվածի մեկ այլ արժեքավոր կողմը, որը վերաբերում է մոնղոլների ազգագրությանը: Պատմելով մոնղոլների կրոնական հավատալիքների, պատկերացումների, ծեսերի, հմայու-թյունների, ընտանեկան ու կենցաղային բարքերի, բարոյական ըմբռ-նումների և օրենքների մասին, վարդան Արևելցին ամբողջացնում ու առավել հարստացնում է դրանց վերաբերյալ ազգագրական այն խիստ շահեկան նյութը, որը հաղորդվում է մեր պատմագրության մեջ առ-հասարակ XIII դարում (Հովհաննես Վանական, Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Ակնեցցի, Սմբատ Սպարապետ, Հեթում պատմիչ...): Ահա թե ինչ է հաղորդում նա այս առումով. «...զի խարէին զնա (զՀուլաուն—Փ. Ա.) աստեղագէտք և բուրմք պատկերաց ոմանց Շակմոնիիայ կո-չեցեալ, որ է ասեն՝ Աստուած երեք հազար և քառասուն ամաց, կալոց է դեռ այլ ևս երեսուն և հինգ դումանս, որ է գումանն տասն հազար: Եւ ապա հանէ զնա ասն միս ևս Մոնղրին անուն. Տոչինք կոչէին զբուրման զայնսսիկ, որոց հաւատայր և հրամանաւ նոցա ելանէր ի պատերազմ, կամ շեւանէր. որք ասէին եթէ չերկար մնալոյ ես ի մար-մինդ յայդ. և յորժամ չերկար ծերանաս, այլ նոր մարմին զգենու-շինել ետուն նմա մեհեան պատկերացն այնոցիկ. և երթայր անդ յա-զօթս, և դիւթէին նմա զոր ինչ կամէին:

Եւ մինչդեռ սպասէաք մեք այլ ժամանակի, և երկրորդ տեսութեան և ծանօթութեան աւելագունի՝ ասել ինչ նմա զարժանն, այլ և մնայաք ի բարեսէր բարուցն և ի քրիստոնէասէր ցուցանել նմա յԱստուծոյ նշան ինչ ձեռնառու քրիստոնէից, ասել ինչ նմա վստահութեամբ, քանզի վարժեալ էր ի նոցա բանսն և հիւանդացեալ: Քանզի թաղեայ պատկե-րաց խօսել տային և ձիոյ, և յուրվ էր ի նոսա արուեստ խարէութեան և հմայութեան. և էին պարկեշտ ի կերակուր և ի հանդերձ և ի կուու-թիւն, և ի շափաւոր ամուսնութիւն և ի խառնակութիւն. քսան ամաց կին առնալ, ասեն, մինչ ցերեսուն ամն՝ ի շաբաթն երեք հետ խառնին. և անդի մինչ ի քառասուն ամն՝ ամսեանն երեք, և անդի մինչ ի յիսունն՝ տարեանն երեք. և ընդանցեալ՝ բնաւ ասեն ոչ մերձենալ, ուստի մա-նաւանդ կարէին խաբել: Եւ յայտոսիկ զայր հասանէր օրհասն, և կո-խեր զբարձրն զայն բուր լայն ոտամբն մահն և փլուցանէր հաւասարէր իւրոցն նախնաց. քանզի լեառն որ փլանելոցն է՝ փլցի, ասէ գիր: Եւ լինէր հաւատարիմ բան մարգարէին. Ամենայն փառք մարդոյ իբրև զժաղիկ խոտոյ. այլ հաւատարիմ է Տէր և արդար հատուցանել նմա

զմասն բարւոյն, զոր օրինօք բնութեանն ստացեալ ունէր, և զիրեանցն հայրենիս պահելով. զի ասախն, որպէս ասէին ինքեանք, կոչելով զե-ղեալ սահմանն ի Զանկզղանէն՝ սուտ շասել, չգողանալ, յայլոյ կին շխառնակել, սիրել զիրեարս հաւասար անձին, յիշոցք շունել և չգիտել քնաւ, զկամաւ հնազանդեալսն ապրեցուցանել՝ զերկիր և զքաղաք. և զանուանեալ տունս Աստուծոյ, և զկոչեցեալ նորա ծառայսն՝ զիրարգ և իցենն՝ ազատ թողուլ ի հարկաց, և զնել պատիւ: Զոր և նա հրամայէր պահել և պահէր: Այլ և յիշենք զոր ասացն, թէ մեք, որ պատուիրեմք ազօթել վասն մեր, ոչ թէ ի մահուանէ զերծանել, զայն չգիտենք, այլ խնդրէք յԱստուծոյ որ ի մեր թշնամեացն ձեռացն շմեռանիմք»⁹⁸: Մոն-ղոլագիտության համար միանգամայն ուրույն և թանկարժեք նյութ է:

Սույն հատվածի այլ կարևոր հանգամանքների մասին զեռ խոսք կլինի ըստ տեղի և անհրաժեշտության:

* * *

Վարդան Արևելցին տեղեկատու լրացումներ ունի նաև Կիլիկիայի հայկական իրականության վերաբերյալ, որոնց հիմնական սկզբնաղ-բյուրները Միխայիլ Ասորու և առավելաբար Մատթեոս Ուռհայեցու ժա-մանակագրություններն են: Անգամ այս քաղվածքների մեջ նա ունի որոշ ուրույնություն, որն արժանի է ուշադրության: Այդ լրացումները նույնպես մտել են զիտական շրջանառության մեջ բազմաթիվ ուսում-նասիրություններում և արժանացել պատմագիտական գնահատության:

Դրանցից մի երկուսը մենք վկայակոչենք՝ առավել շոշափելի դարձ-նելու համար վերոհիշյալը: Վարդան Արևելցին նշում է մի ուշագրավ «մանրուք», որն առնչվում է խաչակիրների զորքերի պարենավորման կարևոր խնդրին. մասնավորելով իր խոսքը գերմանացիների մասին, հայտնում է, երբ նրանք տաժանելի շարշարանքներով հասել էին Իկո-նիա, կովի բռնվելով ելիճ Ասլանի որդիների դեմ, պարենի՝ «հողի բեր-քի» պակասության պատճառով սովի էին մատնվել, ուժասպառ եղել և ստիպված սկսել էին ուտել իրենց այնքան անհրաժեշտ ձիերը. «...և այնքան սովեցան՝ մինչ զի ութևատասն օր անսուաղ կացին ի բերոյ հո-ղոյ, և մինչ ի Կօնն՝ կերան վաթսուն հազար ձի...»⁹⁹: Եվ երբ գերմա-նացիների թագավոր Ֆրիդրիխ Բարբարոսան հայոց Գրիգոր կաթողի-կոսից գրություն է ստանում, թե եկել է Սիս և սպասում է իր զորքին, ուրախությունից արտասվում է, և պատասխան նամակում գրում. «... եթէ աստի ի հինգ ամ քո հրամանաւ կամիմ բանալ անդաստան Հա-

⁹⁷ Նույն տեղում, էջ 161:

⁹⁸ Նույն տեղում, էջ 159—160:

⁹⁹ Նույն տեղում, էջ 136:

յոց, և ապա գնամ յերկիրն իմ. և ահա ունիմ թագ և զգեստ, զի օծցես թագաւոր Հայոց՝ զով ընտրես»¹⁰⁰: Սա արդեն հայ ժողովրդի, բնակահարար. նաև Վարդան Արևելցու ակնկալությունն էր՝ Արևմուտքի օգնությամբ հայոց պետականությունը վերականգնելու քաղաքական պատրանքը: Բայց Բարբարոսան, ինչպես հայտնի է, գետում խեղդվեց, և միայն նրա դիակը հասավ Սիս¹⁰¹:

Մեկ այլ տեղ Արևելցին հաղորդում է. Հուլավյանների դեպի Միջագետք և Ասորիք ծավալած արշավանքների ընթացքում Հեթում Ա թագավորին նրա զորականների հետ ուղեկցել է նաև Հայոց կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցին: Հատկանշական է, որ հայ-մոնղոլական դաշնակցությանը պաշտոնապես աջակցում էր եկեղեցին, որին մասնավորապես հայկական տվյալ տարածքում այդ ժամանակ կարևոր դեր էր վերապահվել: Նշանակալից է նաև, որ այդ կաթողիկոսը Կոստանդին Բարձրբերդցին է, եռանդուն ազգային-հասարակական գործունեություն ծավալած մի անձնավորություն: Ահա թե ինչ է գրում Վարդան Արևելցին. «Յեօթն հարիւր և ութ (1259 թ.) թուին շոգաւ Հուլաւուն յաշխարհն Միջագետաց և առ զքաղաքսն և զգաւառսն զայնոսիկ, որպէս և զրեցին մանրապատում գրողքն: Եկն առ նա պատրիարզն Հայոց, կաթողիկոսն (Կոստանդին Բարձրբերդցի— Փ. Ա.), օրհնեաց զնա և սիրեցաւ ի նմանէ»¹⁰²:

Ըստ նրա մեկ այլ տեղեկության, հետագայում Հուլավուն հարկադրաբար հեռանում է և իր փոխարեն մոնղոլական զորքի հրամանատար թողնում Քիթրուղային. մոնղոլները պարտվում են եզիպտացիներից, «զի սակաւք էին», բայց փրկվածներին Հեթումը վերցնում է իր հովանավորության տակ. «Ի նոյն թուին կոտորեցան զորքն, զոր թողեալ էր Ելզան Հուլաւուն՝ կողմնապահ երկրին Եամայ իրրև քսան հազար, ընդ մեծ զօրագլխին Քիթրուղա... և զի սակաւք էին Բուղայեանքն՝ կոտորեցան և գերեցան, և էին, որք ցրուեցան, թաքեան և ապրեալ եկին առ թագաւորն Հայոց, և ի նմանէ յուով գտեալ մարդասիրութիւն, հանդերձ, և երիվարս և ոռճիկա...»¹⁰³: Դարձյալ հայ-մոնղոլական ռազմաքաղաքական համագործակցության մասին գրված մի կարևոր հավաստում: Այդ պարտությունից հետո էլ հայերը (առանձնապես Կիլիկիայում), թեև ոչ նախկին եռանդով, դեռ շարունակում էին մնալ մոնղոլների հետ զաշնակցային կապերի մեջ. իրենց ենթա-

կայությունը մոնղոլներին և եզիպտական մամլուքների սպառնալիքն այդ էին թելադրում նրանց:

Այդ սպառնալիքը չհապաղեց: Ինչպես հաղորդում է Վարդան Արևելցին, Եզիպտոսի Բեյբարս Յնդուգտար սուլթանը հրամայում է իր Մամուտ զորականին արշավելու Կիլիկիայի վրա. նա գրավում է Սիս մայրաքաղաքը և այն բոլոր բերդերը, որ «Տաթարին (իմա՝ մոնղոլին— Փ. Ա.) ուժովն առեալ էր Հայոց թագաւորն Հեթում...»¹⁰⁴: Բայց ավելի կարևոր է հետևյալ մանրամասնությունը. գրավելով Սիս մայրաքաղաքը, նա ձեռք է գցում Հայոց արքունի գանձարանը, որը գտնվում էր գետնափոր մի շինության մեջ և «յոյժ բազում» էր, այնքան, որ բազմաթիվ ամաններից միայն մեկում 600 հազար «կարմիր» (ոսկե դրամ) է եղել¹⁰⁵, ենթադրվում է, որ այստեղ էր գտնվում արքունի դիվանը՝ արխիվը¹⁰⁶:

Եվ այսպես՝ նաև այլ կարևոր տեղեկություններ Կիլիկյան հայկական իշխանության և հայ ժողովրդի քաղաքական կյանքի մասին ավելի վաղ ժամանակների, որոնք ևս մի անգամ ընդգծում են «Հաւաքումն պատմութեան» պատմաճանաչողական անբացառելի արժանիքները:

* * *

Վարդան Արևելցին հակիրճ, բայց կարևոր տեղեկություններ է հաղորդում Անդրկովկասի, մանավանդ Հայաստանի սոցիալ-տնտեսական, հարկային, հողատիրական, դուրսագիտական խնդիրների և վարչաիրավական պայմանների մասին: Այս դեպքում էլ, ուշագրության արժանի են նրա «Հաւաքումն պատմութեան» վերջին մասերը, որոնք ավելի ամբողջացնում ու հարստացնում են հայ մատենագրության մեջ հաղորդված համաբնույթ տեղեկատվությունը: Դրանք հնարավորություն են տալիս նկատելու Հայաստանի տնտեսական-քաղաքական անշուքությունները արտաքին աշխարհի հետ և հետևելու նրա ներքին կյանքում ձևավորված նոր տեղաշարժերին, հասարակական հարաբերությունների վերափոխման և զարգացման ընթացքին: Դրանց կարևորությունն ընդգծվում է նաև այնու, որ ընդհանրապես մեր պատմիչները սույն հարցերի անշուքությամբ առատաբան չեն:

Վարդան Արևելցին կարևոր է համարում հատուկ նշել, որ նվաճող թշնամին, երբ արտաքին հանգամանքների և մանավանդ ներքին գահակալական խռովությունների պատճառով թուլացնում էր քաղաքա-

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 136:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 136:

¹⁰² Նույն տեղում, էջ 151:

¹⁰³ Նույն տեղում, էջ 152:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 162:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 162:

¹⁰⁶ Հայ ժողովրդի պատմություն, 111, էջ 743:

կան, տնտեսական իր ճնշումը, Հայաստանը վերագտնում էր իրան և հզորանում. «Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց. և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր տեղիս»¹⁰⁷:

Նրա վկայութեամբ իրենց կալվածքներին վերստին տիրում են Պանհլավուսի վասակի որդի Գրիգորը և մյուս իշխանները, երբ Մանուչեն, գրավելով Անին ու վերաշինելով այն՝ նրանց հետ է կանչում. «...և ած ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանսն, որպէս և մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ի ներքս զԳրիգոր՝ զորդին Վասակայ, զթոռն Ապիրատին, զոր ասեն ունել ի գլուխ ազատաց կանանցն հինգ հարիւր թագս երևելիս, զի տէր էր մեծ զօրաց և բազում ազատաց»¹⁰⁸, Անշուշտ Մանուչեի բուն նպատակը հայ իշխաններին զօրացնելը, քաղաքի տնտեսությունը վերականգնելը չէր, այլ նրանց զինակցությունն ապահովելը:

Բոլոր դեպքերում, երբ խաղաղությունը վտանգված էր, ավելի ճիշտ՝ շկար, երկրի սոցիալ-տնտեսական կյանքը, քաղաքական և իրավական վիճակը վատթարանում էին ավելի: Դա հաճախ ու երկարատև էր լինում, քանի որ օտար նվաճողները հաջորդում և բարբարոսությամբ դերազանցում էին միմյանց, առիթ չտալով հայ ժողովրդին ուշքի գալու, համարելու իր ուժերը, բարվոքելու տնտեսությունն ու բարեկարգելու երկիրը: Նկատի ունենալով և արձանագրելով այս բոլորը, հաճախ կարող ենք Արևելցու երկում գտնել դառը վկայություններ երկրի և ժողովրդի ծանր դրություն մասին: Հիշենք մի քանիսը. Սմբատ Բագրատունու մահից հետո «և զամս եօթն անիշխան լեալ երկիրս, սպառեցաւ սրով և գերութեամբ»¹⁰⁹: Ալփասլանը «ելից զամենայն աշխարհ արեամբ»¹¹⁰, Բաղայ կապանի հայոց թագավոր Սենեքերիմի մահից հետո «շիջաւ ճրագն որ անդ»¹¹¹: Խզլասլանը Մառաքարը գնելով՝ «...բնակեցոյց անդ արս վնասակարս, որք ոչ դադարէին յարենհեղութենէ ի տուէ և ի գիշերի. մինչև զքրիստոնեայս ի խաւարային անդունդս ընկղմեալ սովով և գարշ հոտով առաջնոց մեռելոցն՝ սպանանէին, որ և հինգ կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վիթօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակացն փողոտէին»¹¹²: Մոնղոլ Չարմաղանը «...

գայ ի Գանձակ Շահաստանի ի վեց հարիւր եօթանասուն և շորս թուին, պաշարէ զնա աւուրս ինչ և առնու, և կոտորէ անողորմաբար, բաց ի մատաղ տղայոց և ի կանանց՝ յորս հաճէին»¹¹³: Վրաստանում մոնղոլներն իրենց միջև բաժանում և տիրում էին իշխանական տներին պատկանող քաղաքներին, գյուղերին, կալվածքներին՝ բուն տերերին ստիպելով հեռանալ ու ցրվել. «Եւ յայսմանէ (հաղթանակից— Փ. Ա.) ոյժ առեալ մտանեն ի թագավորութիւնն Վրաց և բաժանեն զանուանի տեղիս զաւառաց, և զբերդս ամուրս մեծամեծ իշխանացն, զորս նոյինս կոչէին, որք երթեալք յիւրաքանչիւր վիճակեալ զղեակս գաւառացն՝ մատնեալ լինէին (իշխանքն— Փ. Ա.) ի ձեռս նոցա, ի պատուհամ մեղացն մերոց»¹¹⁴:

Բաշուին թվում է, թե վրաց թագավորն ու իշխանները ապստամբելու են իր դեմ և ահա՝ «...ընդ ձեռամբ ածեալ զթագաւորն Գավիթ, և զայլ մեծան՝ կապեցին և հատին վճիռ մահու, այլ ի խնամոց վերնոյն արձակեցին ի մահուանէ, սակայն անթիւս կոտորեցին և գերեցին գեօղս և ազարակս և գործեցին խայտառականս...»¹¹⁵:

Իսկ մամուր Ֆնդխտարը, ինչպես այլ առիթով նկատեցինք, գրավում է արքայանիստ Սիս մայրաքաղաքը, այրում եկեղեցիները և կողոպտում գետնափոր գանձատունը¹¹⁶: Այնուհետև նույն վայրագությամբ նա շարունակում է իր կողոպտուն ու ավերը. «Եւ քնայ աւերմամբ մինչև յԱտանս, և ապա լսէ համբաւ երկիրդ և դառնայ աւարաւ և գերութեամբ քառասուն հազարաւ, բաց ի կոտորելոցն. որ գլուխ և խոց անողջանալի կոտորելոցն՝ Թորոս արքայորդին, գեղեցիկ ծաղիկ ի մատաղ հասակի մերձ ի փթիթս մուրուաց, վկայեալ յամենայն բերանոյ, անպակաս ի բովանդակ բարույ և կուսութեամբ շտեմարանեալ ի ծրարս շնորհացն Աստուծոյ, որ յօժարութեամբ ևս դիմեալ ի պսակն արեան. քանզի հարցեալ զովն ոչ ետ զանուն հօրն. զի կենօքն գերեալ՝ մի լիցի աւելի բեռն հօրն և աշխարհին՝ ընդ անդրանիկ եղբօրն կեռնի, պսակելոյ և հրաւիրելոյ յաթոռ թագաւորութեանն առ կենօք հօրն: Քանզի նա եղև գլուխ գերելոցն մեր, և հուր աղէկէզ լերդաշարքաւ և սրտակտուր աշխարհիս մեր և ազգիս, որ կամք շնչարգել և յերեման...»¹¹⁷:

107 Նույն տեղում, էջ 77:

108 Նույն տեղում, էջ 103—104:

109 Նույն տեղում, էջ 87:

110 Նույն տեղում, էջ 96:

111 Նույն տեղում, էջ 103:

112 Նույն տեղում, էջ 131:

113 Նույն տեղում, էջ 144:

114 Նույն տեղում, էջ 144:

115 Նույն տեղում, էջ 148:

116 Նույն տեղում, էջ 162:

117 Նույն տեղում, էջ 162—163:

Վերջապես, Վարդան Արևելցին բացառիկ ընդհանրացումով բնորոշում է իր դարը «մեղսաբեր և ցասմնահար»¹¹⁸ բառերով, ավարտում է իր երկը դարաշրջանի, հարազատ երկրի և ժողովրդի պատմության, կեցության, ճակատագրի մասին հետևյալ բազմանշանակ տողերով. «Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր զանազան փորձանաց, այրիչ և խեղդիչ որոգայթից. որ և ճաշակեաց իսկ և ի թանձրացեալ և զմոսեալ վերջնոյ լեղուշս, մերձ ի կտար կենացն տեառնաբար, զղղրումն թագաւորութեան մերոյ, զսուր և զգերութիւն իրական ծննդեան սննդեան աշխարհին, մտեալ ի փորձ հնոցի գեհննահոտ հրոյն բորբոքման, ձեռասուն արքայորդեացն կորստեան. որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա և արարին տազնապել ստիպեան [ստիպման] շնչոյն, բորբոքելով զծարա լուծման յոգնաթախիծ կենցաղոյս...»¹¹⁹:

* * *

Վարդան Արևելցին թեև հաճախ չի ներթափանցում ավատական տրեւերի ներքին կյանքի ու հարաբերությունների ոլորտները, բայց նրա սակավ խոսքն էլ բավարար նշանակություն է ստանում ավելի հստակ տեսնելու և համոզվելու, թե ինչքան լի են դրանք ընտանեկան, տնտեսական և քաղաքական խարդավանքներով: Ինչ խոսք, դրանք շատ թանկ էին նստում երկրի և ժողովրդի վրա. ըստ այդմ արդարորեն դատապարտվել են, բայց, զժբախտաբար, ոչ միշտ և ոչ անհրաժեշտ շարժվել: Այդպես նաև Վարդան Արևելցու կողմից: Նա աչքաթող չի անում այս խեղդիչները և միանգամայն օգտակար փաստեր է հաղորդում. օրինակ, նշում է, թե ինչպես Գեորգի Գ վրաց թագավորը 1174 թվականին երկրորդ անգամ Շաղադյաններից վերագրավում է Անին. «Ի սաղբելոյ Իւանէի (Մմբատ Օրբելյանի որդին— Փ. Ա.) ամիրսպասալարի, զի ինքն նստցի ի նմա...»¹²⁰: Եվ երբ Շաղադյան տոհմի մի այլ ներկայացուցիչ՝ Ալիփաւանը (Բ) լսում է այս, Թուրքեստանից գալիս է վրեժ լուծելու Իվանեն պատրաստվում է քաղաքը հանձնել նրան, բայց, վախենալով բնակչությունից, չի համարձակվում դիմել այդ քայլին:

Այս նույն Իվանեն ղեկավարում է մեկ այլ զավազրություն ևս: 1177—1178 թվականներին վրաց իշխաններից և ավագանու ներկայացուցիչներից ումանք զավազրություն են կազմակերպում Գեորգի Գ թագավորի դեմ: Նրան ուզում են թագադրել և գահ բարձրացնել նրա եղբորորդուն՝ Դեմետրեին, որը Իվանեի փեսան էր: Սակայն դա չի

հաջողվում, որովհետև դավադիրները պառակտվում են. մի մասն անցնում է թագավորի կողմը, իսկ շատերը պատժվում են. «Յայնմ ժամանակի յայտնեաց Իւանէ զշարութիւնն իւր, զեղբորորդի թագաւորին՝ իւրեանց զԴեմնէն և զյուրվս յազատացն զինքն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զթագաւորն, մինչ կայր ի Սախատա յանհոգս. զոր իմացեալ յառնէ միոջէ՝ փախեաւ ի Տփխիս, զի սակաւամարդ էր. և անդ հաւաքեցան առ նա բազումք՝ թողլով զշար խորհուրդն: Եւ յորժամ զօրանաւ կողմն թագաւորին, և կամէր գնալ ի վերայ ապստամբացն՝ որք ի Սախատէ, փախեան յամուրս իւրեանց, և ապա մտին ի Լօռէ, բաց ի Լիպարտէն, որ չոգաւ ի Պարսից կողմն՝ երկու որդուլք. և էառ թագաւորն զամենայն զանձ Օրբէլեանց, և ամենեքեան անկան յոտս թագաւորին, եղբորորդին և ընդ նմա այլքն, մինչև ինքն իսկ Իւանէ. զորոյ զաշն կուրացոյց, և զկրտսեր որդի նորա զՔավթար և զԻնէն, զորդի Լիպարտին սպան, և յոչինչ եղեն շար խորհուրդքն ամենայն, ի վեցհարիւր քսան և վեց թուին»¹²¹: Կարևոր է այստեղ մատնանշել, որ Վարդան Արևելցին դատապարտում է զավազրությունն ու նրա կազմակերպիչներին, հատկապես Իվանեին, և զո՛հ սրտով ասում. «...և յոչինչ եղեն շար խորհուրդքն ամենայն»¹²²:

Գարձայ Իվանեի և նրա հոր խարդավանքի մասին է պատմում հեռակալը. «Իսկ թագաւորն վրաց Դեմետրէ, կալեալ զթագաւորութիւնն ամս երեսուն և երկու, վճարի, և առնու զթագն՝ Դաւիթ որդին իւր, կորովամիտ և բարեսէր, և հանեալ ի բանտէ զԹիրքաշն, զհօրն կապեալն, զնէ զօրագլուխ, և զկնի ամսոյ միոյ մեռանի. (ոմանք ասեն ի դաւելոյ Օրբելեանց ի Սմբատայ և յԻւանէէ վասն ի տեղի նոցա զնելոյ զԹիրքաշն, բանս եղեալ ընդ Գէորգայ՝ եղբոր Դաւիթ՝ զնոսա զնեղ զօրավար). և առ զթագն Գէորգի, ի թուին վեցհարիւր և հինգ»¹²³:

Գեորգի Գ-ն 1161 թվականին գրավում է Անին, կառավարիչ է նշանակում իշխան Սաղունին, բայց հետո պաշտոնազրկում է: Խորվհետև իրեն գաղտնի տեղեկացնում են, թե իբր նա ապստամբութեան է պատրաստվում. «...և թողոյր ի յԱնի զՍաղուն իշխանն, յորոյ վերայ կարծիք ապստամբութեան եղեն՝ վասն խնամով ամրացուցանելն զպարիսպ քաղաքին, զոր իմացեալ թագաւորն՝ ընկենու զնա ի պատուոյ»¹²⁴:

«Եւ ի գալ միւս ամին սպանաւ Իւանէ ի Դեմետրէ. նենգիւ»¹²⁵: Նույն Իվանեն (Աբուլեթի որդին) կամենում է սպանել Դեմետրե և

118 Նույն տեղում, էջ 163:

119 Նույն տեղում, էջ 164:

120 Նույն տեղում, էջ 129:

121 Նույն տեղում, էջ 130:

122 Նույն տեղում, էջ 130:

123 Նույն տեղում, էջ 126:

124 Նույն տեղում, էջ 127:

125 Նույն տեղում, էջ 123:

Գեորգի եղբայրներին: Հայրը չի թողնում: Նա բանտարկել է տալիս նրանց: Դեմետրեն հետո, երբ թագավորում է, հարցնում է Իվանեին, թե ինչու էին իրենց բանտարկել Դմանիսում: Իվանեն խաբելով ասում է, թե իբր Գեորգին ուզում էր թագավոր դառնալ, և ինքը դրա համար է այդ քայլին դիմել: Դեմետրեն բռնում է Գեորգիին և կուրացնում¹²⁶:

Սելջուկների տան ներքին հակասությունների ու դավադրությունների մասին Արևելյին գրում է. «Եւ յետ նորա (Մելիքշահի—Փ. Ա.) աւագ-եղբայրն Բաքարուխն (Բակիրուխն) որ կոտորեաց զնա և առ զաթոռն ամս հինգ: Եւ յառնէ ի վերայ նորա Գուրուշն՝ որդի Ալիասալանին, զոր վկանդեալ Բակիրուխն եհար զօրս նորա և սպան զԳուրուշն: Եւ Մահմուտ սուլտանն Մահմուդի որդին եհար զԲակիրուխն տղայ հասակաւ և առ սուլտանութիւնն ամս երեքտասան, և զկնի նորա Մահմուդն, որդի նորին, ընդ որ պատերազմեալ Սանջար սուլտանն, կոտորէ զնա և առնու զԱրաղայ իշխանութիւնն և զնէ զնա ի Բարաղայ, և զկնի նորա Դաւութ, որդի նորա եկաց սուլտան, զոր սպանին Մհետքըն»¹²⁷:

Շահ Արմենի մասին պատմելիս տեղեկացնում է հետևյալը. «Եօթն ամօք. նախ քան զայս Շահի Արմէնն տիրեաց երկրին իւլաթայ և այլ բազում քաղաքաց, որ էր թոռն Սուբմանայ, և սպան զհանիկն իւր, որոյ սպանեալ էր զորդիսն, և կալա զիշխանութիւնն: Եւ իբրև զարգացաւ սա, կամեցան և զսա հեղձուցանել, որ զերծեալ Աստուծոյ յաջողելովն և տիրեալ երկոտասան քաղաքաց, կոչեցաւ թագաւոր Հայոց, որ է Շահի Արմէն՝ ըստ իւրեանց լեզուին»¹²⁸:

Բյուզանդական արքունիքի ներսում կատարված դավադրական արարքներին է վերաբերում հետևյալ դեպքը. «Յայնմ ժամանակի մեռանէր Մանիլն. և կին նորա՝ զի դուստր էր բրնձին Անտաքայ, կամեցաւ Փռանգ այր առնուլ և սպանանել զորդին իւր զԱլեքսն՝ որում տուին զթագն: Եւ փախեաւ տղայն յեկեղեցին, և ազգ առնեն Անդրոնիկայ՝ ազգականին Մանիլին. և զայ սպանանէ զսեաստօսն, որ կամէր առնուլ զթագուհին. և զազգն փոանգաց՝ որ էին ի քաղաքին՝ կոտորէ, և որք ի նաւ մտեալ փախչէին, նաֆտ ձգեալ ի նաւն՝ այրեաց երեսուն հազար արանց, սոլան և զտղայն և առ զթագն: Եւ առաքեաց կոչել զայր մի թագաւորազն Փիսիկ անուն, զի և զնա սպանցէ. և նորա զօրացեալ սպան զկոչողն. և մեծաձայն զոչմամբ երթայր ի սուրբն Սոփի. և շարժեցաւ քա-

126 Նույն տեղում, էջ 122:
127 Նույն տեղում, էջ 96—97:
128 Նույն տեղում, էջ 123—124:

ղաքն, և շարամահ սատակեցին զԱնդրոնիկոս, և զերկու որդիս նորա անմեղ մանկունս՝ ծովամոյն արարին»¹²⁹:

Մի այլ տեղ, խոսելով Սարգուխի մահվան մասին, հատուկ նշում է. «...դեղակուր եղև յԻւրոցն եղբարց վասն նախանձու»¹³⁰: Հուլիանի մահվան առնչությամբ ևս նման բացատրություն է տալիս. «...զի համբաւեցին նախ, թէ դեղով և հնարիւք սպանին, և յետոյ ծածկեցին զզրոյցն»¹³¹:

Ահա այս և այս կարգի այլ միջադեպերի նկարագրությամբ վարդան Արևելյին ցույց է տալիս վերոհիշյալ արքայական և ավատական տների ներքին խարդավանքներն ու շարագործությունները, դրանց երբեմն կերծանարար անդրադարձը իրենց երկրների և ժողովուրդների քաղաքական ու տնտեսական կյանքում, դատապարտում դրանք՝ թեկուզ և ոչ միշտ ըստ էության:

* * *

«Հաւաքումն պատմութեան» մեջ քիչ շնն նաև հոգևոր-եկեղեցական բնագավառին վերաբերող տեղեկությունները, որոնք բազմաթիվ աւերչություններով կապված են նաև հայ ժողովրդի քաղաքական պատմությանն ու հոգևոր-մշակութային կյանքին: Եկեղեցական և դավանաբանական հիմքի վրա խաբսխված այդ հաղորդումները նախ և առաջ եկեղեցու պատմությանն են վերաբերում, նրա կրոնական, վարչական, իրավական գործունեությանն ու վիճակի մասին են խոսում, զերն ու նշանակությունն են ներկայացնում: Սակայն եկեղեցին, ինչպես նշել ենք արդեն, իրրև հասարակական հաստատություն, մեկուսացված չի եղել հասարակությունից, մանավանդ միջին դարերում այն եղել է հասարակական կյանքի ամենակարևոր օղակներից մեկը: Եկեղեցին ունեցել է ներգործող ուժ ու ազդեցություն հասարակական գիտակցության, քաղաքական կողմնորոշման, ժողովուրդների ներքին-բարոյական, իմացական կյանքի, մշակութային արարումների, գեղագիտական մտքի ու գեղարվեստական ստեղծագործության ձևավորման և զարգացման վրա: Դա անցյալում որոշակի արտահայտվել է հայ իրականության մեջ հիմնականում այն պատճառով, որ եկեղեցին աստիճանաբար ավելի հաճախ է շեշտը դրել իր հասարակական և գիտամշակութային գործունեության ծավալման վրա, որովհետև, ինչպես հայտնի է, ազգային-պետական իշխանության բացակայության պայմաններում ինքն

129 Նույն տեղում, էջ 131—132:
130 Նույն տեղում, էջ 150:
131 Նույն տեղում, էջ 160:

էր ստանձնում նաև աշխարհիկ-քաղաքական կյանքի ղեկավարման իրավասություններն ու պարտականությունները:

Գավանաբանական, ծիսական, «վարդապետական» երբեմն պարզունակ թվացող խնդիրների շուրջ քրիստոնյա եկեղեցիների միջև ծագած անհաշտ, նույնիսկ արյունահեղ վեճերն ու ընդհարումները անիմաստ և անհասկանալի են թվում, եթե խելամտորեն չքողազերծվեն իրենց կրոնական շղարշից ու շտեմվի նրանց բուն բովանդակությունը, որն ըստ էության կրոնական չէ, այլ ազգային-հասարակական և պետական-քաղաքական շահերի ծնունդ, դրանց արտահայտությունն ու պաշտպանությունն է:

Ահա թե ինչու այս խնդիրը այնքան շատ է մտահոգել հայ քաղաքական, պետական, ազատագրական պայքարի, գիտական և մշակութային կյանքի հայրենասիրորեն տրամադրված գործիչներին, որոնք անդիջում են մնացել, հասել են հաղթական ելքի, ապահովելով հայ եկեղեցու ազգային ուրույն և անկախ դիրքը և նպաստել հայ ժողովրդի ազգապահպանման նվիրական գործին: Այս խնդիրն այժմ կանդրագանանք միայն «Հաւաքումն պատմութեան» երկի ճանաչողական և աղբյուրագիտական արժեքը նաև այս տեսակետից ընդգծելու նպատակով:

Գոհանանք առավելապես այնպիսի վիճակոլումներով, որոնք արտացոլում են հեղինակի և հասարակության դիրքորոշումն ու տրամադրությունները:

Հայ եկեղեցու պատմությանն ընդհանրապես և ազգային անկախության ապահովմանը հատկապես վերաբերող կարևոր խնդիրներից մեկը նրա առաքելական ծագումն է և ձեռնադրության ժառանգականության բխումը այս կամ այն եկեղեցական աթոռից: Ընդունված ավանդությամբ Թաղեոս և Բարթողիմեոս առաքյալներին է վերապահված հիմնադրի գերագույն իրավունքը: Իսկ պատմականորեն Գրիգոր Լուսավորիչն է հայ եկեղեցու առաջին համահայկական կրոնապետ կաթողիկոսը, որը, սակայն, իր ձեռնադրությունն ստացել էր բյուզանդական եկեղեցու Կեսարիայի աթոռից: Այս իրողությունը զեռ վաղագույն ժամանակներից հաճությամբ չի ընդունվել: Վարդան Արևելցին փորձում է այս փաստը բացատրել նրանով, որ Կեսարիայում առաջին ձեռնադրությունը կատարել է Թաղեոս առաքյալը, որը ոչ այլ ոք էր, քան հայ եկեղեցու հիմնադիր-առաքյալը. «Յերեսներորդ ամի լուսաւորչութեանն իւրոյ սուրբն Գրիգոր զԱրիստակէս առաքէ ի Կեսարիա ձեռնադրել, վասն զառաջին ձեռնադրութիւնն անդ առնելոյ Թաղէոսի առաքելոյն և արկանելոյն հիմունս եկեղեցւոյ. և անուն եպիսկոպոսապետին, զոր

արար անդ սուրբ առաքեալն՝ Թէոփիլոս կոչիւր»¹³²: Ուստի բյուզանդական եկեղեցու գերիշխանությունը և հայ եկեղեցու ենթակայությունը վերաբերող որևէ խնդիր չկա, քանի որ ձեռնադրությունը տվյալ դեպքում ժառանգվում է օրինավորապես հայ եկեղեցու հիմնադրից՝ Թաղեոս առաքյալից, և, զեռ ավելին, դրանով կրկնակի ապահովվում է հայ եկեղեցու առաքելականությունը: Սա, անկասկած, քաղաքական, քաղաքական և ազգային տրամադրություններ շոյելու համար սրամիտ գյուտ-ավանդություն է և մեծ արժեք ու նշանակություն է ունեցել:

Ահա նույն միտման մեկ այլ դրսևորումը, որը խիստ որոշակի նպատակ ունի՝ ընդգծել հայ եկեղեցու ոչ միայն անկախությունը, այլև հավասարությունը Հռոմի և մյուս քրիստոնյա եկեղեցիների հետ: Հանձին ներսես Մեծի՝ հայ եկեղեցու առավել կարկառուն և հեղինակավոր կաթողիկոսներից մեկի, նա հարմար կերպար է գտնում, որպեսզի իր այս միտքը ավելի ամուր ու պատշաճ հիմքի վրա դնի, կարողանա հավասարեցնել նրան Հռոմի Պապին. «Զոր տեսեալ թագաւորին և նախաբարացն և իմաստուն առաջնորդաց եկեղեցւոյ, անուանեն զնա պատրիարք. զի առ մեզ կան, ասեն, սիւնն անշարժելի՛ Բարդուղիմէոս և Թաղէոս, և սուրբ Լուսաւորիչն, որ Պապն կոչեցաւ ի Հռոմ, հաւասար այնմ, որ Լուսի յարոն Պետրոսը առաքելոյն» (ընդգծումը մերն է—Փ. Ա.)¹³³: Մեկնությունն ավելորդ է. ամեն ինչ պարզ է և նպատակամետ:

Հայոց Եզր Նիգացի կաթողիկոսը (VII դ.) ազգային մատենագրության մեջ շարունակ մեղադրվել է դավանափոխության համար, քանի որ Կարին քաղաքում Բյուզանդիայի Հերակլ կայսեր հետ միասին պատարազի ժամանակ հաղորդություն է ստացել հունական եկեղեցու ակիհից, որտեղ նշխարը՝ խմորուն և զինին՝ ջրախառն էր: Վարդան Արևելցին նույնպես դատապարտում է նրան, սակայն, ուշագրավն այն է, որ դավանափոխության պատճառ է համարում նրա տգիտությունը և «կաշառակերությունը». «...վասն տգիտութեանն իւրոյ քաղկեդոն՛ի կղև, առեալ զԱղցք, // և գերբորդ մասն Կողբայ՛ զին հաւատոյն...»¹³⁴:

Հատկանշական է նաև հետևյալ դրվագը. «Յաւուրսն յայնոսիկ գայր եպիսկոպոս մի Եպիկուռա անուն առ Աշոտ (Ողորմած—Փ. Ա.)

132 նույն տեղում, էջ 41:

133 նույն տեղում, էջ 46:

134 նույն տեղում, էջ 61—62: Հետաքրքիր է, որ հրատարակիչ Ղ. Ալիշանը, թերևս մանաշափավոր հայ կաթողիկ եկեղեցականը, վշտացած Վարդան Արևելցու՝ Եզր կաթողիկոսի դավանաբանական վարքագծին տված այս զնահատականից, տողատակում գրում է. «Գեթ յայսմ մասին դիտնագոյն գտաւ (Եզրն—Փ. Ա.), քան զհեղինակդ»:

և ջանալը դարձուցանել զնա... Քաղկեդոնի, զոր լուեալ Բուրես ոմն վարդապետ ի Միջագետս, առաքէ զսարկաազն Նանա, որոյ եկեալ մարտնչի ընդ Եպիկուուայ, և յաղթէ նմա զօրութեամբ... և հալածէ զնա իշխանն և հաստատի ևս առանել ի հաւատս սրբոյն Գրիգորի» (ընդ-գծումը մերն է— Փ. Ա.)¹³⁵: Այստեղ հեղինակը կրկնակի նպատակ է հետապնդում. նախ հաստատել հայ եկեղեցու դավանանքի ճշմարտացիութիւնը, նույնիսկ նախապատվութիւնը, ապա թելադրել, որ բոլորն էլ հետեւեն Աշոտի օրինակին՝ ամուր կառչեն հայ եկեղեցու սեփական դավանանքից:

Վարդան Արեւելցին գոհունակութիւնով է պատմում, որ Կարսի հայոց թագավոր Աբասը (Աշոտ Ողորմածի հայրը— Փ. Ա.) շինել է տալիս հռչակավոր Կաթողիկէ եկեղեցին, որը կանգուն է առ այսօր:

Աբխազների (ըստ Վարդան Արեւելցու՝ Սարմատացոց— Փ. Ա.) Բեր թագավորը, որը քաղկեդոնական երկաբնակ դավանանքն էր պաշտում, լսում է այդ մասին և Աբասին լուր ուղարկում, թե գալու է և նորակառուց եկեղեցին օրհնել տալու Քաղկեդոնի ժողովի [այսինքն՝ երկաբնակների— Փ. Ա.] սահմանած կանոնների համաձայն: Աբասը զորք է հավաքում, դուրս գալիս Բերի դեմ, գերի վերցնում նրան և բերում Կարս: Թույլ է տալիս միայն մեկ անգամ նայել եկեղեցուն, ապա զրկում աչքի լույսից և երգմնագիր ստանալով, որ այլևս չի հարձակվի Հայաստանի վրա, ազատ է արձակում նրան. «Շինեաց և թագաւորն Աբաս զկաթողիկէն ի Կարս զեղեցիկ յօրինուածով: Յորում աւուրս ել իշխանն Սարմատացոց, որ յայնկոյս Կովկասայ, Բեր անուն, բազում զօրօք առ Կուր գետով. և լուեալ եթէ թագաւորն Հայոց պարսպով շինէ եկեղեցի, յղեաց առ նա և ասէ. Գիտես զու կանխագոյն, զի եկեալ եմ յօրհնել զեկեղեցիդ ըստ իմում օրինացս՝ Քաղկեդոնի ժողովոյն սահմանադրութեամբ. իսկ նորա ընդդէմ նորա ելեալ Հայաստանեայցս զօրօք, սրոյ ճարակ տայ առ հասարակ զգօրսն, և զԲերն ի բուռն ածեալ բերէ զնա կենդանի ի Կարս, և միանգամ տայ տեսանել զեկեղեցին, և ապա բրեալ զտեսանալիսն, վաճառէ զնա ազգին իւրում, գիր երդման առեալ, զի յաւիտեան այլ ոչ ևս ելցեն ի Հայս»¹³⁶:

Վարդան Արեւելցին հիշատակութիւններ ունի նաև Հայաստանում գործող կանանց վանականութեան մասին: Սա ըստ էութեան դեռ շուտումնասիրված, սակայն կարևոր խնդիր է: Շատ սակավ են այս առըն-

¹³⁵ Նույն տեղում, էջ 78: Այստեղ ևս մեծարգո հրատարակիչը հարկ է համարել միջամտել և ընդդիմանալ Վարդան Արեւելցուն, նշելով իբր «Հաւատք Ս. Գրիգորի ոչ են անմիարան հաւատոց Քաղկեդոնի»:

¹³⁶ Նույն տեղում, էջ 88:

շութիւններ եղած տեղեկութիւնները, որոնցից դժվար է հիմնավոր եզրակացութիւններ անել*: Ահա թե ինչու այս խնդրին վերաբերող ամեն մի հաղորդում, այդ թվում և Վարդան Արեւելցու տեղեկութիւնները, ունեն կարևոր նշանակութիւն¹³⁷:

Պատկերապաշտութեան և պատկերամարտութեան հարցը միջեկեղեցական պայքարի պատմութեան կարևոր խնդիրներից է: Դրա մի անդրադարձն է Արեւելցու պատմած հետևյալ դեպքը. պարզվում է, որ Սյունյաց աթոռի արքեպիսկոպոս Վահան Բաղաջացին («Ի Բաղաց») «դաշնագիր է վրաց և պատկերս ետ ածել, վասն որոյ փոխեն զնա և զնեն յաթոռն զտէր Ստեփաննոս՝ ազգական սրբոյն Մաշտոցի, որ ի Սևան, ամս երկու»¹³⁸: Ուրեմն բավարար էր նման մի շեղում, որը, մանավանդ ծիսադավանաբանական առումով խորթ լինելով հայ եկեղեցուն և, հակառակը, մոտ՝ այլադավան մի եկեղեցու, որպեսզի բարձրաստիճան արքեպիսկոպոսն անգամ զրկվեր իր պաշտանից:

Վարդան Արեւելցին օգտագործում է Պետրոս Գետաղարձ կաթողիկոսի հետ կապված այն ավանդութիւնը, ըստ որի նա բյուզանդական Վասիլ կայսեր և վրաց Գեորգի թագավորի աչքի առաջ, Աստվածահայտնութեան տոնին, ջրօրհնեքի արարողութիւնը կատարելիս, հրաշք է գործում. «Եղև հրաշալի նշան, լոյս փայլատակեալ ի յաջոյ հայրապետին և յօծմանէ սուրբ խղոյն՝ ի հիացումն տեսողացն»¹³⁹. (ըստ հայկական այլ գրավոր աղբյուրների՝ գետի ջրի ընթացքն է հակադարձ փոխում): Բայց Վարդան Արեւելցու համար ավելի կարևոր էր, որ այլադավանների ներկայութեամբ ի հայտ է գալիս հայ հավատքի գերազանցութիւնը. «...և յոյժ գովեցաւ հաւատն հայոց»¹⁴⁰:

Նա մեզ ծանոթացնում է, որ հայ եկեղեցու հոգևոր բարձր աստիճանները երբեմն ձեռք էին բերվում կաշառքով, համենայն դեպս՝ ոչ ձրի: Դրա համար կրկնակի գովաբանում է ներսես Շնորհալուն, որն իբրև կաթողիկոս նման աստիճաններ շնորհում էր անվանի, բնութամբ, վարդապետ, փիլիսոփա մարդկանց «ձրի» և ոչ՝ կաշառքով¹⁴¹:

Հետաքրքիր է նաև Արեւելցու տեղեկութիւնը «Դաշանց թղթի» գրութեան հանգամանքները հիշեցնող մի այլ թղթի մասին. «Թսկ ի վերայ Յունաց թագաւորեաց Փիսիկն որ և Սահակ, և յարոյց հալածանս և

* Կ. Պոլսում, Քրիլիստոմ, Նոր Զուգայում միանձնուհիների առկայութիւնը անշվում է ուշ ժամանակների հետ և մի փոքր այլ երևույթ է:

¹³⁷ Նույն տեղում, էջ 90, 122:

¹³⁸ Նույն տեղում, էջ 89:

¹³⁹ Նույն տեղում, էջ 99:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 93:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 129:

չարչարանս հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա. վասն որոյ գրէ առ նա աղերսանս պատրիարզն Գրիգոր խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. և ոչ լուաւ նմա, այլ զյոլովս դարձոյց ի կրօնս իւր, և զայլս հայաժականս արար. ուր կային երեք եպիսկոպոսի աթոռք և հազար և վեցհարիւր քահանայք. զորս ի մի հաւաքեալ բոնազատէր, յորոց սակաւք զերծան ամբողջ հաւատով: Եւ զայսպիսի աղէտքս գրեաց յարևելս տէր Գրիգոր. և խոշորեալ սրտիւ ոչ ինչ կարացին առնել: Առաքէր և նոյն պատրիարք եպիսկոպոս մի Գրիգոր անուն ի Պապն Հռոմայ վասն վտանգին, որ ի յունաց կրէին հայք, և զի խնդրեցէն աղօթս և օրհնութիւնս, որպէս և առաջինքն, զոր կարի մեծարեաց Պապն, և ետ պատարագ առնել և հաղորդեցաւ, և զգեցոյց նմա զիւր քահանայապետական հանգերձն: Եւ հաւաքեաց առ ինքն դամենայն պատուաւորս, զկայսրն ալամանաց, և զթագաւորն անկիլզաց, և զթագաւորն փոանցիսաց՝ իւրեանցայովքն, և զպատրիարզն այտամենաց՝ որ ունի քսան և հինգ հազար ձիաւոր. և զարհի եպիսկոպոսն Մպանիոյ, որ ունի քսան հազար ձիաւոր, և զարքեպիսկոպոսն սուրբ Յակոբայ՝ որ տիրէ հինգ հազար ձիաւորաց, և զմեծ արքեպիսկոպոսն մեծի քաղաքին Մելանայ, որ տիրէ երեսուն և վեց հազար ձիաւորաց, և յայսմ կողմանէ զպատրիարզն Երուսաղեմի: Եւ ի խորհուրդ մտեալ նորօք՝ գրեաց զիւր հրամանաւ սուրբ առաքելոցն ի նոցա երեսաց, և իմէ Հայոց պատրիարզն յայնկոյս ծովու իշխանութիւն կայցի ի վերայ հայոց և յունաց և ամենայն ազգաց, որպէս մեք յայսմ կողմանէ երկնաւոր և երկրաւոր բանալեօր: Եւ վասն զի երկայն ճանապարհ է ի մէջ իմ և եղբօրն իմոյ՝ հայոց պատրիարգին, առաքեցի նմա զիմ վակասն և զպսակն և զխօշիկն, զի զայն զգեցեալ պատարագեցէ մատանեաւ հանդերձ: Եւ ասէ ցեպիսկոպոսն Գրիգոր՝ Տար և զգեցո պատրիարգին, և յայնմ հետէ նմա լիցի իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից»¹⁴²: Ասվածներից թեև ոչ ամեն ինչ է այստեղ պատմականորեն հաստատված, բայց դրանք արժանի են ուշադրության, որովհետև յուրովի են արձագանքում դարի միջեկեղեցական հակամարտության ոգուն: Ուշադրության արժանի է և այն, ինչ նա գրում է Գրիգոր Տղայի կաթողիկոս դառնալու կապակցությամբ. դրանում կարևոր դեր է վերապահված եղել Հայկաի սուլթան Նուրէդդինին, նրա «ձեռնտուությանը». «Եւ առնու զքօղն (կաթողիկոսական—Փ. Ա.) Գրիգոր՝ եղբօրորդի իւր (Ներսիսի Ծնորհալոյ—Փ. Ա.)՝ ձեռնտուութեամբ նորադինն»¹⁴³: Պարզվում է ոչ միայն սուլթանի շահագրգռությունը, այլև հայոց կաթողիկոսի

իրավական վիճակը: Նշանակում է սուլթանի համաձայնությունը կարեւոր պայման էր, քանի որ նրա գերիշխանության տակ էր գտնվում այդ ժամանակ կաթողիկոսական Հռոմկլան, և կաթողիկոսը գործեր էր վարում ոչ միայն «ի հոգևորս»:

Զաբարյան եղբայրների եկեղեցադավանաբանական կողմնորոշման մասին արդեն խոսվեց հայ-վրացական առնչություններին նվիրված ենթամասում, ուստի հարկ չկա կրկին անդրադառնալու Արևելցու դրավերաբերչալ հաղորդումներին:

Կիրիլիայի հայկական իրականության մեջ, մանավանդ հայ եկեղեցական և աշխարհիկ վերնախավի ուղորտներում, պատմական և քաղաքական բարդ պայմանների, արևմտքի խոշոր իշխանական տներին հետ խնամիական կապերի առկայության, նրանցից քաղաքական աջակցություն ակնկալելու և արևմտյան Եվրոպայի ու Բյուզանդիայի զաղափարական-մշակութային ազդեցությունների ծավալման պատճառով թույլ էին տրվում դավանաբանական-ծիսական որոշ զիջումներ, որոնք վնասում էին հայերի ազգային շահերին: Դա ևս առանց համադրման չէր ընթանում: Այդ մասին է վարդան Արևելցու հետևյալ մանրապատումը. «Ի սոյն թուականի փոխի առ Քրիստոս պսակաւորն մեր Լևոն, և առնու զթագն դուստր նորա միամօր, Եղիսաբեթ անուն, որ ըստ Ֆռանգաց լեզուին Զապիլ կոչի, ամեալ նմա այր զՖիլիպն, զորդի տեառն Անտարու, զամս երկու. և զի ատելի էր նմա ազգս Հայոց, և զիրան, մանաւանդ պատուէր զՖրանգսն, երզնազանց եղեալ ի յեղեալ ուխտէն հայադաւան և հայասէր լինել, վասն որոյ և զպատուական թագն և զպաղատն առաքէր ի տուն հօր իւրոյ: Որում ոչ կարացեալ տանել իշխանացն, դնեն զնա յարգելանի՝ մինչև մեռաւ անղէն»¹⁴⁴:

Հայերը դավանաբանական անզիջում պայքար էին մղում ազգապահպանման և քաղաքական անկախության համար: Եթե երբեմն հարկադրաբար նահանջում էին, նահանջում էին միայն մինչև «անվտանգ» սահմանները, ժամանակավորապես տուրք տալով դժվարին քաղաքական դրությունից փրկվելու խաբուսիկ ակնկալություններին: Հայերը, սակայն, երբեք դեմ չեն եղել քրիստոնյա եկեղեցիների միջև իսկական, փոխադարձ բարեկամության, նույնիսկ համագործակցության հաստատման, սակայն ոչ թե զերիշխողի և ենթակայի, փրկողի և մոլորյալի հարաբերությամբ, ինչպես հավակնում էին լատիններն ու բյուզանդացիները, այլ «հավասարը հավասարի հետ» սկզբունքով: Քանի այդ սկզբունքը չէր հարգվում, կամ՝ վախ կար, որ չէր հարգվի, հայերը իրա-

142 Նույն տեղում, էջ 133—134:
143 Նույն տեղում, էջ 129:

144 Նույն տեղում, էջ 141:

վամբ խիստ զգոն էին մնում: Այդպես էլ մինչև վերջ հայ եկեղեցին պահպանեց իր ծիսական և դավանարանական ուրույն ավանդույթները:

* * *

Վարդան Արևելցին, լինելով մտավորական, գիտամշակութային աչքի ընկնող կենտրոնի ղեկավար, բնական է, բարձր պիտի զնահատեր տվյալ բնագավառում Հայաստանում իրագործված աշխատանքը: Ահա թե ինչու իր «Հաւաքումն պատմութեան» մեջ խոսում է նաև այս մասին: Ինչքան էլ որ նրա հաղորդումները հակիրճ լինեն, այդուհանդերձ, շատ հաճախ օգնում են ավելի իրական ու համակողմանի լուսարանելու հայ մշակույթի, մատենագրության, գիտալուսավորչական կենտրոնների՝ միջնադարյան հայ համալսարանների, մտավորական ակնավոր գործիչների հետ կապված հարցերը: Գրանք օգնում են կարևոր ճշգրտումներ ու լրացումներ անելու:

Թողնենք վաղ շրջանին վերաբերող տվյալները, որոնք առնչվում են նախամաշտոցյան ժամանակներին, գրերի գյուտին, Հովհաննես Մանգակունտն...¹⁴⁵ և ծանոթանանք ավելի մերձավոր դարերի մասին պատմող տեղեկություններից մի քանիսին: Օրինակ, մատենագրական-երտժրտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հետևյալը. «Սա (Ներսես Տայեցի (Շինող) կաթողիկոսը—Փ. Ա.) մեծ ժողով առնէր գտօն վարդավառին, և ութ հարց փոխեցին, և ոչ կարսցին առնուլ զմիմեանցն, ապա հրամայեաց ընտրել զարժանն և զայն միայն ռւսաւնել, զոր և արար ի ձեռն սրբոյն Բարսղի, մականունն ձոն կոչեցելոյ. որ էր առաջնորդ սուրբ ուխտին՝ որ Գպրավանքն կոչի, և գաւառին Անոյ, որում ասեն թէ եօթն անգամ ետես զՔրիստոս սքանչելի՝ համարձակութեամբ. վասն որոյ ձոնընտիր կոչի շարականս՝ որ այժմ պաշտի յեկեղեցիս մեր»¹⁴⁶:

Հուլավյան էլիսանության տարածքում, ավելի ստույգ՝ խաների նստավայրի շրջապատում՝ «...խորան կտավեայ ի ձև եկեղեցւոյ շրջեցուցանէին ընդ նոսա ի ձայն ժամահարի և աղօթից կարգաւորութեան, և պատարագաց պաշտէին հանապազորդ քահանայք և սարկաւագունք. և գոյր դպրոցս և ուսմունս մանկանց համարձակութեամբ» (ընդգծումը մերն է—Փ. Ա.)¹⁴⁷: Խոսքը քրիստոնյա մանկանց և դպրոցների մասին է և, ըստ երևույթի, հեղինակը նկատի ունի նաև հայերին, որոնք Հու-

լավուի քրիստոնյա կնոջ՝ Տողուզ խաթունի ջանքերով նույնպես որոշ արտոնություններ էին վայելում:

Մի այլ տեղ, խոսելով Հուլավուի արշավանքների մասին, նշում է. «...որպէս և գրեցին մանրապատում գրողքն»¹⁴⁸: Բնական է, ակնարկում է նրա մասին մանրամասն պատմող մի քանի հեղինակների երկերը, տվյալ դեպքում և այնպիսի երկեր, որոնք եղել են իր ձեռքի տակ, սակայն այսօր չկան: Մենք արդեն նշել ենք, որ նա այլ առիթներով օգտվել է այդ կորած աղբյուրներից և այդպիսով նրանցից պահպանել արժեքավոր փշրանքներ¹⁴⁹: Այս խնդրին է առնչվում նաև նրա մեկ այլ, ավելի հստակ վկայությունը, ըստ որի իրենից առաջ Հովհաննես Վանականը և Կիրակոս Գանձակեցին գրել են մոնղոլների մասին¹⁵⁰: Ըստ այսմ մենք տեղեկանում ենք, որ Հովհաննես Վանականի երկում, որն առ այսօր կորած է համարվում, մանրամասն շարադրված է եղել նաև մոնղոլների ու նրանց արշավանքների պատմությունը: Վարդան Արևելցին հավաստում է Անաստաս և Մովսես կաթողիկոսների, Անանիա Շիրակացու ջանքերով Հայոց տոմարական համակարգ ստեղծելու փաստը, և առհասարակ մանրամասններ հաղորդում տոմարի պատմության հետ կապված խնդիրների մասին¹⁵¹:

Բազմիցս կարելի է հանդիպել գիտամշակութային անվանի գործիչների կենսագրությանն ու գործունեությանը վերաբերող նշումների, հիշատակությունների ու բնութագրության. դրանցից են՝ Գրիգոր Վկայաւաբերը, Ներսես Շնորհալին, Գևորգ Մեղրիկը, Գրիգոր Տղան, Գավիթ Ալավկա որդին, Սամվել Կամրջաձորեցին, Թորակերի որդի Գրիգորը, Մխիթար Գոշը, Մխիթար Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Գևորգ Լոռեցին, Գևորգ Ուռնեցին, Անանիա Սանահնեցին, Երեմիա Անձրեկը, Սամվել Անեցին և այլն¹⁵²: Այդպես նաև այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են գիտամշակութային, մատենագրական, վանական կենտրոններին (Ս: նահին, Հաղպատ, Գպրեվանք, Գետիկ, Դրազարկ, Շուղր անապատ, Գանձասար, Կամրջաձոր...) ¹⁵³:

Կասկածից վեր է, որ այս տեղեկությունները ունեն պատմաբանասիրական և գիտամշակութային մեծ արժեք և մեկ անգամ ևս ընդգծում

148 Նույն տեղում, էջ 151:

149 Տե՛ս մեր հոդվածը՝ Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» կորած աղբյուրները, ԺԱ—ԺԲ, էջ 265—269, Ա—Բ, էջ 24—30:

150 Նույն տեղում, էջ 146—147:

151 Նույն տեղում, էջ 57—58, 70:

152 Նույն տեղում, էջ 94, 102, 104, 107, 114, 116, 117, 121, 128—129, 140, 197:

153 Նույն տեղում, էջ 69, 88, 90, 98, 104, 116, 117, 123, 128, 140, 153...

145 Նույն տեղում, էջ 50—56, 62:

146 Նույն տեղում, էջ 69:

147 Նույն տեղում, էջ 149:

են «Հաւարումն պատմութեան» ճանաչողական ու գիտական նշանակութիւնը:

* * *

Վարդան Արեւելցին խուսափում է լրացուցիչ մանրամասներէրից՝ սեղմ ծավալի մեջ փաստագրական առատ նյութ ապահովելու համար: Ճիշտ է, փաստերն արձանագրում է խոհեմ հանդարտութեամբ, սակայն չի նշանակում, որ նա վերաբերմունք չի ցույց տալիս նկարագրվող զեպթի, վիճակի, անձնավորութեան հանդեպ, ինչպէս վայել է պատմագրին: Օրինակ՝ Մեհրուսան Արծրունին իբրև հայրենիքի դավաճան, ըստ նրա «նախատանօք սատակեալ»¹⁵⁴ է: Խոսքով թաքստորը՝ «...զկնի էրից ամաց մերժի ի տէրութենէն ի քսութենէ գործակալաց աշխարհիս»¹⁵⁵, Գրեթի գյուտի առթիվ, հրձկանքով նշում է. «...ամենայն արդարոցն խմբիք դայր մտանէր (Մեսրոպ Մաշտոցը—Փ. Ա.) ի Հայաստան աշխարհս և գանձէր յեկեղեցիս մեր զանասելի գեղեցկութիւնս ի զարդ հոգաց և մարմնոց և ի պարծանս յախանից, զոր ոչ արար ամենայն ազգաց Տէրն բոլորից: Քանզի ոչ ճարտարօք և ոչ միջնորդօք իմաստնացաք և առաջնորդեցաք առ նա, այլ ի յերկնապարզ և յաշխարհաստեղծ աջոյն գրեցաւ մեզ զպրութիւն ուսման. և տեառն մերոյ և Աստուծոյ յիշատակն կենդանի է ի մատենանս մեր, զօրութիւն տալով և շնորհս, որք հաւատովն մատչին և բանականապէս: Վասն որոյ փառք պատիւ և զոհութիւն տուողին և օրհնութիւն ի Տեառնէ ածողին առ մեզ, և պայծառութիւն յիշատակի անուան նորա ի գիրն կենաց, (Մեսրոպայ, որ է կանաչացեալ, այսինքն յարազուարճ և բերկրեալ, հօր մերում տեղի և յիշատակ ընդ առաւել սուրբսն...)»¹⁵⁶: Հայ կաթողիկոսական աթոռին բռնութեամբ նստած ասորի եկեղեցականները «ախցիփեխցք (ափեղցփեղ—Փ. Ա.) և վասաւարք»¹⁵⁷ են: Դատապարտում է նաև յուրայիններին. պարսից զորքի դեմ են դուրս գալիս հայ և վրաց զորականները, սակայն «...ի խմբել պատերազմին՝ վատ զօրն վրաց փախեան՝ թաղաւորան հանդերձ, այլև՝ վատօք ի Հայոց...»¹⁵⁸: Սելջուկի (Սարչուկ) որդի Մուսեափաղոն՝ «յառաջադէմն» է, Տուղրիկ հորեղբորորդի Ալփասլանը՝ «հազար այր դնու ի փոս մի և լոգանայ յարին», Մելիք-շահը՝ «բարի և խաղաղարար», «այր ողորմած և բարեմիտ, առաւել ազ-

գիս մեր»¹⁵⁹: Բյուզանդացիները բնորոշվում են «ատեցողք ազգիս» խոսքերով¹⁶⁰:

Փառխոսի Գրիգոր իշխանը, ըստ նրա, «փառաւոր» է, Բեկիարուխի (Բարկիարուտ) քեռին՝ Իսմայիլը՝ «կարի քաղցր և բարեմիտ առ հայս», Անտիոքի կոմս Տանգրին՝ «քրիստոսասէրն և իրաւադատն», Ուոհայի «էր Զոսիւնը՝ «բաջն և յոյժ հայասէրն», Գեմետրե թաղավորի որդի Գալիթը՝ «կորովամիտ և բարեսէր»: Գրիգոր Պահլավունու և Ներսես Շնորհալու Մանվել կայսերն հղած դավանաբանական թղթերի վերաբերյալ հետևյալն է նշում. «...և ետուն գրով յոյժ կորովի և հաճելի բնաւից դաւանութիւնս, զոր ունիմք, և կամեցան միաբանութիւն առնել «զգացս»: Միսիթար Գոշը՝ «սուրբ և սքանչելի վարդապետն», Հեթում Ա-ն՝ «մեծահոգի և հանճարեղ, որ էր անձնեայ և թիկնեղ և գեղեցկազիտակ», Վանականը «վսեմականին՝ համբաւատենչ և արդիւնական», Կիրակոս Գանձակեցիին՝ «Հօրն համանման», (այսինքն՝ Վանականի նման—Փ. Ա.)¹⁶¹: Հուլավու խանին գովում է ամեն առիթով: Շահնշահի որդի Զաքարեի սպանվելու առիթով գրում է. «...ի տիս երիտասարդութեան, ի գեղ ծաղկի՝ և յառաջադէմ յաջողման ժամանակի, յերեկի և ծանօթ ամենեցուն, բարուրս ինչ եղեալ ի վերայ. և զայն ևս՝ թէ խափանեալ եղև կարգեալ հարկն յիւրում ժամու երթալոյ յարքունիս, զորոյ մահն ողորմագին աշխարանօք սզացին ամենայն տունն վրաց Հայաստանօք՝ մերձաւորօք նոցա. քանի առաւել որք ծնան զնա ծնողքն զառնակակիծ և մարմնատանջ ողբովք: Վասն որոյ ի նոյն աւուրս և ի նոյն սեռուգին սրտակտուր լեալ մեռաւ հայրն Շահնշահ...»¹⁶²:

Նղիշեից քաղելով տարբեր ժողովուրդների լեզուների բնութագրութիւնը, ինքն էլ ընդգծում է մայրենի լեզվի «համեղ և ամենազարդ և համեմական» լինելը¹⁶³: Հպարտութեամբ շեշտում է Հայկ նահապետի «զատատենչ ոգին. Բելը հնազանդեցնում է բոլորին «բաց ի Հայկայ... որ ոչ պաշտեաց զնա աստուած», այլև շուն կոչեաց զնա. և զի եկն ի վերայ նորա ծանր ամբոխի, եսպան զնա Հայկ՝ նեախի հարեալ զսիրտն՝ պղծեօք տախտակեալ»¹⁶⁴: Նա ցնծութեամբ է նշում Վարդանակերտի կոթում հայ զորքի հաջողութիւնը արարների դեմ «...սրախողխող եղեն առհասարակ յիշխանացն մերոց»¹⁶⁵: Դարձյալ ուրախութեամբ է արձա-

159 Նույն տեղում, էջ 96, 101, 104:
160 Նույն տեղում, էջ 99:
161 Նույն տեղում, էջ 100, 108, 117, 125, 128, 140, 142:
162 Նույն տեղում, էջ 153:
163 Նույն տեղում, էջ 12:
164 Նույն տեղում, էջ 13:
165 Նույն տեղում, էջ 71:

154 Նույն տեղում, էջ 48:
155 Նույն տեղում, էջ 49:
156 Նույն տեղում, էջ 50:
157 Նույն տեղում, էջ 52:
158 Նույն տեղում, էջ 56:

նագրում հայ զորքի հզորացումն ու հաջողությունները. «Յայնմ ժամանակի ազմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգէր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր իւր տեղիս: Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի՝ որդու Ատրնեբսեհի, որդու Վասակայ, որդու Աշոտոյ Հայոց իշխանի՝ գերկիրն վրաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան»¹⁶⁶: Գրիգոր Մամիկոնյանի մահվան առիթով տխուր եզրակացնում է. «...և յայնմ հետէ բարձաւ ի հայոց յաշխարհէս ազգն Մամիկոնէից»¹⁶⁷, որը հերոսական սխրանքներով հարստացրել է հայ ժողովրդի պատմության էջերը: Իսկ երբ արձանագրում է Աշոտ Բագրատունու թագադրությունը, զարձալ հայրադրությամբ նշում է. «Յորում (Գևորգայ կաթողիկոսի—Փ. Ա.) աւուրս ընդարձակեալ մեծին Աշոտի ի Վիրս և Աղուանս, և զԿալասայինսն հնազանդեալ. և շէր ինչ պակաս բայց ի թագէ, զոր խորհին իշխանքն Հայոց, և ի ձեռն Յիսէի ազդ առնեն ամիրապետին. և նորա զուարթ սրտիւ առաքէ թագս և հանդերձս և երկվարս: Զնոյն և կայսրն Վասիլ առաքէ...»¹⁶⁸, Սենեքերիմ թագավորի («Հայոց կապանի») սպանությունն առնչությամբ տխուր արձանագրում է. «...շիջաւ ճրագն որ անդ...»¹⁶⁹, գոհունակությամբ է նշում, որ Գագիկ թագավորին սպանած Մանգալեոն երեք որդիներից հայերը վրեժ են լուծում¹⁷⁰: Ուրախությամբ հաղորդում է այն փաստը, որ վրաց Դավիթ թագավորը հայերի հետ բարեկամ ու համերաշխ է եղել, նույնիսկ երբեմն հայ հոգևորականների (Հովհաննես Սարկավազի) օրհնությունն է խնդրել. «...բազում անգամ դնէր զզուլս իւր ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով օրհնութիւն»¹⁷¹: Թորոս և Ստեփանն եղբայրների ռազմական հաջողությունները նա նույնպես ուրախությամբ է ողջունում. «...մեծաւ իմաստութեամբ և քաջութեամբ տիրեցին հայրենեաց իւրեանց Կիլիկիոյ, հարեալ զԱնդրոնիկոս՝ զօրագլուխն յունաց, որ կայր անդ երկոտասան հազարաւ, զոր լուեալ Մանիլին, ի վարձու կալաւ մի անգամ և երկիցս զՄասուդ սուլտանն՝ առնուլ զքէն վրիժուց նորա, որ և ի յերկրորդ մուտն սուլտանին անկաւ ահ Տեառն ի վերայ նոցա, և փախեան առհասարակ՝ զմիմեանս սատակելով, անդէն թողեալ զքնաւ արարս (աւարս—Փ. Ա.) իւրեանց, քանզի Աղուան, զօրագլուխ նոցա, կամեցաւ գնալ երեք // հազարաւ յԱնաւարզու ի կողմանս Անտաբու, յորոյ վերայ

անկեալ Ստեփանն, եղբայր Թորոսի, սատակեաց զամենեսին. և ի լսել զձայնն գուժին ի բուն բանակին՝ զողացին առհասարակ, և ոչ մնաց շունչ զօրութեան ի նոսա: Եւ հազիւ զերծեալ սուլտանն, անկեալ ի յորջրս իւր, սատակի...»¹⁷²:

Գոհունակությամբ պատմում է այն փոխվրեժի մասին, որ վրաց Գեորգի Գ թագավորը լուծում է Դվինի Շաղաղայաններից: Վերջիններս Գառնիի ճակատամարտում կոտորում են վրացիներից շատերին և ուժանց գլուխները եփում թանի մեջ, իսկ հետո գանգերը շարում են մզկիթի պատերի վրա իբրև կրկնակի անարգանք: Գեորգին Դվինում տարած հաղթանակից հետո (1131 թ.), մզկիթի պատերից իջեցնել է տալիս իր հայրենակիցների գանգերը, ոսկեթել կտորեղենով փաթափում, գնում է գագաղների մեջ, բարձում նրանց մուղրիների (կրոնավորներ) աստիճան և ստիպում, որ բոկոսն մինչև Թիֆլիս տանեն¹⁷³:

Նկարագրելով Հեթում Ա-ի մասնակցությունը մոնղոլների դեպի Միջագետք և Ասորիք ծավալած արշավանքներին, Վարդան Արևելցին հատուկ ընդգծում է, որ հայոց թագավորը մեծ օգնություն է ցույց տալիս տեղի քրիստոնյաներին. «...ազատելով ի մահուանէ զքրիստոնեացւորն, զեկեղեցականս և զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով. որում հատուցէ տէր հազարաւոր՝ թողութեամբ մեղաց և յերկարութեամբ կենաց ըստ իւրոց կամաց՝ յորդոց յորդիս...»¹⁷⁴: Մեզ արդեն հայտնի են մամլուք Ֆնդխտարի Սսում կատարած ավերածությունների, կոտորածի, զերեվարության և Թորոս արքայորդու «ծաղիկ» հասակում նահատակության առնչությամբ դառը կսկիծով գրած տողերը¹⁷⁵:

Այս մի քանի մանրամասներն էլ լիովին համոզում են, որ Վարդան Արևելցին, իրոք, իր նյութով ապրող պատմագիր է:



Իբրև իր ժամանակի և իր դարի ներկայացուցիչ, Վարդան Արևելցին, որքան էլ բանիմաց ու հեռատես, միշտ չէ, որ կարողացել է տեսնել ու ցույց տալ իր նկարագրած իրադարձությունների և երևույթների քաղաքական, սոցիալական, հասարակական տեղաշարժերի բուն, էական պատճառները: Շատ անգամ ժողովրդին ահռելի տառապանքներ հասցրած պատմական ու ռազմական եղելությունները նա բացատրում է սոսկ տուժողների այսպես կոչված «մահացու» մեղսագործությամբ:

172 Նույն տեղում, էջ 125—126:
 173 Նույն տեղում, էջ 123, 127:
 174 Նույն տեղում, էջ 151:
 175 Նույն տեղում, էջ 162—163:

166 Նույն տեղում, էջ 77:
 167 Նույն տեղում, էջ 81:
 168 Նույն տեղում, էջ 85:
 169 Նույն տեղում, էջ 103:
 170 Նույն տեղում, էջ 115:
 171 Նույն տեղում, էջ 120:

Գծվար է մտածել, որ նման փորձի, իմացության տեր մարդը ի վիճակի չէր տեսնելու կատարվածի պատճառները, մանավանդ, որ այլ դեպքերում նրա գործնական և տեսական խորաթափանցությունը ակներև է: Այստեղ տիրում է բավականին կայուն և հզոր մի այլ գործոն. դա դարի հայեցակետն է: Ըստ այսմ պարզ է, որ հասարակական ամեն փոփոխություն Արևելքին պիտի բացատրեր նախ և առաջ նախախնամությունների գործությունը: Նրա աշխարհայացքի հիմքում ընկած իշխող համոզմունքներից մեկն է սա: Գրանից բոլորովին անկախ նա չէր կարող իմաստավորել իրերի գրությունը: Այստեղ կա նաև դարի աստվածաբան-գաղափարախոս հեղինակի զգաստությունն ու պատասխանատվության գիտակցությունը: Սա ևս կարևոր հանգամանք է հատկապես միջնադարի պատմաբանի համար: Նա սոսկ տեղեկատու չէ, այլն՝ զաստիարակ: Այդպես են հիմնականում մտածել, զգացել և ըստ այդմ էլ գրել ու գործել հայ (և ոչ միայն հայ, նույնիսկ ոչ միայն քրիստոնյա) պատմագրության ականավոր գործիչները: Զէ՞ որ քրիստոնեական ըմբռնմամբ նախախնամությունը թեկուզ և ամեն ինչի տնօրինողն է, շարի աղբյուր ու պատճառ չէ, չի կարող պատուհասել արդարներին, եթե վերջիններս դրան չեն արժանացել համարժեք մեղսագործություններ: Ահա թե ինչու Վարդան Արևելքին ևս Հայաստանի և հայ ժողովրդի ոգրերությունը, զանազան շարշարանները, պատիժները բացատրում էր «վասն մեղաց իւրոց»: Այդպիսին են, օրինակ, սելջուկների, մոնղոլների կամայականություններն ու հարստահարությունները: Սուլթան Յնգըխտարի ավերածությունների առիթով եղրակացնում է. «...բացաւ մեզ աման դառն քացախուն և մրուր բարկութեանն Աստուծոյ՝ Հայկազարմ ազգիս»¹⁷⁶: Ամեն անգամ, երբ հարկ է լինում մատնանշել այս «հիմնական» պատճառը, խոստովանվում է հասարակաց մեղքը, հանցագործակցությունը, ըստ որում, միշտ էլ ընդհանուր խոսքերով: Սա ևս միանգամայն բացատրելի է, քանի որ որոշակի մեղքի խոստովանությունը կարող էր փոքր թվալ և ունենալ նվազ ներգործության ուժ: Նա միաժամանակ ընդգծում է Աստուծո արդարադատությունը և մարդկությունը նման պատիժների միջոցով խրատելու նրա դիտավորությունը: Քանի որ այդ պատիժները պատմական իրողություններ են, պարզապես պատմություն են, ուստի ընդգծվում է նաև պատմության դաստիարակչական դերն ու նշանակությունը:

Այս բոլորից չի հետևում, թե նրանք չեն տեսել ու նշել որոշակի, ստույգ պատճառներ ու պատճառական կապեր: Նրանք, այդ թվում և Վարդան Արևելքին, շատ դեպքերում պատմագետի իրատեսություններ են

բացահայտել այդ պատճառները: Մեր խոսքը, սակայն, առավելապես վերաբերում է Արևելքու սկզբունքային ելակետերից մեկին, որը փիլիսոփայական-աստվածաբանական և պատմական կայուն կոնցեպցիա է, առնչվում է նրա պատմագիտական աշխարհայացքին, որով պատճառաբանում ու բացատրում է և՛ բնական, և՛ հասարակական աղետները:

Տվյալ դեպքում Արևելքին այդպես պատճառաբանելով բազմազան շարիքներն ու պատուհանները, դրանք համարում է անխուսափելի, անառարկելի, քանի որ մարդկանց մեղքերը նույնչափ իրական ու անժխտելի են: Նա, այդուհանդերձ, հաճախ ճիշտ է նկատում ու բացատրում փաստերը, նրա քաղաքացիական ու հայրենասիրական գիտակցությունը նրան մղում է ողջունելու հասարակական ընդգլուցմանը, հպարտանալու ազատագրական պայքարի հաջողություններով, հայրենիքի ու սեփական հավատքի համար նահատակվածների սխրագործություններ, թշնամիների կորուստներով և այլն: Այստեղ, ըստ մեզ, պետք չէ հակասություն տեսնել: Արևելքու եկեղեցական պատկանելությունը և հասարակական-ազգային գիտակցությունը դրսևորվում են միասնաբար. հայ եկեղեցականը հաճախ ստիպված էր միաժամանակ լինելու մշակութային ու ազգային-պետական գործիչ: Այդպիսին էր Վարդան Արևելքին իր աշխարհայացքով, պատմագրական հայեցակետով ու հասարակական դիրքորոշումով:

* * *

Զուտ պատմագրական բնույթի է նաև Միխայիլ Աստրու «Ժամանակագրութեան» հայերեն թարգմանությանն առընթեր զետեղված Վարդան Արևելքու «Յիշատակարանը», որի պատմաճանաչողական արժեքը նույնպես ակներև է¹⁷⁷: Ծավալով շատ փոքր, բայց հագեցած խոսք է հեղինակի ապրած և մոնղոլների տիրապետության դժվարին ժամանակաշրջանի մասին: Որոշակի եղելությունների և անցուղարձերի վերաբերյալ այնտեղ համարյա խոսք չի լինում: Այն լիովին նվիրված է դարաշրջանի քաղաքական, սոցիալական, իրավական և մշակութային վիճակի բնորոշմանը, դրանով է՛լ ավելի է արժեքավոր:

Թողնենք մանրամասները և ուշադրության առնենք միայն մի քանի փաստեր: Նախ հետաքրքիր է «թաթար» (մոնղոլ) անվան Արևելքու պարզունակ, բայց սրամիտ և ընդհանրացնող «ստուգաբանությունը». «...զի թերևս թաթարն սուր և թեթև ասի ըստ չծորղացո փոփոխման և կամ՝ հաւ և տաւ, որ է տաթար»¹⁷⁸, թե ինչու նման կարծիք ունի, բա-

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 162:

¹⁷⁷ Միխայիլ Աստրու. Ժամանակագրություն, (Ա), էջ 608—622:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 614:

ցատրում է այսպես. «...Քանզի հարին անյագապէս և տաբան աներկիւղաբար զորդիսն Սիօնի ի ստրկութիւն գերութեան»¹⁷⁹, Այո, մոնղոլների կողմից հայերի գերեզմարութիւնը հայ ժողովրդի ամենազանգիւղ փորձութիւններից մեկն է եղել: Այնպես որ Վարդան Արեւելցին սույն ստուգարանութիւնը կրկնակի արդշունքի է հասնում, բնորոշելով նաև գերեզմարութիւն այս տխուր փաստը:

Այստեղ ևս նա մատնացուց է անում, որ մոնղոլների Հայաստանում լինելը դեռևս ներսես Մեծի տեսիլքով էր կանխորոշվել¹⁸⁰, Բազմաթիվ ու բազմազան են նրանց գործած աղետները, այդ թվում՝ «զորին զործեցին ապականութիւն երկրին և տապալումն քաղաքաց և զղեկաց և անր եկեղեցեաց և մահս ազգի-ազգի և գերութիւնս»¹⁸¹, Չի մոռանում ընդգծելու նրանց հարկահավաքման ծանրութիւնն ու անզիջում հետևողականութիւնը: Թեև պարբերաբար որոշ «դիրութիւնս» տվել են հատկապես եկեղեցիներին և եկեղեցականներին, «սակայն անլրապէս պահանջումն հարկաց ճշտի և անխնայապէս՝ ըստ գլխոյ արանց և անասնոց՝ բաց ի մանկանց եկեղեցու...»¹⁸²: Հետևանքը լինում էր այն, որ «զաշխարհս մեր անապատացեալ, զքաղաքս բնակութիւն լեալ գազանաց: Քանզի լցան լերինք և անապատք մեր անդերծ փախստէիւք, և դաշտք դիակոյտ ոսկերօք կատարելոցն, և անդաստանք մեր և հովիտք ոռոգեցան արևամբ...: Ազատքն մեր ի ծառայութիւն իջին և փափուկքն մեր յանըմբելի շարշարանս... կուսանքն մեր օտարաց եղեն և երիտասարդքն մեր հովիւք և կուտպանք այլասեոից...: Տղայք աշխարհաց մերոց՝ որքք եղեն և մարք նոցա՝ այրիք... բաժանեցան ծնունդք ի ծնօղացն, մեկնեցան հարազատքն ի միմեանց, հեռացան բարեկամք ի սիրելեաց, դարձաւ տօնն մեր ի սուգ և ուրախութիւն մեր յարտասուտ, և ոչ գոյ թիւ աղաղակի մերում, զի չիք համար շարեաց մերոց»¹⁸³: Ավերք ճարակել է նաև զրի ու զպրութիւն կոթողները՝ այրվել են մատչանները¹⁸⁴:

Հետաքրքիր են հեղինակի այլ բնույթի մի շարք վկայութիւնները ևս, ինչպես, օրինակ այն, որ մոնղոլների մոտ քննութիւնն ու վեճի առարկա է եղել իրենց՝ կամավոր հնազանդողների նկատմամբ հատուկ վերաբերմունք ցույց տալու խնդիրը. ոմանք կողմնակից են եղել, որ

«յայմհետէ զհնազանդեալսն մի ջնջեսցուք ի սպառ»¹⁸⁵: Ինչպես հայտնի է, այս կարգի քաղաքականութիւն վարելով, նրանք հասնում էին ավելի հեշտ նվաճումների, թեկուզ և հաճախ դրժում էին իրենց խոստումը: Ըստ Վարդանի, մոնղոլները համոզված են եղել, թե Աստուծո կողմից նրանց իրավունք է վերապահված նվաճելու ողջ երկիրը. «Տուեալ է նոցա յԱստուծոյ զաշխարհ ամենայն, ելցեն վատահութեամբ և ժառանգեսցեն զնա»¹⁸⁶: Այս հավատքը, ինչ խոսք, նրանց խրախուսել է ավելի վստահ դիմելու հախուռն արշավանքների և արգարացնելու իրենց վայրագութիւնները:

«Յիշատակարան»-ում ևս Վարդան Արեւելցին մոնղոլների վերաբերյալ կրօնական-ազգազրական բնույթի տեղեկութիւններ է հաղորդում. գրում է, որ նրանք «կային աղքատութեան ի գործս աւազակութեան և յափշտակութեան և պաշտօն ինչ ոչ ունէին, բայց ընդ արեգակն զարմանային և ի պատճառս հրմայութեան ունէին պատկերս ինչ թաղեայ, զորս տակալին կրեն ընդ ինքեանս»¹⁸⁷: Այս և նման տեղեկութիւնները հեղինակն անձամբ լսել է հենց նրանցից՝ «և որպէս լուսք յոմանց ի նոցանէ»¹⁸⁸:

Ահա թե պատմաճանաչողական ինչպիսի կարևոր աղբյուր է Վարդան Արեւելցու նաև այս փոքրիկ «Յիշատակարան»-ը:

* * *

Միանգամայն կարևոր է նաև Վարդան Արեւելցու գեղարվեստական բնույթի երկերի պատմաճանաչողական արժեքը: Դա պայմանավորված է մի քանի էական գործոններով, որոնցից կարևոր են առանձնապես երեքը: Նախ այն, որ հիշյալ երկերի մի մասի (ներբողների) հիմքում ընկած է հայ ժողովրդի պատմական անցյալը, մանավանդ այնպիսի ժամանակահատվածների առնչությամբ, որոնք շրջադարձային նշանակութիւն են ունեցել (IV—V, VII—VIII, XI—XII դդ.): Նրանցում հանդես բերված «գեղարվեստական կերպարները» կոչված են եղել կատարելու նշանակալից դեր հայ ժողովրդի քաղաքական, հասարակական և մշակութային կյանքում: Մյուս մասը (հատկապես ճառերը) ավելի շատ է առնչվել հեղինակի ապրած ժամանակների բրահանութիւնը:

179 Նույն տեղում, էջ 614:

180 Նույն տեղում, էջ 617—618.

181 Նույն տեղում, էջ 617:

182 Նույն տեղում, էջ 618:

183 Նույն տեղում, էջ 618—619:

184 Նույն տեղում, էջ 618:

185 Նույն տեղում, էջ 616:

186 Նույն տեղում, էջ 615:

187 Նույն տեղում, էջ 615:

188 Նույն տեղում, էջ 615:

Հեղինակը իր հասարակական-եկեղեցական լայն գործունեության և Մեծ Հայքի ու Հայկական Կիլիկիայի գրեթե բոլոր կարևոր տարածքներում կատարած շրջագայությունների ու տարբեր խավերի հետ ունեցած հարաբերությունների շնորհիվ քաջ ծանոթ էր երկրի և ժողովրդի գոյավիճակին, նիստուկացին, կենցաղային սովորույթներին, հոգեբանությանը, ազգային-հասարակական բաղձանքներին, քաղաքական և սոցիալական կացությունը: Մեծ իրազեկություն է ցուցաբերում անգամ հայ ժողովրդի անցյալի մանրամասների վերաբերյալ: Այս հանգամանքի բարեբար անդրադարձը ինքնին հասկանալի է: Փաստերի պատմագիտական դիտարկումն ու բազմակողմանի վերլուծելու կարողությունը ևս օգտակար դեր են կատարել, թերևս ավելի, քան իր «Հաւաքումն պատմութեան» և «Յիշատակարան» երկերում. այս բնագավառում նա լրացուցիչ հնարավորություն ուներ ինքն իրեն դրսևորելու նաև գեղարվեստական միջոցներով:

Վարդան Արևելցին, երբ անդրադառնում է նույնիսկ վաղ ժամանակների պատմական իրադարձություններին, բազմազան մանրամասներ է հաղորդում նաև ժողովրդի առօրյա կյանքի ու հրգսների մասին: Դրանք երբեմն օգտակար լրացումներ են այլ աղբյուրներից ստացած մեք տեղեկությունների ու պատկերացումների վերաբերյալ: Նա ցավով ու դառնությամբ հաստատում է, որ հայ ժողովրդի պատմությունը շատ է ավելի ծովի: Ժամանակին Հայաստանում պետական, թագավորական կյանքը փարթամորեն բարգավաճում էր, իսկ ժողովուրդը «գեղեցկանում ու պերճանում», սակայն, հետո՝ «ընդ ծառայութեամբ անկաթ զանազան տէրանց..., վասնորոյ եղկելի գտաք, քան զամենայն աղգս», «...և առաջի աչաց մերոց տարածեալ եղև ամենայն տեսակք վտանկից, որով վշտանամք անմխիթար»¹⁸⁹: Նկատի ունենալով Բագրատունյաց թագավորության անկումը և այդ առիթով Բյուզանդիայի քաղաքական նենգ խաղերը, գրում է. «...և զայն ևս մտածեաց՝ եթէ գերկու պսակն փառաց յոյնք առ ինքեանս տարան ի Հայոց Մեծաց՝ ղկաթողիկոսութիւն և զթագաւորութիւն»¹⁹⁰: Նշանակում է Հայաստանն ու հայ ժողովուրդը մնացել են անտերունչ, առանց աշխարհիկ և հոգևոր ղեկավար իշխանության ու առաջատար ուժի: Այս վիճակը առանձնապես նրան ցավ է պատճառել, որովհետև իր օրերում ևս Հայաստանի քաղաքական և հոգևոր կյանքը նման դրության մեջ էր՝ կործանվել էր հայ պետականությունը, կաթողիկոսությունը երկար թագաւորաններից ու փորձություններից հետո հաստատվել էր Մայր երկրից դուրս՝ Կի-

լիկիայում, իսկ երկրում մոլեգնում էին մոնղոլական հարկահանությունը, գերեվարությունն ու բազմազան կամայականությունները: Ահա թե ինչու հայոց երբեմնի «փառաց» զույգ պսակների անհետացումը այդքան խոր ցավ է պատճառել նրան:

Ընդհանրացնելով իր խոսքը հայ ժողովրդի այդ վիճակի մասին, երբ օգնության կարիքը այնքան շատ է ղգացվել, նշում է. «...քանզի ո՛չ յարևելից, և ո՛չ յարևմտից և ո՛չ յանապատէ, (և ո՛չ) լերանց եղև մեզ այցելութիւն»¹⁹¹: Մույն եզրահանգումը անմիջականորեն կապելով իր ժամանակներին՝ բացականչում է. «Ո՞ տայր մեզ զտեսութիւնն զայն ցանկալի, զէրժ ալժմու թշուառութենէս և ի վատաբախտութեան աւուրց ժամանակիս»¹⁹²: Դժվար չէ տեսնել, թե ինչպես է նա ավելի վաղ շքրջանի իրադարձություններին և անձանց նվիրված ներբողները գաղափարական բովանդակությամբ, ոգով և կողմնորոշմամբ կապում իր ապրած ժամանակներին:

«Սաղմոսաց Մեկնութեան» մեջ մի առիթով կամենում է հաստատել, երբ արդեն մարդու կամ ամբողջ ազգերի կողմից գործվել են ծանր մեղքեր, այդ մեղքերի համեմատ էլ «արդարադատն» աստված, կամենալով զգաստացնել, խելքի բերել նրանց, շի զլանում այդ անել նույնիսկ «բթաշարչար և հողմակոծեալ պատուհասիք»: Սակայն, կարևորն այն է, որ հակիրճ խոսքերով, շատ հատկանշական երկու վիճակ է բացահայտում Հայաստանում մոնղոլական տիրապետության դարաշրջանից: Նախ այն պատմահայեցողական (այս բառի քիչ մեղմ առումով) երկվությունը, որ երբեմն երևան է գալիս հայ պատմագրության մեջ մոնղոլական ռազմաքաղաքական և հարկային դաժան վարքագծի նկատմամբ: Ըստ այդ կողմնորոշման, նման վարքագիծը երբեմն արժանի է բարյացակամ վերաբերմունքի, որովհետև այն իր խիստ դաժանության հետ միաժամանակ պարբերաբար որոշ շափով մեղմանում էր Հայաստանում, երբ դա մոնղոլներին ձեռնտու էր: Վարդան Արևելցու մոտ այս վերաբերմունքը առավել ցայտուն է բնագծված մասնավորապես Հուլավու խանի վարած քաղաքականության գնահատման առիթով, երբ իր «Հաւաքումն պատմութեան» մեջ հարկ է համարում դրան դրական բնութագիր տալ: Մեկնության մեջ ևս ի հայտ է գալիս նրա այդ նույն վերաբերմունքը, համոզված լինելով, որ մոնղոլների համեմատաբար խաղաղ, «հանդարտ» քայլերը ներքին թելադրությամբ չեն կատարվում, այլ «ի քաղցրութենէ յաստուծոյ»: Այսպես. «...և յորժամ կամէ (Աստուած), թոյլ տայ սառուցեալ և ցրտացեալ բարուց

191 Ներբողեան ի Գրիգոր Լուսաոբին, ձեռ. Մ 8775, Բ. 222ա:

192 Նույն տեղում, Բ. 234բ:

189 Ներբող գրքի գլուխն, ձեռ. Մ 8775, Բ. Բ. 229բ, 279բ, 289ա:

190 Յորդիս և ի թոռուս, ձեռ. Մ 8775, Բ. 304ա:

մարդկան բարբարոսաց՝ խրատել զազգս բքաշարչար և հողմակոծեալ պատուհասիք, որպէս ի մեր ժամանակս, վասն մեղաց մերոց անզղշականաց՝ ազգք հիւսիսականք, որ կոչին թաթարք, յերկար առնելով զձմեռն յովով ժամանակս, և է զի սակաւ ինչ մեղմանան ի յաւղ հանդարտ, ի քաղցրութենէ Աստուծոյ, վասն շունչ կլանել տազնապե(ա)լ անձանց»¹⁹³: Բայց ճշմարտությունն այն է, որ մոռողները ստեղծել էին ծանր, անտանելի պայմաններ, ոտնահարել բոլորի իրավունքները: Ահա այս իրադրությունն է արտացոլված նրա հետևյալ խոսքերի մեջ. «...մահուամբ գրաւեալ է բնութիւնս... և՛րբ գաս (Տէր Աստուած) և առնես մեզ իրաւունս, որ այնքան թշնամիս ունիմք և սակաւ և ցաւալից կեանք»¹⁹⁴:

Իրատես հայացքով դիտելով հայ ժողովրդի պատմաքաղաքական անցյալը, վարդան Արեւելցին կարողացել է տեսնել, շափել, գնահատել նաև էականը, ուսանելին: Նա գիտն այս ամենից հանել ընդհանրացնող հիմնական եզրակացություններ: Դիտել է տալիս, թե քանի՛-քանի՛ դարեր են եկել ու բազմել հայ ժողովրդի ուսերին, ինչ խարդավանքների ու ավերածությունների է ակնառես եղել նա, ինչ փառքեր է կորցրել, ինչպիսի՛ դժվարին իրավական ու բարոյական պայմաններում է ապրել, սակայն դրանք չեն այլակերպել նրա կերպարը, ազգային ուրույն դիմագիծն ու հոգին, նա տոկացել ու մնացել է պատմութեան թատերաբեմում իրրև «ազգ ընտիր», իսկ նրա հաճախ խոշտանգված երկիրը՝ «գաւառ գեղեցիկ»¹⁹⁵: Այսպիսի ճանաչման է, ի վերջո, վարդան Արեւելցին բերում նաև իր ընթերցողներին: Գա, ինչպես հավաստել ենք նաև այլ առիթով, այդ դաժան օրերին նրա համար եղել է մի տեսակ ծրագիր ու նպատակ:

Իր զեղարվեստական բնույթի երկերում վարդան Արեւելցին այսպես է մեզ ներկայացնում Հայաստանի ոչ միայն հասարակական-քաղաքական պատմությունը, այլև ներքին սոցիալ-տնտեսական կյանքն ու հարաբերությունները: Թեև համեմատաբար սակավ են նրա վկայություններն այս կապակցությամբ, բայց բովանդակալից են ու արժեքավոր: Այս դեպքում էլ սոսկ մատնացույց չի անում մոլեգնող սոցիալական շարիքները, հոգևոր և աշխարհիկ բարձր խավերի հասարակական արատները, այլ հայտնում է ափսոսանք, ցավ, վրդովմունք: Չի խնայում նույնիսկ իրեն ամենամոտ գասին՝ հոգևորականութեանը, որը նյութական կեղերումների, հարկապահանջության, վաշխառուա-

կան շարաշահումների գնով է հարստացել, սակայն աչքաթող արել իրեն վստահված մարդկանց հոգևոր խնամքն ու դաստիարակությունը. «Ոչ պատրելով (Գրիգոր Լուսավորչին—Փ. Ա.) ի սէր աշխարհիս ըստ փառամով մոլորեցուցչացն, որք անարժանք ան(ո)ւան հովուութեան, ըստ խոտորնակ և թեւր գնացից՝ լրանելով զհատու գառանց և զտեսչութիւն բանաւոր խաշանց, ոչ ժողովելով ի փարախ հոգևոր խնամոց և ոչ կեքակրեալ բանիւն ճշմարտութեան, այլ անտես և անփոյթ առնելով զգինս արեանն Քրիստոսի, որ նոցին հաւատացաւ, որք հանապազ անտերունչք եղեալք ողորմելի տեսութեամբ և վարակեալ կենօք, հեռի ի դաւար վայրէ և ի շրոյ հանգրստեան: Իսկ առաջնորդքն կոչքը և մուարք՝ յաւէտ զանձինս արածեն, քան թէ զհօտս: Գայթակղեալք և գայթակղեցուցանեն, ի վիհն կորստեան գահալիժելով զինքեանս և ըզհնազանդեալսն իրեանց: Զկիթն ուտելով և զասրն զգենելով, և զխաշանցն բնաւ հող ոչ տանելով. զգէրսն ի զենումն պատրաստեն և զբեկեալսն ոչ պապենս Որբոց և այրեաց հող ոչ տանին ի պահանջումն հարկացն, երազափոյթք են ի կեղեքումն անձանց տնանկաց, որով աճեաց նոցին կարասի և խրատու բան նրւաղեաց, և համարձակութիւն յանդամանութեան կասեցաւ, մանաւանդ թէ՛ հեղգութիւն տիրեաց, զի որք անձին փրկութեան փոյթ ոչ վարեն, որպէ՛ս ընդ ձեռամբ անկելոցն խնամարկու լինիցին, և որք զործովք գայթակղեցուցանեն, բանիւ զիա՛րդ կարիցեն խրատել...»¹⁹⁶: Ահա ինչպիսի հստակութեամբ նա նկատում է, որ տնտեսական կողոպուտը, սոցիալական անարդարության ամենատարածված ձևերից մեկը, եթե նույնիսկ «հարազատներ» կողմից է տեղի ունենում, հասարակական շարիքների ինչպիսի հնարավորություններ է ծնում, ինչքան թանկ է նստում հասարակ մարդկանց՝ «խաշանց» վրա, ինչպես է աղարտում հոգիները. սակավապետութեան մունետիկներն անգամ նախ և առաջ վազում են «գեր» ոչխարների հետևից՝ ոտքի տակ տալով նույնիսկ «որբերին և այրիներին»: Հարկեր հավաքելիս, «կիթն ու ասրը» կորզելիս՝ ժխտում են իրենց բարոյական սկզբունքները, մոռանում, ուրանում իրենց խիղճն ու կոշումը և անփութ շոշալում ժողովրդական բարիքները, հետամտում են վայելքի ու ցոփութեան և անհազ ձոխացնում իրենց «կարասին»: Պարզ է, այդպիսիները ոչ թե իրենց վստահված ազգին՝ «հոտին», այլ սոսկ իրենք իրենց «արածացեալու» մասին միայն կարող էին հոգալ: Սոցիալական շարիքը, ըստ վարդան Արեւելցու, կարող է հասնել մինչև իսկ ազգային աղետի:

Գրերի գյուտին նվիրված իր հայտնի ներբողում խոսելով այն մասին, թե ինչպես Հայաստանը բաժանված է եղել երկու օտար տերու-

193 Սաղմոսաց, ձեռ. № 1190, ք. 321ա:

194 Նույն տեղում, ք. 259բ—260ա:

195 Ներբող գրերի գյուտին, ձեռ. № 8775, ք. 289բ:

196 Ներբողեան ի Գրիգոր Լուսավորչին, ձեռ. 8775, ք. 243բ—244բ:

թյունների՝ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև, ինչպիսի ծանր դրուժյան մեջ է գտնվել հայ ժողովուրդը, Վարդան Արևելյին առանձնապես ընդգծում է «Բազմադիմի հարկապահանջութեանց» պատճառով խորացած նրա տառապանքը¹⁹⁷։ Իսկապես էլ «բազմադիմի» հարկատվությունը հայ ժողովրդի համար դարերի ընթացքում եղել է համատարած շարիք և արյունաքամ է արել նրան։

Սույն ներքոդի մի այլ հատվածում փորձելով բացատրել, թե ինչու է Հայաստանը այսօրան շատ «վատաբախտութեանց» ասպարեզ դարձել, նա որոշ պատճառների շարքում թվարկում է նաև մի քանի սոցիալական շարիքներ. «Եւ է՞ր ում զայս կրեցին (հայք—Փ. Ա.) և զմէ՞ այսր պատահեցան՝ վասն շար գործոց, վասն պեղծ խորհրդոց, վասն անառակ վարուց, վասն բազմաձայն անօրենութեան, վասն աւաւրէն գնացից, վասն անիրաւ զատաստանաց և կաշառակրծութեանց, վասն գողութեան և ագանութեան, վասն պողրեկութեան և շնութեան, վասն նախանձու և ատելութեան, վասն նենգութեան և սպանութեան... վասն արծաթախրութեան և փառասիրութեան, վասն շարխօսութեան և նայնոյութեան, վասն զրկանաց և առութեան, սուտ վկայութեան և սուտ երգման... իշխանասիրութեան և գուռզութեան, վասն դեղատութեան և խարդախութեան... վասն զի եղև Բաղանան իբրև զմի ի ժողովրդեանէն, վասն զի կրօնաւորք գաղափականութիւն սիրեցին», և ոչ զանազանին ի միմեանց վանական և աշխարհական» (ընդգծումները մերն են.— Փ. Ա.)¹⁹⁸։

Այսպես, ուրեմն, Վարդան Արևելցու անուղղակի խոստովանությամբ զարգացած ավատատիրական Հայաստանում խորացող սոցիալական անհավասարությունը բազմապատկում էր երկրում տիրող խժոճությունը։ Միևնույն պատճառով հասարակական հարաբերություններում ծրնվել և ուռճացել էին այնպիսի արատավոր երևույթներ, որոնք ոչ միայն զրկանքների դուռ էին բացում ժողովրդի համար, այլև այլանդակում, քայքայում էին հասարակական, բարոյական շատ արժեքներ։ Նա ճիշտ է նկատել, որ բնակչության հարկային կեղեքումը, կաշառակրծությունը, գողությունը, ագանությունը, անօրինականության այլ ձևեր, մշտապես պատուհասում էին բնակչությանը, երկրում ծավալում շարագործություն, խարդախություն, սպանություն, շարանենգություն, սուտ վկա-

յություն և երդում, ևսամոլություն, անբարոյականություն... մանավանդ որ այս հարցերում «ոչ զանազանին ի միմեանց վանականք և աշխարհականք»։ Վարդան Արևելցին տեսել և ըմբռնել է, որ սոցիալական և գույքային անհավասարությունը գնալով ավելի էր փոխում հասարակության ոչ միայն տնտեսական վիճակը, այլև հասարակական, բարոյական դիմագիծը։

Վարդան Արևելցու ժամանակ զարգացած ավատատիրության և վերածննդի երկիր հանդիսացող Հայաստանի տնտեսական և հասարակական կյանքում դրամի ուժն ու դերը շատ էին բարձրացել։ Դրամը մեծ կարևորություն և ազդեցություն էր ձեռք բերել։ Տնտեսության և առևտրի զարգացմանը բերած նպաստի հետ միաժամանակ այն ծնում էր շարազեա հետևանքներ և՛ հասարակական հարաբերություններում, և՛ մարզու մեջ։ Դրամը նաև մարդկանց գնահատելու չափանիշ էր դարձել։ Վարդան Արևելցին, թերևս առաջինը հայ իրականության մեջ, իր գրավոր խոսքում տեղ է տվել «մարդ՝ դրամ, դրամ՝ մարդ» հակադարձ բառախաղին, կատարելով սոցիալական սրամիտ ընդհանրացում¹⁹⁹։

«Ի Տասնարանեան» ճառի մեջ նա հետևյալ հետաքրքիր դիտողությունն է անում։ Աստված իր «արդար» օրենքները մարդկությանը հազորդել է անապատում, բայց ոչ քաղաքում. «Քանզի բիր շարաք և անհուն աղէտիք լի են քաղաքք և անիրաւութեամբք առ աստուած և առ իրեարս...»²⁰⁰։ Հայտնի է, որ Հայաստանում XIII դարում քաղաքները բավականին բարձր զարգացման էին հասել, դարձել առևտրաարհեստագործական խոշոր կենտրոններ։ Դրա հետ միասին ավելի էին արվել հասարակական հարաբերությունները։ Այդ են ակնարկում նաև Վարդան Արևելցու վերոգրյալ խոսքերը։ Միևնույն ճառի մեջ պատվիրում է, որ մարդիկ արդար քրտինքով ուտեն իրենց հացը, հոգան կաթիքները, որովհետև այդ է իսկական արդարության ուղին, իսկ ուրիշին «շորթելը» բազում շարիքների առիթներ է ստեղծում. «...քանզի հրամայեցաւ քրտամբք երեսաց ուտել զհացն ու վաստակաւք զգննուլ զհանդերձ և ոչ զայլոցն շորթել զողութեամբ... յուրվից տայցնմք պատճառս շարեաց՝ շորթելով զայլոցն...»²⁰¹։

Հոգևոր դասին նա զգուշացնում է, որ հեռու մնան կաշառակրծությունից և հոգու «պարզեները» չվաճառեն արծաթով։ Խոսքն ուղղվել էպիսկոպոսին, իր «Հայեաց ի քեզ» ճառում գրում է հետևյալը. «Վասընզի տեսուչ ասի եպիսկոպոսն և ոստիկան. տե՛ս յստակ աշաք և անկա-

197 Ներքոդ գրերի գլուտին, ձեռ. № 8775, Թ. 279բ։

* Հիշյալ ներքոդի Սոփեբե՛ում տպագրված տարբերակի մեջ «զբազաքականութիւն սիրեցին»-ի փոխարեն գրված է «բազաքականաց վարուք վարին», որ այս դեպքում ավելի ճիշտ է։ Տե՛ս Սոփեբք, № 2, էջ 215։

198 Նույն տեղում, Թ. 288բ—289ա։

199 Հնգամատենի, ձեռ. № 8891, Թ. 39բ։

200 Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, Թ. 277բ։

201 Նույն տեղում, Թ. 283ա։

շառ զվիճակն... զպարզես հոգւոյն մի՛ վաճառէր արծաթով՝ ազիտաց
և անարժանից...»²⁰²,

Կաշառքը լայն ծավալ էր ստանում այդ ժամանակներում և շա-
րիքներ գործում: Այն սոցիալական այնպիսի ապականիչ երևույթ է,
որ հավասարապես խեղում է և՛ ստացողին, և՛ տվողին. «Կաշառն կու-
րացուցանէ զմտաց աշան. յայտ է՝ և ոչ տայ հայել յիրան և ապականէ
զբարս արդարս, և անիրաւ խաւս ծնանի ի կողմանէ տուողին զկա-
շառն»²⁰³:

Գարձյալ իր «Ի Տասնաբաննան» ճառի մեջ Վարդան Արևելցին
այն հետաքրքիր միտքն է հայտնում, որ մարդիկ «ազգակցութեամբ»
մեկ են, բնությամբ՝ հավասար: Նույնիսկ թագավորը իրավունք չունի
արհամարհանքով վերաբերվելու «ազգատներին», էլ ուր մնաց՝ իշխա-
նը: Նույնչափ ուշագրավ է, որ «ազգատներին» տարբերում է վերոհիշ-
յալներից «բախտի» և ոչ ծագումով. «զայն առնէր տէրն, զի մի որ ի
թագաւորաց, կամ ի գոռոզաց և յիշխանաց պատուաւորաց արհա-
մարհեսցէ զմի որ յազգատաց... զի՞նչ ապա հողեղէնքն և մահկանա-
ցութն, որ մի են ազգակցութեամբ, թէպէտ և՛ ոչ բախտի, կարասցեն
տալ պատասխանի...»²⁰⁴:

* * *

Վարդան Արևելցին իր պատմագրական և հայ ժողովրդի անցյալին
առնչվող մյուս աշխատությունների մեջ աշխարհագրական և տեղա-
գրական լայն իմացություն է ի հայտ բերում: Դրան ևս մեծապես
նպաստել են նրա ուղևորություններն ու բնակությունը Հայաստանի
տարբեր գավառներում և Կիլիկիայում:

Բացի այս բոլորից, հատուկ զբաղվել է աշխարհագրությամբ. փաս-
տորեն այս առումով ամբողջ միջնադարում նա երկրորդ դեմքն է VII
դարի «Աշխարհացոյց»-ի հեղինակ Անանիա Շիրակացուց հետո: Սա
արդեն լուրջ հանգամանք է՝ նրան իրրև աշխարհագրագետ գնահատե-
լու համար:

Շատ հեռուն տանող աշխատանք կլիներ առհասարակ Վարդան
Արևելցու պատմաաշխարհագրական այդքան հարուստ իմացության
քննությունը և արժեվորումը, քանի որ այն կապված է լայն ու մանրա-
մասն ընդգրկումների հետ: Մենք մի քանի խոսքով կնեկրկայացնենք
միայն նրա զուտ աշխարհագրական-տեղագրական բնույթի աշխատու-

թյան՝ «Աշխարհացոյց»-ի հիմնական արժանիքները, մանրակրկիտ
քննությունը թողնելով այլ առիթի:

Վարդան Արևելցին Հայաստանի (նաև հարևան երկրներ) վերա-
բերյալ իր պատմաաշխարհագրական տեղեկատու նյութը մասամբ լը-
րացնում է «Աշխարհացոյց»-ի միջոցով: Վերջինս կարծես հավելված
աշխատություն է նրա «Հաւարումն պատմութեան» կողքին: Հատկապես
XI—XII դարերի ընթացքում և հետո, մինչև 1270-ական թվականները,
Հայաստանի ընդարձակ տարածքի վրա տեղի ունեցած աշխարհագրա-
կան մեծ կամ փոքր միավորների սահմանալին, վաբշական, անվանա-
կան փոփոխությունների թերևս կարևոր մասը բավականին մանրա-
մասն ու հստակ արտացոլվել է այստեղ: Եթե փորձենք կազմել քար-
տեզ ըստ սույն «Աշխարհացոյց»-ի տվյալների, ապա ականերն կդառ-
նան հեղինակի ծառայությունները նշված դարերում Հայաստանի աշ-
խարհագրական-տեղագրական վիճակը պատկերացնելու և այդ մասին
իր ու ընդհանրապես իր ժամանակակիցների իմացությանը ծանոթա-
նալու գործում: Արևելցու սույն երկը մեծ օգուտ կարող է բերել նաև
հայ ժողովրդի պատմության, օտար նվաճողների արշավանքների ու
նրանց ծավալման, առանձին թագավորական, իշխանական և ամիրա-
յական տների տիրույթների սահմանագծման, նրանց ազգեցության
ոլորտների ճշտման, աշխարհագրական-տեղագրական որոշ անունների
ստուգաբանման և վերականգնման տեսանկյունից, որ այնքան կարևոր
է արդի գիտության համար: Դրա հիման վրա կարելի է ճշտել լև մին-
չև XIII դարի 70-ական թվականները ո՞ր բնակավայրերը, բերդերը,
վանքերը դեռևս շարունակում էին գործել և որո՞նք էին արդեն գաղա-
բել գործելուց կամ փլատակի էին վերածվել:

«Աշխարհացոյց»-ի թեկուզ սուղ հաղորդումների հիման վրա կա-
րելի է հաստատել նաև, թե հեղինակի նշած բնակավայրերից որո՞նք
էին մաս կազմում վանական կալվածներին:

Այս և առնչակից հարցերի լուսաբանման համար ընձեռած փաս-
տագրական օգտակար տեղեկություններով Վարդան Արևելցու «Աշ-
խարհացոյց»-ը հնարավորություն է ստեղծում համակողմանի քննու-
թյան ենթարկել հայ ժողովրդի պատմության, մանավանդ պատմաաշ-
խարհագրական և տեղագրական բնույթի խնդիրներն ու նրանց առան-
ձին մանրամասները:

Նշված այս ժամանակագրական, քաղաքական, հասարակական, սո-
ցիալ-տնտեսական, իրավական, գիտամշակութային օղակների շուրջ
են կենտրոնացված Վարդան Արևելցու պատմագրական առավել կարե-
վոր հետաքրքրություններն ու հաղորդած տեղեկությունները: Դրանք
աներկբա հաստատում են հեղինակի պատմաքննական ընդարձակ տե-

202 Նույն տեղում, թ. 271ա—271բ:

203 Նույն տեղում, թ. 278բ—279ա:

204 Հնգամատենի, ձեռ. № 9718, թ. 252ա:

սաղաշտն ու կարողութիւնը: Վարդան Արևելցին ոչ միայն հարուստ փաստագրական նյութ է հաղորդում մեզ, այլև այդ նյութը հագեցնում, իմաստավորում է երբեմն եզակի արժեք ներկայացնող լրացումներով, ճշտումներով, հեղինակային զգույշ կամ անվերապահ վերաբերմունքով:

Վարդան Արևելցին իրատես ու կշռադատ պատմիչ է, հատկապես, երբ համեմատաբար ավելի մոտիկ անցյալի, մանավանդ, իր դարաշրջանի ու շրջապատի մասին է պատմագրում: Նրա ղերը ավելի է բարձրանում նրանով, որ օգտագործել է առ այսօր կորած խիստ արժեքավոր սկզբնաղբյուրներ, որոնցից քաղելով ոչ միայն մեծարժեք պատմական տվյալներ, հաշվի է առել դրանց հեղինակների կարծիքներն ու տեսակետները:

Նշված աշխատություններում, իր օրերի քաղաքական, սոցիալական, իրավական հարցերին պատշաճ տեղ տալով, ինչպես տեսանք, չի գոհանում սոսկ դրանց արձանագրությամբ, ջանք է թափում գտնել բուն պատճառներն ու հետևանքները, այն անդրադարձը, որ կարող էին ունենալ երկրի և ժողովրդի նյութական ու հոգևոր կյանքում: Ըստ այդմ էլ ակնհայտ է դառնում, որ Արևելցու համար բոլորովին էլ միևնույնը չէ, թե ինչպիսին է իր երկրի քաղաքական, տնտեսական, հասարակական, պետական կյանքը, ի՞նչ է ունեցել և ի՞նչ է կորցրել իր ժողովուրդը այդ կյանքում, մանավանդ, թե ի՞նչ կարող էր ունենալ նա դալիք տարիներին:

Նա խոհեմ ու փորձառու պատմիչ է, քաջ գիտակցել է պատմության դաստիարակչական ուժը և ջանացել, որ այս առնչությամբ իր խոսքերը զուրկ չլինեն այդ ուժից: Իրրև պատմիչ ևս նա իր երկրի նվիրյալ քաղաքացին ու հայրենասեր որդին է:

Իսկապես էլ «մեղսարեւ և ցասմնահար» իր ժամանակներում նա շատ բան տեսնում ու ընկալում էր ամենայն ստուգությամբ, այլ կերպ հազիվ կարող էր ծնվել այդ դարի այնքան պերճախոս հիշյալ բնութագիրը և այն ընդհանրացումը, որ «անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր զանազան փորձանաց... բորբոքելով զծարաւ լուծման յոգնաթախիծ կենցաղոյս»²⁰⁵:

Նրա պատմագրական սկզբունքների վրա կա, անշուշտ, իր դարի ու դասի կնիքը (չէր կարող չլինել). այստեղից է մասամբ նաև նրա նկատելի պարզամտությունն ու դյուրահավատությունը. մի հանգամանք, որն ավելի կամ նվազ շափով միաժամանակ վերաբերում է միջնադարի հայ և ոչ միայն հայ բոլոր պատմիչներին: Կա նաև իր համա-

ռոտաբանությունը, տեղ-տեղ՝ խիստ, բայց ոչ երբեք իրրև անտեղյակության կամ անտարբերության դրսևորում, այլ իր կողմից որդեգրված սկզբունքի ու ծրագրի իրագործում: Վարդան Արևելցին իրրև պատմիչ, իհարկն, Խորենացի, Եղիշն, Փարպեցի... չէ, սակայն, անպայման առաջատարներից է և հայ պատմագրության մեջ ունի իր ուրույն դերն ու տեղը:

Տեսանք, որ նա բավականին լուրջ ներդրում ունի նաև իրրև աշխարհագրագետ, Շիրակացուց հետո հանդիսանում է երկրորդ ակնառու հեղինակը այդ բնագավառում:

Տեսանք նաև, թե նա որքան անմիջականորեն է կապվում իր դարին ու միջավայրին, ամեն ինչին, որ էական է, արձագանքում է պատմաբանի, գիտնականի, գրողի խորաթափանցությամբ ու քաղաքացիական բարձր գիտակցությամբ:

205 Վարդան Արևելցի, Հատարումն պատմութեան, էջ 163—164, 205:

ներ ընկնելուց, առևանգումներից, որոնք դարեր շարունակ Հայաստանը նվաճողների ամենամարդկային զբաղմունքներից էին: Նման միջոցառումները, բնական է, կայուն երաշխիք չէին տալիս, բայց երբեմն գոնե նվազեցնում էին այդ շարաբաստիկ կամայականությունները: Մյուս կողմից դրանք իրենց հերթին ծնում էին ընտանեկան ողբերգություններ, որոնք գումարվելով դառնում էին հասարակական շարիք: Վարդան Արևելցու հիշյալ փաստաթղթում (Գ կանոն) այս կապակցությամբ սահմանվում է, որ ընտանիք կազմող փեսան նվազագույնը լինի 14—15, հարսը՝ 12 (խիստ բացառիկ դեպքերում՝ 10) տարեկան³:

Վարդան Արևելցու համար ամուսնության փաստը չի վերջանում եկեղեցական սուրբ պսակով: Պսակարար եկեղեցականը պարտավոր է այնուհետև էլ հետևել ամուսնացողների վարքագծին. «...Ռեբերոզ օրը պետք է գնա նրանց մոտ, նախապես պատվիրած լինելով, որ մինչ այդ «սուրբ կենաւք կենան», այդպես ապրեն նաև շորեքշաբթի, ուրբաթ, կիրակի և պահոց օրերին, շաբաթ օրերին գնան խոստովանության և 40 օրը մի անգամ հաղորդություն ընդունեն (Դ), իսկ «թե խալատին, կորուսեն դպսակս» (Գ)⁴:

Այս միջոցառումները ևս բավարար չեն, որ ընտանիքը կենսունակ ու առաքինի լինի: Այդ պատճառով էլ հեղինակը շարունակում է հորդորել, որ ամուսնացողները հեռու մնան «ի շնալոյ և յարբեցութենէ, և զիրար յատելոյ և ի մատնելոյ, և ի խոռով կալոյ և ի զիր/ն/ յասելոյ, և ի գողանալոյ»⁵: Իսկ երբ արդեն սերնդագործություն է տեղի ունեցել և նորածինները մկրտվել են, հարկ է անմիջապես զբաղվել նրանց դաստիարակությամբ, ուսուցանել խաչ հանել, ծունր դնել, ասել եկեղեցու Հավատո հանգանակի գեթ ամենատարրական դրույթները (Բ)⁶: Սրանք տվյալ ժամանակներում կարևոր էին ընտանեկան ներքին հարաբերությունները ամուր հիմքերի վրա դնելու և հասարակությանը պիտանի անհատներ, եկեղեցուն էլ օրինակելի հավատացյալներ շնորհելու համար:

Եկեղեցի-հասարակություն առնչությունները կամրջվում էին նախ և առաջ քահանայական դասի միջոցով. մանավանդ առօրյա գործնական, կենցաղային, ընտանեկան ու անհատական հարցերում, քանի դեռ վերջիններս չէին մեծացել, լրջացել, աշխարհիկ ու հոգևոր վերին

իշխանությունների մտահոգություն, քննության նյութ դարձել: Հետևաբար, քահանայի դերը կարևոր էր, ուստի մեծ նշանակություն էր ստանում նրա անձը, բարոյական անաղարտությունը, շքապատի նկատմամբ հոգատար, մարդասիրական վերաբերմունքը, մտավոր կարողությունը: Սույն խնդրին նվիրված են փաստաթղթի 5 կանոնները (Զ—Ժ): Ը կանոնում ուղղակի ասված է. «Քահանայն զժողովուրդն խնամէ որպէս հայր... (կոչված է) զտղայս խրատել և սգուշացուցանել, որ խալատին ոչ... լինել հովիւ քաջ... յարատի և ի փարախի պահել յեկեղեցի և ուսմամբ կերակրել...»⁷: Թ կանոնում զարգացնում է սույն միտքը և ուղղակի ընդգծում, որ քահանան սոսկ ծխակատար չէ, այլ «դաստիարակ»-ի աչքերով ու իրավունքով դիտում է շրջապատը և հետևում իր ծխում տեղի ունեցած անցուղարձեռիին⁸: Անշուշտ, ժողովուրդն էլ նրան իրրև «հայր» պետք է ընդունի, անսա նրա խորհուրդներին ու թիւղարանքներին, որպեսզի միջնադարի հայ մարդը, քաղաքացին, հավատացյալը մաքուր ու ազնիվ լինի⁹:

Վանական կյանքը, ինչքան էլ մեկուսի համարվի, կտրված չի եղել հասարակությունից, նրա ակնկալություններից, քաղաքական, ազգային, մտավոր ու մշակութային գործունեությունից: Քաջ հայտնի է վանականության դերն ու տեղը միջին դարերի հիշյալ բոլոր մարզերում, մանավանդ հայ իրականության մեջ: Այստեղից էլ դրան վերաբերող իրավական նորմերի-սահմանքների կարևորությունը:

Վարդան Արևելցու խնդրո առարկա փաստաթղթում վանական կյանքին, տնտեսությանը, բարքերին նվիրված է առանձին բաժին՝ Ա—Թ «սահմանք»-ները, որոնք ուշագրավ ու շահեկան են, առնչված լինելով ոչ թե վերացական կամ կրոնադավանաբանական խնդիրների, այլ իրական, առօրյա կյանքի անմիջական դրսևորումներին: Շատ բնութագրական է առաջին իսկ «սահմանք»-ը, որտեղ դրսևորվել է հեղինակի (անշուշտ՝ և ժողովի) վերաբերմունքը վանքերի ինչպես ներքին կյանքին ու հարաբերություններին, այնպես էլ կենցաղին, բարոյական զեղծումների քողարկման խաբուսիկ ու խորամանկ միջոցներին, տրնտեսությունը: Այս բաժնի Ա կանոնը որոշում է, որ վանքում «միաբան», համերաշխ լինեն, այնտեղ շքանակվեն «ոչ սանամայր, ոչ մայրագիր, ոչ քորագիր բնաւ, և ոչ մայր և քոյր ումեք և ոչ ազգական ի վանքն», ինչ-

3 Սույն տեղում, էջ 43:

4 Սույն տեղում, էջ 43:

5 Սույն տեղում, էջ 43:

6 Սույն տեղում, էջ 43:

7 Սույն տեղում, էջ 44:

8 Սույն տեղում, էջ 44:

9 Սույն տեղում, էջ 44:

պես նաև շինեն «ուրիշ լուծք և անասունք և պատճառ գայթակղութեան»¹⁰:

Ուշագրավ է նաև Ք կանոնը: Կարևորն այն չէ միայն, որ վանքում ելումուտ անելու համար հատուկ թույլտվություն է պահանջվում, այլև այն, որ պետք է ընտրությանը որոշվի, թե ով է լինելու միաբանների «խոստովանահայր»-ը, որի (և ոչ վանահոր) «հրամանով» էլ թույլատրվում է ելումուտը¹¹: Սա հետաքրքիր մանրամասն է վանական կյանքից, որի մասին նման վկայության քիչ ենք հանդիպում: Վանահոր համեմատությամբ, որը վանքի ընդհանուր պետն է, այս դեպքում խոստովանահորը նախապատվություն տալը իր տրամաբանական պատճառն ունի. խոստովանահայրը այն անձնավորությունն էր, որին յուրաքանչյուրը պարտավոր էր «խոստովանել» միայն ճշմարտությունը, ինչքան էլ որ այն երբեմն դուր լիներ, չքողարկելով և ոչ մի զանցանք: Վանքի ներսում կատարվող ամեն կարգի «շեղումներին» նա իրազեկ էր լինելու, եթե անգամ դրանք կատարվեին դաղտագողի: Պարզ է, նա ավելի հարմար վերակացու էր, քան որևէ մեկը, այդ թվում և՛ վանահայրը:

Յ կանոնը ևս վանական մաքրակենցաղությանն է առնչվում: Վանքերում «փոքր» (մասուկ) կամ «փոքրավոր» պահելու սովորությունը հղի էր անբարո գայթակղություններով: Միաբան եղբայրներից ոմանք (առավելապես ավագները և տարեցները) իրենց «ծառայելու» նպատակով փոքրահասակ տղաներ էին պահում իրենց մոտ: Գա արատավոր հետևանքներ էր ունենում, ըստ երևույթին, նույնիսկ աչք ծակելու շափ: Ահա այս իրողությունը ևս հակողության տակ առնելու համար նոր սահմանք է որոշվում, ըստ որի՝ նախ ոչ ամեն միաբան իրավունք ունի «փոքր» պահելու, և հետո՝ թույլ տվողը կամ «ընտրողը» դարձյալ լինելու է խոստովանահայրը¹²:

Գ—Գ միացյալ կանոններից տեղեկանում ենք մի այլ հետաքրքիր սոցիալական փաստի. պարզվում է, որ վանքերում նոր միաբանների ու մշակ-գործավորների երբեմն ընդունել են կաշառքով: Գործնականում դա բավականին տարածված կարգ պիտի լիներ, որ հարկ է համարվել այն արգելելու մասին հատուկ որոշում կայացնել այսպիսի հեղինակավոր ժողովում ու փաստաթղթում¹³:

Ք կանոնը դարձյալ որոշակի հարց է արժարժում՝ կապված տվյալ ժամանակում արմատացած սովորույթի հետ: Այն արգելում էր վանական արեղային մեկնել մերձակա գյուղը, եթե դա խիստ հարկադրական չէր: Իսկ եթե, այդուամենայնիվ, դա անհրաժեշտ համարվեր, ապա նա գյուղում չպետք է օթևաներ և քանի չէր վերադարձել իր մենաստանը, իրեն պետք է զգար «որպէս ի կրակում»: Եթե նման առիթներն անպատեհ գայթակղությունների տեղիք տված չլինեին, այսպիսի որոշում չէր կայանա: Կանոնը շարունակում և պնդում է, որ վանքից մերձակա այգի կամ գյուղ այգեգործության նպատակով պետք է ուղարկվեն միայն «ընտրվածներն ու վկայվածները», որոնք համարվում են «անգայթակղ» և կարող են պարզերես մնալ Աստուծո և վանքի միաբանների առաջ: Ահա Ք կանոնը ամբողջությամբ. «Ք. Առանց մեծ հարկի արեղաի մատնոր զեղ չալթէ, և ոչ կին՝ ի վանքն: Աբեղա, որ ի քաղաք կամ ի գեղ գնա, անուշահոտ կենա և երկիւղիւ, որպէս ի կրակում, մինչ զառնա ի վանս իւր: Զընդրածքն և վկածքն (վկայածքն—Փ. Ա.) և զանգայթակղան յուղարկեն յայգի, ի գեղ և յայգեգործ վանիցն. և բացերես կենա յԱստուծոյ և ի մարդկանէ վանից մարդն. ի փառս Աստուծոյ աւրհնելոյն, յաւիտեան»¹⁴: Ինչ խոսք, այս եզրակացությունը որոշակի փորձառության վրա է հիմնված և արտացոլում է իրականությունը:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Զ—Լ կանոնները, որոնցում խնդրո առարկա են դարձել ընծայացուների ձեռնագրության, տարիքի, զգեստների, սնման և կենցաղավարության վերաբերյալ հարցերը:

Իրեն կանոններից բացի, երկրի հասարակական բարքերի բարվորման համար է նախատեսված նաև «Սահմանք»-ի ներածականի կարեւոր մասը, որում առանձնապես զատապարտվում է «յիշոցնատուութիւն»-ը՝ հայհոյանքը, որպես խաթարված բարոյականության ցայտուն դրսևորումներից մեկը: Հայհոյիչը այլասերված է, չունի ամբի, երախտագիտության, խղճի զգացում, զուրկ է մարդկային աստվածապարզ արժանիքներից, շարիք է հասարակության և եկեղեցու համար: Այն «առաւել անքաւելի մեղք» է համարվել ի վաղուց՝ եկեղեցական ժողովների և հայերի կողմից: Հայհոյությունը տարածվել է բոլոր խավերի մեջ, հայհոյում էին բոլորին, չխնայելով նույնիսկ սրբերին, հրեշտակներին, «զքրիստոնեական անունն և խորհուրդ քրիստոնեության», Սուրբ հոգուն, Աստուծուն... Սա այնպիսի մեղք է, որը չեն կարող թողություն արժանացնել ո՛չ քահանան ու վարդապետը, ո՛չ էլ եպիսկոպոսն ու կա-

10 Նույն տեղում, էջ 45:

11 Նույն տեղում, էջ 45:

12 Նույն տեղում, էջ 45—46:

13 Նույն տեղում, էջ 45:

14 Նույն տեղում, էջ 46:

Քողիկոսը¹⁵: Այսքան լուրջ ու խիստ վերաբերմունքը պայմանավորված էր ոչ միայն հասարակությանը դաստիարակելու մտահոգությամբ, այլև նրանով, որ հայհոյիչները հրապարակով անպատվում էին մինչև իսկ Աստծուն, նրա տունը՝ եկեղեցին, այսինքն՝ վարկաբեկում կրոնը, հավատը, հոգևորականությանը և, բնականաբար, խաղում վերջինիս վարկի ու հեղինակության հետ: Իսկ դա հանդուրժելի ու ներելի չէր կարող լինել: Եկեղեցին նաև սույն կանոնում դիմում է միջին դարերի համար ամենածանր պատժամիջոցի, արգելում է «չիշոցնատու»-ներին «աւրհնել կամ հաղորդել, կամ թաղել, կամ գտղայսն կնքել կամ պսակել»¹⁶:

Հիմնականում այսպիսին է Չագավանից ժողովի «Սահմանք»-ի ընդհանուր բովանդակությունը, ոգին, ուղղվածությունը, ճանաչողական և հասարակական արժեքը, որոնցից յուրաքանչյուրը յուրովի արտահայտում է հեղինակի իրավագիտական մտածողությունն ու հայացքները:

Մենք այստեղ փոքր-ինչ առանձնացնում ենք «Շրջաբերական» և «Խրատական» թղթերում սահմանված կանոնների քննարկումն ու գնահատությունը մեր այն վերապահության պատճառով, որ սույն երկերի հեղինակային համագործակցության մեջ իր մասնակի բաժինն ունի նաև Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը: Այդուհանդերձ, համոզված ենք, որ դրանց հեղինակային իրավունքը առավելագույնս պատկանում է Վարդան Արևելցուն:

Հիշյալ թղթերը բավականին հանգամանորեն քննության են առնրված Մ. Օրմանյանի, Գ. Հովսեփյանի և, մասնավորապես, Լ. Խաչիկյանի կողմից¹⁷: Կարևոր են վերջինիս հետևյալ երկու ընդհանրացումները. «Խրատական թղթի» կանոնները «Սահմանք կանոնականից» («Շրջաբերական թուղթ» — Փ. Ա.) են քաղված ու վերամշակված փոքր-ինչ համառոտվելով, կամ՝ «Իմաստի տեսակետից էական տարբերություններ «Սահմանք կանոնականը»-ի («Շրջաբերական թղթի» — Փ. Ա.) և «Խրատական թղթի» համադրված (իր կողմից՝ 274—275 էջերում — Փ. Ա.) կանոնների միջև չկան, ի բաց առեալ 2-րդ օրինակի վերջավորություն»¹⁸: Այս վերջինը չի վերաբերում «Խրատական թղթի» չհամադրված մյուս 13 կանոններին, որոնք լիովին տարբեր են:

Ավելորդ չէ հիշեցնել, որ ինչպես Չագավանից ժողովի «Սահմանք»-ի, այնպես էլ հիշյալ թղթերի կանոնները արժարժում են պատմական, սոցիալ-տնտեսական, ազգագրական, կենցաղագրական, սոցիոլոգիային հարցեր ու երևույթներ և նույնպես նպատակամղված են հասարակական կյանքի բարվորմանն ու եկեղեցու վարկի բարձրացմանը: Ըստ նշվածի էլ կանոնները իրենց բովանդակությամբ ու նպատակով համապատասխան խմբավորման են ենթարկված: Կանգ առնենք առավել նշանակալից կանոնների վրա:

«Շրջաբերական թղթի» կանոնները նկատառում են հիմնականում հետևյալ կոնկրետ երևույթները: Ձեռնադրությունները, որոնցից կախում ունեն եկեղեցու նվիրապետության ու աստիճանավորների ճիշտ ընտրությունը, երբեմն կատարվում էին «արծաթով», կաշառով, որը վաղուց դատապարտված էր (Ա.)¹⁹: Ուստի թ կանոնով նախատեսվում է միայն արժանավորներին և գիտուններին արժանացնել ձեռնադրության, այն էլ՝ խիստ ընտրությամբ և «թեմի վկայությամբ»²⁰:

ԺԳ կանոնից տեղեկանում ենք, որ մեղքերի խոստովանությունը միշտ չէ որ «առանց դրամի» էր լինում նույնիսկ մահամերձ հիվանդների պարագային: Կանոնը, բնական է, արգելում է դա և սահմանում, որ խոստովանահայրը լինի «ծեբ և գիտուն»²¹:

Ձ կանոնից հայտնի է դառնում, որ եկեղեցական սրբազան խորհուրդներ կնունքը և պսակը, ինչպես նաև թաղումը, երբեմն «զրոյցի ու ծաղրի» էին ենթարկվում²²:

Ը կանոնը անդրադառնում է ամուսնության խնդրին: «Ազգական արյունակիցների» միջև տեղի էին ունենում խոտելի ամուսնություններ, հաճախ նաև անշափահաս տարիքում: Դա թույլատրելի չէ և կանոնով արգելվում է²³:

Կատարվում էր նաև ավելի մեծ հանցանք՝ «պոռնիկներ, շնացողներ, հմայողներ» մտնում էին ընտանիքները և քայքայում դրանք: Դա աններելի մեղսագործություն է. այդպիսիներին նույնիսկ «մարմնաւոր պատուհասիւ» պետք է պատժել: Պետք է միջամտեն նաև աշխարհիկ իշխանավորները, մինչև իսկ թագավորը (ԺԵ)²⁴:

Ի կանոնը նախատեսում է կանխարգելիչ դաստիարակչական միջոցներ, որոնք պետք է իրագործեն հոգևորականները՝ այլերին, կա-

15 Նույն տեղում, էջ 42:
16 Նույն տեղում, էջ 42:
17 Օրմանյան Մ., Ազգապատում, Բ, (Ա), էջ 1626: Հովսեփյան Գ., Չագավանից ժողովը, էջ 30, 37: Խաչիկյան Լ., Խրատական թուղթը, էջ 267—278:
18 Խաչիկյան Լ., Նշվ. աշխ., էջ 274—275:

19 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 303—304:
20 Նույն տեղում, էջ 304:
21 Նույն տեղում, էջ 305:
22 Նույն տեղում, էջ 304:
23 Նույն տեղում, էջ 304—305:
24 Նույն տեղում, էջ 306:

նանց, փոքր տղաներին ու աղջիկներին հավաքելով եկեղեցի և խրատելով ըստ հարկի²⁵:

Ուշագրության արժանի են ժԹ, ԻԱ.—ԻԳ կանոնները, որոնցում շոշափվում են եկեղեցական տուրքերի, հասերի, տասանորդների շրջանառության, քահանաների աշխարհիկ դայվակղուցիությունների խնդիրները: Օրինակ, ժԹ կանոնը սահմանում է, որ եթե որևէ քահանա «նօտարությամբ կամ որսորդությամբ» զբաղվի, պետք է նրան գրկել իր ծխից: Դա միաժամանակ տնտեսական խիստ միջոցառում էր և լուրջ պատիժ տվյալ քահանայի համար²⁶: ԻԱ կանոնի համաձայն քահանային «հաս» պետք է տրվի միայն հոժարությամբ և ոչ հարկադրաբար²⁷: Իսկ ԻԲ կանոնը պարտավորեցնում է քահանաներին ծառայել եպիսկոպոսներին «սահմանեալ հասին և ընծայիք», որպեսզի, ինչպես համապատասխանաբար որոշված է ԻԳ կանոնով, եպիսկոպոսներն էլ իրենց հերթին նույնպիսի հասերով ու ընծաներով «ծառայեսցեն զհայրապետական արթուն» և, որ ամենակարևոր մտահոգությունն էր եկեղեցու համար, «արթուն հաստատ և անկարիք մնան և եկեղեցիքն պայծառ»²⁸: Եկեղեցին վճիռներով ամրացնում էր իր տնտեսական, կենսական հիմքերը:

«Խրատական թղթում» ընդգրկված սահմանք-կանոնների խումբը՝ Ա.—ԺԸ, ինչպես նշել ենք արդեն, Վարդան Արևելցու այս բնույթի երկերի օրգանական մասն է և՛ բովանդակությամբ, և՛ նպատակով, և՛ լեզվածածտժողովյամբ: Մեզ հայտնի է բուն թղթի քաղաքական-հասարակական, եկեղեցավարչական և ազգագրական ու կենցաղագրական ելակետն ու բովանդակությունը:

Ա կանոնը շոշափում է մերձամուսնության ցավոտ խնդիրը: Հորդորում է, որ ամուսնացողները «հինգ ազգօք» (պորտով) հեռու լինեն: Նրանց տարիքը ևս ճշտվում է՝ փեսան 14, իսկ հարսը 13 տարեկանից ոչ պակաս: Հարկ է համարվել հատուկ ընդգծելու, որ հաշվի առնվեն առողջապահական միջոցները՝ կնոջ հղիության ու դաշտանի ժամանակ կենակցություն շինի²⁹: Ինչպես տեսնում ենք, շատ զործնական, հանապազօրյա կյանքի համար անհրաժեշտ ու շահեկան կանոն է:

Քահանային իր ծառայությունների համար զրամով վարձատրելու կամ շվարձատրելու հարցի մասին է խոսվում ժԱ կանոնում: Եկեղեցական խորհուրդներից կնունքը, հաղորդությունը, խոստովանությունը

«ամենևին ձրի» են կատարվում, միայն պսակի, թաղման և մատաղ օրհնելու համար հավատացյալը վարձահատուց պետք է լինի զրամով կամ բնամթերքով³⁰:

«Հիշոցնատվությունը» այստեղ ևս խստագույնս դատապարտված է է կանոնով: Լրացուցիչ մանրամասներ են հայտնվում. պարզվում է, որ հայհոյում էին նաև հավատ, բերան, երես, քահանա, գերեզման...: Կանոնով նախատեսվում է. ամենուրեք ներկա լինի հատուկ հսկիչ՝ «չիշոցալագ», հայհոյողներին խրատելու և տուգանելու համար: Հարկ է համարվում նույնիսկ ծակել նրանց լեզուն, լար անցկացնել և պտտեցնել հասարակության մեջ՝ առ ի դաստիարակություն բոլորի³¹:

Քահանայի դաստիարակչական կոչման մասին է ժԵ կանոնը: Այստեղ էլ հաստատվում է, որ նա տարին երեք անգամ պետք է եկեղեցի հրավիրի «ղարս և զկանայս, և զկուսան աղջկունս և զկուսան կորճերն» ու նրանց խրատ տա իրենց հասակի ու վարքի համեմատ: Հետաքրքիր է, որ հարկ է համարվել կրկնել՝ «զի ամէն հասակի և վարուց և բարուց խրատ ուրիշ է»³²: Այստեղ խոսում է նաև փորձառու մանկավարժը:

Բարոյական և կենցաղագրական առումով կարևոր է սույն թղթի ժԴ կանոնը. «անողորմ» հալածանքի պետք է ենթարկել «պոռնիկներին, հայհոյողներին, կախարդներին», որոնք, ըստ երևույթին, բավականին սովարացել էին հատկապես քաղաքային կյանքի աշխուժացման ու ծավալման հետևանքով³³:

Այս թղթի կանոնների մի ստվար մասը վերաբերում է ազգագրական, հավատալիքային, սովորույթային, ծիսական, հմայական ինչ-ինչ խնդիրների, որոնք զուրկ չեն պատմական ու ճանաչողական նշանակությունից: Դրանք են Բ—Ժ, ժԲ, ժԴ, ժԶ—ԺԸ կանոնները: Անդրադառնաք մի քանիսին: Բ կանոնից տեղեկանում ենք, որ նորածինների օրորոցին կամ թևին կախում էին հմայական ինչ-ինչ առարկաներ՝ շաբր խափանելու հույսով: Կանոնն արգելում է դա և առաջարկում առաջին իսկ հնարավորության դեպքում երեխաներին սովորեցնել խաչ հանել և աղոթքներ մրմնջալ³⁴:

Վերջին ժամանակներս մկրտություններ կատարելիս պատահում է, որ կնքամայր են դառնում կանայք: Այդպիսի դեպքեր, պարզվում է,

25 Նույն տեղում, էջ 308:

26 Նույն տեղում, էջ 307:

27 Նույն տեղում, էջ 308:

28 Նույն տեղում, էջ 308—309:

29 Խաչիկյան Լ., Խրատական թուղթը, էջ 262:

30 Նույն տեղում, էջ 284:

31 Նույն տեղում, էջ 283:

32 Նույն տեղում, էջ 284:

33 Նույն տեղում, էջ 284:

34 Նույն տեղում, էջ 282:

որ եղել են նաև հին օրերում: Դ կանոնն այդ պատճառով որոշում է, որ կինը կամ այլազգին չեն կարող կնքամայր դառնալ³⁵:

Հաղորդության խորհուրդը կարևոր տեղ է գրավում քրիստոնեական եկեղեցիների ծիսակատարության և ուսմունքի մեջ: Զ կանոնի համաձայն հաղորդվելուց առաջ նախապատրաստական ինքնամաքրման աշխատանք պետք է տանել, այն է՝ երեք օր անկողինը պահել «օրինավոր», չհայհոյել, շարախոսել, չմատնել, չխաբել, չբամբասել, ամբարտաձան չլինել, շատ և «անսուրբ» կերակուր չուտել, բերանը մաքուր պահել իբրև «զաստուծոյ դուռն», քանի որ հաղորդությունը աստվածորդու մարմինն է խորհրդանշում³⁶:

Ժուժկալության ու մաքուր կենցաղի մասին է նաև Ը կանոնը: Այստեղ հիմնականում խոսքը պահքին ու պահեցողությանն է վերաբերում: Որոշվում է՝ այդ ընթացքում պսակ և ամուսնություն չկատարել և զգայական վայելքներից հեռու մնալ, ձուկ չուտել, գինի չխմել...³⁷:

Ազգագրական բավականին լուրջ հետաքրքրություն են ներկայացնում հմայական բնույթի խնդիրներին նվիրված կանոնները: Օրինակ, Ք կանոնից տեղեկանում ենք՝ «Դարի և ալիւր և աւազ և ուլուն և ջուր մի դիմեցնեն, և խտրութիւն հաւոց թոշման և կոշման, և մարմնոց խաղալոյ, և երազոց, և ձայնի կրակոյ և դրան, և սողնոյ ինչ երեւելոյ ի տանն»³⁸: Կամ հաջորդ՝ Ժ կանոնը՝ «Ի քաջախաւս և յերազահան մի՛ որ երթիցէ և լեկրոտի մալմտն աղի մի իշխեսցեն ածել և մի ի բանից նոցա խարեսցին»³⁹: Այդպես է նաև ԺԲ կանոնը, որն ակամա հաստատում է, որ դեռ XIII դարում պահպանվում էին ոչ միայն սին հալատքի զանազան դրսևորումները, այլև շատ որոշակի՝ հեթանոսական սովորություններն ու բարքերը, օրինակ, մեռելի համար մազ կտրելը, սև հագնվելը, ձեռք ու երես խեղելը, լալկան կանայք վարձելը, «խաւարարգել» (այսինքն՝ լույսից, արևից զուրկ) լինելը, «զի հեթանոսաց (է) և ոչ քրիստոնէից այդպիսի արէնք»⁴⁰:

Շատ ուշագրավ է մանավանդ ԺԷ կանոնը, որտեղ դատապարտված են աշխատանքային և առևտրական հարաբերություններում նկատված խարդախությունները: Կանոնը քրիստոնեյա հավատացյալներին չգու-

շացնում է, որ «արք և կանայք, հաղկիցք և խապկիցք, և զինուորակիցք և արուեստակիցք, զնաւըք և վաճառաւըք...»⁴¹ իրար չխաբեն:

Վարդան Արեւելցու կանոնական բնույթի հիշյալ երկերում օգտագործված են որոշ բառանուններ (տերմիններ), որոնք այսօր այնքան էլ պարզ ու հասկանալի չեն և կարոտ են լրացուցիչ բացատրության: Նման փորձի դիմել են Գ. Հովսեփյանն ու Լ. Խաչիկյանը իրենց այս կապակցությամբ հիշատակված աշխատություններում: Անհրաժեշտաբար մի համեատ փորձ էլ մենք ենք հարկ համարում կատարել՝ լրացնելու նրանց տեսողատից վրիպած բառանունները, իսկ որոշ դեպքերում՝ նաև բացատրությունները:

Այսպես.

Չեռնաւորութիւն (Չադաւանից «Սահմանք») ⁴²— Առնչվում է հարկահավաքման համակարգին: Ինչպես պարզվել է քննություններից, այն պաշտոնյան, որը զանձել է պարոնին հասնող հարկը «ձեռնավորութիւն» է կատարել, ինքն էլ կոչվել է «ձեռնավոր», այսինքն՝ կատարածու: Նման վարչական պաշտոն միջին դարերում եղել է նաև Վրաստանում և Հայաստանին հարևան որոշ երկրներում⁴³: Կա նաև «ձեռնաւորի հարկ» ըմբռնումը, ըստ որի այդպես է կոչվել ձեռնավորի հավաքած կամ իրեն բաժին հասած հարկը: Պարզ է, թե զանազան նյութական շարաշահումների ինչ լայն հնարավորություններ կարող էին լինել: Հոգևոր սպասավորին նման պաշտոնը պատշաճ չէր կարող համարվել, ուստի և արգելվել է այս առիթով⁴⁴:

Մոնեւորյուն (նույն «Սահմանք»-ում) ⁴⁵— Նույնպես վերաբերում է հարկահավաքման համակարգին: Առաջին անգամ կիրառվել է այստեղ: Գ. Հովսեփյանն այս առնչությամբ վկայակոչում է Ս. Ամատունուն, որը հայտնում է, թե «խոյեցւոց և աշտարակեցւոց բարբառով «մոնեւոր» բառը բացատրված է որպես «հարսանիքի գինու և պաշար-ների վրա հսկող անձը», իսկ «մոնեւատուն» է կոչվում այն սենյակը, ուր պահվում են հարսանիքի գինին ու պաշարները»⁴⁶: Սակայն միան-

41 Նույն տեղում, էջ 284:

42 Տե՛ս Հովսեփյան Գ., Զագաւանից ժողովը, էջ 34—35: Այստեղ վկայակոչվում է նաև Ն. Մառի «Новые материалы по армянской эпиграфике (с. 89—90) աշխատությունը: Վերջինս անդրադարձել է այս բառանվանը՝ առաջին անգամ կիրառված Տաթևի վանքի մի արձանագրության մեջ:

43 Նույն տեղում, էջ 34:

44 Նույն տեղում, էջ 44:

45 Նույն տեղում, էջ 35:

46 Նույն տեղում, էջ 35: Ուշագրավ է նաև Ս. Մալխասյանի վկայությունն այս մասին, ըստ որի ձեռնավորը ևս հացկերությունների ժամանակ իբր մատուցակ սպասավորող անձն էր. Բացատրական բառարան, Գ, էջ 166:

35 Նույն տեղում, էջ 282:

36 Նույն տեղում, էջ 283:

37 Նույն տեղում, էջ 283:

38 Նույն տեղում, էջ 283:

39 Նույն տեղում, էջ 283:

40 Նույն տեղում, էջ 284:

գամայն իրավացի է նա, երբ «Սահմանք»-ի մեջ ձեռնավորության հետ կողք կողքի նշված «մուճուրույունը» տարանջատում է այս բացատրությունից և գտնում, որ այն ձեռնավորության հետ նույնիմաստ է. «նույնպիսի տեսչություն էր՝ հավաքված պարոնական արդյունքների կամ հարկերի վերաբերությամբ»⁴⁷:

Այս առնչությամբ կարելի է անել նաև հետևյալ ենթադրությունը. քստ երևույթին «մուճուր»-ը փոխառություն է արաբերենից. արմատն է اجر, նշանակում է վարձ, որից اجر վարձակալ, այստեղից էլ՝ «մուճուրույունը»՝ վարձ-հարկերի հավաքումը, տվյալ դեպքում՝ պարոնի համար: կարելի է մտածել նաև այսպես. «մուճուր»-ը, թերևս, կազմված է արաբերեն اجر բառից՝ կատարվել, կատարել, որից ب عمره կատարող, կատարածու իմաստով:

Կարծում ենք «մուճուրույուն»-ը դարերի ընթացքում առնչվել է վերոնշյալ բոլոր բացատրություններին, տարբեր կիրառություններում համապատասխանաբար ունեցել նշված իմաստներից այս կամ այն մեկը: Դա պատշաճում է նաև «Սահմանք»-ի կիրառությանը, քանի որ ինչ իմաստով էլ այն ընկալվի, մուճուրույունը զբաղվելը քահանային վայել գործ էր կարող համարվել*:

«Հաղկից» («խրատական բույր») — Միանգամայն ճշմարտացի է և. Խաչիկյանի բացատրությունը՝ «հաղկից»-ները նույնացնելով «հարակալների» հետ⁴⁸: Ավելորդ էր լինի նաև հետևյալ ենթադրությունը. թերևս այս տերմինը ևս արաբական փոխառություն է, կազմված حق արմատից՝ իս—ղ հնչյունափոխությամբ, որ «իրավունք» է նշանակում: Այսօր էլ ժողովրդական խոսակցության մեջ ասվում է. «իմ հախը տուր ինձ», «դու այստեղ հախ շունես»: «Հաղկից»-ը ամենայն հավանականությամբ, ունեցել է իրավակցի, բաժնեկցի, կիսրարի իմաստ:

«Խապկից» («խրատական բույր») — Գործածվել է «Հաղկից»-ից անմիջապես հետո: և. Խաչիկյանը այս մասին էլ տալիս է լիովին ընդունելի բացատրություն⁴⁹: Փոխառություն է արաբերեն خا արմատից, որը նշանակում է աման: Կշեռքի փոխարեն իբրև շափի միավոր օգտագործվում էր որևէ աման, թաս կամ կաթսա, որով բաժ-

նեկիցները ստանում էին իրենց հասանելիքները, այստեղից էլ՝ «խապկից» նշանակել է բաժնեկից: Թե՛ «հաղկիցները», թե՛ «խապկիցները» կարող էին ղեղձումներ կատարել, իրար խարել, ուտի, նրանց նման քարքաներից զգուշացնում է «Սահմանքի» ժէ կանոնը, ճիշտ այնպես, ինչպես և առևտրի բնագավառի մարդկանց՝ «գնողներին և վաճառողներին»⁵⁰:

«Արդեանց պտուղը», «մատաղենին», «խաչահամբույրը», «ժամուցը» «քահանայական տուրքի» տեսակներ են (Չագավանից «Սահմանք»):

Արդեանց պտուղ — Գյուղացիների ստացած տարեկան մթերքներից քահանային հատկացված բաժինը:

Մատաղենին — Քահանան օրհնում է մատաղացուն և օգտագործվելիք աղը. դրա համար նրան տրվում էր իր բաժինը: Հայտնի է, որ վանքերում կամ նրանց մերձակա վայրերում զոհաբերված մատաղացուի առաջին ռոքերից մեկը՝ «երին» տրվում էր ընթերակից վանքին: Արդյո՞ք գյուղերում զոհաբերման ժամանակ քահանային ևս սահմանված «երի» էր տրվում, թե ինչ-որ քանակով մատաղի որևէ կտոր:

Խաչանամբույր — Ամենատարածվածն է: Հիմնականում դրամական այն նվիրատվությունն է, որը գոյանում է հավատացյալների միջոցներից՝ քահանայի կատարած եկեղեցական որևէ խորհրդից՝ կնունքից, պսակից, նաև թաղումից անմիջապես հետո, քահանայի ձեռքի խաչը համբուրելով, որից և՛ «խաչահամբույր» բառանունը:

Ժամուցը նույնպես եկեղեցական նվիրատվության ձև է. մթերքը կամ դրամը տրվում էր ժամարար քահանային, որպեսզի նա պատաբազի ընթացքում հիշատակի նվիրատուին ու նրա հարազատներին կամ հոգեհոսնակի ժամանակ՝ «հին ու նոր» ննջեցյալներին: Այստեղից էլ «ժամուցը» կոչվում է նաև «խիշիկ»՝ հիշման համար տրված նվեր կամ տուր:

Դեղ («Սահմանք») — Դիտող, տեսուչ, վերակացու: Ասված է քահանայի համար, որն իբրև «դէտ» հսկում է իր ծխի ընտանիքների ու անդամների վարքագծին: Տվյալ դեպքում ընդգծվում է քահանայի ոչ ծխակատար, այլ ավելի դաստիարակ լինելու հանգամանքը:

Կաբուր («Սահմանք») — Բառանունը բազմիմաստ է, բայց, կարծում ենք, տվյալ կիրառության մեջ նշանակում է՝ «կարի ընտանի մերձառ» ազգական⁵¹, որոնց կանոնով արգելվում է ամուսնանալ իրար հետ: Նոր Հայկազյան բառարանում այս առնչությամբ հետևյալ բնորոշ

⁴⁷ Նույն տեղում, էջ 35:

* Գ. Հովսեփյանը այս առիթով նրբորեն նկատում է, որ «Սահմանք»-ի թ կանոնի «թեթև պահեն» և «վաստակացն ազնեն» բառակապակցությունները ևս առնչվում են հարկային համակարգին: Տե՛ս մանրամասն՝ նշվ. աշխ., էջ 35—36:

⁴⁸ Տե՛ս և. Խաչիկյան, Խրատական բույր, էջ 277—278:

⁴⁹ Նույն տեղում, էջ 278:

⁵⁰ Նույն տեղում, էջ 284:

⁵¹ Տե՛ս նոր Հայկազյան բառարան, Ա.

մեջբերումն է կատարված Հովհաննես Երզնկացու խրատներին. «Որք կամին ամուսնանալ կարևորը չլինին, կամ կնքատրք» («կնքատրք»-ի մասին՝ բիշ հետո)⁵²: Այս «խրատը», Երզնկացու խոստովանությանը, քաղել է Վարդան Արևելացու երկերին, թերևս և հենց վերոնշյալ Ժ կանոնին, ուստի ավելի ևս հիմնավոր է դառնում մեր ենթադրությունը:

Մեկիտա («Սահմանք») — Գ. Հովսեփյանի տված բացատրությունը, կարծում ենք, քաղարար չէ⁵³: Բայց աղավաղված է, պետք է լինի «սինդեկնոս»: Թեև հայերեն «սինդեկնոս» փոխառությունը ևս պատահում է, բայց այս կանոնում դրան վերապահված իմաստը չի արդարանում: Մեկիտաը հմայության, դյութանքի հետ է կապված, կախարդ իմաստն ունի և տվյալ դեպքում ընդունելի չէ: Իսկ «սինդեկնոս» մեր սրբագրումը, կարծում ենք, միանգամայն իրավացի է: Ինչպես տեսանք «կարևոր» բառանունը այս միևնույն կանոնում «սինդեկնոս»-ից անմիջապես առաջ է գործածված իբրև «շատ մերձավոր ազգական» մատնանշող բառանուն: «Կարևորներին» և «սինդեկնոսներին» (ճիշտը՝ սինդեկնոսներին) կանոնը արգելում է իրար հետ պահվել: «Կարևոր»-ներին պարզ է, թե ինչու (հակառակ դեպքում տեղի կունենար մերձամուսնություն), իսկ՝ «սինդեկնոս»-ներին՝ Սա էլ շատ պարզ է, քանի որ սինդեկնոսը ևս փոխառություն է հունարենից (հունարեն *σύνδεκνος*) և նշանակում է «համածին, համածնոց», կամ որդիացեալք ի սուրբ առաջանէն (Մկրտումեան—Փ. Ա.)՝ սրպէս կնքահայր և սան»: Հիշենք Հովհաննես Երզնկացու «կնքատրք» տերմինը, որ սույն իմաստով է գործածված «սինդեկնոսի» փոխարեն:

Մեղմագնաց — Հանդիպում է միայն այս «Սահմանք»-ի Բ կանոնում: Գ. Հովսեփյանը քաղարարվում է վկայակոչելով Հովհաննես Երզնկացու խոսքը, որն առնչվում է Վարդան Արևելացու այն խրատներին, որոնցից ինքն օգտվել է: Հովհաննես Երզնկացին «Մեղմագնացը» փոխարինել է «շնացող» բառով: Հ. Աճառյանը այս նույն հիմքի վրա գրում է՝ «անառակ»: Նոր Հայկազյան բառարանում այս մասին ոչինչ չկա: Հունարեն հնարավոր արմատները պատշաճ գրեթե ոչինչ չեն տալիս: Ստիպված ենք առաջիմ գոհանալ Հովհաննես Երզնկացու բացատրությանը՝ իբր «շնացող»-ի, քանի որ, ըստ հիշյալ կանոնի, մեղմագնացը ևս, ինչպես «չիշոցնատուն», չի կարող կնքահայր լինել:

Հմայական բովանդակություն ունեն «Նրատական թղթի» հետևյալ տերմինները⁵⁴.

52 Նույն տեղում:

53 Հովսեփյան Գ., Ձագավանից ժողովը, էջ 44:

54 Տե՛ս Խաչիկյան Լ., Նրատական թուղթը, էջ 276—278:

Ակրոս — Այն դիվահար պարողն է, որը պարի ընթացքում «մարգարեանում», պատգամներ էր տալիս շրջապատի հավատացյալներին և զանազան գուշակություններ անում:

Երազանան — Պարզ է իմաստը՝ երազներ բացատրող, ըստ երազների ապագան կանխատեսող, որ շատերի համար կարևոր անձ էր սին հավատալիքները բարձր գնահատող միջնադարում:

Քաջախոս — Քաջ արմատից, սակայն՝ դե, շար ոգի, սատանա իմաստով, այսինքն՝ դեի կամ սատանայի թելադրությամբ խոսող, տվյալ դեպքում՝ գուշակող, պատգամող անձ: Ահա թե ինչու այս երեք կարգի խաբեբաներից էլ զգուշացնում է բուն կանոնախմբի Ժ կանոնը՝ «մի՛ է քանից նոցա խաբեսցին և մի՛ հաւատասցեն բնաւ»⁵⁵:

Վանականների կյանքին են առնչվում «Սահմանք»-ի տերմիններից հետևյալները.

Մայրագիր — Վանքերում կենցաղավարել է մայր «որդեգրելու» սովորույթը: Վանականներից ոմանք, «խնամքի» կամ այլ «բարի» նպատակներով, հարազատ մորից բացի, որևէ կնոջ ընդունել են իբրև երկրորդ մայր, որպեսզի նա ազատ ելումուտ ունենա իրենց մոտ: Հասկանալի է, թե նյութական և բարոյական ինչ մեղսագործություններ են տեղի ունեցել և կարող էին տեղի ունենալ այդ պատճառով: Այդպիսի «մայրագիրն» արգելելու հատուկ որոշում է կայացվել:

Քարագիր — «Մայրագիր»-ի տարբերակն է, միայն տվյալ դեպքում որդեգրվողը ոմն «բույր» է, որն, անշուշտ, մեղանչելու ավելի մեծ հնարավորություններ կարող էր ստեղծել: Նույն կանոնով դա էլ է արգելվում:

Փոքրապան — Մենք այս մասին արդեն խոսել ենք: Փոքրապանը այն ավագ կամ տարեց վանականն էր, որն իր մոտ «փոքր» (մանուկ) տղա էր պահում՝ իրեն ծառայելու նպատակով: Սա ևս դատապարտվում էր, որովհետև կարող էր նույնպես մեղքերի դուռ բանալ:

Անուրանոտ — Սովորական իմաստը տվյալ դեպքում անկարելի է հաշվի առնել, քանի որ կանոնում (Լ) հրահանգվում է, որ արեղա դառնալու համար թեկնածուն պետք է սարկավագ լինի և՛ «անուշահոտ գտեալ տարի մի»: Խոսքը մի տարի անուշ բույր արձակելու մասին լինել չի կարող: Կարծում ենք, որ նա պարզապես մեկ տարի հաճելի, քաղցրաբարո պիտի լիներ, որպեսզի հավանության արժանանար: Ուստի, «անուշահոտ»-ն այս դեպքում «քաղցրաբարո» իմաստով է կիրառված:

55 Նույն տեղում, էջ 276:

Հաւելիք— Սրան ևս մի քանի իմաստ է վերագրվում: Մենք ճիշտ ենք համարում դա մեծաբանքի, պատվելու, կոչունքի հետ առնչելու նոսելով նորապսակների մասին, Գ կանոնը ճշտում է, թե 40 օրվա ընթացքում նրանք ինչպես են վարելու և տնօրինելու իրենց կյանքն ու ժամանակը. այդ թվում սահմանում է, որ «և Գ (3) օր հարկիք դնեն», այսինքն, մեր կարծիքով, խնջույք, կոչունք, հյուրընկալություն կատարեն:

Զուխա— Ասվից կամ բամբակից պատրաստված կտորեղեն: Այս դեպքում՝ այդ կտորեղենից կարված համազգեստ, կապա, որը հագնելու էր աբեղա ձեռնադրվող թեկնածուն:

Վարդան Արևելցին այս կանոնական բնույթի երկերը հորինելիս առաջնորդվել է մաննավորապես եկեղեցական իրավագիտությունն տեսնելուց, նրա ուսմունքի ու ծիսակարգի թելադրությունից, սակայն, պետք է զնահատել նաև այն ամենը, ինչը իրենն է՝ իրրև հեղինակի: Հարկ է ընդգծել, որ նա խնդրո առարկա է դարձրել գերազանցապես առօրյա, գործնական, հասարակական, դաստիարակչական խնդիրները և ոչ ի մասնավորի աստվածաբանական-դավանաբանական հարցեր:

Վարդան Արևելցու համար իրավունքը ամենից առաջ բարոյական կատեգորիա է, կոչված կարգավորելու թերևս ոչ այնքան սոցիալ-հասարակական հարաբերությունները, որքան հասարակական մարդու ներքին էությունը, բարոյական համոզմունքները, խիղճը... քանի որ մարդուն արժեքավորոզն ու զարդարոզն էլ այս վերջիններն են: Սահմանը-կանոնների ելակետն ու նպատակը մարդկանց բարոյական դաստիարակությունն է:

Նրա սահման-կանոնների տիրական գործնականությունը մնում է ընդգծելի՝ իրրև նշանակալից քաջ դեպի շոշափելի, իր կողմից բավականաչափ դիտարկված ու բմբռնված իրականությունը, այստեղից էլ դրանց պատմական, ճանաչողական ու մշակութային արժեքը: Դրանք պարզապես բարոյական կոդեքսի բաղադրիչ հատվածներ չեն, այլ հենց կյանքի թելադրությամբ ծնված իրավաբարոյական նորմեր:

Արևելցու համար, բնական է, որ օրենքը, սովյալ դեպքում՝ կանոնը, սուրբ է, գոնև հիմքում սուրբգրային կամ աստվածային, բայց դա նրա կողմից չի ակնարկված անգամ, որ ինքնին անհետաքրքիր չէ: Այն հրապարակ է գալիս իբրև բնական անհրաժեշտություն, պահանջ, միջոց, որով կարելի էր դիմագրավել իրականության ու շրջապատի առավելապես ոչ բարեբար ներգործությունը մարդու վրա: Նրա տեսադաշտում են ոչ թե աստվածաբանական դոգմաների դեմ եղած զանցանքները, այլ կաշառքը, գողությունը, առևտրի մեջ հնարավոր խաբեբայությունները, քահանայի կողմից կատարվող նյութական կորզումները,

անչափահասների և մերձավորների խոտելի ու տարաբախտ ամուսնությունները, վանական կյանքում «մայրագիր»-ի և «քորագիր»-ի շարաքաստիկ գործարքները, կենսունակ հմայական արարքները, հեթանոսական վերապրուկները...: Կյանքը սրանցով էր առլցված: Դա տեսել է Վարդան Արևելցին և փորձել դարման գտնել:

Վարդան Արևելցին հավատում է, որ հիշյալ սահման-կանոններով և ատյաններով որոշված մեղսաքավիչ պատժամիջոցները, հենց իրենք՝ կանոնները անպայման ունեն ներգործող, ուղղիչ ուժ, և դրանց ենթարկվող անձինք մարմնում, վերանորոգվում են. դրա մեջ էր տեսնում այն միակ ճանապարհը, որով նրանք կարող էին արժանանալ Քրիստոսի տեսությունը. «...այս է ճանապարհ քրիստոնէից, որ առ-Քրիստոս կամին գնալ»⁵⁶: Նա դրանց գրեթե այնպիսի կարևորություն է վերապահում, ինչպես ավետարանական պատգամներին:

Սահման-կանոնները անզոր քարոզներ ու խրատներ չէին, այլ իրավական ուժ ունեցող գործնական որոշումներ, և հեղինակը (հիշենք՝ միջնադարում) իրավունք ունեի այդ նկատառումներով հավատալ նրանց ներգործող ուժին: Սա, իբ հերթին, որոշակի իմաստասիրական և բարոյաիրավագիտական աշխարհայացքի դրսևորում է:

Ամենաբարձր իրավադատը նրա համար ևս նախախնամությունն է, Աստվածն ինքը: Բայց սա՝ ընդհանրապես, ինչպես և ընդհանրապես՝ թագավորը կամ կաթողիկոսը: Սակայն իրականում իրավադատությունն անմիջականորեն վարում էին եպիսկոպոսը և նրանցից կազմված եկեղեցական ժողովները: Այստեղ էլ Վարդան Արևելցին համեմատաբար ավելի գործնական է և հետևողական հայ եկեղեցու իրավամտածողության նկատմամբ, ըստ որի իրավաբար գերագույն իշխանությունը գործնականում ազգային-եկեղեցական ժողովն է: Այս եզրակացությունը հետևանք է ընդհանրապես պատմական այն իրողության, որ Հայաստանում պետական կենտրոնացված իշխանության պակասը հաճախ է զգացվել և եկեղեցին փոխարինել է նրան: Սա չի նշանակում, թե ամեն դեպքում դատական գործընթացները նման ժողովներն էին իրականացնում, այլ հիմնականում թեմակալ եպիսկոպոսների գլխավորությամբ կազմված ատյանները:

Այսպիսով, Վարդան Արևելցու կանոնական բնույթի երկերը ունեն քառակի նշանակություն և արժեք. նախ՝ իրավագիտական, պատմա-ճանաչողական, երկրորդ՝ արտացոլում են նրա սոցիալական, հասարակական, բարոյական, մասամբ՝ մանկավարժական հայացքները,

56 Հովսեփյան Գ., Չաղափանից ժողովը, էջ 45:

երբորդ՝ կազմելով նրա մատենագրական վաստակի մի ուրույն ու կարևոր բնագավառը, ամբողջացնում և հարստացնում են այն, շորբորդ՝ իրենց հերթին իմաստավորում են հեղինակի հասարակական գործունեությունը և ներկայացնում նրա իբրև կանոնագիր իրավագետի իրավամտածողությունն ու բարոյական ըմբռնումները անհատի և հասարակության վերաբերյալ:

Ըստ այսմ ոչ միայն բացահայտվում է Վարդան Արևելցու, իբրև հասարակական-եկեղեցական բազմակողմանի գործչի և բազմաթանր մատենագրի արդյունավետ գործունեության մի շատ կարևոր բնագավառը ևս, այլև ընդգծվում ու արժեքավորվում են նրա անհատականությունն ու քաղաքացիական գործարար վարքագիծը:

Գ Լ Ո Ւ Խ Է Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

ՔԵՐԱԿԱՆԱԳԵՏԸ

Հայ միջնադարյան քերականագիտության մեջ կարևոր տեղ են գրավում Վարդան Արևելցու քերականական աշխատությունները: Ակնատու է հեղինակի հմտությունը քերականության պատմության, քերականական կատեգորիաների ու բազմազան եզրերի, լեզվագիտության, բարբառագիտության, պոետիկայի և աղբյուրների հարցերի իմացության մեջ: Առավել նշանակալից են նրա նորարարությունը, թարմ խոսքը, դեմոկրատական կողմնորոշումը, աղատ, նույնիսկ համարձակ քայլերը լեզվամտածողության և լեզվի կիրառության կարևոր խնդիրներում:

Կարծում ենք, այստեղ հանդամանալից վերլուծության հարկ չկա, քանի որ դա հիմնականում կատարված է մասնագետ լեզվաբանների կողմից¹:

Գոհանանք Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» և «Մեկնութիւն քերականին» աշխատություններում արծարծված միայն մի քանի առավել կարևոր հարցադրումներին անդրադառնալով, կրկին ընդգծելու նշված երկերի հիմնական արժանիքները և ընդհանուր գծերով ներկայացնելու հեղինակի քերականագիտական սկզբունքները, հմտությունն ու նորարարությունը:

«Մեկնութիւն քերականին»-ն Վարդան Արևելցու քերականական առավել ծավալուն և ծանրակշիռ երկն է: Այստեղ նախ դրվում է քերականության՝ իբրև գիտության բնորոշման կամ սահմանման հարցը. Վարդան Արևելցին ավելի պարզեցնում և ընդարձակում է Գրոնիսիոս թրակացու սահմանումը: «Քերականութիւն և հմտութիւն...» բնաբանը մեկնաբանելիս նա ջանում է ընդլայնել «հմտութիւն» բառի իմաստային սահմանները, չի գոհանում ոմանց տված բացատրությամբ, թե իբր այն «ծանոթութիւն» կամ «տեղեկութիւն» է նշանակում. «...զի տե-

¹ Տե՛ս մանրամասն՝ Խաչիկյան Լ., Վասն բանին մասանց, էջ 85—88: Զանուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատություններ, էջ 243—259: Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականին, էջ 48—89:

ղեկութիւն չէ բոլորովին գիտութիւն» իրավացի առարկում է նա²: Իսկ քերականութիւնը, ըստ նրա, գիտութիւն է, թեկուզ «մասնակի», որովհետեւ «կատարեալ գիտութիւնն աստուծոյ միայն է»³: Դրա համար «հմտութիւնը» սրամտորեն ստուգաբանում է «հնմտութիւն» բառիմաստով, իբր՝ «հունի» մեջ մտնելով միայն կարելի է հասնել ճշմարիտ գիտութեան: Իսկ եթէ գոհանանք լոկ «ծանոթութեամբ», ապա պարզապէս «անգետ նախնիներին» կրկնած կլինենք, կամ, ինչպես անասունները, կգնանք մեզ համար արդեն «սովորական տեղերով»⁴: Ուստի «հմտութեամբ» պետք է առաջնորդել, որովհետեւ դա է իրերի ու երևույթների էությունը ճանաչելու ճշմարիտ ուղին, այսինքն՝ խսկական գիտութիւնը մարդու կարողութեան սահմաններում: Քերականութիւնը հենց այդպիսին է:

Այնուհետեւ սույն աշխատութեան մեջ մեկնարանվում են ճանաչողական բնութիւնը բառական եզրեր՝ ստուգաբանութիւն, համեմատութիւն, դատումն, վերծանութիւն, ենթադրատութիւն, ապա առողջանութեան հետ կապված որոշ հասկացութիւններ՝ տրոհութիւն, զիցազնաբար վերծանումն, կատակերգութիւն աշխարհօրէն, դամբանականն ու ժգնակի, տաղն քաջոյորակի, քնարական քերթութիւնն ներդաշնակապէս, խանդաղատականն թույլակի և աշխարհապէս, ուրուակ, շիշտ, բութ, պարոյկ⁵: Այս վերջին կարգի հասկացութիւնների մեջ են մասամբ ամփոփված նաև վարդան Արևելցու երաժշտատեսական ըմբռնումները, որոնց կանդորական նշանների մասին, որոնք երեքն են՝ «կէտ աւարտեալ, միջակ, ստորակէտ»: Գրանք իրարից տարբերող հիմնական գործոնը «ամանակն» է, «որ մասն ի ժամանակէն»⁶: Դրական-տեսական բովանդակութեամբ տերմիններ ևս քննարկված են այստեղ, ինչպես «հագնեցութիւնը», որոնց դարձյալ կանդորադառնանք առանձին⁷:

«Մեկնութիւն քերականի» երկի մեջ միաժամանակ տեղ են գտել տառի, գրի, ձայնավորների, բաղաձայնների, երկբարբառների, հնչույթի, դրա երբեմն երկակի արտաբերման հետ կապված ուշադրով խորհրդածութիւններ⁸: Ուշադրութեան արժանի են առավելապէս հետևյալ մի

քանի կետերը: Այստեղ արձանագրվել է հայերեն բարբառների մասին հնագույն վկայութիւններից մեկը, որով մի անգամ ևս հաստատվում է, որ V դարում եղել են հայերեն բարբառային խոսվածքներ, ինչպես հավաստվում էր դեռևս Կորյունի, Եղնիկի, Խորենացու երկերի ու Գիտնիսիոսի «Քերականութեան» հայերեն թարգմանութեան մեջ⁹: Արևելցու սույն վկայութիւնն աճելի որոշակի է դառնում նաև, երբ նույն երկում խոսվում է լծորդութիւնների մասին: Այսպես. «Ձեջ և զԱյր դասէ ի միում հեգի, և զԿորճէիցն յայտնէ մեզ զթանձր և զբարբարիկոն բառն, զի նոցայց զայս բառ՝ գեամ, զոր մեր գամ՝ ասենք, զի զայս Բարբառատեցին ասէ և Գորոզացին: Եւ զլարկեմն և զլղեմն՝ յղոմ, և զոյսն՝ լուս ասեն ոմանք, և զգայն՝ գոյլ, և զգառնն՝ գոռն»¹⁰: Միանգամայն ճիշտ է ն. Արտնցի եզրակացութիւնը. «Այս խոսքերը կասկած չեն թողնում, որ հայկական մի քանի բարբառների համար այնքան բնորոշ առանձնահատկութիւնը, կոկորդայինների քմայնացումը կամ յտացիան (Կ, Գ լիտանակ Կ, Գ) գնում է ժամանակների խորքը, մինչև վարդանը, և բոլորովին էլ վերջին դարերի արդուներ չէ՝ կաղմավորված թուրք-թաթարական բարբառների ազդեցութեամբ, ինչպես ընդունված է կարծել»¹¹:

Վարդան Արևելցին հայերենի «հարստութեանը և փարթամութեանն» է վերագրում հայերեն բառերի սեռային հատկանիշներից կամ վերջավորութիւններից ազատ լինելը¹². դա ճիշտ և գիտականորեն արժեքավոր կարծիք է: Նման տեսակետ լեզվաբանութեան տեսութեան մեջ հիմնավորվել է XIX դարից ոչ շուտ: Այս առիթով նա խորհրդածում է, որ հայերենում «մեծապէս աշխատելու» հարկ չկա, «բնտրութեամբ» խոսելու դժվարութիւն չկա՝ բառերի իգական, արական ու շեղոք սեռերը նախապէս ճշտելու և ըստ այդմ էլ համապատասխան վերջավորութիւն գտնելու համար: Այդպէս ստիպված են անել հույները, լատիները, ֆրանկները, բայց ոչ հայերը: Այստեղ միաժամանակ ի հայտ է գալիս հիշյալ լեզուների նրա իմացութիւնը: Ընդգծելով հայերենի «փարթամութիւնը», նա շոյում է նաև իր ու իր ընթերցող ազգակիցների մայրենի լեզվի նկատմամբ ունեցած զգացումները:

Ակնառու է հեղինակի լեզվաբանական հմտութիւնը հայերենի հնչյունաբանական համակարգի քննութեան խնդրում: Նա ժանոթ է յուրաքանչյուր հնչույթի արտաբերման եղանակին և կարողանում է ճշր-

2 Վարդան Արևելցի. Մեկնութիւն քերականի, էջ 73:

3 Նույն տեղում, էջ 73: Հմմտ., էջ 76:

4 Նույն տեղում, էջ 73:

5 Նույն տեղում, էջ 74—80:

6 Նույն տեղում, էջ 82:

7 Նույն տեղում, էջ 83—84:

8 Նույն տեղում, էջ 84—94:

9 Նույն տեղում, էջ 12—13:

10 Նույն տեղում, էջ 130—131:

11 АѠОНА Н., նշվ. աշխ., էջ LX—LXI: Բերում ենք ըստ Գ. Զահուկյանի թարգմանութեան: Տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 247:

12 Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, էջ 90:

տարեն նկարագրել այն, նշելով շրթունքների, քիմքի, կոկորդի, լեզվի մասնակցությունը շափն ու ձուր: Օրինակ. է, Կ և Ղ գրերի կապակցությունը գրում է. «Վասն զի այն, որ լեզուին ծայրին գայ ի յասելն և շրթանն ծայրին՝ նա այն նաւար է եւ որ լեզուին միջաւրն ասի կամ լնդաւրն՝ այն հաստ և թանձր է, որպէս թօն և կամ Քէն: Իսկ որ լեզուին տակաւրն ասի՝ այն միջակ է, որպէս Գիմն և կամ Կենն և այլ այսպիսիք»¹³ կամ հետևյալը. «Արա ընտրութիւն, ո՛վ ուսումնասէր, և բաժանեա լեզուաւդ և բերանովդ, թէ ո՞ր են, որ լեզուին ծայրն առնու և կամ զո՞ր՝ մէջն, կամ՝ ո՞ր են, որ տակաւք լեզուին ասին կամ շրթնամբքն և կամ լնդաւրն...»¹⁴: «Կրկնակք» միավորյալ հնչույթները բացատրելիս, գրում է. «Կրկնակք վասն այնորիկ ասին, զի Յօն լնու զսէին և զՏիւնին տեղիսն, որպէս թէ կամենաս ասել՝ աստուածազգեստ և աստուածազգեստ...»¹⁵: Եվ այսպես նաև մի շարք այլ դեպքերում:

Վարդան Արևելացին խոսում է նաև վանկի մասին, տարբերակելով երեք տիպ՝ երկար, սուղ, հասարակ: Վանկը՝ «երկար» է, երբ «երկամանակ» ունի, և «սուղ» է, երբ շունի, որովհետև «երկամանակն պատճառ է երկամանակն և սղիցն», հասարակ վանկը՝ «առնու ի յերկամանակն և սղիցն, ըստ պիտելոյն»¹⁶:

Անցնելով ձևաբանական կարգերի մեկնությունը, հեղինակը նախ բացատրում է բառը, ապա «բանը» (նախադասությունը), այնուհետև ութ մասունք բանին՝ անունը, լծորդությունը, ընդունելությունը, հոշը, գերանունությունը, նախադրությունը, մակբայը և շաղկապը¹⁷:

Բառը թեև «ինքը փոքր է» իբրև լեզվական միավոր, բայց առանց բառի «բան»՝ խոսք կամ նախադասություն չի լինի: Բառը, բառական կազմը լեզվի հիմքն է, ճիշտ այնպես, ինչպես նալի համար «ողնափայտը» և տան համար՝ հիմքը¹⁸: Սրա պատճառն այն է, որ իբրև միավոր «փոքր» լինելով հանդերձ «եզերութիւն մեծ ունի»¹⁹, այսինքն՝ իմաստային ընդգրկումն ընդարձակ է: Քանի որ այն «բան» է կազմում ըստ իր այս վերջին հատկանիշի, ապա պարզ է, թե ինչ մեծ նշանակություն է ստանում, դառնալով «մայր ամենայն բանի»²⁰: Իսկ «բանը»՝

խոսքը ոչ այլ ինչ է, քան բառերից հյուսված մի ամբողջություն, մի «մարմին», որն ունի «նեքսակայ իմաստք»²¹:

Խոսքի մասերի թիվը որոշելիս Վարդան Արևելացին առանց երկբայություն միանում է նրանց, այդ թվում Գիտնիսիոս Թրակացու «Քերականություն» հայ թարգմանչին, ովքեր ընդունում են «ուրիշ մասունք բանի». ճիշտ չեն ո՛չ ինը, ո՛չ էլ հինգ մաս ձանաչողները, թեկուզ և վերջին թիվն առաջարկում են «համարեն իմաստասէրքն, և Արիստոտել, և Պորփիր... ի Բնագիրքն»²², որոնք դուրս են մղում ընդունելությունը, գերանունը, հոշը²³:

Վարդան Արևելացին մեկնաբանում է անունը, որի հատկանիշներից մեկն այն է, որ «հոլովական» է, ունի «սեռք, տեսակ, ձևք, թիւք, հոլովք»²⁴: Սեռք բացատրելիս իրավամբ այն շի առնչում հայերենին, քանի որ անվան քերականական սեռի հատկանիշը հայերենում բացակայում է: Տեսակները երկուսն են՝ նախադադափար և ածանցական. առաջինը՝ արմատական, երկրորդը՝ ածանցավոր բառերն են: Վերջինս իր հերթին բաժանվում է յոթ ենթատեսակների՝ ստացական, բաղդատական, գերադրական, փաղարջական, հարանուն և բայածական²⁵: Սրանցից յուրաքանչյուրը մեկնաբանված է համապատասխան օրինակներով: Ինչ վերաբերում է անվան ձևերին, Վարդան Արևելացին հաստատում է իր մեկնած երկի սահմանումը և ընդունում է երեք ձև՝ պարզ, բարդ, հարաբարդ²⁶: Այս եռաստիճան շերտավորումը նա փորձում է հաստատել պարզ օրինակով: Այսպես. պարզ՝ «Լևոն», բարդ՝ «Քաջ Լեվոն», հարաբարդ՝ «Քաջ առեծ Լևոն»²⁷:

Անդրադառնալով անվան թվական հատկանիշին, նա հայերենի համար ընդունում է եզակին ու հոգնակին, և, բնականաբար, մերժում երկակին կամ՝ «երկականը»: Նա կրկին հայտարարում է, որ դա ևս «վասն փարթամութեան և արձակ լեզուիս մերոյ» է, և ոչ՝ հակառակը²⁸:

Հոլովները հայերենում վեցն են՝ ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական (կոշական)²⁹: Ուղղականը՝ անվան ուղիղ ձևն է, ինչպես Սմբատ, Գրիգոր: Սեռականն, ըստ նրա, ոչ թե

13 Նույն տեղում, էջ 90:

14 Նույն տեղում, էջ 90—91:

15 Նույն տեղում, էջ 91:

16 Նույն տեղում, էջ 95, 98: Տե՛ս նաև՝ էջ 97:

17 Նույն տեղում, էջ 100—101:

18 Նույն տեղում, էջ 100:

19 Նույն տեղում, էջ 101:

20 Նույն տեղում, էջ 101:

21 Նույն տեղում, էջ 101:

22 Նույն տեղում, էջ 101:

23 Նույն տեղում, էջ 101:

24 Նույն տեղում, էջ 102—103:

25 Նույն տեղում, էջ 104—108:

26 Նույն տեղում, էջ 109:

27 Նույն տեղում, էջ 109:

28 Նույն տեղում, էջ 110:

29 Նույն տեղում, էջ 111—112:

պատկանելութուն է ցույց տալիս, այլ սերում՝ մի վայրից, մի ազգից և այլն: Տրականը հատկացում, մերձեցում, հանգում է ցույց տալիս՝ «իբր թէ տուեալ լինի ումեր»³⁰: Հայցականը, որ նույնացնում է «խնդրականի» հետ, առնչում է «հայցել» իմաստին, իսկ հոշականը՝ «կոշականի» հետ³¹: Բոլոր դեպքերում նա իր բացատրությունները լուսարանում է լեզվական օրինակներով: Ինչ վերաբերում է «առաքականին», ապա վարդան Արևելցին այն չի մեկնաբանում: Այս բացթողումը հազիվ թե դիտավորյալ լինի: Հնարավոր է Արևելցու երկում բնագրական խաթարում է տեղի ունեցել և այդ մասին գրված մի քանի տողը կամ բառը դուրս են մնացել: Մի այլ առիթով, սակայն, նա մի այսպիսի օրինակ է բերում. «Առաքականն՝ ինե, քե, նովա...»³², որից պարզվում է, որ խոսքը վերաբերում է գործիական հոլովին:

Դժվար չէ նկատել, որ վարդան Արևելցին վերոհիշյալ վեց հոլովներին ավելի շուտ ստուգաբանական բացատրություն է տալիս:

Մասնագետներն իրավամբ հատուկ ուշադրության են արժանացրել վարդան Արևելցու կողմից անվանք վերագրված «առասական» և «խակ» բնութագրումներին³³, որոնք համապատասխանաբար նշանակում են՝ հասարակ և հատուկ³⁴: Այստեղ, սակայն, առաջադրվում է ավելի մեծ հարց՝ եզակիի և բնդհանուրի, ու նրանցից մեկի առաջնայնության հարցը՝ դիտված փիլիսոփայական հայեցակետով: Ինչպես հայտնի է փիլիսոփայության պատմությունից, այս հարցը շատ է զբաղեցրել փիլիսոփաներին, սկսած անտիկ ժամանակներից, մանավանդ Պլատոնին և Արիստոտելին, որոնք հակառակ դիրքերի վրա էին կանգնած: Մեծապես առաջադիմական պիտի համարել վարդան Արևելցու կողմնորոշումը դեպի արիստոտելյան, ավելի ճիշտ, նոմինալիստական տեսակետը՝ առանձին, «անհատ» իրերի և բնդհանուր հասկացությունների առաջնայնության բնորոշյալ հարցում. «...դի զոր տեսանես՝ այն է հաստատն... զի՛ զարեգակն չկարէ որ ուրանալ, զոր տեսանէ...»³⁵: Մա որոշակի դիրքորոշում է և միանգամայն արժանի է ուշադրության փիլիսոփայության տեսանկյունից՝ իբրև նոմինալիզմի՝ «մատերիալիզմի առաջին արտահայտության» հերթական մի նոր զբաղեցրած միջնադարյան Հայաստանում բնդհանրապես, վարդան Արևելցու մոտ մասնավորապես:

30 Նույն տեղում, էջ 112:

31 Նույն տեղում, էջ 112:

32 Նույն տեղում, էջ 137:

33 Նույն տեղում, էջ 30—31: Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 257:

34 Նույն տեղում, էջ 114:

35 Նույն տեղում, էջ 114:

Անվան ավելի մանրատված հատկանիշների բացատրությանը նա նվիրել է ևս մի քանի էջ³⁶:

Արևելցու կողմից քննության առնված հաջորդ խոսքի մասը բայն է: Դա բային նախապատվություն տալու դիտավորյալ է արված, և պիտի վերագրել նախադասության մեջ բայի կարևոր դերի գիտակցմանը, որ քերականագիտության տեսանկյունից ճշմարիտ ու գնահատելի է: Ըստ հեղինակի, էականը անունն է, որովհետև այն «էութիւն» է: Հետո գալիս է բայն իբրև «պատահում»³⁷: Այստեղ, ճիշտ է, նա հետևում է մեկնվող բնագրին, բայց վստահ է բացատրությունների մեջ և շարագրում է իր համոզմունքը:

Բայը «անհոլով» է, ունի ժամանակ, դեմք, թիվ. «...բայ է ընդունակ ամանակաց, դիմաց և թուոց»³⁸: Բայը խոնարհվում է ըստ հինգ եղանակների: Անվան նման երկու տեսակի է՝ նախադաղափար և աժանցական, երեք ձև ունի՝ պարզ, բարդ, հարաբարդ: Համաձայն չէ մեկնվող բնագրին, ըստ որի բայն ունի երեք թիվ: Այստեղ էլ մերժում է երկակի՝ «երկուտրական» թիվը հայերենի համար, որովհետև այն «կարիատ է և բռնադատութիւն է յիմաստնոց, զի չկայ ըստ մերում լեզուիս»³⁹: Սույն եզրակացությունը առաջին անգամ ենք հանդիպում այս երկում: Բայն ունի երեք դեմք, երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի, որոնցից անցյալը՝ չորս ենթատեսակ⁴⁰:

Այնուհետև քննության է առնում լծորդությունը: Այս դեպքում ուշադրալ են «պարոչի բայից լծորութիւնք»-ը, որոնք երեք տեսակ են. նախ՝ բ, պ, փ՝ ձայնեղ և խուլ բաղաձայնների մասին՝ բազուկ, պազուկ, փազուկ⁴¹: Այս հատկանշական երևույթը՝ ձայնեղների խլացում և հակառակը, վարդան Արևելցու ժամանակ արդեն ձևավորված էր մանավանդ Կիլիկիայի հայ իրականության մեջ և չի վրիպել նրա ուշադրությունից: Շատ հետաքրքիր է նաև մեզ արդեն ծանոթ բարբառների առկայության մասին վկայող խոսքը՝ «...գեամ, զոր մեք դամբ աւենք...»⁴²:

Ղեղունելությունը, ինչպես հավաստում է հեղինակը, անվան և բայի զուգակցումից է կազմվում: Չունի դեմք, խոնարհում⁴³: Հաղը, որ

36 Նույն տեղում, էջ 114—122:

37 Նույն տեղում, էջ 123:

38 Նույն տեղում, էջ 123:

39 Նույն տեղում, էջ 123—125:

40 Նույն տեղում, էջ 126—127:

41 Նույն տեղում, էջ 130:

42 Նույն տեղում, էջ 130—131:

43 Նույն տեղում, էջ 131:

«կցումն» կամ «միավորութիւն» է անվանում, կապիլու դեր է կատարում, ինչպես «մարմնի ջիւերը»⁴⁴: Հունարենում և մի շարք այլ լեզուներում այն նախադաս է և ըստ այդմ դժվարութուններ է ստեղծում կիրառման ժամանակ: Հայերենում միշտ հետադաս է և կայուն կիրառութուն ունի: Սա ևս «չառատութենէ լեզուիս» է, «զի չկարատանամք բռնադատել...»⁴⁵: Այս առիթով վարդան Արևելցին շատ համարձակ և առաջադեմ հարց է առաջադրում՝ նա, ով չի կարող դասական, պաշտոնական գրաբար հայերենով խոսել, թող խոսի ժողովրդախոսակցական լեզվով⁴⁶:

Դերանունը կամ «դերանունութիւնը» Արևելցու բնորոշմամբ «փոխանուն» է, այսինքն անվան փոխարեն կիրառվող բառ: Իբրև այդպիսին պահում է անվան հատկանիշները: Այն ունի՝ դեմք, սեռ, թիվ, հոլով, ձև, տեսակ⁴⁷: Մանրամասն բացատրություններում պարզեցնում և որոշակի է դարձնում դերանվան մասին իր միանգամայն ճիշտ բնութագրումը:

Նախադրությունը, ըստ նրա, «նախդիր ասի այնը աղագաւ, զի նախ եղևալ լինի յտաջ քան զանուն և գրայ, և յամենայն տեղիս»⁴⁸: Մակայն գրանում նախադրությանը չի վերագրում հիմնական դեր. այն «թագաւոր» չէ, այլ «սպասաւոր»⁴⁹: Հունարենը, օրինակի համար, ունի հիսուն պարզ և տասներկու բարդ նախադրություն, իսկ հայերենը (նա համեմատութունների ժամանակ երբեք չի մոռանում ընդգծել այս) «վասն առատութեան լեզուիս՝ անբաւ, և ոչ միայն յիսուն»⁵⁰:

Մակրայի վերաբերյալ նա համաձայն է մեկնվող քննադրին: Մակրայը «անխաղաց» է, չի փոփոխվում և չի հոլովվում: Կարող է գրվել բայից առաջ և հետո: Այստեղից էլ «մակրայ» անվանումը⁵¹: Լինում են ժամանակի, ձևի, քանակի, տեղի մակրայներ: Հեղինակը խոսում է յուրաքանչյուրի մասին և, ինչպես միշտ, փորձում է օրինակներով հաստատել իր ասածը⁵²: Այս առնչությամբ նա մի սրամիտ և իմաստալից ժողովրդական առակ է բերում, որը լեզվական առումով շատ հետաքրքիր է. «...ասեն, թէ քերթողի աշակերտ որ կատարեալ ուսեալ՝ զնայ ի դրախտն միրգ բերել իր վարդապետին: Եւ առեալ ծծեցցին զնա

և արինաշաղախ թողին. եւ տեսալ վարդապետին՝ հարցանէր զպատճառն: Եւ նա քերթողապէս քերածու բանիւ և շափածու վանգիւք պատճեաց զնղեալ գործն, թէ ինչ ազգ ծեծեցին և ինչ նիւթով: Ասաց՝ բռնցի, մուրքացի «մատանցն կոճերովն», ծղացի՝ բազկացն ծղաւթն և արմընկամբքն, աբացի՝ ոտաւթն, ողկուղաւթն՝ զերդ զխաղող կոխեցին, տարմաբար՝ ի վերայ դիմեցին բազմութիւնքն առհասարակ»⁵³: Ինչպես տեսնում ենք, խիստ միտումնավոր, նպատակային առակ է «քերածու բանիւ» խոսողների ու գրողների դեմ: Վարդան Արևելցին հետևում է իր դեմոկրատական, առաջադիմական սկզբունքին՝ խոսքը պիտի լինի պարզ, անսեփեփ, ժողովրդին լիովին հասկանալի: Այստեղ գրականութեան տեսութեան ու քննադատութեան տեսանկյունից ուշագրավ հեղինակը կա վերամբարձ, բազմապաճույճ, ծեղծերուն և միաժամանակ ճոռոմ ոճի ու նրա համակիրների նկատմամբ:

Վերջին խոսքի մասի՝ շաղկապի հարցում դարձյալ համամիտ է իր մեկնաբանած քննադրին: Ավելի պարզեցնելով իր բնութագրումը, գրում է. «...շաղկապս ոչ պատուոյ աղագաւ աստ (իմա՝ վերջում— Փ. Ա.) եղաւ, այլ զի նախ այլևայլ իրք հաւաքել արժան է, և ապա կապել: Նախ ամենայն մասունք քերականիս, և ապա՝ շաղկապ... վասն որոյ ասէ՝ «շաղկապ է, որ կապէ զտրամախոհութիւնն ոճով»⁵⁴: Շաղկապը սոսկ բառերը միացնող օղակ չէ, այլ կապում է նաև նախադասութեան «տրամախոհութիւնը»՝ միտքը, քանի որ ըստ վարդան Արևելցու բնութագրման՝ «տրամախոհութիւնն» իմաստն և բանին միտքն է»⁵⁵: Այս առիթով էլ շարահյուսական երևույթ սկնարկելով, ճիշտ է նկատում, որ նախադասութեան մեջ սովորաբար պետք է պահպանվի հետևյալ հարադասականութունը՝ «նախ» անուն (ենթակա— Փ. Ա.) և բայ (ստորագյալ— Փ. Ա.) և այլն»⁵⁶:

Անդրադառնալով նախադասութեան մեջ առոգանութեան դրսևորման առանձնահատկություններին, որոնց վերաբերյալ կան ի վաղուցհետեւ ճշտված տերմիններ, նա բավականին ուշագրավ տեսական մտքեր է դարգացնում: Դրանք հավասարապես վերաբերում են քերականութեանը (անշուշտ, ինչպես միշտ, իր ժամանակի հայեցակետից) և երաժշտագիտութեանը: Հնում քերականութունը իր մեջ ընդգրկում էր ոչ միայն լեզվական-քերականական տարրեր, այլ նաև խոսքին առնչվող տարրեր բնագավառների նյութեր: Վերջիններս վերաբերում էին առավելաբար գրական-

44 Նույն տեղում, էջ 132:

45 Նույն տեղում, էջ 132:

46 Նույն տեղում, էջ 133:

47 Նույն տեղում, էջ 134—138:

48 Նույն տեղում, էջ 139:

49 Նույն տեղում, էջ 139:

50 Նույն տեղում, էջ 139:

51 Նույն տեղում, էջ 140:

52 Նույն տեղում, էջ 140—149:

53 Նույն տեղում, էջ 142:

54 Նույն տեղում, էջ 149:

55 Նույն տեղում, էջ 149:

56 Նույն տեղում, էջ 150:

նության և երաժշտության տեսության առանձին հարցերի: Տվյալ դեպքում երաժշտության տեսությանն առնչվող ուշագրավ նյութ կա այստեղ, որն արժանի է մասնագետների հատուկ քննութայնը: Առողջանությունը, ըստ Վարդան Արևելցու, «առովասութիւն ասի, և դարձեալ կոչի, «արուեստ և «զարգ» բանի, զի որպէս ամենայն, որ ի ներքոյ երկնից, բովանդակի ի տասն ստորագութիւնս, նոյնպէս և տասն են, որով բաժանին և գեղեցկանան ամենայն բանիւ բովանդակեալ իմաստը»⁵⁷: Իսկ, ասենք, ոլորակը «թարգմանի «վերացեալ ձայն» կամ «ցուցումն»⁵⁸: Ավելին. «Եւ զի ասէ, թէ յերեք բաժանի առողջանութիւնն, և մին ոլորակն է. այսպէս և ոլորակ անունն բաժանի յերեք՝ ի շեշտ, և ի բուժ և ի պարոյկ. ամանակն՝ յերկար և ի սուղ, հագազն՝ և թաւ և ի սոսկ. կիրքն՝ յապաթարց և յննթամնայ և ի ստորատ»⁵⁹:

Հաշորդ նյութը ավելի շուտ տաղաչափական բնույթի է: Այստեղ ուշադրության արժանի մտահանգումներ կան, որոնք կարևոր են միջնադարյան բանաստեղծության տաղաչափական համակարգը ուսումնասիրելու համար: Այսպես, օրինակ, «Եւ պարզք (ոտք—Փ. Ա.) վասն այնր ասին, զի թէ խառնես և շարադրես և թանձրացնես՝ շինի առատ և պարզ և առողջ ոտք, այլ թանձրացեալ՝ անբանի ոտք լինի կամ ցաւածի»⁶⁰:

Մեկնաբանվող վերջին նյութը խոնարհումն է⁶¹, Այս կապակցությամբ տեղին է վիկայակոչել Գ. Զահուկյանի հետևյալ գնահատությունը. «Վարդանն ունի նաև խոնարհման աղյուսակի մեկնություն (նախորդ մեկնիչներն աղյուսակը բերում էին առանց մեկնության), որտեղ բաց է թողնում բոլոր հունարան արհեստական ձևերը՝ նրանց քննադատությունամբ հանդերձ»⁶²:

Վարդան Արևելցու մյուս քերականագիտական երկը «Վասն Բանին մասանց»-ը ծավալով փոքր, բայց բովանդակությամբ հարուստ և մասնագիտական գրականության մեջ միանգամայն բարձր գնահատության արժանացած աշխատություն է⁶³, հայ մատենագրության մեջ նախընթացը շունեցող արժեքավոր, իրրև միջնադարյան հայ քերականա-

գիտական գրականության մեջ հայոց լեզվի շարահյուսության մասին մեզ հասած ինքնուրույն անդրանիկ փորձ: Առաջին անգամ խոսքի մասերը քննված և սահմանված են որպես նախադասության անդամներ, թեև դրանց տրված են ձևաբանական կարգերի անվանումներ: Ընդհատ է, շարահյուսական և ձևաբանական տերմինները լրիվ չեն սահմանազատված, չի ճշտված յուրաքանչյուրի անվանումը, սակայն որոշակիորեն գիտակցված է դրանց պատկանելությունը ըստ նշված բնագավառի:

Հնդինակը խոսքի մասերի ձևաբանական հատկանիշը երբեք չի շփոթել նախադասության մեջ նրանց ունեցած ֆունկցիոնալ հատկանիշի ու դերի հետ: Շարահյուսական տերմինների բացակայության պատճառով իր գիտելիքները նա արտահայտել է արդեն ընդունված և հայտնի ձևաբանական տերմիններով: Էականն այն է, որ հայերենի շարահյուսությունը գրելու առաջին և կարևոր քայլն արված է⁶⁴: Ըստ այսմ՝ հայերենի շարահյուսության մասին առաջին գիտական խոսքի հեղինակ-քերականագետը Վարդան Արևելցին է:

Սույն աշխատության շատ կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ նա դարձյալ առաջին գիտական երկն է իբրև զուտ, բյուրեղացած քերականություն, զերծ ճարտասանական մեկնողական, փիլիսոփայական կողմնակի տարրերից, ի տարրերություն մինչ այդ և դրանից հետո էլ Հայաստանում հորինված համարնություն երկերի: Այն իսկապես մասնագիտական խոսք է, ճշգրիտ գիտություն՝ խոսքի մասերի ֆունկցիոնալ կիրառության մասին⁶⁵: Միանգամայն տեղին և իրավացի ընդգծվել է Վարդան Արևելցու քերականական երկերի մտածողության, կառուցվածքի, շարադրանքի, լեզվի և ոճի պարզությունը, վերամբարձ «արհեստական գիտականությունից», «գրքայնությունից» ազատ, ինչպես և կյանքից վերցված օրինակներով, ժողովրդական, միջին հայերենի խոսակցական դարձվածքներով հագեցած լինելը⁶⁶:

Կարող ենք համոզված եզրակացնել, որ Վարդան Արևելցին հայ միջնադարի ամենահմուտ ու տարողունակ քերականագետներից է:

57 Նույն տեղում, էջ 156:

58 Նույն տեղում, էջ 157:

59 Նույն տեղում, էջ 157—158:

60 Նույն տեղում, էջ 160:

61 Նույն տեղում, էջ 163—167:

62 Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 258—259:

63 Տե՛ս Խաչիկյան Լ., նշվ. հոդվածը, էջ 86—88: Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 243—259: Վազարյան Ս., Միջին Հայերեն, Ա, էջ 121—124: Խաչիկյան Լ., Հայ շարահյուսագիտական մտքի վաղ շրջանի պատմությունից, էջ 113—115:

64 Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 255:

65 Խաչիկյան Լ., նշվ. հոդվածը, էջ 84—85: Խաչիկյան Լ., նշվ. հոդվածը, էջ 113—115:

66 Նույն տեղում, էջ 84:

ՄԵԿՆԻՉԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԻՄԱՍՏԱՍԵՐԸ

Վարդան Արևելցին «բաջարան» մեկնիչ լինելով, իրեն գրսևորում է միաժամանակ իբրև լայն ու բազմազան գիտելիքների տեր գիտնական, տիեզերագետ, բնագետ, տոմարագետ, իմաստասեր, արվեստի տեսաբան ու գաղափարախոս: Մեկնարանական գրականություն արարող հեղինակները պարտավոր էին լինել այդպիսիք, բնական է, չուրաքանչյուրը ըստ իր կարողության, պատրաստականության և օժտվածության: Վարդան Արևելցին, անտարակույս, նրանցից է, որոնք այս բնագավառում ամենաառաջավոր գծի վրա են եղել: Դա վկայվում է հատկապես այն բազմակողմանի իմացությամբ ու բազմաբնույթ տեղիքներով, որոնք առկա են նրա ստեղծագործությունների մեջ, ինչպես նաև դարերի ընթացքում այս անշուքությամբ ևս իր վայելած համբավով:

Այս առումով նկատառելի են նրա գրեթե բոլոր երկերը, ի մասնավոր՝ մեկնությունները, «Փղանք»-ը, «Մեկնություն քերականի»-ն, ներբողներն ու ճառերը: Հենց սրանցից դուրս բերված փաստերի, դրույթների և տեսակետների հիման վրա կշանանք մեր հնարավորությունների սահմաններում եզրակացություն հանգել գիտության տարբեր ճյուղերի, փիլիսոփայության, արվեստի, ընդհանուր գաղափարաբանության և մշակույթի բնագավառներում նրա տեսական մակարդակի ու արժանիքների մասին:

Վարդան Արևելցու մատենագրական վաստակի գիտական, ճանաչողական, գաղափարական և գեղարվեստական արժեքն ու նշանակությունը ըստ ամենայնի արժանի են հատուկ ուշադրության: Մեծ է նրա երկերի ընդգրկումների շրջադիժը: Դրանք միջնադարի մարդկանց մտավոր և հոգևոր աշխարհը հագեցնող առատ նյութ են պարունակում, արժարժում շահեկան բազմաթիվ կարևոր հարցեր, շատ էական խնդիրների երբեմն լիովին գոհացուցիչ պատասխան տալիս: Գիտամշակութային այս հիմնական առումներով դրանք երբեմն նույնիսկ մեծարժեք հաստատումներ են հայ և բոլոր այն ժողովուրդների մտավոր ստեղծագործական ժառանգության մասին, որոնց անուղղակի կամ անմի-

ջապես անշուք է հեղինակը: Դրանցում բավարար հստակությամբ արտացոլվում են դարի ընդհանուր պատմամշակութային պատկերը և այն բնագավառներն ու մակարդակը, որոնց հասել էր Հայաստանը դարգացած ավատատիրության ու վերածննդի պայմաններում:

Նա տեսնում ու բացահայտում է հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակը, նրա տրամադրությունն ու ակնկալությունները, հավատ ու լավատեսություն է ներշնչում վաղվա օրվա նկատմամբ, խստագույնըս գատապարտելով օտար տերությունների «կրոնական» ու քաղաքական նվաճողական նկրտումները: Բովանդակային-գաղափարական նման հագեցվածությունը կարևոր երաշխիք է դառնում կրկին ընդգծելու հեղինակի հաստատական, հայրենասիրական հայացքներն ու հույզերը:

Գեղարվեստական բնույթի երկերի հենքը, հատկանշական գրսևորումները, գաղափարական-բովանդակային հնչերանգները, ոճն ու լեզուն, գեղագիտական երոշակի հետաքրքրություն են առաջացնում, որոնց մասին, սակայն, խոսք կլինի ստորև:

Միջնադարում ծրագիր չեն ունեցել ու գործնական փորձառություն չի եղել, որ այս բնույթի երկերում առաջագրված հարցերը արժարժվեին կայուն հետևողականությամբ. կամ նույն կերպով էլ վերամշակվեին ու բերվեին ավարտուն տեսքի: Շատ հաճախ ընթերցողն ստիպված է դոհանալ առանձին ասույթների, սահմանումների, ընդհանրացումների, մինչև վերջ չպատճառարանված եզրակացությունների: միջոցով տրված մտքերով ու տեսություններով: Հատկապես մեկնությունների մեջ դա ցայտուն է: Թվում է, թե ծավալուն այս բնույթի երկերում պիտի այդպես չլիներ, քանի որ հեղինակը բավարար տեղ ու հնարավորություն ուներ մշակելու և զարգացնելու իր տեսակետները: Բայց և այնպես, ինչ թողել է այս բնույթի երկերում, գիտափիլիսոփայական լուրջ արժեք է ներկայացնում:

Վարդան Արևելցին միշտ և ամենուրեք նախ կրոնական-եկեղեցական գործիչ է և միջնադարյան առաջատար գաղափարախոս: Ինքնին կարևոր հանգամանք՝ որը նկատի ենք առնում բոլոր առիթներով, երբ անդրադառնում ենք նրա անվանն ու վաստակին անշուք որևէ իրողության ու խնդրի:

Նա բազմիմաց ու խորիմաց անձնավորություն է, բազմամյա մանկավարժ, միջնադարյան բարձրագույն բնույթի դպրոցների ղեկավար և բազմաթիվ հեղինակավոր մեկնությունների մեկնիչ-տեսաբան: Քաջ ծանոթ էր քրիստոնեության հիմնարար Ս. Գրական երկերին, ընդհանուր հայրաբանական գրականությանը, կրոնական, աստվածաբանական, վարդապետական, դավանաբանական, ծիսական դրույթներին:

Այդպես նաև բնագիտության ու փիլիսոփայության բնագավառում. նա լավատեսից էր ինչպես հայ, այնպես էլ այլ ժողովուրդների, մանավանդ անտիկ աշխարհի գիտական ու փիլիսոփայական մտքի նվաճումներին: Որոշակի է, որ հաճախ հիմնվում է հատկապես Արիստոտելի, բրիստոնյա եկեղեցական հայրերի, հայազգի գիտնական-փիլիսոփաների՝ Նզիրի, Գավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու ստեղծագործությունների վրա: Մանավանդ, երբ հիմնական ավանդական հարցերը դիտում է իրենց ամբողջության մեջ, եզրակացություններ և ընդհանրացումներ անում, ազնվի է հետևում նախորդներին, ժամանակի պաշտոնական տեսակետներին: Առավել ինքնուրույն է, երբ մասնավոր հարցեր է քննում և համապատասխան օրինակներ վկայակոչում: Աստվածաշունչը այս դեպքում էլ նրա համար մեծագույն հեղինակություն է: Մա ընդգծելի է հատկապես այն պատճառով, որ ինքը մեկնաբանելով Աստվածաշունչի մի շարք գրքեր, շատ է առնչվում դրան, մանավանդ, երբ այդ գրքերի թվում է Մենդոցը, քանի որ այն վերաբերում է տիեզերական արարչությանը, նրա շուրջն է շատ հաճախ թեմա է միջին դարերի բնագետ-փիլիսոփաների մտածողությունը:

Փիլիսոփայության հիմնական հարցը ծառայել է նաև Վարդան Արևելցու առաջ՝ ի՞նչն է առաջնայինը: Պատասխանը չի ուշացել, քանի որ տվյալ դարաշրջանում դա կարող էր միայն մեկը լինել՝ արարիչը: Արևելցու համար պարզ էր, որ ոչնչից ինչ չի կարող ստեղծվել, իսկ եթե արդեն ստեղծվել է, ապա միայն գերագույն նախասնամության շնորհիվ: Բնությունը ինքը և բնության մեջ ամեն ինչ, ըստ նրա, «եղական» արարվածներ են: Ընդ շատ շնն անտիկ աշխարհի բոլոր այն փիլիսոփաները և նրանց հետևորդները, որոնք հայտարարում են, թե իրր գրանք «ինքնակա» են, ինքնագո, և գոյացական նախնական սկզբնապատճառի՝ Աստուծո միջամտության կարիք չի զգացվել: Դրանք բոլորն էլ «սկիզբ» ու «պատճառ» ունեն, «անսկիզբն» չեն, հետևաբար «սկզբնարար» ուժ կամ էություն չի կարող չլինել: «Զեռագործ է այս աշխարհս»², — համոզված հայտարարում է նա, արեմն եղել է մեկը, որի «ձեռքով» արարվել է այս ամբողջական աշխարհը: Այդ մեկն էլ,

անշուշտ, դարձյալ նույն ինքը՝ Աստվածն է՝ «արարիչն ամենայնի, անսկիզբն և անվախճանն»: Դա այդպես է մեկընդմիջում:

Ինչի՞ց են արարվել տիեզերքն ու նրա բոլոր բաղադրիչները, ինչպիսի՞ն է դրանց ֆիզիկական կազմությունը: Այս ավանդական հարցին նույնպես ավանդական պատասխան է տալիս՝ քառյակ տարրերից: «Քառյակ տարրերի» էմպեդոկլեսյան-արիստոտելյան տեսությունը Հայաստանում որդեգրվել էր դեռևս V դարից: Նզիրի Կողբացին, հատկապես Նզիրի պատմիչը, Գավիթ Անհաղթը և Անանիա Շիրակացին այս տեսության և՛ դավանողներն են, և՛ տարածողները: Հետագայում այն փոխանցվել է մինչև XIV—XV դարերը: Վարդան Արևելցին ևս այն յուրացրել է ժառանգաբար ու տարածել Ս. Անդրեի վանքից մինչև հեռավոր Կիլիկիա ու Խորվիրաս, մինչև արքայական պալատ: «— Զորք տարրի/ նիւթեղէն ի պէտս շինութեան աշխարհի առար (Աստուած)՝ հող և ջուր, օդ և հուր»³, — գրում է Վարդան Արևելցին: Եթե նույնիսկ դրանց համազո միասնությունը չնկատվի, այն անպայման կա, որովհետև դրանք կարող են փոխարկվել մեկը մյուսին, հանդես գալ մեկը մյուսի մեջ: «Ժղանք»-ում նա այդ հավաստում է շատ որոշակի. «Զի ջուր ցամաքեալ հող լինի, և հող զանգեալ՝ ջուր, և ջուր ջեռեալ և հուր շիջեալ՝ օդ: Եւ հուր զջերմութիւն և զլույսն ի բաց եղեալ՝ լինի երկիր և օդ զխոնաութիւն ի բաց եղեալ լինի հուր»⁴:

Բացի այն, որ դրանք համազո են իրենցից յուրաքանչյուրի մեջ, բայց նաև համազո են մեկ այլ գոյացության մեջ միասնաբար: «Որպէս ի տարերոյս միջինքն, որ են ջուրն և աւղն, ի մէջ հակառակացն հաշտութիւն առնեն, զի հողն ծանր և ցուրտ է, իսկ հուրն՝ չոր է և թեթև: Եւ աւղն միաւորեալ է ընդ հողն՝ թեթևութեամբն և ջերմութեամբն, իսկ ջուրն միաւորեալ է ընդ երկիր՝ ծանրութեամբն և ցրտութեամբն, և աւղն և ցուրտն միաւորեալ են շարժութեամբն...»⁵:

«Մորատեսակ թանձրությունները», որոնք ևս այս քառյակ տարրերի միացության արդյունք են, Աստված երկնային բոլոր մարմինների կազմության նյութական հիմք է դարձրել. «Եւ զայլ մորատեսակ թանձրունսն յէարկ յաստեղեացն նիւթն»⁶: Նա այդ իրագործել է համենայն դեպս դիմելով նյութին, այլ կերպ էլ չէր կարող, քանի որ աշխարհը նյութական է: Բայց ինչպե՞ս, երբ նյութը դեռևս գո չէր: Աստված վարվեց միայն իրեն վերապահված զորությունը. «...զաննիւթն նիւթացոյց և զանէն՝ գոյացոյց...»⁷:

1 Հնգամատենի, Նրուաղեմ, ձեռ. № 8891, Թ. 6ա: «Հնգամատենի» (նույնն է «Արարածոց») և մյուս մեկնություններից բաղկած մեզրերումները վկայակոչում ենք ոչ առանց որոշ վերապահության միայն այն պարզ պատճառով, որ դրանց սկզբնաղբյուրների լիակատար քննությունը դեռևս կատարված չլինելով, դժվար է ճշտել, թե որ խոսքերն են ստուգապես պատկանում բուն հեղինակին՝ Վարդան Արևելցուն, բայց և՛ որ խոսքերն են, որ որոշակի չեն պատկանում նրան:

3 Հնգամատենի, Մատենադարան, ձեռ. № 9718, Թ. 8ա: 4 Ժղանք, ձեռ. № 750, Թ. 62բ: 5 Մեկնություն քերականի, էջ 89: 6 Ժղանք, ձեռ. № 750, Թ. 67ա: 7 Հնգամատենի, ձեռ. № 9718, Թ. 8ա:

Վարդան Արևելցին միանալով իր հայ նախորդներին, մերժում է հյուսիսի տեսությունը պաշտպանող անտիկ հեղինակներին: Ոչ «հիւղէ»-ից, ոչ «մանրամաղ փոշուց» է բնութիւնը «ինքնեզ» դարձել, և ոչ էլ առանձնապես կրակից, ջրից, հողից կամ օդից, ինչպես կարծել են «ոմանք ի յունաց իմաստնոց», այլ սոսկ Աստծու արարչական կարողութեամբ և նշված շորս տարրերի միաժամանակյա համագոյակցութեամբ. «...ոմանք ինքնեզ է (բնութիւնն—Փ. Ա.) ասացին, և այլ՝ յաւետակից Աստուծոյ, և այլ՝ ի հիւղէէ, ի մանրամաղ փոշոյ, որ կայր, ասեն, առեալ Աստուծոյ էարկ ի վերայ նոցա. ոմանք ի յունաց իմաստնոց՝ դժուր ասացին ըսկիզբն աշխարհի, ոմանք՝ զջուր, ոմանք՝ զերկիր, այլ՝ զաւր: ալլ են սորա սկիզբունք աշխարհի, այլ՝ յԱստուծոյ եղեալք յոչէից...»⁸: Եթե դրանք առանձին լինէին, իրարից անկախ և իրարից զուրկ, ապա և ոչ մի ձևի «ծնունդ» տեղի չէր ունենա, «Բայց տարեք Գ/4/ խառնուածք են, քան տարեք, զի թէպէտ և տարբեր կոչին, որ յամէն իբր տարեալ լինին՝ ի կենդանիս և յոչ կենդանիս, այլ նախ ինքեանք են խառնեալք, զի շատանես յստակ առանձին ջուր, կամ՝ հող, կամ՝ ար. կամ/ հուր. զի թէ այնպէս էին՝ ամբողջ էին և ոչ ծնանէին...»⁹: Դա այդպես է նաև այնու, որ եկեղեցու «կատարեալ» իմաստունները այդպես են մտածում. «Բայց կատարեալքն յեկեղեցույ զամէն ի շորիցս (տարեբայցս—Փ. Ա.) ասեն»¹⁰: Այո, «զամէն» (ամեն ինչ) դրանցից է գոյանում: Այդպես նաև կենդանական և բուսական աշխարհում. «...զի զառաջինն ի տարեբայցս արարան կենդանիք և յետոյ՝ ի ծնողաց»¹¹:

Ուրեմն տարրերը նախորդել են օրգանական աշխարհին: Սա կարևոր հաստատում է: Թեկուզ և իրենք՝ տարրերը համարվում են Աստծու կողմից արարված, բայց ընդունվում են իբրև կենդանական աշխարհի աղբյուրներ: Մի՞թե սա անուղղակի և ակամա հավանություն չէ աշխարհի նյութականության մասին...

Տիեզերքի արարման կերպի հարցում Վարդան Արևելցին համեմարալի է եղիշեի, Անանիա Շիրակացու տեսակետներին: Հիմնականում շեշտը դնում է հարաբերական շարժման և հարաբերական դադարի վրա: Լակոնիկ, բայց մեծ ընդհանրացմամբ գրում է. «Բնութիւն է ըսկիզբն շարժման և դադարման», կամ՝ «Արդ՝ է ամենայն ինչ շարժման և կայանի ծնունդ...», ինչպես նաև՝ «...զբնութիւն, որ միշտ շրջի և յա-

րաշուրջ ընթացիւքն իւրօք առնէ զամենայն ինչ»¹²: Նախ ընդգծվում է բնութիւն շարժման մեջ լինելը, շարժում, որը բազմազան վերափոխութիւնների ու ձևափոխութիւնների է տանում և «ծնունդ» տալիս նորանոր գոյացութիւնների¹³: Բնութիւն շարժումը, ըստ նրա, սոսկ տեղաշարժութիւն կամ մեխանիկական տեղափոխութիւն չէ, այլ ներքին կերպարանափոխութիւն, մի էութեանից մյուսի անցում: Մրա կրկնակի և ավելի լայն բացահայտված հավաստումն է հետևյալը. «Բնութիւն է սկիզբն իւրաքանչիւր շարժման և կայանի, այսինքն՝ երկիր շարժի ի բոյս, և ի կենդանիս և ի ճճիս»¹⁴: Փոփոխումը վերընթաց է՝ զեպի բուսական և կենդանական աշխարհը: «Բանականքս» նույնպես այս փոփոխման և նշված տարրերի ծնունդ են, միմիայն Աստվածն է, դարձյալ, բացառութիւն կազմում. «Իսկ Աստուած յամենայն փոփոխմանէ միայն է աղատ»¹⁵:

Չորս տարրերը իրենք էլ, իրենց առանձին հատկութիւններով, պատճառ ու միջոց են դառնում նորանոր փոփոխութիւնների ու գոյացութիւնների: Եթե ճշմարիտ է, որ ամեն ինչում անխտիր առկա են դրանք իբրև բաղադրիչներ, բայց ճշմարիտ է նաև, որ միաժամանակ «արարիչներ» են, երկրային արարիչներ: Դրանց պատահական միացութիւնից չէ, որ գոյանում է որևէ իր, կենդանի, այլ պայման է, որ դրանցից յուրաքանչիւրի հատկութիւնը մտնի արարման գործընթացի մեջ: Ուրեմն, հարկավոր են ոչ միայն հողը, ջուրը, օդն ու հուրը, այլև ասենք, հողի թանձրութիւնը, ջրի խոնավութիւնը, զիջութիւնը, կրակի ջերմութիւնը, լույսը, օդի տաք և խոնավ բարեխառնութիւնը, շարժունակութիւնը. «Առանց հողոյ ոչ լինի թանձրութիւն շօշափելի, և առանց ջրոյ՝ կալումն և ըմբոնումն, և ոչ առանց օդոյ՝ շարժութիւն»¹⁶: Եթե տարրերից որևէ մեկի առկայութիւնը առաջին հայացքից չի նկատվում, դա չի նշանակում, թե այն չկա, քանի որ, ինչպես նշել ենք, դրանք կարող են փոխարկվել մեկը մյուսին:

Իսկ ինչպե՞ս է տեղի ունենում բնութիւն շարժումը նաև երևութապես: Արևելցին հետաքրքիր նկատումներ ունի նաև այս առնչությամբ. երկնային բոլոր մարմիններն էլ, ըստ նրա, շարժվում են առանց բացառութիւն, բայց ոչ միակերպ և ոչ միշտ միևնույն ուղեծրով, երբեմն

8 Հնգամատենի, ձեռ. № 5862, Բ. 288ա: Տե՛ս նաև՝ աստ, Բ. 290ա:
 9 Նույն տեղում, Բ. 62բ—63ա:
 10 Փղանք, ձեռ. № 750, Բ. 55ա:
 11 Հնգամատենի, Մատենադարան, ձեռ. № 1091, Բ. 28բ: Տե՛ս նաև՝ ձեռ. № 9818, Բ. 24ա:

12 Փղանք, ձեռ. № 750, Բ. 51բ: Տե՛ս նաև՝ Հնգամատենի, ձեռ. № 5862, Բ. 289ա, Կամիմ քանն է մտք խոսել..., ձեռ. № 1398, Բ. 296ա, 298ա:
 13 Կամիմ քանն է մտք խոսել..., ձեռ. № 1398, Բ. 296ա:
 14 Փղանք, ձեռ. № 750, Բ. 147բ:
 15 Ի ճԱ սաղմոսն, ձեռ. № 4139, Բ. 404բ:
 16 Հնգամատենի, ձեռ. № 9718, Բ. 8ա:

անիվի, երբեմն էլ աղորիքի նման: Դրանք պատահական «քայլ շեն գցում»: Ընթանում են «ընտրութեամբ և անմոլար», դեպի հարավ, դեպի հյուսիս, արևելքից՝ արևմուտք, սակայն «Բ արև ընդ մի շաւղ շերթան»¹⁷: Այս նույն միտքը քիչ այլ ձևակերպում է ստացել նրա «Յաղագս է ատուրն արարչութեան» հետաքրքիր ճառի մեջ: «Արեգակն,— գրում է նա,— զինչ սայլի ակն երթա, զոր և այլք ասեն, թե իբրև զըրազաց, իբրև զաղաւրիս»¹⁸: Ըստ երևույթին, այստեղ միաժամանակ նկատի է առնված արևի, և ոչ միայն արևի, շարժման երկու հիմնական ձևերը, մեկը՝ իր առանցքի շուրջը, մյուսն էլ՝ իր ուղեծրով, որովհետև նույն տեղում, մի քիչ առաջ նա նշում է. «...և ասենք, թէ թաւալմամբ երթա արեգակն, և ամենայն մի թաւալ մի մասն է, որպէս թէ այնքան թաւալումն առնու արեգակն յարևելից մինչև յարևմուտս 34 (360) և յաւելեալ մասունք 5(5) այլ առնեն»¹⁹:

Երկրի շրջագայութեանը, ինչպես հայտնի է, հին ու միջին դարերում բազմազան բացատրություններ են տրվել: Մանավանդ շատերին մտահոգել է այն հարցը, թե ինչպես է երկիրը մնում տարածության մեջ այդ ընթացքում: Վարդան Արեւելցիին հավանություն է տալիս հետևյալ պարզունակ բացատրություններին, որոնք նա քաղել է հիմնականում Եղիշեից: Նա գրում է, որ «հրեղէն երկինն շրջապալէ ոչ յոր մերձ բաժանեալ յերկուս կիսագունդս՝ ի վեր և ի վայր, և ընդ հողմոյ խառնեալ շուրջ գայ և անդի ի վեր փշեալ՝ շտայ երկրի ի վայր ընկղմել, և բնական ծանրութիւն երկրի ի վեր շթողում»²⁰, ինչպես նաև «երկիր» ծանր գոլով, զնեքքին վույն(°) էառ, և ջուր թեթև քան զերկիր և ծանր քան զօդ՝ ի վերայ հողոյ և ներքոյ օդոյ զետեղեցաւ. եւ օդ ծանր գոլով, քան զհուր, զի գիշութիւն ջրոյ գոյ ի նմայ, ի ներքոյ հրոյ կայացաւ, քանզի հուր լինքն զնդեալ, խթացեալ, կարծրացեալ՝ ի վեր պարզեաց զօդ և զհողմն, որ բնութիւն է աւդոյ, որ և ի ներքոյ անցեալ, հրամանաւ արարչին, փշեաց, փեռեկեաց ընդարձակեաց զհուրն ի վեր և ի խոնարհ...»²¹, սրանց շնորհիվ է, որ երկիրը պահպանվում է միջոցի մեջ:

Վարդան Արեւելցիին աներկամտորեն միանում է այն գիտնականներին, որոնց կարծիքով տիեզերքում շատ աստղեր կան, որոնք ավելի

մեծ են, քան արեւը. եթե փոքր են երևում, պատճառը հեռավորությունն է «հեռագոյնք են բարձր, գողանան զմեր տեսանելիս»²²: Հավաստում է նաև, որ ոչ բոլոր աստղերն են «հրեղէն», այլ կան և այնպիսիները, որոնք «յոյժ ցրտագոյն են և ամենեկին սառնամանիք»²³:

Մի առիթով որոշ վերապահութեամբ է խոսում Լուսնի լույս ունենալու կամ շունենալու հարցի մասին, առանց ճշտելու իր սեփական կարծիքը, իսկ ընդհանրապես, հակված է հավատալու, որ ունի²⁴:

Վարդան Արեւելցիին ժամանակը և ժամանակի գործոնը ևս իրավամբ կապում է երկնային մարմինների, արեգակի, երկրի շրջապատույնների հետ, համարում է դրանց արգասիքը: Բոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին, բոլորն էլ անհնարին են առանց դրանց: Ցերեկն ու գիշերը ևս այդ շրջապատույններով են պայմանավորված: Նրա «Յաղագս է ատուր արարչութեան» մեզ հայտնի ճառում այս առնչությամբ կարդում ենք. «...զի ժամանակն գնացքդ է լուսաւորացդ, յորոց շափին ժամանակքն՝ ԲԺ (12) տունջեան և նոյնքան դիշերո(յ), ԻԳ (24) ժամ տիւ և ընդ գիշեր, որ է ար մի: Եւ ի ժամաց անտի բաժանին մասունք 34 (360), իւրաքանչիւր ժամու Լ (30) մասն, վասն զի արն՝ պատկեր տարոյն, զի որքան ամիսք են տարոյն՝ ժամք են ատուրն, և որչափ ար է տարոյն՝ մասն է ատուրն»²⁵: Իսկ «Հնգամատենի մեկնութեան» մեջ գրտնում ենք հետևյալ խտացված սահմանումը. «...եւ զի՞նչ ժամանակն, եթէ ոչ ընթացք արեգականն»²⁶: Նույնը՝ «Հաւաքումն պատմութեան մեջ՝ «Ժամանակագործ արեգականս»²⁷:

Արդեն տեսանք, թե Վարդան Արեւելցիին ինչ տեսակետ ունի բուսական և կենդանական աշխարհի առաջացման մասին, կապելով դրանք բնութեան շարժման և հարաբերական դադարի, քառյակ տարրերի համատեղ և համաժամանակյա միացութեան հետ: Տեսանք նաև, որ նա տարրերից յուրաքանչյուրի մեջ տեսնում է բոլորի համագրումը: Ասենք, որ նա այդ կապակցութեամբ լրացուցիչ այլ կարծիքներ էլ է հայտնում: Երկրի վրա ապրող, ինչպես և օդում ճախրող բոլոր շնչավորները նախապես «ջրային» են եղել, գոյացել են ջրի մեջ և ապա դուրս եկել ցամաք և օդ. «Ելին ի ջրոյ լուղակք և թռչունք», «քանզի ի ջրոյ ունին զգոյացութիւն և որք ընդ աւդրտ երթան...»²⁸, բայց նաև բանականներն

¹⁷ Ժղլանք, ձեռ. № 750, Բ. 67ա—67բ: Հմմտ. Հովհաննես Վանական, Հարցմունք և պատասխանիք, Մատենադարան, ձեռ. № 5611, Բ. 160ա:

¹⁸ Յաղագս է ատուրն..., ձեռ. № 4139, Բ. 238ա:

¹⁹ Նույն տեղում, Բ. 237բ:

²⁰ Ժղլանք, ձեռ. № 750, Բ. 59ա: Տե՛ս նաև՝ աստ, Բ. 64ա: Յաղագս է ատուրն, ձեռ. № 4139, Բ. 236ա:

²¹ Հնգամատենի, ձեռ. № 9718, Բ. 8ա:

²² Ժղլանք, ձեռ. № 750, Բ. 69բ:

²³ Նույն տեղում, Բ. 67բ:

²⁴ Յաղագս է ատուրն, ձեռ. № 4139, Բ. 257բ: Ժղլանք, ձեռ. № 750, Բ. 69բ:

²⁵ Յաղագս է ատուրն, ձեռ. № 4139, Բ. 237բ:

²⁶ Հնգամատենի, ձեռ. № 9718, Բ. 62բ:

²⁷ Հաւաքումն պատմութեան, էջ 8:

²⁸ Ժղլանք, ձեռ. № 750, Բ. 71բ: Տե՛ս նաև՝ Հնգամատենի, ձեռ. № 4139, Բ. 236բ:

են ջրի ծնունդ. «բանականը ևս ի ջրոյ գոյացան...»²⁹: Սակայն զգուշացնում է, որ չկարծվի, թե միայն ջուրն է դրանց ծնունդ տվել և դարձյալ հիշեցնում քառյակ տարրերի և, անշուշտ, բուն պատճառի՝ Աստծո միջամտությունը³⁰: Մինչև իսկ նրան հայտնի է, որ իբր հաղար տեսակի կենդանիներից վեց հարյուրը դեռևս ջրի մեջ են, և միայն շորս հարյուրն են մեկնել ջրից³¹:

Նա ուշագրավ մանրամասներ է հաղորդում բույսերի և հատկապես կենդանիների մասին, որոնցից հայտնի է դառնում, որ քաջ ծանոթ է ոչ միայն նախընթաց հեղինակներին, մանավանդ՝ Բարսեղ Կեսարացու («Յաղագս վնցօրէից») երկերին, այլև անձնապես զննել է կենդանիների կենցաղն ու բնագրական սովորությունները³²:

Արարչագործության պսակը, համենայն դեպս, մարդն է, մարդը իր բանականությամբ ու հոգևոր-բարոյական էությունով: Աստված նրան արժանացրել է գերագույն պատվի և արարել «բոստ պատկերի իւրում»: Մարդն ու մարդկայինը, ընդհանրապես, մեծ ուշագրություն ու հարգանք են վայելում վարդան Արևելցու կողմից: Այս առիթով էլ խորը գոհունակությամբ է նշում այն կարևոր ճշմարտությունը, թե մարդը բոլոր արարվածների իշխանն ու տերն է. «...զի տէր և իշխան կացոյց զնա Աստուած ի վերայ ամենայն ձեռակերտաց իւրոց»³³: Ճիշտ է, մարդիկ տարբեր են լինում, լավ ու վատ, բարի ու չար, սակայն այս կարգի երկատունները ի սկզբանե չեն, այլ կենսական պայմանների և սեփական կամեցողության հետևանք: Մարդը բնությունից միայն «բարի» է ստեղծվել, բացասական բոլոր հատկանիշները ածանցավոր են, ձեռքբերովի: «Չարք ոչ ի բնութենէ, այլ ի կամաց»³⁴ են հայտարարում է նա, փորձելով ամեն կերպ պաշտպանել մարդուն:

Մարդու մեջ ամենագնահատելին «բանիւ» լինելն է, այսինքն՝ խոսքի, մտքի, բանականության տեր լինելը: Դրա միջոցով ու շնորհիվ է նա տնօրինում իր երկրային ողջ կյանքը, ինչպես նաև՝ պատրաստվում երկնային կյանքին, ինչ-որ նվազ կարևոր չէր միջին դարերի մարդկանց համար:

29 Հնգամատենի, Երուսաղեմ, ձեռ. № 648, էջ 102:

30 Ժղլանք, ձեռ. № 750, Թ. 71ա—71բ:

31 Յաղագս բնութեան, ձեռ. № 1398, Թ. 298ա: Տե՛ս նաև՝ Յաղագս է աւուր, ձեռ. № 4139, Թ. 240ա:

32 Յաղագս է աւուր, ձեռ. № 4139, Թ. 238բ—240ա: Ժղլանք, ձեռ. № 750, Թ. 71ա—73ա: Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, Թ. 281բ: Հայեաց ի քեզ, ձեռ. № 1324, 271ա:

33 Հնգամատենի, ձեռ. № 8891, Թ. 19բ:

34 Նույն տեղում, Թ. 39բ:

Մարդու էության հետ կապելով բանականությունը, գատողությունը, տրամաբանությունը, զգայական և ճանաչողական հնարավորությունները, Արևելցին այս ամենի մասին: ուշագրավ կարծիքներ է հայտնում: Տվյալ դեպքում ավելի շատ հիմնվում է Արիստոտելի և Գալիլիս Անհաղթի տեսությունների վրա: Այս առնչությամբ նա հանգես է գալիս հիմնականում իրեն իմաստասեր և գերազանցապես տեսական խնդիրների հիման վրա է պարզում ու հավաստում իր հայացքները: Ըստ այսմ կարելի է գաղափար կազմել նրա կարողության ու հայացքների մասին այս ոլորտում: Խնդիրը տվյալ դեպքում այն է, որ բացահայտվի, թե նա ինչին էր ծանոթ, ինչին էր ավելի հավանություն տալիս, ինչն էր ստույգ համարում: Դրա համար փորձենք ավելի շուտ խոսքը տալ իրեն: Այն հարցը, թե ինչ է բանականությունը, մտածողությունը կամ միտքը, նա բացատրում է այսպես. «Միտք ունի իմաստություն, տեսողություն, ուսողություն, անմոռացություն և կատարումն՝ զճշմարտութիւն»³⁵: «Բանը», խոսքը, որ դրա անմիջական դրսևորումն է «...ունի խոհումն, գործ, առաքինութիւնս, հաւատս և կատարումն զբարին, քանզի միտք սկսեալ ի յիմաստութիւն, կատարէ զուղեգնացութիւն ի ճշմարտութիւն, և բան բուն հարեալ զխոհմանէ՝ կատարէ զընթացս իւր ի բարին»³⁶: Սրանք խառնվում, միահյուսվում են իրար, արդյունք տալիս և «առնեն զմարդն կատարեալ», «Եւ այս է տասնադի քնարն հոգւոյն սրբոյ. և խառնին ընդ միմեանս այսպէս՝ իմաստութիւն ընդ խոհումն, տեսողութիւն ընդ գործն, ուսողութիւն ընդ առաքինութիւն, անմոռացութիւն ընդ հաւատս, ճշմարտութիւն ընդ բարին, եւ երկուցն կատարումն՝ յԱստուած, քանզի նա է ճշմարտութիւնն և ինն իսկ բարին է: Եւ այսօրիկ են, որ առնեն զմարդն կատարեալ պատկեր Աստուծոյ...»³⁷:

Բանականությունը միատարր չէ, ունի իր դրսևորումները, գործում է տարբեր բնագավառներում, հավաստի է լինում տարբեր չափերով, տարբեր բնութագրումների է արժանի: Նա այս կապակցությամբ գտնում է հետևյալը, շթաբցնելով, որ հետևում է արտաքին իմաստասերներին. «...և սասցին, թէ հինգ են ամենայն բանականութեանս պատճառք և արմատք, որ հաւաքէ զամենայն արուեստս խաւսոց. և են այսօրիկ՝ ապացուցական, տրամաբանական, ճարտասանական, մասնական, քերթողական, քանզի ինչ խաւսքն և դիմէ ոք, կամ ամենևին ճշմարիտ է և լինի ապացուցական, և կամ ամենևին ստէ և լինի քերտողական, և

35 Կամիմ բանս է մտք խօսել, № 4139, Թ. 393բ:

36 Նույն տեղում, Թ. 397բ:

37 Նույն տեղում, Թ. 393բ: Տե՛ս նաև՝ Սաղմոսաց, ձեռ. № 1190, Թ. 196ա—196բ:

կամ խառն լինի սուտն և զորդն. և տեսանել պիտի, թէ միաշափ են սուտն և զորդն՝ լինի ճարտասանական, և թէ աւելի է ճշմարիտն, քան զսուտն, լինի տրամաբանական, և թէ սուտն աւելի է՝ լինի մասնական»³⁸:

Համաձայն է, որ իմացութեան և ճանաչողութեան համար անտիկ փիլիսոփայութեան (Արիստոտել) մասնանշած ձևերը, կատեգորիաները հինգն են. «Եւ Ե (5) հոգւոյն զգա(յ)ութիւնք՝ միտք, զգայութիւն, երևակա(յ)ութիւն, տրամախոհութիւն, կարծիք»³⁹: Իսկ դրանցից յուրաքանչյուրի դերն ու հնարավորութիւնը՝ «Միտքն տեսաւ զմասն հոգւոյն, զգայութիւն՝ մասնաւոր իմացքն առանց պատճառի, երևակայութիւն՝ յուլովութիւն իմացիցն անպատճառ, տրամախոհութիւն՝ բոլոր գիտութեան՝ պատճառաւ Աստուծոյ յայտնեալ, կարծիք՝ ընդ(հ)անուր գիտութեան պատճառաւոր յուսմանէ՝ տեղեկացեալ ի մարդկանէ»⁴⁰:

Նա հարևանցի տկնարկներ է անում նաև «Ժ (10) ստորագութեանց» մասին, որոնք առանձին նշանակութիւն չունեն⁴¹, Պարզապես կրկին հաստատում են այն ճշմարտութիւնը, որ Վարդան Արևելցին ծանոթ էր ոչ միայն Պլատոնի, Արիստոտելի, Պորփյուրի, այլև անտիկ փիլիսոփայութեան մյուս կարկառուն ներկայացուցիչներէրից շատերի բնագիտական և փիլիսոփայական նվաճումներին: Սեոի, տեսակի, ձևի, «ազգի», «յատկականի» վերաբերյալ ունի միայն փոքր նշումներ, ինչպես՝ «սերբերն ազգն է», «ի վեր անդ զսերն մեկնեաց և աստ զտեսակն կամի յայտնել», «վասնդի կենդանին սևն է, որ յուլով տեսակս ունի յինքեանըս՝ զչորքտանի(ս) և զերկտանիս, զբանաւորս և զանբանս», «յատկական զանհատն ասէ, իսկ անհատն՝ երեք ազգ է»⁴²: Մի քիչ ավելի է իրեն բացահայտում հետևյալ հատվածում. «Եւ դարձեալ զամենայն արարածս ի հինգ մասունս կոտորեն, որպէս Պորփյուրոս ասէ՝ սեռ, տեսակ, տարբերութիւն, յատուկ, պատահումն: Սեռն ազգ կենդանեաց, որպէս միով կոշմամբ ասէ՝ կենդանի, Աստուած, և հրեշտակք, և դիք և ամենայն երկրային և ջրային կենդանիք, իսկ տեսակն՝ կերպն ազգացն, որպիսութիւն՝ որպէս կերպ մարդ(յ), եղին, և արծու(յ) և այլոցս

տարբերութիւնք, որ ատարութիւն ունին առ իրերարս և զանազանութիւն՝ կենդանիք և քարինք, հող և ջուր, և տունկք և ամենայն ինչ: Իսկ յատուկ՝ մեկնակն է և առանձինն, զոր այլ ոք չունի, որպէս մարդոյս միայն է ծիծաղին և հրո(յ)՝ այրելն, և Բևաւորին՝ յերկար թռչելն: Եւ պատահումն է, որ ի վերայ բազմութեանց մին զոյն պատահէ, որպէս կաթին, և ձեան, և բոս(յ) և կրի՝ սպիտակ լինելն: Եւ թէ լինի և թէ՛ ոչ, շքերէ պակասութիւն, որպէս մարդ՝ թէ սպիտակ է, թէ՛ սեւաւ, կամ՝ հաւ, և կամ այլ ինչ...»⁴³:

Իր ժամանակի և իր դասի համար բավականին հատկանշական և առաջավոր է նրա հաստատումն այն մասին, որ առաջնայինը իրն է, իրի կամ երևույթի բուն էությունը, ապա՝ դրանից ածանցված զաղափարը, անունը. «...զի նախ էություն և ապա՝ անուն ամենայն իրի»⁴⁴: Նույնը նաև հետևյալ ձևակերպմամբ՝ «...Իսկ այն, զի ասէ ամենայն ինչ անուանեալ են, տեղեկութիւն տա մեզ, թէ անուանքս ստուգաբանիչք են և մեկնիչք իրացն և բնութեանցն, որ կան ընդ նորք, քանզի կամ գիրն յայտնեն, կամ զգործ իրացն և կամ զձայն ի նոցայ»⁴⁵:

Փիլիսոփայութիւնը, արիստոտելյան տրոհմամբ, ինքն էլ բաժանում է երկու մասի՝ տեսականի և գործնականի. «...կատարեալ իմաստասիրութիւն յերկուս բաժանի՝ ի տեսականն և գոր(ծ)նականն»⁴⁶:

Այս բոլորը հիմնականում ամփոփում են «արտաքին իմաստունների» կարծիքները, բայց և նպաստում տեսնելու, թե գիտափիլիսոփայական ինչ մակարդակի էր հասել ինքը՝ Վարդան Արևելցին, յուրացնելով նաև արտաքին գիտութիւններն ու անտիկ փիլիսոփայութեան նվաճումները, և ինչպես էր նա նայում աշխարհին, ընկալում ու բացատրում այն:

Վարդան Արևելցին բժշկագիտութեան բնագավառում ևս տեսական և գործնական գիտելիքների որոշակի համտութիւն է ցուցաբերում: Այս առնչությամբ նրա թողած զրավոր վկայութիւնները թեկուզ և նեղ մասնագետի խոսքեր չեն, սակայն, միանգամայն արժանի են ուշադրութեան:

Սույն առիթով կուզենայինք քիչ ավելի մանրամասն խոսել մի շափաղանց կարևոր իրողութեան՝ կենդանի դիահերձման մասին, որի վերաբերյալ արժեքավոր հաստատում ունի Վարդան Արևելցին, քանի որ այս խնդրին վերաբերող միջնադարյան վկայութիւնները, անտա-

38 Նույն տեղում, Թ. 390ա:

39 Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, Թ. 277ա: Տե՛ս նաև՝ Կամիմ բանս է մտօր խօսել..., ձեռ. № 4139, 390ա, Ներքուր գրերի գլուխին, ձեռ. № 8775, Թ. 281ա:

40 Նույն տեղում, Թ. 277ա: Տե՛ս նաև՝ Կամիմ բանս է մտօր խօսել..., ձեռ. № 4139, Թ. 390ա:

41 Կամիմ բանս է մտօր խօսել, ձեռ. № 1324, Թ. 277բ: Սաղմոսայ, ձեռ. № 1190, Թ. 196բ:

42 Մեկնութիւն քերականի, էջ 103, 121, Կամիմ բանս է մտօր խօսել..., ձեռ. № 4139, Թ. 390բ:

43 Կամիմ բանս է մտօր խօսել..., ձեռ. № 4139, Թ. 390բ:

44 Ի Տասնարանեան, ձեռ. № 5197, Թ. 381ա:

45 Եղեկիւլի, ձեռ. № 1398, Թ. 226ա:

46 Սաղմոսայ, ձեռ. № 1190, Թ. 196բ:

բակույս, ունեն գիտական և պատմամշակութային մեծ արժեք: Գրանք, իրոք, ոչ միայն պատկան ժողովրդի և երկրի, այլև համաշխարհային բժշկագիտության տեսական ու գործնական ոլորտների ուշագրավ ցուցանիշներ են: Գիտահերձման, առավել ևս՝ կենդանահերձման կիրառության փաստը*, մանավանդ այնպիսի մի երկրում, ինչպիսին տեական արշավանքների ու ավերածությունների ենթարկված, բայց բժշկագիտական շատ հին և հարուստ ավանդույթներ ունեցող միջնադարյան Հայաստանն է, կարծում ենք գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Գիտահերձումը հայտնի է մարդկության պատմության վաղ ժամանակներից: Հատկապես եգիպտական մումիաների հետ կապված աշխատանքների ընթացքում այն գրավում էր կենտրոնական տեղ: Հետազոտում կիրառվել է միջնադարյան Եվրոպայի տարբեր երկրներում, սակայն, ոչ առանց սահմանափակումների և խոչընդոտների, որովհետև այն սկսել էր դիտվել իրրև մեղանշանը, սրբապղծություն մարդու, կրոնի և Աստու հանդեպ: Որքան մեղ հայտնի է, այն սկսել է ազատ կիրառություն գտնել վիրարութական և ուսուցողական նպատակներով միայն XVI—XVII դարերում, մարդու մարմինը օգտագործման դրվեց բժշկագիտական կանոնավոր քննությունների, զանազան հիվանդությունների ախտաբանական պատճառներն ու հետևանքները ճշտելու և դրանք կանխելու համար:

Լ. Խաչիկյանը կենդանահերձման մասին 1947 թ. առաջին անգամ իր հրատարակած վկայության կապակցությամբ կատարելով գիտապատմական հարակից պայմանների և հանգամանքների հետազոտություն, համոզվել հավաստում է, որ հայկական Կիրիկիայում XIII դարում (հավանաբար՝ նաև ավելի առաջ) մահվան դատապարտվածներից ոմանց իսկապես կենդանահերձել են բժշկագիտական և ուսուցողական նկատառումներով՝ մարդու բարդ կազմվածքը ուսումնասիրելու, շատ հիվանդություններ բուժելու կամ կանխելու և շատերի կյանքը փրկելու համար⁴⁷: Հիշյալ գրավոր վկայությունը, որի հեղինակն է միջնադարյան Հայաստանի գիտափիլիսոփայական մտքի կարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ Վարդան Արևելցու սան Հովհաննես Երզնկացին, որոշակի հաստատում է այդ⁴⁸:

* Սույնը շատ էր գուցակցել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մահվան ճամբարներում իրագործված կենդանահերձումների հետ, որոնց բուն նպատակը ցեղասպանությունն էր և զանգվածային բնաջնջումները. այն բայցովին այլ նպատակի է ծառայել:

47 Խաչիկյան Լ., Գիտահերձումը հին Հայաստանում, էջ 83—90:

48 Նույն տեղում, էջ 84:

Միանգամայն ճիշտ ու կարևոր է Լ. Խաչիկյանի այն պնդումը, թե գիտահերձումը միջնադարյան Հայաստանում պատահական բնույթ չի կրել, միայն այս կամ այն բժշկին վերապահված գործ չի եղել, այլ մինչև իսկ գոյություն են ունեցել «բժշկագիտական դպրոցներ», որոնցում տեսական ու գործնական ուսուցումը իրագործվել է միաժամանակ: Նման, հատկապես մասնագիտական թեքումով դպրոցների առկայությունը, ըստ մեզ, դժվար է անառարկելի համարել, բայց որ գիտահերձումը ախտաճանաչման և բժշկագիտության ուսուցման համար համախա կիրառված օգտակար միջոց է եղել, միանգամայն ստույգ է:

1962 թ. Գ. Գրիգորյանը հրատարակեց երկրորդ վկայությունն աչդ մասին⁴⁹: Ահա այն. «Երաքանչիւրքն, որ ի ներքոյ ի մեզ է՝ սիրտն, լեարդն, փորոտիքն, երակքն և այլ, որ ի մեզ է, թէ ինչ տեսութիւն և ծագումն ունի, կամ թէ՛ դիա՞րդ, կամ որպէ՛ս են սորա՝ հերձին զմահապարտս ի մարդկանց և տեսին աչօք»⁵⁰: Սույնը քաղված է հայկական Կիրիկիայում ապրած և ստեղծագործած հայ ականավոր փիլիսոփա և գիտնական Վահրամ Բարունու (XIII դ.) «Լուծմունք մարդկազմութեան գրոցն Գրիգորի Նիսացուց» երկից, այսինքն՝ գիտակցված և հեղինակավոր խոսք է, որը լրացուցիչ հավաստություն ու կշիռ է տալիս Հովհաննես Երզնկացու վերոհիշյալ վկայությանը:

Գ. Գրիգորյանը ևս հավանություն է տալիս Լ. Խաչիկյանի եզրակացություններին, նշելով, որ «պետք է գոյություն ունեցած լինեն համապատասխան հաստատություններ՝ կամ հիվանդանոցներին, կամ մասնագիտացված դպրոց-ուսումնարաններին կից»⁵¹: Եթե ոչ միևնույն, բայց նման մի դրություն, անկասկած, եղել է:

1968 թ. «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում մի փոքրիկ հաղորդումով մենք ևս հրատարակեցինք մի նոր վկայություն այդ մասին: Ապա հանդես եկանք ավելի ընդարձակ հոդվածով⁵²: Այդ վկայությունը հետևյալն է. «Հարց. Բժշկութիւն որպէ՛ս ուսան: Պատասխանի. զոր հերձելով և զոր ճեխքելով, և զոր սովեցան (—ծ) էին, և գինի տային ըմպել, որ եռայր եռականին և զշարժմունս (արեան—Փ. Ա.) տեսնալ՝ ուսան»⁵³: Սույնը կարևոր է, որը մեկ անգամ ևս հավաստում է վերոնշյալ զույգ վկայությունները և մի քանի լրացումներ է պարունակում:

49 Գրիգորյան Գ., Գիտահերձման գոյությունը միջնադարում հավաստող մի նոր փաստ, էջ 294—298:

50 Նույն տեղում, էջ 294:

51 Նույն տեղում, էջ 294:

52 Անթապյան Փ. «Հայրենիքի ձայն», 1968, № 26: Նույնի՝ Միջնադարյան Հայաստանում իրագործվող գիտահերձման վերաբերյալ ևս մեկ նոր վկայություն, էջ 61—64:

53 Հովհաննես Վանակե, Հարցմունք և պատասխանք, ձեռ. 5611, թ. 83ա:

Նախ դրա հեղինակը անվանի գիտնական և մանկավարժ Հովհաննես Վանականն է, հրատարակված առաջին տվյալի հեղինակ Հովհաննես Երզնկացու ուսուցչի ուսուցիչը, մի քանի տասնամյակ ավելի վաղ ապրած և ստեղծագործած (մահ. 1251 թ.) անձնավորություն: Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ սույն վկայությունը վերաբերում է բուն Հայաստանին՝ Մեծ Հայքին, երրորդը, որ կենդանահերձում կատարելով, ուսումնասիրել են նաև արյան շրջանառությունը, դրա ուղիները՝ երակները, վերջիններիս կապը օրգանիզմի մյուս միավորների ու երևույթների հետ:

Ահա այսքան կարևոր բժշկագիտական իրողություն՝ կենդանահերձման մասին ևս օգտակար խոսք է ասում Վարդան Արևելցին:

Պարզվում է, որ Հովհաննես Երզնկացու այն հայտնի վկայությունը, որը հրատարակվեց իրրև անդրանիկ փաստ միջնադարյան Հայաստանում կենդանահերձման մասին, նույնությամբ քաղված է Վարդան Արևելցու «Հնգամատենի մեկնություն»-ից: Հիշեցնենք, որ Վարդան Արևելցին Հովհաննես Երզնկացու ուսուցիչն էր և վերջինս հաճախ է օգտվել նրա աշխատություններից: Ահա բնագրերի զուգադրությունը.

Վարդան Արևելցի

«Այլ, դոր օրինակ, բժիշկ հանճարեղ զմահապարտ որ առեալ բազմադիմի մահու սպանանէ և աշգի-ազգի կտտանօք և կեղեքելով՝ մինչ գտանել զամենայն յօղուածոցն, և զչլացն և զերակացն, և զփորտուացն զորսխտութիւն: Եւ ի ձեռն միոյն լկանաց՝ բազմաց արասցէ ազոտս»⁵⁴,

Հովհաննես Երզնկացի

«Զոր օրինակ, բժիշկ հանճարեղ եւ իմաստուն զմահապարտ որ առեալ բազմադիմի մահուամբ սպանանէ՝ և աշգի-աղզի կտտանօք և կեղեքելով, մինչ գտանէ զամենայն յօղուածոցն, և զչլացրն, և զերակացն և զփորտուացն զորսխտութիւն. ի ձեռն միոյն լկանաց՝ բազմաց արասցէ ազոտս»⁵⁵:

Ինչպես նշել ենք, մեր հրատարակած վկայության հեղինակը Հովհաննես Վանականն է, որը եղել է Վարդան Արևելցու ուսուցիչը: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ Վարդան Արևելցին, իր հերթին, այն լսել կամ փոխ է առել իր ուսուցիչից:

Բույր դեպքերում էականն այն է, որ Վարդան Արևելցին որոշակիորեն հավաստում է կենդանահերձման կիրառությունը միջնադարյան Հայաստանում ու հանդես է գալիս իրրև հայ բժշկագիտության նվաճումներին լավատեղյակ անձ:

Դա երևում է նաև այլ փաստերից: Օրինակ, նշում է, որ նույնիսկ օձից, գայլից մարդիկ գտնում են «հնարս բժշկութեանս»⁵⁶, որ բույս-

քը բուժական հատկանիշներ ունեն. «...զկինամոնն, ասեն, թէ զցանկութիւն շիջուցանէ...»⁵⁷, երեսաները մոր արգանդում շնչում, սնվում են պորտի միջոցով. «Պորտովն առնուն շունչ և կերակուր տղայքն յարգանդ մարն»⁵⁸, կամ՝ «զի հասարակ կանանցն յղութիւն մինչ ի ե (40) օրն մեռելակրութիւն է, և ապա շնչաբերի և հոգևորի մանուկն և յետայնր՝ յղովք մեռեալս և վիժածս ծնանին»⁵⁹, և թե՛ «զի բժիշկն առաւատուն յանաթուց արբուցանէ հիւանդին զղեղն և ճաշոյն երթայ տեաանէ, թէ որպէս գործեաց զեղն»⁶⁰:

Տիեզերագիտական իր իմացության հետ հմտություն է ցուցաբերում նաև տոմարի ու տոմարագիտության բնագավառում: Հայտնում է, որ ինքը տեղեկացել է. «եթէ Եգիպտոսի լիեալ է սովորութիւն զի (2) յեղանակն տարի ասել, որպէս և արդ՝ ազգ նետողաց»⁶¹:

Իսկ հրեաները տարվա ժամանակը հաշվելիս «յոբելինան վարէին». «...և այլք զյոբելեանն կարծեն, զի հրեայքն յոբելինան վարէին զժամանակ տարեացն, որ է յիսներորդ ամ հանգուցիչ հրէիցն»⁶²:

Նա փորձել է տոմարագիտական հաշվումներով ստուգել մինչև իսկ աստվածային արարչագործության սկզբնավորման ժամանակը⁶³:

Վարդավառի տոնի ժամանակը ճշտելու առիթով գրում է. «Եւ ըստ մերն յանխաղաց տումարն Հրտիցն է և ի շարժականս՝ Արաց պատահի, ուր և կատարեմք զտօն Վարդավառի»⁶⁴:

Այլ առիթով բառացի հաստատում է, որ ինքը «գիտէր զտումարն» և ճշգրիտ հաշվումներ էր անում: «Ժղլանք»-ում գրում է, որ Հովհաննես Գառնեցին իր պատմություններն անելիս հիշատակել է ոմն Պողոս վարդապետի, որը տեսիլք է տեսել, բայց տոմար չիմանալով չի կարող ասել, թե՛ ե՞րբ է այն տեղի ունեցել, մինչդեռ ինքը՝ Վարդան Արևելցին և՛ ամիսն է ճշտել, և՛ օրը. «...և վարդապետն (Հովհաննես—Փ. Ա.) տումար չգիտէր և ես գիտէի. արարի զտումարն, և էր ճշմարտապէս ապրիլ ամսոյ Լ (30)»⁶⁵:

57 Երզնկացի, Երզնկ, ԺԵՆ. № 648, էջ 34:

58 Հնգամատենի, ԺԵՆ. № 1268, թ. 265ա: Տե՛ս նաև՝ ԺԵՆ. № 648, էջ 383:

59 Ժղլանք, ԺԵՆ. № 750, թ. 9ա:

60 Նույն տեղում, թ. № 119բ:

61 Հնգամատենի, ԺԵՆ. № 9718, թ. 123ա—123բ:

62 Հնգամատենի, Երուսաղեմ, ԺԵՆ. № 8891, թ. 79ա:

63 Գանիկի, Երուսաղեմ, ԺԵՆ. № 3606, թ. 288բ:

64 Երզնկացի, ԺԵՆ. 1398, թ. 229ա:

65 Ժղլանք, ԺԵՆ. № 750, թ. 44բ:

54 Հնգամատենի, ԺԵՆ. № 649, էջ 297:

55 Տե՛ս Խաչիկյան Լ., նշված հոդվածը, էջ 84:

56 Հնգամատենի, ԺԵՆ. № 648, էջ 105:

Վարդան Արևելցին իր հաղորդած մանրապատում, բայց ուշագրավ տեղեկություններով զանազան օգտակար փաստեր է հայտնում և միաժամանակ հաստատում իր ընդհանուր իմացությունն բազմազանությունը: Մանրապատումը թեև կուր մեկ-երկուսին: Գրում է, որ Եվսեբիոս Կեսարացու երկերի միջոցով տեղեկացել է, թե իրր զեռևս ամենավաղ ժամանակներում Եգիպտոսի Եսովսիս թագավորն ու Գարեհը Կարմիր և Միջերկրական ծովերը միացնելու ծրագիր են կազմել «...խառնել զծովն Կարմիր ընդ ծովն, որ կոչի Եգիպտոսի»⁶⁶: Բավականին ընդարձակ խոսում է թանկագին քարերի տեսակների, դրանց հանքավայրերի, արժեքի ու նշանակության մասին⁶⁷:

«Ժղլանք»-ում թվում է գիր ու դպրություն ունեցող հետևյալ տասը ժողովուրդներին. «Ո՞ր են Ժ ազգն, որ դպրութիւն ունին, պատ(ասիա-նի). ի նոյէ Գ (3) ազգք բաժանեցան յԳ (3) որդւոցն՝ Սեմայ, Քամայ և Յաբեթի. որ դպրութիւն գիտեն, այս են՝ հայք, եբրայեցիք, լատինացիք, սպանիացիք, յոյնք, մարք՝ Վ (6) ազգք. որդիք Սեմայ, որ գիտեն դպրութիւն՝ հրէայք, պարսք, քաղղեացիք, հնդիկք, ասորեստանեայք՝ Ե (5) ազգ, որդիք Քամայ, որ գիտեն դպրութիւն՝ Փիւնիկեցիք, Ս եգիպտացիք, լալանփիլացիք, փոհագիք՝ ազգ Դ (4), ընդամենն՝ ԺԵ (15), բայց յետոյ յուրիաց և այլ ազգս, որպէս աղանք և վիրք, և լատացիք, և րուվարք, և այլք ևս: Բայց յԱստուծոյ և ի շնորհացն Նորայ Բ (2) ազգ առին գիր՝ հրեայք և հայք»⁶⁸:

Խիստ ուշագրավ է նրա դիտողությունը Աստվածաշնչի հայերեն թարգմանության կապակցությամբ: Ինչպես հայտնի է, այն նախ մասամբ կատարվել է Աստվածաշնչի ասորերեն, ապա լրիվ՝ հունարեն ընագրի («եօթանասնից») հիման վրա: Վարդան Արևելցին մեծ համարձակությամբ դա համարում է սխալ և գտնում, որ հայերեն թարգմանությունը պիտի կատարվեր բուն սկզբնագրից՝ եբրայերենից. «Սխալն նմա է—, գրում է նա,— որ թարգմանեաց (թարգմանեցաւ—Փ. Ա.) ի յեբրայեցոյն ի հելլէն և անտի ի հայս»⁶⁹:

Վարդան Արևելցին մի հետաքրքիր երևույթ է արձանագրում՝ ինչպիսի՞ն են տարբեր ժողովուրդների լեզուները: Նա իր երկերում («Մեկնութիւն հնգամատենի», «Հաւաքումն պատմութեան») երկիցս զետեղում

է բնագրական մի հետաքրքիր հատված, որը, ամենայն հավանականությամբ, փոխ է առել Եղիշեի մեզ չհասած «Արարածոց մեկնութիւն»-ից⁷⁰: Գծվար է առաջում պնդել, թե քաղվածքն արված է առանց փոփոխության. թերևս ինքն էլ է միջամտել: Համենայն դեպս իր կրկնակի մեջբերումները ևս նույնական չեն, ուստի և իր բաժինն անժխտելի է, դրանով էլ՝ ավելի հետաքրքիր: Ըստ երևույթին «Հաւաքումն պատմութեան» մեջ զետեղված հատվածում նրա միջամտությունն ավելի զգալի է, քանի որ այստեղ երևում է նրա անձնական վերաբերմունքը նշված լեզուների հանդեպ: Ահա այդ հատվածը՝ զույգ տարբերակներով.

«Մեկնութիւն Հնգամատենի»

«Այլ և զի կուսն գտանի յազգացոց բառ և բան և անուն, ոչ ասի զեղեցկաբանութիւն եղև ի մի խոշոր լեզուին. փափուկ՝ հելլէն, սաստիկ՝ հոռովմայեցիին, սպանական՝ հոնին, աղաչական՝ ասորին, պերճական՝ պարսիկն, զեղազարկ՝ ալանն, ծաղրական՝ զուրն, տաբաթս խափարածայն՝ եգիպտացին, ճճ/լողական՝ հնդիկն, համեղական՝ հայն, որ կարէ զամենայն յինքն ամփոփել, և որպէս զոյն առ զունով պայծառանայ և զէմք՝ ի դիմաց, և հասակ՝ առ հասակ, և արուեստ՝ առ արուեստ և զորժ՝ առ զորժով, նոնպէս և լեզու՝ լեզուա զեղեցկանայ»⁷¹:

«Հաւաքումն պատմութեան»

«...և դարձեալ պատճառք իմաստից և զեղեցկաբանութեան՝ և խոշոր լեզուին առաջնոյ և՛ ի կոպտաձև. փափկագոյնն՝ հելլենացոց, և սաստկադինն՝ հոռովմայեցոց, հոնն՝ սպանական և ասորին՝ աղաչական, պարսիկն՝ պերճական և ալանն՝ զեղեցկաձև, զուրն՝ ծաղրական, եգիպտացին՝ խաբափածայն, և հնդիկն՝ ճճուող, հայն համեղ և ամենաղարդ և համեմատական. և որպէս աղդի-աղդի զոյնք զեղեցկութիւն առնեն և զանազանութիւնք հասակաց, այսպէս և՛ լեզուաց զանազանութիւնք»⁷²:

Վստահ ենք, որ այս հատվածը հայագիտության մեջ այլ առիթներով ևս շրջանառության մեջ կմտնի և կընդգծվի նրա շահեկանությունը:

Վարդան Արևելցին գրական-գեղարվեստական խոսքի ոչ միայն լայն կիրառողներին է, այլև տեսաբաններին մեկը: Այս մասին ևս նրա տեսակետը շի շարադրված կանոնավոր հետևողականությամբ, այլ տարբեր երկերում տարբեր առիթներով ասված առանձին կարծիքներին է բխեցվում: Ըստ այդմ էլ, բնական է, այն միասնական, ամբողջական

66 Հնգամատենի, ձեռ. № 8891, Բ. 10բ:

67 Նույն տեղում, Բ. 97ա—97բ:

68 Ձեռ. № 750, Բ. 115ա—175բ: Հմմտ. Հովհաննես Վաճաղան, Հարցմունք և պատասխանիք, ձեռ. № 5611, Բ. 70ա: Սույն վկայության սկզբնաղբյուրը, ըստ երևույթին, Անանիա Շիրակացու վերագրվող «Ժամանակագրութիւնն» է: Հմմտ. Աբրահամյան Ա., Շիրակացու մատենագրությունը, էջ 360—362:

69 Հնգամատենի, ձեռ. № 648, էջ 8:

70 Իր «Հնգամատենի Մեկնութեան» մեջ որպես այդ հատվածի աղբյուր նշում է «Եղիշէ», ձեռ. № 8891, Բ. 38ա:

71 Նույն տեղում, Բ. 38ա:

72 Հաւաքումն պատմութեան, էջ 12:

դրսևորում շեր կարող ստանալ, այլ միայն կարող էր ներկայանալ առանձին կետերով:

Որոշակի է նրա տեսակետը հատկապես գեղարվեստական խոսքի հոնտորականության մասին: Նա ճոխություն դեմ չէ, բայց չի համակրում, նույնիսկ դատապարտում ու մերժում է ճոռոմ, արվեստական, մանվածապատ, միլին լեզվամտածողությունը, որը, ըստ նրա, ունայն ջանք է, քանի որ լսողների ոչ թե մտքերը, այլ ականջներն է միայն աշխուժացնում. «Եվ վասն այսորիկ բազմազէտ և շատահանձար և խորախաւս բարոզիլ պաճուճող, յորժամ ոչ զմիտս լսողացն զկնի խաւսիցն տանիմ, այլ միայն զականջաց նորոզ առնուլն, յորժամ որ ի ձորս և յարձանս բարանձաւաց ձայնս տացէ, զոր արձագանքն կոչնէ, որ է հնչումն զկնի ձայնից, զոր աւղղ տանի՝ զբավանդակն ունայն թողեալ՝ զմատակիցսն միտսն շահելոյ ինչ...»⁷³:

Հոնտորության համար պետք է, անշուշտ «գեղջկականությունից» դուրի, «պաճուճազարդ» կամ «քաջոլորակի» խոսքը, սակայն պայման է, որ դա լինի շափավոր, շարաշահի զարդարանքը, լինի «ներդաշնակապես», հակառակ դեպքում. «Եւ որ այսպէս շինի նա զքերթութեան արուեստն ոչ պահէ և ոչ գիտէ զընտրութիւն, այլ տպլէ և աւերէ զքերթածացն զգիտսն և զբաշուրթին գիտնականացն ծիծաղելիս առնէ»⁷⁴: Արժե այստեղ կրկին ծանոթանալ այս կապակցությամբ նրա վկայակոչած առակին, որով սուր ծաղրի է ենթարկում «անարուեստ» ու «բարձրաճ» հոնտորներին. «...ասեն, թէ քերթողի աշակերտ որ կատարեալ ուսեալ՝ գնայ ի դրախտն միրգ բերել իւր վարդապետին, և առեալ ծեծեցին զնա և արինաշաղախ թողին: Եւ տեսեալ վարդապետին՝ հարցանէր զպատճառն: Եւ նա քերթողապէս քերածու բանիւ և շափածու վանդիւք պատմեաց զեղեալ գործն, թէ ինչ ազգ ծեծեցին և ինչ նիւթով: Ասաց՝ բոնցի, մուրբացի՝ մատանցն կոճերով, ծղացի՝ բազկացն ծղացն և արմընկամբքն, աքացի՝ ոտաւքն, ողկուզաւրէն՝ զերզ զխաղող կոխեցին, տարմաբար՝ ի վերայ զիմեցին բազմութիւնքն առհասարակ»⁷⁵:

Գեղարվեստական, հոնտորական խոսքի հեղինակը պետք է ընտիր ճաշակի տեր լինի, պահպանի միայն անհրաժեշտը, օգտակարը, գեղեցիկը, շանձբացնի ունկնդրին կամ ընթերցողին, միշտ նկատի ունենա, որ նախ և առաջ հասկանալի լինի նշանը⁷⁶:

Ինչքան էլ Դիոնիսիոս Թրակացու «Քերականութեան» հայերեն թարգմանության և նրա հայ մեկնիչների երկերի հետևողությամբ է շարագրում իր տեսակետները տաղաչափական տարբեր երևույթների մասին, այդուհանդերձ, հետաքրքրությունից զուրկ չէ նա նաև այս ոլորտում⁷⁷: Հետաքրքիր է, որ ոչ միայն իր ներբողներում, այլև ճառերում երբեմն ստեղծագործել է շափով և նույնիսկ հանգով, ինչպես, «Հայեացի քեզ» ճառում⁷⁸:

Երաժշտագիտական իր հմտությունը դրսևորելու տեսակետից դարձյալ օգտակար որոշ նյութ ունի ոչ միայն «Ժղլանք»-ում, այլև «Քերականութեան մեկնութեան» մեջ⁷⁹:

Վարդան Արևելցին հիշատակություններ ունի նաև հայ ժողովրդի կենցաղի, բարքերի, սովորույթների մասին: Հայտնի է, որ կիրակի օրը նաև Հայաստանում հանգստի և տոնակատարությունների օր էր: Ժողովուրդը միայն իր կրոնական արարողությունները կատարելով և եկեղեցի հաճախելով չէր միջնեցնում այդ օրը, այլ բազմազան զվարճություններով, կերուխումով ու վայելքներով էր այն նշում: Ըստ երևույթին, շատ բան նաև դեռևս տեղի էր ունենում «հեթանոսավարի», ինչպես հասկացվում է Վարդան Արևելցու «Յաղագս է աուր արարչութեան» ճառի հետևյալ տողերից. «Արդ պարտ է պատուել և պահել զկիրակէն, բայց ոչ անասնաբար միայն յղխատութենէ (— յղխատութենէ) և ի բան առնելոյլ պահել, և ծաղրով և կատականաւք և վայրախաւսութեամբ անցուցանել զարն...»⁸⁰: Նրա «Ե ՃԱ սաղմոսն» ճառի մեջ ի միջի այլոց խոսվում է մի հետաքրքիր սովորույթի մասին, որն ուշագրավ է ոչ միայն այս առումով, այլև իր խոհական-փիլիսոփայական բովանդակությամբ: Այդ փոքրիկ սովորույթը կամ ծեսը կատարվում էր այն նպատակով, որ կերուխումի, վայելքի, խնջույքի սիրահարներին հիշեցնեն, թե կյանքի իմաստը հաճոյախոսության մեջ չէ, քանի որ կյանքը ինքը շատ կարճատև է, «նանիր» խոտի նման այսօր բուսնում և վաղը չորանում է. «Քանզի, ասի,— գրում է Վարդան Արևելցին,— զայս նանիր ի հինն պահէին թագաւորք զսերմն և ի ժամ հացին ցանէին ի վերայ սկտեղոյլ, հող արկեալ, որ բուսանէր և աճեցեալ՝ ցամաքէր, մինչդեռ շինէին կարի գինով զուարճացեալք: Վասնորոյ, յիշելով զընութիւնս՝ լուծանէին զերախանսն...»⁸¹:

73 Կամիմ բան է մտք խօսել... ձեռ. № 4139, ք. 389բ:

74 Մեկնութիւն քերականի, էջ 79:

75 Նույն տեղում, էջ 142:

76 Նույն տեղում, էջ 165: Տե՛ս նաև՝ ի Տասնարանեան, ձեռ. № 1324, ք. 277բ:

77 Նույն տեղում, էջ 78, 160—163:

78 Հայեացի քեզ, ձեռ. № 1324, ք. 267բ:

79 Մեկնութիւն քերականի, էջ 79:

80 Յաղագս է աուր, ձեռ. № 4139, ք. 235բ—236ա:

81 Ե ՃԱ սաղմոսն, ձեռ. № 4139, ք. 404ա:

Նույն ճառի մեջ ուշագրավ վկայություն կա նաև մեռելաթաղի ավանդույթի մասին, որը ոչ ամեն կերպ ըստ եկեղեցական կարգի էր այսինքն ոչ այնպես, ինչպես «Ձեռաց Մաշտոց»-ներում է նախատեսված: Թեև այստեղ խոսքն ավելի որոշակի քահանայական թաղման մասին է, բայց այն մասամբ վերաբերում է նաև «սովորական» մահկանացուին և այդքանով էլ ավելի կարեւոր է մեզ համար: Ահա այն. «Իսկ զմարմինն (մեռելուն—Փ. Ա.) լուսնան քահանայն և ի յիրում ժամուն ամանեն սուրբ եղովն առջի սրբոյլ սեղանուն, որպէս և ողմպիական մարտակցին և ի վճարման հանդիսին: Գարձեալ ի բաղանիս տարեալ, լուսնան ի փոշոյն և ի քրտանցն և ամանեն ի հանգիստ, և պատկեալ զնա նոր ազուցմամբ և բրաբիոն ոստովք՝ ցնծան նովաւ: Զնոյն արիհակ և աստ ցուցեալ, առզանան ամեալ հանեն ընդդէմ թշնամոյն սատանայի ի հանդէս: Եւ ի ճարման ասպարիսին նոյնպէս ամանեն և յաւրինեն...»⁸²:

Գրիգոր Լուսավորչին նվիրված իր ներբողում, պատմելով Հոնիփսիմյանց կույսերի մասին, նա մի քանի նկարագրական խոսք է ասում նրանց զգեստների վերաբերյալ, որոնք կարծում ենք, նույնպես հետաքրքրությունից զուրկ չեն. «...հարսունքն Քրիստոսի,— գրում է նա,— ճղնազեղեալք ի հանդերձս յոսկեհուռս, վերջաւորս և թղանցաւորս կազմեալք և թազ ի գլուխ պատկեալք...»⁸³:

Նրա տեսադաշտից շնն վրիպել նաև ժողովրդի վարքուրարքի մեջ կենցաղավարող առանին մանր սովորույթները: Նա դատապարտում է ծամ և մորուք հարդարելը. «Մի՛ ապականէք զտես մօրուաց, ծամս առնել կամ՝ խոպոպիս, կամ՝ հարթել, կամ՝ ներկել, զի ապականութիւն է շթողուն ըստ բնութեան»⁸⁴: Անարգում է նաև նրանց, ովքեր ասեղնածեծելով մարմնի տարբեր մասերում նկարներ են դաշում «քաջս ձևացուցանելով». «Գիր կտեալ մի առնիցես՝ անուանս ինչ գրել և ի ձեռին ունել, կտեալ, գծեալ վէտս ի վերայ ոգուց՝ մի առնիցէք, զոր առնեն արինաներկս ասղամբ ձեծելով կերպարանս նկարունս. ոմանք արդ քաջս ձևացուցանեն»⁸⁵:

Առ այսօր Հայաստանում շարունակվում է ժողովրդական մի ծես. հանգուցյալի թաղման, մահվան յոթնյակի, քառասունքի կամ տարելիցի առիթով գինի են ըմպում և շաղ տալիս շիրիմի վրա: Վարդան Արե-

վելցին մերժում է դա ևս. «...թուի թէ, զոր և արդ առնեն, գինի արկանելով ի գետին ի յիշելն զմեռեալս, զոր չէ պարտ առնել...»⁸⁶:

Վարդան Արեւելցին ծանոթ է եղել նաև օտար ժողովուրդների առասպելներին, հավատալիքներին, սովորույթներին և ավանդույթներին: Այս կապակցությամբ ևս թողել է հետաքրքիր վկայություններ: Ծանոթանալով մեկ-երկուսին: Նկատի են հանալով քրիստոնեության մուտքը Հայաստան, Գրիգոր Լուսավորչին նվիրված ներբողում գրում է. «Կործանէր Բէլ, խորտակէր Գագոն, մեռանէր Զես՝ ի կրղզիս արգելեալ, շանթակէզ լինէր Ասկղիպիդէս, Արամազդ և Արէս առեալ զփառս իւրեանց դիմէին յանդունդս, Աստղիկ զբողութիւն առեալ՝ փախէր աս հոմանիսն իւր...»⁸⁷: Մի այլ ներբողում հետեյալ տողն ենք կարդում. «որպէս և ի Հոմմելոյ մեծն Հոմմ է, զկնի Իլիոնական պատերազմին»⁸⁸: «Ի Տասնաբանեան» ճառի մեջ թվարկում է հեթանոս ժողովուրդների պաշտամունքի առարկաները. «Վասնորոյ առին ի պաշտան զմասունս արարածոց, ոմանք դարեգակն պաշտեցին և վահագն կոչեցին, և այլք զլուսին՝ և Արտեմիս ձայնեցին, կէսք զերկուս կիսագունդիս երկնից և մանկունս Զրուանայլ կարգացին, այլք զամենայն երկին՝ և Կոռնոս անուանեցին, և կէսք զայս ի մոլորակաց և յանմոլար աստեղաց՝ զանազան անուանս կոչելով ի վերայ նոցա... Քանզի ոմանք ի հեթանոսաց զաւր պաշտեցին և ոմանք զերկիր՝ և Դեմետր յորշորջեցին, և այլևս կուրամիտքն, որ առաւել չար էին, զգազանս, և զսողունս, և զանասունքս, որպէս պարսիկք՝ զհուր և զջուր, և բարեխացիք՝ զվիշապս և զաւս և եգիպտացիքն՝ զբաշ յածից և զոչխարս, և եթնոպացիքն՝ զկուզս և զկոկորդիլոս, և որ կարի ախտաւորքն էին՝ զախտս և զցանկութիւնս աստուածացուցին, և այլք՝ զայս, և արարին զպատկերս նոցա և երկիրպագին»⁸⁹:

Յաբուցրիվ, բայց բավականին շատ են տեղագրական բնույթի մանր տեղեկությունները, որոնք կարող են այս կամ այն առնչությամբ օգտակար լինել: Այսպես, օրինակ. «Եվ բնակեցաւ (Գրիգոր Լուսավորիչ,— Փ. Ա.) ի լեառն Սեպուհ, որ այժմ կոչի յանուն նորա սուրբ Գրիգոր»⁹⁰, կամ՝ «... և տեղին յայն խաչ կանգնեաց (Գրիգոր Լուսավորիչ— Փ. Ա.) և Սերուբէս անուանեաց, և անուն գեղջին կոչի Սերուբէք»⁹¹: Տե-

82 Նույն տեղում, թ. 405ր:

83 Ներբողան ի Գրիգոր Լուսավորիչն, ձեռ. № 8775, թ. 235ր:

84 Հնգամատենի, ձեռ. № 648, էջ 390:

85 Նույն տեղում, էջ 390:

86 Նույն տեղում, էջ 435:

87 Ներբողան ի Գրիգոր Լուսավորիչն, ձեռ. № 8775, թ. 229ր:

88 Գրուատ զովեստի ի Վահրամ..., ձեռ. № 8775, թ. 309ր:

89 Ի Տասնաբանեան, ձեռ. № 4139, թ. 235ա:

90 Ներբողան ի Գրիգոր Լուսավորիչն, ձեռ. № 8775, թ. 237ր:

91 Նույն տեղում, թ. 238ա:

ղագրական բնույթի ավելի մանրամասն նկարագրություններ ունի Հոռոմ-կլայի, Օձունի և այլ վայրերի մասին, որոնցում ինքը եղել է անձամբ⁹²։ «Եւ մերս՝ (Հոռոմկլայ—Փ. Ա.) յԱսիականն, Գերմանիկ է, յերի կալով Միջագետաց և Ասորեստանի, միաձույլ, միատարր, ունելով ի թիկանց անձաւս լերին, իբրև զնետ մի բնադր յարեմտից եկեալ ևրեք սլաքաւ ի ժայռ խրամատին երկուց գետոց՝ Եփրատայ և Փարզման ասացելոյն...»⁹³։

* * *

Վարդան Արեւելցու հանրագիտական իմացության առավել հարուստ շտեմարանը «Ժղլանքն» է։ Այնտեղ ավելի ընդգրկուն է նրա գիտելիքները, խոհերը, հետաքրքրությունների շրջագիծը։ Այն, առհասարակ, գիտամշակութային նշանակալից երևույթ է։ Թեև նախորդ էջերում նրանից գիտական առանձին նյութեր դրել ենք շրջանառության մեջ⁹⁴, սակայն անհրաժեշտություն է զգացվում այս առնչությամբ լրացուցիչ խոսք ասել, որպեսզի և՛ «Ժղլանքը» ըստ ամենայնի գնահատվի, և՛ հեղինակի գիտական բնութագիրը ամբողջանալ։

Գիտենք արդեն, որ «Ժղլանքը» հորինված է Հեթում Ա թագավորի համար այն նպատակով ու ծրագրով, որ նա հնարավորին շափ շատ օգտվի անհրաժեշտ և կարևոր գիտելիքներից։ Արեւելցին կատարել է նյութերի ընտրությունը և գտել դրանց մատուցման եղանակը։ Հեղինակը մշտապես հաղորդակցության մեջ է գեոսոսա թագավորի հետ։ Վերջինիս ուղղված ուղղակի խոսքերն այնքան հաճախադեպ են և ժողովածուի ընդհանուր շարադրանքն այնքան մտերմիկ ու անմիջական է, որ տպավորություն է ստեղծվում, թե գործ ունենք մի ընդարձակ զրուցաշարքի հետ։ Այս փաստն, ի դեպ, տարօրինակ կերպով արձանագրված է երկի հիշատակարանի «Հրամայեցիք, որ գրեաք ձեզ ժղլանք» արտահայտության մեջ⁹⁵։

Արդ, հարց է առաջանում՝ ի՞նչ է նշանակում «Ժղլանք»։ Հ. Աճառյանը այն բխեցնում է արաբերեն شغل արմատից և հետևյալ ընդարձակ բացատրությունն է տալիս. «Ժղուլ.— «զբօսանք, զբաղ-

մունք» (նորագիտ բառ), որից ունինք ի ժղուլ լինել՝ «զբաղվիլ», Տաթև ձմ. լզ. (միայն է դէտն, թէ բազումք լինին, ի ժղուլ լինին և խափանի հայեին), Ժղլիլ «զբօսունուլ» (չունի ԱԲ), լծ. նար. Ժե (Հրճուանք, Ժղլանք, զոր ժղլեցայ յերկրի), Ժղլանք «մանր մունր գիտելիք, զբօսանք ԱԲ «խօսակցութիւն, խօսվրտուր» վարդան վարդապետի Քերականի մեկնություն մեջ... Գլու.— հն. Մշ. Ժղուլ «խօսք, զրոյց, խօսակցութիւն»։ Ալլ. հն. ՄՇ. նԲ. վն. Ժղլել «զբաղիլ, խօսակցելով ժամանակ անցկացնել», որից ՄՇ. «Ժղլտուն» այն տեղը, ուր հաւաքվում են խօսակցելով ժամանակ անցկացնելու համար»⁹⁶։

1384 թ. գրված մի հիշատակարանում այս առթիվ կարդում ենք. «Ժուղլ խիսա է և ժխոր...»։ Լ. Խաչիկյանը տողատակում հետևյալ բացատրությունն է տալիս այդ առթիվ. «նշանակում է «զբույց», «աղմուկ»⁹⁷։

Առաքել Սյունեցու Դրախտագրքի մեջ ևս օգտագործված են «Ժղլանք» և «Ժղլեցնէ» բառերը «զբույց», «խօսակցություն» իմաստով⁹⁸։ Այսօր էլ սասունցիները օգտագործում են այն այս նույն իմաստով։ Ուրեմն, Վարդան Արեւելցու այս երկը իրապես էլ մի «Ժղլանք» է՝ հեղինակի և թագավորի միջև, և իբրև այդպիսին՝ եզակի հայ մատենագրության մեջ։

Գա հաստատվում է նաև Կիլիկիայի հայկական թագավորության պալատական շրջանակների մեզ արդեն հայտնի ավանդական այն սովորությամբ, որի մասին պատմում է XIII դարում Կիլիկիայում եղած գոմինիկյան միաբանության անդամ Բուրխարդուս զև Սանտե Մոնտենի «Ուղեգրության» մեջ⁹⁹։

Նա պատմում է, որ Կիլիկյան հայկական արքունիքում յուրաքանչյուր օր ժամը 3-ին մի վարդապետ գիրք է կարդում թագավորի և իշխանների համար «ռամկորեն»։ «Ժղլանք»-ը, ըստ երևույթին, այդպիսի սովորության արդյունք է։ Շատ որոշակի է, որ այն շարադրված է Հեթում Ա թագավորի հետ մտերմ, ուսուցողական զրույցի բռնված, նրան բազմազան գիտելիքներ հաղորդելու փափագով տոգորված հեղինակի կողմից։ Վերջինս Վարդան Արեւելցին է, որը, ինչպես տեսանք, հարուստ է միջին դարերի մարդու համար հետաքրքիր ու շահեկան գիտելիքներով՝ կրոնական-եղանակական տեսական ու գործնական խնդիրների վերա-

96 Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Գ, էջ 42։ Տե՛ս նաև՝ Մալխասյանց Մ., Հայերէն բացատրական բառարան, Բ, էջ 144։

97 Հիշատակարաններ, ԺԴ դ., էջ 550։

98 Առաքել Սյունեցի, Դրախտագրք, էջ 143, 154։

99 «Արարատ», 1914, էջ 1016։ Այդ ուղեգրության Կիլիկյան Հայաստանին վերաբերող մասը թարգմանել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը։

92 Դրուատ գովեստի ի Վահրամ, ձև. № 8775, Բ. 309բ—310ա։ Ներքողեան ի Յովհաննէս Ուննեցին, Մատենադարան, ձև. № 3069, Բ. 107բ—114բ։

93 Դրուատ գովեստի ի Վահրամ, ձև. № 8775, Բ. 309բ։

94 Տե՛ս նաև՝ «Մայր գրերի գլուխի վերաբերյալ Վարդան Արեւելցու մի քանի հաստատումների շուրջ»՝ անր հոդվածը, Ե—Ձ, էջ 175—183, 1978, Ա, էջ 45—47։ Կուզենայինը նշել, որ հոդվածի որոշ կետեր այսօր մեզ համար վերանայելի են։

95 Մատենադարան, ձև. № 341, էջ 103ա։

ընդհանուր, հմուտ և այն բազմաթիվ հարցերին, որոնք վերաբերում են բնափիլիսոփայությանը, տիեզերագիտությանը, բուսական ու կենդանական աշխարհին, բժշկության տոմարին, ժողովուրդների բանահյուսական և հավատքիալիքային նյութերին, անտիկ աշխարհի գիտափիլիսոփայական նվաճումներին, մարդուն, արվեստներին, լեզվին, քերականությանը և այլն: Այդ բոլորի մասին վկայող բազմաթիվ քաղվածքներ բերել ենք նաև սույն աշխատությունից: Նման նյութերի ընդգրկմամբ ու կառուցվածքով թեև և այն նմանություն ունի հայ մատենագրության մեջ «Ոսկեփորիկ» հորջորջված հայտնի ժողովածուի հետ, բայց նույնական չէ¹⁰⁰, բովանդակությունը զգալիորեն տարբեր է, ուղղված է որոշակի հասցեատիրոջ, հորինված է այլ ծրագրով ու նպատակով: Ձուտ գիտական նյութերն էլ հաճախ շարադրված են անմիջական, գյուրահաղորդ հուղականությամբ: Հնդինակը իր քաղաքացիական-հայրենասիրական մտահոգություններով ու շահագրգռվածությամբ «Ժողովանք»-ը դարձնում է առավել նպատակային, բայց նաև կենդանի, տեղանդ բավականին գրավիչ, գիտականից դեպի գեղարվեստական ոլորտը մուտք գործելու մի տեսակ անցման վիճակ է ստեղծում նրա համար: Դրան նպաստում է նաև այն, որ «Ժողանք»-ը միաժամանակ ընդգրկում է զուտ գեղարվեստական նյութեր՝ մանր հրաշապատում գրույցներ, որոնք մեր գեղարվեստական արձակի հնավանդ փշրանքներից են:

Այս և նման այլ նյութերի առկայությունը հիմք է տալիս որոշ շահով այն համարելու նաև գեղարվեստական գրականության ոլորտի աշխատություն, շմոռանալով, որ ըստ մեծի մասին գիտական նյութերի ժողովածու է և հիմնականում պիտի գիտվի իբրև այդպիսին: Կարելի է այն նկատառել նաև իբրև ուսուցողական ձևերով, ուսումնական ծրագրերին նյութ մատակարարող օժանդակ ժողովածու:

«Ժողանք»-ը գիտատուսողական իր նպատակին ծառայել է լիովին, մեծ հետաքրքրություն կենտրոնացնելով իր վրա դարերի ընթացքում: Դրան առավելապես նպաստել է բովանդակության թեմատիկ բազմազանությունը, հավեր պատշաճի և հետաքրքրաշարժ լինելը:

«Ժողանք»-ը առնչություն ունի նաև հայկական նշանագրերի կամ՝ «նշանագիրք իմաստնոց»-ի հետ: Նշանագրերի հայտնի ցանկը, որի մեծ մասը բաղկացած է համառոտագրություններից, ամենայն հավանականությամբ մաս է կազմել «Ժողանք»-ին. ուստի պատկանում է վարդան Արևելցու գրչին և XIII դարից այն կողմ չի անցնում:

Առաջին հայացքից իսկ նկատելի է, որ ցանկի մեջ կան և՛ նշանագրեր, և՛ համառոտագրություններ: Առաջինները ձևված են դանազան գծապատկերների տեսքով, երկրորդները՝ հայկական բուրգրի հիման վրա: Վերջիններս հորինվել են, հավանաբար, XII դարից հետո, երբ բուրգրի համեմատաբար լայն կիրառություն է գտնում մեր ձեռագրերում, ուստի դրանք ուղղակի կասկ չէին կարող ունենալ հայկական բուն նշանագրերի հետ: Իսկ առաջինները ոչ մի ձևական աղերս չունեն հայկական գրերի հետ և, անշուշտ, մասամբ հայկական նշանագրերի մնացորդ նմուշներ են:

Հայ նշանագրերի խնդիրը վերջերս սկսել է արժանանալ որոշակի ուշադրություն: Նախկինում դրանց նկատմամբ ցուցաբերված հետաքրքրությունը կրել է մասնակի բնույթ: Մ. Չամչյանի, Մ. Էմինի, Ի. Հարությունյանի, Տ. Պալյանի և այլոց գիտարկումները սուսկ հարևանցի ակնարկներ են: Հ. Աճառյանը (հատուկ զուլս է հատկացրել) փորձել է մասնավորապես բացատրել դրանց ծագումը, միաժամանակ բացատրել նաև արվար առնչությունը հին հայ մեհենագրությունների («մեհենագրողմներ») կամ Գանիկյան գրերի հետ¹⁰¹:

Սովետահայ գիտնականներից առաջինը Ա. Աբրահամյանն է հայ նշանագրերը հատուկ քննության նյութ դարձրել: Հնագրության վերաբերյալ իր կազմած ձեռնարկներում դրանց հատկացրել է առանձին տեղ, ձեռագիր մատյանների հիման վրա ընդարձակ ցանկեր է կազմել և համեմատել եզրիպատական, հնդկական նշանագրերի հետ: Նա ենթադրում է, որ դրանց միջև որոշ առնչություններ կան: Երկու հիմնական խմբի է բաժանում ձեռագրերում պահպանված ցուցակները՝ Երզնկայի և Կիլիկիայի: Մեր կարծիքով դա լրիվ չի բացահայտում ձեռագրերում առկա պատկերը: Մասամբ միայն ընդունելի է նրա այն կարծիքը, ըստ որի հիշյալ ցուցակները «12-րդ դարից շուտ և 13-րդ դարից ուշ կազմված լինել չեն կարող», քանի որ նշանագրերի մի մասը առհասարակ կապ չունի հայերեն գրի հետ¹⁰²: Նաև իր պաշտպանած այն տեսակետը, ըստ որի հայ նշանագրությունը որոշ շահով իբր սղագրության մի ձև է¹⁰³, իրավացի է այնքանով, որ այն կիրառվել է նաև սղագրական նպատակներով, բայց՝ միայն այդքան: Համոզվում ենք հատկապես, երբ կարդում ենք Լ. Խաչիկյանի հայ նախամեսոպոլյան գրի հարցին նվիրված արժեքավոր հոդվածը¹⁰⁴: Հիմնականում հետազոտելով հմայագրե-

101 Աճառյան Հ., Հայոց գրերը, էջ 427—429:

102 Աբրահամյան Ա., Հայ գիր և գրություն, էջ 205:

103 Նույն տեղում, էջ 209:

104 Խաչիկյան Լ., Նախամեսոպոլյան գրի հարցը և հմայագրերը, էջ 145—157:

¹⁰⁰ Հարությունյան Ի., Հայոց գիրը, էջ 267:

րում օգտագործված նշանները, նա նշում է, որ հայ մատենագրության մեջ, սկսած X դարից, բազմիցս դատապարտվել են գրանց տարրեր կիրառությունները, իբրև «սատանայական» գործ¹⁰⁵: «Մեջ բերված նյութերը,— գրում է նա,— այսպիսով վկայում են, որ սկսած հենց հայ մատենագրության սկզբնավորման ժամանակներից՝ մինչև ուշ միջնադար, հայ կախարհները, բախտագուշակներն ու մոգական բժշկությունները գրազդող անհատները, ի թիվս այլ կախարհությունների, գծել են նաև ինչ-որ նշանագրեր (Նդիշե), հիվանդների վզերին ինչ-որ «գրեալ պահարան»-ներ են արկանել (Հովհան Մայրազոմեցի), ինչ-որ «գրեաց շունչ ծրար»-ներ ու «սատանայական փաթեթ»-ներ (Վարդան Այգեկցի), «զգիրս կախարհաց» գրել և ուսուցանել («Կանոնագիրք հայոց») և այլն»¹⁰⁶: Ըստ այսմ և, հաշիկյանը իրավացիորեն եզրակացնում է, որ «Այդպիսի (իմա՝ հմայական—Փ. Ա.) պարզունակ մտքեր գրանցելու համար հեթանոսական ժամանակներում կային, ուրեմն, ինչ-որ նշանագրեր (հավանաբար դադափարագրեր), որոնց գեմ երկար դարեր պայքարում էին հայոց եկեղեցու զաղափարախոսները»¹⁰⁷: նա նմանատիպ նշաններ է համարում ձեռագրերում պահպանված նշանադրերը, որոնք սովորաբար «նշանագիրք իմաստնոց» անունն են կրում, որոնցից են նաև «Ժղլանք»-ում եղածները, և նույնիսկ «սերտ առնշուփյուն» է տեսնում դրանց միջև¹⁰⁸: Ամենակարևորն այն է, որ անվանի հայագետը համոզիչ է դարձնում այն հնարավորությունը, որ հայ նշանագրությունը, թեև ուղիք իբր՝ «խիստ նեղ նպատակների ծառայող, նախնական պրիմիտիվ սխտեմի», կիրառվել է հեթանոսական Հայաստանում և հանդիսացել այդ ժամանակների գրավոր խոսք: Ըստ երևույթի, այդպես էլ եղել է, և «Ժղլանք»-ում պահպանվածները դրա մնացուկներից են, որոնք սպասում են գիտական լուրջ ու ամբողջական վերծանման հայ միջնադարյան ձեռագրերում սփռված իրենց «ազգակիցների» հետ միասին:

Այս առումով «Ժղլանք»-ը ուշադրությունից վրիպել չի կարող, մանավանդ, երբ հարցն այսպիսով վերաբերում է նաև նախամեսոպոլյան գրի ու գրականության այնքան կարևոր հարցին:

Վարդան Արևելցին «Ժղլանք»-ում երբեմն մեջբերված, երբեմն հարց ու պատասխանի ձևով առիթը չի փախցնում գահացնելու թագավորի, հանձին նրա՝ միջնադարի հայ մարդու հետաքրքրասիրությունը նաև բազմաթիվ մանր-մունք հարցերի շուրջ, որոնցով լցված էր նրանց

առօրյա իմացական և հոգևոր կյանքը: Դրանցից են՝ Մարիամը կո՞ւյս էր, թե ոչ, ինչո՞ւ է մարդը և՛ բարի, և՛ չար գործ կատարում, ինչո՞ւ «ձայնին» (իմա երգասացությունը—Փ. Ա.) խառնեցին նվագը (Դավիթ մարգարեն), ինչպե՞ս պետք է կոչել կենդանական աշխարհի յուրաքանչյուր խմբի «խոսելու» կերպը, ինչպե՞ս բաժանվեցին լեզուները, ինչո՞ւ մինչև Մովսես մարգարեն չգրվեց Աստծու խոսքը, ինչո՞ւ Մովսեսի որդիները չեն հիշվում, ինչպե՞ս Քրիստոսը մատնացույց է արել եկեղեցական նվիրապետությունը, ինչո՞ւ «խոնարհեցո և ապրեցո» փոխ են կարդում երեկոյան, ինչո՞ւ մեռելների համար «ամբիծք» են ասում, քանի՞ գիրք ընդունելի են Աստվածաշնչում, ինչո՞ւ են սովորաբար Ղուկասու «Ավետարանը»՝ առավոտյան, «Գործք առաքելոց»-ը՝ ճաշին, Մատթեոսի «Ավետարանը»՝ երեկոյան, Մարկոսինը՝ արձակման և Հովհաննու «Ավետարանը»՝ պատարագի ընթացքում կարդում և այլն և այլն¹⁰⁹: Ի դեպ, այսօր էլ, դրանց շահեկանությունը որոշ առումով պահպանվում է ոչ միայն եկեղեցական գործող և ուսումնառական կյանքում, այլև պատմաբանասիրական, մատենագրական, բնագրագիտական, աղբյուրագիտական, նույնիսկ աշխարհայացքային շատ խնդիրներ լուսարանելու և որոշելու համար:

Նաև հատկանշական են այսպիսի սահմանումները՝ «Թնութին է սկիզբն շարժման... սրտմտութին է եռալ շուրջ զսրտին արեան... արդարութին՝ հաւասարաբաշխութին... մարդ կենդանի՝ բանաւոր մահկանացու, մտաց և մակացութեան ընդունակ... մակացութին՝ ուղիղ թուեցումն է՝ կապեալ պատճառաւ... դատումն է հաւաքումն հասարակ մտածութեան... անհաւանութին է նեղութին մտաց, վստահութին է արիութին հեղոց... նորոգումն է արժարժումն հնացելոյն... զեղեցկութին է խարեութին ծածկեալ, ազահութին սրբնթաց որոգայթ...»¹¹⁰:

Իսկ ինչպիսի՞ն է հուրը, քառյակի հիմնական տարերքներից մեկը. «...Հուրն այրիչ է և լուսաւորիչ, հուրն շարժումն ի վեր ունի, զի առանց նորա ամուլ են տարերքս: Ընդ ամենայն արարածքս է հուրն, զի ջուրն, որ նմա հակառակ է, և նա հուր ունի յինքեան: Հուրն թէպէտ շիշանի ի նիւթոյն, բայց ոչ կորնչի, այլ միայնայ յիր էութին: Անըմբռնելի է հուրն և զանխլացեալ: Բաժանարար է հուր ամենայն հալողական նիւթոց: Միաւորիչ է հուր բաժանելոցն և կցողական: Ըստ զանազանութեան նիւթոյն պայծառանայ հուրն, առաւելու յոսկի և յարժաթ և յապակի և նուազանայ ի քար և ի հող և ի սոցին նմանս...»¹¹¹: Ինչպես

105 Նույն տեղում, էջ 147—149:

106 Նույն տեղում, էջ 149:

107 Նույն տեղում, էջ 156:

108 Նույն տեղում, էջ 157:

109 Ժղլանք, ձեռ. № 750, Թ. 104բ—222ա:

110 Նույն տեղում, Թ. 51բ—54ա:

111 Նույն տեղում, Թ. 144բ:

մյուս գիտելիքները հաղորդելիս, այս դեպքում էլ Վարդան Արևելցին առընթեր տալիս է իր բարոյագաստիարակչական նկատառումները. «Ձայս Ժ զարութիւնս, զոր ունի հուրն, դիւրին է քո իմաստութեանդ արինակել ի հոգին Սուրբ, ի զարութիւն հաւատոյն և սիրոյն, զորոց զբորբոքումն կամէր Տէրն»¹¹²:

Վարդան Արևելցին գրեթե ամենուրեք և ամեն դեպքում հանդես է բերում իր մեկնաբանական հակումները, սիրում է միշտ մեկնելի ամենապատվավոր դերում զգալ իրեն: Այդպես նաև այստեղ. «Ապայ թէ բանին մասամբքն կամիս լսել զմեկնութիւն Տեսն բանին, յառաջ զայս պիտի հարցնել՝ հուրն ո՞ր մասն է բանին յով մասանցն, անո՞ն է, սե՞ռ, զոր ունի, արո՞ւ է, զի գործող է: Տեսակ զո՞ր ունի՝ նախագաղափար, ձև զո՞ր ունի՝ պարզ, երեք անկիւնի, թիւ զո՞ր ունի՝ եզական, հոլով զո՞ր ունի՝ ուղղական, մարմի՞ն է, թէ՛ իր, մարմին է: Այս Ձ արուեստիս զամենայն քննէ՛ սեռ, տեսակ, ձև, թիւ, հոլով, էութիւն: Սեռ ազգն է, որ յերեք բաժանի՛ յարու, չէզ, ի չէզոր: Եւ տեսակն յերկու բաժանի՛ ի նախագաղափար և յաժանցական, որպէս՝ ծով և ձուկն, երկիր՝ և երկնային (— երկրային), հուր՝ և հրային: Ձևն ի յանդիւնս բաժանի՛ եռանգիւնի, քառանգիւնի, թիւն՝ մի, երկու, յերիս: Հոլովն այն է, որ Թորոսոյ ասեմք, և ուղղական՝ երկր Թորոս: էութիւն բաժանի ի մարմին և յանմարմին, բայց զհրոյն որպիսութիւն ի բնութեան տես...»¹¹³: Դժվար չէ նկատել, որ տվյալ դեպքում նա միաժամանակ հանդես է գալիս նաև իբրև քերականագետ, փիլիսոփա (սեռ, տեսակ, ձև) և, անպայման, մանկավարժ:

«Ժղլանք»-ում երաժշտությունը թեև հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել, սակայն վերջինիս վերաբերյալ նրանում տեղ գտած հաղորդումները հետաքրքրությունից զուրկ չեն մանավանդ հայ երաժշտության պատմության և բանասիրության տեսանկյունից:

Հիմնականում կրկնելով Ստեփանոս Սյունեցուն, մեր հեղինակը հայտնում է, թե ով է կատարել ձայների տեսակների առաջին դասակարգումը, որ երաժիշտը ինչպիսի նվագարան է պատրաստել, Ա. Բ. Գ. Գ. «ձայներն» ու «կողմերը» ովքեր են ճշտել, ծնծղա, տավիղ, քնար, փողային նվագարաններն ովքեր են գործածել և այլն: Սրանք թեև երաժշտության պատմության ամենանախնական տեղեկություններից են և երաժշտական գիտելիքների առաջին նշույլներից, սակայն, հատկապես տվյալ ժամանակաշրջանի համար ունեցել են իրենց նշանակությունը:

Հայ եկեղեցու ականավոր գործիչներից ոմանք օգտվել են հայ աշխարհիկ երգի ու երաժշտության գանձարանից: Այս միտումը մեր հեղինակը ներկայացրել է հետևյալ պարբերությամբ. «...եւ վա՞սն էր խառնեաց ձայնս և նուագս ի բանս հոգւոյն Դաւիթ... Պատ/ասխանի՛ յաղագս Բ պատճառի, առաջին, զի սատանայի գիւտ էր քնարաւք և աւղաւք իգացուցանել զմարդիկ, խառնեաց զայն ի բանս հոգւոյն Դաւիթ, զի սրբեաց է և իւր զինուքն խոցոտեաց է զինքն և հալածեաց է, որպէս ի Սաւուդայ, և Բ՝ զի քաղցրաձայնութեամբն կաշառեալ մարդիկ և հեշտացեալ՝ զանխըլաբար ուսցին զհոգէխառն բանսն»¹¹⁴: Այս տողերից ուղղակիորեն հետևում է, որ եթե Դաւիթ մարգարեն որդեգրեց նվագը, որը նույնիսկ «սատանայի գիւտ էր» իր աշխարհիկ ծագումով ու բնույթով, որպեսզի «քաղցրութեամբն ...ուսցին զհոգէխառն բանսըն», ապա, ինչո՞ւ հայ եկեղեցին չդիմեր միևնույն քայլին:

«Ժղլանք»-ի մի այլ հատվածում նա եկեղեցական երաժշտության կամ երգեցողության հետ առնչվող հետևյալ տողերն է գրել. «Ձաւե-տարանն յառջի ձայնէ պատեհ է կարգալ և դառաքեալն՝ յերրորդէ, զմարգարէսն՝ ի շորորդէ. և կարգացողին նմանեցնել պիտի զիւր խօսքն գրոցն ասողին և պատճառին՝ թէ խրատական է, թէ աւաղական է, թէ բղձական՝ է, թէ սպառնական է, թէ ողորական է, և այլ այսպիսիք»¹¹⁵: Այստեղ երկու հիմնական և արժեքավոր հարցեր կան, որոնք վերաբերում են եկեղեցական երաժշտության ծիսական կատարման և իմաստավորման գեղագիտական կողմին: Մեկում խոսքն այն մասին է, թե Ս. Գրքից եկեղեցում ընթերցվածներ կարդալիս՝ երբ և ինչ ձայն պետք է օգտագործել: Պարզվում է, որ, գոնե տվյալ ժամանակաշրջանում, Ավետարանը, առաքելոց թղթերը, մարգարեությունները պատահական եղանակով կամ սոսկ ռեչիտատիվ չեն ընթերցվել, այլ յուրաքանչյուրի համար սահմանված է եղել որոշակի մի ձայնեղանակ: Սա շատ կարևոր հաղորդում է հայ եկեղեցու ծեսն ու միջնադարյան երաժշտությունը ուսումնասիրելու համար, մանավանդ այժմ, երբ վերոհիշյալ կարգը չի պահպանված: Երկրորդում խոսվում է այն մասին, թե ինչպես պետք է կատարել և մեկնարանել երաժշտությունը: Նախ նշվում է, որ այն միալար չէ, ապա թելագրվում, որ պետք է կատարվի եղանակավորված բնագրի իմաստի կամ տրամադրության համեմատ, ըստ այդմ՝ խրատական, բղձական, սպառնական և այլն:

«Ժղլանք»-ի բազմաժանր միավորների թվում կա նաև տաղաչափության մասին մի հատված, որ մեջ ենք բերում ստորև.

¹¹² Նույն տեղում, Թ. 144բ—145ա:

¹¹³ Նույն տեղում, Թ. 144ա:

¹¹⁴ Նույն տեղում, Թ. 113ա:

¹¹⁵ Նույն տեղում, Թ. 119ա:

«Տաղական բանին ցոյցք».

Իմաստնոյ շէ փոյթ տաղական առնել, զի հոգիաժու բանն շունքի զայն հոգն, բայց իսմայելացիքն պատուեն, ասեն թէ սուլտանն Խոսրով ի Բաննա յոյժ սիրէր զտաղական բանն, որ է յոտանաւոր: Եւ յաւուրս նորա նօտար մի Խոսրով անուն, որդի Մութանաբեայ, արար յօտանաւոր մի և մատուց սուլտանին, իսկ նա յոսկոյն արաբացոց Եժ-ան Ռ-գեկան կարմիր արկ ի վերայ նորա: Եւ արա այսպէս. թէ զայլքն դնես առաջք և յերկարես զբանն յեջն փոխէ, իսկ զոտքն թէ ինի դնես ի յերկարես և փոխել կամիս և-ին գիր, որ է ին՝ ւ, այս հեշտ է: Բայց ի յն, ք վճարելն դժար է: Եւ արայ այսպէս. իոտստվանիմք զաստուած և՛ ք, անսկիզբն և մի բնութիւն և՛ ք, անձինք Գ ի փառս միաւորս և՛ ք, յոչէից արար զաշխարհս և՛ ք, և զԱղամ հողանիւթեայ իշխանն սոցա և՛ ք, իսկ ք ասելն միագիր վանգ է և կոչի զարմացումն: Մի՛ համարիր զայս բնդ վայր. և տէրն փառք»¹¹⁶:

Նվազ հետաքրքրութիւն չեն ներկայացնում «Ժղլանք»-ում տեղ գտած, մեզ արդեն հայտնի յոթ մանր հրաշապատում զրույցները, որոնք առնչվում են Գտոնեցի, Տուեցի, Բջնեցի և Սարկավազ Հովհաննեսներին: Գրանք մեր զեղարվեստական արձակի հին և հետաքրքիր նմուշներին են¹¹⁷: Ունեն ոչ բարդ, սահուն շարադրանք: Կառուցվածքով պարզ են, զուրկ մի շարք այլ հրաշապատումներում հանդիպող ավելորդապաշտութիւնների անհարկի ողողումներից: Քանիցս կրկնված տրամախոսութիւնները, որոնք զերծ են ճարտասանական ճոռոմ դարձվածքներից, և զեպքերի համեմատաբար աշխույժ ընթացքը զրանց հազորում են թարմութիւն և կենդանութիւն: Թվում է, թե հեղինակը ընթերցողին հրապուրելու կամ տրամադրելու ոչ մի ջանք չի թափում, ոչ մի ավելորդ արտահայտչական ու ձևական հնարանքի չի դիմում իր հույզերը հաղորդելու և նպատակը պարզելու համար: Սակայն, օժտված լինելով հանպատրաստից ծնված մտերիմ զրույցի բնականութեամբ և պարզութեամբ, զրանք ավելի շուտ են հասնում ընթերցողի գիտակցութեանն ու զգացումներին:

Լեզվաոճական առումով էլ բնական են ու անբռնազրոսիկ, զրանց ոճը շունի կրոնադավանաբանական նյութերի ավանդական խրթնութիւնը, անպաճուցձ է, ճարտասանական շինծու դարձվածքներից ա-

¹¹⁶ Նույն տեղում, էջ 165ր: Հմմտ. Հովհաննես Վանական, Հարցմունք և պատասխանիք, ձեռ. № 5611, ք. 78ր:

¹¹⁷ Նույն տեղում, թթ. 42ա—46ա, 122ա—124բ: Այս զրույցները գրեթե նույնութեամբ կիրակոս Գանձակեցին զետեղել է իր Պատմութեան մեջ: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 348—355.

զատ ու կենդանի, իսկ լեզուն, որ լիքն է միջին հայերենի տարրերով, հասարակ է, տեղ-տեղ նույնիսկ անմշակ, բայց սահուն և մատչելի:

«Ժղլանքն», ինչպես տեսնում ենք, իրոք, հայ միջնադարյան գրականութեան հետաքրքրական երևույթներից է, հանրագիտական ծավալուն մի երկասիրութիւն բնութեան, երկնային մարմինների, մարդու, նրա հոգեկան և իմացական գործունեութեան, լեզվի, քերականագիտութեան, հայկական նշանագրերի, գրերի գլուտի, երաժշտութեան և այլ հարցերի մասին:

Այսպանից դժվար չէ համոզվել, որ նաև այս մարդում Արևելքին լայն աշխարհայացքի տեր անձնավորութիւն է, դարի ամենալուսամիտ և բանիմաց գիտնական-մատենագիրներից մեկը:

ԲԱՐՈՅԱԽՈՍԸ

Վարդան Արևելցու գրեթե բոլոր երկերում արծարծված են բարոյա-
խրատական բնույթի հարցեր: Ըստ իր կոչման ու հասարակական դիր-
քի, նա խրատում և թելադրում է ժողովրդին, որ զգուշանան խոտելի
բարքերից, կենցաղային վատ սովորույթներից ու արարքներից: Արևել-
ցին միտում է կանխելու և վերացնելու հասարակական շարիքները, իհար-
կե, հիմնականում այն դասի տեսանկյունից, որին պատկանում է ինքը:
Ըստ այդմ էլ՝ բավարարվում է խրատներով, հորդորներով (տվյալ դեպ-
քում նկատի չունենք իր կանոնական բնույթի երկերի սահմանումները):
Նա այս առնչությամբ արժատական փոփոխություն ոչ մի առաջարկ
չունի, չէր էլ կարող ունենալ տվյալ դարաշրջանում: Այդուհանդերձ,
նրա խրատների մեջ կան և այնպիսիները, որոնք պահանջում են շնչել
«աղքատներին», չզրկել իրենց իրավունքներից, հեռու մնալ կաշառա-
կերությունից...», թագավորներն ու իշխանները չպետք է գոռոզանան
իրենց ենթակաների առաջ, քանի որ վերջիններս էլ ծնունդով, ծագու-
մով իբրև մարդ հավասար են և միայն «բախտով» են տարբեր: Սա
մարդու հավասարության քրիստոնեական վերացական ազդարարու-
թյունն է միայն, այլ որոշակի զգուշացում վերնախավերին: Նա մինչև
իսկ «վրեժխնդրության» հնարավորություն է տեսնում աղքատներին
զրկողների նկատմամբ, թեպետ «վրեժխնդիրը» ոչ թե զրկվողն է, այլ
նրա փոխարեն՝ Աստված. «...ոչ տրտմեցուցանել զոք և չզրկել զաղ-
քատն, որոց ազնական և վրեժխնդիր Աստուած է»¹:

Վարդան Արևելցին պատվիրում է չզողանալ, շվայտություն, ցան-
կասիրություն, «պոռնկական խորհուրդները» չտեսնալ, չսպանել, սուտ
երգում չտալ...: Մարդը, որ բարի է ի ծնե, պարտավոր է լինել արդար,
օգնել ընկածներին, սիրել ոչ միայն մերձավորներին, այլ իր նմանին
առհասարակ. «Նախ // հրաժարիլ ի սպանությունէ, — գրում է նա, — ի

¹ Յաղագս է աւոր, ձեռ. № 4139, Բ. 236բ:

շնութենէ, ի գողութենէ, ի սուտ վկայութենէ և ի ցանկութենէ, և ապա՝
յորդորիլ և ժրանալ ի բարին, ընդդէմ սպանման զանձն տալ փոխանակ
եղբարն... բարի ասել ամենայն մարդոյլ...»²:

Հատկանշական է, որ ամենից առաջ պատվիրում է չսպանել, որով-
հետև, ինչպես եղբակացնում է նա, ամեն մի մարդասպան նաև եղբայ-
րասպան է, քանի որ մարդիկ միմյանց հղբայրներ են. «Ամենայն
սպանող եղբայրասպան է, զի մարդիկ եղբարք են միմեանց»³: Մարդիկ
հավասար են, ոչ միայն ծնունդով ու ծագումով, այլև մարդը՝ մարդ է
անկախ այն բանից, «թէ սպիտակ է, թէ՛ սևաւ», քանի որ գույնը «չբերէ
պակասութիւն»⁴: Հիշենք, որ XIII դարում են հնչել Արևելցու սույն
խոսքերը...:

Մարդիկ, շղիմանալով կյանքի փորձություններին, չկարողանալով
պահպանել իրենց բնածին բարությունը, շարանում են, բայց, դարձյալ,
ոչ բնությամբ, այլ «ի կամաց»: Այդպես է լինում, երբ շն կանխվում
գողությունները, քանի դեռ փոքր են, որովհետև պատահում է, որ հե-
տո «գաւառս, և քաղաքս և բերդս գողացան»⁵:

Այդպես այլակերպված մարդկանց պետք չէ նախանձել, որովհետև
այդպիսիները ավելի նման են «անասունների», «...մի՛ նախանձիր,
որոնց կյանքն չէ մարդոյ, այլ՝ անասնոց, ընդ մարդոյ ասեմ, թեպետ և
մարդիկ իցեն տեսակաւք»: Բացի այդ, նախանձը քայքայում է նաև
նախանձողի հոգին, ինչպես «ցորենի ժանգը»՝ հասկերը⁶:

Ամենածանր մեղքերից մեկն է համարում սուտ երգումը: Սուտ
երգվողը ընդունակ է ամեն տեսակ շարագործության: Նույնչափ դա-
տապարտելի է սուտ վկայություն տալը: Այդ պատճառով էլ եթե որեէ
մեկը երգվելիս վկա կոչեր թագավորին կամ իշխանին, դատապարտ-
վում էր առավելագույն պատժի՝ մահվան⁷: Դրանով քողարկվում են
զանցանքներն ու հանցանքները, և դրանց հետագա ծավալման լայն
հնարավորություններ ստեղծում, ավերվում է աշխարհի շնությունը.
«...շինութիւն ամենայն աշխարհի աւերէ սուտ վկայն, զի որ ոչն ետես
և ոչն գիտէ՝ վկայիէ և, ապա, զի այլոց մեղաց լինի հաղորդ և արձա-
նացուցանէ զնոսա՝ հաստատելով ի շարիսն, զոր մեղան...»⁸:

² Կամիմ բանս է մտօք խօսել..., ձեռ. № 4139, 391բ—392ա:

³ Ի Տասնաբանեան, ձեռ. № 1324, Բ. 282ա:

⁴ Կամիմ բանս է մտօք խօսել..., ձեռ. № 4139, Բ. 398ա:

⁵ Ի Տասնաբանեան, ձեռ. № 1324, Բ. 283ա:

⁶ Սաղմոսաց, ձեռ. № 1190, Բ. 81բ:

⁷ Ի Տասնաբանեան, ձեռ. № 1324, Բ. 280ա:

⁸ Նույն տեղում, Բ. 283ա:

Մարդկային վատթար ախտերից գլխավորը, ըստ նրա, թերևս ցանկասիրությունն է, որը անզուսպ զանցանքների ու շարագործությունների է մղում նրանց, ովքեր զերի են դառնում նրան, աղբյուր հանդիսանալով թե՛ մարմնական, թե՛ հոգեկան բոլոր հանցանքների. «...որ սկիզբն և աղբիւր է ամենայն մեղաց, զի անհնար է առանց ցանկութեան զկամատը զմեղքն մեղանշել ումեք՝ եթէ շնութիւն, եթէ սպանութիւն, եթէ գողութիւն, եթէ զինչ և առիցէ որ՝ մարմնական յանցանքն և թէ հոգեկան ևս, նախանձ և հպարտութիւն և մախանք և շարակնութիւն և հայհոյութիւն և բամբասանք և բանսարկութիւն և որ ինչ սոցին նման է, ամենեցունց ցանկութիւն է առաջնորդ»⁹: Յանկասիրությունը մարդկանց իրենց մարդկային կերպարանքից դուրս է մղում: Վարդան Արևելցին չի խուսափում ցանկասերների խոզերի հետ համեմատելուց, որովհետև այդպիսի վարքը նրանց հասցնում է ընտանեկան և հասարակական ազնտներ: Ի դեպ, հավասարապես դատապարտում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց. «Որ կանամբիք են և այնու ոչ շատանան... ալ կամ բոզս ունին ի տունս և կամ առ բազումս երթան, և կամ խաբեն զպարկեշտ կանայս և խաբին յանսորբ կանանց. և բամբասանքն հաւասար է ի վերայլ արանց և կանանց...»¹⁰:

Արևելցին թեկուզ փոքր վերապահությամբ և ոչ միշտ կնոջը տղամարդուն հավասար է դասում, չի փորձում որևէ կերպ ստորացնել կամ թերագնահատել նրան. «Խնդրելի է, թէ զիա՞րդ զայրն միայն երանէ: Մի՞թէ կանայք առաքինիք զրկին յերանութենէն: Ոչ է զայս ասել, զի մի է բնութիւն առն և կնոջ»¹¹:

Ամեն ոք պարտավոր է սիրել իր ծնողներին, բայց ճշմարիտ, անկեղծ, ինքնաբերական սիրով և ոչ իբրև երախտիքի հատուցում կամ շնորհ, քանի որ ոչ ոք չի կարող իր ծնողներին լիովին երախտահատույց լինել. «...ամենայն աստուածասիրաց պարտ է ծնողասէր գոլ, և այս՝ ոչ երախտիս ինչ է և կամ շնորհ, այլ վճար պարտուց և այնպիսի երախտեաց, զոր ամենայն ջանիւ ջանացեալ հաւասարել ոչ կարեն զփոխարէնն»¹²: Երբ կենդանական աշխարհում էլ է իշխում ծնողասիրությունը, ապա այն որքան առավել պիտի լինի բանականների կյանքում: Այս մասին իր միտքն ամրացնելու համար վկայակոչում է հետևյալ օրինակը. «...ձագը բաւանդակ թռչնոց և, մանաւանդ, արագլաց, որպէս ասեն, թէ զծերացեալ ծնաւոսն հանդարտիկս շրջեցուցանեն՝ աւզնելով

թեոցն աստի՛ անդ-անտի զնացեալք, և զկարի տկարսն և բոյն նստուցեալ՝ ջամբեն զկերակուրն յորոց, որպէս և ինքեանք վայելիցեն յիրեանց տկարութեան ի ծնաւոցն խնամոց...»¹³:

Իր «ծնողական» խրատները տալով «որդեակ Գրիգորին», Արևելցին հավասարապես հաշվի է առնում նրա մարմնական և հոգեբարոյական դաստիարակությունը: Ահա դրանցից մի քանիսը:

«Քանի տղայ ես և առողջ՝ ի պահս կաց, անմիս, անզինի, առանց մրգոյ, և շաբաթ և կիրակէ թէ լուծանես՝ թանով և իւղով...»:

«Որչափ կարես պակասեցո զքուն և զուտելն»:

«Յամենայն առանց գրոց ընթեռնելոյ մի՛ անցուցանէր..., և բնաւ դատարկ մի անցուցանէր զաւրն»:

«Ձայս լաւ համարես, քան զքեզ... և խնդակից լեր աջողելոց և տրտմակից՝ վշտացելոց...»¹⁴:

Բարկությունը, ըստ քրիստոնեական բարոյականության, նույնպես ծանր մեղք է: Այն շարություն է ենթադրում և, հաճախ, դժբախտությունների առիթ տալիս: Սակայն, Վարդան Արևելցին, ոչ ամեն բարկություն է այդպիսին համարում: Նա գտնում է, որ շարիքների դեմ «բարկանալը», ըմբոստանալը, զայրանալը նույնիսկ ազնիվ պարտավորություն է, որպեսզի դրանք կյանքից արմատախիլ արվեն. «Յերկուս բաժանի բարկութիւն՝ բարեաց և շարեաց. ընդդէմ շարեաց ախտիցն բարկանալ պարտ է»¹⁵:

Ուրախությունն էլ իր չափն ու նպատակն ունի, չպետք է շարաշահվի, գոհհականաւ: Կիրակին ուրախության օր է և հարկ է այն «պատուել» մարդկայնորեն, վայելչությամբ և ոչ, ինչպես ոմանք, «անասնաբար»¹⁶: Չէ՞ որ ամենափառավոր կյանքն էլ, ըստ նրա, անցողական է, մնայուն ոչինչ չկա՝ ո՛չ փառք, ո՛չ գեղեցկություն և ո՛չ էլ ամենաշուայլ վայելքը. «Նույնպէս և կեանք մեր և ամենայն բարի պատահմունք, փառք, և ինչք և գեղեցկութիւնք և սոյնպիսիքս ոչ առնուն զկա և շեն մնացականք, և որպէս ի ցասմանէ կամ ի խորշակէ, կամ ի կարկըտէ, ի կոխմանէ և ջախջախելոյլ ցամաքին և անցանեն»¹⁷: Այս նույն միտքը հայտնում է նաև հետևյալ կերպ. «Յիրաւի պատկերի նմանեցոյց զփառս թագաւորաց երկրի, զի պատկեր է և ոչ ճշմարտու-

9 Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, Թ. 283բ:

10 Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, Թ. 282բ:

11 Սաղմոսաց, ձեռ. № 1190, Թ. 14ա:

12 Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, Թ. 281ա:

13 Նույն տեղում, Թ. 281ա:

14 Խրատ առ որդեակ Գրիգորն, ձեռ. № 686, Թ. 149բ:

15 Սաղմոսաց, ձեռ. № 1190, Թ. 23ա:

16 Յաղագս է աւուր, ձեռ. № 4139, Թ. 235բ—236ա:

17 Ի ՃԱ սաղմոսն, ձեռ. № 4139, Թ. 404ա:

թիւն»¹⁸։ Նույնիսկ այդ արքայական փառքը, ի վերջո «բովանդակն ի հողէ» լինելով, «ի հողս մնալոց են»¹⁹։

Արևելցու բարոյախրատական պատկերացումների մի տեսակ ամփոփ հանգանակը կարելի է համարել հետևյալ հատվածը, որտեղ թվարկվում են Հայաստանի XIII դարի իրավիճակն արտահայտող «մեղքերը»։ «...վասն շար գործոց, վասն պեղծ խորհրդոց, վասն անառակ վարուց, վասն բազմանալոյ անօրէնութեան, վասն անարէն զնացից, վասն անիրաւ դատաստանաց և կաշառակերութեանց, վասն գողութեան և ազահութեան, վասն պոռնկութեան և շնութեան, վասն նախանձու և ատելութեան, վասն նենգութեան և սպանութեան, վասն աղտեղութեան և ազգապղծութեան, վասն մատնութեան և շարագործութեան, վասն արծաթսիրութեան և փառասիրութեան, վասն շարախօսութեան և հայհոյութեան, վասն զբրկանաց և ստովութեան, սուտ վկայութեան և սուտ երգման, վասն հպարտութեան և ամբարտաւանութեան, ռխակալութեան և ոտնահարութեան, իշխանասիրութեան և գոռոզութեան, վասն դեղատուութեան և խարդախութեան, ծուլութեան և հեղգութեան, վասն մոլութեան և զեղխութեան և, մանաւանդ, վասն անարժան հաղորդութեան»²⁰։ Պարզ տրամաբանությամբ հետևում է, հեղինակն ընդունում է այն ամենը, ինչը այս հատվածում թվարկվածների հակառակն է, որը յուրովի խտացնում և ամբողջացնում է նրա բարոյախրատական դավանանքը։

Այստեղ անպայման հարկ է նկատի ունենալ նաև նրա ողջ գործունեությունը, այն, թե ինչպիսին է եղել նա անձնական և հասարակական կյանքում, մանկավարժության ասպարեզում, ազգի և հայրենիքի նկատմամբ, թե առհասարակ ինչքան բարձր է գնահատել բարին, գեղեցիկը, հերոսականը, մարդկայինը։ Հարկ է վերհիշել նաև հասարակության մարքոթյան, առողջ վարքագծի, իրավական կազդուրիչ նորմերի կենսագործման համար արարված կանոնագիտական աշխատանքները, որոնք միաժամանակ նրա բարոյական ըմբռնումների պերճախոս վկայություններն են։ Այս ամենի մասին ստորև ավելի կամբողջացնենք մեր խոսքը։ Ասվածից երևում է, որ Վարդան Արևելցին դավանելու քարոզել է բարոյական կենսամերձ, գործնական և բարձր իդեալներ։

18 Գանիւլի, ձեռ. № 3606, Բ. 289ա։

19 Նույն տեղում, Բ. 289ա։

20 Ներքող գրքի գլուխին, ձեռ. № 8775, Բ. 286բ—289ա։

Գ Լ Ո Ւ Խ Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Գ

Խ Մ Բ Ա Գ Ի Ր Ը

Վարդան Արևելցու մատենագրական-մշակութային գործունեության մեջ ուրույն տեղ ունեն ժողովածուների վերակազմումն ու խմբագրումը։ Միջին դարերում նման աշխատանքին վերաբերել են մեծ պատասխանատվությամբ, այն վստահվել է առավել բանիմաց ու հեղինակավոր անձանց։ Այդպես նաև՝ Վարդան Արևելցուն։

Նման աշխատանք է նախ և առաջ «Տօնապատճառ» ժողովածուի վերակազմումն ու խմբագրումը¹։ Ի՞նչ շարժառիթ, նպատակ ու նշանակություն ունեւր դա։

Մեր կարծիքով, սույն արժեքավոր ժողովածուն չի սահմանափակվում իր եկեղեցակիրառական ժիրի մեջ ո՛չ բնագրական ու բովանդակային ընդգրկումներով, ո՛չ էլ նշանակությամբ ու նպատակով։ Ինչպես գիտել ենք տվել իր տեղում, բուն անվանումն էլ թելադրում է, որ այն հիմնականում տոների «պատճառների», իմաստի և նշանակության վերաբերյալ առանձին միավորներից, ինչպես նաև կրոնագիտական թեմաներով հորինված ճառերից, երբեմն մանր «լուծմունքներից» կազմված ժողովածու է։ Այս բոլորից և ոչ մեկը ուղղակի չի առնչվում եկեղեցու ծիսական համակարգին։ Որոշակի հայտնի էլ չէ, թե ո՞ր ժամանակներից, ի՞նչ արարողությունների ընթացքում, ի՞նչ ձևով է կիրառություն գտել։ Որքան մեզ հայտնի է, նույնիսկ ամենահին «Տօնացուցակների» մեջ նման կիրառության մասին վկայություն չի պահպանվել։ Ժամագրքերի ու ժամանակագրությունների մեջ ևս ստույգ տեղեկություն չկա այդ առնչությամբ։ Եթե այն երբևէ այդպիսի կիրառություն ունենար, կարծում ենք, այդ մասին հիշյալ և այլ երկերում նման լուծություն չէր պահպանվի։ Այսուհանդերձ կարելի է և ենթադրել, որ «Յայսմաւորք»-ի նման², երբեմն առանձին ընթերցվել է եկեղեցում, շինե-

1 «Ժղլանք»-ը թեև բնույթով ժողովածու է, սակայն այստեղ նկատի չի առնվում, որովհետև տվյալ դեպքում Վարդան Արևելցին հեղինակ է։ Այդպես նաև նրա «Շնագամտենի» մեկնությունը, քանի որ այն իս որոշ նկատառումներով ժողովածու է և Վարդան Արևելցին՝ նրա հեղինակը։

² Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքում այժմ էլ ամեն օր, երեկոյան, ժամերգությունից անմիջապես առաջ, «Յայսմաւորքից» հավուր պատշաճի ընթերցումներ են բարձրաձայն կարդացվում։

լով որևէ ծիսական միջոցառման անմիջական բաղադրիչ: Քերես հավատացյալներին, հատկապես կարևոր տոների բովանդակությունն ու խորհրդին ծանոթացնելու համար, նաև «Տօնապատճառից» բնագրական համապատասխան միավորներ են ընթերցվել առավոտյան կամ երեկոյան ժամերգություններն սկսվելուց առաջ: Եթե այդ ժողովածուն գտել է այդպիսի կիրառություն, ապա շատ վաղուց դուրս է մնացել եկեղեցու արարողածիսական գործնական համակարգից: Լավագույն դեպքում այսքանով էլ սահմանափակվել է նրա դերը եկեղեցու ներսում: Բայց նրանից դուրս...

Դատելով «Տօնապատճառ»-ի թեմատիկայի առավելապես տեսական հենքից ու բովանդակության բարձր մակարդակից, շարադրանքի բարդ եղանակից, ընդհանուր գիտականությունից, շատերու համար զբոսաշունչությունից, թվում է այն նախատեսված է եղել մտավորապես բավականաչափ հասուն անձանց համար: Ելնելով նաև այդ բոլորի ուսուցողական միտումից, կարծում ենք, որ այն հորինվել է՝ ելակետ ունենալով բարձրագույն բնույթի դպրոցների սաներին և արդեն եկեղեցական կոչում ընդունած հոգևորականներին համապատասխան գիտելիքներով օժտելու անհրաժեշտությունը: Այս խավին ու դասին են առավելապես պատշաճում այնտեղ ամփոփված «պատճառներն» ու ճառերը, որոնք միայն տոների ծագմանը, բովանդակությանը և իմաստին չեն վերաբերում, այլ նաև տարբեր բնույթի ու ծավալի երկասիրությունների մասին գրական-պատմական, հրեմն՝ բանասիրական-մատենագիտական տվյալներ են հաղորդում: Ծառերը և մյուս այս կարգի բնագրական միավորները այստեղ առավելապես խոհական, բանաբանական շեշտ ունեն, կրոնագիտական, աստվածաբանական հարցեր են քննում, մեկնաբանում են սուրբգրական բանաձևեր, բնաբաններ, զանազան խորհրդանիշեր, ծիսական-ավանդական, մանավանդ, միջեկեղեցական նշանակություն ունեցող հարցեր: Պարզ է. այս կարգի ու մակարդակի խնդիրների արծարծումը, առավել ևս պրոպագանդամբ, պահանջում էր ունկնդիր-ընթերցողների համապատասխան խավ: Դա եկեղեցի հաճախող հասարակ ժողովուրդը չէր, անշուշտ, այլ մտավոր ուսուցման որոշակի ճանապարհ անցած զանգվածը: «Տօնապատճառ»-ների ընդօրինակությունների սակավաթիվ լինելը, ինչպես նաև՝ հիմնականում գիտամշակութային, կրթական կենտրոններում ընդօրինակվելն ու պահպանվելը ևս, ըստ մեզ, խոսում են այդ մասին: Ուստի, ավելի ճիշտն այն է, իբրք, որ սույն շափազանց արժեքավոր ժողովածուն գիտամշակութային օջախներում ուսուցողական նպատակների ծառայելու համար է արարվել:

«Տօնապատճառ»-ի կազմությունն ու խմբագրմանը առնչվող անձինք, ներառյալ և հեղինակների մեծ մասը, մատենագրական-կրթական գործի մշակներ են, որոնք իրենց աշխատանքների բերումով այդ ժողովածուին տվել են այդպիսի բովանդակություն ու մակարդակ՝ երբեմն ներմուծելով իրենց սեփական երկերը:

Այդպիսին էր նաև Վարդան Արևելցու առնչությունը այս ժողովածուին: Նա էլ իբրև ուսումնական ձեռնարկի է ձեռնամուխ եղել դրա վերակազմությանը, նոր նյութերով ու իր իսկ ճառերով թարմացրել ու ճոխացրել այն: Այստեղ զետեղված նրա ճառերը հանդիսավոր, փառաբանական հորինվածքներ չեն, ոչ էլ պարզիմաց քարոզներ, այլ, հիմնականում մեկնաբանական շեշտ ու բովանդակություն ունեն, խոհափրիխօտփայական, աստվածաբանական մանր երկեր են:

Վարդան Արևելցին այս գործին ձեռնարկել է իբրև մատենագիր, մշակութային գործիչ ու մանկավարժ: Եթե իրավ է նաև մեր նախապես հայտնած ենթադրությունն այն մասին, որ, ըստ երևույթին, Հովհաննես Վանականի խորհրդով է նա ձեռնարկել այս գործին, դա ևս նպաստում է մեր առաջադրած տեսակետին, քանի որ Հովհաննես Վանականը նույնպես հայ միջնադարի ամենաակնառու կրթական գործիչներից մեկն էր:

Այսպիսով, ըստ մեզ, «Տօնապատճառ»-ի վերակազմումն ու վերախմբագրումը, նոր նյութերով այն հարստացնելը, բարձրագույն դպրոցներում իբրև ուսուցողական ձեռնարկ օգտագործելը, դրանով եկեղեցական գործիչների մտավոր հմտությունն էլ ավելի զարգացնելը և արժեքավոր բնագրեր կորստից փրկելը հասարակական, մանկավարժական և մշակութային օգտակար ծառայություն է. որը բաժին է ընկել Վարդան Արևելցուն:

Վարդան Արևելցին ձեռնարկել է նաև բարոյախրատական բովանդակությամբ զրույցների ժողովածու կազմելու գործին և, ինչպես արդեն գիտենք, թարգմանաբար փոխադրելով, վերամշակելով մի շարք զրույցներ, նա հասել է իր նպատակին: Զմոռանանք նկատի ունենալ «Ժղլանք»-ում և, «Հաւաքումն պատմութեան» մեջ իր գրառած զրույցները ևս, որոնք պատմական, իրական եղելությունների հրաշապատումի գերաճած վերաբարտադրություններ են, բայց, դարձյալ, բարոյախրատական հենքի վրա:

Միջին դարերում նման հրաշապատում զրույցները, վանքերի ու վկայարանությունների երկերի հետ միասին նպատակ են հետապնդել նպաստելու հասարակության, հավատացյալ զանգվածների, հասարակական կյանքի բարեփոխմանն ու առաքինացմանը, Աստծու գործին

անձնվեր ծառայելուն: Մարդու նկատմամբ հոգատար ուշադրություն պահանջելով (բնական է, տևապես կրոնական և կրոնական դիրքերից), այդ զրույցները լուրջ կարևորություն էին ստանում: Դրանք մարդկանց նախազգուշացնում էին հեռու մնալ ամեն կարգի մոլորություններից. անբարոյական վարքից, ստից, խաբելուց, գողանալուց, հայհոյելուց, սուտ երդումների դիմելուց, ուրիշներին մոլորեցնելուց, անպտուղ հպարտությունից, սատանյական նենգամտություններից... Իհարկե նաև՝ դիմակայել սոցիալական շարիքներին ու պես-պես պատուհասներին, որոնք «վասն մեղաց մերոց» են, բայց նմանապես նպատակ ունեն «իրատելու» հասարակությանը:

Զրույցները ժամանակի ընթացքում ձեռք են բերում նաև ճանաչողական նշանակություն և ըստ այդմ օգտակար նյութ են հաղորդում միջնադարյան հասարակական բարքերի ուսումնասիրման տեսանկյունից:

Զրույցների գեղարվեստական հորինվածքը, լեզվաարտահայտչական միջոցները որոշակի կշիռ էին ստանում և նպաստում դրանց տարածմանը հասարակության բոլոր խավերի մեջ: Դա լավ հնարավորություն էր, որը չէր կարող նկատի չառնվել եկեղեցու և եկեղեցականների կողմից, որոնք էլ հիմնականում զբաղվում էին հասարակության բարքերի բարվորման, մաքրման խնդիրներով:

Վարդան Արևելցու համար, իրրև եկեղեցական-հասարակական գործչի, դա առավել ընդգծելի է: Նրա ժամանակներում ավելի առաջնային նշանակություն է ունեցել միջնադարի մարդկանց, աշակերտների հոգեկան աշխարհի մաքրության, ազնվության, թերևս իմացական հարստության ապահովումը: Հոգին գերիվեր է ամեն ինչից և նրան աստվածային ընկալման նախապատրաստելը՝ ամենասուրբ գործն էր համարվում: Վարդան Արևելցին սրան ոչ միայն հավատում էր, այլև ամբողջ կյանքը նվիրաբերել էր իր սաների, շրջապատի մարդկանց և ընթերցողների հոգու «նորոգմանը»: Զրույցները, որոնք ամենուրեք և բոլորի կողմից ընթերցվում էին հաճույքով, նպաստում էին Վարդան Արևելցու այս իղձերի ու ծրագրերի իրականացմանը. միջին դարերում դրանց բարերար ներգործությունը վեր է ամեն կասկածից: Ըստ այսմ էլ, իրոք, մանկավարժական, դաստիարակչական, հասարակական իմաստ ու արժեք են ստանում նաև նման ժողովածուներ վերակազմելու նրա ջանքերը*:

* Վարդան Արևելցու թարգմանչական գործունեության մասին տե՛ս մանրամասն՝ Անբայան Փ., Վարդան Արևելցի, Գիրք Ա, էջ 309—351:

ՀԱՅ ՄԵԿՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԻՄՔԵՐԻ ՇՈՒՐՋ*

Վարդան Արևելցու մատենագրական ժառանգության մեջ մեկնաբանական բնույթի երկերը մեծ թիվ են կազմում: Հայ համարնույթ երկերի շարքում դրանց տեղն ու նշանակությունը ակնբեր է, որովհետև դրանք սերտորեն կապվում են նաև ընդհանուր քրիստոնեական մեկնաբանական գրականության հետ: Այս առումով անհրաժեշտ է առնչվել նաև վերջինիս, պարզաբանումներ և ընդհանրացումներ անել հատկապես տեսական-մեթոդաբանական այն հիմքերի շուրջ, որոնք կարևոր հենք են հանդիսացել նաև Արևելցու հիշյալ երկերի համար, մանավանդ, որ այսպիսի աշխատանք առ այսօր հայագիտության մեջ ըստ էության չի կատարված և պակասն զգալի էր վաղուց: Դա, համոզված ենք, կնպաստի ավելի ճիշտ ըմբռնելու և գնահատելու Արևելցու մեկնաբանական երկերը, որոնց գիտագաղափարական քննությունն ու արժեքնորումը տալիս ենք համապատասխան բաժիններում՝ մյուս երկերի հետ զուգորդաբար:

Ընդհանուր քրիստոնեական, այդ թվում և հայ հին մատենագրության մեջ առավել լայն ընդգրկում ու կշիռ ունեցող բնագավառներից մեկն է մեկնաբանական գրականությունը: Այն ընդհանուր քրիստոնեական համարնույթ գրականության հետ սերտ աղերսներ ունի և մի շարք հիմնական հատկանիշներով նրա արժեքավոր բաղադրիչներից է: Հայ հին մատենագրության մեջ իր գիտական, բնափիլիսոփայական, պատմական, սոցիալական, իրավական, հասարակական-գաղափարական բովանդակությամբ միանգամայն հարուստ և լիարժեք բնագավառ է: Նվազ նշանակալից չեն այնտեղ ընդգրկված ազգագրական, բանահյուսական, բանասիրական, լեզվագիտական, գրական-գեղարվեստական, մատենագիտական, աղբյուրագիտական, բնագրագիտական և մշակու-

* Տե՛ս մեր «Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ» հոդվածը. «Բանբեր Մատենադարանի», 1986, № 15, էջ 60—93:

թային նյութերը: Թերևս մեկնությունների մեջ են առավելագույն շափով նկատառելի դառնում հայ և ալլալեզու քրիստոնեական գրականությունների առնչությունները. երբեմն միայն նրանցում են պահպանվել մասնավանդ ասորական ու բյուզանդական գրական հուշարձաններից առանձին հատվածներ:

Մեր օրերում գրականության, պատմության և փիլիսոփայության սովետահայ անվանի մասնագետներից ոմանք միանգամայն լուրջ կարևորություն և բարձր գնահատական են տվել հայ մեկնաբանական գրականության փաստագրական-ձանաչողական և գիտական-գաղափարական արժանիքներին ու քանիցս ընդգծել զրանց ուսումնասիրման անհրաժեշտությունը: Այս առնչությամբ հարկավոր է նշել նախ Ծ. Տեր-Մինասյանի և Մ. Աբեղյանի անունները, որոնք թեև հակիրճ, բայց կարևոր ընդհանրացումներ են արել: Գ. Հակոբյանը համեմատաբար քիչ ավելի է առնչվել հայ մեկնություններին և օգտակար նկատառումներ արել զրանց վերաբերյալ¹:

Մեկնությունների մասին գիտական գնահատանքի առավել հիմնավոր խոսք ասել է Լ. Խաչիկյանը, որի առաջին ուսումնասիրությունը նվիրված էր այս բնագավառին², նրա բազմաթիվ արժեքավոր դիտողություններից արժե ծանոթանալ զոնե մեկ-երկուսին: Անդրադառնալով «Մատթեոսի մեկնութեան»-ը (Ներսես Շնորհալի—Հովհաննես Ծործորեցի—Փ. Ա.), նա գրում է. «Կյանքի տարբեր բնագավառներից քաղված օրինակներ պարունակելով, օգտակար նյութ է ընձեռում պատմաբաններին՝ ուսումնասիրելու ժամանակի սոցիալ-տնտեսական այլազան երևույթները»³: Մի այլ առիթով, Մատթեոս Զուղայեցու գրական վաստակը, այդ թվում՝ նրա «Քննութիւն Գործոց առաքելոց» մեկնությունը, գնահատելիս, ընդհանրացնում է. «Առանց վարանումի կարելի է ասել, որ մեր հեղինակի մեկնողական ու աստվածաբանական բովանդակությամբ աշխատություններն ու քարոզները շատ ավելի նյութեր են պարունակում աշխատավոր մասսաների կյանքի ու կենցաղի պայմանները ուսումնասիրելու համար, քան մեր նշանավոր պատմիչներից շատերի աշխատությունները»⁴: Վերջապես նա շատ տեղին եզրակացնում է, որ այդ բնույթի աշխատությունները հրատարակելու հարցը վաղուց հա-

սունացել է. «Այդ ճանապարհով միայն հնարավոր կլինի մասամբ լրացնել սկզբնաղբյուրների այն խոր պակասը, որ զգում է յուրաքանչյուր պատմաբան իր աշխատանքի հենց առաջին քալափոխին, երբ փորձում է ձեռնարկել միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման գործին»⁵:

Ս. Արեշատյանը ի մասնավորի Եղիշեի, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները բացահայտելիս, հիմնելով է նաև նրանց մեկնությունների վրա և բարձր գնահատում զրանք⁶: Գ. Խոլոպյանը և Գ. Գրիգորյանը ևս կարևոր դիտարկումներ են կատարում⁷: Ուշագրություն արժանի են Լ. Տեր-Պետրոսյանի, Ծ. Պետրոսյանի խոստումնալից աշխատանքներն այս առնչությամբ⁸:

Այսուհանդերձ, հայ մեկնաբանական գրականությունը հայագիտության մեջ պատշաճ ուշադրության չի արժանացել, թեկուզ եղել են փորձեր, սակայն այն, ըստ էության, մնում է շուտումնասիրված:

Կարծում ենք, անհրաժեշտ է հայ մեկնաբանական ժառանգության համակողմանի և խոր ուսումնասիրումը հատկապես գիտական-տեսական և պատմամշակութային նեղ մասնագիտական առումով:

Մենք այժմ հնարավորություն ու նպատակ չունենք ստանձնելու այդ աշխատանքը: Այս առումով հարկ ենք համարում այստեղ տալ միայն պատմատեսական համառոտ, բայց փոքր ի շատե ամբողջական մի համադրում՝ ասելու ամենաանհրաժեշտը ընդհանուր քրիստոնեական և հայ մեկնաբանական գրականության մի քանի կարևոր խնդիրների ու առնչությունների մասին և հետո միայն անդրադառնալ Վարդան Արեշացու մեկնությունների բովանդակային ու գաղափարական արժեքավորմանը:

¹ Նույն տեղում, էջ 84:

² Տե՛ս մանրամասն՝ *Арешатян С., Формирование философской науки в древней Армении (V—VI вв.)*; նույնի՝ *философские взгляды Григора Татевани.*

³ Խոլոպյան Գ., *Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն*, էջ 285—286; Գրիգորյան Գ., *Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները*, էջ 95—115:

⁴ Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., *Եվսերիոս Եմեսացու «Ութամասյանի մեկնությունը» և թարգմանության տեսության հարցերը Ե զարի հայ մատենագրության մեջ*, «Պատմաբանասիրական հանդես», 1982, № 4, էջ 56—68; Նույնի՝ *Բարսեղ Կեսարացու «Վեց-օրեայքի» հայերեն թարգմանության նախօրինակը*, «Պատմաբանասիրական հանդես», 1983, № 2—3, էջ 264—268; Նույնի՝ *Փիլոն Ալեքսանդրացի, Մեկնութիւն Մենդոց, Նե-թածութիւն, թարգմանություն և ծանոթագրություններ Շարլ Մերսիեի: Տե՛ս նաև Ծ. Պետրոսյանի մի քանի հոդվածներն ու հրատարակած մեկնաբանական բնագրերը՝ «Էջմիածին» ամսագրում. 1973, էջ 14—20, ԺԱ, էջ 43—48, 1979, Բ, էջ 21—24, 1982, Ա, էջ 35—41, Բ, էջ 37—44, Գ, էջ 23—32, Ը—Թ, էջ 45—52:*

¹ Տեր-Մինասյան Ծ., *Ընդհանուր եկեղեցու պատմություն*, էջ 148—149; Աբեղյան Մ., *Հայ հին գրականության պատմություն*, Երկեր, Գ, էջ 110—111:

² Հակոբյան Գ., *Ներսես Լամբրոնացի*, էջ 267—269, 286:

³ Խաչիկյան Լ., *Եղիշեի Արարածոց Մեկնությունը*, Երևան, 1945 (անտիպ):

⁴ Խաչիկյան Լ., *Արտագի հայկական իշխանությունը*, էջ 179:

⁵ Խաչիկյան Լ., *Մատթեոս Զուղայեցի*, էջ 75:

խոսքի, մտքի մեկնությունը կամ մեկնաբանությունը, բանավոր թե գրավոր, հայտնի է, միայն քրիստոնեական ընդհանուր գրականությունը հատուկ երևույթ չէ: Մեր թվարկությունից, հետևաբար և դեռևս քրիստոնեությունից առաջ մարդը ջանացել է հասկանալ ու բացատրել բնության և կյանքի երևույթները, ստեղծել ու մեկնել առասպելներ, գրույցներ, առակներ, խորհրդանշական պատկերներ և այլն: Ժողովուրդների բանահյուսական վաղագույն ստեղծագործությունները մեկնաբանական ելակետով ու տարրերով հագեցած այդ կարգի ջանքեր են: Դրանք բոլոր էություն իմաստասիրական որոշակի բնույթ ու մակարդակ են ստացել հնագույն քաղաքակրթության տեր ժողովուրդների, առավելապես եգիպտական, ասորա-բաբելական, հնդկական, չինական, հրեական, հունական դիցաբանության մեջ:

Մեկնաբանությունը դարերի ընթացքում աստիճանաբար ուրույնանում է, գտնում մտածողության որոշակի ձև ստացած բացահայտման միջոց ու մեթոդ և զրի առնվում: Այս առումով մեկնաբանության առաջին համեմատաբար զաված դրսևորումներից են հունական դիցաբանության, մանավանդ Հոմերոսի «Իլիականի», «Ոդիսականի», Հեսիոդոսի և այլ հույն հեղինակների առանձին գործերն ու մեկնությունները: Հատկանշական են մասնավորապես Հեսիոդոսի, Թալեսի, Թեոգոնեսի, Մոլոնի, Եվրիպիդեսի, Պլուտարքոսի, Պլատոնի, Արիստոտելի երկերը: Այս կարգի հետաքրքիր հուշարձան է «Թեոգոնիան» («Աստվածների ծագումը»), որի առաջին կազմողն ու համակարգողը համարվում է Հեսիոդոսը (9—է դդ., մ. թ. ա.)¹⁰: Այստեղ հանգամանորեն մեկնաբանվում են դիցաբանական կերպարների՝ հին հունական աստվածներ Գեյայի, Քաոսի, էրոսի, Ուրանի, Կրոնոսի, Զևսի և մյուսների ծագումնաբանությունը, կոչումը, պաշտոնը, մարդկանց հետ ունեցած փոխհարաբերությունը, խայտաբղետ արարքների, ինչ-ինչ «աստվածային գաղտնիքների» տրամաբանական պարզաբանումն ու պատճառաբանությունը:

Հունական փիլիսոփայության ուսման ժամանակներից մեկը՝ տարերային մատերիալիզմի հիմնադիր Թալեսը, ձեռնարկեց մեկնաբանական բնույթի աշխատանք. անդրադարձավ ու ջանաց բացատրել հունական դիցաբանության, Հոմերոսի հանրահայտ երկերի, Հեսիոդոսի «Թեոգոնիայի» առանձին դրվագները, սյուսետային բարդ տարրերը, աստվածների սխրանքները և այլ առնչակից հարցեր: Շատ դեպքերում նա թեև մերժել է բնության և բնական ուժերի դիցաբանական անձնավորումները,

հաճախ շատ անհարիր չափազանցումները, սակայն իր փիլիսոփայական գննությունների ու եզրակացությունների համար դիմել է նաև դիցաբանությանը և վերոնշյալ երկերին:

Այս բնույթի աշխատանքներով հանդես են եկել Թեագոնես Ռեգիացին (VI դ., մ. թ. ա.) և Կրատես Մալուսցին (II դ., մ. թ. ա.): Կիսիկները (Յինիկներ) և մանավանդ վաղ շրջանի (III—II դդ., մ. թ. ա.) ստոիկյան փիլիսոփաները ընդարձակ և կարևոր տեղ են հատկացրել դիցաբանական թեմաների մեկնաբանությանը: Նոր պլուրազորականները ևս իրենց աշխատանքներում երբեմն կարևոր տեղ են հատկացրել դրան¹¹: Ահա թե ինչու հին հունական իրականության մեջ մեկնաբանական բնույթի աշխատանքներն այնքան միաձուլվ են եղել փիլիսոփայական երկերի հետ:

Մյուս ժողովուրդների մտավոր մշակույթի պատմության մեջ ևս նկատելի է նման երևույթ, թեկուզ և ոչ հավասար տարողությամբ: Խնդրո առարկա մեր նյութի համար առանձնապես կարևոր է հրեա ժողովրդի այս բնագավառում թողած ժառանգությունը, որն առանձնապես նախադրյալ հիմք է ծառայել ընդհանուր քրիստոնեական մեկնաբանական գրականության ձևավորման համար:

Մեր թվարկությունից հետո էլ, քրիստոնեության կազմավորման ու ծավալման արշալույսին, մեկնաբանական բնույթի աշխատանքները շարունակվում են նորպլատոնականների և գնոստիկյանների շրջանակներում, որոշակիորեն հարմարեցվելով արդեն բավարար չափով քրիստոնեություն ներծծած հելլենիստական հասարակական ու զաղափարական միջավայրին: Դրանցից մի բանիսը թարգմանաբար պահպանվել են նաև հայերեն, այդ թվում՝ Պորփյուրի, Պրոկղի, Զենոնի, Սեկունդոսի, Օլիմպիոդորոսի երկերը¹²: Այդպես նաև որոշ քրիստոնյա եկեղեցական հայրեր փորձել են մեկնաբանել առավելապես Հոմերոսի, Պլատոնի, Արիստոտելի, Պորփյուրի փիլիսոփայական երկերը: Նրանք չեն խորշել մեկնելու նաև Հոմերոսի և մյուս անտիկ գրողների երկերը¹³:

Հայ հեղինակները նույնպես տարբեր ժամանակներում հանդես են եկել նաև զուտ իմաստասիրական բնույթի արժեքավոր մեկնություններով¹⁴:

11 Նույն տեղում, էջ 82:
 12 Аревшатян С., Лалафарян С., Философские труды в армянских рукописях, с. 394—400, 429, 437.
 13 Сб'ю Каждан А., Византийская культура (X—XII вв.), с. 106—107.
 14 Аревшатян С., Лалафарян С., указ. соч., с. 402—450.

¹⁰ The interpreter's dictionary, I, p. 82.
 178

ծղել են նաև այլ բովանդակությամբ մեկնաբանական աշխատություններ: Գրանցից են այնպիսիները, որոնք բանասիրական, քերական-նագիտական-գրականագիտական, օրենսգիտական, տոմարագիտական հենք ու բովանդակություն ունեն:

Հայ բանահյուսությունը ևս մի փորձ է բացատրելու բնությունն ու կյանքը՝ իրենց բազմազան խորհորդներով ու առեղծվածներով: Բայց կա նաև հայ բանահյուսությունը բացատրելու հստակ փորձ, որը չափազանց բովանդակալից գրսեորվել է հայ մատենագրության մի շարք կարևոր երկերում, հատկապես Մովսես Խորենացու հանճարեղ «Հայոց Պատմութեան» մեջ: Պատմաբանի լիակատար խստապահանջությամբ օժտված լինելով հանդերձ, նա ուրույն և կարևոր տեղ է տալիս բանահյուսությանը, առասպելներին, դրույցներին, որոնք «այլաբանաբար» արտացոլում են տիեզերական երևույթները, կյանքը, պատմությունը, ժողովուրդների և նույնիսկ առանձին անհատների (Արտաշեսի, Արտավազդի, Երվանդի, Տիգրանի, Աժդահակի, Սմբատի...) գործունեությունը: Նա չի խորշում հիմնվել դրանց վրա, քննադատաբար «մեկնաբանել» դրանք և ճշմարտություն քաղել ու գետնից իր երկի մեջ: Խնդիրն այն է, որ գիտակցել ու կիրառել է «մեկնությունը» բանահյուսության նկատմամբ: Բանահյուսական տարրեր ժանրային միավորներին, «որք զճըշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքնանս ունին թաքուցեալ», նա մոտենում է քննադատաբար, որպեսզի ճշգրտի դրանց այլաբանությունը՝ «զայլաբանութիւնն ճշմարտեսցուք»¹⁵: Թեև նա միակը չէ, որ այդպես է մտածել ու վարվել, բայց միայն ինքն էլ բավական է հաստատելու, որ հայերը ևս կիրառել են մեկնաբանություն ոչ միայն բնության ու իրենց անցյալի վերաբերյալ բանահյուսությունը իմաստավորելու, այլև գաղափարական ու ազգային-քաղաքական երազանքները խրախուսելու համար:

Ինչպես հայտնի է, հայ մատենագրությունը հարուստ է մանավանդ քերականագիտական-գրականագիտական բնույթի թարգմանական և ուրույն, սեփական մեկնություններով: Վերջիններիս մեջ պայծառ շողացել է քերականագետ-գրականագետ մեկնիչների տեսական ստեղծագործական միտքը¹⁶:

Այսպես, մեկնաբանությունը մարդկության կյանքի, հոգևոր ու մտավոր գործունեության կարևոր բնագավառներից ու արգասիքներից է: Այնտեղ ամփոփված ու քննության են առնված մարդու մտածողու-

թյան, պատկերացումների և աշխարհայեցողության, ինչպես նաև պատմության, արվեստի, գիտության ու մշակույթի վերաբերյալ ստեղծագործական տարրերը՝ սկսած իրենց նախնական, «մանկական» վիճակից մինչև բարձր ընդհանրացման և վերացարկման մակարդակը:

Բուն քրիստոնեական մեկնաբանական գրականությունը այդպիսի մի ծավալուն գրսեորում է: Այն ստեղծվել է Աստվածաշնչի՝ Հին և Նոր կտակարանների գրքերի մեկնության համար՝ ի մասնավորի հրեական, մասամբ նաև՝ անտիկ փիլիսոփայության և հելլենիստական ավանդույթների ստեղծագործական յուրացմամբ: Դրա նպատակն է եղել այդ երկերում ամփոփված գրվագների, ծիսական ու կենցաղային պատկերների, նշանների, տարազների կամ այդ երկերի առանձին մասերի՝ տեսիլքների, երազների, առակների, աստվածային ու մարգարեական պատգամների, մտքերի, անունների, տերմինների, բառերի մեկնությունը, որն անպայման թելադրված պիտի լինի աստվածային հայտնությունը, որն անպայման թելադրված պիտի լինի աստվածային հայտնությունը, որպեսզի այդ բոլորը մատչելի ու ըմբռնելի դառնան:

Մեկնություն ասելով ամենանախնական առումով հասկացվում է մեկնողական նյութի կամ մտքի ուղիղ և գաղտնի իմաստի բացահայտում: Մեկնել նշանակել է «մեկին առնել, ըստ որում պարզ և յայտնի կացուցանել, պարզել զմթութիւն բանից, յայտնաբանել, բացատրել, վերծանել, թարգմանել, խելամուտ առնել»¹⁷: Բայց դրան ընդունակ ու արժանի են միայն շնորհալիները, որոնք օժտված էին աստվածային հայտնությամբ, որովհետև մեկնության հիմքում, ի վերջո, ընկած է Աստծու խոսքը և նրանից բխող հոգևոր-կրոնական անաղարտելի եզրակացությունը: Արմատական ելակետ է սա քրիստոնեական բոլոր հոգևոր և մտավոր ստեղծագործությունների համար: Ըստ այսմ ամեն մի կամ ամեն մեկի բացատրությունն ու բացահայտումը միջնադարյան քրիստոնեական ըմբռնմամբ դեռևս մեկնություն չէ:

Քրիստոնյա, այդ թվում և հայ, եկեղեցին ոչ բոլորին է վստահում մեկնաբանելու իրավունքը:

Հիմնականում վարդապետական կոչման արժանացած «բանի սպասավորներին» էր թույլատրվում մեկնելու Հին և Նոր կտակարանների գրքերը, բացահայտելու դրանց աստվածաբանական-կրոնագիտական հիմքը, սահմանելու դրանցից բխող վարդապետական-դավանաբանական բանաձևումները: Տեսական-աստվածաբանական հարցերի պարզաբանման մեջ վճռական կշիռ է ունեցել վարդապետի խոսքը:

Մեկնաբանող բաբունի-վարդապետներին կոչում էին «մեկնիչ»: Դա սոսկ բնորոշում չէր, այլև մի տեսակ գիտական պատվավոր տիտ-

15 Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, էջ 90, 176:

16 Տե՛ս մանրամասն՝ Адоиц Н., Дионисий фразивский и армянекие толкователи. Թամրազյան Հ., Հայ քննադատություն, Ա, էջ 391—434:

17 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Բ, էջ 244:

ղոս, ընդգծելով ոչ միայն նրա մեկնիչ լինելու հանգամանքը, այլ նաև բարձր հեղինակությունն ու իմացությունը: Նրանց էր առավելագույն վստահվում «նորը գրեանց» (հիմնականում՝ կրոնաստվածաբանական գրականություն) մեկնությունը քրիստոնեական, այդ թվում նաև հայ միջնադարյան համալսարաններում: Վերջիններին մեջ նախապատվությունը ըստ այսմ տրվում էր մեկնիչ-վարդապետներին և նրանց ուսուցումներին: Համալսարանապետներն անխտիր մեկնաբանական-վարդապետական երկերի մեկնիչներ են եղել¹⁸:

Նրանց կոչել են նաև «թարգմանիչ», որովհետև «թարգմանիչը» միաժամանակ «մեկնիչ» է նշանակել¹⁹: Մինչև որ թարգմանիչը թարգմանվող բառի կամ բառակապակցության իմաստը չճշտի, չբացահայտի, չի կարող այն արտահայտել իր թարգմանած լեզվով. չէ՞ որ նա նախ պարտ է «զմիտան թարգմանել»²⁰:

Ս. Գրոց մեկնաբանությունը պայմանավորված է մի շարք սկզբունքային հարցերով: Անկախ կիրառվելիք մեկնաբանական եղանակից, մեկնիչը իր աշխատանքը պիտի իբրագործի ըստ որոշ օգակների: Պետք է նախ ապահով լինել, որ ձեռքի տակ եղած բնագիրը ճշտված է: Գրա համար պետք է օգտվի արդեն իրազործված համեմատական բնագրից, եթե, իհարկե, այդպիսին կա, կամ ձեռագրերի հիման վրա հաստատի ամենասույգ ընթերցումը և հետո միայն բացահայտի բնագրի իմաստը: Այս դեպքում պետք է հաշվի առնել նաև նախընթաց, հատկապես հեղինակավոր, մեկնությունները՝ հնարավոր սայթաքումներից հեռու մնալու և ընդունելի մեկնություն արարելու համար: Նաև նկատի ունենալ բնագրի ստեղծման պատմական ժամանակաշրջանն ու միջավայրը, հեղինակը, նպատակը, բնագրից քաղել ու բացահայտել ոչ սոսկ անմիջական իմաստը, այլև հոգևոր-բարոյական, կրոնական-աստվածաբանական նշանակությունը, դրա մեջ ամփոփված աստվածային պատգամը: Անպայման հավատքով ու հավատքի դիրքերից մոտենալ ամեն

մի մեկնաբանվող բնագրի, որովհետև այն, ինչ բացատրելի և ընդունելի է գիտականորեն կամ, թեկուզ, տրամաբանությամբ, հավատքով է ընկալվում: Այս դեպքում եկեղեցու պաշտոնական դիրքի ու դավանանքի հաշվառումը շատ կարևոր նշանակություն է ստանում:

Մեկնիչին օժանդակում են ոչ միայն կրոնաստվածաբանական գրականությունը, այլև պատմությունը, բանասիրությունը, լեզվագիտությունը, հնագրությունը, հնագիտությունը, կրոնների պատմությունը, փիլիսոփայությունը, գեղարվեստական գրականությունը, ազգագրությունը, աշխարհագրական-տեղագրական տվյալները: Ահա թե ինչու մեկնությունների մեջ երբեմն նշված բնագավառներից շատ կարևոր ներդրումներ են մնացել:

Գիտական գրականության մեջ գծվել են երկու մեթոդաբանական մայրուղիներ՝ տառացի (կամ բառացի) և այլաբանական, կազմվել երկու հիմնական համակարգ, որոնք տրոհվել են ենթաճյուղերի, պահպանելով իրենց ուրույն կենցաղավարման կերպն ու տարածքը:

Հրեական ավանդները կերպավորվել են հիմնականում տառացի եղանակով, բայց զերծ չեն եղել այլաբանական տարրերից, որոնք բուն քրիստոնեական մեկնությունների մեջ համեմատաբար ավելի պիտի արգասավորվեին:

Հրեաները մեկնաբանում էին բանավոր-ավանդաբար և զրավոր: Թանավորը ավելի պարզ, առտնին, ժողովրդական ավանդությամբ ու մոտիվներով, ժողովրդական ընկալումներին համեմատյալ և հիմնականում սինագոգների մեջ քարոզների ու խրատների միջոցով զանազան կրոնաբարոյական հետևությունների հանգեցնող մեկնաբանական եղանակն է, որը «հագագա» (բանավոր զրույց, պատում, ավանդություն, սովորություն, օրենք) հորջորջումն է ստացել²¹: Այս եղանակը, համեմատաբար, նվազ հարգանք ու պաշտոնականություն է վայելել և կանոնական հանգամանք չի կրել: Այնուամենայնիվ, այն կիրառվել, գոյատևել և ավանդաբար օրինականացված ճշմարտության ուժ է ստացել: Մյուս հիմնական եղանակը գրավորն է, որը ներկայացնում է հրեական մեկնությունների պաշտոնական տեսակետը, քանի որ այն հմուտ ու առավել վստահելի մեկնիչների գրավոր խոսքն է հանդիսանում և ավելի «վավերական» ու «հանձնարարելի» է համարվում և, ամենակարևորը, կանոնականացված է: Այդ եղանակով կատարված մեկնությունները ուղղակի հրեական օրենսգրքի՝ «Թալմուդի» մաս են կազմում: Այն «Հալաքա» բնորոշումն է ստացել, բառացի՝ այն, ինչով կարելի է փայլել²², այսինքն՝ ուղենիչ,

¹⁸ Vööbus A., History of the school of Nisibis, p. 160.

¹⁹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Ա, էջ 798: Տե՛ս նաև՝ The interpreter's dictionary, II, p. 724.

²⁰ Եվսեբիոս Եմեսացի, Մեկնությունը Աստուածաշնչին, էջ 3: * Գրիգոր Նիկիոցի (XIV դ.) այս առնչությամբ շատ հետաքրքիր վկայություն է թողել, ըստ որի հարկավոր է «...նախապես ստուգել բնագրի ճշտությունը, ապա՝ համեմատել քաղվածքների մեկնությունը. բնագիրը պետք է ներկայացվի ամբողջությամբ և մեկնաբանելիս շրջահատվի այնպիսի տեղերում, որոնք կարող են փոխել շարադրանքի միտքը, միշտ հարկավոր է նկատի ունենալ կոնտեքստը, որն իր մեջ ամփոփում է հեղինակի կողմից առաջ քաշված այս կամ այն դրույթը»: Меодведев И., Византийский гуманизм (XIV—XV вв.), с. 25.

²¹ The interpreter's dictionary, II, p. 509.

²² Նույն տեղում, էջ 512:

որով պետք է առաջնորդվել: Դա ընկած է եղել ըստ բրիտանական մեկնությունների հիմքում: Քումբանի ձեռագրերի ուսումնասիրությունից և պարզվել է, որ կատարվել են գրավոր մեկնություններ, որոնցում շեշտը դրված է եղել մեկնվող նյութի, առավելապես մարգարեությունների իրական փաստ դառնալու հնարավորության վրա²³: Մարգարեները ոչ թե իրենց, այլ գալիք ժամանակների ճշմարիտ «պատմարաններն» են, և այս կերպ էլ պետք է նրանց երկերը ընկալվեն ու բացատրվեն:

Ս. Գրոց նկատմամբ տարակույսներ չպետք է լինեն: Բոլոր մեկնությունների հիմնական նպատակներից մեկն էլ հենց այդ է: Աստվածաշնչի ու Թալմուդի մեկնաբանական հրեական ավանդույթները ստորաբաժանումներ ունեն, որոնք կիրառվում են նույնպես ճշտված սկզբունքներով ու կանոններով²⁴: Այս բոլորը կազմում են մի ընդհանուր համակարգ, որը կարելի է պայմանականորեն կոչել հրեական, քանի որ այն երբեմն սերտորեն առնչվում է նաև անտիկ աշխարհի ու հելլենիստական միջավայրի գրավոր ժառանգության հետ:

Քրիստոնեությունը հրեաներից ժառանգելով Աստվածաշնչի մեկնության հարուստ փորձն ու ժառանգությունը, խորհում էր, որ շատ բան հարկավոր է հասկանալ, բացատրել, ճշտել, հարթել, հաշտեցնել, շաղկապել... որպեսզի աստու շնչով գրված խոսքերին մարդկությունը հասնու լինի ու ճիշտ տնօրինի իր հոգևոր-կրոնական և կենցաղային վարքագիծը: Հին և նոր կտակարանների միջև օրգանական և օրինական կապ չի կարելի հաստատել առանց օժանդակ մեկնությունների, իսկ առանց այդ կենսական կապի քրիստոնեությունը իր կարևորագույն մեկ հիմքից՝ աստվածային կանխորոշ հայտնությունից և փրկչական (մեսիական) աստվածահիմն առաքելությունից կզրկվեր: Նոր կտակարանը Հին շարունակությունն ու լրումն է. դրանց անջատումը քրիստոնեության համար անհարկ ու անհնարին է²⁵:

Քրիստոնեական մեկնաբանությունը ապրել է պատմական զարգացման երեք հիմնական շրջան՝ վաղ միջնադարյան (հայրաբանական՝ Ա—Ե դդ.), միջնադարյան (Զ—ԺԵ դդ.) և նոր ժամանակներ (ԺԶ—Ի դդ.):

Քրիստոնեական նախնական մեկնությունները, որոնք սկզբում կրել են տարերային բնույթ, կրկնում ենք, առավելապես հրեական մեկնաբանական ավանդույթների հիման վրա են ձևավորվել, հատկապես արմատական խնդիրներում, որոնք սկզբունք, մեթոդ, նպատակ էին դառնալու: Դրանց հիման վրա են ուրվագծվել և, հետագայում, աստի-

ձանաբար ընդլայնելով իրենց գործադաշտը, ներընդունելով անտիկ աշխարհի և տվյալ դարաշրջանների համաշխարհային կրոնադիտական և փիլիսոփայական տեսական նվաճումները, միջինարևելյան ժողովուրդների դիցաբանական, կրոնական պատկերացումները, ավելի են հարստացել, մշակվել և ուրույնացել:

Քրիստոնեական մեկնաբանական գրականությունը ծնունդ է առել հենց ավետարաններում և առաքյալների թղթերում: Դրա հիմնադիրը ավանդաբար համարվում է ինքը Քրիստոսը, քրիստոնեության առաջին մեծ տեսաբանը՝ Պողոս Առաքյալը: Ավետարաններում Քրիստոսին են վերագրվում մեկնաբանական շատ գրվածքներ, հատկապես, երբ խոսքը գնում է Հին Կտակարանի նկատմամբ նրա վերաբերմունքի, իր «Աստվածորդի» լինելու հանգամանքի, խոսած և մեկնաբանած առակների և այս կարգի այլ նյութերի մասին²⁶: Իսկ Պողոս առաքյալը, հատկապես հռոմայեցիներին և կորնթացիներին ուղղած իր թղթերում, հաճախ է մեկնաբանել Հին Կտակարանից և ավետարաններից քաղված խոսքեր, զանազան իրողություններ²⁷: Ավետարաններում ավետարանիչների խոսքերը երբեմն պարզապես միջանկյալ մեկնություններ են: Հովհաննու «Յայտնութիւնը» իր հորինման ժամանակաշրջանի հոգևոր-կրոնական մտահայեցողությունն ու հոգեբանությունը բացահայտող մի ամբողջական մեկնություն է, թեև կուրս ինքը առավելագույնս կարոտ է մեկնության: Այստեղ հարկ է կրկին հիշատակել Փիլոն Ալեքսանդրացուն, որը թեև հանդես է եկել իբրև հրեա և հրեական դիրքերից, այդուհանդերձ իրավամբ հորջորջվել է «Քրիստոնեության իսկական հայրը»²⁸, որովհետև Հին Կտակարանի ծավալուն, արդեն մասնագիտական իմաստով մեկնությունների հիման վրա է նոր Կտակարանի քրիստոնեական մեկնությունների համակարգը ձևավորվել և զարգացել: Նրա մեկնություններն իրենց հերթին մեկնաբանվել են եկեղեցական հայրերի կողմից: Հայ մեկնիչները ևս դրանց նվիրել են համապատասխան երկեր, որոնք հայ մեկնաբանական գրականության ամենաընտիր էջերից են²⁹:

26 Մատթեոս, ԺԳ, 33—44, ԺԲ, 3—8, 16—22, Մարկոս, է, 14—23, Բ, 9—12, Ժ, 2—7, ԺԲ, 35—48, Ղուկաս, Զ, 20—44, Ը, 1—16, Ժ, 24—27, ԺԸ, 1—14, ԺԹ, 11—26, ԻԳ, 25—27, 44—47...

27 Առ Կորնթացիս, Առաջին, Բ, 8—10, ԺԳ, 26—29, ԺԵ, 3—5, երկրորդ, Գ, 7—18, Առ Հռոմեացիս, Ա, 1—4, Գ, 1—17, Բ, 6—33, ԺԴ, 11—13, Առ Եբրայեցիս, Ը, 5—10, Առ Գաղատացիս, Գ, 6—10:

28 Փ. Զնգելոս, Бруно Бауер и первоначальное христианство. К. Маркс и Ф. Զнգельс, Соч., изд. второе. т. 19, с. 307.

29 Տե՛ս Գրիգորյան Գ., Նշվ. աշխ., էջ 95—115: Անրապյան Փ., Հովհաննես Սարկավազին վերագրված «Լուծումը» եօթանյ գրքից Փիլոնի» բնագրի ասնչություններ, էջ 177—190:

23 The Cambridge history of the Bible. I, p. 385—389.

24 Նույն տեղում, էջ 383—385, 388:

25 Guillet J., Les exégèses, p. 286.

Չուտ քրիստոնեական նախնական մեկնությունները սկզբում իրագործվել են բանավոր, քարոզաբար, հավատացյալների զանազան ժողովատեղիներում, ապա՝ եկեղեցիներում: Դրանք սկզբում ավելի ընդհանրական բնույթ էին կրում, շատ էին մեկը մյուսին պատճենում, բանի դեռ քրիստոնեությունը ինքը բնույթով այդպիսին էր, ներքին միասնությունը չէր խաթարված և տարբեր աթոռ-կենտրոնների միջև գերիշխանական պայքարը եկեղեցազավանանքային վեճերի ու տրոհումների չէր հասել: Բանավոր այս եղանակը շարունակվում է նույնիսկ մեր օրերում, քարոզների միջոցով, և անցյալ դարերի համապատասխան ժառանգությունը իր կնիքը թողնում է նրա վրա, և գրավոր մեկնություններից ըստ բովանդակության և ըստ միտումի այն չի առանձնանում:

Սակայն շուտով հասունանում է պահանջը գրավոր խոսքի նկատմամբ, և ծայր են առնում գրավոր մեկնությունները, որոնք հետզհետե ծավալվում և տիրում են եկեղեցական, կրթական, մատենադրական ու մշակութային բոլոր ոլորտներում: Դրանք հորինվել են շարունակաբար և այսօր էլ համապատասխան շրջանակներում լայնորեն կիրառվում են: Գրավոր մեկնության պարագային մեկնիչների մեջ կատարվում է մի տեսակ բնական ընտրություն: Եկեղեցու և նրա ուսմունքի պաշտպանությունը պահանջում է մտահոգություն և պատասխանատվություն ցուցաբերելու պահանջը: Բնագրական և կրոնաստվածաբանական իմացությունն ու հեղինակությունը էական գործոններ էին, որտեղից էլ բխում են գրավոր մեկնությունների հարուստ, բազմազան, հագեցած բովանդակությունն ու բարձր արժեքը: Դրանք ավելի մնայուն են, ծավալման լայն հնարավորություններ ունեն, հարկ եղած դեպքում ստուգելի և սրբագրելի են ու հարմար գիտաուսուցողական նպատակների համար, որը կարևոր պարագա էր թե՛ տեսական, և թե՛ գործնական նկատառումներով: Քչերն էին համարձակվում ձեռնամուխ լինել այդ գործին և քչերին էր այն հաջողվում:

Քրիստոնեական մեկնությունների արարման պատմության մեջ առաջնակարգ կարևորություն է ընծայվել մեկնաբանելու ելակետին, եղանակին ու նպատակին: Տեսական-մեթոդաբանական, ինչպես նաև սկզբունքային-գաղափարական հարց էր դարձել, թե Ս. Գրային որևէ բնագիր մեկնելիս նախ և առաջ ի՞նչը նկատի պիտի ունենալ, ինչի՞ց պետք է մեկնել և ինչի՞ վրա շեշտը դնել. պա՞րզ, տառացի՞, անմիջակա՞ն իմաստը պարզաբանել, թե՞ թաքուն, խորքում հասունացած ծածկաբար արտահայտվող խորհուրդը բացահայտել. ո՞րն է ավելի

էական ու աստվածահաճո...: Մենք առավելապես այս հարցի վրա ենք կենտրոնացնելու մեր խոսքը, որովհետև դա ամենաէականն է և բնականաբար իր մեջ ամփոփում է դրանց ելակետի, միտման ու նպատակի պատասխանները:

Քրիստոնյա աշխարհում մեկնաբանական այս հիմնական զույգ եղանակները մշտապես ուշադրության կենտրոնում են եղել: Այնքան նշանակալից ու արմատական են դրանք, որ գրեթե ողջ քրիստոնեական մտավորական շրջանակներին հարկադրել են բաժանվել երկուսի: Եվ դա մեկնվող նյութի ոչ միայն իմաստաբանական տարբեր ընկալման պատճառով ու հիման վրա: Չպետք է աչքաթող անել, որ նույն նյութի տարբեր եղանակով մեկնաբանությունը սոսկ բնական տարակարծության արտահայտությունն չի եղել, այլ որոշակի շահագրգռության, հասարակական-քաղաքական կողմնորոշման և ազդեցությունների ոլորտը ընդլայնելու միտում՝ միջեկեղեցական հակամարտությունների բեմահարթակի վրա:

Այն ուներ ծանրակշիռ նշանակություն կրոնաստվածաբանական, վարդապետական, դավանանքային, ներքեմն նաև ծիսական հարցերի վարդաբերյալ լայն ու ստույգ հմտություն ձեռք բերելու, դրանց շուրջ վերաբերյալ լայն ու ստույգ հմտություն ձեռք բերելու նպատակով: Սա մղվող պայքարում ապահով կողմնորոշում գտնելու նպատակով: Սա էական խնդիր էր քրիստոնեության համար բոլոր ժամանակներում և ամեն ոլորտում: Մեկնության այս կամ այն եղանակի ընտրության և կիրառության հիմքում ընկած է նաև աշխարհի, կյանքի, ճշմարտության ընկալման ու բացահայտման աշխարհայացքային կողմնորոշումը: Կրոնական, հատկապես քրիստոնեական աշխարհատեսությունը, զուգակցվելով նորպլատոնականության փիլիսոփայական վերացարկումներին՝ ըստ օգտակար համերաշխման, փաստորեն երկատում էր աշխարհը և նրա նյութական ու ոչ նյութական երևույթները նաև մեկաշխարհը և նրա նյութական ու ոչ նյութական երևույթները նաև մեկնաբանական գրականության մեջ: Ամեն ինչի սիմվոլացման տիրական հետադարձ կամ շրջադարձ եղանակով միտումը և սիմվոլիների միջոցով հետադարձ կամ շրջադարձ եղանակով այդ «ամեն ինչը» բացատրելը կարևոր ներույթ է և՛ քրիստոնեական,

* Ընդհանուր քրիստոնեական (նաև՝ հրեական) մատենագրության մեջ մեկնաբանական եղանակները բնութագրվում են տարբեր եզրարտերով՝ նկարագրական, բնագրական, պատմական, տիպաբանական, պատկերավոր, կամ՝ միտորաշական, պեղբազրական, ուսմունքական և այլն, որոնք ըստ հույների նշված հիմնական երկու եղանակների տարբեր դրսևորումներն են՝ այս կամ այն մասնակի թեթևներով և ներքին առանձնահատկություններով: Ըստ այդմ էլ՝ դրանց այստեղ անդրադասնալը մեր ծրագրից դուրս է մնում:

և՛, առհասարակ, միջին դարերի աշխարհիմացությունն ու մտածողությունը ուսումնասիրելու և գնահատելու համար: Ուշագրավ է նաև անտիկ աշխարհի և հետագա դարերի (III—IV դդ.) փիլիսոփայության որոշ հոսանքների համակցությունը քրիստոնեական աշխարհընկալման գրեթե բոլոր վերացարկված բացահայտումների մեջ: Զպետք է մոռանալ, որ քրիստոնեական մեկնություններին նախորդել են արդեն փիլիսոփայության բնագավառն ընդգրկված մեկնաբանությունները դեռևս անտիկ աշխարհից, ապա՝ հելլենիստական դարաշրջանից, որոնք անհետ ու անհետևանք չէին կարող լինել հետագա իմացական համարնույթ աշխատանքներում: Այդպես նաև՝ քրիստոնեական մեկնաբանական տեսությունների բնագավառում: Բնական է, ոչ քրիստոնեական մեկնությունները նպատակով ու գաղափարական հիմքերով այլ էին, սակայն, մեթոդաբանական-տեսական ելակետով՝ գրեթե համանման, քանի որ փաստորեն նույնպես երկատում էին աշխարհն ու նրա այլազան երկվայթները, հիմնականում վերածում իմաստավորված սիմվոլ-խորհուրդների, տալիս նրանց մեկնաբանումն ու արժեվորումը՝ իբրև իրական աշխարհի ճանաչման պրոցես: Այս առնչությամբ տեղին է վկայակոչել Քուրեվիչի հետևյալ ճշմարիտ ընդհանրացումը. «Վերացարկումը, իբրև այդպիսին, իր տեսողական որոշակի ընդգրկումից դուրս չէր ըմբռնվում, և հոգևոր էությունները, նրանց երկրային սիմվոլներն ու անդրադարձը՝ միանման առարկայանում և ընկալվում էին իբրև իրեր, որոնց ըստ այդմ լիովին կարելի էր համադրել, պատկերացնել հավասար նկատումամբ և բնականությամբ»³⁰:

Միջնադարը միշտ էլ բացահայտ հակում է ցուցաբերել ամեն կարգի ու ձևի երևույթ ընկալելու պատկերավոր կերպով, ավելի շուտ՝ խորհրդանշաբար: Այդ հողի վրա էլ ավելի լայն ծավալ ու կիրառություն է գտել քրիստոնեական խորհրդանշանակությունը (սիմվոլիկա): Այդպես ավելի քիչ էին իրականն ու երկրայինը մերկապարանոց շրջում մեկնիչների ստեղծագործություններում և ավելի լավ ու ամբողջական էին վերացարկվում և ընդհանրացվում: Ինչպես նշել ենք, այս կարևոր իմացական-ճանաչողական իրողությունը սերտ առնչակցվում էին ոչ միայն պլուրազորականները, նորալատոնականները, ստոիկյանները, մասամբ՝ կինիկները, այլև գնոստիկյանները, որոնք մերձավոր աղբյուրներ ունեին անտիկ փիլիսոփայության իղնալիստական ուղղության հետ: Այս և Մերձավոր Արևելքի ժողովուրդների կրոնական, դիցաբանական և փիլիսոփայական պատկերացումների, գաղափարների, սիմվոլ-խորհրդանշանների խաչաձևումների շնորհիվ նրանք համոզված էին, որ

ավելի ճիշտ և ավելի համապարփակ էին ճանաչում աշխարհը, մանավանդ նրա տեսական-հոգևոր երևույթները: Այս կապակցությամբ Սոկրոնովը թեկուզ մի քիչ շեշտված, բայց իրավացի եղբակացնում է. «Կրոնական շրջանակներում, որոնց ազդեցությունը ավելի էր աճում, գիտելիք համարում էին իրական աշխարհի և մարդու ոչ թե գիտության վրա հենված ճանաչումը, այլ մերձավորարևելյան կրոնների և անտիկ փիլիսոփայական պատկերացումների, բազմաթիվ դրությունների և կերպարների իմաստավորումը»³¹:

Այս զույգ եղանակներից որևէ մեկին նախապատվություն տալը ռեներ նաև մի այլ կարևոր ելակետ. այն բարձրացնում էր համապատասխան դպրոցի, այդ դպրոցը հովանավորող եկեղեցական աթոռի, ուրեմն և նրա հասարակական-քաղաքական կողմնորոշման վարկն ու հեղինակությունը: Մանավանդ արդեն աթոռների տրոհման ճանապարհ բռնած քրիստոնեությունը ավելի էր կարևորություն տալիս այս իրողությունը:

Այս կամ այն եղանակի ընտրությունը շեշտակի սահմանագծված բնույթ չկարողացավ կրել այն պարզ պատճառով, որ հնարավոր չէր կիրառել այդ եղանակներից բացառապես միայն մեկը, ասենք՝ միայն տառացին, կամ՝ միայն այլաբանական: Հնարավոր էր դառնում գեթաղանցապես կիրառել դրանցից որևէ մեկը և ըստ այդմ պատկանել այն դպրոցին, որն առավել կամ առավելագույն չափով ներկայացնում է տրված մեկնության մեջ կիրառված եղանակը:

Մեկնաբանական գրականության պատմության մեջ այդ եղանակները ներկայացնում են՝

ա) Ալեքսանդրիայի դպրոցը,

բ) Անտիոքի դպրոցը:

Ալեքսանդրիայի մեկնաբանական դպրոցը, որդեգրելով շեշտված այլաբանական եղանակը, իր կողմնորոշումը հիմնավորում էր առավելապես այն պատճառաբանությամբ, թե՛ մեկնվող բնագրերը թեև ունեն իմաստային զրսևորման երկու հիմնական եղանակ, մեկը՝ պարզ, նեն իմաստային զրսևորման երկու հիմնական եղանակ, մեկը՝ պարզ, ուղիղ, անմիջական, տառացի կամ բառացի, մյուսը՝ գաղտնի, փոխաբերական, պատկերավոր, ածանցվող, այլաբանական (երբայերեն՝ ուրտոմիստե էական, նպատակային իմաստը այդ միջոցով միայն կարելի որոմիստե էական, նպատակային իմաստը այդ միջոցով միայն կարելի է բացահայտել: Աստվածաշնչի գրքերը, ինչպես թվում են առաջին հայացքից, պարզամիտ հորինվածքներ չեն, այլ պարունակում են խորին

³⁰ Гуревич А., Категории средневековой культуры, с. 77.

³¹ Соколов В., Средневековая философия, с. 26.

խորհուրդներ: Այն, ինչ ակներև է ու դյուրությամբ բացատրելի, դա միայն արտաքին շղարշն է, որով սքողված են բուն, հանձնարարելի, սրբազան մտքերն ու հոգևոր թելադրությունները: Հարկավոր է ունենալ սրտես, խորաթափանց խելամտություն: Դրա համար այնպիսի մեկնիչներ են պետք, որոնք օժտված լինեն ոչ միայն նման կարողությամբ, այլև աստվածային հայտնություններ ու նրա շնորհած լույսի ներգործությամբ: Նոր Կտակարանում առաքյալների վրա Ս. Հոգու հրեղեն լեզվի կերպարանքով իջնելու հրաշապատումը դրա քրիստոնեական վավերացումն է³²: Պետք է միշտ հետամուտ լինել, որ այդպես նկատվի ու ներկայացվի աստվածային ճշմարտությունը, չլինեն թյուրըմբռնումներ ու բացատրություններ և, մանավանդ, խոտելի եզրակացություններ:

Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչների աշխատանքային բընույթը միաթամանակ նուրբ էր, քանի որ ավելի խորամուխ լինելով և ոչ բացորոշ որոնումների ընդարձակ ասպարեզ ունենալով, կարող էին տարվել ստեղծագործական երևակայությամբ և պարականոն շեղումների ու այլ սխալանքների դուր բանալ: Եկեղեցական կյանքում դա շատ հաշվառելի խնդիր է: Նրանք պետք է ցուցաբերեն խոր իմացություն և զգաստ պատասխանատվություն: Բայց կար նաև մյուս երեսը. կառչած չլինելով մեկնաբանվող նյութից անմիջականորեն բխող մտքերից, նրանք կարողանում էին անգամ անհաշտելի հակասություններն ու եզրերը բերել բաղձալի և նույնիսկ պահանջվող եզրակացության, որը շատ էական էր եկեղեցական պաշտոնական տեսակետից՝ հակաձակորդների հնարավոր հարցապնդումներին ու մեղադրանքներին՝ պատշաճեցված պատասխան տալու և սեփական դիրքերը ամրապնդելու համար: Ընդհանրապես մեկնաբանական գրականության առաջնային խընդդիրներից մեկն էլ նման պատասխանների անընդհատ պատշաճեցումն է՝ հարթելու կրոնական-եկեղեցական տեսանկյունից անհարիր: Թվացող հարցերը:

Այլարանական եղանակը այնքան հին է, որքան ինքը՝ մեկնությունը, ավելի հին, քան գրավոր որևէ մշակույթ: Մենք արդեն որոշ շափով ակնարկեցինք այս մասին:

Ալեքսանդրյան դպրոցի համար թեև իբրև առաջնեկ մեկնիչի նըշվում է հրեա Արիստոբոլոսի անունը, սակայն հիմնավոր ազդեցություն է թողել Փիլոն Ալեքսանդրացին: Այնուհետև նշելի են Պանտենի, ավելի շատ Կղեմես Ալեքսանդրացու անունները: Այս դպրոցի մեկնիչներից ամենակարևորները և՛ որպես հիմնական տեսաբան, և՛ որպես իր տես-

ություն կիրառող, անտարակույս, Որոգինեսն է: Նա այս բոլոր նախադրյալներից բխեցրած իր եզրակացությունները բերեց մի ընդհանուր միասնական համակարգի, որը, ի վերջո, դարձավ հիշյալ դպրոցի պաշտոնական հանգանակը: Հատկապես «Յազագս առաջնոց սկզբանց» և մյուս մեկնությունների մեջ, ներկայացնելով իր տեսական հիմնավորումները, նա կատարում է երեք հիմնական սկզբունքային բաժանում՝ մարմնական, մտավոր և հոգևոր³³: Սրանք են այն էական տարրերը, որոնցից բաղկացած է Ս. Գրային ամեն մի բնագրի ու բնաբանի իմաստը:

«Մարմինը» կամ «մարմնականը», ըստ Որոգինեսի, մեկնաբանվող բնագրի նյութական, ակնհայտ, պատմական-քերականական մասն է: Այն համեմատաբար նվազ կարևորություն ունի, պարզապես, արտաքին կեղև է ու միջոց, որով պահպանվում ու հայտնվում է բուն իմաստը: «Միտքը» կամ «մտավորը» այդ բնագրերից հանված խրատական, բարոյական, ուսուցողական-դաստիարակչական իմաստի ածանցումն է: Այն, անշուշտ, ավելի կարևոր է, քան մարմնականը, քանի որ վերաբերում է մարդու բարոյական աշխարհի բյուրեղացմանը: Թեկուզ այս երկուսի հետ էլ օրգանական կապի մեջ է, բայց երկուսից էլ առավել կարևոր նշանակություն ունի «հոգին» կամ «հոգևորը», որ հիշյալ բնագրերի բուն խորհուրդն է, ձգտումն ու վերջնական նպատակը: Դրա շնորհիվ է, որ մարդը հաղորդակցվում է աստվածային շնորհների հետ: «Հոգևորը» հենց լիովին այլաբանական կատեգորիա է:

Ավելի ստույգ ու կանոնական մեկնության համար նա զարգացնում է իր տեսական ընդհանրացումները. առաջ է քաշում սկզբունքային մի նոր «եռյակ», որը նախորդի մանրատումն է, նկատառելիվ իմաստային նոր նրբերանգներ: Դրանք են՝ այլաբանական կամ տեսական (allegory, Theory), փոխաբերական (Tropology) և խորհրդապաշտական կամ խորհրդական (anagogy): Երեքն էլ ըստ էության առնչվում են նախորդ եռյակի, «մտավորի» և ավելի՝ «հոգևորի» հետ: Առաջին երկուսը վերաբերում են մեկնաբանվող նյութի տեսական բնույթային ու հիմնավորմանը, նրանից հանված հետևություններին, որպեսզի վերջինս դաս ու խրատ լինի հավատացյալին՝ իր բարոյականը կերտելու և զտելու համար, իսկ երրորդը՝ ածանցված այն սրբազան

³² Տե՛ս մանրամասն՝ Guasten J., Initiation, II, p. 9—11. The Cambridge history of the Bible, I, p. 466—467. The interpreter's one volume commentary, p. 973. The interpreter's dictionary, I, p. 110. Տեր-Մինասյան Ե., նշվ. աշխ., էջ 140:

խորհուրդը կամ նպատակն է, որին պետք է ձգտի հավատացյալը³⁴: Հետագայում սույն եռյակի (ավելացրած շորրորդը՝ գրականը կամ տառացին) «միտք բանին» լատիններեն ձևակերպվել է այսպես.

Littera gesta docet, quid credus Allegoria, Moralis quid agas, que Tendas anagogia³⁵.

Որոգիներս տեսական այս դրույթները լայն ընդունելության արժանացան և կիրառվեցին հետագա մեկնիչների կողմից: Նույնիսկ հակառակորդներն են կիրառել դրանք, թեև ուզ անհամեմատ ավելի քիչ: Գրանք զարգացնում էին այլաբանական եղանակի հնարավորությունները, որ օգտակար ու հարմար էր: Այդ միջոցով, ասենք, «Եբգ-երգոցի» նույնիսկ խիստ ուսուցողական հարսր, փեսան և դուստրերը կարող են համապատասխանաբար ընկալվել իբրև եկեղեցի, Քրիստոս, մարգարեներ կամ առաքյալներ: Այսպիսով կարելի է որևէ բնագիր մեկնել ոչ թե մեկ կամ երկու, այլ բազմակի իմաստներով: Կրոնի, աստվածաբանության ու եկեղեցու տեսանկյունից դա բարենպաստ միջոց էր իրենց դոգմաները պաշտպանելու համար: Քիչ էր մտածվում այն մասին, թե դա ըստ էության տեղ չէր թողնում փաստացի, ուսել, քննական մտածողության համար: Կարևորն այն էր, որ նույնիսկ խիստ կասկած հարուցող տարակարծություններն էլ կարելի էր այլաբանական երբեմն բազմաթիվ շրջվածությամբ բերել ցանկալի համերաշխության:

Այլաբանական եղանակի տեսական մշակումը թեև այնուհետև ևս շարունակվել է, բայց ըստ էության ակնառու փոփոխություններ, մեթոդաբանական լուրջ տարբերակներ չեն առաջարկվել: Ավելի ուշ ժամանակներում այլաբանական եղանակով մեկնաբանական գրականությունն արարվել է համեմատաբար նվազ աշխուժությամբ ու ծավալով, բայց անպայման բովանդակությամբ հարմարվելով տվյալ ժամանակաշրջանի գիտական, մշակութային և հասարակական կյանքում տեղի ունեցած վերափոխություններին: Այս առնչությամբ հիշատակելի են առանձնապես Արևմուտքի եկեղեցական հայրերը՝ Հերոնիմոսը, Օգոստինոսը, Ալբերտ մեծը, Թոմաս Աքվինացին..., որոնք, սակայն, սկսել էին հետզհետե ավելի շատ հրապուրվել տառացի մեկնաբանական եղանակով:

³⁴ The interpreter's dictionary, II, p. 720–721. The interpreter's one volume commentary, p. 974.

³⁵ Նույն տեղերում, համապատասխանաբար՝ էջ 721, 974:

Գրական իմաստը ուսուցանում է եղածի մասին,
Այլաբանականը՝ ինչին հավատում ես,
Բարոյականը՝ ինչպես պետք է վարվես,
Խորհրդականը՝ ինչին ես ձգտում:

Հիշյալ մեկնիչների և նրանց հաջորդների, որոնք կաթոլիկ եկեղեցու ակնառու ներկայացուցիչներից են, երկերում բացահայտ նշմարելի է այդ եկեղեցու դիրքի, հեղինակության, վարդապետության ու դավանանքի շեշտված շատագուժությունը: Սա փաստորեն դառնում է որոշիչ, մայր սկզբունք նրանց թե՛ այլաբանական, թե՛ տառացի մեկնություններում: Ըստ այսմ խորանում է կաթոլիկ եկեղեցու շահագրգռությունը մեկնաբանական գրականության նկատմամբ: Նա բավական երկար ժամանակ հավակնեց լինել Ալեքսանդրյան դպրոցի անմիջական ժառանգորդն ու շարունակողը: Այդ դեռ իրեն ձեռնառու էր և օգտակար. փույթ չէր, որ դա իրականում առիթ էր տալիս մեկնաբանական առավել բնազդորոշիկ ծայրահեղությունների: Ավելի վաղ եթե արևը կամ լուսինը Ս. Գրքում, ըստ այդ շրջանի մեկնիչների, խորհրդանշել են նախախնամության լույսը, աչքը, հսկողությունը, Քրիստոսին, վերջում արդեն՝ պարզապես կաթոլիկ եկեղեցուն, պապականությանը կամ պապին³⁶: Չէ՞ որ դա նշանակում էր, թե կաթոլիկ եկեղեցին և պապականությունը արդեն Ս. Գրական ավելի հին հիմք էին ստանում. պարզ է սույն քայլի եկեղեցավարչական և հասարակական-քաղաքական միտումը, եթե, մանավանդ, նկատի ունենանք գերակայության հասնելու նրանց շարունակական նկրտումները: Պարզ է, մեկնաբանությունը, հատկապես այլաբանական առաձգական եղանակով, ուղղակի ծառայեցվում է նաև կաթոլիկ եկեղեցու եկեղեցավարչական միտումներին, նվիրապետական անգերազանցելիությունը, պապի գերակայության նվիրականացմանը: Այս հանգամանքը, ինչպես նշեցինք, կաթոլիկ եկեղեցու տեսական ու հիմնական մտահոգություններից մեկն է եղել: Ասենք, բյուզանդական եկեղեցին ևս նման նկրտումներ ցուցաբերել է, բայց ավելի չափավոր ու նվազ հավանությունությամբ:

XIV—XV դարերում ողջ եվրոպայի հասարակական-քաղաքական, քոցիալ-տնտեսական, մտավոր-մշակութային և եկեղեցական կյանքում մեծ տեղաշարժեր եղան, որոնք հսկայական գաղափարական վերափոխություններ առաջացրեցին: Հակառակ կաթոլիկ եկեղեցու ծայրահեղ գահայանողականության և դրանց նկատմամբ ցուցաբերած անզիջում բնդղիմության, տեղատվություններ եղան նաև իր ներսում, հոգևոր-գաղափարական կառուցում, մեկնաբանական գրականության մեջ: Շատ մեծանուն մեկնիչներ, աստիճանաբար տեղի տալով սույն վերափոխու-

³⁶ Ի դեպ հետաքրքիր է հետևյալ մանրամասնը. Դանթե Ալեգիերին կան Գրանդե Դեյլա Սկալային գրած նամակում պահանջում է, որ իր սՄարդկային կատակերգությունը՝ ըմբռնվի ըստ այդ քառյակ աստիճանավորման՝ տառացի, այլաբանական, բարոյական և խորհրդական: Гуревич А., укаэ. соч., 76—77:

թյուններին, իրենց մեկնություններում ընդլայնեցին մեկնաբանական տառացի, քննական եղանակի կիրառությունը: Նախկին դրույթները աստիճանաբար վերանայվեցին, ումանք դուրս մղվեցին, այլաբանական հանդուգն խիզախումները չափավորվեցին: Եկեղեցու նկատմամբ ռացիոնալ ընդվզումները օգտակար գործ էին կատարում նաև այս ոլորտում: Փննական-վերլուծական կշռադատումներն ու մտահանգումները ավելի էին ծավալվում և հաղթանակում, բոլոր դոգմաների համեմատությամբ դառնում ընդունելի չափանիշ: Բարենորոգումը (ռեֆորմացիան) արդեն գործում էր համարձակ ու արդյունավետ: Այն շէր կարող աչքաթող անել մեկնաբանական գրականությունը, հատկապես այլաբանական եղանակը՝ իր շեշտված վերացականության, միատիկայի, հաճախ կամայական զբաւերումների, հատկապես կաթոլիկ եկեղեցու և պապականության գերակայության և անխոտելիության պաշտպանության միտումով, և շունենալ իր բննադատական վերաբերմունքը այդ բոլորի հանդեպ: Իրական, առարկայական բանիմացություն էր պետք: Ժամանակն ու միջավայրը այդ հնարավորությունը ընձեռում էին:

Այս ամենը տեղի էր ունենում եվրոպական Վերածննդի նախօրեին, ապա՝ նրա գոյատևման ընթացքում, և նախապատրաստում եվրոպական մեկ այլ պատմամշակութային բեկման խոր երևույթ՝ Բարենորոգումը, որը անմիջականորեն առնչվում էր կրոնական ու եկեղեցական բոլոր կարևոր խնդիրներին:

Այս համատարած շրջափոխությունների հորձանուտի մեջ, առավելաբար եկեղեցական կյանքում, ոչինչ չէր կարող մեկուսի և անմասն մնալ ընդհանուր գործընթացից ու չկրել բարերար ներգործությունը քննական-դիալեկտիկական մտածողության: Այս ընթացքում այլաբանական մեկնաբանական եղանակը նահանջեց, թեկուզ ոչ բոլորովին հրաժարվելով իր դիրքերից: Այս գործում իր լուրջ ծառայություններն ունի մեծ վերափոխիչ Մարտին Լյութերը (1483—1546 թթ.): Նա, իր իսկ խոստովանությամբ, նախապես համակրել է այլաբանական եղանակը և մինչև վերջ էլ հիմնովին չի մերժել այն: Սակայն այն կիրառում է արդեն միայն իբրև «զարդ, հարդարանք» և վերջնականապես որդեգրում «մերկ բնագրին»՝ տառացի մեկնությունը լրիվ հավատարիմ լինելու սկզբունքն ու ծրագիրը³⁷: Նրա եզրակացությունը այս առնչությամբ հետևյալն է. «Եկեղեցին լրգոսի դուստրն է, ոչ՝ մայրը»³⁸:

Հետագայում նրա տեսական դրույթները ևս հետզհետե վերամշակվեցին, հարստացան նոր տարրերով, ավելի արդիականացան, այսինքն՝

գարձան սակավ դոգմատիկ ու սխոլաստիկական և գտան ավելի իրական, պատմական կիրառություն:

Անտիոֆի դպրոցը որդեգրել է այլաբանականին հակադիր՝ մեկնաբանական տառացի կամ բառացի եղանակը, ըստ որի հիմնականն այն է, որ մեկնաբանվող նյութը մեկնաբանվի իր ուղղակի իմաստով, որովհետև թե՛ Հին և թե՛ Նոր կտակարանի գրքերը գրված են «աստվածային հայտնությամբ», Աստծու շունչն ու խոսքն են ներկայացնում, իսկ Աստված մարդու հետ գաղտնախոսելու կարիք չի ունեցել, հակառակը, խոսել է պարզ ու հասկանալի: Մարդը ինչքան ուղիղ և ստույգ ըմբռնի այն, այնքան լավ: Ուստի Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները գտնում էին, պետք չեն թաքուն, «գաղտնախորհուրդ» մտքեր ուրեքնել ամեն մի բնագրից: Գիրքը ամբողջությամբ կամ առանձին պարբերությունը, բառը, թեկուզ և նշանը, սիմվոլը, պետք է ընկալվեն ու ներկայացվեն առանց կողմնակի վերագրումների և վերապահումների, այլապես կարող են անճշտությունների, նույնիսկ սխալի և կեղծիքի հանգեցնել: Ավելի շուտ պետք է ջանալ լավ ըմբռնել անմիջական իմաստը՝ ճիշտ ընթերցելով բնագիրը: Այս տեսանկյունից էլին Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները մանրակրկիտ քննարկում բնագրերի բնագրական հատկանիշները, ճշտում իմաստային նրբբանագները, հաճախ լեզվաքննական ու քերականագիտական վերլուծումներ և ստուգաբանություններ կատարում: Նրանք մշտապես աչքի առաջ ունենում էին բնագրերի ոչ միայն «աստվածային ծագումը», այլև մարդու կողմից գրանց գրի առնված լինելը, պատմականությունը: Նրանց համար այդ բնագրերը միաժամանակ ներկայացնում էին հրեա ժողովրդի պատմությունը, երկրային կյանքն ու կենցաղը, ծիսական ու ազգագրական ավանդույթները, փիլիսոփայական, իրավագիտական, բանաստեղծական ժառանգությունը, ազգային-քաղաքական երազանքներն ու տեսիլքները, որոնք ավանդաբար փոխանցվում էին քրիստոնյաներին: Այլաբանական եղանակի հետևորդներն էլ չէին անտեսում այս բոլորը, սակայն անհամեմատ քիչ տեղ ու նշանակություն էին տալիս դրանց: Ելնելով իրենց դավանած եղանակի օրյեկտիվ էությունից, նրանք ավելի հաճախ, քան այլաբանական եղանակի հետևորդները, քննում են այնպիսի իրական, կոնկրետ հարցեր, որոնք երբեմն պատմական ու դիտական առումով ավելի շահեկան են, եթե, մասնավոր, նկատի ունենանք գրանց փաստագրական պաշարը: Իրենց բազմազան դիտարկումներին համար նրանք վկայակոչում են պատմական զուգահեռ ու հակադիր իրողություններ հնագույն, այսօր արդեն անհայտացած, այլ ժողովուրդների անցյալից: Այսպիսով աճում էր նրանց տեղեկատուական նպաստը:

³⁷ The interpreter's dictionary, II, p. 273.

³⁸ The interpreter's Bible, I, p. 123.

Պետք չէ ենթադրել, որ պատմությունն առհասարակ, իսկ Ս. Գրային պատմությունը՝ հատկապես, նրանց համար ունեին գիտական հիմնական նշանակություն: Եթե մի կողմից շպետք է կարծել, որ նրանք պատմագիտական աշխատանք էին կատարում լուսարանելու համար հրեա և մյուս առնչակից ժողովուրդների անցյալը, սակայն, մյուս կողմից պարզապես չպետք է անտեսել նաև այն գիտական օգտակար արդյունքը, որ գոյանում էր նրանց երկասիրությունների մեջ: Ընդհատ այս հիմքերով էլ գնահատելի է նրանց լուսման նաև բնագրագիտական, լեզվագիտական, քերականագիտական, բանասիրական, երբեմն տիեզերագիտական, բնափիլիսոփայական, իմացաբանական և մշակութային հարցերի արծարծման ու քննությունն մեջ:

Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները միաժամանակ հետամուտ էին պարզելու բնագրերի զգացական ծալքերը. տրամադրությունը, հոգեբանական առընչությունները մարդկային ապրումների ինչ-ինչ վիճակների հետ: Դա նկատելի է հատկապես Մարգարությունների, Մաղձոսների, Առակների, Երգ-Երգոցին, Խրատների նվիրված մեկնություններում, որոնցում գեղարվեստական, քնարական, հուզական տարրերը բավականին շատ են: Այս դեպքում նրանց աշխատանքում նկատառելի են նաև գրականագիտական թեկուզ ոչ միշտ հստակ արտահայտված գիտարկումներ, որոնք արժանի են ուշադրության:

Այստեղ կարելի է նշել նրանց թարգմանական բնույթի արժեքավոր քննություններն ու տեսական հարցադրումները: Նրանք երբեմն համեմատություններ են անում, զուգահեռներ անցկացնում Աստվածաշնչային տարալեզու բնագրերի, առանձին բառակապակցությունների ու բառերի միջև և կարևոր հաստատումներ ու ճշտումներ կատարում: Հիշենք թեկուզ այն, որ նրանք միանգամայն որոշակիորեն պաշտպանում են թարգմանության ճշգրիտ, բայց ոչ ստրկական եղանակը: Առաջին ու հիմնական պայմանը իմաստի ստույգ արտահայտումն է: Այս սկզբունքի մեծ շատագույններից է Եվսեբիոս Եմեսացին (IV դ.)՝ Անտիոքի զբաղրոցի վառ անհատականություններից մեկը: Նա V դարում հայերեն թարգմանված իր «Արարածոց մեկնութեան» մեջ խիստ դատապարտել է Ակյուղասի «ստրկական» թարգմանությունը, ցույց տվել այն անպատեհությունները, որոնք ի հայտ են գալիս նման թարգմանությունների դեպքում, քանի որ մի լեզվի առանձնահատկությունները պարտազրկում են մի այլ լեզվի, որի համար դրանք միանգամայն անհարիր են: Տուժում է թե՛ թարգմանվող, թե՛ արգեն թարգմանված բնագիրը, անշուշտ նաև՝ ընթերցողը: Նա նույն տեղում միանգամայն իրավացիորեն առաջարկում ու պաշտպանում է բնագրի արտահայտած իմաստին

անպայման հարազատ մնալու թարգմանության եղանակը³⁹: Պարզվում է, որ Հայաստանում էլ արժարժվել է այս խնդիրը⁴⁰, որն էլ պահպանում է իր հետաքրքրությունը: Նախապատվությունը տրվել է մտքի, իմաստի ստույգ արտահայտմանը. «...բարոք է զլեզուին՝ որ թարգմանիցի՝ թողուլ զառանձինն բանսն, և զմիտսն թարգմանել», «Քանզի բազում են ըստ իւրաքանչիւր լեզուաց առանձինն բանք, որք՝ թէ անդէն ի տեղոջ մնայցեն՝ գեղեցիկք և յուսաւորք և յայտնիք և պատշաճողք թուին այնոցիկ, որք զնոսա ի կիր արկանիցեն, բայց նովին բանիւր յայլ լեզու փոփոխեալք՝ շքեծայեցուցանեն զմտացն զաւրութիւն»: Այսպես է վարվել Ակյուղասը Աստվածաշունչը երբայերենից հունարեն թարգմանելիս. «...որ զբանն եեթ վիճեաց նոյնգունակ թարգմանել և հանել, և ըստ մտացն ընծայութեան՝ վրիպեալ գտաւ յայլոց...»: Ուստի, կրկին եզրակացնում է. «Քանզի այն իսկ պատշաճագոյն էր՝ թողուլ զբանիցն զառանձինն պայման ըստ իւրաքանչիւր լեզուացն, և զմիտս լեզուին թարգմանել և յանդիման կացուցանել, և ոչ առանձինն բանիցն պատշաճիւք զգաւրութիւն մտացն խաբխալել»⁴¹: Պարզ է. հարկավոր է հաշվի առնել յուրաքանչյուր լեզվի առանձնահատկությունները, յուրաքանչյուր բառի տվյալ կիրառության իմաստային նրբերանգը, թափանցել «մտքի զորութեան» խորքը և ապա թարգմանել: Այսպիսի աշխատանքը, անշուշտ, նաև մեկնություն է, նման աշխատանք կատարողն էլ՝ «մեկնիչ»: Այստեղից էլ՝ մեկնիչների և թարգմանիչների համապատվությունը միջնադարյան ընդհանուր քրիստոնեական, ինչպես նաև հայ գիտամշակութային ու ազգային հասարակական կյանքում:

Նրանք չեն խուսափել մատնանշելու իրենց նկատած Ս. Գրային տարբերությունները, ավելի զուսպ են եղել Հին կտակարանի մեջ տեսնելու Նոր կտակարանի նախադրյալները, և, մանավանդ, Քրիստոսի մեսիական առաքելության վերաբերյալ կանխագուշակումները: Գոգմատիկ անհանդուրժողականությունից համեմատաբար հեռու են եղել:

39 Եւսեբիոս Եմեսացի, Եղվ. աշխ., Առաջաբան, էջ Է—ԻԲ:

40 ՏԻՐ-Պետրոսյան Լ., Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնությունը», էջ 63—68:

41 Եւսեբիոս Եմեսացի, Եղվ. աշխ., էջ 1—3:

Այստեղ հարկ է նշել, որ Ի. Մեղվեղևի հաստատումը, որը հիմնված է Գ. Քամիլի, Կ. Սետտոնի և Ա. Վաքալուպուսի եզրակացությունների վրա, թե իբր ըստ իմաստի «արդի թարգմանության մեթոդի հիմնադիրը» Մանվել Քրիստոսյանն է (XIV—XV դդ.), ճիշտ համարել չի կարելի, քանի որ, ինչպես տեսանք, զոնե Եվսեբիոս Եմեսացին, որն ապրել է IV դարի առաջին կեսին, արդեն շատ որոշակի զրել ու պաշտպանել է «ըստ իմաստի» թարգմանության մեթոդի հարցը: Հայաստանում ևս այն արժարժվել ու կիրառվել է դեռևս V դարում: Տե՛ս Междведес И., Византийский гуманизм (XIV—XV вв.), с. 48.

Քերես այս քննադատական մտածելակերպի և Ս. Գրային պատումների ու ասույթների նկատմամբ քիչ թե շատ ազատ վերաբերմունք ցուցաբերելու պատճառով, նրանց մեջ ավելի մեծ թիվ են կազմում ընդհանուր քրիստոնեական աշխարհի և եկեղեցու կողմից դատապարտվածները, հեղինակները, իբրև այլախոհներ և, նույնիսկ, հերձվածողներ: Անտիոքի դպրոցի հիմնադիրը ազանգավոր Արիոսի ուսուցիչն է եղել, իսկ հետո, այդ դպրոցը իբրև ղեկավար ունեցել է արիոսական ազանգի ներկայացուցիչներից մեկին⁴²: Իհարկե, չպետք է ենթադրել, թե Անտիոքի դպրոցը շարունակ ազանգավորներ է սնուցել, այդպիսիներից ոմանք ղեկավար դեր են խաղացել թե՛ դպրոցում, թե՛ հիշյալ եղանակով մեկնաբանական գրականություն ստեղծելու մեջ: Անտիոքը մինչև վերջ էլ մնաց քրիստոնեական ամենահեղինակավոր աթոռներից մեկը:

Ալեքսանդրյան այլաբանությունից ու ընդգծված միատիկայից զգուշանալով, Անտիոքը առանձնանում էր, պահպանում իր գեմքն ու հեղինակությունը, դիմում ինքնահաստատման ու ինքնապաշտպանության, իբրև ուրույն եկեղեցական աթոռ: Այդպես էր վարվում նաև մեկ այլ պատճառով: Ինչպես ճիշտ է նկատվել՝ «Անտիոքը այլաբանության մեջ տեսնում էր վերագրած գեպի հեթանոսություն» և «հեղինակների թափանցում քրիստոնեական ավանդույթների մեջ»⁴³: Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները բազ գիտեին, որ այլաբանությունը անտիկ հեթանոսական աշխարհում կիրառվել է բացատրելու և արդարացնելու գիցաբանության մեջ առկա անհնարին, անհարիր, նույնիսկ «անբարոյական» ինչ-ինչ իրողություններ: Նրանք նաև նկատի ունեին, որ Ալեքսանդրիան հելլենիստական միջավայրի ու մշակույթի հետ ուղիղ և շեշտված առնչություններ ունեցող հիմնական կենտրոններից է: Նրանք զգուշանում էին նաև զնոստիկյանների ուղղակի ազդեցությունից:

Վերջիններիս դեմ ևս պաշտոնական եկեղեցին ուժգին պայքար էր սկսել, քանի որ նրանք մեծ մասամբ մերժում էին Հին Կտակարանն ու նրա դրույթները մանավանդ արարչագործության բնագավառում, իրենց ուսմունքում մեծ տեղ էին տալիս անտիկ փիլիսոփայության և տարրեր ժողովուրդների գիցաբանական պատկերացումներին: Սակայն Անտիոքի դպրոցի ներկայացուցիչները մտահոգված էին նաև նրանով, որ «Այն, ինչ Ս. Գրոց մեջ քրիստոնյային ներկայացվում էր իբրև իրողություն, որը հարկ էր հասկանալ տառացիորեն. «խորամանկաբար իմաստուն շեղանալով», գնոստիկները վերածեցին այլաբանության,

«իմվոլի, դրանով էլ՝ ուղի հարթելով դեպի հերետիկոսություն»⁴⁴: Սա ևս նրանց հեռու էր պահում այլաբանությունից:

Անտիոքի դպրոցի կողմից այս տառացի, քննական եղանակի առավելագույն յուրացման և կիրառման համար նախատիպ օրինակ է հանգիսացել հրեական մեկնաբանական «պեղա» անվանված եղանակը, որը արդեն զարգացման երկար ճանապարհ էր անցել:

Այս առնչությամբ հարկ է հիշեցնել, որ խնդրո առարկա զույգ եղանակների միջև անհաշտ հակասություններ չեն եղել, նույնիսկ բացառվում է մեկի կիրառությունը առանց մյուսի: Դա պայմանավորված է կրոնական ընդհանուր հիմքով, բնագրերի իրենք իրենց մեջ կրած այդ եղանակների տարրերով, մեկնաբանող հեղինակների դասային պատկանելությամբ, բուն մեկնության, իբրև կրոնական-աստվածաբանական ուսուցման կարևոր միջոցի, թելադրանքով ու նպատակով:

Ըստ այս բոլորի, սույն դպրոցի նման կողմնորոշումը մեկնաբանական գրականության մեջ որակել են «Արիստոտելյան տիպի», ի հակադրություն Ալեքսանդրիայի դպրոցի, որը կոչել են «Պլատոնական տիպի»⁴⁵:

Անտիոքի դպրոցի հիմնադիր է համարվում Լուկիանոս Սամոսացին կամ Անտիոքացին (մեռ. 312 թ.): Նա համառ սկզբունքայնությամբ պաշտպանել է իրենց որդեգրած եղանակը: Նրա մեթոդաբանական ավանդներին հետամուտ են եղել, ուղղակի կամ անուղղակի, իր աշակերտներից շատերը: Դպրոցի առավել կարկառուն ներկայացուցիչներից է Դիոդորոս Տարսոնացին (IV դարի կեսերին), որը եղել է դպրոցի ուսուցչապետը, ընդհանրապես եկեղեցական մատենագրության եռանդուն և արդյունավետ գործիչ, թեպետև դատապարտվել է իր վարդապետական ուսուցման մեջ շեղումներ թույլ տալու համար, բայց հետագայում արդարացվել է: Սակայն նրա բազմաբնույթ երկասիրությունները պահպանվել են մասամբ միայն, երբեմն ուրիշների անունով, երբեմն էլ՝ ուրիշների «շղթայական», կամ «խմբագիր» մեկնությունների մեջ: Դիոդորոս Տարսոնացուն գերազանցել են իր աշակերտներից Թեոդորոս Մոպսուեստացին (մեռ. 428 թ.) և Հովհան Ոսկեբերանը (347—407 թթ.): Թեոդորոս Մոպսուեստացին բոլորից շատ է մեկնություններ գրել: Հին և նոր Կտակարանների գրեթե յուրաքանչյուր գրքի մասին հեղինակել է առանձին աշխատություն: Մեկնաբանության տեսական խնդիրներին նվիրել է հատուկ ուսումնասիրություն, որը հիմնականում չի պահպանվել: Այն կոչվել է «Ընդգծված այլաբանութեան», որտեղ, ի հա-

⁴² Guasten J., Initiation, II, p. 146—147, III, p. 23—26, 429.

⁴³ Guillet J., Les exégèses, p. 298, 257, The Cambridge history of the Bible, p. 437.

⁴⁴ Соловьев В., Средневековая философия, с. 30.

⁴⁵ Guasten J., Initiation, II, p. 146.

կազմումն ալեքսանդրիացիների, պաշտպանել է իրենց դպրոցի մեկ-նաբանական տեսության հիմունքները: Նրա մյուս երկերում այս կապակցությամբ բավական նյութ կա, որը հստակ պատկերացում է տալիս թե՛ հեղինակի, թե՛ նրա դպրոցի այս մարդում ծավալած գործունեության մասին: Իսկ Հովհան Ոսկեբերանը, քրիստոնյա եկեղեցու այնքան շատ փառաբանված գործիչը, մատենագիրն ու գաղափարախոսը, Անտիոքի ծնունդ, նույն դպրոցի (երբ Անտիոքի աթոռին նստել էր հայազգի Մաղաթիա Խոստովանողը) սանն ու մեծ կարողություններով և հմտությամբ օժտված ներկայացուցիչը, ամենաուղղափառ կերպով ծառայել է սույն դպրոցի որդեգրած մեկնաբանական եղանակին⁴⁶: Նրա բազմաթիվ ու բազմաժանր գործերը, որոնք հիմնականում պահպանվել են (մի մասը՝ միայն հայերեն թարգմանությամբ), այս առնչությամբ մեծ հետաքրքրություն ու արժեք են ներկայացնում: Իսկ մեծածավալ ու փոքր մեկնությունները (Մենզոց, Եսայու մարգարեության, Մատթեոսի Աւետարանի, Գաղատացուց թղթի, ինչպես նաև շատ այլ մեկնաբանական բնույթի ճառեր) խիստ նպատակամետ են՝ անմիջական, հստակ, բնական: Դրանք զրված են գրական թերևս լավագույն ձևի մեջ, ունեն հետադարձ խոսքի արտակարգ ճոխություն ու գեղեցկություն, հյուսված են կրոնաստվածաբանական լայն հմտությամբ և նուրբ մտածողությամբ: «Ոսկեբերան» հորջորջումը նա կարողացել է դարերի ընթացքում պահպանել: Նա իրավամբ համարվում է ընդհանրապես քրիստոնեական մեկնաբանական գրականության անգերազանցելի մեծերից մեկը: Այդպիսիներից է նաև Թեոդորոս Կյուրացին (393—468 թթ.), նույնպես Անտիոքի ծնունդ ու տեղի դպրոցի սան: Նա հատկապես իր ժամանակի ամենաբանիմաց անհատականություններից է, բաշ ծանոթ ոչ միայն կրոնական գիտելիքներին, աստվածաբանական ու վարդապետական այնքան նուրբ հարցերին, այլև անտիկ աշխարհի ու իր ժամանակի հունա-բյուզանդական փիլիսոփայությանն ու մշակույթին, նաև լավատեղյակ մի քանի լեզուների: Մավալուն մատենագրական ժառանգություն է թողել, այդ թվում՝ բազմաթիվ մեկնություններ՝ Ութնազբեանց, Սաղմոսաց, Երգոց-Երգոց, Դանիելի, Եզեկիելի, Եսայեայ, Երեմիայի մարգարեությունների...: Սրանք նմանապես իր ժամանակի գիտական, փիլիսոփայական մտքի ու գրական վարպետու-

թյան ընտիր նմուշներ են, ունեն նաև եկեղեցապատմական նկատելի արժեք: Թեև դրանցում, համեմատաբար ավելի հաճախ, քան իր նախորդների երկերում, կիրառվել է այլաբանական եղանակ, բայց և այնպես՝ միշտ զուսպ ու շափավոր:

Անտիոքի դպրոցը տվել է նաև այլ անվանի ու վաստակաշատ մեկնիչներ, որոնց թողած գրական հարուստ ժառանգությունը ըստ ամենայնի արժեքավոր ներդրում է թե՛ իրենց դպրոցի և թե՛ ընդհանուր քրիստոնեական մեկնաբանական գրականության մեջ: Կարելի է հիշատակել Եվսեբիոս Կեսարացուն (մեռ. 339—340 թթ.), Եվսեբիոս Ծմեացուն (մեռ. 350-ական թվականներին), Կյուրեղ Երուսաղեմացուն (մեռ. 347 թ.), Եպիփան Կիպրացուն (մեռ. 403 թ.)⁴⁷:

Անտիոքի դպրոցի աշխարհագրական սահմանները, որոնք պայմանականորեն ներկայացնում են նրա անմիջական ազդեցության ոլորտը, բավականին ընդարձակ են. դրանք ձգվել են Փոքր Ասիայի արևմտյան ափերից մինչև Ասորիքի խորքերը, ընդգրկելով առանձնապես քաղաքական և մշակութային կարևոր կենտրոններ Եդեսիան ու Մծբինը: Ինչպես կոտեսները հետո, այդ ոլորտի մեջ է եղել մասամբ նաև Հայաստանը:

Գիտության ու մատենագրության արևելաքրիստոնեական աշխարհի խոշորագույն կենտրոններից էին Եդեսիայի և Մծբինի դպրոցները, որոնց վերաբերյալ առաջին իսկ գրավոր վկայությունները հաստատում են, որ դրանցում ծավալվել են նաև մեկնաբանական արդյունավետ գործունեություն՝ քրիստոնեական մյուս գլխավոր կրթական ու մատենագրական կենտրոնների նմանողությամբ: Եվսեբիոսը, որը Եդեսիայի դպրոցի ամենասկզբնական կազմակերպիչներից է, ըստ ոմանց՝ հիմնադիրը⁴⁸, թողել է մեծ ծավալով ու տարողությամբ մեկնաբանական ժառանգություն, որը քրիստոնեական մատենագրության մեջ պատվավոր տեղ է զբաղում: Այն առանձնակի դեր ու նշանակություն ունի հայ մատենագրության, թարգմանական և մեկնաբանական գրականության համար: Դրեթե լիովին հայերեն է թարգմանվել գեոևս V դարում և մի զգալի մասը պահպանվել է միայն հայերենով⁴⁹:

Մենք արդեն նախապես նշել ենք, թե որքան մեծ նախապատվություն էր տրվում ժամանակին մեկնիչ-թարգմանիչներին քրիստոնեական բարձրագույն բնույթի, այդ թվում նաև Եդեսիայի ու Մծբինի

⁴⁶ Տե՛ս մանրամասն՝ նույն տեղում, II, էջ 146, 168—178, III, էջ 23—26, 558—573, 596, 608:

* Ինչպես ցույց է տվել Ֆրանսիացի հայագետ Բ. Ութինն՝ Թեոդորոսի Սաղմոսաց մեկնությունը պահպանվել է նաև հայերենով, սակայն վերագրված Եպիփան Կիպրացուն: Տե՛ս Outtier B., La version arménienne, XII, p. 169—180: Նույնի՝ La version arménienne du commentaire des Psaumes, XVII, p. 241—243.

⁴⁷ Տե՛ս մանրամասն՝ Guastien J., Initiation, III, p. 439—487, 495—499, 510—530, 540—547, 750—758.

⁴⁸ Vööbus A., History of the school of Nisibis, p. 7.

⁴⁹ Տե՛ր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականությունը, էջ 40—41:

դպրոցներում⁵⁰: Ասորական միջնադարյան գրականությունը գերազան-
ցապես քրիստոնեական է, որի նշանակալից մասը ունի մեկնաբանա-
կան բնույթ ու բովանդակություն: Հատկապես այս դպրոցներում էին
ծնվում ու ծավալվում ասորական գրականության զարգացման գործառ-
նությունները, մատենագրական հիմնական երևույթներն ու երեսփայտի-
ները:

Անտիոքի դպրոցի ուղղակի ազդեցությունը խորապես զգալի է
եղել այդ դպրոցների մեկնաբանական գրականության ձևավորման ու
զարգացման վրա: Մինչև V դարի վերջերը հունարենից ասորերեն
թարգմանվեցին Անտիոքի դպրոցի հեղինակավոր ներկայացուցիչների,
մասնավոր Քեոզորոս Մոպսուեստացու, Գիոզոր Տարսոնացու մեկնա-
բանական երկերը: Բնական է, այս թարգմանությունները մատնացույց
են անում Եղեսիայի ու Մծբինի կողմնորոշումը հիմնականում դեպի
անտիոքյան մեկնաբանական ավանդները: Հիշյալ թարգմանություննե-
րին զուգընթաց ասորերեն էին թարգմանվում հույն փիլիսոփաներից
առավելապես Արիստոտելի, Պորֆյուրի երկերը և լայնորեն օգտագործ-
վում կրոնական-աստվածաբանական գրականության մեջ հատկապես,
երբ տեսական բարդ հարցեր են քննարկվել և հիմնավորվել: Նշելի է,
որ թարգմանված փիլիսոփայական երկերի վերաբերյալ ուրույն մեկ-
նություններով հանդես եկան հատկապես հիշյալ զույգ դպրոցների ներ-
կայացուցիչները: Այս առնչությամբ ընդգծելի են ի մասնավորի Հիբա-
յի, Մանա Շիրազցու, Կուսի, Մարիի և Պորբայի ծառայությունները⁵¹:

Անտիոքից ուղղակի Եղեսիա ուսուցանելու էին գալիս նշանավոր
ուսուցչապետներ, բնական է, իրենց հերթին ավելի արմատավորելով
Անտիոքի ավանդները⁵²:

Սակայն, ինչպես արդեն դիտել ենք տվել, դպրոցների ձևավորումը
և դպրոցներին հարելը կամ պատկանելը սոսկ կրոնաաստվածաբանա-
կան ազատ համոզմունքի արդյունք չէ, այլև հասարակական-քաղաքա-
կան ազդեցությունների նկատմամբ բռնած դիրքի արտահայտություն:
Այդպես էր նաև տվյալ դեպքում: Անտիոքը միաժամանակ, թեև ոչ հա-
վասարապես, ասորական քաղաքակրթության կենտրոն էր: Ծիշտ է,
այնտեղ հիմնականում իշխում էր հունական խոսքն ու գիտական միտ-
քը, սակայն, չպետք է մոռանալ, որ այն Ասորիքում էր գտնվում, և աշ-
խույժ առևտրական-տնտեսական կապերի հետ միաժամանակ մշակու-
թային սերտ աղերս էր ստեղծվել նրա և Ասորիքի այլ կարևոր կենտ-

րոնների միջև: Ասորական քրիստոնեական մտավորականությունը այդ
կապերը ավելի էր ամրացնում: Ահա, երբ 431 թվականին տեղի ունե-
ցավ Եփեսոսի տիեզերական ժողովը և նզովվեց նեստորականությունը,
բողոքովին էլ ոչ առանց քաղաքական նկատառումների Եղեսիան, Ռար-
բուլայի առաջնորդությամբ, նախապես մերձեցավ Անտիոքին: Ապա,
շատ կարճ ժամանակ անց, խիստ կտրուկ փոխվեցին նրանց հարաբե-
րությունները, և Ռարբուլան այս անգամ շեշտակի երես զարժեց Ան-
տիոքից, նույնիսկ հրի մատնեց Քեոզորոս Մոպսուեստացու երկերը⁵³:
Նա դարձավ Կյուրեղ Ալեքսանդրացու եռանդուն համակիրներից ու հե-
տևորդներից մեկը:

Այս շրջադարձը շէր կարող իր հետևանքները չունենալ նաև Ալեք-
սանդրիայի մեկնաբանական ավանդները որդեգրելու խնդրում: Մույն
ընթացքը հետզհետե ավելի հզորացավ և միաբնականների գործունեության
ծավալման հետ միասին դրույթյան տեր դարձավ:

Այսպիսով, Եղեսիայի, ինչպես նաև Մծբինի ասորական կրթական
և մատենագրական կենտրոնները սերտորեն առնչվում են Անտիոքի և
Ալեքսանդրիայի դպրոցների մեկնաբանական ավանդներին, բայց ոչ
կանոնավոր ու հավասար հետևողականությամբ, ավելի շատ հակված
լինելով Անտիոքի կողմը: «Եղեսիայի դպրոցը Անտիոքյան մտայնու-
թյան ու պրոպագանդայի իսկական սիրտն էր»⁵⁴:

Նույնը կարելի է ասել նաև մյուս ասորական մեկնաբանական կա-
րևորագույն կենտրոնի՝ Մծբինի մասին: Հիբայի մահվամբ (457 թ.)
Եղեսիայի դպրոցը կորցնում է իր վերջին սյուներից մեկին, ու թեև
նրանից հետո էլ այն շարունակում է գործել, բայց արդեն խամրած մի-
ջակում, և շուտով իր տեղը զիջում է Մծբինին, երբ «Եղեսիան խավա-
րեց, և պայծառացավ Մծբինը»: Վերջինս, երբ միասին դորձում էր
Եղեսիայի հետ դարի 50-ական թվականներից ու նրանից հետո էլ՝
առանձին, առաջնորդվել է առավելապես անտիոքյան մեկնաբանական
ավանդներով⁵⁵:

Այսպիսին էր ասորական մեկնաբանական գրականության դեպի
Անտիոքի և Ալեքսանդրիայի դպրոցները ցուցաբերած կողմնորոշման
պատկերը՝ ուրվազգծված ամենասեղմ խոսքերով:

Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել
կապաղովկեացիների մասին:

53 Նույն տեղում, էջ 26:

54 Նույն տեղում, էջ 30:

55 Տե՛ս մանրամասն՝ նույն տեղում, էջ 50, 77—81, 122—129, 134—141, 211—
222, 238—247:

50 Vööbus A., նշվ. աշխ., էջ 14, 100, 105:

51 Նույն տեղում, էջ 12—16, 20—24:

52 Նույն տեղում, էջ 24—30:

Բյուզանդական գրականության երեք «մեծ կապաղովկիացիներից» երկուսը՝ Բարսեղ Կեսարացին և եղբայրը՝ Գրիգոր Նյուսացին հետաքրքիր երևույթ են մեկնաբանական գրականության անդաստանում: Առաջինը իր հանրաժանով «Ցաղագս վեցօրէից» կամ՝ «Վեցօրեայք» երկով, որը ըստ էության մեկնությունն է Մենդոց գրքի և ներկայացնում է իր գարի գիտական միտքն ու մտածողությունը տիեզերքի, բնության, իրերի, երևույթների, կենդանական աշխարհի մասին, կատարել է գիտական-մատենագրական լուրջ ներդրում: Այս առիթով բնության ու բնագիտական երևույթներին առնչվելով, նա ավելի շատ Անտիոքի գյուղացի ավանդներն է համակրում ու կիրառում: «Ինչ վերաբերում է ինձ, երբ ևս ուզում եմ խոսել խոտի մասին, ևս խոտի մասին էլ խորհում եմ: Այնպես եմ վարվում բույսի, ձկան, վայրի գաղանի և բնտանի անասունի պարագային: Ես ամեն ինչ ընդունում եմ այնպես, ինչպես պարզ ասված է, որպեսզի չլինացնեմ (ամոթով չթողնեմ — Փ. Ա.) Ավետարանը»⁵⁶:

Նա կիրառում է նաև այլաբանական եղանակը, թեև ուղ և՛ սակավ: Այս միջավայրի բյուզանդական մատենագրության մյուս մեծ ներկայացուցիչը՝ Գրիգոր Նյուսացին որոշակիորեն հակված է դեպի այլաբանությունը: Նա չի ժխտում, որ ամեն մի բառի պարզ իմաստի հետ կան նաև երկրորդ կամ ավելի իմաստներ, և իր համար ավելի նախընտրելի ու էական են այս վերջինները: Նա նպատակադրված փնտրում ու գտնում է դրանք և այլաբանական-խորհրդապաշտական մեկնություն տալիս բոլորին: Նա Որոգենեսին այս նկատառումներով շատ բարձր է գնահատում, որի ուղղափառ հետևորդն է ըստ ամենայնի: Նաև Փիլոսի մեկնությունների ուժեղ ազդեցության տակ է. դա ակնհերև է նրա «Ժողովողի» և հատկապես «Երգ-Երգոցի» մեկնություններում:

Այս երկուսի ազդեցությունը հայ մեկնաբանական գրականության վրա միանգամայն նշանակալից է:

Մեթոդաբանական այս սկզբունքներն ու դրանց զործնական կիրառությունները անգնահատելի և օրինակելի ժառանգություն հանդիսացան հայ մեկնաբանական գրականության համար՝ թարգմանաբար և անմիջականորեն: Դրանք ոչ միայն հարստացրին նրա հիմունքային գիտապաշարը բազմաթիվ բնագավառներում, այլև լայն հնարավորություններ ընձեռեցին զբաղվելու տեսական ընդհանրացումներով, սեփական մտածողության զարգացմամբ, տրամաբանական խոսքի ճկուն, երբեմն խիստ նրբերանգված կիրառություններով, լեզվի և ոճի մասնա-

գիտական մշակմամբ և այլն: Մեկնաբանական գրականության մեթոդաբանական-տեսական հետազոտման ժառանգությունները հիշյալ նկատառումներով շատ լուրջ նպաստ կարող են բերել, քանի որ հայ համարնույթ ժառանգությունը, կարելի է որոշակի ասել, նրա օրգանական մասն է և՛ թեմատիկ ընդգրկումների, և՛ դրանց բացահայտման մեթոդաբանական-տեսական սկզբունքների ընդհանրություններ: Այս նկատառումը վերաբերում է հայ մեկնությունների ոչ միայն ամբողջությամբ, այլև առանձին միավորներին, և ըստ այսմ դառնում է առավել կարևոր ու նշանակալից:

Հայ մեկնաբանական գրականության մեջ ընդգրկված նյութը իր տարբեր օղակներով՝ գիտություն, փիլիսոփայություն, բանահյուսություն, ավանդություն, պատմություն, կենցաղ, սովորույթ, ծես, լեզու, քերականություն, թարգմանություն, արվեստ և այլն, արծարծված է միևնույն հիմնական տեսանկյունից:

Հայ մեկնաբանական գրականությունը ծնվել է թարգմանական գրականության օրորոցում և սնվել նրա ակունքներից: Հայերեն գրավոր մշակույթի արարման սկզբնական օրերից «մեկնաբանելը» հաճախ նույնացվել է «թարգմանելու» հետ և՛ հակառակը: Տեսանք, որ թարգմանիչը ինքը նաև մեկնիչ էր: Այդպիսին էին V դարի հայ թարգմանիչները, որոնք այնքան ճ գրիտ կարողացել էին կատարել Ս. Գրոց, եկեղեցական հայրերի բազմաթիվ մեկնությունների, ջատագովական ու փիլիսոփայական երկերի թարգմանությունները: Թարգմանությունը նրանց համար պարզ, ստրկական փոխադրություն չի եղել: Այս կապակցությամբ տեսական և գործնական նկատառումներով բանավեճեր են տեղի ունեցել Հայաստանում, որի վկայություններից մեկը Եվսեբիոս Եմեսացու թեկուզ ոչ այնքան ուղղակի հաստատումն է⁵⁷: Ավելի ուշ, Ղուկասի Ավետարանի Մեկնության հայ հեղինակը շարունակում է պաշտպանել նրա սկզբունքը, դատապարտելով ստրկական թարգմանության եղանակը. «Զգրոյն զօրութիւն ոչ գիտէին, որ է մեկնութիւն, և միայն ի բառսն հայէին»⁵⁸: Դրանից զերծ մնալու միակ ճիշտ և հանձնարարելի միջոցը նախ և առաջ բնագրի իմաստի ճշգրիտ ընկալումն ու բացահայտումն է և ապա թարգմանաբար այն ներկայացնելը: Առ այսօր մասնագետների ուշադրությունից չլրիպած այս հարցը, կարծում ենք, ճիշտ են լուծել մեր բանիմաց նախնիները:

57 Եվսեբիոս Եմեսացի, նշվ. աշխ., էջ 1—4: Տե՛ս նաև Տեր-Պետրոսյան Լ. Եվսեբիոս Եմեսացու «Ուսմատյանի Մեկնությունը», էջ 63—68:

58 Նոր քառերբը Հայկազեան լեզուի, Բ, էջ 244:

⁵⁶ Guasten J., Initiation, III, p. 313.

Մեկնաբանական եղանակի ընտրության հարցում հայ մեկնիչները համեմատաբար ավելի ազատախոհ են եղել, գործել անկաշկանդ։ Նրանք պատկանում են քրիստոնյա մեկնիչների այն խմբին, որոնք գրեթե հավասար շափով կիրառել են նշված երկու հիմնական եղանակները։ Այնուհանդերձ, մեր կարծիքով, երկերի մանրախնդիր քննությունը ցույց է տալիս, որ գերապատմությունը տրվել է բառացի-տառացի եղանակին, Անտիոքի դպրոցի մեկնարանական, մեթոդաբանական սկզբունքներին, համեմատաբար ավելի նվազեցնելով այլաբանական եղանակի կիրառությունը, ինչպես վարվել էին Եփրեմ Ասորին, Մեծ կապաղովկիացիները և ուրիշներ։

Մեկնաբանական եղանակի ընտրության հարցում կարևոր նշանակություն է ունեցել նաև մեկնարանվող բնագրի բնույթը։ Եթե մարգարեությունները, Երգ-Երգոցը, Հովհաննու Հայանությունը պահանջում էին առավելագույն շափով այլաբանական եղանակ, ապա Գատալորաց, Քազավորությանց, Մակաբայեցվոց և մյուս այս բնույթի գրքերը՝ ավելի շուտ հարմար էին բառացի-տառացի եղանակին։ Առաջին խմբի բովանդակությունը առայելագույնս հագեցած է այնպիսի տարրերով, որոնք ինքնին այլաբանություն են, ունեն սիմվոլիկ, գույնավորական, խորհրդասքող, փոխաբերական նշանակություն։ Բնշ վերաբերում է Երգ-Երգոցին, ապա այն միանգամայն հատուկ և զգուշ վերաբերմունք է պահանջել ի սկզբանե, նեղ կացության մատենելով իր բոլոր մեկնիչներին։ Բուն բովանդակությունը, կրոնական-եկեղեցական տեսանկյունից, միանգամայն հասկանալի պատճառներով սպասելի էր, որ համարվեր խիստ գայթակղիչ, բայց այն Ս. Գրոց՝ Աստվածաշնչի մաս է կազմում։ Պետք է բացատրվի, պատճառաբանվի այս կատարված փաստը նաև այդ նույն տեսանկյունից։ Նշված երկրորդ խմբի բնագրերը պատմում են հիմնականում իրական-պատմական իրողությունների ու երևույթների մասին, թեկուզ և հրաշքներով համախառն։ Այս պատճառով էլ տվյալ դեպքում բառացի-տառացի եղանակին նախապատմություն տալը ավելի ճիշտ է։ Հայ մեկնիչները այդպես էլ վարվել են։

Հայ մեկնիչների համեմատաբար ավելի շատ անտիոքյան դպրոցի սկզբունքներով մեկնարանելու կողմնորոշումը, մեր կարծիքով, բացատրվում է նաև հետևյալ հիմքերով. նախ՝ պատմաաշխարհագրական և քաղաքական ավելի մերձավոր առնչություններով Անտիոքի ազդեցության ոլորտի մեջ էին մտնում Ասորիքն ու Փոքր Ասիան, ներառյալ Մծբինը, Եդեսիան, Կապաղովկիան, որոշ առումով՝ Բյուզանդիոնը։ Հայաստանը սերտ առնչություններ է ունեցել դրանց հետ նույնիսկ այն դեպքերում, երբ դավանաբանական վեճերի պատճառով խանգարիչ հանգամանքներ են եղել։ Երկրորդ, եկեղեցական և մատենագրական-

մշակութային բազմազան կապերով. ուղղակի Անտիոքի և Անտիոքի դպրոցի ներկայացուցիչների հետ հայ եկեղեցին ու նրա գործիչները դեռ V դարից առաջ, բայց հատկապես այդ ժամանակ և հետագայում (XII—XIII դդ.) շատ են առնչվել։ Այդ առիթով արժարժվել են միջեկեղեցական, վարդապետական, դավանանքային, կանոնական հարցեր, մշակութային ու մատենագրական բնույթի զանազան խնդիրներ։ Բնական է, այս բոլորը պիտի տանեին փոխադարձ ազդեցությունների։ Այդպես էլ եղել է։ Մեծ է հատկապես Հովհան Ոսկեբերանի մեկնարանական ժառանգության նշանակությունը նաև այս առումով։

Ալեքսանդրյան դպրոցի հետ հայ եկեղեցու առնչությունները նույնպես սերտ են եղել, մասնավանդ դավանաբանական հարցերում, սակայն մատենագրական-մեկնարանական ժառանգության տեսանկյունից այդ առնչությունների անդրադարձը համեմատաբար ավելի նվազ է։ Ըստ երևույթին դրան չի նպաստել նաև այն, որ Ալեքսանդրիան հետզհետե հեռու է մնացել հայ իրականության աշխարհիկ և, մասնավանդ, եկեղեցական շահագրգռությունից, ավելի նվազ դեր ունենալով հայ ժողովրդի քաղաքական ու եկեղեցական պատմության մեջ։

Նկատառման է արժանանում մեկ այլ կարևոր իրողություն։ Հայ մեկնիչները ևս շատ դեպքերում, եթե ոչ միշտ, իրենց երկերը կառուցել են «շղթայաձև» (խմբագիր), այսինքն՝ տարբեր մեկնիչների երկերից համապատասխան փոքր կամ մեծ քաղվածքներ անելով և օղակ-օղակ կցելով իրար՝ իրենց սեփական խոսքերից կազմված հատվածներով շղթա-մեկնություն են ստեղծել։ Շատ է պատահում, որ միևնույն շղթա-մեկնության մեջ օղակներ են լինում և՛ Անտիոքի, և՛ Ալեքսանդրիայի դպրոցի հետևորդ մեկնիչների երկերից։ Սա ակնհայտ է և այնքան տարածված, որ ապացույցների կարիք չունի։

Հայ մեկնաբանական հարուստ ժառանգության հիմնական մասը կազմում են Աստվածաշնչի գրքերին նվիրված մեկնությունները։

Հետաքրքիր են նաև ժամագրքին, Պատարագամատուցին կամ պատարագին, եկեղեցու ծիսական ու նվիրապետական կարգերին, տոներին նվիրված կրոնական բովանդակությամբ մեկնությունները։ Կան նաև այնպիսիները, որոնք ավելի փոքրածավալ են և հիմնականում կոչվել են «լուծմունք», «պատճառ»։

Միջնադարյան հայ մեկնիչներից (մինչև XIII դ.) հատուկ հիշատակության արժանի են Ստեփանոս Սյունեցին, (Մեկնութիւն Դանիէլի, Յորայ, ժամակարգութեան, Չորից Աւետարանաց), Գրիգորիս Արշարունին (Մեկնութիւն ընթերցուածոց), Անանիա Սանահնեցին (Մեկնութիւն շորեքտասան թղթոցն Պօղոսի), Խոսրով Աձևացին (Մեկնութիւն ժամազրոց), Գրիգոր Նարեկացին (Մեկնութիւն Երգոց-Երգոյն), Պողոս Տա-

բունացին (Վերլուծութիւն կարգաց եկեղեցւոյ), Ներսես Շնորհալին (Մեկնութիւն Մատթէի), Ներսես Լամբրոնացին (Մեկնութիւն Սաղմոսաց, Բժան մարգարէից, Յովհաննու Հանգստեան, Պատարագին, Առակաց, Ժողովողի, Իմաստութեան), Մխիթար Գոշը (Մեկնութիւն Երեմիայի), Հովհաննես Վանականը (Մեկնութիւն Յորայ), Սարգիս Շնորհալին (Մեկնութիւն թղթոցն կաթողիկեայց), Իզնատիոս Շնորհալին (Մեկնութիւն Դուկասու), Գեորգ Սկևռացին (Մեկնութիւն Գործոց առաքելոց), Բարսեղ Ճոնը (Մեկնութիւն Մարկոսի)...⁵⁹։

Վերոհիշյալ հեղինակներից այլաբանական եղանակը առավելագույնս կիրառել է Գրիգոր Նարեկացին։ Երգ-Երգոցին նվիրված նրա մեկնությունը այդ հենքով է հորինված և հանդիսանում է դրա ամենաբնորոշ նմուշներից մեկը հայ իրականության մեջ։ Այստեղ որոշիչ դեր է կատարել գուցե որչափ հեղինակի նախասիրությունը, նույնչափ էլ մեկնարանվող բնագիրը՝ մեզ ծանոթ պատճառով։ Սույն բնագրի հետ այդպես են վարվել Գրիգոր Նարեկացու նախորդ և հետնորդ բոլոր մեկնիչները (Որոգիներս, Գրիգոր Նյուսացի, Հիպոլիտոս Բոստրացի, Վարդան Արևելցի)։ Սակայն, կրկնում ենք, մեր եզրակացությունն այն է, որ հայ մեկնիչները հիմնականում միջին գիծ են բռնել՝ ավելի հակված դեպի անտիոքյան դպրոցը։ Այդպիսին է Իսև Վարդան Արևելցին։ Միայն իր Երգ-Երգոցի և Եզեկիեյի, մասամբ Գանիելի, մեկնություններին մեջ ավելի մեծ տեղ ու նշանակություն է տվել այլաբանականին։ Իր մյուս շղթա-մեկնությունների մեջ, հատկապես Հնգամատյանի ու Սաղմոսաց, թեկուզ և համեմատական բարեխառնություն է գույզ մեկնաբանական եղանակների, բայց բառացի եղանակը գերադասված է։ Ընդ նույն գիրքն ու գիծն են բռնել նաև նրա անմիջական ուսուցիչը՝ Հովհաննես Վանականը և վերջինիս ուսուցիչ Մխիթար Գոշը։ Ն. Ակինյանը գտնում է, որ Ներսես Լամբրոնացին «...կհետևի այլաբանական կամ խորհրդական գրության, առանց նկատի առնելու բառական կամ նյութական մեկնության սկզբունքը»⁶⁰, և, ի հաստատումն իր ասածի, վկայակոչում է նրա իսկ խոստովանությունները, որոնք այնքան էլ չեն նպաստում խնդրին։ Գ. Հակոբյանը, ինչպես կտեսնենք քիչ հետո, նման կարծիք է պաշտպանում։ Սակայն Լամբրոնացու մեկնությունների քննությունը ցույց է տալիս հակառակը, նա ավելի շուտ տառացի՝ «բառական կամ նյութական» եղանակն է կիրառել։ Համոզվելու համար առանձին օրինակներ մեջբերելը քիչ է, որովհետև կարող է և հակառակ

տպավորություն ստեղծվի. հարկ է ոչ միայն նրա, այլ առհասարակ բոլոր մեկնությունները դիտել ու զննել իրենց ամբողջության մեջ, որպեսզի հստակ ու ճիշտ եզրակացության հանգնել։ Ըստ այդմ, տվյալ դեպքում մենք զանց ենք առնում մեջբերել համապատասխան քաղվածք-օրինակներ, քանի որ միշտ էլ կարելի է դիմել խնդրո առարկա բոլոր մեկնություններին նման օրինակներ բազմիցս ընթերցելու համար։ Ինչպես է, այսու մենք չենք փորձում ժխտել այն ճշմարտությունը, որ նա մեկնաբանել է նաև «այլաբանորեն»։

Մեկնաբանական աշխատանքների առնչությամբ զուտ տեսական բնույթի գործեր, ամբողջական դիտողություններ, սահմանումներ կամ այլ ուղղակի վկայություններ գոհացուցիչ չափով երևան չեն գալիս հայ մատենագրության մեջ, թեև ստույգ է, որ հայ մեկնիչները քաջ ծանոթ են այդ բնագավառի հարցերին։ Նկատվում են միայն ամփոփ, միջանկյալ ակնարկներ և բնորոշումներ։ Ընդհանուր գաղափար կազմելու համար ծանոթանանք մի քանիսին։

Ներսես Շնորհալին տեսականորեն զանազանում է մեկնաբանական եղանակի «պարզ տեսությունն» ու «խորին տեսությունը»։ Ըստ որում «պարզը» բառացի-տառացի, իսկ «խորինը» փոխաբերական, այլաբանական ընկալումն է հստակ մատնանշում։ Սա Ներսես Շնորհալու համար սկզբունքային նշանակություն ունի և սոսկ իմացության ցուցանիշ չէ։ Նա ընդգծում է, որ այսինչ կամ այնինչ բնաբանը, բառակապակցությունը ինքը թեև քննել է ըստ «պարզ տեսության», սակայն հիշեցնում է, որ նկատել է նաև դրանց միտքը ըստ «խոր տեսության»։ «այս ըստ պարզ տեսութեան քննեցաւ, բայց ունի խոր ինչ տեսութիւն»⁶¹։

Ներսես Շնորհալին ուղղակի վկայում է, որ ինքը ծանոթ է նաև այդ «տեսություններին» տարբեր բաղադրիչներին ու տրոհվածությանը։ Այսպես. նախ կա բնագրի տառացի նշանակությունը, ինքը՝ իրը կամ երկվույթը, նրա երկրորդ՝ սիմվոլիկ-փոխաբերական իմաստը, և երրորդ՝ հոգևոր, սրբազան խորհուրդը, այն, ինչ որ վերջին հաշվով հետևում, եզրակացվում է այդ բոլորից։ Ահա մի օրինակ իր իսկ երկերից. «Երկդիմի մեկնությամբ լուծումն առնէ... զի տեսեալ մանուկ զքար հաց կարծէ, և զօձ՝ ձուկն իմանայ... բայց քար զարտաքոյ բնութեան իրս ասէ և օձ՝ զմարմնական ցանկութեանցն լըրմունս... իսկ զհոգևորն՝

⁵⁹ Տե՛ս մանրամասն՝ Անայան Լ., Մատենագիտություն, Ա, էջ LVII—LXIV։
⁶⁰ Ակինյան Ն., Ներսես Լամբրոնացի, էջ 135։

⁶¹ Ներսես Շնորհալի (և Հովհաննես Մործորեցի), Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէի, էջ 176։ Ինչպես հայտնի է, Ներսես Շնորհալին անվարտ է թողել իր սույն Մեկնությունը։ Այն շարունակել և ավարտին է հասցրել Հովհաննես Մործորեցին։

հաց և ձուկն, զոր յետ յարութեան ետ աշակերտացն, որ է արքայութիւն նորա...»⁶²: Ուրեմն, ըստ առաջին աստիճանի քար, օձ, ըստ երկրորդի՝ արտաքին բնութեան, մարմնական ցանկութեան խորհրդանշում, ըստ երրորդի՝ աստվածային պարգևի՝ արքայութեան, արդարութեան արժանացում: Հստակ է, որ նա ընդհանրապես լավատեղյակ է տեսական այս կարգի հարցերին, այդ իմացութեամբ էլ դրանք կիրառել է իր համապատասխան երկերում:

Ներսես Լամբրոնացին նույնպես քաջատեղյակ է մեկնաբանական հիշյալ երկու հիմնական եղանակների տեսական առանձնահատկություններին: Մենք արդեն նշել ենք, որ նա կիրառել է այդ երկուսն էլ և նախապատվութեամբ ավել է տառացի եղանակին: Իր մեկնությունները հյուսելիս նա հիմնականում Անտիոքի գլխորդի հետևորդների երկերն է իրրև աղբյուր օգտագործել: Միաժամանակ նկատելի է, որ բազմաթիվ գլուխների վերջում առանձին հատված է կցել, ուր այլաբանական, հոգևոր-բարոյական հիմքերով ամփոփել է նախապես մեկնաբանված նյութը «Այլաբանութիւն» ենթախորագրի տակ⁶³: նա տեսական ու գործնական բնութեամբ հաստատում է իր իմացությունը այս հարցում: Այդ է հաստատում նաև նրա մեկնաբանական ողջ ժառանգությունը:

Նշենք ևս մեկ հայ մեկնիչի՝ Կիրակոս Երզնկացուն, որն իր «Մեկնութիւն Նազարի» աշխատության մեջ, ինչպես ժամանակին նկատել է Մ. Չամչյանը⁶⁴, ունի արժեքավոր տեսական նկատողություններ մտքի, մտածողության, գիտության, ինչպես նաև մեկնության մասին: Ըստ այս հեղինակի, մեկնությունն ունի երկու երես՝ նյութական և աննյութական... «Որպէս զՔրիստոս վէմ ասէ զիրն, որ մեկնութիւն ունի՝ «վէմն նիւթ է, և մեկնութիւն՝ աննիւթ է»⁶⁵: Առաջինը նրա ատաղձն է, երկրորդը՝ հետևությունը, արդյունքը: Էականը երկրորդն է. «...հրամայէ քննել և իմանալ զժածուկ միտս բանիցս, զի խորին և թաքուն է»⁶⁶: Դրա համար էլ, եթե մեկնիչը չթափանցի այդ «խորին և թաքուն» գաղտնաբանները, բավարարվի սոսկ նյութական ատաղձի ցուցադրությամբ ու դրա վրա միայն իր ուշադրությունն ու հմտությունը կենտրոնացնի, ավելորդ ջանքեր կատարած կլինի՝ «...որ ի գրոցն ի նկարագիրն և ի

ճառն միայն հայի, ի դատարկ յիմաստութենէ խորհուրդս հայի»⁶⁷: Անշուշտ, սա կտրուկ եզրակացություն է, որին ինքը անվերապահ հավատարիմ չէ, քանի որ գործնականում ավելի լայն տեղ է հատկացրել տառացի եղանակին, բայց և ընդգծում է, թե ինքը միաժամանակ լավատեղյակ է զույգ եղանակների էությունը, սակայն կարևորություն չի տալիս երկուսին էլ: Հարկավոր է իմացապես և հոգեպես լավ պատրաստվել այս դժվարին ու պատասխանատու աշխատանքին. «...որպէս քերական կամ դարբինն թէ զարուեստին հանձարն չլինի ուսել, շկարէ առնել զգործն: Այսպէս և միտքն, որ բանին արուեստաւոր է, առանց հոգոյն (սրբոյ) շնորհաց ոչ կարէ ընտրել զգործ բանաւորութեան, զբանին մեկնութիւն...»⁶⁸, այդպես նաև գործին ոչ տեղյակ մարդիկ չեն կարող Ս. Գրոց մեկնություն կատարել: Թեկուզ միայն «աստուած-ուսուցանէ զմեկնութիւն պատուիրանաց իւրոց և արդարոցն»⁶⁹, այդուհանդերձ պետք է զինել նաև սեփական «հանձարը»:

Այս կարգի բնութագրական շատ գիտողություններ ու հաստատումներ անկասկած առկա են նաև մյուս հայ մեկնիչների երկերում, որոնց հարկ է մանրակրկիտ որոնել և ուսումնասիրել ըստ ամենայնի: Այնուհանդերձ, ծանոթանանք համեմատաբար շատ ավելի ուշ արտահայտված տեսական որոշ կարծիքների, որպեսզի սույն կարևոր խնդրի զարգացման ընթացքը ավելի պարզ լինի այսօրվա դրությամբ, քանի որ հետազայում էլ այս հարցերը զբաղեցրել են հայ մեկնիչներին ու դրանցով հետաքրքրվող մասնագետներին:

Նրանցից է վաստակաշատ Մ. Չամչյանը, որը տեսական-քննական կարևոր խոսք է ասել այս առնչությամբ: Նրա «Սաղմոսաց մեկնութեան» արժեքավոր ներածականում շատ ուշադրավ նկատառումներ կան: Թեև դրանց հիմքում ընկած են կաթոլիկ եկեղեցու զավանդության երկակնային դրույթները, սակայն, բնական է, հայ մատենագրության օրգանական մասն են կազմում:

Մ. Չամչյանը նույնպես ճանաչում և ընդունում է մեկնաբանական երկու հիմնական եղանակ: Առաջինը տառացին է, որը նա բնութագրում է իրրև «նկարագրական մեկնություն»: Այստեղ նախ և առաջ նկատի ունի մեկնաբանվող նյութի արտաքին, պարզ, անմիջական իմաստը, երբ այն բացահայտելու և արժեվորելու համար մեկնիչից մեծ ջանքեր չեն պահանջվում: Այդպես նաև սրա մյուս մերձակա տարբերակը՝ «մեկնություն ըստ ճառին», այսինքն՝ բնագրին միանգամայն համերաշխ և

62 նույն տեղում, էջ 174:
63 Ներսես Լամբրոնացի, Մեկնութիւն Սրբոց երկոտասան մարգարէից, էջ 58, 54, 111, 114...:
64 Չամչյան Մ., Մեկնութիւն Սաղմոսագ, Ա, էջ 10:
65 Մատենադարան, ձեռ. N 1980, Թ. 116ա:
66 նույն տեղում, Թ. 147ա:

67 նույն տեղում, էջ 52բ:
68 նույն տեղում, Թ. 53ա:
69 նույն տեղում, Թ. 112բ:

նրա ուղղակի իմաստի արտաբերման հիման վրա: Սա նման է «գրական-բնագրական» մեկնությունը, որի մասին քիչ վերը համառոտ ասել ենք: Երբորդը այլաբանական եղանակն է, որը «խորհրդական մեկնություն» է կոչում: Այն առաջինի պարզ հակադրությունը չէ, բայց և համադաս շարունակությունն էլ չէ, քանի որ կարող է կիրառվել լիովին ուրույնաբար: Տարբեր է հատկապես նրանով, որ այն ինչ հնարավոր չէ բացատրել «նկարագրական մեկնությամբ» կամ «բաց ճառին» լուծմունքով, պարզվում է «խորհրդական մեկնությամբ»: Բայց ըստ հեղինակի, նախընտրելի է, որ դրանք միասնաբար կիրառություն գտնեն, որպեսզի մեկնությունը ավելի ստույգ ու համակողմանի լինի: Ինքը այդպես էլ վարվել է իր այնքան ծավալուն «Սաղմոսաց մեկնութեան» մեջ:

Մ. Չամչյանը այս երկու հիմնական եղանակներից յուրաքանչյուրը արոհում է երեք ատարաբաժանումների «նկարագրական մեկնությունը»՝ ա) «բաց պարզ տեսութեան», բ) «բաց փոխակերպութեան», գ) «բաց դիտեալ իրին», որոնք նա հասկանում է այսպես. «...բաց պարզ տեսութեան, յորժամ միտ բանի բաց առաջին (իմա՝ ուղղակի— Փ. Ա.) նշանակութեան ի մէջ բերի...», «բաց փոխակերպութեան, յորժամ միտ բանի ի մէջ բերի ոչ ըստ առաջին նշանակութեան, այլ ըստ համեմատական կամ բաց նմանաբանական նշանակութեան...», իսկ «բաց դիտեալ իրին, յորժամ ի բանի՝ բառքն յայլ ինչ հային, և դիտումն խօսողին՝ յայլ ինչ...»: Վերջինում նա տեսնում է որոշակի ընդհանրություն «խորհրդական մեկնութեան» հետ, որովհետև նմանապես «հայի ի գաղտնի խորհուրդ»: «խորհրդական մեկնութիւն»՝ ա) «բաց այլաբանականին», բ) «բաց բարոյականին», գ) «բաց վերածականին»: Վերջում սրանց թվին է ավելացնում՝ «բաց յարմարականին», ըստ երևույթին նկատի ունենալով վերջինիս ոչ մշտական միասնությունը նախորդների հետ, քանի որ «հարմարեցումը» ամեն պարագայի անխուսափելի, անպայման չէ: Նա այս առնչությամբ պարզաբանում է. «Ի սոսա յառեւեալ լինի և յարմարականն (ընդգծումը մերն է— Փ. Ա.), որով մի ինչ Սուրբ Գրոց, որ յայս ինչ հայի, յարմարի և այլ ինչ», տվյալ զեպրում մատնանշելով բնագրի այսպես կոչված լրացուցիչ, օժանդակ միտքը: Թե ինքը ինչ ըմբռնում ունի այս բնութագրումներից յուրաքանչյուրի մասին, հետևյալ օրինակով է ներկայացնում. այսպես՝ «Ով ելցէ ի լեռան տեառն...» սաղմոսի «ի լեռան տեառն» խոսքերը «բաց նկարագրին (իմա՝ նկարագրականին— Փ. Ա.) նշանակէ զՍիոն լեռան, որ յերուսաղէմ, ըստ այլաբանականին՝ զեկեղեցի սուրբ, վերածականն հայի՝ յեկեղեցի յազմանակող, այսինքն՝ արքայութիւն երկնից և առհասարակ ի վիճակ հանդերձեալ կենաց, բարոյականն հայի՝ ի հանգամանս վարուց

կամ բարձրութիւն իմաստութեան... իսկ ըստ յարմարականին՝ զայլ ինչ լեռան, զոր օրինակ՝ զլեռան Սեպուհույ...»⁷⁰:

Մ. Չամչյանը հիշեցնում է. անշուշտ կան դեպքեր, երբ այս եղանակներից ոչ բոլորը կարելի է նույն բնաբանի նկատմամբ միասնաբար կիրառել: Լինում է և այնպես, որ այս կամ այն բնաբանը թույլ է տալիս կիրառել միայն մեկ եղանակ. «Այլ ծանիր, զի ոչ ամենայն բանք ըստ ամենայն մեկնութեանց դնին առաջի, իբր թէ ամենեքին ունիցին զմեկնութիւն ըստ ամենայն խորհրդոյ: Այլ ոմանք՝ ըստ այսմ և ոմանք՝ ըստ այնմ: Ոմանք միայն ըստ նկարագրին, և ոմանք ըստ նկարագրին և ըստ այլաբանականին: Ոմանք նոյնպէս ըստ նկարագրին և ըստ բարոյականին, և ոմանք զարձեալ ըստ նկարագրին և ըստ վերածականին, և այլք նմանապէս ըստ նկարագրին և ըստ յարմարականին միայն»⁷¹:

Այս բոլորի նկատմամբ անշափ հաշվենկատ ու խոհեմ լինելով հանդերձ, հեղինակը որոշակիորեն առավել գերադաս է համարում «նկարագրական մեկնությունը»: Չմոռանանք հիշել, որ Բարենորոգումից հետո ողջ Եվրոպայում այդպես էին դիրքորոշված, և կաթոլիկ մեկնիչները, այդ թվում նաև՝ Միքայել Չամչյանը, զրա ազդեցությունից գերծմնալ չէին կարող: Նա ինքն այդ բացատրում է մի քանի պատճառներով: Ըստ որում գտնում է, որ մարդկային միտքը և հոգին որչափ որ ճիշտ են ընկալում «նախատիպը», այսինքն բնագրային ուղիղ իմաստը, այնքան հստակ ու հաստատուն են տեսնում թաքուն խորհուրդները, որովհետև «նախատիպի» մեջ է այն, ինչի վրա «խորհրդական մեկնությունը» հիմնվում է, ինչը քողագերծում և դուրս է բերում հրապարակ. «Բայց զայս մի ինչ ևս պարտ է դնել ի մտի՝ թէ այնչափ պայծառ և հաստատահիմն նշմարէ հոգին զայդոսիկ, որչափ ճշմարիտ ըմբռնէ զնախատիպն, այսինքն՝ զնկարագրականն, զի ի սմա նկատի այն, որ ի խորհրդականն մտածի»⁷²: Այլուր նույն միտքը ընդգծում է այսպես. «Իսկ պարզ խորհրդական մեկնութիւն ի ներքոյ նկարագրականին ծածկեալ կայ...»⁷³: Այս հիմքի վրա էլ խոստովանում է, որ «Յայս գործ (իմա՝ Սաղմոսաց մեկնութեան մեջ— Փ. Ա.) առաջին փոյթ մեր եղև ի մէջ բերել զնկարագրական մեկնութիւն իւրաքանչիւր բանից, որ ասի՝ «մեկնութիւն ըստ ճառին», և փոյթ կալաք զայնց միայն ի մէջ բերել խորհրդական մեկնութիւնս, որք իրօք պատշաճին...», որպեսզի շնմանվի նրանց «որք ջանացան զամենայն ըստ ամենայն մտաց մեկնել և

70 Տե՛ս մանրամասն՝ Մ. Չամչյան, նշվ. աշխ., Ա, էջ 11—12:

71 Նույն տեղում, էջ 12:

72 Նույն տեղում, էջ 12:

73 Նույն տեղում, էջ 13:

կամ՝ յամենայնի զխորհրդական ինչ մեկնութիւն գտանել, զարտուղեցան ի ճշմարտութենէ...»⁷⁴: Ուրեմն, առանց «խորհրդական» մեկնութեան «նկարագրականը» ի զորու է գործելու, բայց հակառակը՝ ոչ: Այսպիսով խորհրդական-այլարանականը նկարագրական-տառացիի համեմատութեամբ, ըստ Չամչյանի, երկրորդական կարեորութիւն ունի: Սա արդեն ուղղակի արդուներ է մեկնաբանական տեսական մտածողութեան մեջ մեթոդաբանական կողմնորոշման այն վերափոխութեան, որ բերել էր «Բարենորոգումը» նվիրույթով և կաթողիկ եկեղեցու գաղափարական ոլորտներում:

Տեսական այս կարգի արծարծումներ կան նաև ներսես կամբրոնացու 1825 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակված «Մեկնութիւն երկոտասան մարգարէից» աշխատութեան ներածականում, որի հեղինակն է Անդրեաս Նարինյանը: Վերջինս օգտագործում է Միքայել Չամչյանի տերմինաբանութիւնը և նրա հետևութեամբ շարադրում իր տեսակետը: Նախ մեկնութեան մասին առհասարակ գրում է. «Եւ արդ՝ կրկին է թարգմանութիւն, մի՛ գարծուցանել զբանն ի լեզուէ յայլ լեզու ըստ յաջողելոյ հոգւոյն, և միւսն՝ բացատրել զմիտս բանին ըստ վարդապետելոյ նմին հոգւոյ, որ հասարակորէն կոչի մեկնութիւնս... Բայց մասնատրապէս առեալ՝ նշանակէ բացատրել զմիտս նմանութեանց. զոր օրինակ այս երգ եկեղեցւոյն՝ Մառ կենաց տնկեալ յազին (մեկնի) սուրբ կոչս, կամ թէ՛ նորոգեալ կղզիք առ Աստուած՝ եկեղեցիք հեթանոսաց... նաև՝ առակաց իսկ, որպէս Տէրն մեր խօսէր ի ժողովս հրէից և յետոյ առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն»⁷⁵:

Այստեղ ևս ուշագրութեան արժանի է այն, որ «Թարգմանութիւնը» որոշ առումով նույնացվում է «մեկնութեան» հետ, ինչպես արվում էր միջնադարում: Այնուհետև նա դատում է մեկնութեան երկու հիմնական եղանակներն մասին. «Այլ թէ քանի՞ պատիկ իցէ մեկնութիւն. զի բացի ի նկարագրական թարգմանութենէ տեսանեմք ի մատենաս Հին և Նոր կտակարանաց այնպիսի մեկնութիւն, որ ի բացատրելն զմիտս բանին՝ ուսուցանէ մարդկան ուղղութիւն վարուց՝ առ ի գհաւատս կենդանացուցանել. և այն կոչի՝ մեկնութիւն բարոյական (ընդգծումը մերն է՝ Փ. Ա.)»⁷⁶: Առընթեր բերված օրինակներով նա հավաստում է իր կարծիքը: «Խորհրդական մեկնութեան» վերաբերյալ հետևյալ պարզ բացատրութիւնն է տալիս. «...է այլ ևս այնպիսի մեկնութիւն, որ ի բացատրելն զմիտս բանին՝ ցուցանէ զներքին խորհուրդ նորին, առ ի զհա-

ւատս զորացուցանել. և սա կոչի՝ մեկնութիւն խորհրդական (ընդգծումը մերն է՝ Փ. Ա.)»⁷⁷:

Ընդհանուր առմամբ այսպիսին է հայ մեկնաբանական գրականութեան մեջ տեսական այս բնագավառի հարցերի արծարծման համառոտ ուղղապատկերը: Այսօր դրանց ավելի հանգամանալից քննութիւնը, ինչպես և ողջ հայ մեկնաբանական գրական ժառանգութեան իբրև հայ մատենագրութեան արժեքավոր և հարուստ բաղադրամասերից մեկի բազմակողմանի ուսումնասիրումն ու արժեքավորումը, անկասկած, օգտակար ու անհրաժեշտ է: Սույն ընդհանուր ակնարկը մի նախադրյալ քայլ է այդ գործին օգտակար լինելու նպատակով:

77 Նույն տեղում, էջ 2:

74 Նույն տեղում, էջ 10—12:

75 Ներսես կամբրոնացի, նշվ. աշխ., էջ 2:

76 Նույն տեղում, էջ 2:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻՆ ԳՐՈՂ-ԳԵՂԱԳԵՏ

Ա. Օգտագործված գեղարվեստական ժանրերի տեսական համառոտ պնդարկ

Վարդան Արևելցին ուշագրավ դեմք է նաև միջնադարյան գեղարվեստական գրականության ասպարեզում: Այս բնագավառի ստեղծագործությունները նրա մատենագրական վաստակի մեջ նշանակալից արժեք են ներկայացնում և որոշակի հաստատում, որ նա միջին դարերի արձակագիրների շարքում ունի իր ուրույն տեղը:

Չենք ուզում ասել, որ նրա այս բնույթի երկերը տվյալ ժամանակների լավագույններից են, սակայն իրենց հասարակական, ազգային և քաղաքացիական լիցքով, գեղարվեստական հնարանքների, ոճաարտահայտչական միջոցների բազմազանությամբ, լեզվի մաքրությամբ ու ճոխությամբ, անկասկած, արժանի են պատշաճ ուշագրության ու գնահատանքի:

Նման երկերի թվում են նրա ներբողները, ճառերը, զրույցները, շարականները և, մասամբ, «Ժղլանք»-ը: Այս բոլորին անդրադարձել ենք տարբեր առումներով, երբ խոսք է եղել Վարդան Արևելցու մասին իրրև հասարակական, քաղաքական, մանկավարժական գործչի, պատմագրի, գիտնական-իմաստասերի և առաջատար գաղափարախոսի, իսկ այժմ կտանք դրանց գաղափարական, գեղարվեստական վերլուծությունը ու գնահատությունը և կջանանք Վարդան Արևելցուն ներկայացնել իրրև գրողի:

Վարդան Արևելցու մատենագրական վաստակի ժանրային բազմազանությունը պնդում է իրողություն է. չէր կարող վրիպել մեր տեսադաշտից ու չպահանջել առանձին վերաբերմունք, երբ, մանավանդ, խոսքը միջին դարերի ժանրերի մասին է: Անտեսելի չէ և այն կարևոր հանգամանքը, որ դրանք հայ իրականության մեջ քիչ են ուսումնասիրված. XVIII—XIX դարերի հայ դասական բանասիրության և հետագա

մի քանի հեղինակների ջանքերը, որոնք միայն ընդհանուր բնույթ են կրում, չեն կարող զոհացուցիչ համարվել, թեկուզ և բավականաչափ օգտակար են¹: Մեր օրերում այդ բացը լրացնելու լուրջ փորձեր արվում են²: Դրանց նպաստը արդեն շոշափելի է, բայց և այնպես այդ ուղղությամբ նոր ու շարունակական աշխատանք տանելու պահանջը մնում է իր հրամայական ուժի մեջ:

Հարկավոր է նշել նաև, որ առ այսօր արված բոլոր փորձերն էլ չեն առնչվում Վարդան Արևելցուն, որն ընդհանուր հայ ներբողագրության մեջ առավել ծանրակշիռ դեր ու տեղ ունի և հայ ճառագրության ու շարականագրության անդաստանում՝ ոչ նվազ, քան շատ ակնառու այլ ներկայացուցիչներ: Առանց գրական-տեսական և գեղարվեստական-գեղագիտական առանձնակի բնությունն չի կարելի ըստ արժանվույն ու ըստ էության ընկալել և գնահատել նրա հատկապես գեղարվեստական բնույթի երկերը, ճշտել դրանց տարողությունն ու արժեքը:

Նախ ներբողների մասին:

Ներբողը սկիզբ է առել վաղագույն ժամանակներում, քաղաքակրթական քիչ թե շատ նշմարելի մակարդակի հասած, հասարակական-պետական կյանք ստեղծած բոլոր երկրներում, ինչպես շումերական, էգիպտական, ասորեստանյան, հուեա-հռոմեական միջավայրում: Մեզ, բնական է, ավելի առնչվում է հատկապես անտիկ հունական աշխարհի և նրա օրգանական շարունակությունը հանդիսացող բյուզանդական գրական ժանրերը:

Հին Հունաստանում պետական, կրոնական ինչ-ինչ տոնակատություններ, ռազմական կամ մարզական մեծ իրադարձություններ, ա-

1 Տե՛ս Էրզումցի Խ., Ճարտասանութիւն: Ազոնց Մ., Ճարտասանութիւն: Սերյան Ե., Արհեստ ճարտասանութեան: Գաբազյան Մ., Արուեստ ճարտասանութեան:

2 Այս առնչությամբ ընդգծվում է հատկապես հետևյալ ուսումնասիրությունների շահեկանությունը՝ Էլեր հայ միջնադարյան արձակագրի Հայ միջնադարյան գրականության ժանրեր: Ջրբաշյան Է., Գրականության տեսություն: Մրապյան Ա., Հայ միջնադարյան զրույցներ: Խաչատրյան Պ., Հայ միջնադարյան պատմական ողբեր: Ավդալբեկյան Մ., Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դ.): Քենդեյան Հ., Հովհան Մայրազոմեցի: Նեբսիսյան Վ., Հայ միջնադարյան տաղերգության գեղարվեստական միջոցները: Հախբյան Գ., Շարականի ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V—XV դդ.): Քառեզյան Հ., Հայ բնագրատություն, Ա, Բ: Սիմոնյան Հ., Հայ միջնադարյան կաֆաներ (V—XVI դդ.): Ղազիբյան Ա., Ներբող հայ միջնադարյան գրականության մեջ: Նույնի՝ «Մատեն ողբերգութեան» ժանրային բնույթը: Տե՛ր-Դավթյան Ք., XI—XV դարերի հայ վարքագրությունը: Մաղոյան Ա., Հայկական միջնադարյան պոեմը (XI—XVI դդ.): Քալանթարյան Ժ., Հայ գրականագիտության պատմություն (V—XIX դդ.): Надбаня В. Уроки прошлого. Нерсесян В., Литературные и эстетические взгляды армянских авторов Vb.

ոանձին անհատների հերոսական արարքներ մեծարելու համար պայտաներում, տաճարներում, հրապարակներում և փողոցներում «հավուր պատշաճի» ներբողյան-ճառեր էին արտասանվում: Պաշտոնական ելույթներ լինում էին նաև ոչ ուրախ առիթներով՝ հասարակական-պետական աղետների, ուղմական պարտությունների, ակնառու անձանց կորստի ժամանակ, երբեմն էլ՝ վերջիններիս ոչ անբասիր ու արժանավայել վարքը պախարակելու նպատակով: Հասկանալի է, թե ինչու վերջին առիթներով արտասանվածները և՛ բովանդակությամբ, և՛ տրամադրությամբ տարբերվում էին նախորդներից: Նույնը չէին կարող լինել նաև դրանց ձևակառուցվածքային, գեղարվեստական և լեզվաոճական հատկանիշները: Որոշ կայուն տարրեր և ընդհանրություններ պահպանելով հանդերձ, անհրաժեշտորեն իրենց բովանդակային ընդդրվումներին ու միտմանը համապատասխան կերպ ու հանդերձանք պիտի ընդունեին: Բայց և այնպես ժանրորոշ հիմնական հատկանիշները շատ չէին ալլափոխվում: Ահա թե ինչու հին և միջնադարյան տեսությամբ ներբողների ժանրային պատկանելության համատեղումը, ոչ նույնացումը ճիշտ ու արդարացի է: Այդպես է նաև հայ իրականության մեջ: Այս մասին ավելի մանրամասն՝ քիչ հետո. հիշեցնենք միայն, որ ավյալ դեպքում էլ խոսքը պատմական շափածո ներբողներին կամ ողբերին չի վերաբերում:

Բյուզանդիան, ինչպես հայտնի է, ընդհանրապես հունա-հռոմեական աշխարհի անմիջական ժառանգորդն է, հարստացած՝ հելլենիզմի՝ Միջագետքի, Մերձավոր Արևելքի, Եգիպտոսի պետական-հասարակական, գիտամշակութային և գեղարվեստա-փիլիսոփայական նվաճումների ստեղծագործական յուրացմամբ: Բյուզանդական ընդհանուր քաղաքակրթության զարգացման համար նման ժառանգականությունը կարևոր տեղ է բռնում: Այդ նշանակալից է նաև նրանով, որ Բյուզանդիան իր հերթին այն փոխանցեց այլ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի քաղաքակրթությանը, մասնավորապես՝ մատենագրությանը: Ծիշտ է, հայ ժողովուրդը առիթ ու հնարավորություն է ունեցել անմիջաբար շատ բան ժառանգելու նաև ավելի վաղ ժամանակներից, սակայն ոչ նույն չափով ու տարողությամբ:

Բյուզանդիայում, սկսած վաղ շրջանից, օգտվում էին նաև հին Հռոմի և Հունաստանի ներբողագրության հարուստ փորձից: Այնքանով որ պատմական, սոցիալ-քաղաքական, կրոնական կեղեցական և մշակութային նոր պայմաններին համապատասխան ստեղծվել էին նոր միջավայր, նոր հասարակություն, նոր աշխարհ: Հին հունական ներբողագրական ավանդների ստեղծագործական համաձուլումը նորի հետ տվել է բովանդակային և ձևակառուցվածքային նոր որակ, բոլորովին էլ

չօտարանալով նախորդից: Նորը, փոխադրվելով առավելապես կրոնական և եկեղեցական գաղափարներով ու զգացողությամբ ներծծված ձայնաշարի վրա, լայն կիրառություն է գտնում, շարունակ մշակվում ու վերածակվորվում է նույնիսկ իր համար ստեղծված թեմատիկ ու ձևակառուցվածքային կայուն հիմքերի և կանոնների առկայության պայմաններում: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Դա թելադրված էր նախ և առաջ բյուզանդական իրականությունը, պետական, քաղաքական վարքագիծը, բարձրագույն խավերի աշխարհիկ ու հոգևոր ներկայացուցիչներին փառաբանելու և պրոպագանդելու, ժողովրդի մեջ վերնախավին բաղձալի տրամադրություն ու կարծիք ստեղծելու միտումով: Հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ ներբողն աստիճանաբար ավելի շուտ էր հագեցնում քրիստոնեությունը՝ նյութ ունենալով տերունական տոներն ու սրբությունները (Քրիստոսի Մունդը, Մկրտությունը, Խաչ-լույթությունը, Հարությունը, Համբարձումը, խաչը, գերեզմանը...), Աստվածամորը, եկեղեցու կողմից սրբացվածներին և առավել հարգված սրբավայրերն ու տաճարները...: Քրիստոնյա եկեղեցու հավատքի, վարդապետության, դավանանքի պաշտպանության ու ջատագույնության պահանջը միշտ էլ տիրական է եղել: Այն գոհացնելու համար եկեղեցական հայրերը գիտակցաբար հաճախ դիմել են ներբողներին և ներբողագրական օժանդակ միջոցների: Վերջիններս օգտագործվել են առավելապես ջատագույնությունների և հակահատուկությունների մեջ, որոնք մտնում են ներբողագրական ոլորտ, թեպետև չեն վերաճում ներբողների: Բոլոր դեպքերում փնտրվել է ավելի հուժկու, ներգործուն և նպատակամետ խոսք: Այս առումով առաջնային տեղ է զբաղում հռետորությունը, որին ոչ իզուր հին և միջին դարերում այնքան շեշտված կարևորություն է տրվել: Այս ձևով է, որ ներբողագրական հարուստ ժառանգություն է ստեղծվել և այդ առնչությամբ գրական-գեղարվեստական վիթխարի փորձ է կուտակվել Բյուզանդիայում և ընդհանուր քրիստոնյա աշխարհում:

Այս շրջագրածից Հայաստանը ևս դուրս չի մնացել: Այստեղ ներբողի ժանրը, ներբողագրական տարրերով հագեցած այլ աղբյուրներից ժանրեր, տարածում են գտել հայերեն խոսքի հայատառ գրառումից (V դ.) դեռևս շատ առաջ և անմիջապես հետո: Թե ինչքան առաջ, դրժվար է ճշտել: Մակայն պետական կյանք, կրոն և կաղմակերպված հասարակական-քաղաքական խավեր ունեցող երկրում, ինչպիսին Հայաստանն էր, եթե ոչ Ուրարտական ժամանակներից, գոնե Երվանդունիների իշխանության (VI դ., մ. թ. ա.), ապա՝ Արտաշեսյանների կողմից հայ միացյալ հզոր պետության ստեղծման դարաշրջանից (II դ., մ. թ. ա.) և, մասնավանդ, Արշակունիների տիրակալության ժամանակ (I—

V դդ.), ներբողի կենցաղավարումը անխուսափելի էր. շե՞ որ հարկ էր լինում շատ երևույթներ, դեպքեր, անձեր պանծացնել, հերոսականացնել, արքաներ թագադրել... Այս պայմաններում ներբողը ծնվում է ինքնին: Այդպես՝ նաև Հայաստանում: Իսկ գրերի գյուտից անմիջապես հետո ստեղծվածների մասին վկայում են իրենք՝ գրավոր մեղ հասած (հավանաբար՝ ոչ բոլորը) ներբողները՝ և ներբողագրական շերտերով հագեցած ճառագրությունը, մանավանդ պատմագրությունը: Այս վկայությունը երաշխավորված է նաև Աթանաս Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Եփրեմ Ասորու, Գրիգոր Աստվածաբան-նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Եպիփան Կիպրացու, Հովհան Ոսկեբերանի, Պրեկղի, Անթիպատրոս Բոստրացու, Հակոբ Արճեցու և այլոց թարգմանաբար մեղ հասած ներբողներով: Բայց ոչ միայն ներբողները, այլ նաև դրանց մասին ուղղակի կամ անուղղակի գրականագիտական-գեղագիտական տեսական բացատրություններ, բնութագրումներ և սահմանումներ պարունակող «Գիրք պիտոյից»-ը, Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց», Աթանաս Ալեքսանդրացու «Յաղագս խորհրդորդ», Գիոնիսիոս Թրակացու «Քերականութիւն», որոշ առումով՝ Փիլոնի և Գիոնիսիոս Արիոպագացու երկերը:

Միջնադարյան Հայաստանում գրականության տեսության հարցերին անչլվող սեփական, ինքնուրույն երկեր էլ են եղել: Հինգերորդ և հետագա դարերի հայ հեղինակները իրենց տարարնույթ աշխատությունների մեջ ցույց են տվել լայն իմացություն և խիստ ուշագրավ տեսություններ են պաշտպանել, որոնք այսօր, բարեբախտաբար, թեկուզ ուշացումով, լայն և խոր ուսումնասիրության են արժանանում:

Նկատառելի են միաժամանակ քերականական և քերականագիտական այն բազմաթիվ աշխատությունները, որոնք հայ մատենագրության մի շատ կարևոր բնագավառն են կազմում և օգտակար խոսք ասում այս առնչությամբ: Քերականությունը հին և միջին դարերում միայն մասնագիտական միատարր թեմատիկա չի մշակել, այլ զբաղվել է նաև

3 Տե՛ս Զարեհնայան Գ., Թարգմանութիւնք նախնեաց, համապատասխանաբար՝ էջ 281—282, 305, 325—332, 346—358, 372—374, 405—416, 455—460, 572—575, 586—600, 602—604: Այս էջերում ներբողներն ու ճառերը մասնագիտորեն չեն տարբերված, նշված են ըստ ձևագրական խորագրերի, ուստի պետք է նկատի ունենալ, որ նշված «ճառերի» մի մասը ներբող է:

4 Տե՛ս մանրամասն՝ Զարեհնայան Գ., Թարգմանութիւնք նախնեաց, Տեղ-Պետրոսյան Լ., Թարգմանական գրականություն:

5 Տե՛ս մանրամասն՝ Պամբազյան Հ., Հայ քննադատություն, Ա, Բ: Персесях В., Литературные и эстетические..., с. 18—38.

հոետորության, գրականության, պոետիկայի, տաղաչափության, առօգանության, երաժշտության տեսական հարցերով:

Այս կարգի երկերից են նաև այսպես կոչված «Պատճառները», «Պատճառաց գրքերը», որոնք բավականաչափ զտված գրականագիտական բնույթի ստեղծագործություններ են և թեև առավելապես վերաբերում են գրականության պատմությանն ու մատենագիտությանը, բայց տեսական հարցեր էլ են շոշափում, որոնք հարկ է նկատի ունենալ:

Քանի որ ստորև կատարելու ենք Վարդան Արևելցու ներբողների և գեղարվեստական բնույթի մյուս երկերի նաև գրականագիտական-գեղարվեստական քիչ թե շատ հանգամանակից քննությունը, այդ առնչությամբ հարկ ենք համարում նրա կիրառած ժանրերի մասին մի քանի ընդհանրացումներ անել:

1. Ներբողը հին և միջին դարերում բովանդակային և ձևակառուցվածքային համեմատաբար ավելի կայուն տեսք ստացած ժանրերից է, արդեն զատորոշվել էր հարակից ժանրերից. տարրորոշվել էին նաև նրա ենթատեսակները, որոնք հիմնականում երեքն են.

- ա) գովարանական (կացրդական՝ πανηγυρικός),
- բ) դամբանական (գերեզմանական՝ επιτάφιος),
- գ) մխիթարական (գոհաբանական՝ παραμυθητικός):

Մեծանդրուսը, որն իր հերթին ամփոփել է այս մասին հին հունական տեսակետը, ճանաչում է ևս մի հիմնական ենթատեսակ՝ Մոնոդիան (Μο νόα)⁶:

2. Բոլոր ներբողներում էլ առկա են նրա ենթատեսակներից յուրաքանչյուրին բնորոշ տարրերը՝ գովք, ողբ, մխիթարական կամ գոհաբանական խոսք... Սակայն, այս կամ այն ներբողում գերակշռում է դրանցից որևէ մեկը, նայած թե ինչ առիթով և ինչ նպատակով է տրվյալ ներբողը հորինված: Ըստ այսմ էլ ճշտվում է դրա պատկանելությունը համապատասխան ենթատեսակին:

3. Գովարանական բնույթի ներբողներում գերիշխում է գովեստը այն բոլոր կետերի շուրջ, որոնք հաճախ կանոնիկ ճշգրտությամբ ներկայացնում են ներբողվող անձի հայրենի ծննդավայրը, տոհմը, ծնող-կայացնում են ներբողվող անձի հայրենի ծննդավայրը, արարքները, ծառայությունները, կրթությունն ու դաստիարակությունը, արարքները, ծառայությունները, երբեմն էլ՝ մահը: Ներբողելի երևույթներն ու սրբությունները թվարկված կարգին շեփն կարող ենթարկվել, այդ պատճառով էլ դրանց նվիրված ներբողներն այնքան էլ կանոնիկ կառուցվածք չունեն: Ընդհանուր առմամբ փորձ եղել է նախապես տալ դրանց պատմությունը, «պատճառը», խորհրդարանական, այլարանական նշանակությունը,

6 Αισσανδρατος Ю., Следы патристических типов похвал в житии Стефана Пермского, с. 65.

բացատրել եկեղեցու և հավատացյալների կյանքում ունեցած ներգործուն դերը, և պաշտամունքի արժանանալու հնարավորություններն ու անհրաժեշտությունը:

Այս հիմնական խմբի ներբողները անցյալում բնորոշվել են իբրև «կացրդական», երևելով «կացուրդ» բառի նրապարակ, տոն, հանդես իմաստից, որովհետև արտասանվել կամ ընթերցվել են տոնական առիթներով և միտել են գերազանցապես ուրախության ու փառաբանության:

4. Դամբանական կամ գերեզմանական են հորջորջվել այն ներբողները, որոնք հորինվել են սովորաբար որևէ արժանավոր աշխարհիկ և հոգևոր անձնավորության մահվան, նշխարները գտնելու, նրան ի պատիվ արձան կամ շիրմաբար կանգնեցնելու, մահվան տարեդարձի, ինչպես և նրան նվիրված տոնի առիթով: Չպետք է կարծել, որ դրանց մեջ գրվատանքի, գովաբանության բաժինը զանց է առնված. այն կա անպայման և երբեմն բավականին մեծ չափով, սակայն նպատակային շեշտը դրա վրա չի դրված: Դա տվյալ անձի կորուստը ավելի ընդգծելու, ցավն ու ողբը պատճառաբանելու և հիշատակը առավելագույնս արժեքավորելու համար է: Հիմնական մասը, պարզ է, վերաբերել է մահվան բուն փաստին, այդ առիթով ծնված հասարակական վշտին, հանգուցյալի կատարած գործերին և թողած ավանդներին: Այս ենթատեսակի ներբողները բնորոշվում են առմամբ կրել են թախծալից, ողբական բնույթ, բայց առանց մղձավանջի և մոայլություն: Մահը չի դիտվել իբրև բոլոր առաքինությունների շարագուշակ վախճան, այլ իբրև անհրաժեշտ ֆիզիոլոգիական ավարտ, որը ունի նաև նվիրականացնող ուժ այն ամենի հանդեպ, ինչը զարդարել, գեղեցկացրել է վախճանյալին: Ունկնդրի կամ ընթերցողի մեջ ցավատանջ վշտահարությունից ավելի տիրական է դառնում ափսոսանքի զգացումը՝ պաշտամունքի արժանի, բայց ընդհատված աստենավոր կյանքի համար:

5. Մխիթարական կամ գոհաբանական ենթատեսակի ներբողների բնութագրական հատկանիշներն այնքան ցայտուն չեն և այն մյուս բոլոր հատկանիշները, որոնք վերաբերում են նախորդ երկու ենթատեսակներին, գրանցում առկա են գրեթե հավասար համամասնությամբ, թեև ոչ առանց կարգավորության: Առավել բարդ է դրանց զատորոշումը: Ավելի շատ հակվում են դեպի երկրորդ՝ դամբանական ենթատեսակը և բովանդակությամբ առնչվում են հիմնականում հասարակական-եկեղեցական կարևոր այն երևույթներին ու սրբություններին, որոնց գովաբանելիս անգամ, հարկ է լինում ներկա և ապագա սերունդներին անմխիթար, դժգոհ լիծողնել, բարոյապես վարձահատույց լինելու հույսից չզրկել, հակառակը, խրախուսել և գոտեպնդել:

Կողմնորոշման համար առաջնորդվում են նաև հիշյալ հատկանիշների մշակման շարակարգությամբ և համաչափությամբ՝ ողբ կամ վշտատակցություն, գովք, դարձյալ ողբ և ապա՝ գոհություն ստեղծված վիճակի համար:

Ինչ վերաբերում է լրացուցիչ շորրորդ ենթատեսակին (մոնոդիա), պետք է ասել, որ այն նման է երրորդին՝ մխիթարականին, բացառությամբ վերջին գոհաբանական մասի: Կա ողբը, ապա՝ գովքը, և կրկին ողբը⁷:

Այս ենթատեսակներից յուրաքանչյուրը իր տրոհումների մեջ ունի բովանդակային և կառուցվածքային բազմաթիվ այլ առանձնահատկություններ, նաև գեղարվեստական կերպարի տիպականացման (անշուշտ, այս բառի լայն և ավելի միջնադարյան ընկալմամբ), երբեմն պատմողական և բանահյուսական բարեմասնությունների ներհյուսման բավականին բնորոշ կերպեր, գեղարվեստական և լեզվաոճական դրսևորումներ:

Հայ ներբողագրությունը ևս, որ ընկալված ավանդույթի և սահմանված որոշ կանոնականության հետևությամբ է հրապարակ եկել, նշված հիմնական ենթատեսակներից բացի, ունի ավելի մանր տրոհումներ և բոլորովին էլ միատարր չէ: Ո՛չ բովանդակության, ո՛չ կառուցվածքի, ո՛չ էլ գեղարվեստական ու ոճաարտահայտչական միջոցների կիրառման տեսակետից միաբնույթ չէ: Այստեղից էլ հատկանիշների այն բազմազանությունը, որոնք բնութագրական են հայ ներբողագրության համար ընդհանրապես*:

Ներբողները թերևս ավելի, քան այլ հարակից ժանրերը, լինելով հրապարակախոսական և գեղարվեստաճոտորական գրական տեսակ^{**},

7 Հմմտ. Алицсандратос Ю. А., նշվ. հոդվածը, էջ 66: Ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 66—74:

* Այս մասին տե՛ս հատկապես՝ Ղազինյան Ա., ներբողը հայ հին գրականության մեջ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր», էջ 127—176:

** Տվյալ ժամանակների տեսանկյունից գեղարվեստական հանդերձանքը առավելապես կրելու էր հանտորական երանգ: Հանտորականությունը գեղարվեստականության թերևս ամենահիմնական ցուցանիշն էր, գեղարվեստական խոսքի ինքնահաստատման ի դրսևորման առանցքային միջոցը: «Գեղարվեստական արձակը ամենից առաջ հանտորական արձակն էր» (Аверинцев С., Древнегреческая поэтика, с. 196): Այս տեսությունը պատճառ էր դարձել, որ բուն վեճեր ու տեսական հակադիր բախումներ լինեն մաքուր փիլիսոփայության և հանտորական արվեստի համակիրների միջև. ուսանք լինեն մաքուր փիլիսոփայության և հանտորական արվեստի համակիրների միջև. ուսանք լինեն գերադասում էին երկուսի միասնական, բայց ոչ խառնակ կամ զոհճիկ զուգակցումը, որիչները՝ պահանջում դրանց կտրուկ տարանջատումը մեկը մյուսից: Այդպես նաև՝ պատմագրության և հանտորականության միջև: Ըստ այս կարևոր պատճառով վերջնապատմագրության և հանտորականության միջև: Ըստ այս կարևոր պատճառով վերջնապատմագրության տեսակետ շնչակվեց, ուր գործնականում ժանրերը, որքան էլ կան կամ հասարակաց տեսակետ շնչակվեց, ուր գործնականում ժանրերը, որքան էլ

շատ զգալուն են եղել միջավայրի ու ժամանակի քաղաքական, սոցիալական, հասարակական, եկեղեցական, մշակութային և հոգևոր-բարոյական իրադրությունների նկատմամբ: Այս հանգամանքը նրանց օժտել է նաև պատմաճանաչողական, գիտական արժանիքներով ու շահեկանություններով: Այն նպաստել է դրանց շարունակ հարստացմանն ու նորագմանը աշխարհայացքային առանձին թարմ դրսևորումներով և գեղարվեստական հարափոփոխ ըմբռնումների, հասարակական պահանջի ու ճաշակի համեմատ նաև գեղագիտական նոր միջոցներով:

Առանձին անհատի կամ մի ընտրանի խմբի դրվատանքին նվիրված ներբողները որոշակի առնչակցություն են պահպանում վարքերի ու վկայաբանությունների հետ: Գրանով էլ կրում վարքաբանական և վկայաբանական նկատելի դրոշմ, բայց միայն այդքանը*: Այս բոլորի հորինման շարժառիթը, թելադրվածությունն ու միտումը կարող էին և հաճախ ընդհանրանալ, նույնիսկ ինչ-որ շափով նույնանալ, բայց կառուցվածքով, ավանդական տարրերի ընդգրկումներով, մատուցման եղանակով ու ռեալիտետահայտնական միջոցներով միշտ էլ մնացել են տարբեր: Ասենք, օրինակ, եթե վարքի ու վկայաբանության հորինման համար խթան են հանդիսացել շատ գործոնների թվում մանավանդ հավատքի ծավալման, եկեղեցու վարկի ու դիրքի ամրացման, հոգևոր դասի հեղինակության բարձրացման պահանջը, ընտրված անհատին իբրև բացառիկ, լիաշնորհ, անձնագուհ, օրինակելի, վերջապես սուրբ ներկայացնելու տիրական միտումը, ներբողների դեպքում ևս իրողությունը նույնն է: Եթե վարքի մեջ համեմատաբար ավելի շատ է կենսագրական տարրը, գրեթե մշտական են սյուժետային, վիպական, հրապուրիչ և հուզական պատումները, կա ավելի տեսանելի ու հանգամանալից տեղագրություն, առավել ծավալուն տեղ է հատկացված հրաշագործություններին, իսկ վկայաբանությունների մեջ, սրանց կողքին, շեշտակի ընդգծվում է նահատակ-մարտիրոսի կայուն, սկզբունքային հավատքը,

ատորձանարար անջամկեցին, մանավանդ՝ ներբողը, բայց խաչաձևումներից դուրկ ընկալով, հաճախ մեացին մեկը մյուսի կալվածից ներս: Այդպես նաև Հայաստանում, մանավանդ վաղ միջնադարում, ժանրերը հստակ չեն դատորոշված. առավելապես հոստորական-ստեղծագործական հենքի վրա բարձրացած գրականությունը կազմեց հայ գրական արձակը:

* Այս անշուքամբ հիշատակելի է «Եկենագրական» ժանրը, որը կենցաղավարելի և առավելապես հունա-հռոմեական մատենագրության, ի մասնավոր՝ հոնտորության մեջ, ունենալով բավականին մեծ տեղ ու նշանակություն: Մենք այդ մասին չենք խոսում, բանի որ այն, իբրև այգպիսին, հայ հին մատենագրության մեջ չի կիրառվել, տարբեր է վարքից ու վկայաբանությունից և չի անընթաց վարդան Արևելյու ներբողներին: Այս ժանրի մասին տե՛ս մանրամասն՝ Аверинцев С., Плуток и античная биография.

տանջալից առօրյան, գայթակղիչ բոլոր առաջարկներից ու ընձեռված հնարավորություններից հետո՝ հոգեբավ ինքնազոհաբերումը և բաղձալի մահվան երանավետությունը, մինչդեռ ներբողներում դրանք գրեթե չկան, չեն իշխում, որակ չեն կազմում: Դրանց փոխարեն տիրում են ընտրված անձի դրվատանքն ու գովաբանությունը, կյանքի, վատակի, սխրանքների և հիշատակի պանծացումը, լավատեսությունը, քնարական և հուզական առավել առատ զեղումները: Անգամ դամբանական ներբողներում գովքը բավականին շատ է, հերոսի ապրած կյանքը, եթե անգամ խիստ դժվար է եղել, այնքան ցավազին չէ, հուզական շարունակ շատ չի պրկված և միշտ էլ զգալի է հանգիստավորությունը:

Վարքագրական-վկայաբանական երկերի հետ ունեցած ընդհանրությունները հանդերձ ներբողները դիմագուրկ չեն եղել և դրանց առանձնացնելը միջնադարում ևս դժվարություն չի հարուցել, թեկուզ և երբեմն ներբողներին փոխադարձաբար արվել են նույն խորագրային հորջորջումները: Դրանք համեմատաբար սվելի կայուն ու հստակ ժանրորոշիչ հատկություններ ունեն: Ներբողներում, եթե հեղինակային ուղղակի խոսքը նույնիսկ քիչ է, ավելի սուր է զգացվում հեղինակի ներկայությունը:

Գեղարվեստական հնարանքներով և լեզվառճական հատկանիշներով ներբողները վերոհիշյալներից առանձնանում են բազմակի առումներով, այդ թվում՝ նվազ նյութական են ու կոնկրետ, ավելի հագեցած են խոհականությամբ, վերացարկումներով, ավանդական, նույնիսկ կայուն պատկերներով, համեմատություններով, այլաբանությամբ, գործող անձանց առավել ընդհանրացած հոգեբանությամբ և կերպարային գիմագծերով: Գրեթե զուրկ լինելով վիպական, սյուժետային տարրերից, երկխոսություններից, հոգեբանական փոփոխություններից այստեղ ավելի կտրուկ են, մի տեսակ անսպասելի: Ներբողում իշխում են հարուստ, զարգարուն, շույլ, կանոնական բանաձևումներով ծանրաբեռնված և նվազ կենսալի ոճն ու լեզուն: Իհարկե, այս լեզվառճական ընդհանրացումից շեղվող ներբողներ էլ կան, թեկուզ հենց Վարդան Արևելյու հայ գրերի գյուտին նվիրված ներբողը:

Հայ ներբողագրական ժառանգությունը բավականին հավատարմորեն հետևել է նշված դրույթներին և օրինաչափություններին: Այս իմաստով վերը ասվածը վերաբերում է նաև դրան:

Հարուստ ու բազմազան է եղել նրա թեմատիկան: Ներբողներ նվիրվել են ոչ միայն տերունական տոներին ու սրբություններին, եկեղեցական գործիչներին, կրոնական այլևայլ թեմաներին, այլ նաև հայ ժողովրդի պետական-քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքում պատմական ժառայություններ մատուցած անձանց, փրկարար

դեր կատարած գրերի գյուտին, հայ ժողովրդի ազգային միասնությունը հաճախ խորհրդանշող էջմիածնի Կաթողիկեին և այլն: Հայ ներքողագիրներին ներշնչում էին նաև հարազատ երկրի և ժողովրդի անցյալի հաջողությունները, ինքնահաստատման ու անկախության համար մղած պայքարը և գալիքի նկատմամբ շխամբող հույսը: Անցած և ներկա օրերի տարաբախտ կյանքը ևս շատ է հուզել նրանց: Մտորում էին երկրում տիրող քաղաքական, սոցիալական և իրավական վիճակի մասին, ապրում նրա կրթական-մշակութային և հոգևոր-քարոզական կյանքով: Ազգային-հայրենասիրական հարցերը շատ ջերմ արձագանք են գտել ներքողագիրների սրտերում: Եթե Գրիգոր Լուսավորչին նվիրված ներբողներին հեղինակների համար դրվատման արժանի էր ընդհանրապես քրիստոնեության հաղթանակը, սակայն ուրախալի էր, որ այդ հաղթանակը վայելում էին նաև Հայաստանը և հայ ժողովուրդը՝ փրկվելով հեթանոսական խավարից: Խաչը, ճիշտ է, խորհրդանշում էր նաև այդ հաղթանակը, բայց և համոզում կար, որ այն առաջնորդում ու պահպանում էր հայրենիքի պաշտպանության համար մարտի ելած հայոց զորաբանակները, խափանում թշնամու ոտնձգություններն ու բազմադես շարիքները: Հայ հեղինակները ներքողում էին էջմիածնի Կաթողիկեն և հայ ժողովրդի պատմական անցյալի նկատմամբ արթնացնում հարգանք, հպարտություն ու ազգային միասնության կոչ անում:

Կարապետ Սասնեցու սրանչելի ներքողը խոր ու կենդանի հայրենասիրությամբ փառաբանում է հայ գրերի գյուտը և նրա հանճարեղ արարողին: Հայ ժողովրդի անցյալի քաղաքական, մշակութային, իմացական և հոգևոր կյանքում թերևս ամենանշանակալից այդ երևույթի գովերգումը ոչ միայն կրոնական, այլև ազգային ինքնագիտակցության ու լավատեսության էր մղում ընթերցողներին:

Պատմական այս նույն իրողությունն է ընկած նաև Վարդան Արևելցու մեծարժեք ներքողի հիմքում: Հեղինակը պատմագետի հասարակական իրատեսությամբ, գիտության և մշակութի երկարամյա գործչի փորձառությամբ ու իմացությամբ, հայրենասեր քաղաքացու արդարացի երախտագիտությամբ, գրող-բանաստեղծի հուզաթաթափ խոսքերով գնահատել ու փառաբանել է ոչ միայն հայ գրերի գյուտը, Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին, նրանց քաջիմաց աշակերտ-թարգմանիչներին, այլև՝ հենց գրերը:

Մինչև Վարդան Արևելցին (նրանից հետո էլ որոշ ժամանակ), հայ ներքողագրության զարգացման անցած ուղին որոշակի ուղղագծում է հենց իր բովանդակային-ձևակառուցվածքային և ոճագեղարվեստական շրջափոխության ընդհանուր գործընթացն ու պատկերը: Այն, ինչպես նշեցինք, հունա-հռոմեական, ասորական և, մանավանդ, բյուզանդա-

կան ներքողագրությունից շատ հատկանիշներ ժառանգելով հանդերձ, նմանակողի դերում չի եղել: Այդ հատկանիշները պատվաստվել են հայ հողի, միջավայրի և հայ ավիշով կենսունակ մարմնի վրա: Ըստ ժամանակի ու տեղի, կրոնակեղեցական, սոցիալ-քաղաքական, իրավաքարոզական, գիտամշակութային և գեղագիտական իրավիճակի ու պահանջի, ինչպես նաև՝ հեղինակների՝ իրենց իսկ անցած իմացական, հոգևոր և գեղարվեստական ներքին վերակառուցվածքի, հայ ներքողագրությունն ընդհանրապես եղել է շարունակական, ինքնանորոգման ճանապարհին: Այս երևույթը ճիշտ է նկատել Մ. Արևելցանը. «Լամբրոնացու այս երկի (իմա՝ Համբարձման ներքողի— Փ. Ա.) վրա դիտմամբ ավելի երկար կանգ առանք, զի դա մեր ընտիր ճառերից մեկն է, միանգամայն և մի պայծառ օրինակ է, թե ինչպես այս գրական տեսակը մնացել է նույն հին կրոնական ներքողյանը, բայց փոխվել է ձևի և ամբողջ հորինվածքի գեղեցկությամբ: Այդ բխում է ոչ միայն հեղինակի տաղանդից, այլև ընդհանուր նորոգիչ ոգուց: Ներքողյանի կամ ճառի այս գեղազան վերածումն էլ մի արտահայտություն է նոր մտավոր հոսանքի. ո՛ր Լամբրոնացու այս ճառը, և ո՛ր նման թեմաներով հին ճառերը»⁸: Պիտի ավելացնել, անշուշտ, որ այս գրական տեսակը ըստ էության չի մնացել նաև «նույն հին կրոնական ներքողյանը», այն «վերածել» է ոչ միայն «ձևով» և «հորինվածքով», այլև ներքին բովանդակությամբ և իմացական-գաղափարական աշխարհով, որը, հասկանալի է, չէր կարող զերծ մնալ ժամանակի «ընդհանուր նորոգիչ ոգուց»:

Յուրահատուկ են ոչ միայն տարբեր, այլև նույն թեմային նվիրված ներքողները: Այդպես օրինակ, շատ տարբեր են էջմիածնի Կաթողիկեին նվիրված Անանիա Սանահնեցու (XI դ.) և Ստեփանոս Օրբելյանի (XIII—XIV դդ.) կամ հայ գրերի գյուտին նվիրված Կարապետ Սասնեցու (XII դ.) և Վարդան Արևելցու (XIII դ.) ներբողները: Դա սոսկ հեղինակների անհատականությունից բխող առանձնահատկություն չէ, այլև «օրվա պահանջին» տրված արձագանք: Սրանով կամենում ենք մի անգամ ևս մատնանշել խնդրո առարկա վերափոխումների նաև այս կարգի օղակները, որոնք քիչ չեն: Կարևոր երևույթ է դառնում ազգային հայրենասիրական զարկերակի ուժգնացումը. հայ մարդկանց ազգային-քաղաքական տրամադրություններին ընդառաջելը, ընդհանրապես հայկական թեմատիկային ավելի տեղ ու ոգեշունչ մեկնաբանություն տալը: Սրանում ավելի կհամոզվենք, երբ կոնկրետ անդրադառնանք Վարդան Արևելցու ներքողների գաղափարական նշանակությանը:

⁸ Արևելյան Մ., Երկեր, Գ, էջ 166—167:

Հայ ներքողագրությունը աստիճանաբար նոսրացնում է վերացական պատկերների ու դատողությունների խտությունը, ավելի շատ է լիարյուն և դյուրազգաց շոշափուկներով առնչվում իրականությանը, որոշակիացնում ներքովող անհատի մեջ մարդկայինն ու անձնականը, գյուրացնում նրա կերպարային դրսևորումը թեկուզ ատվելապես դիմառնաբար տեղի ունեցող զրույցներով, կենցաղային համեմատաբար ռեալ իրավիճակների, նույնիսկ բարեմասնությունների ներքնկալմամբ և միահյուսմամբ: Ավելի հաճախակի են դառնում տեղանքի ու տեղայնության հետ կապված մանրամասները, ի հայտ գալիս հեղինակի հրատակ «շահագրգռությունը» դրանց նկատմամբ, մյուս կողմից համեմատաբար նվազ եռանդ է ցուցաբերվում ներքովող անձի «հոգևոր սնունդի» վերաբերյալ դատումները բազմապատկելիս և ընդլայնելիս, նրան կատարելապես երկնահաճո դարձնելու միտման մեջ: Ավելի շատ, քան նախկինում, տեղ է տրվում ներքովողի արտաքին բարեմասնությունների, կենցաղին, շրջապատին, վերջինիս առնչված նրա մարդկային պարզ հարաբերություններին, ընդ որում՝ ավելի իրապաշտական գույններով: Աշխարհիկ իրականությունը տիրաբար տեղ է նվաճում: Նկատանելի են դեպքից դեպք, վիճակից վիճակ անցումների արագությունը, շարժունակությունը, ընդհանուր մթնոլորտի և արամադրության լուսավոր ու համեմակի շեշտը:

Նույնը պիտի ասել նաև արտահայտչական, լեզվաոճական միջոցների ու ձևերի մասին, որոնք նույնպես վերահանդերձալորվում, նսրոգվում և հարստանում են: Որքան էլ դժվար լինեն, մանավանդ միջին դարերում վաղուցհետև արմատացած, ավանդական մեծ ուժ ստացած հորջորջումները, բանաձևերը, պատկերավոր խոսքի միևնույն տարրերը, համեմատության եզրերն ու կաղապարները, հետտորական ընկալչալ միջոցները կենսունակ շրջանառությունից աստիճանաբար դուրս մղելը, այդուհանդերձ, հնարավոր էլ չէր լինի այդպես չվարվել: Այս առումով առավելապես առանձնանում են Գրիգոր Մկեռացու՝ Ներսես Լամբրոնացուն, վերջինիս՝ Ներսես Ծնորհայուն, Վարդան Արևելցու՝ Գրիգոր Լուսավորչի «թոռներին» և գրերի գյուտին, Մովսես Երզնկացու՝ Գեորգ Մկեռացուն, Առաքել Սյունեցու՝ Գրիգոր Տաթևացուն նվիրված, ավելի հետո՝ նաև այլ հեղինակների ներքողները, որոնց մեջ ոչ միայն բովանդակային-գաղափարական, այլև ձևակառուցվածքային թեկուզ համեմատաբար ավելի քիչ վերափոխություններն ակնհայտ են: Ծիշտ է, շարունակում են կիրառվել նախապես սահմանված հիմնական սկզբունքները, կանոնները և ավանդական ձևերը բացորոշ հետևողականությամբ, բայց ոչ կրկնողաբար, այլ միայն ստեղծագործորեն, ըստ գեղագիտական նոր ըմբռնումների ու պահանջների:

Այս բոլորը իրենց նախկին տեղում և ուժի մեջ չեն մնում, նահանջում են, թեկուզ դանդաղ և որոշ սահմաններում: Գրանք դուրս են գալիս առավելապես իրենց արհեստական, դպրոցական հագուստից, գեղարվեստական ընկալման համար դառնում ավելի մատչելի ու հարազատ: Զուտ ոճական առումով հեղինակից հեղինակ, բնական է, ներքողները պահպանում են իրենց տարբերակիչ հատկանիշները, բայց և այնպես ժամանակի ազդեցությունը իր կնիքը բավականին թանձր գույներով դրել է նաև այս իրողության վրա: Նրանց ոճը առհասարակ բավականաչափ բեռնաթափվում է մանավանդ վերամբարձ, շինծու, գրքային հատկանիշներից: Եթե իսկ մերթնդմերթ ընդունում է լրացուցիչ պահուստներ, հիմնականում շարունակում է զարգացման հարթ, պարզ, աշխույժ, գրավիչ և դյուրահաղորդ դառնալու ուղին, ընկալում է ժողովրդական լեզվամտածողության հյութեղ արտահայտչաձևերը:

Ներքողների լեզուն ևս անցնում է վերափոխման տարրեր փուլերով: Այն մինչև վերջ էլ մնում է զրաբարի դասական մակարդակի վրա, պահում իր լուրջ հանդիսավորությունն ու ազնվականությունը, բայց նաև, աստիճանաբար ավելի հաճախ, ընկալում նոր տարրեր և փոխառություններ անորյա կիրառությունից և միջին հասցիներից:

Այս բոլորը օրինաչափորեն հաստատում են հայ ներքողագրության արմատների հնավանդության, հարուստ սնունդի, գաղափարական և գեղարվեստական բազմազանության, կենսունակ աճի և անտարակուսելի շահեկանության իրողությունը ու ցույց տալիս, որ նրա գաղափարամբ համաբայլ է եղել միջնադարյան Հայաստանի ընդհանուր գրական-մշակութային առաջընթացին՝ դեպի ավելի աշխարհայինը, կենսային, մարդկայինը, բնականն ու իրականը:

* * *

Ճառի ժանրային պատկանելության և առանձնահատկությունների որոշման խնդիրը ևս մեզ համար կարևոր է դառնում, քանի որ Վարդան Արևելցու մատենագրական վաստակի մեջ ճառերը նույնպես որոշակի տեղ ու տեսակարար կշիռ ունեն⁹:

Ճառերը, որոնք ավելի սերտ առնչություն ունեն ներքողների հետ, ժագել են նույն պատմական և սոցիալական պայմաններում, նման հասարակական, գաղափարական, մշակութային դրդապատճառներով ու նպատակով: Ճառեր արտասանվել են ամենավաղ ժամանակներից և ամենուրեք, երբ հարկ էր լինում նշանավորել խոշոր իրադարձություն-

⁹ Տե՛ս մասնավորապես՝ Քենգեյան Լ., Հովհան Մայրազոմեցի, էջ 96—133:

ները, հանդեսները, արարողությունները, ողջունել հերոսներին, զորավարներին, արքաներին, ողբշնչել ամբոխներին, զորքերին և կոշիկ նրանց հայրենասիրության ու ազատագրական պայքարի:

Ճառերը արդեն բարձր զարգացման էին հասել առավելապես հին հունահռոմեական աշխարհում: Պատահական չէ, որ այնտեղից են մեզ հասել հին ճառագրական ամենաընտիր նմուշները: Ճառը ևս, իբրև արդեն բավականին ձևավորված ժանր, այդ աշխարհից փոխանցվեց Բյուզանդիային:

Եկեղեցական հայրերը ստեղծեցին շատագուրավական երկերի ծավալուն ժառանգություն, որոնց մեջ իրենց ուրույն և նշանակալից տեղն ունեն ճառերը: Այս անգամ էլ անտիկ աշխարհի ավանդները որդեգրվեցին ստեղծագործաբար, պատշաճեցվելով քրիստոնեական գաղափարախոսությանն ու գրական սկզբունքներին: Զարգացման նոր միջավայրում, նոր գործընթացի մեջ, ճառը մանավանդ բովանդակությամբ, շրջադարձ փոփոխություն կրեց: Հասարակական-քաղաքական սրբություններից, ազատությունը, հերոսականությունը, հայրենասիրությունը փառաբանելու ողբշունչ պաթոսից նահանջեց և դարձավ հիմնականում կրոնաեկեղեցական հարցերի ու դրույթների շատագուրավական միջոց: Անշուշտ, պալատական շրջանակներում, արքայական կամ ավատապետական տարբեր տների հանդիսությունների, փառատոների ժամանակ շարունակվեցին ճառեր արտասանվել, բայց արդեն ոչ անտիկ ճառագրական արվեստի աշխարհիկ բովանդակությամբ, սկզբունքներով ու ոգով:

Ժանրային այն կառուցվածքով, բովանդակությամբ և առանձնահատկություններով, որոնցով հայ ճառագրությունը պահպանվել ու մեզ է հասել, աներկրայորեն հաստատվում է նաև այս բնագավառում առկա առնչությունը ընդհանուր քրիստոնեական, հատկապես ասորական և բյուզանդական, գրականության հետ: Դա օրինաչափ ու հասկանալի իրողություն է, որը ընդլայնում է հայ ճառագրության գրական սահմանները և բարձրացնում նրա վարկը, որովհետև թարգմանաբար հայերեն պահպանված ճառագրական ընտրանիի հետ այն միանգամայն հավասար մակարդակ ունի:

Ճառի բառացի իմաստը բազմազան է: Այն նշանակել է գովք, պատգամ, համբավ, պատմություն, զրույց, ուսմունք և այլն¹⁰: Նոր հայկազյան բառարանը հետևյալ բացատրությունն է տալիս՝ «Ճառ-բան

ձայնաւոր կամ գրաւոր՝ ճոխ և ճոռոմ, կամ հոնտորական առասացութիւնք, ասացուած, վէպ, պատմութիւն, մեկնութիւն, քարոզ, վարդապետութիւն, երկայն զրույցք, ներբող և գլուխ մի բանի և այլն»¹¹: Այս ամենով չեն սպառվում մանավանդ միջնադարյան, այդ թվում և հայկական ճառերի, բովանդակային, կիրառական և ժանրային նշանակության հիմնական կետերը, բայց դրանց մասին գոհացուցիչ պատկերացում արվում է: Ճառը, ճիշտ է, իր բնույթով, բանավոր կամ գրավոր, «հոնտորական առասություն» է, բայց ոչ վեպ, զրույց, մեկնություն, թեկուզ և նրանց տարրերը ընդգրկում է իր մեջ: Այս առումով էլ վարքագրական ու վկայաբանական երկերին գրեթե չի առնչվում: Նշվածներից համեմատաբար ավելի զգալի են մեկնաբանական տարրերը, ինչպես հենց վարդան Արեւելցու ճառերում, սակայն, դրանցով մեկնաբանական երկ չեն դառնում, այլապես կնույնանային մանր «լուծմունք»-ների հետ, ինչպես որոշ ձեռագրերում շփոթաբար երբեմն անվանվել են: Առանց մեծ դժվարության կարելի է նկատել, որ նման ճառերը գրված են նախ և առաջ հոնտորական արվեստի պահանջների համաձայն և արտասանվելու համար. ըստ այդմ էլ դրանց գեղարվեստական բնույթը ավելի է շեշտվում, և բավականաչափ դյուրին են դատորոշվում բուն մեկնություններից ու «լուծմունք»-ներից:

Ճառը որոշակի ընդհանրություններ ունի ներբողի հետ, ինչ-որ չափով նրա տարատեսակն է, բայց ոչ նմանակը: Արարման շարժաբեթներով, ծնունդով, նպատակով հաճախ (ոչ միշտ) կարող են երկվորյակ համարվել, ինչպես օրինակ, Քրիստոսի Մնունդին, Խաչելությունը կամ Հարությունը նվիրված ներբողներն ու ճառերը: Դրանք գրված են հաճախ միևնույն թեմայի հիման վրա, կոչված լինելով գոհացնելու միևնույն պահանջները և նման հոնտորական-գեղարվեստական հենքով նույն ծառայությունը մատուցելու քրիստոնեական ուսմունքին ու եկեղեցուն:

Ճառը նույնպես գեղարվեստական գրականության մարզին է պատկանում, ունի էպիկաքնարական հենք, կյանքը, իրականությունը պատկերավոր վերարտադրելու, հոնտորական գեղարվեստական լեզվամտածողություն և արտահայտչամիջոցներ: Այն նույնպես դիտվել է իբրև գովեստի խոսք և պետք է ունենար ներբողական պաթոս, դիտված երևույթը կամ անհատին պասիվ չներկայացնել, շփազանցումը պետք է պատշաճ աստիճանի բարձրացվել, լեզուն և ոճը շոր, անարյուն չլինեին: Ամեն դեպքում ընթերցողին ոչ միայն օգտակար պետք է լինեի, այլև հուզեր նրա հոգեկան աշխարհը, նրա մեջ համապատասխան տրա-

¹⁰ Δ. Δημητράκου, Μέγα Λεξικόν τῆς Ἑλληνικῆς Γλώσσης, τόμος Β', Ἀθήναι, 1951, σελ. 4367-4370. The Encyclopaedia Britannica, Vol. XII, Edinburgh, 1881, էջ 125. Большая Советская Энциклопедия, 39, Москва, 1956, էջ 356.

¹¹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Բ, էջ 172:

մադրութուն և զգացմունք առաջացնելու: Այսպես է, որ պատմական թեմայով հորինված ճառը միայն պատմութուն չէ, փրիստոփայական և խոհական բովանդակությամբ հագեցած ճառը սոսկ փրիստոփայական տրակտատ չէ, կրոնական-գեղեցական խնդիրներին նվիրված ճառերը լոկ կրոնագիտական շարադրանք չեն: Գրանց բոլորի մեջ էլ, ընդգծում ենք, ավելի կամ նվազ չափով կա պատկերի զգայական ընկալման, հուզումի տարրը և այդ ամենը գեղարվեստական հնարանքներով, գեղեցիկ ոճով և լեզվով արտացոլելու միտումը: Մ. Արեղյանը միանգամայն ճշմարտացի հաստատում է. «...գեղեցիկ գրականությունը երկրորդաբար պատկանում են պերճաստեղծությունը, ճառերը...»¹²: Այդպես են, անշուշտ, մանավանդ ներբողները, բայց նաև տարբեր են բովանդակության ընդգրկած սահմաններով, կառուցվածքով, արտահայտչաձևերով, ծավալով: Ներբողը, ի տարբերություն, անպայման ունի նախապատրաստված մուտք կամ ներածություն: Հեղինակը հենց սկզբում էլ հաստատում է իր ներկայությունը, այսպես կոչված «ապիկարությունը» խոստովանում, ավելի հանգամանորեն է անդրադառնում իր բուն նյութի բարեմասնություններին, խտացնում հոստորական գույները, ուժգնացնում զաղափարական հնչողությունը և հուզական տարրերը: Ճառերում գրանցից ոչ բոլորը առկա են միաժամանակ ու նման չափով, շեշտով ու տարողությամբ: Ճառերն ավելի հանգարտ են, ոչ այնքան թելադրում են իրենք իրենց ու պատգամում, որքան ուսուցողական-խրատական հակում են ցույց տալիս. արտահայտչաձևերով մեղմ են, ծավալով՝ ավելի փոքր:

Այս տեսանկյունից ճառը առնչվում է նաև քարոզին ու խրատին, առավելապես բովանդակային ու գաղափարական ընդգրկումներով: Հաճախ են գրանք նույն թեմաները շոշափում և նման միտում ցույց տալիս: Ավելի առնչվում են քրիստոնեական կրոնի ու եկեղեցու ուսմունքին, ավելի հագեցած են ավետարանական կամ եկեղեցական հայրերի գրույթների բացատրությամբ, հավատացյալների հոգեբարոյական աշխարհի մաքրման, ազնվացման խնդիրներով, հասարակական շարիքները դատապարտելու և հասարակությունը մեղսագործությունից հեռու պահելու կամեցողությամբ: Այս ընդհանրության պատճառով էլ գրանց տարրորջման խնդրում դեռ միջնադարում տեղի է ունեցել շփոթ: Մրանցից որևէ մեկը կոչվել է տարբեր, երբեմն էլ բոլորը՝ միևնույն անունով: Այս իմաստով ձեռագրական տվյալները միշտ չէ որ կաշուն երաշխիք են տալիս. կարող է նշված լինել խրատ, բայց լինել քարոզ կամ ճառ, և՛ հակառակը: Մեզ տվյալ դեպքում հետաքրքրում է այս երեք ժանրե-

րի՝ ճառի, քարոզի, խրատի, ավելի ճիշտ ճառի շփոթելիության հնարավորությունը մյուսների հետ, որ նույնպես վկայում է գրանց բավականին ակնառու ընդհանրությունների մասին, որոնց մանրամասն անդրադառնալը մեր ծրագրի մեջ չի մտնում: Ասենք միայն, թե ինչով է ճառը, այդուհանդերձ, գրանցից ևս տարբերվում, որպեսզի մեր պատկերացումը ավելի հստակ ու ամբողջական լինի:

Քանի որ ճառի համառոտ բնութագիրը արդեն տվել ենք քիչ վերը և որոշ գաղափար կազմել նրա մասին, անհրաժեշտ է նույնը քարոզի և խրատի վերաբերյալ, որոնք ևս առնչվում են ճառին և Արևելցու մատենագրական վաստակին:

Քարոզը, եթե ոչ նախընթաց, համենայնդեպս համակցաց է քրիստոնեական ճառին: Այն, իրոք, քրիստոնեությունից ծավալման առաջնային միջոցներից է, ըստ ավանդության՝ սկսված հենց դրա հիմնադրի և նրա աշակերտների՝ առաքյալների կողմից: Վերջինների թղթերը նաև քարոզների նախանշումներն են, թուղթ-նամականիի ժանրին հատուկ տարբերակիչ առանձնահատկություններով հանդերձ: Քարոզը միշտ էլ բացատրական, լուսաբանող, համոզիչ լինելու միտում է ունեցել: Քրիստոնեական առաջին համայնքների կազմավորման համար հանդես են բերվել առաքյալների գրավոր քարոզները՝ թղթերը, սակայն, երբ արդեն կար քրիստոնյա հավատացյալների հավատքը, պիտի լինեին նաև այն ամրացնելու ջանքերը, այդ թվում բանավոր և գրավոր քարոզները, որպեսզի Քրիստոսի խոսքը, ավետարանական պատգամները հասկանալի ու մատչելի դառնային շատերին:

Այն, ինչ մեզ հասել է «քարոզ» անունով և ըստ էության էլ հանդիսանում է քարոզ, հիմնականում ոչ այլ ինչ է, քան բացատրություն: Քարոզի հիմքում ընկած պիտի լինի Մ. Գրային որևէ ճշմարտություն, բանաձև, պատգամ, առակ, որը ենթակա է բացահայտման: Այդ է պատճառը, որ քարոզները սովորաբար ունենում են Մ. Գրայից քաղված բնաբան, որը և արժանանում է բացատրության: Այս բնաբանները ընտրվում էին նաև եկեղեցական գրականության կանոնական միավորներից, որոնք ներկայացնում են քրիստոնեական կրոնի և եկեղեցու վարդապետությունն ու բարոյական ուսմունքը: Բնական է, այս առնչությամբ նախապատվությունը չէր տրվելու հոստորական-գեղարվեստական խոսքին, գովաբանությանը, այլ առաջադիր բնաբանի, դրույթի, զոգմայի համոզիչ լուսաբանմանը, որը հանդարտ, խոհական խոսք էր պահանջում: Հենց այդպիսին են պահանջված քարոզները: Մրանով չենք ժխտում, որ քարոզների մեջ կան նաև ճառային, նույնիսկ ներբողական, ավելի՛ խրատական տարրեր, սակայն, համեմատաբար քիչ են:

¹² Արեղյան Մ., Երկեր, Գ, էջ 13:

ունեն նվազ ուժգնություն և չեն խախտում ժանրային պատկանելության որոշակիությունը:

Պատմականությունից, կենսագրական բնույթի և սյուժետային տարրերից գրեթե ազատ է բարոզը, բայց ոչ ավելի, քան ճառը: Իսկ եթե այդպիսիք առկա են որոշ քարոզների մեջ, ապա պիտի նկատի ունենալ, որ դրանք գալիս են մեծ մասամբ այն առակների, հրաշապատումների, մանր գրույցների միջոցով, որոնք օգտագործվել են բացատրական հիմնական խոսքը ավելի ներգործող ու դուրամատչելի դարձնելու համար: Դրանք մի տեսակ միջանկյալ հնարանքի արդյունք են և քարոզների հիմնական կառուցվածքային բնույթը չեն որոշում, չեն էլ խախտում, պարզապես ընդգծում են դրանց կապը ժողովրդի կյանքի, կենցաղի, մտածողության, ինչպես և բանահյուսության հետ առհասարակ:

Քարոզները, նայած ընտրված նյութին ու հեղինակի խառնվածքին, երբեմն պահպանում են որոշ հանդիսավորություն, երբեք չվերաճելով ճառի, էլ չենք ասում՝ ներբողի: Այս հիման վրա էլ դրանց համար բնորոշ է անպաճույճ, հանդարտ, հարթ ոճն ու պարզ լեզուն:

Խրատը մի տեսակ եռյակ միասնություն է կազմում ճառի ու քարոզի հետ՝ միևնույն հիմնական ընդհանրություններով, բովանդակային, ձևակառուցվածքային ու լեզվաոճական նմանատիպ գործոններով: Այստեղ էլ հավատքի և եկեղեցու, հասարակության, բարոյականության վերաբերյալ նույն հարցերն ու խնդիրներն են բովանդակության նյութ դառնում, և, պարզ է, միևնույն դասակարգային կամ դասային շահերից բխած գաղափարական մեկնաբանությամբ ու միտումով: Դրանք ընդգրկվում են համաչափ ծավալի մեջ, կարևոր կետերի արժարժման տրամաբանական նույնօրինակ կառուցվածքով և նույնպիսի լեզվաոճական գեղարվեստական երանգավորմամբ:

Խրատները միատարր չեն. կան բարոյախրատական-ուսուցողական, կանոնական և պատմահասարակական բովանդակությամբ ու բնույթով խրատներ: Մենք նկատի ունենք դրանց ամբողջությունը, որովհետև ժանրային առումներով Վարդան Արևելցու համապատասխան երկերին փաստորեն առնչվում են բոլորը: Նրա այս կարգի երկերից են «Եղբայր և որդեակ» Գրիգորին ուղղված խրատը, կանոնական բնույթի երկերը և այն բոլոր խրատական գրությունները, որոնցից օգտվել է Հովհաննես Երզնկացին իր «Խրատք հասարակաց»-ն հորինելիս:

Խրատների անվանումներն արդեն մեծ մասամբ պերճախոս հաստատումներ են. բարոյական բնույթի խրատներում իրոք որ արժարժվում են բարոյական, կենցաղային խնդիրներ, Հին և Նոր կտակարանից,

եկեղեցական հայրերի վարքերից ու երկերից վկայակոչվում են այնպիսի գեպքեր ու բարեմասնություններ, որոնցից հնարավոր է լինում բարոյական հետևություններ հանել, հորդորներ տալ, մատնանշել վատն ու բարին և շարից ձերբազատվելու ուղիներն ու միջոցները: Կենցաղային, բարոյական խրատներում, ճիշտ է, մաքրությունը առաջնային նշանակություն է ստանում, մանավանդ մարդկանց հավիտենական կյանքին նախապատրաստելու առումով, սակայն, անկախ քրիստոնեական այս ընդհանրական ելակետից, լինում է և այնպես, որ բարոյական թելադրանքները, գտնելով «երկրային» կիրառություն, ստանում են հասարակական արժեք ու ճանաչողական նշանակություն: Այս տեսակետից բացատրելի, գնահատելի է նաև դրանցում ժողովրդական տարբեր խավերի հարաբերություններին, բարքերին, սովորույթներին տրված անդրադարձը և դրանով ասվելիքը իրական և նպատակամետ դարձնելու հստակ ձգտումը: Խրատը չունի կամ ունի շատ հազվադեպ, զուտ տեսական, դոգմատիկ հարցերի գիտական-աստվածաբանական մեկնություն: Նման հարցերն անգամ արժարժված ու մատուցված են առօրյա կյանքին արձագանքելու և նրանց բարոյախրատական շահեկանությունը բարձրացնելու նպատակով: Այս պատճառով էլ խրատների մեջ հանդիսավորության շեշտ չկա, հակառակը, կա հեղինակի և ընթերցողի միջև անմիջական հաղորդակցության տեսական կապ:

Խրատները սերտ կապի մեջ են վանական միջավայրի ու կյանքի հետ, կան նաև այնպիսիները, որոնք ուղղված են միայն վանականներին: Դրանց հիմնական նպատակն է վանականներին դերժ պահել բարոյական ու գաղափարական սայթաքումներից, որպեսզի անձնական շահերին հետամուտ չլինեն, ուրանան աշխարհային վայելքները, հավատարիմ լինեն եկեղեցու դավանանքին, ժխական կարգապահությանը, նվիրապետական կառուցվածքին: Դրանցում հսկայական նյութ կա վանականությանը վերաբերող ոչ միայն հոգևոր, այլև վարչատնտեսական, կենցաղավարական, ավանդական շատ խնդիրների մասին: Այս գեպքում էլ ուշադրության արժանի է դրանց պատմական և ճանաչողական նշանակությունը:

Ինչ վերաբերում է կանոնական և «հասարակական» բնույթի խրատներին, բավարարվենք միայն ստորև տրվող բնութագրությամբ, քանի որ Վարդան Արևելցու կանոնական բնույթի երկերին մեր նախապես ասված գնահատականը ինչ-որ ձևով առնչվում է նաև դրանց, իսկ «հասարակաց» խրատների մասին կա արժեքավոր ուսումնասիրություն¹³:

13 Բաղդասարյան է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը:

Կանոնական բնույթի խրատները ազգային եկեղեցական ժողովներում սահմանված կանոններից տարբեր են ծավալով, կառուցվածքով, ձևով, շարադրանքով, էությունամբ, սակայն բովանդակությամբ ու նպատակով ուղղակի առնչության մեջ են դրանց հետ:

Այս բնույթի խրատներն էլ վերաբերում են կանոնական իրավիճակների բացատրությանը, կանոնական իրավունքի ինչ-ինչ նորմերի հաստատմանն ու վերահաստատմանը, դրանց խախտումներից ու զեղծումներից ազատ պահելու մտահոգությունը, որոնք, սակայն, անպայման եկեղեցական-ազգային ժողովներում չեն սահմանված, կանոնի ուժ չունեն, կանոնական խնդիրներից ավելի՝ պարունակում են բարոյախրատական թելադրություններ:

«Հասարակաց» (մենք այս տերմինը փոխառում ենք Հովհաննես Երզնկացու մատենագրությունից ոչ սոսկ իրրև առհասարակ «բողոքին» ուղղված խրատ, այլ առանձնապես նկատի ունենալով դրանց հասարակական բովանդակությունն ու արժեքը) խրատները շատ ավելի մեծ կշիռ ունեն, առնչվում են ավելի համապարփակ խնդիրներին: Վերաբերելով հասարակական գրեթե բոլոր շերտերին, աշխարհիկ թե հոգևոր կյանքի երբեմն աչքից վրիպած ծալքերին, նրանք ձևեր են բերում փաստագրական սկզբնաղբյուրի կարևորություն, պատմաճանաչողական արժեք: Պատմաբանասիրական, գաղափարական, մատենագրական տեսակետից դրանց արժանիքները ևս ակներև ու բազմազան են:

Այնհայտ է խրատների հանդարտ, նվազ հուզումնալից, կրքից ու բախումներից ազատ, հասկանալի և համոզիչ լինելու էական հատկանիշը, որն իր հերթին պահանջում է համապատասխան լեզվատեսական հանդերձանք:

Ահա, վերոհիշյալներից ավելի պարզ է երևում, որ ձուռերը, թեև քարոզչների ու խրատների նշված բոլոր տարրերին էլ անհաղորդ չեն, սակայն զգալիորեն տարբերվում են դրանցից: Ծառը նույնպես էլիկաքնարական գրական տեսակ է, բայց միշտ էլ քնարականի գերակշռությամբ: Այն ավելի գործուն շահագրգռություն է ցուցաբերում փաստական նյութի, կյանքի, մարդկանց նկատմամբ, հախուռն են հեղինակային գրակարգումները, բավականին ընդգծված է զգայական, հուզական լիցքը, ընթերցողին սույն տիրական հուզականության ոլորտում պահելու միտումը: Ծառերում զուտ փաստական, խոհական տարրերն իսկ մատուցելիս հեղինակի մտածողությունը ավելի պատկերավոր, ավելի գեղարվեստական է. վերլուծական ածանցումներին, տեսական «շեղումներին», լինեն աստվածաբանական, վարդապետական, դավանաբանական թե ծիսական, ավելի մեծ տեղ ու արժեք է տրվում, հաճախ ոգևորությամբ ու միտումնավորությամբ:

Քնարականությունը փոխադարձաբար ի հայտ է գալիս նաև դրանց հետտորական, հրապարակախոսական պաթոսի միջոցով: Ծառը այս գեպրում էլ ավելի մեծ պահանջ է դնում: Դա միաժամանակ իր նպատակի հիմնական միտումներից է գալիս:

Ծառը եկեղեցական միջավայրի հետտորության լավագույն նմուշներից է, թերևս քրիստոնեական շատագույնության ամենակենսունակ ժանրը: Ծնորհիվ իր առավել քնարական-հուզական հենքին և լեզվատեսական գրավչությանը, այն արագ է ներգործում մարդկանց մտա: Մաշտ էական հատկանիշ է, որով հիմնականում պայմանավորված է ձուռի յայն տարածումն ու երկարակեցությունը: Ծառը, այսպիսով, շվերաճելով ներքողի, գառնում է հանդիսավոր շեշտով, քնարական խոհականությամբ, հուզականությամբ, պատկերավոր պերճաբանությամբ հագեցած ու սիրված գրական գեղարվեստական ժանր:

Վարդան Արևելյու գեղարվեստական բնույթի երկերի շարքում գրույցները ևս կարևոր տեղ են գրավում: Դրանք բաժանվում են երկու խմբի. մի խումբն ուրույն է, մյուսը, մեր կարծիքով, ասորերենից թարգմանարար փոխադրված հայերենի: Առաջինների բովանդակությունը հայկական է. եթե անգամ առնչվում են Հայաստանից դուրս ընկած տարածքներին, դարձյալ վերաբերում են հայ իրականությանը: Իսկ երկրորդ խմբի գրույցները շոշափում են համաքրիստոնեական թեմա, հիմնականում մենակյաց անապատականների կյանքն ու հոգևոր քարոյական առօրյան, միայն որոշ շափով են տեղայնացված կենցաղային որոշ մանրամասներով: Դրանք տարբեր են նաև հորինվածքով, ծավալային այլ կառուցվածք և բնույթ ունեն: Այս առնչությամբ ստորև հակիրճ խոսք կլինի միայն դրանց ժանրային մի քանի հատկանիշների մասին:

Զրույցները* ևս հայ միջնադարյան գեղարվեստական արձակի հնագույն և ուշագրավ նմուշներից են, կազմում են այս բնագավառի հետաքրքիր և արժեքավոր ժանրերից մեկը: Մնունը են առել ժողովրդի բանավոր ստեղծագործությամբ ու, բնականաբար, բանահյուսության մաս կազմել: Մոլսես Խորենացին քանիցս գործածել է «գրույց»-ը հենց իբրև բանավոր խոսք, իրրև անգիր ասվող ստեղծագործություն¹⁴: Հայ մատենագիրները հետզհետե գրի են առել գրույցներն ու դրանք ենթարկել և՛ գաղափարական, և՛ գրական-գեղարվեստական մշակման: Այնպես որ գրույցը ժողովրդական բանավոր գրական ակունքներից

* «Զրույց» ժանրի մասին տե՛ս մանրամասն հատկապես՝ Մրապյան Ա., Զրույցներ: Նույնի՝ «Առակ և գրույց» հոդվածը, (Հայ Միջնադարյան գրականություն» ժանրեր), էջ 301—344:

14 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 25, 192:

մուտք գործելով գեղարվեստական արձակի բնագավառը, ենթարկվել է ստեղծագործական յուրահատուկ մշակման, ստանալով մասամբ հեքիաթի, մասամբ պատմվածքի բովանդակություն ու ձև: Այն զրույցները, որոնց սյուժետային հիմքը որևէ կոնկրետ պատմական դիպված է կամ անձնավորություն, իհարկե, ավելի շուտ հակված են դեպի պատմվածքը, բայց, որովհետև դրանց մեջ միշտ էլ առկա են շահագնացության, խորհրդանշանակության և այլաբանության հագեցված նկարագրական տարրեր, ուստի և հաճախ հեքիաթը (առավելապես հնագույն նմուշներում), իսկ երբեմն նաև առասպելներն ու պատմվածքը և առակին բնորոշ որոշ տարրեր՝ հանդես են գալիս միասնաբար: Այս դեպքում էլ դրանց իրավացիորեն տրվում է «զրույց» անունը: Սանոթանալով ձեռագրերի տվյալներին, գալիս ենք այն համոզման, որ զրույցը, շունենալով ժանրային հաստատուն, պարտադիր տարրեր, հանդես գալով բազմազան սյուժետային առանձնահատկություններով, բովանդակությամբ և կոմպոզիցիոն-ձևաարտահայտչական հատկանիշներով, դժվար կլինի այն լրիվ բնութագրել տեսական մեկ ընդհանուր բնորոշմամբ: Ինչպես ամեն մի հնագույն, միջնադարյան գրական ստեղծագործության, այնպես էլ զրույցի նկատմամբ պետք է ցուցաբերել առանձնակի գրականագիտական մոտեցում:

Այս տեսանկյունով հայ մատենագրության մեջ «զրույց»-ը, մեր կարծիքով, երեք հիմնական որակական խմբավորում ունի.

1. Հեթանոսական նախաքրիստոնեական շրջանի զրույցներ, երբեմն, «առասպելին» համարժեք հասկացություններ, դիցաբանական ուժգին շեշտով, որոնց միջոցով փորձ է արվում աշխարհը բնկալել, բացատրել, բնության վրա ներգործել բացառապես գերբնական ուժերի՝ «դիցն օգնականությամբ» (Հայկ և Օրիոն, Տորքանգեղ, Վահագն Վիշապաբաղ, Աժդահակ, Վիշապազանց պատերազմ և այլն)¹⁵:

2. Քրիստոնեական շրջանի, պատմական որոշակի հիմքի վրա կառուցված զրույցներ, երբ իրական դեպքն ու անձնավորությունը ավելի հիշարժան, նպատակասլաց, ցայտուն և օրինակելի դարձնելու համար միտումնավոր կերպով, նրա շուրջ հյուսվում է գերմարդկային, հրաշալիքներով հարուստ գործողությունների ու պատահարների մի ամբողջ շարան: Այդ արվում է հիմնականում ընթերցող-հավատացյալի զգացումների վրա ավելի ուժգին ներգործելու դիտավորությամբ: Զրույցների մեջ, թեկուզ շատ կարճ սյուժեի առկայությամբ, անպայման կան մեկից ավելի կերպարներ՝ գրեթե մշտապես հակամարտ և հակադիր բնավորություններով, բայց, որպես օրենք, վերջնական հաղթանակը

վերապահելով բարուն, ազնվությունը, առաքինությանը (Թադեոսի և Սանդիստի, Գրիգոր Լուսավորչի և Տրդատի, Հովհաննիսյանց, Շուշանիկ Վարդենիի, Գրիգոր Նարեկացու, Հովհաննես Սարկավազի և այլ անձնավորությունների մասին հյուսված զրույցները)¹⁶:

3. Ավելի ուշ ժամանակներում ծագած և թարգմանաբար փոխազրկված զրույցները, որոնք ծավալով և ընդգրկմամբ փոքր են, միշտ ունեն որոշակի սյուժե, բայց ոչ միշտ գործողության կոնկրետ վայր ու ժամանակ, որոնք շատ անգամ, իրենց բարոյախրատական միտումի շնորհիվ, երբեմն մերձավոր կապի մեջ են առականների հետ: Այս վերջին կարգի զրույցները հաճախ են առնչվում վարքաբանական գրականությանը, մենակյացներին, անապատականներին վերաբերող երկերին: Դրանք հանդիպում են շարքերով և առանձին, երբեմն այս կամ այն սրբի վարքի մեջ, պատմում են որևէ եկեղեցական հոր, ճգնավորի, միայնակյացի կյանքի առանձին գրվագների մասին: Միջնադարյան մտածողությունը, նման դեպքերում առանց հրաշքների ներգործուն միջամտության չէր գոհանա: Հարկավոր էր իդեալականացնել տվյալ սրբին և նրա հետ կապված դեպքերը: Այստեղից էլ՝ այս խմբի զրույցների շեշտված հրաշապատում բնույթը:

Զմանրամասնելով մեր խոսքը ուղղակի ասենք, որ վարդան Արևելցու զրույցները այս վերջին խմբին են պատկանում, ունեն խրատական, հրաշապատում բնույթ և փոքր ծավալ, անպաճույճ կառուցվածք, հանգարտ, բնտանի ոճ ու մատչելի լեզու:

Ընդհանրապես զրույցի ժանրը հայ մատենագրության մեջ լայն կիրառություն է գտել դեռ հայ դպրության ամենասկզբնական շրջանից՝ V դարից, երբեմն ուրույնաբար, երբեմն հարակցվելով այլ երկերի: Այս առումով հիշատակության են արժանի առավելաբար հայ պատմագրական, վարքագրական, վկայաբանական երկերը, երբեմն «Պատմութիւն», «բան» վերտառությամբ առանձին գրվածքներն ու քարոզգրքերը:

Զրույցները բազմատարր են, ունեն տարբեր բովանդակություն, կառուցվածք, ծավալ, արտահայտչաձևեր, շարժառիթ ու նպատակ, բայց պահպանում են ժանրային կայուն, հիմնական հատկանիշներից այնքան, որ դժվար չէ ճշտել դրանց պատկանելությունը միջնադարյան «զրույցը» ժանրին: Դրանց հատկանիշների բազմբանագությունը գրական, գեղարվեստական հետաքրքիր երևույթ է:

Զրույցը միջնադարում իմաստավորվել է իբրև ասք, առասպել, հեքիաթ, պատում, առակատիպ խոսք, դրվագ, «զրուցատրութիւն», «ոչ ըստ սովորական իմաստից»¹⁷: Թեև ճիշտ են այս իմաստավորումները,

¹⁵ Տե՛ս մանրամասն՝ Արեղյան Մ., Երկեր, Գ, էջ 24—25, 30—83, 514—525:

¹⁶ Նույն տեղում, էջ 179—189, 377—391, 580—581, Գ, էջ 66:

¹⁷ Адопц Н., Дионисию фракийский, с. 85.

սակայն նշվածներից յուրաքանչյուրն իր հերթին փաստորեն գրական մի ուրույն էպիկական ժանր կամ տեսակ է և ոչ մեկն ըստ էության գրույցի նմանակը չէ: Այսպիսի համադրումը վկայում է նաև այն, որ գրույցը, իրոք, միաբնույթ միատարր չէ: Դա ավելի որոշակի հաստատվում է միջնադարյան գրույցների համեմատության բնագրագիտական քննության, այդ ընթացքում նկատված ձևական ուղղվածքային տարբերությունների շնորհիվ:

Իբրև միջնադարյան գեղարվեստական արձակի բնորոշ տեսակ, գրույցը համեմատաբար զուլած գեղարվեստական ձև ու հորինվածք ունի, եթե նույնիսկ երբեմն հանդես է գալիս այլ երկերին զուգահեռ: Զրույցը շատ հաճախ հարուստ է համապատասխան կառուցվածքային, ոճաարտահայտչական բնորոշ տարրերով, հուշական լիցքով, կենցաղային բնույթի մանրամասներով, կերպարների շարժունակությամբ, աշխույժ տրամախոսություններով, պարզ ժողովրդական լեզվամտածողությամբ, նույնիսկ խոսակցական լեզվի որոշակի հետքերով:

Զրույցներում, կրկնում ենք, սյուժետային տարրի առկայությունը գրեթե պայման է, ինչ-որ չափով ու ձևով՝ ավարտուն, եթե նույնիսկ շատ փոքր է: Այս իրողությունը ավելի է ընդգծում դրանց գեղարվեստական բնույթն ու ժանրային պատկանելությունը: Ավելի գրավիչ և ազդեցիկ սյուժե ստեղծելու համար տեղ է տրվում երևակայությանը, միջնադարի մարդու հոգեբանությունն ու պատկերացումները հագեցնող հրաշապատում չափազանցությունը (հիպերբոլային), խորհրդանշանակությամբ ու ալլաբանությամբ հագեցած նկարագրական տարրերին: Զրույցները այս ձևով եթե մի կողմից իրականությունից «վեր» են մտնում, իսկ մյուս կողմից՝ հարստանում են գեղարվեստական գրականության ստեղծագործական այնպիսի տարրերով, որոնք այնքան էլ շատ չէին միջնադարյան արձակում:

Զրույցները ոչ միշտ, բայց հաճախ ունենում են գործողության որոշակի վայր, ժամանակ, մթնոլորտ և գործող անձեր:

Այն գրույցները, որոնք առնչվում են վարքաբանական գրականությանը, պատմում որևէ եկեղեցական գործչի, ճգնավորի, անապատականի կյանքի պախարակելի կամ ուսանելի առանձին դրվագների մասին, իհարկե, ավելի ընդհանուր են՝ բարոյախրատական երբեմն շատ պարզամիտ եզրակացություններով:

Այնքանով որ գրույցները հիմնականում պատմական, փաստացի հիմք ունեն և ավելի մոտ են իրականությանը, այն արտացոլում են ժամանակի արձակի իրապատական բուրբ հնարավոր միջոցներով՝ թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ: Դրանք մեծ մասամբ իրապատում են: Նույնիսկ այն գրույցները, որոնք «անիրական» կամ հրաշքներով հյուս-

ված հենք ունեն, դարձյալ ժամանակի իրականությունն են գեղարվեստականորեն անդրադարձնում, դարի մարդկանց համար լինելով հոգեվոր սննդի աղբյուր: Զրույցներում գործող անձինք հաճախ պատմական, ժամանակին ապրած և ստեղծագործած մարդիկ են: Պետք չէ անտեսել նաև գրույցների ճանաչողական և աղբյուրագիտական նշանակությունը:

Այս վերջին հատկանիշներով են առանձնապես հանդես գալիս վարդան Արևելցու գրույցները, մանավանդ այն խմբի նմուշները, որոնց հիմքում ընկած է փաստացի, պատմական իրականությունը: Դրանց մեջ գործող կենտրոնական անձնավորություններից են Հովհաննես Սարկավազը (XI—XII դդ.), Հովհաննես Գառնեցին (XII—XIII դդ.), Հովհաննես Տուեցին, Հովհաննես Բջնեցին (XIII դ.), որոնց շուրջ հյուսված հրաշքների փառապակը իրականության ժխտումը չէ, այլ պարզապես առավել ընդգծված գունազարդումների միջոցով նրանց վարկն ու համբավը արժեավորելու փորձ: Փաստորեն, գեղարվեստական հնարանքով, ստեղծագործաբար մոծված ոչ «իրական» մանրամասները ևս նպատակում են իրականության ճշմարտացի բացահայտմանը, միջավայրի, հոգեբանության, աշխարհընկալման, ինչպես և գործող անձանց կերպարային մատուցմանը: Դրանք այս կարգի «ծառայություն» ինչ-որ չափով լրացնում են գրույցների գեղարվեստականությունը և դաստիարակչական ներգործող ուժը:

Վարդան Արևելցու երկրորդ խմբի թարգմանաբար հայերեն փոխադրված գրույցները թե՛ բովանդակությամբ, թե՛ ձևով հայ իրականությանը նվազ առնչված լինելով, առանձնապես կարևոր նշանակություն չունեն: Դրանց հիմնական նպատակը բարոյախրատական քաղցրությունն է հանուն մաքրակենցաղության:

Վարդան Արևելցին այս խմբի գրույցներով իր դաստիարակչական սկզբունքներն ու ծրագրերն է արտահայտել, գոհացում է տվել միջին դարերի հասարակական, գրական և բարոյական պահանջներին, համընդհանրապես հայերեն գրույցագրությունը և զարգացրել հայ-ասորական գրական կապերը:

* * *

Շարականը, իբրև հոգևոր երգ, ուշագրավ տեղ է գրավում հայ քնարերգության մեջ, ինչքան էլ որ կոչված է եղել ծառայելու եկեղեցածիսական գործառնություններին¹⁸: Այն մեր ազգային գրավոր բանաս-

18 Շարականների մասին տե՛ս մանրամասն հատկապես՝ Ավետիսյան Գ., Բացատրություն շարականաց, Յ.Ա.Մ.Ս., Մարական богослужебные каноны, с. 1—XVIII.

տեղծութեան երախարհիքն է: Շարականներ հորինվել են V—XV դարերում: Կանոնականացվել են մինչև XV դարն ստեղծվածները: «Շարականոց» հայտնի ժողովածուն ունի հարյուրների հասնող միավորներ: Մտավորապես նույնչափ էլ պարականոն կամ անվավեր շարականներ են պահպանվել, որոնց արժեքը երբեմն ավելի է¹⁹: Շարականագիր հեղինակների մի ստվար աստղարույլ է գոյացել Սահակ-Մեսրոպիցի մինչև Կիրակոս Երզնկացի և ուրիշներ:

Շարականների պատմական զարգացումը երկու հիմնական շրջան ունի՝ վաղմիջնադարյան և զարգացած ավատապետության: Առաջինում հորինվել են գերազանցապես ազատ շափով, երկրորդում՝ բավականին հաճախ՝ կանոնավոր տաղաչափությամբ, երբեմն՝ հանգով:

Մասնագիտորեն ընդունվում է ժանրային երեք ենթատեսակ՝ կրցուրդ, օրհնություն, կանոն: Ն. Թահմիզյանը սրանց միացնում է նաև տաղը, բայց իրավամբ, «բառիս լայն» և ոչ նեղ առումով²⁰: Թերևս այդպես է նաև գանձը:

Յուրաքանչյուր շարական սովորաբար բաղկացած է լինում երեք, միայն առանձին դեպքերում 6—9 և ավելի պատկերներից:

Շարականը զուտ քնարական սեռի է, եթե նույնիսկ նրա հիմքում երբեմն ընկած է լինում Ս. Գրային, ավետարանական որևէ դրվագ կամ պատմական, վարքագրական, վկայարանական փաստացի մի իրողություն:

Շարական բառը կամ տերմինը կապվում է կարգ, սարք, շարք իմաստների հետ, այսինքն՝ օղակ-օղակ միանալով, շարականները կազմում են մի կանոն, մի շարք, ըստ այսմ էլ՝ յուրաքանչյուրը կոչվում է շարական, իբրև շարքի մեջ մտած միավոր²¹:

Ըստ ծիսակիրառական նշանակության, շարականները բաժանվել են խմբերի՝ Օրհնութիւն, Հարց, Մեծացուցէ, Ողորմեայ, Տէր յերկնից, Ճաշու, Մանկունք, Համբարձի, նաև ստեղի անվանումներով: Սրանք էլ կազմում են հայ կանոնը, որը կապվում է Ստեփանոս Սյունեցու (VIII դ.) անվան հետ:

Ter-Mikaelian N., Das armenische Hymnarium. Արեղյան Մ., Հոգևոր երգ. Երկեր, Գ, էջ 528—562, Հակոբյան Գ., Շարականների ժանրը: Тагмастик Н., Теория музыки в древней Армении, с. 93—126. Արզարյան Ա., Հիմներգության ժանրը, «Հայ միջնադարյան ժանրեր», էջ 93—126:

¹⁹ Ամատունի Ս., Պարականոն շարականներ:

²⁰ Թահմիզյան Ն., Նշվ. աշխ., էջ 236:

²¹ Արեղյան Մ., Նշվ. աշխ., էջ 536—537:

Շարականները բովանդակությամբ ու գաղափարական միտումով բավականաչափ բազմազան են: Ինչպես վերը նշեցինք, դրանք նվիրված են հաճախ Հին ու նոր կտակարանների, վարքավկայարանական գրականության, վանական բանահյուսության մեջ տեղ գտած առանձին դրվագներին, սրբացված անձանց, կամ՝ ապաշխարությանը, աշխարհուրացությանը, վարդապետական ու դավանաբանական դրույթների կարճ մեկնությանը, բայց նաև «աշխարհիկ», ազգային-հայրենասիրական թեմաներին: Ոչ միայն առանձին շարականներ, այլև ամբողջ կանոններ են հորինվել, որոնցում ազգային բարձր գիտակցությամբ և մեծ ռեզորությամբ փառաբանվում են Հայաստանի «քրիստոնեության լույսով» լուսավորվելը, հայ ժողովրդի «հոգևոր փրկությունը» հեթանոսական ալլասերումից, Գրիգոր Լուսավորչի, Տրդատի, Ներսես Մեծի, Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, բոլոր թարգմանիչների «լուսապայծառ» արարքները, գրերի գյուտը, վարդանանց և Ղևոնդյանց հերոսական նահատակությունը: Շարականագիրները, եթե մի կողմից իրենց բյուրապատիկ մեղքերին ներումն են հայցում, զղջման, արտասովալից պաղատանքի դիմում, հոգեկան տվայտանքներից թեթևանալու կամ լույս են աղերսում աշխարհային շարածին խավարից ազատագրվելու համար, մյուս կողմից՝ նույնքան և ավելի եռանդով խնկարկում են Աստծուն, որ փրկի հայ ժողովրդին օտար թշնամիների շարունակական հալածանքներից ու ավերներից:

Այս բոլորը նաև ազգային, հայրենասիրական բաղձանքների հրատակ զբսևորումներ են, որոնք հնչել են դարեդար, Հայաստանի և հայ ժողովրդի համար ծայրաստիճան դժվարին օրերին և փրկության հույս ներշնչել:

Ինչ խոսք, գաղափարական այս կարգի թեկուզ ոչ լիաբավ հագեցվածությունը որոշակի բարձրացնում է հայ շարականագրության արժեքը:

Շարականները, ճիշտ է, ընդհանուր առմամբ գեղարվեստական-բանաստեղծական, ձևակառուցվածքային և ոճաարտահայտչական միջոցներով համեմատաբար բազմազան ու հարուստ չեն, սակայն, ճիշտ չէր լինի նկատել ու չգնահատել նաև այս մարզում այն ամեն արժեքավորը, որ դրանց անկապտելի իրավունքն է: Շատ հաճախ դրանք ամենավառ պատկերավորությամբ և հուզականությամբ խտացնում են մարդկային ջերմ հույզեր, ապրումներ, տենչեր, հոգեբարոյական լիցք, ազատատենչ, հայրենասիրական ոգի...: Այլաբանությունը, խորհրդանշանակությունը, վերերկրային մթնոլորտն ու տրամադրությունը տիրական են. այդ էր թելադրում ոչ միայն իրենց նպատակը, այլև միջ-

նազարն ընդհանրապես, բայց և կան ճշմարտացիություն, իրականություն, երկրայինի ու մարդկայինի երակները:

Կուռ, ամբողջական է դրանց կառուցվածքը: Վերամբարձ, ավանդական, ընդհանրական պատկերավորության կողքին քիչ չեն ուրույնը, նորն ու բնականը: Լեզվաբանական առումով՝ նմանապես:

Շարականները լույս աշխարհ են գալիս պատկան երաժշտական եղանակի հետ միաժամանակ, թերևս միշտ միևնույն հեղինակի կողմից: Ըստ այսմ՝ նաև միջնադարյան հայ երաժշտության կորստից փրկված գոհարներ են, հայ արվեստի երկու բնագավառների երախտիբը: Եթե մի երջանիկ օր (համոզված ենք, որ այն գալու է) միջնադարյան հայ երաժշտության խաղերը վերծանվեն և շարականները հնչեն իրենց երբեմնի հարազատ բոլոր հնչերանգներով, դժվար կլինի պատկերացնել, թե որքան կհարստանա ոտք հայ հոգևոր մշակույթը:

Ժանրային այս հիմնական առանձնահատկություններով են օժտված վարդան Արևելցու ներբողները, ճառերը, զրույցները, շարականները, որոնց ավելի մանրամասն կծանոթանանք ստորև:

Բ. Գեղարվեստական ստեղծագործությունների գաղափարական բովանդակությունը

Վարդան Արևելցու ժամանակ, XIII դարում, Մեծ Հայքը գտնվում էր մոնղոլական տիրապետության տակ և զուրկ էր քաղաքական իշխանությունից: Հայ ժողովուրդը համատարած թշվառության մեջ էր: Բայց և այնպես, նույնիսկ այդ օրերին ինքնուրույն պետական իշխանության վերականգնումը դարձել էր համընդհանուր բաղձանք: Կրիկյան հայկական թագավորության գոյությունը, մոտ անցյալում Զաքարյանների գրաված հաջողակ դիրքը և Հայաստանի ու հայ իրականության նկատմամբ նրանց անմիջական շահագրգռվածությունը ավելի էր ոգևորել այդ երազանքը:

Ի տես այս պայմանների ու դրություն, Վարդան Արևելցին նպատակադրված շրջագայություններ է կատարում հայ ժողովրդի պատմության քառուղիներում, վերհիշում անցյալի խոշոր իրադարձությունները, ոգեկոշում մեծագույն անհատականություններին (քրիստոնեության մուսուրը Հայաստան, գրբրի գյուտը, հայ պետականության կորուստը..., ինչպես և՛ Գրիգոր Լուսավորչին, Տրդատին, Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին, Հովհաննես Օձնեցուն, Ներսես Շնորհալույն և ուրիշներին): Նրա նպատակն էր ոգեշնչել և հուսադրել իր հայրենակիցներին Հայաստանի երբեմնի «պանծալի» քաղաքական կյանքով և պետական ուժեղ իշխանությամբ, որոնք, այդուամենայնիվ, կարելի էր վերագտնել: Հեղինակի

անձնական ոգևորությունը չէր կարող չհամակել իր ընթերցողներին ու շրորբոթել նրանց ազատատենչ ու հայրենասիրական զգացումները: Նա չի բավարարվում քրիստոնեության՝ Հայաստան բերած «լույսի» զորվատումով, հատկապես նշում է հասարակական ու քաղաքական այն տեղաշարժերը, որոնք տեղի ունեցան այդ առիթով: Քրիստոնեությունը մուսուր գործելով Հայաստան ինչպես էր սատարում արքայական տան հզորացմանը, օժանդակում միապետական-ավատական իշխանության կենտրոնաձիգ զարգացմանը և քաղաքական ուժերի համախմբմանը: Գրիգոր Լուսավորչի «ծոռներին» նվիրված ներբողում այս առիթով գրել է. «Գեղեցկանայր ազգն Գեղամայ և պերճանայր կողմն Սիսակայ: Ազգըն Արամայ զարմանալի փառաց հասանէր և տոհմն Ազբանազայն սիրելի Քրիստոսի լինէր: Արարատեանն թագաւորութիւն բարձրացեալ ճոխանայր, քան զազգս բազումս»: Ինչ խոսք, Վարդան Արևելցին, հենց այնպես, զուտ հոետորական կամ գեղարվեստական նկատառումներով չէ որ գրել է այս տողերը: Հայաստանի բարվոք անցյալի այս վերհիշը շատ համահնչուն էր տվյալ ժամանակի հայ մարդու քաղաքական հեռամետ ցանկությունն ու ակնկալություններին: Հայոց սոցիալ-քաղաքական միջավայրը անուղղակի պահանջ էր ներկայացնում, որ վկայակոչվեին, վերականգնացվեին հայրենի երկրի անցյալ փառքերը, հատկապես ռազմաքաղաքական և մշակութային-գաղափարական ոլորտներին, ոչ միայն միթիթարության համար, այլև գործարար նպատակներով: Վարդան Արևելցին բացահայտ միտումով խրախուսում է իր ժողովրդին, որ հակառակ ներկայի դառն ու հուսալքող վիճակին, պետք է հստակ գիտակցեր, թե Հայաստանը կարող է նորից ձեռք բերել ինքնուրույնություն և ազատ քաղաքական իշխանություն:

Նման իրավիճակների ու երևույթների խորամիտ քննությունների հիման վրա շատ տեղին և իրավացի է Մ. Արևելցանի հետևյալ եզրակացությունը. «Եվ ահա հայոց թագավորության (Բագրատունիների—Փ. Ա.) անկումից հետո Մեծ Հայաստանում, սելջուկյան թուրքերի տիրապետությունը դեռ չհաստատված, սկսվում է հայոց քաղաքական իշխանությունը վերականգնելու երազը և դրան նվիրված բանաստեղծությունը-հայրենասիրական ողբերգությունը, իր երկու պատկերով՝ փառավոր և զվարթ անցյալի և անշուք ու տխուր ներկայի...: Համազգային հայրենասիրության գաղափարն ու զգացումը՝ ծնվելով ժողովրդի դառնաղետ վիճակից հետզհետե, իշխանական տների անկման և ազնվակա-

1 Ներբողան ի վահրամ, ձեռ. № 8775, Բ. 312ա:

նության ոչնչացման հետ, ընդհանրանում է, ազգային միության ազդակներին մեկը դառնում»¹:

Սույնը լիովին վերաբերում է Վարդան Արևելցու ժամանակին, ստեղծագործությանը և բաղձանքներին: Գարձալ նույն ներբողում միևնույն նպատակներով, ինքնագոհ հպարտությամբ գրում է. «Վերանայր ազգն Աղքանազեան և տունս Թորգոմայ ի բարեբեր բարունակս՝ արձակելով շառաւեղս ոստոց ի ծովէ մինչև ի ծով, ի գետոց մինչև ի ծագս աշխարհի»²: Ազգային արժանապատւության զգացումով և առանց ավելորդ պարծենկոտության է նա գրում հետևյալը, երբ խոսում է Գրիգոր Վկայասերի գրական գործունեության մասին. «...զորս նա (Գրիգոր Վկայասեր— Փ. Ա.) ոչ կամեցաւ թողուլ այլոց ազգաց պատճառս պարծանաց ունել ինչ աւելի քան զմեզ»³: Պարզ է նաև այս տողերի «միտք բանին»՝ ներշնչել հատկապես այդ օրերի հայ մարդուն, որ ինքն էլ մարդ է, ժողովուրդ է աշխարհի մյուս մարդկանց և ժողովուրդներին մասն, նույնիսկ նրանց, որոնց կրնի տակ և քաղաքական սաղոսանքների մեջ այնքան ծանր օրեր է ապրում, բայց, որոնք շունեն ավելի «պատճառս պարծանաց», քան ինքը:

Նշելի է Վարդան Արևելցու այս վկայությունների ոչ միայն հասարակական-գաղափարական արժեքը, այլև դրանցում արտացոլված են նրա հոգեկան աշխարհը, ժողովրդասիրությունը, հայրենասիրությունը. հատկանիշներ, որոնք նրան դարձնում են սովյալ ժամանակի առաջատար դեմքերից մեկը:

Անցյալի ոգևորող վերհուշի միջոցով հայ ժողովրդի ժամանակակից հոգեվիճակի և հոգեբանության վրա ներգործելու համար Վարդան Արևելցու սույն քայլը, իհարկե, միակը չէ մեր գրականության մեջ: Այն և՛ նախապես, և՛ հետագայում կիրառվել է նաև մեր մյուս հեղինակների, հատկապես հայ պատմագիրների և տաղերգուների կողմից⁴:

Այս հույզերից ու նկատառումներից ելնելով է, որ Արևելցին ծանր վիշտ է ապրում հայ պետականության անկման տխուր փաստերն արձանագրելիս: Բայց դա այն հուսալքող վիշտը չէ, որը բխում է անդարձ կորստից: Ընդհակառակը, այդ կորստի վերականգման անհրաժեշտությունն ավելի շեշտելու, կենսական պահանջ դարձնելու ներքին մղումն է: Վարդան Արևելցին ողբում է ոչ նրա համար, որ նույնը փոխանցի իր

ունկնդրին ու նրանից արցունք խլի, ողբում է, որպեսզի նրան փոխանցվի անհանդուրժողություն՝ ազգային սեփական իշխանությունից զուրկ իր վիճակի հանդեպ: Այս տեսակետից հատկապես ուշադրության արժանի է հայ գրերի գյուտին նվիրված նրա ներբողը, որտեղ այս մասին կարդում ենք. «Եվ բարձեալ էր թագաւորութիւնն հայոց ըստ սրբոյն Սահակայ տեսլեանն, քայքայեալ էր վայելչութիւն աշխարհիս հայոց և սպառեալ ուսումնասիրութիւն...»⁵, կամ՝ «Ո՛ւր են առաջնորդքն մեր բարեփառք, թագաւորքն մեր յաղթողք, իշխանքն մեր սկայազունք, ժողովուրդքն մեր խրախացեալք, յորժամ ցնծայր երկիրն հայոց, յորժամ զըւարճանայր ազգս արամեան, յորժամ բերկրէր ի բարեկրութեան, յորժամ խնդայր ի խրախութեան, յորժամ երանէր ամենայն ազգաց»⁶: Այս խոսքերը վերաբերում են Արշակունյաց թագավորության վերացման օրերին: Սակայն դյուրին է նկատել, որ դրանք հավասարապես վերաբերում են հեղինակի ապրած ժամանակաշրջանին և ասված են այդ դարի հայ մարդու համար: Այդ օրերին Մեծ Հայքի որևէ բնակիչ սիրով կարտասաներ հիշյալ խոսքերը. այնքան դրանք համահնչուն էին իր պայմաններին և հոգեկան դրությանը: Վարդան Արևելցու հասարակական այս տրամադրությունները անպայման պետք է ունենային ներգործուն և հեռամեծ նշանակություն: Այս է, մեր կարծիքով, նաև այն գլխավոր գործոններից մեկը, որով սովյալ ժամանակաշրջանը Վարդան Արևելցուն հանել էր ազգային հասարակական լայն ասպարեզ:

Հատկանշական է, որ Արևելցին իր վշտակցության մեջ շեշտը դնում է Հայաստանի ռազմական ուժի կործանման տխուր փաստի վրա: «Աղեղնաւորք քո անկման—, գրում է նա,— և սուսերաւորք քո կործանեցան, քաջազունք քո վրիպեցան և զօրաւորք քո վիրաւորեցան...»⁷: Այստեղ էլ նրա նպատակը պարզ է: Չէ՞ որ նաև XIII դարի հայության համար սրանք էին այն ամենահուսալի ուժերը, որոնք կարող էին վերականգնել հայոց պետականությունը:

Գիտելի է միաժամանակ, որ հեղինակն իր հայրենասիրությունը դրսևորում է ոչ երբեք միակողմանի տրամադրություններով: Գիտե նաև հանդիմանել ազգի թերացումները: Այս կասկածությունները սույն ներբողում կարդում ենք. «Հաք և մեք քան զազգս բազումս խաւարատանջ, մառախլամած, յուսակորոյսք»⁸, իսկ գրերի գյուտին նվիրված ներբողում նա տիեզերքին է դիմում այս առիթով ողբակցելու իրեն. «Ողբա-

¹ Արեղյան Մ., Երկեր, է, էջ 329:

² Նույն տեղում, թ. 312ա:

³ Ներբողեան ի Վահրամ, ձեռ. № 8775, թ. 303բ:

⁴ Ներսես Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, էջ 30—41, 58 և այլուր: Ավգարեղյան Մ., Խաչատուր Կեչառեցի, էջ 98—99, 129—133: Ստեփանոս Օրբելյան, Ողբք եւ հառաչանք, էջ 1—38:

⁵ Ներբող գրերի գյուտին, ձեռ. № 8775, թ. 288ա:

⁶ Նույն տեղում, թ. 290բ:

⁷ Ներբողեանի Գրիգոր Լուսաւորիչն, թ. 241ա:

⁸ Ներբողեան յորդիս և ի թողունս, թ. 277ա:

ցէ՛ք երկինք և երկիր, ծառք անտառի և ծաղիկք դաշտի, լեռինք և բարձունք և բոյսք ամենայն, զանձուութիւն ազգիս մերոյ, ևս առաւել՝ զթագաւորաց մերոց զանզգամութիւն...»⁹։ Թերթելով հայ ժողովրդի պատմութեան էջերը, խորաթափանց մտքով վերլուծելով իրադարձութիւններն ու երևույթները, Արևելցին ամփոսանքով խոստովանում է, որ երբեմն «մատախլամած» մեր հեռատեսութիւնը, թագավորների «անզգամութիւնը» իրենց տխուր հետքն են թողել այդ պատմութեան առաջընթացի վրա։ Մեկ այլ ներբողում, հետևելով Մովսես Խորենացու օրինակին, դառնութեամբ արձանագրում է. «...բայցայնալ էր վայելչութիւն աշխարհիս հայոց և սպառեալ ուսումնասիրութիւն, աղօտացեալ էր կարգաւորութիւն և բազմացեալ անկարգութիւն, նսեմացեալ ճշմարտութիւն և զօրացեալ ստութիւն...»¹⁰։ Վարդան Արևելցու սույն խոսքերի մեջ ամփոսանքի և վշտի հետ միասնաբար հստակորեն ի հայտ է գալիս հեղինակի որոշակի միտումն այն մասին, որ վերոգրյալները մեր խոցերն են եղել, որոնք այլևս տեղ չպետք է գտնեն մեր կյանքում։ Սույնը բխում է ոչ միայն իր ժողովրդի հանդեպ ունեցած Վարդան Արևելցու բարի ցանկութեանց, այլ նաև նրա ազգային արժանապատւութեան կենդանի զգացումից, որն այս պատճառով խորապէս վերավորված է։ Վարդան Արևելցին ամբողջ էութեամբ սիրում է իր ժողովրդին և նրա մասին մեծ համարում ունի, այդ պատճառով էլ չի հանդուրժում նրա թերացումները։ Տեսնելով, որ Հայաստանում երբեմն «Սուր և որոգայթ զմիմեանս փոխանակեն», նրա համար միշտ էլ իր երկիրը «գաւառ գեղեցիկ, աշխարհ՝ արևելյան, հուպ առ եզեմ» է, իսկ ժողովուրդը՝ «ազգ բնտիր, ժողովուրդ սեպհական»¹¹։ Միջնադարյան պայմաններում նման խոսքերը արտօրինակ կլինէր կապել որևէ ձևի ազգային պարծենկոտութեան հետ, մանավանդ այնպիսի մի ժողովրդի զավակի համար, որը ոչ մի անգամ չի հատկանել ու չի փորձել իր «գերազանցութիւնը» տարածել մեկ այլ ժողովրդի վրա։ Այստեղ պարզապէս մի փոքր խտացված են իր ժողովրդին բարոյալքված, անհեռանկար շտեմելու Վարդան Արևելցու հայրենասիրական ձգտումները։ Այս առիթով նա, ճիշտ է, ողբում է, բայց նաև տեղին հանգիմանում, զգուշացնում, որպեսզի հայ ժողովուրդը անհրաժեշտ հետևութիւններ անի։ Ահա թե ինչու «Ռ՛հ գառնութեանս, աւա՛ղ կորստեանս... վա՛յ վըշտիս»¹² բացականչելուց հետո, նա զգաստութեան, ինքնաճանաչման կոչ է անում հայ ժողովրդին՝ «Մանի՛ր

զլաւութիւն քո... Մանի՛ր զազնութիւն քո...»¹³։ XIII դարի վերոգրյալ դժվարին սոցիալ-տնտեսական և քաղաքական «մատախլամած» պայմաններում տոշորվող ժողովրդի համար, քանի դեռ նա ուզում էր ապրել, այդ կոչը ամենօրյա հացի պես անհրաժեշտ էր։ Այս կոչով Վարդան Արևելցին հստակորեն նկատում է պատմութեան մեջ ժողովրդի ունեցած կարևոր դերի հարցը։ Ինքնագիտակցութիւնը, ինքնաճանաչումը ժողովուրդների կյանքում պատմաքաղաքական մեծ ուժ է։ Այդ էր ուզում տեսնել նաև Վարդան Արևելցին իր ժողովրդի կյանքում. քանի դեռ որևէ ժողովուրդ չի ճանաչում ինքն իրեն, ապրելու, գոյատևելու իրավունք նվաճած լինել չի կարող։

Վարդան Արևելցու ողբի մեջ անկումային լավանութիւն չկա, այլ, ընդհակառակը, կա առողջ քաղաքական տեսադաշտ և հայրենասիրական հուզում։ «Համազգային հայրենասիրութեան գաղափարն ու զգացումը՝ ծնվելով ժողովրդի գառնազետ վիճակից՝ հետզհետե ընդհանրանում է, ազգային միութեան ազդակներին մեկը դառնում, անբաժան մնալով թշվառ ու տանջվող ժողովրդի վիճակի արտահայտութիւնից...» — այս կապակցութեամբ գրել է Մանուկ Արեղյանը¹⁴։ Այս ընդհանրացնող տեսութիւնը բնութագրում է հայ մատենագրութեան միջին դարերի գրեթե բոլոր աչքի ընկնող հեղինակներին, որոնք իրենց ազգային վշտի մեջ անպայման դնում էին հայրենասիրութեան կրակը։ Դա այնպիսի հայրենասիրութիւն էր, որը, դարձյալ նույն մեծանուն գիտնականի բնորոշիչ արտահայտութեամբ, կոչվել է «հայրենասիրական ողբերգութիւն»¹⁵։

Խոր հայրենասիրական շարժառիթներ ունի Վարդան Արևելցու գնահատութիւնը հայերեն գրերի գյուտի, այն կյանքի կոչած ու կիրառութեան մեջ դրած անձանց նկատմամբ։ Նա հիանալի գիտակցում էր մշակութային և քաղաքական այդ մեծ իրադարձութեան պատմական նշանակութիւնն ու դերը հայ ժողովրդի կյանքում՝ թե՛ հինգերորդ, և թե՛ հետագա դարերում։ XIII դարի սոցիալ-քաղաքական դժվարին պայմաններում իբրև ժողովուրդ տոկալու և գոյատևելու համար անհրաժեշտ էր հայ ժողովրդին հիշեցնել նաև V դարի ազգային-քաղաքական և մշակութային մեծ դարձումը։ Վարդան Արևելցին ավելի քան համոզված է, որ ժողովուրդների կյանքում գրին ու դպրութեանը միշտ էլ բարձր ու բախտորոշ տեղ է վերապահված ոչ միայն մշակութային ասպարեզում։ Գրերը վեր են ակամա պարտավորութիւններից, օժտված են հասարա-

9 ներբող գրերի գյուտին, Թ. 290բ։
 10 նույն տեղում, Թ. 290բ։
 11 նույն տեղում, Թ. 290բ։
 12 նույն տեղում, Թ. 290բ։

13 նույն տեղում, էջ 290բ։
 14 Արեղյան Մ., երկեր, Գ, էջ 580։
 15 նույն տեղում, էջ 580։

կական ներգործուն ուժով, մարդկությանը օգտակար լինելու լայն հնարավորություններ ունեն, կաշկանդված շեն սոցիալական ու քաղաքական զանազան բռնադատություններով: Ահա թե ինչ զորություն է վերազրբվում գրին այս նույն ներբողում: «Մեծատանց ակն ոչ առնուս և չիշխանաց ոչ երկնչիս... ի հօրաց ոչ զարհուրիս և տկարաց ոչ ողորմիս... առ երես յանդիմանես և դէմ ընդ դէմ նախատես, յայտնապէս խայտառակես և ի հրապարակս պարսաւես... հրապարակագոյժ զանասելիսն առնես և առաջի բազմաց ամաշեցուցանես...»¹⁶:

Այդ խոշոր իրադարձությամբ իրապես էլ իրերի դրությունը Հայաստանում այլ ձև ու վիճակ էր ստանում: Հայ ժողովուրդը քաղաքականապես կազդուրվում, հոգեպես գոտեպնդվում, իմացապես պայծառանում էր: Չէ՞ որ «տգիտութեան խաւար»-ը Հայաստանից հեռանում էր այնչափ, որչափ «Արևելքն էր հեռու Արևմուտքից»: Այլևս ոչ ոք ըստիպված չէր լինի գնալ սրա կամ նրա մոտ խնդրելու «թէ՛ ծանո ինձ զայս» այլ բոլորն անխտիր, թե «վերին»-ները և թե «ոսմիկ»-ները, այսուհետև կձանաչելին կյանքի ճշմարտությունը¹⁷: Գոհունակ սրտով նա գտնում է. «Արդ երազեսցէ կազուրիս լեզուիս մերոյ, որ ոչ կարէր զխաղտախտուլտ աւտուոցն բարբառել, կամ գլունարէն ծեքածուռն ծէթէթէլն: Այժմ պարզեսցին լեզուք ծանրախօսք և զօրասցի տկարութիւն գիտութեան մերոյ»¹⁸: Ըստ նրա, պետք չէ անմասն մնալ այդ նվիրական պարզեկից: Նա ուրախությամբ արձանագրում է, որ հայ ժողովուրդը կարողացավ ճիշտ ըմբռնել իր այբուբենի նշանակությունը, ըստ արժանվույն գնահատել այն և բախտորոշ մի ժամանակաշրջանում անմիջապես ձեռնամուխ լինել դրա կիրառմանը:

Նրա բարձր տրամադրությունը հասնում է մինչև իսկ պատանեկան ոգևորություն: «Այժմ ի խնդութենէ ի վեր վազեմք—, գրում է նա,— կայթեմք ձեռք, կաքաւեմք ոտիք, պարեմք ամենեքեան», որովհետև հայրենի երկրում «փարատեցաւ նսեմութիւն խաւարի, տարածեցաւ լոյսն, ծաւալեցաւ ճառագայթն»¹⁹: Նա շատ լավ է պատկերացնում հայ ժողովրդի այն օրերի ցնծության շափն ու սահմանը, որոնք ավելի են խորացնում իր լավատեսությունն ու հոգեկան հրճվանքը:

Վարդան Արևելցին ականածանքով և հպարտությամբ է պատմում այն անձնավորությունների մասին, որոնք հղացան, ի կատար ածեցին հայերեն գրերի գյուտը և կիրառություն մեջ դրեցին այն:

Նրա երախտագիտության մեծ բաժինը, անշուշտ, վերաբերում է Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին: Վերջինս, ըստ Վարդան Արևելցու, շատ ճիշտ էր ըմբռնել ժամանակակից բարդ իրադրությունը, իր երկրին ու ժողովրդին սպառնացող վտանգը, ժամանակի պահանջներն ու թելադրությունները և կանխատեսել դրանք կենսագործելու լավագույն հնարքը: Մանր մտորումներից հետո գալիս է այն վերջնական եզրակացություն, որ հայ ժողովրդին պետք է մատուցել ամենահուսալի զենքը, որպեսզի նա գոյատևի և ստեղծագործի: Այս կապակցությամբ գրերի գյուտին նվիրված ներբողում կարդում ենք նաև հետևյալը. «Սուր Մեսրոպ... բազում ջանս յանձին կալեալ վասն գիտի գրիս մետոյ, զի ազատեսցէ զագգս հայոց ի յունական լեզածայր փստածալ ծեւեւեւայիցն, մանավանդ, զի հոլով լինէր վրիպումն շահից հոգևոր գանձուց վասն այլալեզու հեզեւայիցն ի տառատպուրիս օտարասեռ սիզարայից»²⁰:

Այստեղ շատ մեկին է ասված թե որքան «հոլով լինէր վրիպումն շահից հոգևոր գանձուց», երբ սեփական գրով չէ որ ժողովուրդը հեզում է իր խոսքը և արտահայտում իր միտքն ու հույզերը: Իսկ, երբ արդեն տեղի էր ունեցել հայերեն գրերի հանձարեղ գյուտը, հայ դպրության բազմաթիվ մշակներ, Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ, եռանդազին լծվում են ուսուցողական, թարգմանչական ու մատենագրական աշխատանքի: Վարդան Արևելցին հայտնում է, որ ուսուցման նպատակով հավաքագրված պատանիները ոչ միայն սովորեցին «գուսումնականն, զբնարանականն և զքերդողականն և զայլսն ամենայն, որք են Ժ(10) թուվ մասունք իմաստասիրութեան, բաժանեալք ի տեսականն և ի գործնականն»²¹, այլև «ոմանք ի գծագրութիւնս տառից շահաւորեալ և ոմանք ի նիւթոցն պատրաստութիւն, բայց յիմաստութիւն ամենեքեան դեզերէին, հաւաքելով լինքեանս զհոյս իմաստիցն, իբր զիմաստուն մեղու ժիր և գործունեայ՝ զանօսրագոյն և զշահաւէտ ծաղիկս հաւաքէին և զխոտանսն ի բաց ընկենուին»²²:

Մասնավորելով իր խոսքը հատկապես այն թարգմանիչների մասին, որոնք իրենց ուսումը կատարելագործելու համար մեկնել էին Ասորիք, Աղեքսանդրիա և Բյուզանդիոն, Վարդան Արևելցին ոչ առանց հատուկ նպատակի է նկարագրում և գիտակցաբար շափազանցում այն բոլոր զժվարությունները, որոնք ծառայել են նրանց առաջ, որպեսզի ավելի շեշտի նրանց գործի մեծությունն ու անհրաժեշտությունը և

16 Ներբող գրերի գյուտին, ձեռ. № 8775, Բ. 283բ:
17 Նույն տեղում, Բ. 283բ:
18 Նույն տեղում, Բ. 282բ—283ա:
19 Նույն տեղում, Բ. 283բ:

20 Նույն տեղում, Բ. 281ա:
21 Նույն տեղում, Բ. 286ա:
22 Նույն տեղում, Բ. 286ա:

դրանք օրինակ ծառայեցնի իր ժամանակի հայ մարդկանց, որ նույնպես կարողանային ազգօգուտ գործ կատարել: Առաջին թարգմանիչներն, ըստ Արևելցու «զմահ առանկ քան զկեանս ընտրելին»²³, Եվ ահա նրանք վերագոռնում են հայրենիք, «ունելով ընդ ինքեանս բռնին շահաւէսս և արդիւնարարս, մարգարիտս գեղեցիկս և ականս պատուականս՝ զբահոճականն, զատենականն, զկայքդականն և զաստուածաբանականն, զարդարելով զՀայք իմաստութեամբ, և վեհագունիցն յունաց՝ պանծալիս ցուցանելով զգիտութիւնս մեր աղգաց բազմաց»²⁴: Այդ նրանք էին, որ իրրե «բանաւոր ծիծռունքն, ողջախոհ տատրակքն... մրափելոցն զարթոցիչքն, մոլորնլոց դարձոցիչքն, խաւարելոց լուսաւորիչքն... ծերոց նեցուկքն, մանկանց դաստիարակքն... հասարակաց քաջալերիչքն, ազգիս երախտաւորքն»²⁵ լույսով ու գիտութեամբ ողողեցին Հայաստանը:

Վարդան Արևելցին քանիցս հիշատակել է նաև Հայաստանի դպրոցական, լուսավորական գործի մասին: Մեզ արդեն ծանոթ է Գրիգոր Լուսավորչին նվիրված ներքոյի պարբերությունը, որտեղ խոսում է այն մասին, թե ինչպես Գրիգոր Լուսավորիչը դպրոցներ է բաց անում, որտեղ ուսուցանում էին հունարեն, ասորերեն և պարսկերեն լեզուները: Ապա գալով V դար, երբ արդեն դպրոցների և՛ թիվն էր բազմացել, և՛ դիմազիծը փոխվել՝ «զի «Հայրենականան վարէին», նա այլ վկայութուններ թվում հայտնում է, որ թարգմանիչները ևս «ուսուցանէին, կրթէին, վարժէին, պայծառացուցանէին... և այսպիսի հանգիսիք կացեալք՝ փայլեցան, պայծառացան»²⁶: Իրենց հայրենանվեր գործունեութեամբ նրանք հորդառատ լույս էին՝ բացված հայոց երկրի «խաւարամած» մթութեան վրա, հայ կյանքի «աղ»-ն էին ու «փառք»-ը: «Վասն որոյ աղ եղեն երկրի և լոյս աշխարհի և փառք ազգիս մերոյ», — գոհունակութեամբ եղբակացնում է նա²⁷:

Թարգմանիչներին է նվիրված նաև նրա «Որք զարդարեցին» շարականն ամբողջությամբ, որտեղ նմանապես գովերգում է նրանց ազգանվեր գործը. «Որք զարդարեցին... հաստատելով յերկրի ըզգիք կենդանի՝ հովիւել զհօտ նոր իսրայէլի... որք նորափետուր բանիւ զարդարեալք՝ պայծառազգեցան... զլոյս իմաստից ի մեզ ծագելով...»²⁸:

Այդ գործին նվիրված մշակը իրապես «աղ» և «փառք» է իր երկրի համար, ինչպիսիք էին թարգմանիչներն ու հայ դպրութեան մյուս երախտավորները, ինչպիսին էր ինքը: Զո՛ւր են հետնորդները նրան կոչել «երկրորդ լուսավորիչ» և «թարգմանիչ»²⁹: Իհարկե՛ն ոչ: Զէ՛ որ նա է, որ ամենայն անկեղծությամբ դիմում է ժողովրդին, որպեսզի վերջինս լիաբուն օգտվի իր նորաստեղծ գրերից, մոտ կանգնի մշակույթին ու գիտութեանը. «Փութացարուք հաւատացեալք ժողովուրդք աստուծոյ, եկայք ճաշակեցէք, եկայք զմայլեցարուք, եկայք արբեցարուք հոգևոր արբեցութիւն... ոչ սղիւ վաճառեալ, այլ՝ ձրի պարգևի»³⁰:

Սեփական գրերի գյուտի, Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների ազգանվեր գործունեության շնորհիվ հայ ժողովուրդը հարստացնում է իր հոգևոր գանձաբանը: Ոչ միայն օտար ժողովուրդների զրական լավագույն կոթողներն են հայերենի վերածվում, այլև ստեղծվում են ուրույն, ազգային մեծարժեք ստեղծագործություններ գիտութեան ու գրականութեան գրեթե բոլոր բնագավառներում: Վարդան Արևելցին հենց այս էլ նկատի ունի, երբ գրում է, թե թարգմանիչները անշափ ճոխացրին հայ գրականութունը, «Ճառիք ներբողենեօք, պատմութեամբք հոգևորօք, իմաստիք զսրմանալիօք, մեկնողութեամբք տառից, թարգմանութեամբք, տառասպութեանց յօրինմամբք»³¹: Զափագանց ուշագրավ է այն, որ այս առիթով նա ամոթանք է տալիս որոշ դժգոհ տարրերի, որոնց կարծիքով հայերը իզուր էին Սուրբ Գիրքը թարգմանել հայերենի. «Յամօթ լիցին այնոքիկ, որք ասէին, թէ բնաւ ընդէ՛ր թարգմանեցին ի հայ բարբառ զԳիրս Սուրբն»³²: Թեպետ սույնի աշուտ նախանշույլը առկա է Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատութեան մեջ³³, սակայն Վարդան Արևելցու մոտ՝ ավելի որոշակի է: Գծվար չէ նկատել, որ հիշյալ վկայությունը արժեքավոր է ոչ միայն իր տրամադրությամբ ու ոգով, այլև պատմական նշանակությամբ: Հայաստանի այն ժամանակվա խառը իրադրության մեջ, երբ մի շարք հակադիր ուժեր մարտնչում էին իրար դեմ, նման մի մեծ մշակութային-քաղաքական իրադարձություն չէր կարող իր հակառակորդները շունենալ: Հունական ու պարսկական հզոր պետությունները մրցակցում էին Հայաստանը նվաճելու համար, բացահայտ պայքարի մեջ էին Հայաստանը ողողած հույն և ասորի մոլեռանդ քարոզիչները մի կողմից՝ իրար, մյուս կողմից՝ հայ հոգևորականութեան դեմ: Նրանցից յուրաքանչյուրն,

23 Նույն տեղում, թ. 285ր:

24 Նույն տեղում, էջ 287ա:

25 Նույն տեղում, թ. 292ա:

26 Նույն տեղում, թ. 294ա:

27 Նույն տեղում, թ. 294ա:

28 Շարակնոց, էջ 558—559:

29 Մատենադարան, ձեռ. № 3078, թ. 118ա:

30 Ներքոյ գրերի գյուտին, ձեռ. № 8775, թ. 284ա:

31 Նույն տեղում, թ. 293ր:

32 Նույն տեղում, թ. 281ա:

33 Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 78:

անկասկած, հետապնդում էր իր շահերն ու նպատակները, որոնց քաղաքական էությունը շատ որոշ էր: Եվ երբ հայ հոգևորականության հայրենասեր ողջ մեծամասնությունը Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ հեռատեսուրեն ընտրում է պայքարի ամենահուսալի միջոցը, պարզ է, դրանից դժգոհ պիտի մնային բոլոր նրանք, որոնց դեմ ուղղված էր այն: Չէ՞ որ գրեթե գյուտով և դրան անմիջապես հաջորդած դրական-թարգմանչական գործունեությամբ վտանգվում էին նրանց ակնկալությունները, ծրագրերը և իրիստ փոքրանում ազդեցություն ունեցողները: Հայ ժողովուրդը գտնում էր ինքն իրեն: Իսկ դա հիշյալ «դժգոհ տարրերի» համար երբեք էլ ցանկալի լինել չէր կարող. բնական է, որ նրանք կսկսեին վատաբանել նրանց Սուրբ Գրոց թարգմանության համար: Ահա թե ինչու այնքան տեղին է վարդան Արևելցու հանդիմանությունը, որով մի անգամ ևս բարձր է գնահատում Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը և դրանով՝ V դարի ողջ գրական-քաղաքական զարթոնքը:

Հայերեն գրերի գյուտի և դրանով սկիզբ առած մշակութային մեծ շրջադարձի գնահատության ժամանակ վարդան Արևելցին չի մոռանում ներբողել նաև բուն գրերը: Անկեղծ և երախտալից հուզումով է երգում նա մեսրոպաշունչ այդ տառերը, որոնք անսպառ պարզևներ էին բերելու հայ ժողովրդին իր ամենազմեղակ օրերից մինչև այսօրվա իրականությունը:

Ո՞վ գերապանծ գիր դարմանալի,
 Ո՞վ հիանալ տիպ գերազարդեալ,
 Ո՞վ սըխբալի սանդուխտք մեր էլից...
 Եւ արդ՝ զ՞ինչ զքեզ կոչեցից, ո՞վ գիր...
 Իմանալի՞, թէ՞ զգալի,
 Երկնա՞յին, թէ՞ երկրային,
 Աստուածա՞յին, թէ՞ մարդկային...
 Զթաքունսն պատմես,
 Զանճառելիսն ի լոյս ածես...
 Յուսադրես, նորոգես,
 Հաստատես, փրկես...»³⁴:

Արդար և սքանչելի եզրակացություն: Հազիվ գտնվի մի այլ հեղինակ միջնադարում, որն այսչափ իրատեսությամբ և ակնածանքով գնահատած լինի գիրը: Ի՞նչ մեծ ուժ ու իմաստություն կա նրա այս գնահատության մեջ, որն հնչել է ավելի քան 700 տարի առաջ:

Ի՞նչ երախտագիտություն և սեր պիտի ունենար նա հայոց գրերի հանդեպ, որպեսզի գրեր հետևյալ տողերը. «Յերկրայս գոմ, թէ՛ զի՞նչ

զքեզ ասացից, դեգերեալ եմ առ դըլլունս քոյլ, վարանեալ գոմ առ բանի քոյ, տարակուսիմ ևս առ ըստքսի քոյ, նեղիմ յեղանակաւ քոյ, տանջիմ ի ներբողել քոյ...»³⁵:

Թվում է, թե նրա համար իբր այնքան էլ պարզ չէ, թե հայոց «գերապանծ» գրերը «երկնա՞յին, թե՞ երկրային» են, մինչդեռ իրականում ավելի քան հասակ է, որ դրանք և՛ այս են, և՛ այն, «սխրալի սանդուխտքն» են մեր բոլոր ելքերի ու վերելքների: Գրանք մեզ հուսադրում են մեր կյանքի ամենազմեղակ օրերին, նորոգում նորանոր լիցքերով ու խանդավառությամբ, հաստատուն պահում մեր համոզմունքների, հույսերի և երազանքների մեջ, փրկել են ամեն անգամ, երբ այդ անհրաժեշտ է եղել: Այս է «բանիբուն» վարդան Արևելցու կարծիքը հայոց մեսրոպյան գրերի մասին:

Այսպիսով, վարդան Արևելցու գեղարվեստական երկերի գաղափարական բովանդակությանը անդրադառնալիս չի կարելի չնկատել հեղինակի պատմական իրատեսությունն ու հեռատեսությունը, իր երկրի և ժողովրդի օրվա ցավերով տվյալ տղ քաղաքացու մտահոգությունները, անցյալի փառքերով հպարտ, ապագայի նկատմամբ լավատես մատենադրի ու հասարակական գործչի խոր, գիտակցված և կենդանի հայրենասիրությունը: Ահա թե ինչու նա միանգամայն համոզված ազգաբարում է՝

«...Որ քակէ զցանկ հայրենի,
 Հարցէ՞ զնա աւճն թունալի»³⁶:

Գ. Ստեղծագործական հնարանները

Վարդան Արևելցու գեղարվեստական բնույթի երկերի առանձնահատկությունները բազմազան են և ուշագրավ: Գրանք թեև միջնադարյան գեղարվեստական խոսքի այնքան էլ մեծարժեք նմուշներ չեն, բայց, անկասկած, ունեն գնահատության արժանի հատկանիշներ: Հեղինակը օժտված է գրողի շոշափելի ձիրքով, գեղարվեստական մտածողությամբ ու բավականաչափ ուրույն գրելաձևով: Ստեղծագործական վառ երևակայության, հուզառատ և պատկերավոր խոսքի շնորհիվ նա իր երկերն օժտել է ոգեշունչ բովանդակությամբ և գեղարվեստական գրավիչ մոտիվներով, հայ միջնադարյան գրականության մեջ դրանց ապահովելով որոշակի տեղ ու արժեք: Իր նկարագրած կյանքի, բեմ հանած դեմքերի, քննության առած պատմահասարակական երևույթների նկատմամբ չեզոք, անտարբեր հանդիսատես չէ նա, այլ ամեն մի վերափոխ-

³⁵ Նույն տեղում, թ. 297ր:

³⁶ Երբորդեան յորդիս և ի թոռունս, ձեռ. № 8775, թ. 265ա:

³⁴ Ներբող գրերի գյուտին, ձեռ. № 8775, թ. 297ր:

մամբ ու տեղաշարժով ապրող, տագնապող, հպարտացող քաղաքացի-
գրող: Նրա հեղինակային ներկայութունը ոչ միայն անհարկի չի թվում,
այլև ընկալվում է իրրև բնական և անհրաժեշտ գործոն: Այդպիսով նա
կենդանացնում է իր նյութը, ոգեղինացնում դեպքերն ու երևույթները,
մտերմացնում մթնոլորտը, տրամադրությունները դարձնում դյուրահա-
ղորդ, խոսքին տալիս ավելի ներգործուն ուժ և իր ու ընթերցողի միջև
ստեղծում հոգեկան ու գաղափարական ավելի անմիջական կապ: Չա-
փազանցությունների և գույների խտացման է դիմում ոչ պարզապես
հարգելով դարի ճաշակը, այլ որպեսզի ավելի ազդու լինի իր ձայնը և
ավելի ամրացնի այդ կապը: Միջին դարերի մարդու համար դա փըն-
տրրված և կարևոր միջոց էր: Վարդան Արևելցին վարվում էր միանգա-
մայն ճիշտ ու նպատակամետ: Չպետք է մտածել, որ յուրաքանչյուր
երկում նա այսպես է հանդես գալիս: Ո՛չ, իհարկե: Ընտրված նյութը
տարբեր էր և տարբեր շափով էլ շեկացնում էր հեղինակի միտքն ու
հոգին: Այսպես, օրինակ, «Ժղլանք»-ը, գրույցները, ճառերը գրված են
ավելի զգաստ ու հանդարտ տրամադրությամբ, մինչդեռ շարականները
և, առավելապես, ներբողները՝ զգայական տարբերի նկատելի գերա-
կշռությամբ:

Վարդան Արևելցու հիշյալ երկերը, իրենց ժանրային առանձնահատ-
կություններով, էպիկական և սյուժետային սակավ տարրեր ունենալով,
գեղարվեստական առումով նվազ բազմազան են, հնարավորություն
չեն տալիս հանդամանալից խոսելու ձևականուցվածքային բնորոշ կե-
տերի, գործող անձանց հոգեբանության և անհատականության զարգաց-
ման ու գրսևորման հատկանշական երևույթների մասին:

Գրական կերպարի ստեղծման բարդ խնդիրը տվյալ դեպքում ստեղ-
ծագործական ակնառու մանրամասների հետ քիչ է առնչվում, քանի որ
նման գեղարվեստական երկերում, մանավանդ ներբողներում, համա-
պատասխան միջավայր, իրադարձություններ, մարդկային հարաբերու-
թյուններ բավարար չափով չեն լինում, որոնք հնարավորություն կտա-
լին կերպարի զարգացմանը: Ներբողի մեջ, ճիշտ է, կան մեկից ավելի
գործող անձեր, որոնք ունեն իրենց հոգեբարոյական և գաղափարական
աշխարհը, գործում, պայքարում են, սակայն, ընդհանուր առմամբ կամ
խիստ նման են իրար, կամ էլ, եթե տարբերվում են, ապա միայն իրենց
մի տեսակ «ի ծնե, ի բնե» ժառանգած բնավորության կայուն գծերով:

Հեղինակը իր հերոսների բնավորությունը չի բխեցնում օբյեկտիվ
միջավայրից, հոգեբանական համողիչ հանգամանքներից, այն չի կեր-
տում աստիճանական զարգացմամբ, բնական ընթացքով չի հասցնում
իր ձևավորման ավարտին, քանի որ անհրաժեշտ չափով չի մտնում
դրա գաղտնի ծալքերը: Սա մի հանգամանք է, որն, ինչպես ճիշտ նկատ-

վել է, պայմանավորված է ներբողին և առնչակից մի քանի ժանրերին
հատուկ գեղագիտական պահանջներով: Հեղինակը, այսպիսով, կաշ-
կանդաված է, զուրկ ներդնելու այնպիսի լրացուցիչ ներսյուժետային գրա-
կան միջոցներ, որոնց շնորհիվ նա կկարողանար իր հերոսների բնավո-
րությունը կերտել քայլ առ քայլ, մշակման, զարգացման ուղիներ բա-
ցել, ինքնագրսևորման մղել և, ի վերջո, հասցնել ավելի ցայտուն ան-
հատականացման: Մինչդեռ տրված գրությունամբ նա կերպարն ավելի
շուտ բնութագրում է, նրան պատրաստի, ավանդական գծեր հատկաց-
նում, որոնք կարող են վերաբերել ոչ միայն այդ կերպարին, այլև գրե-
թե բոլոր իր նմաններին: Այստեղ խոսք լինել չի կարող ընդհանրական
կերպարի մասին, քանի որ ինքը՝ կերպարը սեփական ցայտուն նկա-
րագրով ու անհատականությամբ դեռևս չկա: Խոսքը այն մասին է,
որ անհատի ու իր նմանների փոխհարաբերակցությունը գրական ստեղ-
ծագործական բովի մեջ ըստ անհրաժեշտության չի մտնում, այլ մի
տեսակ մատնացույց է արվում իբրև արդեն ձևավորված, պատրաստ
հոգեբանական վիճակների շարակցություն: Գործող անհատը հանրու-
թյան ոչ թե կոնկրետ ներկայացուցիչն է, այլ, ավելի շուտ, նրա պատ-
գամավորը կամ մոտեցախիլը: Նույնիսկ այն առանձին դեպքերում, երբ,
այլուամենայնիվ, ընդգծվում է անհատի բնավորության այս կամ այն
բնորոշ հատկանիշը, դարձյալ իրողությունը որակապես չի փոխվում,
որովհետև չի բավականացնում կերպար, նկարագիր ամբողջացնելուն:

Խնդիրը բավականին տարբեր է վարքերի, վկայաբանությունների,
որոշ շափով՝ պատմվածքների, ընդարձակ գրույցների պարագային: Հիշ-
յալ երկերում էպիկական, մանավանդ, սյուժետային տարրը երբեմն
լայն տեղ է գրավում, գործողություններ, հարաբերություններ, բնավո-
րություններ են խաչաձևվում և ինչ-որ չափով ընդգծված հոգեբանու-
թյուն է մշակվում ու հասունանում: Ծիշտ է, գործող հերոսը մնում է
նախապես ընտրված արդեն ծանոթ անհատը, հասարակական իր խավի
ու միջավայրի բնորոշ ներկայացուցիչը, բայց բեմ են դուրս գալիս նաև
«հասարակ մահկանացուները», որոնք «ձեռք են բերում» հենց միայն
իրենց հատուկ բնավորության որոշ գծեր, թեկուզ ոչ ցայտուն և ոչ
միշտ իրապաշտորեն համողիչ: Վարքագիր-վկայագիր հեղինակը այս
առումով ավելի նպաստավոր վիճակում է: Նա ինքնագրսևորման հա-
մար ստեղծագործական ավելի լայն ասպարեզ ունի, կարող է իր հե-

* Հմտ. Лухачев Д. Человек в литературе Древней Руси. с 170—171:
Այս և հաջորդ համեմատությունները արվում են ելնելով ոչ սոսկ հայ և հին առաս-
կան, այլև ընդհանուր միջնադարյան քրիստոնեական գրականության միջև առկա ակներև
ընդհանրություններից:

րոսներին նաև հոգեբանական աշխույժ շարժման և փոփոխություն մեջ դնելու բավարար հնարանքներ գտնել:

Այս և առնչակից գրական-գեղարվեստական հնարանքները, իհարկե, ոչ միշտ և ոչ բավարար շահով գրական-տեսական սկզբունքի ու համոզմունքի արդյունք էին: Հեղինակները այսպիսի սկզբունքը կենսագործում էին ոչ միայն ըստ անհրաժեշտության, գրողի անհատական ձիրքի ու նախընտրություն: Նրանց առավելապես մտահոգում և խրախուսում էր իրենց երկերի խրատադաստիարակչական, ուսուցողական նշանակությունը: Այս ելակետով էլ ջանում էին ակներև դարձնել իրենց կողմից հերոսներին վերագրված բնավորության և անհատականության հատկանիշները: Այս խնդրում ավելի ջանադիր են եղել ներբողներ և ներբողագրական բնույթի երկեր հորինողները, ինչպես նաև Վարդան Արևելցին: Միանգամայն օրինաչափ ու բացատրելի են ներբողների գերհուզականությունը, երևակայական ու պատկերավոր շափաղանցումները, հոգեբանական կտրուկ և սուր անցումները, գույների միտումնավոր խտացումը, պաթետիկ հոետորականությունը: զործող անձանց հաճախ գերմարդկային, անձնուրաց արարքներով, ուժով ու ոգով օժտված լինելը:

Այս մի քանի հիմնական առանձնահատկություններն արձանագրեցինք այն պարզ պատճառով, որ Վարդան Արևելցին միջնադարի այն հեղինակներից է, որ մի շարք ներբողներ է հորինել և ներբողագրության բնագավառում նախապես արդեն կայունացած, ավանդականության հասած սկզբունքների խոհեմ ժառանգորդն է և դրանց ստեղծագործաբար կիրառողը:

Արևելցու գրական գործերից հատկապես ներբողներն ունեն պատմական հիմք, նվիրված են քաղաքական, հասարակական-եկեղեցական և մշակութային-կրթական կյանքի կարևոր երևույթներին, որոնք դարերի ընթացքում սերունդներ են սնել և ոգևորել: Մենք արդեն գիտենք, թե ավելի որոշակի որոնք էին այդ երևույթները: Դրանց վերստին արծարծումը այդ օրերին ունեցել է իր բարոյական, քաղաքական և հայրենասիրական նպատակը: Գիտենք նաև, որ նա իր ներբողներում հանդես է բերել գործող այնպիսի անձանց, որոնք խոր հետք են թողել հայ ժողովրդի պատմության մեջ: Հեղինակը բոլորի նկատմամբ էլ տածում է ակնածանք ու սեր: Իսկ բացասական բնավորության և արարքների տեր անձանց նա արժանացրել է արգահատանքի կամ խստագույն քատապարտել: Երկու դեպքում էլ պատճառաբանում է իր դիրքորոշումը և ոչ միայն հետևում նրանց նկատմամբ ստեղծված ավանդական

վերաբերմունքին ու գնահատությանը, այլև թանձրացնում է գույները և չի բողարկում իր բացահայտ միտումնավորությունը: Դա կարևոր էր համարում՝ ընթերցողին ավելի ցանկալի հունի մեջ դնելու համար:

Ինչպես սպասելի էր, Արևելցին իր հերոսներին վերագրում է այն ամենը, ինչ-որ դարն էր պահանջում, թելադրում էին նրա ավանդները՝ գրականները զրական էին գրեթե հիմնովին, բացասականները՝ բացասական: Այդ այդպես էր ոչ միայն հայ միջնադարում: Իբրև ավատագետության գաղափարակիրներ, առաջինները միշտ էլ իմաստուն էին ու քաջ, հավատարիմ ու անձնվեր, ազնիվ ու առաքինի, մարտական ու հայրենասեր, մյուսներն՝ այս բոլորի հակառակը: Միջին աստիճանի շափանիչ գրեթե չկա: Դրական հերոսները ներկայացնում էին իդեալական մարդկանց, որոնց պիտի ուզենային տեսնել մանավանդ մոռյլ ժամանակներում, սովորին նրանցից, ոգևորվեին, հետևեին նրանց պայծառ օրինակներին, դաստիարակեին հետևորդ սերունդներին, որ ազգն ու երկիրը թշնամիների «ոտից կոխան» չլինեին: Նույն նպատակով պիտի պախարակեին շարերին ու վախկոտներին, ուրացողներին ու դավաճաններին:

Այս գրական-ստեղծագործական գործընթացում հիմնական գործոնը հեղինակի բացատրական խոսքն է, որով ոչ թե ստեղծվում կամ շարժվում, այլ ավելի շատ մեկնաբանվում ու գնահատվում է որևէ կացություն, արարք, ճշմարտություն: Գործող անձինք նմանապես աստիճանաբար չեն ձևավորվում ու հասունանում, այլ ներկայացվում, մատուցվում են հեղինակային բնութագրական կամ ներածական խոսքով: Այդպիսով, սակայն, ավելի են աղոտանում վերջիններիս տարբերակելու գծերը, որովհետև զրկվում են իրական ու բնական ինքնաարտահայտումից: Բնավորության, հոգեբանության մշակում, դարգացում գրեթե չկա, որովհետև չկա նաև դրանց վերափոխման բնականոն, աստիճանական գործընթացը, ավելի շուտ կան արված վիճակներ, կայուն և ամուր, որոնք չեն վերաճում մեկը մյուսին և ըստ ամենայնի չեն պատճառաբանված: Այդպես էլ դրական հերոսը դառնում է ավելի դրական, քաջը՝ ավելի քաջ, իմաստունը՝ ավելի իմաստուն, իսկ բացասական՝ ավելի բացասական: Վերջիններս, եթե նույնիսկ կերպարանափոխվում են, ապա գերազանցապես զղջմամբ, ապաշխարությունով, խրատներով կամ էլ՝ հրաշքով, դարձյալ հանկարծակի և առանց գրական իրապատում պատճառաբանության: Դա, իհարկե, այդպես էր ոչ միայն հայ միջնադարյան գրականության մեջ**

* Հմմտ. Лихачев Д., Человек в литературе Древней Руси, т. 81

** Հմմտ. Միխաշով Գ., նշվ. աշխ., էջ 81—90, 170:

* Հմմտ. Каздан А., Византийская культура (X—XII вв.), с. 172.

Այս բոլորով հանդերձ չպետք է մտածել, որ Վարդան Արևելցին նույն կերպ վարվելով, իր հերոսներին միևնույն կամ միայն պատրաստի կաղապարներով է հրապարակ բերել: Այդ բոլորը նախ ավելի վաղ ժամանակներից են գալիս, և արդեն հայ մատենագրության մեջ ու հասարակական-մշակութային կյանքում նրանց նկատմամբ ստեղծվել էր ավանդական կայուն գնահատանք և բնութագիր. Վարդան Արևելցին նաև այս պատճառով վերամկրտելու մեծ ջանքեր չէր թափելու: Ասենք, օրինակ, եթե Գրիգոր Լուսավորիչը և հայ եկեղեցու հետագա պետերից շատերը հույզերով, խոհերով, հաճախ նաև գործերով համանման են, բայց անհատական որոշ հատկանիշներով բավականին տարբեր: Նույն Գրիգոր Լուսավորիչը կամ Հովհաննես Օձնեցին, ներսես Շնորհալին հանդես են բերված որպես լայնախոհ, լուրջ, համբերատար, Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը՝ ավելի խոհուն, կշռազատ, խորագրաց, ասես, ավելի հեռամետ մտածողության տեր գործիչներ, միևնույն Հուսիկը՝ զգայական տարրերով հարուստ բնավորություն ունի, տաքարյուն է, ըմբոստ, վտանգի առաջ չընկճվող, անհաշտ ու շիտակ: Այս առումով Հուսիկը բավականաչափ առանձնանում է մյուսներից: Գրիգոր Լուսավորիչը, ըստ հեղինակի «իմաստուն և քաջ», «հանձարեղ», «տեսանող ապագայիցն», «սարաս համբերութեան», «յարացոյց ճշմարտութեան» և այլ այս կարգի բարեմասնություններով օժտված առաջնորդ է: Նրանով, իրավամբ պարծենում էին իր որդիները. «Եւ, արգ, միթէ փո՞քր էր նահատակին հանդէս... միթէ փո՞քր էր պատարագն, յորոց հաւատոց լըցան երկինք և երկիր // և կենդանացան զարմբ և զաւակք տանս Հայկազանց և Թորգոմեանց, Արշակունեաց և Պահլաւունեաց: Միթէ փո՞քր էր պարծանք որդոց առ այնպիսի հայր, եթէ ընդ շաւղաց նորա գնայցնն, միթէ թո՞չլ ետ այլում հօր վեհագոյն գտանել, քան զինքն, միթէ հասակա՞ւ և դուզնաքեա՞յ շարշարանօք եղև հայր և բազմութիւն որդւոց էած ի փառս, միթե վայրապա՞ր զարհուրեալ զողային երիկամունք թշնամեացն և լուծանէին շիւք բազկաց նոցա և ընկեցեալ լինէին զաղեղունս և գնային բացէ ի բաց փախըստականք...»²: Նա «ղպրոցս յաւրինէր, մանկունս հաւաքէր, վարդապետս կարգէր, յոյն և ասորի գրոյ և լեզւի գիտակս կացուցանէր և ամենեցուն ըրոճիկս կարգէր յաբթունուստ»³, դառնալով երկրի և ժողովրդի ճշմարիտ «լուսաւորիչ»: Նրա զավակները «բանիբունք և բերկրահամբոյրք», «յանդիմանիչ թագաւորաց՝ խօսելով զվկայութիւնս տեառն յատենի ամենայն համարձակու-

թեամբ», «յաղթանակաց ընդունակք»⁴: Նրանցից Արիստակեսը՝ «սուսեր հոգևոր, երեւել ճշմարտապէս բանիւ վարդապետութեան, անակնառու յանդիմանութեամբ յանմտագունից ատեցողաց... ոչ Պետրոսօրէն երկմտէր ի սաստկութենէ հողմոցն բոնութեան զարհուրեալ, այլ փրկչաբար խիզախէր ի հրամանն տէրունի, թէ կարծութիւն հաւատոց բաւական է առ ի նշանագործութիւն սքանչելեաց...», «առաքելաբար զմահն ընդունէր»⁵, մինչդեռ Վրթանեսը՝ «քաջ և արի ի գործս հովութեան», «ողջախոհ և սրբաւէր», կամ՝ «իրաւարար»⁶: Հուսիկին ևս չի խնայել համապատասխան բնութագրումներ, սակայն նրան հատկապես բացահայտել է այն սպանիչ հանդիմանական ճառի միջոցով, որով նա պախարակել է Տիրան թագավորին, երբ վերջինս նրան ստիպում էր Հայոց եկեղեցում կախելու Բյուզանդիո Հուլիանոս կայսեր նկարը: Այս հատկանշական դիպվածի նշանակությունն ակնհայտ է առավելապես քաղաքական տեսանկյունից: Ահա թե ինչ է ասում Հուսիկն այդ ճառում, որը խիստ բնութագրական է իր զաղափարական բովանդակությամբ: ավելի ևս՝ հուղական լիցքով և հոգեբանական սրությամբ. «Ո՞վ թագաւոր, ասելով՝ ընդէ՞ր անմրտանաս ի քրէական մեղս յանդրգնելով... և դու զտաճար Աստուծոյն բարձրելոյ բնակարան դիւս՞ց առնես և տեղի կրո՞ց պատրաստիես, և որո՞ւմ տանջանաց լիցես արժանի, կամ ո՞ր գեհնան զքեզ ոչ այրեսցէ, վասնզի կրկին է ապարասնութիւնդ, ուրացութիւնդ/ և ի սրբութիւնսն մեղանչես. գի թէ՞ ի վայրաբնակ տեղիս կուուս պաշտելն կորուստ է, ապա՞ զո՞ր ներումն թողութեան ունիցի, որ առ սեղանովն Աստուծոյ զպատկերսն դիւաց դիցէ, քանզի՞ զի՞նչ հաղորդութիւն իցէ լուսոյ ընդ խաւարի... վասն որոյ թելադիր լինիմ քեզ և նպաստաւորութիւն մատուցանեմ որպէս սիրելոյ՝ զգուշանալ ի զուր յամառութենէդ և ի բաց կաց յանպատշաճ խորհրդոցդ... Իսկ դու զգուշացի՞ր, դո՞ւ, ո՞վ թագաւոր, զի մի հասցէ ի վերայ քո բարկութիւն ի տեառնէ վասն անօրէն գործոցդ, զոր առնես, զի թէ Բաղդասար արշայ բարեխացոց, որ զսպաս սրբութեան յանարժան տեղիս մատուցանէր, շարաշար սատակեցաւ, ապա որչա՞փ ևս ի կորուստ մատնեսցին, որք զզարշելիսն ի սրբութիւնսն մերձեցուցանիցն... ո՞վ թագաւոր, բա՞ց զաչս մտացդ և մի՞ փութայր ի քոյին կորուստ...»⁷, և սա այն գեպքում, երբ Հուսիկը գիտեր, որ իրեն տխուր վախճան էր սպասում:

1 Ներբողանի Պրիգոր Լուսաւորիչն, ձեռ. № 8775, թթ. 229ա, 240բ, 252բ, 253ա:

2 Նույն տեղում, թ. 231բ—232ա:

3 Նույն տեղում, թ. 227ա:

4 Յորդիս և ի թոռունս, ձեռ. № 8775, թ. 256ա—256բ:

5 Նույն տեղում, թ. 257ա—257բ:

6 Նույն տեղում, թ. 260բ:

7 Նույն տեղում, թ. 264ա—266ա:

Գրիգորիս կաթողիկոսը, հակառակ իր դեմ գործված անարդարության, հանդես է բերված որպես «լուսափայլ մանուկն... ծերունական հանճարով և սրբասէր վարուք»⁸։ Սա այն նվիրյալ անձնավորությունն է, որ նույնպես արհամարհում էր մահը, քանի որ տներ իր նպատակը՝ մարդկային հոգիների առաջնորդումը խավարից դեպի լույս, կործանումից՝ փրկություն։ «Եւ այնքան շերմեռանդն սիրով զգութն գորովոյ հաստատուն ունէր, մինչ զի և զմահն իւր նոցին պատճառ փրկութեան ըղձանայր լինել... զի մահուամբն նորա (իմա՛ իր՝ Գրիգորիսի— Փ. Ա.) նոքա ապրեսցին»⁹։ Այդպիսի մարդու գիտակցաբար ինքնազոհաբերումից «քարերն էլ են ծաղկեում»։ «Յորոյ կարմրագոյն արեանն հեղմանէ անբուսածին քարինք վայրացն ծաղկէին և թանձրագոյն հողն առոգեալ լինէր։ Կանաչագեղ բոյսքն ծիրանագոյն ներկանէին և խոնացեալ կոշտք երկրի՝ դալարացեալ սրխարլի և սքանչելի տեսողաց և զարմանալի ամենայն մարդկա լլին բնութեան»¹⁰։

Իսկ Արիստակես-Վրթանէս-Հուսիկ-Գրիգորիս քառյակը միասնաբար հետևյալ քնարական բնութագրման է արժանացրել. «Առաքելաշնորհք, մարգարէատիպք, պսակաժառանգք և բրաբրոնազգեացք, երկնահանգոյնք և վերնակայեանք, սիւնք եկեղեցւոյ և խարխիսք հաւատոյ, բարձրացուցիչք մանկանց Սիոնի (իմա՛ Հայաստանի— Փ. Ա.), ընդ միակի յողեալք ի լիութիւն աշխարհի լըրման լիացուցիչք լուսով լիացէս, եղեմարուխ աղբերացն տիպք, ըստ քառառաջ վտակացն յարձակման, առ ի զովացումն ծարաւերոց...»¹¹։

Վարդան Արևելցին, թեև ամենից քիչ բնութագրական խոսք է ասել Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մասին (հատուկ նրանց նվիրված չէ իր ներքոյը), սակայն, այդքանն էլ բավական է տեսնելու համար, թե նա ինչպե՞ս էր պատկերացնում վերջիններին։ Ահա մի երկու նմուշ. «Զի ոչ արեւստականին զոլով քահանայազործող դասակարգութեան, այլ ճշմարտութեան յաւէտ տեսուչ...», «յոր ստիպէին զսուրբն Իսահակ ի շարախօսել զթագաւորն և նա ոչ էառ յանձն մատն լինել թագաւորին իւրոյ», «...կոչեցեալ եղև հարկիւ ի յարքայէն սուրբն Իսահակ, զի շարախօսեսցէ զիւր թագաւորէն ընդ աւագացն հայոց, և նա ոչ շարաբանեաց...»¹²։ Հեղինակը, պարզ է, կամեցել է մի անգամ ևս բնորոշել Սահակ Պարթևի հատկապես ազգային-պետական շահերի գիտակցումն

ու պաշտպանությունը, որը խիզախորեն հաստատում է իր հավատարմությունը երկրի և նրա իշխանապետի հանդեպ։

Մեսրոպ Մաշտոցը ևս, լինելով Սահակ Պարթևի համախոհն ու գործակիցը, մեզ ներկայանում է որպես խոհեմ, հանճարեղ վարդապետ և հասարակական-քաղաքական մեծ գործիչ¹³։

Իսկ սրանց աշակերտները, ավագ և կրտսեր թարգմանիչները, որոնց մասին Վարդան Արևելցին ո՛չ բնութագրական խոսք և ո՛չ էլ մակագիրներ ու համեմատություններ է խնայել, ըստ նրա՝ «զմահ առաւել քան զկեանս ընտրէին... հարցասէրք և քրննափափագ լինէին», «առ ընկերակիցսն՝ գովելիք, առ վարդապետսն՝ հաճելի... բանասէրք... վաստակասէրք... իմաստասէրք... բազմաց փափագելիս... սիրելիս»¹⁴։ Այդ նրանք են, որ հայրենիքի դժբախտ վիճակին ի տես «ողբս առեալ հառաչէին երանելիքն, լային և արտասուէին... էհա՛, էհա՛, ասելով աազական բանս յաճախէին...»։ Դարձյալ նրանք են՝ «ուսուցիչքն քաղցրաբանք, դայեակքն դիւրահամբոյրք... հովիւքն քաջափառք... խաւարելոց լուսաւորիչքն... պարծանքն ազգիս մերոյ»¹⁵։

Նշելով Հովհաննես Օձնեցու մի շարք բարեմասնությունները, Վարդան Արևելցին առավելապես ընդգծում է նրա եկեղեցավարչական և հասարակական գործունեությունը, որպես մի ժողովրդական առաջնորդի, որը գիտե և պատրաստ է ժողովրդի համար նվիրարեքել իր կյանքը։ «Այլև սուրբն,— գրում է նա,— հաւատարիմ ծառայն աստուծոյ Յովհաննէս շրջէր Քրիստոսաբար և առաքելօրէն մանրամասնաբար ընդ ամենայն տեղիս, ի նշանաւորս և յաննշանս, անձանձիր ուղեգնացութեամբ հանդես առնել կարգաց և կրօնից, եկեղեցեաց և պաշտաման, և քաղաքավարութեան վանականաց և անապատաւորաց, եպիսկոպոսաց և երիցանց, արանց և կանանց, կուսից և երիտասարդաց, որք ի քաղաքս և յաւանս, ի գեօղս և յագարակս, արտաքս հանէր զեկամուտ յաւելուածն, լնոյր զպակասեալն։ Կանոնս հաստատէր...»¹⁶ մի կողմից, մյուս կողմից՝ «...փարէր զամենեքումք հայրենի զթութեամբ դողայր ի վերայ ամենեցունց իբրև ի վերայ ուստերաց և դատերաց»¹⁷, «...և լուսաւորիչն մեր ի մէջ օձիցն և նա ի մէջ թշնամեացն օձաբարու և շարշարիչ ազգին Իսմայէլի, դանձն եղեալ ի վերայ հօտին իբրև զճովիւն քաջ»¹⁸։

⁸ Նույն տեղում, թ. 271ա։

⁹ Նույն տեղում, թ. 273բ։

¹⁰ Նույն տեղում, թ. 273ա։

¹¹ Նույն տեղում, թ. 275բ։

¹² Ներքոյ գրերի գլուտին, էջ 279բ—280բ։

¹³ Նույն տեղում, էջ 281ա։

¹⁴ Նույն տեղում, էջ 285բ—286բ։

¹⁵ Նույն տեղում, էջ 291բ—292ա։

¹⁶ Ներքոյ գրեան ի Յովհան Ունեցի, № 3069, թ. 110բ։

¹⁷ Նույն տեղում, թ. 110բ։

¹⁸ Նույն տեղում, թ. 109ա։

Գրիգոր Բ վկայասերը Վարդան Արևելցու համար «...արթուն հըս-
կող... առաքինի հոգով, սուրբ մտօք, պարկեշտ վարուք... մեծախոր-
հուրդ հայր» է, որ «եւ իբրև դարեգահն ծագեալ ի խոր գիշերի արծակէ
զճառագայթս արևու ընդ շորս կողման Հայաստան աշխարհիս, իբր
զթոխիս բոցոյ ըստ երգոյն՝ զհուրն, զոր եկն տէր յերկիր արկանել առա-
քելով ի քաղաքս և ի գեօղս իմաստուն վարդապետօք և հանճարաշատ
գրով լինոյր զայգի տեանն անուշարուրիչ հոտով և ձայնիւ քաղցրախօս
տատրակաց»։ Դարձյալ նա է, որ ստեղծել է մատենագրական այնպի-
սի երկեր «Որովք մեծարին տօնք տէրունականք և պատւին յիշատակք
վկայից և առաջնորդեալք լինին բանասէրք և ուսումնասէրք, որ թէպէտ
և հարկատրն կայր յամենայնէ, այլ ոչ լիակատար և անթերի, զորն նա
ոչ կամեցաւ թողուլ այլոց ազգաց պատճառս պարձանաց/ունել ինչ
անլի, քան զմեզ»¹⁹։ Այստեղ ընդգծելի է, մանավանդ, վերջին վերա-
գրումը հատկապես Գրիգոր վկայասերի և Վարդան Արևելցու ապրած
ժամանակների համար, երբ Բյուզանդիան ու Վասիկանք գերազան-
ցութեան էին հավակնում հայ եկեղեցու և ժողովրդի նկատմամբ։ Ու-
րեմն կարևոր էր, որ Գրիգոր վկայասերը կարողացել էր պաշտպանել
հայ ժողովրդի արժանապատվությունը։

Ահա թե ինչու, հեղինակը հարկ է համարում անպայման նշել, որ
նրան մեծ պատիվ էին տալիս նաև Բյուզանդիայի հավակնոտ կայսրն
ու պատրիարքը. «...յորժամ գիտացին, թէ ով ոք էր նա և ճանաչեցին
ի պլտղոյ շրթանցն զյաւելած սրտին ծովացելոյ իմաստիցն և զարժա-
նատրութիւն... վասն որոյ ի գնալն յարքունիսն ընդ առաջ ելանէր
սրբոյն պաղատն արքունի՝ հանդերձ թագաւորան... եւ պատրիարքի
քաղաքին (Բիւզանդիոն— Փ. Ա.), առաել ևս շքով և մեծարանօք... և
տային խօսել նմա ի խորհուրդ ատրոց տօնական նոցին իսկ բարբա-
ռովն, և զնէին մատունս ի վերայ բերանոց իրեանց ի զարմացմա-
նէ...»²⁰։

Գրիգոր Գ-ն և նրա եղբայրը՝ Ներսես Շնորհալին զեռ մանուկ հա-
սակից «...էին քաջաբոյս մանկունք, կայտառք և ուշիմք, հըլուք և
մտառուք»²¹։ Նրանցից առաջինը ներկայացված է այսպիսի պատկերա-
վորմամբ. «...անձանձիր բերելով առ ինքն/զկաթն և զգինի։ Հնոց և
Նորոց ուսման և յայնմանէ յարուցեալ երթալք ընդ նմա ի լեառն զմըն-
սոյ և ի բլուրն կընդըրկի... ուստի առեալ զստաշխն և զկինամոն, բըր-
քում և նարդոս, ուլունս շափիւղայս և շարս մարգարտաց, որովք հիւ-

սոյր պսակս... Յոր բանից սրբեալ բըժըշկէին, խըղխայթեալ սիրտք
զբացեաց մերոց... որք ի նմանէ լուսաւորեալք՝ երանէին...»²²։ Այստեղ
իրերի անունները, պարզ է, տրված են իրենց ոչ ուղղակի, այլ խորհըր-
դանշական առումներով և բացահայտում են Գրիգոր Գ Պահլավունու
հոգևոր և մտավոր գործունեությունը, որը լույս է սփռել նաև հայ ժո-
ղովրդի հարևանների վրա (նկատի ունի բյուզանդացիներին և ասորի-
ներին)։

Իսկ «խորախորհուրդն և խոնարհամիտ», «արիականն», «կորովա-
տես մտացն» և «եօթնալուսեան շնորհաց» տեր՝ Ներսես Շնորհալու վե-
րաբերյալ բազում բնութագրումներից գոհանանք հետևյալի վկայակո-
չությամբ. «խաղային վտակք երկնատր իմաստից և ի շընչմանէ հող-
մոյ Հոգոյն ի նմա, գնային գետք ընդ անջըրդիս, ուստի բուսեալ ընկու-
ղեաց պարտէզ և որթ գինեբեր՝ վերանայր աղզն Աղքանաղեան և տունս
Թորգոմայ և բարեբեր բարունակս արձակելով շառաւեղս ոստոց ի ծովէ
մինչև ի ծով, ի գե/տոց մինչև ի ծագս աշխարհի...»²³։

Եվ այսպես՝ նաև մյուս անձնավորությունների մասին։

Վարդան Արևելցին այնուամենայնիվ իր հերոսների ոչ միայն ներ-
քին, հոգևոր կերպարն է ջանում բացահայտել, այլև որոշակի ուշադրու-
թյուն ու տեղ է հատկացրել նրանց արտաքին, ֆիզիկական բարեմաս-
նություններին։ Ներքին ազնիվ և հերոսական բովանդակությունը պատ-
շաճ է նաև արտաքին վայելուչ ու գեղեցիկ տեսքը։ Իր համակրած անձ-
նավորությունները նրա համար «գեղեցկագեմ, գեղուղեշ, պարթևահա-
սակ, փառազարդ մորվոք, գեղեցկագիտակ, վայելուչ տեսքով, պատ-
կառելի դեմքով» են։ Նորույթ չէ Վարդան Արևելցու անմիջական վերա-
բերմունքը իր հերոսների հանդեպ, նրանց հիմնականում բնութագրա-
բար և սակավ զեպքերով՝ գեղարվեստական միջավայրի, մարդկային
փոխհարաբերությունների խաչաձևումների միջոցով ներկայացնելու
վերագրյալ եղանակը մեր և ոչ միայն մեր մատենագրության մեջ։ Բայց
նա միաժամանակ իր ուրույն բաժինն է բերում այդ եղանակի կամ ան-
վանդույթի զարգացման ու հարստացման կարևոր գործում՝ պատմա-
կան անձնավորությունների բարոյական ու գեղարվեստական կերպար-
ների շուրջ մատուցմամբ անպայման ուսանելի և օրինակելի զարմնե-
լու քաղաքացիական-հայրենասիրական վառ ցանկությունը։

Վարդան Արևելցու «հերոսները», ինչպես տեսնում ենք, մարդիկ
են նաև իրենց որոշակի ապրումներով, հույզերով, իդեալներով, սխալ-
ներով, արտաքին տեսքով։ Ուշադրությունը մարդու, մարդկայինի վրա,

19 Ներքողեան ի վահրամ, ձեռ. № 8775, Թ. 303ա—304ա։

20 Նույն տեղում, Թ. 304բ։

21 Նույն տեղում, Թ. 304ա։

22 Նույն տեղում, Թ. 310բ—311ա։

23 Նույն տեղում, Թթ. 303ա, 303բ, 312բ, 313ա, 313բ։

թեև նույնպես նորույթ չէր այդ օրերին, բայց այս աստիճան մերձավոր առնչությունը մարդուն, որոշակի հոգատարությունը նրա նկատմամբ, որոնք վերացական, կրոնամիստիկական չեն, այլ իրական և գործնական, ուշագրավ է անշուշտ: Մարդը, մանավանդ XIII դարի հայ մարդը, Վարդան Արևելցու ոչ միայն ուշադրության, այլև նպատակի ու ծրագրերի կենտրոնում է: Ամեն մի նշանակալից երևույթ, եթե նրա մասին չէ, ապա վերջին հաշվով, նրա համար է: Հեղինակն անընդմեջ մարդու հետ է, նրան է ներկայացնում, խոսել տալիս, նրա գործը, հաղթանակը, վիշտը, հաջողությունները ի հայտ բերում:

Եվ այս ամենը, իհարկե, միջին դարերի արդյունաշատ հեղինակի՝ Վարդան Արևելցու անուրանալի արժանիքն է:

* * *

Վարդան Արևելցին իր ժողովրդի կյանքին, հայրենի երկրին ամուր կապված է ոչ միայն հասարակական, գաղափարական, հուզական լարերով: Նա կենդանի և անմիջական շփման մեջ է դրանց հետ տեսապես և ամեն դեպքում իր կյանքի և գործունեության բոլոր կարևոր հանգրվաններում: Հիշենք, որ շրջել է գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանը և երկիրս եղել Կիլիկիայում: Այդ շրջագայությունների ժամանակ էլ կապ է ստեղծել հայ ժողովրդի հասարակական բոլոր խավերի ներկայացուցիչների հետ, սկսած շինականից, մինչև իշխաններն ու թագավորը: Պարզ է, որ այսքանը խիստ օգտակար պիտի լիներ նաև սեփական աչքերով տեսնելու իր ժողովրդի նիստուկացը, աշխատանքը, առօրյան, լսելու նրա անմիջական խոսքը իր քաղաքական-իրավական վիճակի, ձգտումների և երազանքների մասին: Այդ շրջագայությունները լայն հնարավորություն էին ընձեռում նրան դիտելու նաև հայրենի երկրի զարմանալի բնությունը:

Մենք տեսանք, թե ինչպես է Վարդան Արևելցին հասարակականորեն վերակենդանացնում իր տպավորություններն ու ամբողջ իմացածը հայ ժողովրդի պատմության, կյանքի և ակնկալությունների վերաբերյալ և թե ինչ են նրա թելադրանքներն այդ առիթով: Գիտենք, որ դրանք բխում էին հայ ժողովրդի կյանքի իրական պահանջներից և այդ կյանքը ճիշտ բմբռնելու արդյունք էին: Այժմ հարկ ենք համարում համառոտակի նշել Վարդան Արևելցու նույնչափ և ավելի իրական՝ տեսողական ճանաչողության և տեսածը հարազատորեն վերարտադրելու գրական կարողության մասին:

Վարդան Արևելցին միանգամայն ճիշտ է ընկալում նաև բնությունը, որը նրա համար միայն պատկեր չէ, այլև մարդու գոյության օջախն ու աշխատանքի ասպարեզը: Այս առումով նա վերարտադրել է մի շարք կենդանի, հարազատ, իրական բնապատկերներ, որոնցից շատերը ուղղակի առնչվում են Հայաստանի բնաշխարհիկ միջավայրին, մարդկանց նիստուկացին, աշխատանքին և, ընդհանրապես, առօրյային:

Ահա դրանցից մեկը՝ Հայոց գրերի գյուտին նվիրված ներբողից. «Բայց, աւա՛ղ, յայսրմ վայրի, զի բանս այլ ոչ ևս արտո՞րժէ յառաջել, քանզի յորժամ հունձքն բազում էին և մըշակքն՝ սակաւ, և արտորայքն սպիտակացեալ և ի հունձս հասեալ, և աղաչեցեալ եղև տէր հընձոցն և ելին մըշակքն ի հունձս: Եւ արգ՝ մանկաղբ թեքեալք և մըշակք պատրաստեալք, և եկեալքն ի հունձս հոգևորս՝ չիք ի միջի, այլ ծրղօտ միայն և խոզան և սուղ ինչ նշմարանք արտորեիցն երևին»²⁴:

Այս միևնույն ներբողում իր բախտի հետ մենակ թողնված հայ ժողովրդին Վարդան Արևելցին նմանեցնում է այգու մեջ նույնպես միայնակ կանգնած տաղավարի և մրգապահի հովանու. «...լըքեալ և ի բաց ընկեցեալ ժողովուրդք՝ իբրև զհովանի մրգապահաց և որպէս զտաղաւար յայգոջ»²⁵:

Մի այլ տեղ վերակենդանացրել է հետևյալ ճշմարիտ ու գեղեցիկ բնապատկերը. «...մեծասքանչ և զարմանալի երևեալ (Արիստակես—Փ. Ա.) ի վերայ կապուտակ կոհակաց լայնատարած լըճի, ի ժովակին վեհավէտ և քստմնածածան, կորովակի, սիգաշարժ թանձրութեան ջուրց՝ ալօս՝ ձգեալ և սիգափայլ ոտիւք սրընթացութեամբ սըխրալի երևեալ...»²⁶:

Ահա ծովի մեկ այլ գեղեցիկ պատկեր. «Բարի է ծով ի խաղաղ ժամու՝ ծիծաղելով, ի գոյն երփներփն զարդուց ի խաղասիգ ալիսն վէ՛ տսվէ՛ տս քստմնեալ ծածանմամբ՝ հաճոյ աշաց հայելոյ...»²⁷:

Հովհաննես Օձնեցուն նվիրված ներբողում նա վերարտադրել է միջնադարյան հայ գյուղի համար շատ տիպական մի բնանկար, որը, թերևս ավելի ճիշտ կլինի կոչել երկրագործական կենսապատկեր: Այն թեև իր իմաստով այլաբանական-խորհրդանշական է, բայց, ըստ էության, հայ գեղջուկի իրական, ճշմարիտ կյանքն է արտացոլում: Խոսնլով Հովհաննես Օձնեցու մասին, Վարդան Արևելցին նրա գործունեությունը, ի միջի այլոց, այսպես է ներկայացնում. «...քաղէք զփունջն

24 Ներբող գրերի գյուտին, ձև. № 8775, ք. 287ր:

25 Նույն տեղում, ք. 290ա:

26 Յորդիս և ի թոռնս, ք. 257բ:

27 Հնգամատենի, ձև. № 648, ք. 91ա—92ա:

յանցանաց, ի բաց աննոյր զխոչ և զխուօթ, և քարինս այլանդակ բանից և իրաց, սերմանէր զցորեանն սուրբ, խլէր զզաղձն՝ բուսեալ յայգոջն, տնկեալ ի թաղեոսէ և ի Բարդուղիմեոսէ, զմշակեալին ի հօրէ, և ոռոգեալ ի Գրիգորէ: Յանկէր զխրամատեալ տեղիան, կառուցանէր զանկեալ քարինսն յամուր աշտարակէն: Վերակացու յօրինէր, հովիւ կացուցանէր, խնամակալս և տեսուչս հաստատէր՝ զգուշանալ հօտին Տեառն, զորս զնեաց ընդ մեծագնի արձանն աստուածայնոյ, բանեղէն և ձեռագործ փարախաւ հաւաքեալ միշտ յարօտ և ի ջուրս հանել և հանգուցանել...»²⁸: Ընդամենը մի քանի տողից բաղկացած այս հատվածում որոշակի տեսնում ենք գյուղական բնությունը, զեղջուրիին՝ իր տարբեր բնութիւնի առօրյա աշխատանքներն իրացնելիս՝ մոլախոտը քաղելու, խոչն ու խուօթ հարթեցնելու, ցորենը սերմանելու, այգին ոռոգելու, ցանկապատեր կառուցելու, քանզված պատերը վերանորոգելու ժամանակ: Տեսնում ենք նաև հոտն ու նախիրը փարախների մեջ, արտավայրերում ու ջուր խմելու մեկնելիս, նույնիսկ գյուղի վերակացուներին, հովիւներին, խնամակալներին, տեսուչներին: Կարճ ասած՝ միջնադարյան գյուղն է ամբողջութեամբ վերակենդանանում մեր առաջ:

Գեղջկական կյանքից վերցրած այս նույն պատկերի համառոտ կրկնութիւնն է, ասես, Գրիգոր Լուսավորչին նվիրված ներբողի հետևյալ հատվածը. «Որով պայծառացեալ դառնայ ի նորին առաքելական անդաստանն, ինքեան իսկ և նորին (Գրիգոր Լուսավորչի— Փ. Ա.) վաստակօք հերկեալ և արեամբ ոռոգեալ և արտասուօք սերմանեալ և քրքրտամբ բուսուցեալ, վասնորոյ և արդէն իսկ սպիտակացեալ և ի հունձս հասեալ... եւ թեքեալ զմանկաղ բանին ի մուս հոգոյն սրբոյ և սկսանէր ի յոճ արտօյ ագարակին եւ զընէր լիարուռն խրճուռնս որայից և բարգից արժանաւոր լայնանիստ կալոյն և բազմատար ի շտեմարանէն վերնոյ...»²⁹:

Վարդան Արևելցու համար ևս գեղարվեստական-ստեղծագործական գլարևոր միջոց է այն, որ վերացական մտքեր կամ հոգևոր, գաղափարական տրամադրութիւններ մատուցելիս հաճախ դիմում է փաստացի, առկա իրականութեանը, որի շնորհիվ դրանք ավելի շոշափելի կերպարանք են ստանում և անմիջաբար կապվում բնութեանը, կյանքին, մարդուն: Նա տեապես ձգտում է պատմական իրադարձութիւնները, ճշմարիտ եղելութիւնները, առօրյա իրավիճակները վերարտադրել առարկայական շրջապատի և կենդանի միջավայրի մեջ:

²⁸ Ներբողեան ի Յովհան Ունեցի, ձեռ. № 3069, Բ. 108բ—109ա:

²⁹ Ներբողեան ի Գրիգոր Լուսավորչին, ձեռ. № 8775, էջ 226բ:

Այս նույն ներբողում, օրինակ, կարդում ենք հետևյալը. «Զի ձմեռն քանց և այգիք ծաղկեցան, ծիծուռնք բանաւորք եկեալ են և տատրակք բաղցրածայն հնչեն, զի գարուն հորդորէ քարոզութեան...»³⁰: «Յաղագս բնութեան» ճառի մեջ վերապատկերում է հետևյալը. «...և ունի բնութիւն» և զերկին իրրև զտուն, և զամբս իրրև զթևս հովանոյ և որպէս ցնցուխս ստեանց, զամառն և զարև՝ որպէս զհանգրստեան որոտոց և զգարունն զարթման՝ պատմուճան զարդու, զլուսաւորսդ գեղեցկադիտակ՝ մանգակալս, զորոտումն և զփայլատակումն՝ գաւազան և սաստխր/ատ/ու, զգետ, և զաղբիւրականս՝ լուալիս բաղաննաց»³¹: Մի այլ տեղ, խոսելով թարգմանիչների գործունեութեան մասին, գրում է. «Ընդ ծովու կըրուէին, ընդ ալիսն մարտընչէին, հողմոց ընդդիմանային... հաւաքելով յինքեանս զհոյսս իմաստիցն, իրր զիմաստուն մեղու՝ ժիր և գործունեայ՝ զանօսարգոյն և զշահաւէտ ծաղիկս հաւաքէին և զխոտանսն ի բաց ընկենուին»³²: Իսկ ներսես Շնորհալու գործունեութիւնը փորձում է ներկայացնել հետևյալ պատկերով. «Ուստի առեալ զստաշխ և զկինամոն, քրքրում և նարդոս, ուլունս շափուղայս և շարս մարգարտաց, որովք հիւսոյր պսակս ոսկիանքկար կիտաժովք՝ ի փառս զարդու կաթողիկէ կեղեցույ»³³:

Գրիգոր Լուսավորչին նվիրված ներբողում այսպիսի կենդանի ու գողարիկ նկար է վկայակոչում. «Զոր օրինակ՝ Հայր որդեսէր և դեռարոյս մանկան թօթովախօսութիւն և ի հայթաթումն ուրախանայ առաւել...»³⁴:

Գրերի գլուտի առիթով իր ուրախութիւնը բացահայտում է նրանով, որ ստեղծված պահը նմանեցնում է մի ընտանեկան կոչունքի, երբ ասնդան հոգևոր պատրաստական է, բաժակն իմաստութեան մատրուակի: Փութացարուք, հաւատացեալ ժողովուրդք աստուծոյ, եկայք ճաշակեցէք, եկայք զմալիցարուք, եկայք արբեցարուք հոգևոր արբեցութիւն»³⁵:

Այս նույն առիթով նա կենցաղային հետևյալ դրվագն է վկայաբերում. «Այժմ բերկրեցար սրտիւ, ցընծացար հոգով, զլուարճացար մտօք, զլուարթացար երեսօք: Այժմ ի խնդութենէ ի վեր վազեմք, կայթեմք ձեռօք, կաքաւեմք ոտիւք, պարեմք ամենեքեան»³⁵: Երբ թարգմանիչները վերադառնում են Հայաստան և իրենց ուսուցիչներին գտնում

³⁰ Նույն տեղում, Բ. 247բ:

³¹ Յաղագս բնութեան, Մատենադարան, ձեռ. № 1398, Բ. 299բ—300ա:

³² Ներբող գրերի գլուտին, ձեռ. № 8775, Բ. 286ա:

³³ Նույն տեղում, Բ. 310բ:

³⁴ Ներբողեան ի Գրիգոր Լուսավորչին, ձեռ. № 8775, 243բ:

³⁵ Ներբող գրերի գլուտին. № 8775, Բ. 284ա:

³⁶ Նույն տեղում, Բ. 283բ:

մահացած ու հայոց թագավորությունը՝ վերացած, բնկնում են խոր վշտի մեջ. «Վասն որոյ ողբս առեալ հառաչէին երանելիքն, լային և արտասուէին, ձեռ ի ծնոտի հարեալ և ափս երեսաց եղեալ՝ ողբային, երբեմն ի վերայ ծընկաց կացեալ՝ վարանէին, շիւարէին, տարակուսէին, զզուլսս շարժէին, զաշս ողորմ ածէին, զծնօտս ապտակէին, զբարձսն ծնծէին, ողբերգական բանս խոսէին, յեղանակաւ բացականչէին, զանշունչ տարրերս ի յողբս շարժէին, էհա՛, էհա՛ ասելով, աւաղական բանս յաճախէին...»³⁷: Ինչքան էլ որ զույնները խտացված են, զգացումները պրկված, համենայն դեպս իրականությունը նկատվում է ամենայն հստակությամբ: Կասկած չկա, որ միջնադարյան պայմաններում սգի դրսևորման այսպիսի բարձր եղել են: Այնպես որ Վարդան Արևելցին ճշմարտացիորեն վերարտադրում է նաև կենցաղային մանրուքները:

Վերոգրյալ պարբերության մեջ ուշագրավ մի վկայություն կա, որը մատնանշում է նաև հայ ժողովրդի բնության հետ մարդկայնորեն հաղորդակցվելու սովորությունը՝ նրա հետ իր հույզերն ու խոհերը կիսելու միջոցով: Թարգմանիչներն իրենց վշտի ժամին «զանշունչ տարերս ի յողբս շարժէին», — ասված է այնտեղ: Բոլոր ժողովուրդների գրականությունների պատմության մեջ արձանագրված է բնության անձնավորման այս երևույթը: Արևելցին շատ հաճախ է անձնավորում բնությունը, նրա տարերքը: Անձամբ ինքը, որպես հեղինակ, ինչպես նաև իր երկրում հանդես եկող անձնավորությունները, բազմաթիվ առիթներով հոգեկան հաղորդակցության մեջ են մտնում բնության հետ, որն իր հերթին ամրացնում է նրա գեղարվեստական երկերի կապը իրականության հետ: Այսպես, օրինակ. «Ողբացէ՛ք երկինք և երկիր, ծառք անտառի և ծաղիկ դաշտի, լեռինք և բարձունք և բոյսք ամենայն՝ զանմշտութիւն ազգիս մերոյ և զթագաւորաց մերոց զանզգամութիւն»³⁸, և կամ՝ «Ողբան ճանապարհք երթեկաց, ողբան ճանապարհք ուխտաւորաց, ողբան տեղիք աղաթից, ողբան յովովք բնակչաց, կանայք տըխրեալք, կուսանք սգացեալք, հարսունք ողբացեալք, ծերք ապշեալք, երիտասարդք յիմարացեալք, իշխանք զըմտեալք, զօրականք լըբեալք, զինուորքն զարհուրեալք...»³⁹: Մի այլ տեղ՝ «...այժմ ցնծան երկինք, պարեն հրեշտակք, զըւարճանայ երկիր, խայտայ ծով լըրիւ իւրով, արեգակն պայծառ ծագէ, լուսինն լիապէս էրևի, աստեղք փայլին ճաճանչիւք, տարերք ուրախանան, բոյսք զալարացեալ զըւարթանան և մեք-

խարխալցեալ բերկրիմք ցնծութեամբ»⁴⁰: Ինչպես տեսնում ենք, բնությունն ու մարդը հավասարապես և համատեղ ապրում են նույն հույզերով: Վարդան Արևելցու երկերում ևս ակնառու է տիեզերքի և նրա մանր տարրերակի՝ մարդու (microcosmos) ընդհանրացման կամ անուղղակի նմանակման խնդիրը: Դա դիցաբանության և հին աշխարհի տ. միջնադարի մտահայեցողության դրսևորումներից մեկն էր. մարդը իր մեջ պարփակում է տիեզերքը, մարդը նրա մանրակերտն է՝ պսակված հոգով և բանականությամբ:

Իրականությունն ու բնությունը հեղինակի տեսագաշտի մեջ են անմիջականորեն նաև այն դեպքերում, երբ փորձում է բնութագրել իր կերպարներին, բացահայտել նրանց բնավորության առանձին հատկանիշները: Հերոսները բնութագրվում են որպես «պարիսպք եկեղեցւոյլ», «աշտարակք ամրութեան», «ծաղիկք վայելուչք», «նաւահանգիստք ալեկոծելոց», «լիալիր լուսինք և աստղք ջահարբոբք», «տունկք տենչալիք և ծառք արմաւենիք», «բարունակք ծաղկեալք», «եղեմարուլս աղբերացն տիպք», «բանաւոր ծիծուռնք, ողջախոհ տատրակքն» «ամպք ցաւաւորք և անձրեք ծարաւի անդոց», «իբրև զկորին առիւծու գեղեցիկս ճեմելով և իբրև զձագս արծուոյ մեծ՝ ընդ արեգակամբ թըռչելով»⁴¹:

Այս կարգի պատկերներն ու համեմատությունները Արևելցու ստեղծագործություններում հաճախադեպ են:

Սակայն բանն այն չէ միայն, որ իրականությունը, բնաշխարհը, իրական կյանքը ընդհանրապես ճշտությամբ պատճենահանվեն: Դա առավելություն չէ և, ըստ էության, իրապաշտություն (ռեալիզմ) էլ չէ: Իրականության գեղարվեստական վերարտադրությունն է հատկանշականն ու արժեքավորը: Դա ակնբեր է նաև Վարդան Արևելցու մոտ, միայն թե, շմոռանանք, միջնադարյան պայմաններում և միջնադարյան կրոնափիլիսոփայական ու գեղագիտական մտքի պահանջների համաձայն: Հայտնի է, որ ամեն կերպ միջնադարյան քրիստոնեական աշխարհում իրական, աշխարհիկ կյանքը ոչ միայն չէր գովերգվում, այլև այն մերժելու, ոգեղինացնելու, վերացարկելու, հնարավորին չափ թանձր իդեալիստական-կրոնական շղարշով քղարկելու և այլաբանորեն ներկայացնելու միտումն էր իշխում, որը աստվածաբանական գոգմատիկ ջատագովությանը բաջալերվում էր: Այսպիսով, միջին դարերի հայ հեղինակները, որոնք մեծ մասամբ կրոնավորներ էին, եթե ման-

37 նույն տեղում, թ. 287բ:

38 Յորդիս և ի թոռուս, ձեռ. № 8775, թ. 277ա:

39 ներքո գրերի գյուտին, թ. 290ա:

40 նույն տեղում, թ. 284բ:

41 Յորդիս և ի թոռուս, ձեռ. № 8775, թ. 274բ, 275բ: ներքո գրերի գյուտին, ձեռ. № 8775, թ. 292ա, 302բ:

րանկարչության, գրականության և արվեստի մյուս ձևերում ձգտում էին այս կամ այն շահով վերարտադրել իրականությունը և պատկերել առօրյա հասարակական կյանքն ու կեցությունը, առաջադիմական մեծ «շեղում» էին կատարում գաղափարապես և գեղագիտորեն: Այդպես նաև Վարդան Արևելցու նշված երկերը նպատակամետ ջանքերով բարձրացված են փաստացի ամուր հիմքի վրա և շոշափում են մեր կյանքի հասարակական-քաղաքական խնդիրներն ու պայմանները: Նույնիսկ կրոնական-տեսական բնույթի նյութերն էլ հաճախ հետապնդում են ազգանվեր գործնական նպատակներ:

Վարդան Արևելցու պատկերած բնությունը սովորաբար իրական է, մարդիկ էլ՝ առօրյայից են, պատմական, հույզերով ու ալյուրամենքով բավականին հարուստ, միջավայրը՝ նույնպես ճշմարտացի, սակայն, բնական է, դա զեռուս իրապաշտություն (ոեալիզմ) չէ. առնվազն պակասում է մարդկանց ներքին կյանքի, հոգեբարոյական պատճառարանված վերափոխումների առաջընթացը, թեկուզ հեղինակը քաջ գիտակցում է, որ «նիւթական բնութիւնս մեր կարատանայ փոփոխման»⁴²:

Վարդան Արևելցին իր գեղարվեստական բնույթի երկերում դիմել է նաև խորհրդանշական (սիմվոլիկ) բացահայտմանը: Ինչպես գիտենք, նա իր մեկնությունների մեջ այդ եղանակը կիրառել է լայնորեն, և դա միանգամայն բացատրելի և հասկանալի է, որովհետև մեկնարանական գրականությունը առանց դրա ըմբռնելի չէ: Քիչ այլ է դրա նշանակությունը, երբ գեղարվեստական գրականության մեջ է կիրառվում:

Խորհրդանշանակությունը էական կարևորություն ունի հին ու միջնադարյան մտավոր և հոգևոր մշակույթի ուսումնասիրման հարցում: Գիտության, փիլիսոփայության, գեղագիտության, գրականության բնագավառներում, մարդկային ընդհանուր աշխարհընկալման և ճանաչողական գործընթացում ավելի անկաշկանդ բացահայտումների էական ձև ու միջոց է եղել: Տիեզերքը, բոլոր իրերն ու երևույթները, այդ թվում և մարդը հաճախ խորհրդանշական վերացարկման էին ենթարկվում, բացատրվում և ընկալվում էին խորհրդանշանների միջոցով: Այս կերպ մարդկային մտածողությունը թեև ծուլ էր ավելի ազատ, խիզախ, ընդարձակվում և ավելի գործուն էր դառնում: Վերջապես, շատ են խորհրդանշանակության, մանավանդ բրիտանիականի հետ կապված հարցերը նաև հայ իրականության մեջ:

Սույն խնդիրը այստեղ նախապես դիտարկել ենք հայ մեկնարանական գրականության տեսական նախադրյալների մասին խոսելիս⁴³, բայց ոչ ուղղակիորեն: Ավելացնենք միայն այն, որ հավասարապես վերաբերելով և՛ բնությունը, և՛ մարդու մտավոր ու հոգևոր գործառնություններին, գեղագիտության համար էլ այն չէր կարող շահագրգռող միջոց ու հնարանք չլինել: «Գերագույն իմաստությանը» հասու լինելու համար ժամանակի գեղագիտական մտածողությունը շատ հաճախ էր դիմում նրան, հենվում նրա վրա, ամեն կերպ առնչվում առանձին խորհրդանշանների խորհրդանշական իմաստներին: Շատ դեպքերում վերջիններս գրական շրջանառության մեջ են գրվել շբացելով փակագծերը, իբրև ինքնըստինքյան հասկանալի իրողություններ այս կամ այն արդեն ընկալելի նշանակությամբ: Ժամանակի ընթացողի համար դա միանգամայն հասկանալի ու բնական էր, իսկ եթե այսօրվա ընթացողը համապատասխան պատրաստակարանությամբ չի զինված, չի կարող հաղորդակից լինել ոչ միայն նրանց պարզ նշանակությանը, այլև առավել ևս կիրառման նպատակին: Խորհրդանշանությունը նաև գեղագիտական նյութ է, շաղախ ու բանալի, առանց որի անբնական է միջնադարյան որևէ գեղարվեստական ստեղծագործություն՝ արվեստի ինչ ճյուղի էլ պատկանելիս լինի:

Հայ մատենագրությունը ևս ողողված է խորհրդանշաններով, մեկնարանական, փիլիսոփայական, գիտական, նաև պատմագրական երկերում դրանք անպակաս են: Սակայն արվեստի և գեղարվեստական գրականության մեջ իմաստավորվում են կրկնակի՝ իրենց համընդհանուր ճանաչում գտած իմաստով և այն նոր փոխաբերական նշանակությամբ, որ նրանց արվում է գեղագիտական նկատառումներով՝ կոնկրետ հեղինակի կողմից, կոնկրետ մի երկում կամ նկարի, քանդակի, ճարտարապետական հարդարանքի մեջ: Պարզ է, թե ինչքան լայնարձակ ու բազմազան են խորհրդանշանության և՛ աշխարհը, և՛ կիրառության ոլորտներն ու միջոցները:

Վարդան Արևելցու մատենագրական ժառանգությունն ընդհանրապես հարուստ է խորհրդանշաններով, դրանց տրված երբեմն ուրույն իմաստավորմամբ, առհասարակ այս երևույթի ուսումնասիրման համար ընձևած լայն հնարավորություններով: Ուշադրության արժանի է մանավանդ Վարդան Արևելցու հեղինակային վերաբերմունքը դրանց նկատմամբ:

⁴² Սաղմոսաց, ձև. № 1190, Թ. 259ր: Հմմտ. Лихачев Д., Поэтика древнерусской литературы, с. 141.

⁴³ Տե՛ս նաև մեր «Հայ մեկնարանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ» հոդվածը, էջ 60—93:

* Հմմտ. Каздан А., Византийская культура (X—XII вв.). с. 115. Лихачев Д., Поэтика древнерусской литературы, с. 161—169.

Մանոթեանանք մասնավորապես նրա գեղարվեստական երկերից առնված մի քանի նմուշների:

Խորհրդանշաններն այստեղ նախ գեղարվեստական հնարանքի բազարիչներ են դառնում, դյուրացնում համեմատությունները, իմաստավորում փոխաբերությունները, այլաբանությունները, կերպարային բնութագրումները, բազմազան են դարձնում ոճաարտահայտչական միջոցները և ավելացնում դրանց ներգործող ուժը: Այդպիսիք են, օրինակ, հետևյալ «քնարական» խորհրդանշանները՝ լույսը, արփին, անձրևը, սյունը, լեռը, աղբյուրը, ակը, բաժակը, պարիսպը, կաթը, գինին...: Բնական է, միևնույն խորհրդանշաններն անգամ Արևելցու երկերում քիչ թե շատ տարբեր և ավելի ուրույն կիրառություն պիտի գտնեին: Որինակ, է (7) սովորական խորհրդանշանի համատարած կիրառության մեջ միանգամայն առանձնանում է հետևյալը. «Եւ, արդ, գիտել պարտ է, զի ստուգիւ աւուրք է (7) են խորհրդական տօնիցն յիշատակ կուսաւորչին մերոյ՝ սրբոյն Գրիգորի ըստ եօթանց շրջագայութեան կենցաղոյս և է-ից աւուրց շարաթու՝ զեօթնարդեան շնորհաց ընդունակն պատուելով: Եւ, արդ, առաջին ար յիշատակի սրբոյն մուան ի Վիրապն ի հոկտեմբերի ի ԺԳ (13) կարգեալ զխորհրդայէս սկիզբն փրկութեան, զի իջմամբ նորին սկիզբն եղև ելանելոյ մեզ յերկինս: Երկրորդ՝ ելն ի Վիրապէն, որ է աւետեալ ար ելանելոյ մեզ ի խաւարէ կոսպաշտութեան՝ ի լոյս ճշմարիտ աստուածգիտութեան...»⁴⁴,

Ներսէս Ենորհալու օժման տարեթվի առիթով այսպիսի խորհրդանշական խորհրդածություններ է անում. «Առաւել ևս յելանելն յաստիճան պատրիարկութեան ի թին խորհրդական հարիւրոց վեցից և երկուց եօթանց (614) այն լիութեամբ լրացեալ ունէր յոգոջ իւրում զհանճար Վեցօրեայ գրոցն, և զշարիրաւորն՝ աճման հասակի, ըստ տառից վեցից, որք բերեն զէութիւն անուանն իւրոյ, որովք յաճախ փառաւորեաց զԱստուած, ունելով յինքեան զարհնութիւն և զսրբութիւն աւուրն եօթներորդի պաշտեաց զպաշտօն Աթոռոյն ամս է, ածելով յաշտիճան փառաց է եպիսկոպոսունս, որք հռչակաւորք էին անուամբ և իրօք... և ոչ դադարեաց յաւուրսն յայնոսիկ արկանել զեօթնարփի շնորհքս պարգևին ի սեղանաւորս... և ի կատարումն երրակի եօթներեկին՝ հանգեալ ի Քրիստոս...»⁴⁵:

Գրիգոր Լուսավորչի կյանքի ամեն մի գրվագ ունի իր խորհրդանշական իմաստավորումը: Տեղանքին ևս տրվում է նման նշանակություն. «Քանզի երկինք լինէր՝ խորութիւն Վիրապին, և բնակութիւն հրեշտա-

կաց՝ որչն դիւաց, և կայեանք զուարթնոց՝ մօրին սողնոց, և աւթարան զաւրացն վերին՝ բանտն խաւարին, և գործարան կենաց՝ տեղին մահապարտաց...»⁴⁶: Այդպես նաև՝ նրա կրած շարչարանքներից յուրաքանչյուրը՝ «Բեռն աղին, զոր բարձին թիկունք նորա համբերող, եբարձ ի թիկանց մերոց զբեռինս մեղաց և համեմեաց զանհամութիւնս մեր աղին ճշմարտութեան: Գլուխ ի վայր կախիլն նորա՝ ուղղեաց զզնացս մեր ի բարձունս և ջուրն լուաց զաղտ հնութեան մերոյ, մոխիրն էբեր մեզ աւժումն ուրախութեան: || Քացախն եբարձ զկիրս մերոյ տկարութեան և տատասկն՝ զփուշ մերոյ խըղճմտանաց: Քերանքն՝ զմարմինն ապականագործ և կապարն՝ զժանրութիւն պարտեաց մերոց: Դանդանաւանդն զանասնական անհնազանդութիւն, թիւ հնգետասան շարչարանացն՝ է խից զբերս ախտիցն, որ յայնմ հասակի սկսանին և արարին զկեանս մեր ամենաճառագայթ, որպէս լուսին զհնգետասան գիշերն խոր Վիրապին իրք՝ զվիրաւորեալքս և զհոսեալքս յերկնից ի խորս անդնդոց, ի վեր ածեալ զմեզ ի յերկինս հեան, որպէս տէրն զհոգիսն ի դժոխոց»⁴⁷:

Ինչպես նկատում ենք, Վարդան Արևելցին բոլոր դեպքերում խորհրդանշանները ծառայեցնում է գեղարվեստական նպատակների և դրանց օգնութեամբ ջանում «թաքուն» իմաստներ կորզել, ասված խոսքի անմիջական մտքից վերացարկումներ ու բնութագրումներ անել՝ իր խոհերն ավելի բովանդակալից, հույզերն ավելի ազդեցիկ դարձնելու համար:

Վարդան Արևելցու հատկապես գեղարվեստական երկերի գաղափարական բովանդակության և ստեղծագործական հնարանքների քննությունն ընթացքում կարելի է ավելի հստակ տեսնել, թե նա ինչպես էր ըմբռնում, զգում, շարժում գեղեցիկը գեղագիտորեն և բարոյապես: Այս կարևոր խնդրին նրա ստեղծագործությունների մեջ լայն տեղ ու նշանակություն է տրվել: Դա ևս նպաստում է, որ ավելի ճիշտ և ամբողջական կարծիք ու եզրակացություն ստեղծվի Արևելցու գեղագիտական ըմբռնումների և ստեղծագործական կյանքի մասին:

Նա թեկուզ և զուտ տեսական-գեղագիտական խոսք չի ասել այս առնչությամբ, սակայն մինչև այստեղ ասվածից ու ներկայացվածից դժվար չէ համոզվել, թե որքան բազմազան ու ընդարձակ է նրա գեղագիտական տեսողաշուն ու զգայական աշխարհը: Դրանցում որոշակի է այն ամենը, ինչը նա համարում է գեղեցիկ, գեղեցիկի իդեա կամ՝ իդեալական գեղեցկություն:

44 Ներբողեան ի Գրիգոր Լուսավորչին, ձեռ. 8775, Թ. 251ա:

45 Ներբողեան ի Վահրամ, ձեռ. № 8775, Թ. 314ա:

46 Ներբողեան ի Գրիգոր Լուսավորչին, ձեռ. № 8775, Թ. 232բ:

47 Նույն տեղում, 236ա—236բ:

Վերհիշենք, որ ինքը եկեղեցական առաջատար գործիչ էր, և, թերևս, եկեղեցում էր առավելապես բազմաձև ու բազմերանգ բեկբեկվում գեղեցկի միջնադարյան ըմբռնումը՝ միշտ ենթակա հոգևոր-եկեղեցական գնահատման չափանիշի: Ըստ այսմ՝ Վարդան Արևելցու համար էլ գեղեցկի գերագույն արտահայտությունը երկնային արարելն է, ապա՝ նրա արարչագործությունը՝ բնությունը, որովհետև երկուսն էլ կատարյալ են: Աստված ամեն գեղեցկի սկզբնաղբյուրն է, բնությունը՝ շտեմարանն ու ամբողջությունը: Գեղեցիկ են ծովը, լճերը, լեռները, ծառերը, ծաղիկները, գեղեցիկ է «սիգածնեմ կորյունը», «ընդ արևգահամբ», հպարտ սլացող արծիվը, նաղելի եղևիկը, լուսապայծառ առավոտն ու հրակարմիր մայրամուտը...: Այգպես է. Արևելցին գրանցով խորհրդանշաբար բնութագրում ու ներկայացնում է այն ամենը, ինչ իր համար գեղեցիկ է՝ լինի իր կամ երևույթ, մարդ կամ մարդկային որևէ վսեմ արարք: Իբրև օրինակելի կերպարների՝ Գրիգոր Պահլավունուն և Ներսես Շնորհալուն ներկայացնելիս դիմում է բնությունը. «Ի քաղցեննոյ արմատոյ բիրաբեզուն շառակեղք, ծառք ծաղկակետք՝ յանծորելի պաղոյն ծանուցեալք, աղբուրք յորդահոսք... ամսք ցաղաւորք և անձրեք ծարախ անդոց»⁴⁸: Բազում են նման օրինակները:

Մարդը, որ բնության ամենագեղեցիկ արարումն է, ըստ Արևելցու գեղեցիկ է, երբ համապատասխան ներաշխարհ ունի: Որո՞նք են այդ աշխարհում առավել այն հատկանշական գծերը, որոնք առհասարակ սիրում է ընդգծել նա. նախ և առաջ, անշուշտ, աստվածասլաշտությունը, եկեղեցասիրությունը, բայց և՛ բարությունը, ազնվությունը, արդարությունը, մաքուր կենցաղով ապրելը, ճշմարտությունը, հավատքին ու բարձր գաղափարներին մինչև վերջ նվիրվելը, հզորությունը, խիզախությունը, ամեն վատի նկատմամբ անհանդուրժողությունը, մարդուն օգնելն ու սիրելը...: Գեղեցկության ցուցանիշ են մարդու գործունեության առարկայական, մտավոր և հոգևոր այն բոլոր արդյունքները, որոնք հիացմունք, զարմանք, հաճույք, հաղթանակ, ազատություն, սոցիալական արդարություն, սեր և երջանկություն են բերում, այլ կերպ՝ անհրաժեշտ ու օգտակար են:

Վարդան Արևելցին ևս գտնում է, որ գեղեցկի, գեղեցկության իդեալի համար էական պայման է նաև արտաքինը, արտաքին հանդերձանքն ու տեսքը: Դա հավասարապես վերաբերում է գծերին, չափերին, գույներին, ձայներին, համաշափությունը, ներդաշնակությունը, շքեղությունը, ահավորությունը, վայելուչ կամ գողտրիկ լինելուն և այլն: Ահա թե ինչու նա իր սիրելի հերոսներից շատերին զարդարել է արտաքին

գեղեցկությունից բոլոր հնարավոր միջոցներով, ինչպես, օրինակ, Հովհաննես Օձնեցուն. «Գեղուզէշ տեսով և ի հասակ վայելուչ, ի պայծառութիւն երեսաց, ի գոյն կարմիր և սպիտակ վարդից, ի շուք շնորհի, և փառագարդ մորուօք, դեղձան, խարտեաշ և աղէբեկ, երևմամբ՝ անթերի...»⁴⁹: Միայն այս մի քանի տողի մեջ առկա են գեղեցկի վերոնշյալ բոլոր բաղադրիչներն ու ստորոգելիները: Դրանցում պարզ ու պերճախոս երևում է, թե Արևելցին ինչն է ընդգծում իբրև գեղեցկի գրսևորում՝ գեղուզեշ և վայելուչ հասակ, պայծառ երես, կարմիր ու սպիտակ վարդի, դեղձան, խարտեաշ և ալեխառն գույներ, մորուք, որ «շուք ու շնորհի» ու փառագարդ է, ընդհանուր տեսքը՝ անթերի... և ուրեմն՝ ամեն ինչ և ամեն ոք, ըստ նրա, գեղեցիկ է, երբ նաև արտաքինապես ունի գեղուզեշ սլացիկություն, վեհություն, լույս ու պայծառություն, երփներանգություն, շնորհալիություն, կատարելություն...:

Բնության մեջ, հասարակական և հոգևոր կյանքում չափազանց շատ են գեղեցկի տարբեր գրսևորումներին վերաբերող իրերն ու երկվույթները: Այդ բոլորի մասին էլ ցայտուն փաստեր և օրինակներ կան Վարդան Արևելցու ստեղծագործությունների մեջ, որոնցից բաղմաթիվ նմուշների կարող է ընթերցողը հանդիպել նաև սույն ուսումնասիրության մեջ, տարբեր առիթներով մեր կողմից բերված վկայակոչումների շարքում: Ըստ այդմ՝ չենք դիմում լրացուցիչ մանրամասնությունների: Ասենք միայն, որ Վարդան Արևելցին գեղեցկի միջնադարյան ըմբռնման իշխող սկզբունքներին հավատարիմ է և մեծ հաջողությամբ է դրանք կիրառել իր հատկապես գեղարվեստական ստեղծագործություններում: Գեղեցկի իդեալի հաղթանակը նրա գեղագիտական-ստեղծագործական հիմնական ելակետներից ու նպատակներից մեկն է:

Նկատի ունենալով, որ այս բոլորը Վարդան Արևելցու գեղարվեստական երկերի մեջ տիրական տեղ են զբաղում, և եթե նա մեր պատմական անցյալին դիմում է հիմնականում նրանից քաղված հետևությունները ժամանակակից հասարակական-քաղաքական փաստացի իրավիճակին ծառայեցնելու գործնական մտադրությամբ, իր ազգային և գեղարվեստական իդեաների կենդանի մարմնավորմամբ, ապա պարզ կլինի, թե որքան կարևոր է նրա իբրև գրող-գեղագետի առ այսօր աննկատ մնացած ներդրումը միջնադարյան հայ գրականության մեջ:

⁴⁹ Ներբողեան ի Յովհան Օձնեցի, ձեռ. № 3069, Բ. 108բ, Հմմտ. Апресян Г., Из истории армянской эстетической мысли. Книга I, с. 24-26, 41.

⁴⁸ Ի թոռունս, ձեռ. № 8775, Բ. 301բ—302ա:

Գ. Ոճաարտահայտչական միջոցներ

Վարդան Արևելցու ոճին և լեզվամտածողությանն առնչվելիս, առաջին հայացքից իսկ ակնառու է դառնում դրանց բազմազանությունը. որրան երկ ունի նա, այնքան և ավելի հատկանիշներ է ներդրել դրանցում: Ընդհանուր առմամբ, իրեն հավատարիմ է մնացել իր ոչ գեղարվեստական երկերում, հորինելով դրանք պարզ, մատչելի, դյուրահասկողի շարադրանքով: Մենք գիտենք նրա տեսակետը այս կապակցությամբ. շատ որոշակի դիրքորոշվում է դեպի պարզությունն ու հստակությունը, թեկուզ իրեն համարեն «փոքրաբան և շինական»¹, որ նա պատրաստ է նույնիսկ «գեղջուկ բանի», խոսակցական լեզվով ստեղծագործելու:

Ջուտ դասական հայերենով են շարադրված «Հաւարումն պատմութեան»-ը, մեկնությունները, «Մեկնութիւն քերականին», ներբողները, շարականները, ճառերը:

Պատմության ու մեկնությունների ոճական կառուցվածքի և առանձնահատկությունների մասին հատուկ անդրադառնալու հարկ չկա, տարրեր տեղերում տված մեր մի քանի բնութագրումները բավական են: Սակայն հատկապես ներբողները, ճառերը, շարականները, այս տեսանկյունից միանգամայն ուշագրավ են: Գրանցում Վարդան Արևելցին հանդես է գալիս իբրև միջնադարյան արձակագիր: Իր խոսքին տալիս է դարի ճաշակին և ըմբռնողությունը համերաշխ հենք, երանգներ ու հնչեղություն:

Միջնադարյան, հատկապես գեղարվեստական երկերի արտահայտչաձևերի, ոճի խնդիրը ևս ունի իր պատմականության առանձնահատկությունը և պահանջում է համապատասխան մոտեցում: Այն ճարտասանական, հոնտորական ուսուցման նյութ էր, հատուկ վարժության արդյունք, հետևարար և պահանջ: Հոնտորականությունը գեղարվեստական խոսքի թերևս ամենահիմնական հատկանիշն էր համարվում: Որքան շատ էին դրա տարրերը այդ խոսքի մեջ, բազմազան ու ճոխ, այնքան ճիշտ ու գովելի էր այն: Ահա թե ինչու գիտակցաբար, նույնիսկ միտումնավոր կերպով էին այդ տարրերին տիրական ուժ ու ակնառու երանգներ տրվում:

Ի մասնավորի ներբողագրական, ջատագովական, ճառագրական բնույթի երկերի ոճաարտահայտչական միջոցների վերաբերյալ տիրապետողն այն էր, որ դրանք պարզ, դյուրաթափանց, «գեղջուկ բան» չպիտի լինեին, այլ հակառակը՝ «ըստ քերթողացն արուեստի», «հոմե-

րական բան»՝ ճոխ, փարթամ, շուայրեն ուռճացած: Ոճը չէր պատկերացվում առանց բազմակուտակ պաճուճանքի, հարակրկնությունների, շեշտված հոնտորականության և մտասքող հանգույցների: Հարկ էր ամեն կերպ ուժգնացնել նրա հուզականությունը, պատկերների, թեկուզ հաճախ հայտնի ու ավանդական հարադրությունը, խոհական ծանրաբեռնվածությունը, որպեսզի այն դառնար ազդեցիկ, ներգործուն:

Այս գիտակցությունը նոր չէր այդ օրերում: Այն առկա է եղել հին և, մանավանդ, քրիստոնեական ջատագովական-հոնտորական գրականության մեջ առհասարակ: Նրա էությունից է բխում նման ոճական բազմակրկնությունն ու զանազան հարաբերակցությունները, և իրավամբ մերժվում է այն սխալ տեսակետը, ըստ որի իբր ոճական սույն ակնառու հատկանիշը հայ գրականությանը ժառանգություն է մնացել արաբականից: Դեռևս արաբական նվաճումներից առաջ այդ հատկանիշը տեղ ու կիրառություն գտել էր հայ գրականության մեջ:

Մարդը շատ վաղուց էր դարձել ոչ միայն ստեղծագործական առարկա ու աղբյուր, այլև՝ նպատակ: Ուստի հարկ էր, որ նրան շատ ու շուտ հասնեին «իմաստահեղձ բանի» բարիքները: Հայ գրականությունը ոչ սոսկ քրիստոնեության «մարդաբանական» տեսական ու բարոյական դրույթների հիման վրա, այլ ժամանակի, կյանքի, մարդկային հասարակական հարաբերությունների պահանջներով արդեն վաղուց էր մարդուն, նրա հոգեբարոյական ողջ էությունը ներառյալ իր ստեղծագործական ոլորտները: Դեռևս Մեսրոպ Մաշտոցին վերագրված շաբականներում «հանապազ» արկածվում էր մարդու «ծով կենցաղոյն», հանճարեղ նարեկացին ինքնամոռաց մխրճվել էր այդ ծովի ամենախորը նրբերքները: Հետագայում այդպես վարվեցին ներսես Շնորհալին, Հովհաննես Սարկավազը, Վարդան Հայկազնը...: Ուշագրության կենտրոնում էր մնում նաև մարդ-ընթերցողը: Ոճական այս կարգի միջոցներով ու հնարքներով, թվում էր, կարելի էր ավելի արագ ու երկարատև խոսովքի ու շարժման մեջ զնել նրա ներքին հուզական աշխարհը: Ոճաարտահայտչական նման միջոցների աստիճանական դինամիկ ուժգնացումը դիտվում էր իբրև երաշխավորված գրգիռ ընթերցողի ուշագրության, զգայնության և բանականության աշխուժացման համար հավասարապես: Դա պարզապես ոչ ուսուցողական, մանկավարժական նկատառումներով էր արվում, այլ՝ ավելի հոգեբարոյական, գեղագիտական սկզբունքներով: Ահա թե ինչու այսօր մեզ անհարկի շափազանցություն թվացող ոճական հարաբերությունները այն օրերում այդպես չէին թվացող ոճական հարաբերությունները, դրանք համարվում էին անհրաժեշտ. միաժամանակվում, հակառակը, դրանք համարվում էին անհրաժեշտ. միաժամանակ՝ հեղինակի վարպետության և տաղանդի ցուցանիշ: Բնական է, մանավանդ հեղինակի վարպետության և տաղանդի ցուցանիշ: Բնական է, ամեն մի նախանձախնդիր հեղինակ այս առումով պիտի ջանար ի հայտ

¹ Կամիմ բան է մտք խօսել, ձև. № 4139, Թ. 389ա:

գալ առավելագույն հաշողությամբ: Շատերը, ոչ միայն չեն կարողացել շրջանցել այդ, այլև շարաշահել ու արհեստական կուտակումներով մանվածապատուիթյամբ մթազնել են թե՛ իրենց ոճը, թե՛ լեզուն: Ոմանք էլ կարողանում էին պահել շափի զգացումը և խուսափել ճոռումարանությունից: Այս վերջիններից էր Վարդան Արևելցին:

Նա նույնպես հիշյալ բնույթի երկերում ջանում է փարթամացնել իր ոճը, վսեմ ու ճոխ տեսք տալ դրան: Հատկապես համանիշների, համադաս բառերի, դերանունների, մակբայների, մակդիրների, փոխաբերությունների, համեմատությունների, հոստորական հարցումների, քերականական ու ոճական այլ հարակից իրողությունների հարակրկնություններում է այն: Չի կամենում, իհարկե, հոգնեցնել ընթերցողին, սակայն, թեկուզ և ակամա, երբեմն ճնշում է նրա ուշադրության ու զգացումների վրա: Երբ նա փորձում է ուժգնացնել ավանդույթային սարերը՝ հավատարիմ մնալով պատկերավորության կաղապարին, կանոնականության ուժ ստացած մակդիրներ, փոխաբերություններ փոխառնել Մ. Գրբից և հայրաբանական գրականությունից, բնական է, չի շահում, զրկում է իր ոճը հիշումությունից և ինքնուրույնությունից: Սակայն, նա չի շարաշահում այս սրամազրությունը: Ոճական նման միջոցներով կրկնելով, խտացնելով, շիկացնելով իր խոհերն ու հույզերը հասնում է իր հիմնական նպատակին. լարում ընթերցողի հետաքրքրությունն ու գործուն վերաբերմունքը դրանց հանդեպ: Այսպես և ոչ ավելին: Ընտրելով իր այս զգաստության, նա պահպանել է անհրաժեշտ շափավորությունը՝ համեմատաբար նվազ անհարկի շեղումներով: Այսպիսով, մի կողմից աշխուժացրել, փարթամացրել, երբեմն գունեղ ու շուայլ է դարձրել իր ոճը, մյուս կողմից՝ այն ազատ է պահել քմահաճ, հարկադրական, բնականությունից զուրկ, ճնշող տարրերից, դարձրել է կենդանի և ուրույն, ինչպես կտեսնենք բերված բնագրական օրինակներում:

Այսպես՝ «Եւ արդ՝ սոքա (Գրբի գոր լուսավորչի՝ զավակներն ու թոռները— Փ. Ա.) շորքեան շառաւիղը մեծի հօրն հաւատոց սրբոյն Գրբի գորի արփիածագ լուսաւորչին մերոյ, սերեալ սերտութեամբ ի նմանէ ստուգի բողբոջ ցանկալիք: Ոչ միայն ըստ մարմնոյ բեղմնաւորեալք բարունակք բարիք, այլ և հոգևոր շնորհացն գոլով պտուղք գովելի երկամբք... Արեգակունք կողմանցն արևու և լուսատուք ի խաւարի նստելոց, ցրնծութիւնք տրտմեցելոց և ժողովողք հօտից ծարաւելոց, նարդոսք անուշաբուրիք և բրբրումք քաղցրատեսիլք, ծաղիկք վայելուչք տանս թորգոմեան և ցրնծութիւն աղբիս հայկազեան... Տունկք տենչալիք, ծառք արմաւենիք, կերակրողք տանս թորգոմեան...»²:

Ոճի միջնադարյան ավանդականությունը պահպանելով հանգերձ, պատկերները ջանում է հյուսել բողբոջներից, բարունակներից, ծառ ու ծաղկից, և դրանցով իրականության պատրանքը արթուն պահել:

Ահա այս կարգի ևս մի նմուշ. «Յորոյ (Գրբի գորիսի— Փ. Ա.) կարմրագոյն արեանն հեղմանէ անբուսածին քարինք վայրացն ծաղկէին և թանձրագոյն հողն առոգեալ լինէր, կանաչագեղ բոյսքն ծիրանագոյն ներկանէին և խուացեալ կոշտքն երկրի՝ դալարացեալ սրխարլի և սքանչելի տեսողաց և զարմանալի ամենայն մարդկան բնութեան»³:

Իսկ Գրբի գոր լուսավորչին նվիրված խոսքերի մեջ կան և այսպիսիները. «Եւ արդ, մի՞թե փոքր էր նահատակին հանգէս, ուր արարիչն եկեալ հրեղինացն դասուք՝ տեսանէր զարժանաւորն տեսիլ նոր և անծանօթ դարուց և ժամանակաց, յորմէ յետէ եղև մարդ ի վերայ երկրի: Մի՞թե փոքր էր պատարագն, յորոց հոտոց լրցան երկինք և երկիր, և կենդանացն զարմք և զաւակք հայկազեանց և թորգոմեանց, Արշակունեաց և Պահլավունեաց: Մի՞թե փոքր էր պարծանք որդոց առ այնպիսի հայր, եթէ ընդ շաղագ նորա գնայցեն... մի՞թե սակաւ և դուզնաբեայ շարշարանօք եղև հայր և բազմութիւն որդոց էած ի փառս, մի՞թե վայրարար զարհուրեալ զողային երիկամունք թշնամեացն և լուծանէին ջիւք բազկաց նոցա և ընկեցեալ լինէին զաղեղունս և գնային բացէ ի բաց փախտականք...»⁴:

Ոճական կրկնաբանություն մի բնորոշ նմուշ է հետևյալ հատվածը. «Կայսերական պատուով ճոխացեալ (Վրթանէս— Փ. Ա.), մեծասքանչ և հրաշալի հռչակեալ յամենայնի, քաջ և արի ի գործս հովուութեան, մարդասէր և ողորմած, բարետեսիլ և քաղցրահայաց, հեղաբարո և երկայնամիտ, աղքատասէր և զարմանիչ, անխախտ և անյիշաչար: Սրբոց տածիչ և այրեաց խնամիչ... ընդ ամենայնի ամենայն եղևալ, զբարեմիտն յորդորելով ի գործս բարիս և զչարն զարձնելով ի մոլորութեան ճանապարհէն, զոմանս քաղցրութեամբ, զոմանս յանդիմանութեամբ, զոմանս խըստիւ և զոմանս կակղութեամբ, ոմանց սաստեալ և զոմանս յանդիմանեալ, յոմանս ողորեալ և զոմանս մխիթարեալ, և այնպէս՝ իւրաբանչիւրոցն...»⁵: Ահա մի այլ հատված, որտեղ հատկապես նկատելի է մակդիրների շափավոր հարակրկնություն. «Եվ սոքա երանելիքս զորոց զյիշատակս տանախըմբեմք յառատաբուխ աղբերէն յառաջեալք անճառելի վտակաց բրխամամբ զծարաւ ի անդս մտաց մերոց ոռոգեալք՝ աստուածային շնորհացն պարգևողք, տունկք տենչալիք ի մեծագոյն

³ Նույն տեղում, Բ. 273բ:

⁴ Ներքոյն ի Գրբի գոր լուսաւորչին, Բ. 231բ—232ա:

⁵ Յորդիս և ի թոռունս, ձեռ. Մ 8775, Բ. 260բ—261ա:

² Յորդիս և ի թոռունս, ձեռ. Մ 8775, Բ. 274բ—275ա:

բուրաստանէն բողոքեալք, բարունակք բեղմնաւորք ի հայրատունկ որթոյն շառաւեղեալք, ծաղիկք ծիրանափառք՝ ի ծովային ծոցոյ ծաղկոցէն ընծիւղեալք, պտուղք գեղեցիկք ի բարտք արմատոյն բոլորեալք, քաղցրահամք և վայելչազարգք...»⁶: Բերենք մի այլ օրինակ, որտեղ հարակրկնված են առավելաբար ստորոգյալները, բայց ոչ առանց ընտրութեան. «Յորժամ ցնծայր երկիրս հայոց, յորժամ զըւարճանայր ազգս արամեան, յորժամ բերկրէր ի բարեկրութեան, յորժամ խնդայր ի խիզախութեան, յորժամ երանէր յամենայն ազգաց: Վա՛յ ինձ, վա՛յ և դարձեալ վա՛յ ըստ Յովելայ, կորեաք, կործանեցաք, եղծաք, ապականեցաք, թշուառեցաք, լի եղաք տառապանօք, ընկալաք ի ձեռանէ տեառն բազում անգամ զբաժակ բարկութեան, զբաժակ սրտմտութեան, զբաժակ ցասման»⁷:

Վարդան Արևելցիին դերանվան, շողկապի, մակբայի հարակրկնութեամբ ևս ստեղծում է ռճական հատկանիշ: Այս վերջինները կիրառել է առավելաբար ճարտասանական-հոնտորական նպատակով, որոնք բարերար ազդեցություն են թողնում երկի ընդհանուր կառուցվածքի, հեղինակի մտքերի և հույզերի կենդանացման, ոճի ու լեզվի աշխուժացման վրա: Նկատի ունենալով Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին և թարգմանիչներին, Վարդան Արևելցիին թողել է մեր կողմից տողատված հետևյալ հասկածը, որտեղ բազմաթիվ համեմատութունները թվում, հարակրկնված է «սոքա» դերանունը.

«Սոքա պարծանք տանս Թորգոմայ,
Սոքա ծաղիկք աշխարհիս Արամեան,
Սոքա բողոքոք հայկական ազինս,
Սոքա ամուր հաւատոյ,
Սոքա սինք եկեղեցւոյ,
Սոքա ամբութիւնք օրինաց,
Առաջնորդք արդարութեան
Եվ պարիսպք պահպանութեան.
Սոքա տունկք անմահութեան՝
Արմատացեալք ի գնացս չուրց,
Տալով միշտ ի դէպ ժամանակի
Զիմանալի պտուղն հոգեկեցոց,
Որոց կերակուր մնայ ի կեանս յախտնից ...
Սոքա գտողք գրոյ տոհմիս մերոյ՝
Ալփարետաց և սիղորայից»⁸:

6 Նույն տեղում, թ. 256ա:

7 Ներքող գրերի գլուխին, ձեռ. № 8775, թ. 290բ:

8 Նույն տեղում, թ. 296բ—297ա:

Գերանունների հարակրկնության օրինակներ են հետևյալները. «Մեծդ Գրիգորիոս՝ իմդ Լուսաւորիչ, իմդ բաղձալի, իմդ փափագելի, իմդ տենչալի, իմդ փարելի, իմդ խնդութիւն, իմդ պարծանք...»⁹, կամ՝ «Զոմանս քաղցրութեամբ, զոմանս յանդիմանութեամբ, զոմանս խստիւ և զոմանս կակղութեամբ, ոմանց սաստեալ և զոմանս յանդիմանեալ, զոմանս ողորեալ և զոմանս մխիթարեալ...»¹⁰: Հետևյալ հատվածում պարբերաբար կրկնված է «այժմ» մակբայը. «Այժմ պարգեացին լեզուք ծանրախօսք և զօրացի տկարութիւն գիտութեան մերոյ ի փառս և ի գովութիւն աստուծոյ մերոյ՝ գլխածին և մարդասիրին, ոչ լիցի ընթերցեալ՝ և ոչ իմացեալ, կամ խօսեցեալ՝ և ոչ լրեալ, զի որչափ հեռի են Արևելք յԱրևմտից, այնչափ հեռի արար ի մէջ տէր զխաւար տգիտութեան մերոյ, այժմ ոչ լիցի ասել խուժ և լրսել գուժ, այժմ ոչ լիցի միոյն ընթեռնուլ և միւսոյն մեկնել, այլ և ամէնն վերաձայնեացի ի ժողովրդինէն՝ ի փառատրութիւն պաշտօնէից, այժմ ունկնդրութիւն լիցի վերծանողացն և ծանիցէ ըռամիկն զծանրութիւն պատկրանաց տեառն, այժմ ոչ կարօտացի որ թարգմանութեան և ոչ ընթացի որ առ որ, թէ՛ ծանո՞ ինձ զայս»¹¹:

Վարդան Արևելցիին հարակրկնում է ոչ միայն ռճական կամ քերականական միավորները, այլ նաև նույն միտքը, հույզը կամ գործողությունը արտահայտող համադաս և համանիշ բառերը: Օրինակ, ցույց տալու համար, որ թարգմանիչները առանձնության են ձգտել, գրում է. «հեռանային յաշխարհէս, յինքեանս երթային, դամայութիւն սիրէին, զանապատս ողջունէին, զլուութիւն պատէին, յառանձնութիւն յօժարէին», կամ՝ «ի վաստակս և ի ջանս պատրաստէին զանձինս, ժըրանային, տքնէին, աշխատէին, հարցասէրք և քննասէրք լինէին, ուսանելով, կրթելով, վարժելով...»¹²: Մեկ այլ դեպքում՝ «...առ ընկերակիցսն գովելիք, առ վարդապետսն հաճելիք, բանասէրք, հարցասէրք, ընթերցասէրք, տքնասէրք, երկասէրք, աշխատասէրք, վաստակասէրք, ուսումնասէրք, ժըրասէրք, իմաստասէրք: Եւ այսպես ջանչին, արիանային, խիզախէին, զօրանային, հանդիսանային, պատրաստելով, կուտելով, ժողովելով, յօդելով, բարդելով...», կամ՝ «Այժմ բերկրեցաք սբտիւ, ցրնծացաք հոգով, զըւարճացաք էրեսօք»¹³:

9 Ներքողեան ի Գրիգոր Լուսաւորիչն, ձեռ. № 8775, թ. 223ա:

10 Յորգիս և ի թոռունս, ձեռ. № 8775, թ. 261ա:

11 Ներքող գրերի գլուխին, ձեռ. № 8775, թ. 283ա: «Այսպիսի», «ո՞ւ», «թերև՛ս» բառերի կրկնաբանությունները տե՛ս աստ, Յորգիս և ի թոռունս, թ. 263բ, 266բ—267ա, 269բ:

12 Ներքող գրերի գլուխին, թ. 285ա:

13 Նույն տեղում, ձեռ. № 8775, թ. 292բ, 285բ, 286բ:

Այսպիսով, հարակրկնությունը կամ բազմակրկնությունը վարդան Արևելցու գեղարվեստական բնույթի երկերի լեզվաոճական տիրական առանձնահատկություններից է, որը, թեև որոշ գեպերում հասնում է շափազանցման, անհարկի կուտակումների, սակայն, ընդհանուր առմամբ, ջերմացնում, հուզական, պատկերավոր և տպավորիչ է դարձնում նրա ոճը: Այն դեպքում, երբ ավելորդ հարակրկնության վտանգ է առաջանում, նա իր ուղղակի խոսքով երբեմն միջամտում և ասում է. «...են և այլ բազում նախամասնություն... զոր թողաք՝ խնայելով յականջս ձեր և ի լեզուս մեր»¹⁴, կամ՝ «եւ զի մի տաղտուկ խօսեսցուք»¹⁵, և կամ, որ շատ ուշագրավ է, և մենք արդեն դիտել ենք տվել՝ «...եթէ կամիմ ի մէջ եկեղեցւոյ, այսինքն ժողովրդեանն, սակաւ խաւսել և ամենեկուն հասկանալի և ազատակար, որ շահին լսաւդն: Թող նա փոքրաբան և շինական երևիմ, քան թէ բազում բանս ճոռոմ բառիք և աւտար լեզուաբ խաւսիլ»¹⁶:

Վարդան Արևելցու գեղարվեստական խոսքի գրեթե բոլոր առանձնահատկությունների դրսևորման շատ բնորոշ օրինակ է այն ճառը, որն արտասանում է Հուսիկ կաթողիկոսը Տիրան թագավորին հանդիմանելիս: Այն մեջ ենք բերում սակավ կրճատումներով, սրպեսզի բնութագրոր բուն նյութի վրա կողմնորոշվելու ավելի լայն հնարավորություն ունենա. «Ո՛վ թագաւոր, ասելով, ընդէր անմտանաս ի քրէական մեզս յանդրդնելով: Եկեղեցի գնեալ է պատկերն արեամբն Քրիստոսի և ազատեալ ի ծառայութենէ թշնամոյն: Ընդէ՛ր վերբստին շանաս մուծանել ի ծառայութիւն շարին... Յի՛մ աննես զսա տեղի և բնակարան դիւաց, զի՛արդ արասցես զտաճարն աստուծոյ բագինս կոոց, որպէս զյարկս փրկութեան՝ տեղի կորլստեան, ընդէ՛ր զտունս՝ վայրս պղծութեան: Զի՛նչ օգտեցան այնոքիք, որք այդպէս անմտացան:

Արդ՝ ո՞ր են թագաւորքն առաջինքն, շարագոյնքն և ապարասանքն, որ պաշտոնեայք էին դիւաց, ո՞չ ապաքէն որպէս զծուխ պակասեցան և իբրև զփոշի, զոր տարաւ մրրիկ, անյայտ եղեն: Եւ երանի թէ այսչափ միայն, այլ կան և մնան յաւիտենական տանջանացն և լուցկիք անանց հրոյն: Գիտի՛նա՛, ո՛վ թագաւոր, զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել, քան զեղեայն, որ է Յիսուս Քրիստոս. որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնա արձն բունալի (ընդգծումը մերն է—Փ. Ա.): Մի գարհուրիք յայնցանէ, որ սպանեն զմարմին, և ոգոց՝ ոչ ունին իշխանութիւն, այլ ի նրմանէ, որ կարող է զերկոսին կորուսանել ի գեհեննի:

14 Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, ք. 277բ:

15 Ներբողան ի Գրիգոր Լուսաւորիչն, № 8775, ք. 223ա:

16 Ի Կորնթացոց, ձեռ. № 4139, ք. 389ա:

Յիշեալ զվէմն հաւատով, զարհնութեան արժանաւորան՝ զԳրիգորիոս հաւն իմ և զՏրդատիոս՝ հաւն քո: Յորոց կրկին կոփեցաք՝ ըստ հոգոյ և ըստ մարմնոյ: Նոքա զդիւաձոյլ պատկերսն խորտակէին և զմեհեանս դիցն քանդէին և ի տեղիսն եկեղեցիս հիմնարկէին և խաչկանդէին, և դու՛ զտաճար աստուծոյն բարձրելոյ բնակարան դիւաց աննես և տեղի կրոնց պատրաստես և որո՞ւմ տանջանաց չիցես արժանի, կամ ո՞ր գեհեան զքեզ ոչ այրեսցէ, վասնզի կրկին է ապարասանութիւնդ: Ուրացութիւն և ի սրբութիւնսն մեղանչես: Զի թէ ի վայրաբնակ տեղիս կուտս պաշտելն կորուստ է անձին, ապա զո՞ր ներումն թողութեան ունիցի, որ առ սեղանովն աստուծոյ զպատկերսն դիւաց դնիցէ, քանզի զի՛նչ յաղորդութիւն իցէ լուսոյ ընդ խաւարի, կամ զի՛նչ նմանութիւն իցէ տաճարի աստուծոյ և մեհենեաց: Թագաւորի համարիս զպատկերն, և դիւաց է ընդ նմին նրկարագրած առ ի խաբէութիւն պարզամտաց, նաև՝ դիւապաշտին, որպէս դիւի է համարեալ: Եթէ մարդապաշտութիւն կորուստ է անձին, ապա դիւապաշտութիւն յորպիսի՞ գեհեան տանիցի: Իսկ դու զգուշացիր, դո՛ւ, ո՛վ թագաւոր, զի հասցէ ի վերայ քո բարկութիւն ի տեսնէ վասն անարէն գործոցդ, զոր աննես: Զի թէ Բաղդասար, արքայ բարեկացոց, որ զսպաս սրբութեան յանարժան տեղիս մատուցանէր, շարաշար սատակեցաւ, ապա որչա՞փ և առաւել ևս ի կորուստ մատնեցին, որք ըզգարչելիսն ի սրբութիւնսն մերձեցուցանիցեն: Վասն որոյ, աղերսիւ հայցեմ և փոխան աղաչեմ, ո՛վ թագաւոր, բաց զաշս մտացդ և մի՛ փութար ի քոյին կորուստ: Պատկեր ես Աստուծոյ, մի զերկրաւոր թագաւորի պատկերս յարգոյ համարեսցիս, քան զպատկեր երկնաւորին: Յիշեալ, զի գրեալ է, թէ՛ ի պատկեր իւր արար Աստուած զմարդն, մի՛ փոխանակեր զմահկանացուդ ընդ անմահին, զի այդմ պատկերի զաղափարն վաղվաղակի կորընչի շարաշար ըստ արժանեացն... Վասն որոյ, ո՛վ թագաւոր, զարթի՛ր ի թըմբրութենէդ, որ ոչ է ի լընույ, սթափեաց յարբեցութենէդ, որ ոչ է ի գինույ, այլ յայնմանէ, որում վա՛յ տայ մարգարէն: Հիւանդ ես հոգով, մի՛ զանմահ մահն մեռանիւր, կիսազաւս ես այժմ, մի՛ բնաւին ապականիր, ե՛կ ի զըզումն փութապէս և ամբա՛րձ յերկինս զաշս քո, տն՛ս ի վեր և նայեաց ի բարձունս առ տէր աստուած քո: Յիշեա՛ զարարիչն քո, որ ստեղծ զքեզ յուրնչէ, որ է՛հան զքեզ յարգանդէ, որ կերակրեաց զքեզ ի մանկութենէ, որ փրչեաց ի քեզ զըռնչ կենդանի, որ շնորհեաց քեզ զարթայութիւն, որ ետ քեզ զթագաւորութիւնդ, որ խոստացաւ զքեզ զհանդերձեալն, եթէ պահեսցես զպատկիրանս նորա, որ իշխանութիւն ունի կենաց և մահու քո: Յիշեա՛ զշնորհս աւազանին, որով լուսաւորեցար, յիշեա՛ զսնունդ սուրբ եկեղեցւոյ քոյ, որով զատարակեցար, յիշեա՛ զհաղորդութիւն մարմնոյ և արեան Տեառն, որով

կերակրեցար և զմայլեցար, յիշե՛ա զնշանն տէրունական, որով կնքեցար յաւուրըն փրկութեան, որով և պահպանեալ էղեր, որով և փրկութիւն գտեր, յիշե՛ա և զմիւս անգամ գալուստն Քրիստոսի՝ ի նորոգել զերկիր, յիշե՛ա և զնըշան փրկչին՝ յորժամ ծագի յարեւելից պայծառ քան զարեգակն, յիշե՛ա, ո՛վ թագաւոր, զղնել ամբողջն ի քրննութիւն, յիշեա զահեղ դատաստանն և զիւրաքանչիւր գործոց հատուցումն, յիշե՛ա յորժամ Հայր և Որդի և Սուրբ Հոգին բազմին յաթոռ փառաց, յիշե՛ա յորժամ զարք երկնից՝ յերկիր հեղուն: Զմտաւ ած, ո՛վ թագաւոր, թէ որպիսի՞ լիցի ատեանն այն, յորժամ բանք սպառին և գործք միայն թագաւորեսցեն, յորժամ իւրաքանչիւր ումեք յանցանք հրապարակայայտ լինին, յորժամ զարհուրեալ զողան տարրեղէն արարածք: Եւ եթէ այժմ ոչ եկեսցես յուղղութիւն և զգաստացիս յամառութենէդ, անդ զայս ամենայն քեզ յուշ արարից և յիշումն ածից: Այնժամ զըղչասցիս և ո՛չ օգտեսցիս, հառաչես և ո՛չ հասանես, խնդրես և գտանես, հայցես և ո՛չ առնուս, յոգոց հանես և ո՛չ մխիթարիս, զի կոչեցի զքեզ և ո՛չ լրւար ինձ, յերկարեսցի զբանս իմ, և ո՛չ անսացեր: Վասն որոյ, աղաչեմ, այժմ լո՛ւր, մինչդեռ ժամանակս ի ձեռս է, մինչդեռ գոյ յոյս փրկութեան և ի բաց է դուռն ապաշխարութեան... Գոչե՛ա ընդ Մանասէի, թէ չեմ արժանի հայել ի բարձրութիւնս երկնից ի բազմութենէ անաւրէնութեան իմոյ, վասն զի ամենայն շարիսն աւելի, որով քաւիս ի մեղացդ, հանդիպիս փրկութեան և գտցես ողորմութիւն ի դէպ ժամանակի: Ահա ծանուցի քեզ զամենայն ըստ պատշաճի, զոր թէ լուիցես, կեցցես սիրապէս»¹⁷:

Միջնադարյան գրավոր գեղարվեստական հուշարձանների ոճարանական հատկանիշների շարքում կարևոր տեղ են գրավում մակդիրները, փոխաբերությունները, համեմատությունները, բառակազմությունները: Դրանցից յուրաքանչյուրը իր հետ բերում է մի նոր շեշտ, նոր նրբերանգ, որը հավասարապես կարող է վերաբերել երևույթների և իրերի թե՛ արտաքին կողմերին, և թե՛ ներքին, աներևույթ, բայց բնորոշ հատկանիշներին: Այստեղից էլ՝ դրանց նշանակությունը:

Վարզան Արևելցուն բնորոշ է մակդիրների առատ կիրառությունը: Դրանք բազմանշանակ են ու բազմերանգ, թեև առավելապես հոգևոր, վերացական բնույթի, բայց շատ դեպքերում նաև որոշակի, իրական: Անկասկած, ավելի մեծ արժեք ունեն այս վերջինները, քանի որ դրանց ժիջոցով համապատասխան գրական երկը ավելի է մոտենում կյանքին, ավելի աշխարհային և անմիջական է դառնում: Մակդիրները նաև զբրևեղում են գրողի կապը իրական կյանքի հետ, նրա տեսողական ճա-

նաչողությունը, աշխարհընկալումն ու գեղարվեստական խոսքի և լեզվամտածողություն զորությունը: Այլ բան է, երբ միջին դարի հեղինակներին որևէ մեկը, տվյալ դեպքում՝ վարդան Արևելցին, ասում է՝ «քարոզք փրկութեան»¹⁸, «միջնորդք խաղաղութեան»¹⁹, «զարդարանքն ըզգաստութեան»²⁰, «հովիւք սուրբք»²⁰ և այլ բան, երբ ասում է՝ «բարունակք բեղմնաւորք»²¹, «ամպք ցաւաւորք»²², «բանաւոր ծիծուռք»²³, «ծաղիկք ծիրանափառք»²⁴, «լիալիր լուսինք և աստեղք ջահաբորբոք»²⁵, «արեգակն պայծառ»²⁶, «վեհավէտ ծովակ»²⁷, «սիգաշարժ թանձրութիւն»²⁸, «խայտախարի գառ և գոշասպիտակ մաքի»²⁹, «աղբիւրացեալ շնորհք»³⁰, «ծովացեալ իմաստ»³¹, «քաջաբոյս մանկունք»³², «բիրարեշնորհք»³³, «անծորելի պտուղ»³⁴, «հրապոյր պղտոր»³⁵, «արփիախաղաց ճառագայթ»³⁶ և այլն: Առանց թերագնահատելու առաջին խմբի վերացական, կրոնական կաղապար զգեցած մակդիրները, որոնք նույնպես միտք ու հոգեվիճակ բացահայտելու համար երբեմն տեղին են օգտագործված, այնուամենայնիվ չի կարելի նախապատվությունը շտալ Արևելցու կիրառած երկրորդ խմբի մակդիրներին: Վարպետորեն օգտագործելով դրանք, նա իր երկերն օժտում է իրապաշտական գծերով և ավելի է հյութեղացնում իր ոճը:

Համեմատությունները նույնպես հաճախակի են Արևելցու հիշյալ երկերում: Դրանց բնույթը դարձյալ հիմնականում երկակի է՝ վերացական և ճշմարտացի, կենսամերձ, որոնք աչքի են ընկնում իրենց բազմազա-

- 18 Զեռ. № 8775, թ. 246բ:
- 19 Նույն տեղում, թ. № 291բ:
- 20 Նույն տեղում, թ. № 256բ:
- 21 Նույն տեղում, թ. № 256ա:
- 22 Նույն տեղում, թ. № 302ա:
- 23 Նույն տեղում, թ. № 292ա:
- 24 Նույն տեղում, թ. 256ա:
- 25 Նույն տեղում, թ. № 275ա:
- 26 Նույն տեղում, թ. № 245ա:
- 27 Նույն տեղում, թ. № 257բ:
- 28 Նույն տեղում, թ. № 257բ:
- 29 Նույն տեղում, թ. № 219ա.
- 30 Նույն տեղում, թ. № 303ա:
- 31 Նույն տեղում, թ. № 304բ:
- 32 Նույն տեղում, թ. № 304ա:
- 33 Նույն տեղում, թ. № 301բ:
- 34 Նույն տեղում, թ. № 301բ:
- 35 Նույն տեղում, թ. № 272բ:
- 36 Նույն տեղում, թ. № 233բ:

¹⁷ Յորդիս և ի թոռունս, № 8775, թ. 264ա—268ա:

նությամբ, գունագեղությամբ, նպատակայնությամբ, և ամենայն հաշո-
ղությամբ գրսեորում են հեղինակի հույզերը, խոհերն ու ցանկություն-
ները՝ կապված իրական կյանքի, պատմական միջավայրի, ժողովրդի
նխատուկացի, առօրյա կենցաղավարության և գործող անձանց բնավո-
րության ու հոգեբանության բացահայտման հետ: Հաճախ, առանց միջին
այլաբանության, պատկերավոր կերպով տալիս են իրերի ու երևույթ-
ների բնութագրերը և ներգործում ընթերցողի հուզական աշխարհի վրա:
Պարզ համեմատությունները, մերձավոր շատ նմանություններ ունեն
մակդիրների հետ նաև արտաքին գրսեորմամբ ու կիրառական նպա-
տակներով: Գրանք ավելի են շիկացնում հեղինակի խոհերն ու հույզերը
և երկին հաղորդում բանաստեղծականություն: Գրիգոր Վկայասերի
մատին խոսելիս, օրինակ, Արևելյին կատարում է հետևյալ համեմա-
տությունը. «Իբրև գիտրեւն առիծու գեղեցիկ ճեմելով և իբրև դձագս
արծույ մեծի՝ ընդ արեգակամբ ըթռչելով»³⁷, մի այլ առիթով՝ «գրնալք
գոսկեղէն մատեանն ի մարրափայլ մագաղաթ սրաից խրեանց»³⁸: Հու-
սիկի առնչությամբ գրում է. «Իբրև դհա ի վերայ ձագուց գողացեալ»³⁹,
իսկ Գրիգոր Լուսավորչի զավակները՝ «եղեմարտիս աղբերացն տիպք
լստ քաջառողջ վտակացն յարձակման, առ ի զովացումն ծարաւելոց»⁴⁰:
Հայաստանը, ըստ նրա, «գրախտ աստուածատունի, բուրաստան բերրի,
գլորգանք գովելի» և «գաւառ գեղեցիկ»⁴¹ է, թարգմանիչները՝ «ծաղիկը
աշխարհիս Արամեան», «բողոքը հայկական», «աղբերք եղեմարտիք»,
«որոնք հարազատ հայրենիքի սծարաւուս» հողը թրջում են «կենդանի
վտակօք», «պարիսպ պահպանութեան»⁴² հայ ժողովրդի, իսկ հայոց
գիրը՝ «սխրալի սանդուխտք մեր ելից»⁴³, և այսպես՝ շատ ու շատ ուրիշ-
ներ...:

Փոխարեություններ Վարդան Արևելյին համեմատաբար քիչ է օգ-
տագործում, բայց հաճախ արտահայտվելով այլաբանորեն, ինչպես մի-
ջին դարերի շատ հեղինակներ, ստեղծում է ոչ միայն մեկ կոնկրետ
պատկերի, երևույթի կամ իրի, այլ հաճախ դրանց ամբողջական մի գա-
ղափարի և հասկացության փոխարեական տարբերակը: Նրա համար
իր սիրած հոգևոր առաջնորդները ընդհանրապես «հովիւք քաջ» են, իսկ

ժողովուրդը՝ «բանաւոր հօտ»: Նրանց գործունեությունը և այդ գործու-
նեության ասպարեզը, երբեմն կոնկրետությունից հանված, վերացա-
կանացված է, երբեմն էլ՝ հակառակը, այլ անուն և փոխարեական այլ
պատկեր ստացած: Օրինակ, թարգմանիչները՝ «Փառացն Աստուծոյ
պատմաբանիչքն, ողբերգակք հոգևորք, պարծանքն ազգիս մերոյ, ծերոց
նեցուկքն, մանկանց դաստիարակքն, երիտասարդաց ամբուլիւնքն,
հասարակաց քաջալերիչքն, ազգիս երախտաւորքն, որք ըստ արժանտյն
և ոչ մի փոխարէն ի մէնջ գտեալքս»⁴⁴:

Վարդան Արևելյին կոնկրետ փոխարեություններ ստեղծելիս բա-
վական ինքնուրույն է: Թվենք մի քանի օրինակ, որոնք կազմված են
գոյականից, ածականից և բայից: Այսպես՝ «արբանեակք շարին», «վի-
մին հաւատոյ», «մտաց աջօք», «անդ... մտաց», «զբաժակն իմաստու-
թեան», «զմանկազ բանի», «վայրենի ամհհուլիւն» «ի լուսնդէն ծո-
վուն», «սիգաշարթ թանձրութեան ջուրց», «ի լերանց հրեղինաց», «լու-
սաշաւիղ էրեմամբ», «ցնծացաւ երկիր ամենայն և զլարճացաւ ծով»,
«հոգի և մարմին տաճարացեալ», «գողային երիկամունք թշնամեացն»,
«աղբերացնէ զշնորհս», «լղացեալ ունէր զմահ» և այլն⁴⁵:

Իր խոհերին և զգացումներին խորություն, հստակություն, ուժգնու-
թյուն հաղորդելու համար, նա կիրառում է նաև հակադրության եղա-
նակը: Հակադիր գործողությունները, պատկերները, բառերը, երբեմն
նաև անձանց, համատեղ է հանդես բերում՝ երկերի գեղարվեստականու-
թյունը բազմազան ու հարուստ դարձնելու դիտավորությամբ: Թարգ-
մանիչները գործունեությունը դրվատելիս, գրում է. «...որք (թարգմա-
նիչները— Փ. Ա.) խնդութեան ոչ էին խրախակիցք, այլ տըրտմութեան
զտան սգակիցք, որք ի բերկրին ոչ վայելեցին ընդ բարեկրեալսն (=
բերկրեալսն), այլ ի դառնութեան տըխրեցան ընդ վտանկեալսն, որք
յանդորութեան ոչ էին զլարճակիցք, այլ ի թշուառութեան գտան տըրտ-
մակիցք, որք ի բարօրութեան ոչ էին վայելեալք, այլ ի տառապանսն
նըւաստակիցք լինէին, ճոխութեան ոչ հաղորդք, իսկ շարշարանացն՝
կցորդք, որք ուրախութեան ոչ զըտան ուրախակիցք, այլ ողբոցն եղեն
ձայնակիցք...»⁴⁶: Մի այլ տեղ՝ «Արի՛ զուարթուն մըշակ (Գրիգոր Լու-
սաւորիչ— Փ. Ա.), որ եսդ ամայի ի խոր խաւարիդ, արի նահատակ բա-
րի, որ եսդ ի բարբից միջի, արի՛ ակն արփիափայլ, որ եսդ ի խաւարի...
ևլ սերմանեա զբանն կենաց...», զի ձմեռն էանց և այգիք ծաղկեցան,

37 Ներբողան ի Վահրամ, ձեռ. № 8775, ք. 302բ:

38 Յորդիս և ի թոռնս, ք. 263բ:

39 Նույն տեղում, ք. 263բ:

40 Նույն տեղում, ք. № 275բ:

41 Ներբող գրերի գլուտին, ք. 289բ:

42 Նույն տեղում, ք. № 296բ—297ա:

43 Նույն տեղում, ք. № 297բ:

44 Նույն տեղում, ք. 291բ:

45 Ձեռ. № 8775, ք. 234բ, 239բ, 255բ, 256ա, 257ա, 257բ, 258ա, 273ա, 284ա,
311ա, ձեռ. № 4139, ք. 400ա:

46 Ներբող գրերի գլուտին, ձեռ. № 8775, ք. 292բ:

ծիծուռնք բանաւորք եկեալ են և տատրակք քաղցրաձայն հընչեն, զի գարուն հոգևոր է»⁴⁷: Նաև հետևյալ բնույթի հակադրութիւններ է ի գործ դնում շատ հաճախ. «Յայնժամ զղջասցիս և ո՛չ օգտեսցիս, հառաչես և ո՛չ հասանես, խնդրես և ո՛չ դատանես, հայցես և ո՛չ առնուս, յոգոց զազնուութիւն քո...»⁴⁸:

Հոնտորական բացականչման բնորոշ և սքանչելի օրինակ է հետևյալը. «Աւաղ բեզ երկիր հայոց, գաւառ զեղեցիկ, աշխարհ արեւլյան, հուպ առ եղեմ, ծանիր զլաւութիւն քո...: Աւաղ բնակիրք բարեբաստիկք, ազգ ընտիր, ժողովուրդ սեպհական... ծանիր զլաւութիւն քո...: Աւաղ տունկ տենչալի, դրախտ աստուածատունկ, բուրաստան բերրի. ծանիր զազնուութիւն քո...»⁴⁹:

Վարդան Արևելցիին դարձյալ միեւնույն նկատառումներով շատ հաճախ դիմում է հոնտորական հարցումների, դիմումների, ժխտումների և այս կարգի այլ հնարանքների: Այս բոլորը, ինչ խոսք, եթէ արհեստականութեան աստիճանի շին իջեցված, խորապես ներգործում են երկիր բովանդակութեան ու ձևի վրա և բարձրացնում հեղինակի ոճի արտահայտչականութիւնը: Վարդան Արևելցիին այս խնդիրը ևս լուծել է հաջողութեամբ: Հոնտորական հարցումները կամ բացականչութիւնները նա առավել հաճախ սկսում է հետևյալ բառերով. «Վասն է՞ր, կամ՞ զիս՞րդ...», «է՞ր ում», «զմէ՞», «յո՞յր աղազաւ», «ո՞վ որ», «ո՞ւր են», «ո՞վ», «զի՞նչ», «աւա՞ղ», «ո՞վ», «ո՞հ», «վա՞յ», «վա՞յ ինձ, վա՞յ և դարձեալ վա՞յ» և այլն:

Վարդան Արևելցու երկերի ոճական առանձնահատկութիւնների թիւում հարկ է նշել նաև բարեհնչունութիւնն ու երաժշտականութիւնը: Նա լավագույնս տիրապետում է հայոց լեզվին, ունի հարուստ բառապաշար: Դա նրան հնարավորութիւն է տալիս ազատորեն մշակելու իր խոսքը: Մասամբ այստեղից էլ գալիս է նրա ոճի բազմաբանութիւնը, անհատականութիւնը, արտահայտչական միջոցների հարստութիւնը, ինչպես նաև երաժշտականութիւնը: Այս խնդրում, իհարկե, Վարդան Արևելցիին առաջնեկ չէ, կան հանճարեղ նարեկացիի և ուրիշներ, բայց և այնպես՝ նա հնարից մեկն է: Շատերից ավելի հաճախ է դիմել առանձին բաղաձայնների(ծ, բ, շ, դ...) հարակրկնութեամբ իր ոճը երաժշտականացնելու հնարանքին: Այսպես, օրինակ. «Ժաղիկք ծիրանափառք ի ծովային ծոցոյ ծաղկոցէն ընծիւղեալ...» կամ «տունկք տենչալիք, ի

մեծագոյն բուրաստանէն բողբոջեալք բարունակք բեղմնաւորք», մի այլ դեպքում՝ «և զշարեալ շարացն այնոցիկ ի շարագոյն հօրէն շարութեան, շարապէս շարշարանօք զշարշարանս սրբոյն հնարէին...»⁵⁰: Այս միտումով նա կրկնում է նաև նույն բառը, ինչպես. «...վաճառականքս պատրաստ, վաճառս առ ձեռն և որք վաճառենն՝ շին իմիջի, պսակս մերձ և պսակադիրքս յօժարք և որք պսակինն՝ չիք առաջի, բանքս ի բերան և բանբերքս իմաստունք...»⁵¹: Հնչյունական զուգադրութեան հիման վրա նա հետաքրքիր զուգորդութիւն է ստեղծել Հուսիկի և Ներսես Շնորհալու կապակցութեամբ: Առաջինի առիթով հիմք ընդունելով յ կիսաձայնը և «յոյս» արմատը, իսկ երկրորդի դեպքում և բաղաձայնը, գրում է. «...մեծայոյսն և յուսածառանգն, որ յոլովագոյն յուսով յուսասցի ի յոյսն առատապարգև, յուսով կարդալով զանունն աստուծոյ, զյոյսն ամենեցուն, զօգնականութիւն յուսացելոցս՝ յոյսն բարի»⁵², «ներբողեալն ի գովեստ բանից և ներբասմուտն իմանալի խորոց, ներամիտն ներսէս...»⁵³:

Վարդան Արևելցու ստեղծագործական ոճը ուսումնասիրելիս, հանդիպում ենք մեկ այլ ուշագրավ երևույթի, որը առկա է հատկապես նրա ներբողներում: Ինչպես արդեն նշել ենք, նրա ոճը ներբողներում ոգեշունչ է, հուզաթաթաւ և հախուռն: Բանաստեղծական մերթ տխուր, մերթ խանդավառ հուզումներով է նա ողողել իր ներբողները՝ որոշ դեպքերում գեղարվեստական խոսքին տալով շափածո ձև: Ամենայն հաջողութեամբ կարելի է ընդարձակ հատվածներ տողատել նրա ամեն մի ներբողից: Բայց ոչ միայն այդքանը: Ուշագրավ է նաև, որ նա իր խոսքը երբեմն հանգավորում է: Այս վերջինը առիթ է տալիս մտածելու, որ Արևելցիին ոչ միայն շարականներ է գրել, թերևս նաև՝ բանաստեղծութիւններ կամ տաղեր: «Վարդան»-ի անունով առ այսօր մեզ հասած մի քանի բանաստեղծութիւնների հեղինակային պատկանելութիւնը վերջնականապես ճշտելու գործում չի կարելի նկատի չունենալ այս իրողութիւնը:

Ներբողները շափածո և հանգավոր գեղարվեստական խոսքով օժտելու Վարդան Արևելցու փորձը բազմաբանագութիւն է հաղորդել, բանաստեղծականացրել, քնարական շեշտ տվել այդ երկերին: Բերենք մի երկու օրինակ: Հոփսիմեանց կույսերի մասին Վարդան Արևելցիին գրում է.

47 Ներբողեան ի Գրիգոր Լուսավորիչն, ձեռ. № 8775, Բ. 247ր:
48 Յորդիս և ի թոռունս, ձեռ. № 8775, Բ. 267ր: Տե՛ս նաև՝ ձեռ. № 8775, ԲԲ. 288ր, 289ր, 290ր, 292ր և այլուր:
49 Ներբող գրերի գլուտին, ձեռ. № 8775, Բ. 289ր:

50 Յորդիս և ի թոռունս, № 8775, Բ. 256ա, 273ա: Տե՛ս նաև՝ Բ. 311ր:
51 Ներբող գրերի գլուտին, Բ. 288ա:
52 Յորդիս և ի թոռունս, Բ. 262ա:
53 Ներբողեան ի Վահրամ, ձեռ. № 8775, Բ. 311ր:

«Զօրատրսն ի մարտի,
 Զյաղթողսն ի պատերազմի,
 Զհարսնացեալսն Քրիստոսի,
 Զդատերան վերինն երուսաղէմի,
 Զթագուհիսն երկնից արքային,
 Եւ դօրիորդսն առաջաստի
 անմահ փեսային,
 Զբամպիշն հօրն երկնատրի
 Եւ բզղըշխոյսն հոգոյն ճշմարտի,
 Որ կարապետ կենաց եղեն
 հայոց աշխարհի,
 Եւ անտալուր բարբառք՝
 որդոցս Աբեաի...»⁵⁴:

Ավելի հետո, քրիստոնէութիան Հայաստան մուտք գործելու առնելու
 շուրթամբ, գրում է այսպես.

«Զարթի՛ք ի նիրհմանց,
 Արի՛ք ի կործանմանց,
 Կանդնեցէ՛ք ի գլորմանց,
 Կացէ՛ք և դիտեցէ՛ք,
 Ծաներո՛ւք և տեսէ՛ք,
 Իմացարո՛ւք և զիտացէ՛ք,
 Զի անէձքն բարձեալ է
 Եւ օրհնութիւն ծաւալեալ,
 Դուռն դրախտին բացեալ է
 Եւ ծառն կենաց ծաղկեալ,
 Բոցնդէն սուրն վերացնալ է
 Եւ ծառն կենաց համարձակեալ,
 Հարսանեացն ծախ սործեալ է
 Եւ առաջաստն պատրաստեալ...»⁵⁵:

Բերենք մի փոքր հատված ևս, որի նյութը, թեև քաղված է Ագա-
 թանգեղոսից և վերարերում է Գրիգոր Լուսավորչին, սակայն, կարելի
 է այն դիտել իբրև ինքնուրույն, գողտրիկ քերթված: Ահա այն՝ արտա-
 սանված Գրիգոր Լուսավորչի կողմից.

«Վասն ձեր շարշարանս յոլով կրեցի,
 Կըտտանաց բազմաց համբերեցի,
 Պարկիւ պսակեցայ, մոխիր ծրծեցի,
 Մեքենայիւ յորմ ամբարձայ,
 Ի բարձրութենէ կախեցայ,
 Տատասկաւ խոցոտեցայ,

Գելարանօք ի կուրծս պրնդեցայ:
 Քաջախ ի քիմբս իմ ընկալայ,
 Անուաք շարաշար պըրկեցայ,
 Գայլ ի բերան արկեալ՝ տանջեցայ...»⁵⁶:

Վարդան Արևելցու ոճը պատկերավոր, զուսպ, անպաճույճ, հա-
 խուուն է, երբեմն վերամբարձ ու ձգձգված, բայց, ընդհանրապես, հա-
 բուստ ու բազմերանգ:

56 Նույն տեղում, թ. 247բ: Տե՛ս նաև՝ աստ. թ. 270բ—271ա: Վարդան Արևելցու
 շափածո հատվածների տաղաչափական օրինաչափությունների վրա առանձին կանդ
 չենք առնում, նախ, որովհետև, ըստ էության դրանք նոր խոսք չունեն, երկրորդ՝ նման-
 ները արդեն հանգամանորեն և մասնագիտաբար ուսումնասիրված են Մ. Աբեղյանի
 կողմից: Տե՛ս Մ. Աբեղյան, Տաղաչափություն, էջ 320—394:

54 Ներբողեան ի Գրիգոր Լուսավորչին, ձեռ. № 8775, թ. 245ա:

55 Նույն տեղում, թ. 246ա:

Լ Ե Ջ ՈՒ Ն

Վարդան Արևելցու լեզուն ճոխ է, մշակված, երբեմն՝ պարզունակ, բայց ոչ հասարակ։ Նա հավասար հմտությամբ գրում է և՛ դասական գրաբարով, և՛ միջին հայերենով։ Գրաբարով գրված նրա երկերի գուտ լեզվական հատկանիշների մասին մենք այստեղ հարկ չենք համարում հատուկ խոսք ասել, որովհետև, դրանք հիմնականում իրենց զուգահեռներն ունեն ժամանակակից գրաբարում։ Ասենք միայն, որ Վարդան Արևելցու գրաբարն էլ, հակառակ որոշ բանասերների թյուր կարծիքների, հարուստ է, բազմազան, երկից երկ՝ բովանականին տարբեր։ Այսուհանդերձ, ավելի ուշագրավ ու գնահատելի են միջին հայերենի կիրառությունները՝ արևելահայերենի մի շարք ակներև հետքերով։

Վարդան Արևելցու միջին հայերենին, ինչքան մեզ հայտնի է, առաջին անգամ Ղ. Հովնանյանն է հատուկ ուշադրություն դարձրել¹։ Սակայն, հարգելի բանասերը խորամուխ չի եղել նրա ամբողջական գիտական քննությանը, միայն քաղվածք է կատարել «Ժղլանք»-ից և «Հաւաքումն պատմութեան» աշխատությունից ու գոհացել որոշ ընդհանուր գիտողություններով, որոնք վերաբերում են մի քանի առանձնահատկությունների, այդ թվում և արևելահայերեն «ում» դերբայական և հոլովական վերջավորությամբ բառերի կիրառությանը։ Ղ. Հովնանյանն այս առիթով իրավացիորեն նշում է. «Գիտենք դարձյալ, թե ի Մեծ Հայոց է Վարդան, ուստի, թեպետ շատ տարիներ Կիլիկիա կենալով, նա թե հարբունիս հաճախելով՝ վարժ էր նաև գավառին հատուկ բարբառուն, սակայն և այնպես՝ յուր ուսմկորեն գրվածքս հիրա ինչ կտարբերին այլ ուսմկազրաց գրություններեն և առ սակավ մի նշմարել կուտան յուր բնիկ հայրենյաց գավառականին հետքն»²։

Երկրորդ հեղինակը Ս. Ղազարյանն է, որ Վարդան Արևելցու միջին հայերենը արժանացրել է քննության³։ Նա կանգ է առել մինչ այդ ար-

դեն հայտնի փաստերի վրա, բայց ավելի է ընդարձակել գիտողությունների շրջանակը ու խորացրել դրանց վերլուծական քննությունը։ Հասկապես նկատառման է արժանացրել այն տարբերին, որոնք արևելահայերենին են հատուկ. ինչպես «ում» դերբայական և հոլովական, վաղակատար դերբայի «ել» վերջավորությունը, անորոշ դերբայով և «ի» նախդիրով սահմանական ներկայի կազմությունը և այլն։ Վերջերս Վարդան Արևելցու կողմից աշխարհաբարի կիրառություններին անդրադարձել է նաև է. Մկրտչյանը, դիտարկել է գրեթե նույն երևույթները և օգտակար գիտողություններ արել⁴։

Բայց այսքանը նույնպես թերի և քիչ է, մանավանդ, որ արվածը գերազանցապես հիմնված է «Հաւաքումն պատմութեան» ընձեռած տրվյալների վրա։

Վարդան Արևելցու մոտ, ինչպես դիտել է տվել Մ. Աբեղյանը, նկատի ունենալով դարձյալ միայն նրա «Հաւաքումն պատմութեան» երկը, կան «միջին հայերենի գրեթե բոլոր ձևերը»⁵։ Այս իրողությունը ավելի է հավաստի դառնում, երբ նկատի ենք առնում նաև նրա մյուս երկերում եղած փաստերը։

Մեր ձեռքի տակ եղած տվյալների հիման վրա կարող ենք ասել, որ Վարդան Արևելցու կողմից միջին հայերենի կիրառությունը հիմնականում արտահայտվում է հետևյալ լեզվաբերականական տարբերի միջոցով.

Ա) նորակազմ և հազվադեպ բառեր՝

խայտախառի, ոսկիակիր, գոշասպիտակ⁶, քստմնածածան, վեհալէտ, սիգաշարժ, կուսածաղիկ, քառառաջ, քաղցենի, բիրաբեղուն, գիտահետեալ, ճգնագեղեալ, արփիաշնորհ, բերկրահամբոյր, յուսածառանգն⁷, մօրատ⁸, խեռաբարոյ, քերթեղեալ, խաղաւարտ, ոճ⁸, խոչ, պախիչ, մրխտեալք, վտաւակ սուզրէս, շօթ, քաքար, սիկղ, դորակ, քաղ-

¹ Տե՛ս Մկրտչյան է., «Աշխարհաբարի տարբեր միջնադարի գրական հուշարձաններում», էջ 35—37, 51։

² Աբեղյան Մ., Երկեր, Գ, էջ 245։

³ Ներբողեանի Գրիգոր Լուսաօրիչն, ձեռ. № 8775, Բ, 229ա։

⁴ Նույն տեղում, Բ, 257բ, 301ա—303բ։

⁵ Հնգամատենի, Երուսաղեմ, ձեռ. № 648, էջ 100։

⁶ Նույն տեղում, էջ 300—301։

¹ Հովնանյան Ղ., Հետազոտությունք, Ա, էջ 233—239, 253—255։

² Նույն տեղում, էջ 254։

³ Ղազարյան Ս. Միջին հայերեն, Ա, էջ 86, 105, 121—124, 166, 170։

բան⁹, քաղիւրթ¹⁰, լերդաբոյթ, պան¹¹, երբուծ, բոյթ¹², պակուճ, խարագուլ, կասկեթայք, կասկարիչ¹³, ճողութիւն¹⁴, քածաւարոտ, փոշտանգն¹⁵, սոր, բիժ¹⁶, ցիբ¹⁷, մեղրապոպ¹⁸, ասխնածոփք¹⁹, գահամունք²⁰, փողոշուկ²¹, ճիւղ²², դժնիկ²³, աղտ-աղտ, խոխոմ, խիւ...²⁴:

Բ) օտար բառերի փոխառութիւններ՝
թոպիր²⁵, հեճի, թլահ²⁶, բալխատր²⁷, տրապիզիտ²⁸, բու, սոպո...²⁹:

Գ) ա հնչյունի անկումով բառեր՝
լսել եմ, մեն է մնացել, թողել, հասկացուցել եմ, ասցել, տեսնուա, ասցին, հասկնալ³⁰, ասցէք³¹, ելնէ, ուսուցնեն, իրենք, զգուշացուցել...³²:

Պ) ու հնչյունի անկումով բառեր՝
դժար³³:

Ծ) ջ բառավերջի հնչյունի անկումով բառ՝
ի շուռ գալ³⁴:

Չ) ր ձայնորդ հնչյունի անկումով բառեր՝
եփ, գետ³⁵:

է) ալ, իւ, եա երկբարբառների հնչյունափոխություն է-ի և ե-ի՝
չնեղանէք, եկէք³⁶, գեղ³⁷, զիրենք³⁸ բթել, գնացել, եկել³⁹, կոշել եմ,
կարդացել, տուել...⁴⁰:

Ը) իւ հնչյունի հնչյունափոխություն ի-ի՝ իւր դերանվան հոգնակի
և հոլովված ձևերում՝
իրենք, զիրենք⁴¹:

Ս) ն հնչյունի հավելում և ն ավելացված հնչյունի միջոցով առ-
նմանություն՝
մենք, մենք շենք պակաս, մենք շենք միայն⁴²:

Վ) Գրաբարի եմք, էմք և բայական այլ վերջավորությունների վե-
րափոխում ենք, էիք, անք, այիք, ինք ձևերի՝
յառնենք⁴³, գտանենք⁴⁴, թարգմանենք, շինենք, շերթանք, գիտենանք,
ջանայինք, ապրինք...⁴⁵:

ՃԱ) ի նախդիրով և անորոշ դերբայով սահմանական ներկայի կազ-
մություն (արեւելյան միջին հայերեն)՝
ի գտանուիլ, ի յիշուիլ, ի հարցանիլ, յասել է⁴⁶, ի թողուլ, ի դնուիլ,
յանիծել, շէ ի կարել⁴⁷, ի կուուիլ⁴⁸, ի հասանել...⁴⁹:

ԺԲ) անկանոն խոնարհման բայերի անցյալ կատարյալ եղակի
երրորդ դեմքի ձևերի փոփոխում՝
չկերաւ, եղան, լսեց, տեսաւ...⁵⁰:

ԺԳ) բայի ժխտական խոնարհման ձևերը կազմելիս՝ աչ-ի փոխա-
րեն շ-ի հաճախակի կիրառում՝
չունենայ, շառնէ, շտան, շպսակէ, շղնեն, շղառնան, շալթէ⁵¹, շյայտնի,
շասես, շունին, շբերէ...⁵²:

⁹ Նույն տեղում, էջ 353:
¹⁰ Նույն տեղում, էջ 371:
¹¹ Նույն տեղում, էջ 379:
¹² Նույն տեղում, էջ 381:
¹³ Նույն տեղում, էջ 382:
¹⁴ Նույն տեղում, էջ 384:
¹⁵ Նույն տեղում, էջ 391:
¹⁶ Նույն տեղում, էջ 392:
¹⁷ Նույն տեղում, էջ 397:
¹⁸ Նույն տեղում, էջ 400:
¹⁹ Նույն տեղում, էջ 404:
²⁰ Նույն տեղում, էջ 414:
²¹ Նույն տեղում, էջ 415:
²² Նույն տեղում, էջ 433:
²³ Նույն տեղում, էջ 448:
²⁴ Նույն տեղում, էջ 471:
²⁵ Ժղլանք, ձեռ. № 750, 73բ:
²⁶ Նույն տեղում, թ. 88ա:
²⁷ Ներբող գրերի դուռին, ձեռ. № 8775, թ. 309բ:
²⁸ Ի Տասնարանեան, ձեռ. № 1324, թ. 268ա:
²⁹ Յաղազս բնութեան, ձեռ. 1398, թ. 295բ:
³⁰ Ժղլանք, ձեռ. № 750, թ. 57բ, 87բ, 95բ, 107ա, 124ա, 147ա, 154ա:
³¹ Հաւարումն պատմութեան, էջ 158:
³² Սահմանք կանոնականք Ձագաւանից, էջ 43, Խրատական թուղթ, էջ 282:
³³ Ժղլանք, ձեռ. № 750, թ. 107ա:
³⁴ Սահմանք կանոնականք Ձագաւանից, էջ 43:
³⁵ Ժղլանք, ձեռ. № 750, թ. 116ա, 159ա:

³⁶ Նույն տեղում, թ. 38բ, Խրատական թուղթ, էջ 282:
³⁷ Սահմանք կանոնականք Ձագաւանից, էջ 45:
³⁸ Ժղլանք, ձեռ. № 750, թ. 122ա:
³⁹ Նույն տեղում, թ. 85բ, 88ա, 105բ:
⁴⁰ Հաւարումն պատմութեան, էջ 156—158:
⁴¹ Ժղլանք, ձեռ. № 750, թ. 122ա:
⁴² Նույն տեղում, թ. 97բ, 122ա: Սահմանք կանոնականք Ձագաւանից, էջ 43:
⁴³ Է աւուր, ձեռ. № 4139, թ. 235բ:
⁴⁴ Սաղմոսաց, ձեռ. № 1190, թ. 295ա:
⁴⁵ Ժղլանք, ձեռ. № 750, թթ. 95բ, 97բ, 116ա:
⁴⁶ Նույն տեղում, թ. 21ա, 103ա, 118բ:
⁴⁷ Սահմանք կանոնականք Ձագաւանից, էջ 42—44:
⁴⁸ Հաւարումն պատմութեան, էջ 158:
⁴⁹ Խրատական թուղթ, էջ 279:
⁵⁰ Ժղլանք, ձեռ. № 750, թթ. 93բ, 103ա, 122ա:
⁵¹ Սահմանք կանոնականք Ձագաւանից, էջ 44—45:
⁵² Մեկնութիւն քերականի, էջ 81, 91, 115:

Ըստ այդմ նաև՝ բայի անդեմ ձևերը և էական բայի ժխտական ձևերը կազմելիս՝

չասած, զլտեսածն, չպիտէր, չէ ձայնաւոր, չէ իրք...⁵³։

ԺԴ) Բայական ուրի կամ վի կրավորական ձև՝ գործւի, ծածկւի, փակւի⁵⁴, կնքուի⁵⁵, դնուի, ասուին⁵⁶, շառնուին⁵⁷, կոչուին...⁵⁸։

ԺԵ) Կու, պիտի թող եղանակիչներ՝ կու ասէ, կուզան⁵⁹, պիտէր, չպիտէր⁶⁰, թող շտկարանան⁶¹, թող ես փոքրաբան...⁶²։

ԺԶ) Բայերի դիմավոր ձևերում անկատար դերբայի ում վերջավորութիւնն՝ աղօթք են առնում⁶³, յառնում են⁶⁴, ի նզովում են⁶⁵։

ԺԷ) Եր և ներ հոգնակիակերտ վերջավորութիւններ՝ յայլ բաներ⁶⁶, զայս բաներս, կարճերն...⁶⁷։

ԺԸ) Ում ներգոյական հոլովի վերջավորութիւնն՝ ի սրաումս⁶⁸, ի կրակում⁶⁹, պահարանում եմք⁷⁰։

ԺԹ) Պատմական հնչյունափոխութիւնք բառեր՝ հենց, ոնց⁷¹, զեզ, աղէկ⁷²։

Այսքանը՝ ընդհանուր ամամբ։ Ինչքան մեզ հայտնի է, Վարդան Արևելցին, եթե ոչ առաջինը, գոնե առաջիններից մեկն է, որ արևելահայ աշխարհաբարը միջին հայերենի հետ համաձուլելով գրավոր խոսք է դարձրել։ Պա հիմնականում ի հայտ է գալիս դերբայական և ներգո-

յական հոլովում և ել վաղակատար դերբայի վերջավորութիւնների, «հենց», «ոնց» բառերի կիրառութիւն մեջ։ Այս շափազանց կարևոր երևույթը մի անգամ ևս գնահատելով, խոսքը տանք անվանի լեզվաբան Գ. Զահուկյանին. «Այս գաղափարի (իմա՝ աշխարհաբարի կիրառման Վարդան Արևելցու առաջադրումն ու կենսագործումը— Փ. Ա.) ողջ առաջադիմական արժեքը հասկանալու համար բավական է ասել, որ XIX դարում գրաբարի բազմաթիվ ջատագովներ շէին հանդուրժում աշխարհաբարի գործածութիւնը, իսկ ոմանք նույնիսկ XX դարում գրում էին գրաբարով⁷³։

Վարդան Արևելցին նաև լեզվաշինարար է։ Բազմազան և ինքնուրույն բառակազմութիւնների ու նմուշների առատութիւնը նրա լեզվում դրա վառ ապացույցն է։

Այսպիսով, միանգամայն պարզ է դառնում, որ Վարդան Արևելցու մատենագրական վաստակի ոճական և լեզվական առանձնահատկութիւնների այս կարգի առատութիւնն ու բազմազանութիւնը, դրանց լեզվագիտական, գեղագիտական, պատմական և կիրառական արժեքն ու նշանակութիւնը միջին դարերի հայ իրականութիւնի պատմամշակութային կարևոր երևույթներից են։

73 Զահուկյան Գ., Փերականական և ուղղագրական աշխատութիւններ, էջ 248։

